



Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

Մեր կոնտակտները՝

Պաշտոնական կայք՝ <http://www.armin.am>

Էլ. փոստ՝ info@armin.am



« ריחויי רי גיגליזאקו-יחט »
של חסידות רבי אברהם מרדכי הכהן מברסלב

הוצאת חסידות ברסלב

1925

በሃይማኖት
በሃይማኖት
በሃይማኖት
በሃይማኖት
ርጅክ ጥፋት ጥፋት ፋሲካክ
ርጅክ ጥፋት ጥፋት ጥፋት ጥፋት

ገንዘብ ገንዘብ ገንዘብ
ገንዘብ ገንዘብ ገንዘብ
ገንዘብ ገንዘብ ገንዘብ
ገንዘብ ገንዘብ ገንዘብ
ገንዘብ ገንዘብ ገንዘብ

Կազմեց՝ Լ. Հախվերդյան
Ձևավորումը՝ Ռ. Ջուլհակյանի
Ֆորագրը՝ Տ. Խաչվանեյանի

Գ
ՎՏԱԿԱՆԻՔ

Թումանյան 2.

Թ 950 Հնաիր երկերի 2 հատորով/Կազմ.՝ Լ. Հախվերդյան.—

Եր.: Սովետ. գրող.

2. 2. 1985. 544 էջ:

ժողովածուի երկրորդ հատորում զետեղված են հեղինակի պատ-
մըվածքները, հեքիաթները, թարգմանությունները, հոդվածներն ու
ույթները և նամակները:

ԳՏԴ 8421

© «Սովետական գրող» հրատարակչություն,
Կազմողի և ձևավորման համար, 1985

ԱՂՔԱՏԻ ՊԱՏԻՎՐ

I

Ղ... գյուղաքաղաքում առանձնացած ապրում էր Սիմոն անունով մի բարի մարդ: Նա չէր խառնվում գյուղական գործերին. երևի գիտեր, որ իրան խոսքը չի ընդունվի, նրա համար էլ պոչն իրան էր քաշել:

Սիմոնը մի կարմիր կով ուներ, մին էլ՝ մի սիրուն կին. կինն էլ շատ սակավ էր պատահում, որ հարևանություն աներ գրացիների հետ. քաշվում էր հարուստ հարևաններից, գիտեր, որ յուր գնալ-գալը դուրեկան չէր նրանց համար: Եվ իսկապես, հարևանների դռներն ընկնելու կարիք էլ չունեին:

Սիմոնը չութի կամ գութանի ժամանակ ընկեր էր դառնում անասուն ունեցողի հետ, տանջվելն իրանից, անասունը, լծկանը հարևանից, և յուր հողերն էլ նրանցի հետ վարում: Երբեմն էլ պատ էր դնում, տախտակ էր քաշում, ձուկն էր բռնում մոտակա գետից — ծախում, և կարողանում էր թե չէ, ամեն բանի էլ ձեռքը գցում էր:

Դրա համար էլ ոչ լավ ձուկը բռնող էր, ոչ կարգին պահող և ոչ մի բանում հայտնի չէր. միայն մի բան լավ գիտեր, որ լավ սրախոսում էր և ծիծաղալի առակներ էր պատմում: Այդ էլ վերագրում էին նրա խելքի պակասությանը, անունն էլ «շաշ Սիմոն» էին դրել:

«Մի անգամ մի գյուղում մնի համար պատ դրի,— պատմում էր նա յուր կյանքից,— գործս վերջացրի, ասեցի՝ դե փողս տվեք, գնում եմ: Եկան պատին մտիկ արին, ասեցին՝ «Ուստա, էս գշեր քու շինած պատի տակին քնի, առավոտը քու վարձն էլ տանք՝ մի բան էլ ավելի, վեր կաց գնա»։ Համաձայնվեցի ոչ. վախեցի գշերը պատը վրես քանդվի... պատըն էլ թողի, վարձս էլ, վեր կացա եկա մեր տունը»:

Բայց խո ամեն մարդ այսպիսի պայման չէր կապում ուստա Սիմոնի հետ: Շատ մարդ էլ հենց նրա զվարճախոսությունների ու առակների համար դեռ վարձիցը մի բան էլ ավել էր տալիս: Եվ իրանց աղքատության մեջ ուրախ ապրում էին մարդ ու կին:

Այս մի փոքրիկ ուրախություն էր, որ ավելի շուտ բխում էր Սիմոնի սրտից, քան թե ունեցածից. բայց մարդիկ սրան էլ էին նախանձում:

— Ախպե՛ր, մենք էսքան շարշարվում ենք, մեզ համար ապրանք ունենք, դուքան ունենք, առուտուր ունենք... է՛լ չենք կարողանում ծերը ծերին հասցնենք, սա էս ո՞նց ա ապրում.— ոչ ջեբումը կապեկ ունի, ոչ դռանը շորստտանի, ոչ գլխումը խելք...

Այսպես նախանձում ու զարմանում էին համագյուղացիք, հարևանները Սիմոնի ապրուստի վրա և միշտ էլ «շաշ» էին անվանում:

— Շաշ Սիմոնի թայն էլ չկաս,— նախատում էին կանայք իրանց ամուսիններին,— տարենը երկու-երեք թագա լեհին (դերիա) ա հագցնում իրան էն անբան կնգանը... թողում չի բորիկ ոտը գետին տեսնի...

— Դե նրա կնիկն էլ սիրուն ա, բու թայը խո չի,— կես լուրջ, կես հանաք նկատում էր մարդն յուր բարկացած կնոջն ու հեռանում:

Հիրավի, Սիմոնի կնոջ գեղեցկությունը մի երկնային պարզե էր, որ բաժին էր ընկել աղքատին: Նա մի բուրավի, շքեղ շուշան էր, որ դուրս է գալիս հաճախ մի հասարակ մացառի, մի փոքրիկ թփի տակ, և զվարթ ծաղկում է, ժրպտում, առանց մտքովն անցկացնելու, թե քուրդը¹ բուսել է վճիտ ջրերի ափին, կամ զանգակածաղիկը փայփայված է բուրաստանում. նրան միայն մի փոքր լույս, մի փոքր արևի շող է հարկավոր...

Ես մոռացել եմ այն պարկեշտ, ամոթխած սիրունի անուներ, բայց գյուղացիք նրա ավել անուներ էլ դրել էին «եղապատառ»:

¹ Մի հասարակ, անհոտ ծաղիկ է: Լ. Ք.

Գյուղի ջահելները աչք էին տնկել այս կնոջ վերա: Քանի անգամ գանգատվել էր նա մարդուն, թե՛ աղբրումը ջուր լըցնելիս Ղազոյանց Գալուստը աչքերին խոր մտիկ տվեց ու ասաց. «ուխա՛յ»... Վարթումանց Փիլոսը իրանց դռնովն անց կենալիս աչքով արավ... Միրզանց Առաքելը ճանապարհին «ղաստի» դիպավ իրան...

— Պտղատու ծառին շատ քար կգցեն... էդ ամեն կնգա էլ կպատահի, սիրտդ կոտրիլ մի, ես էլ եմ շատերին աչքով արել,— հանաք անելով կնոջը պատասխանում էր ուստեն: —

Բայց, այսուամենայնիվ, թեկուզ հենց մենակ շմնալու, չվախենալու համար, որովհետև պատողի, խզարչի, ձկնորս և այլն, Սիմոնը հաճախ գյուղից հեռանում, ուրիշ տեղ էր մնում — իրանց հարևան դարբին Ակոփի փոքրիկ աղջիկը գիշերները Սիմոնի կնկա մոտ էր քնում:

Գիշերները երկա՛ր հեթիաթ էր ասում Սիմոնի կինը յուր փոքրիկ ընկերուհու, ութ-տաս տարեկան Մարուշի համար (այսպես էր հարևանի աղջկա անունը) «Ջմուլստ դուշի» հեթիաթն էր ասում կամ պատմում էր, թե ինչպես մայրը յուր յոթը խորթ աղջիկներին ձգեց հորը և ջաղացաբարը դրեց բերանին, իսկ նրանք օրը մի շամիչ գտան, ապրեցին ու փորելով, փորելով հասան մի ստորերկրյա զարմանալի աշխարհ... և կամ թե «Լիս ու մութ աշխարհների» մասին էր պատմում, մինչև երկուսն էլ քնում էին:

II

Ահա ուստա Սիմոնի սպիտակ տնակը՝ մենակ, առանձնացած, երկու լուսամուտի փեղկերն էլ փակած, երևում է պարտեզի մի քանի ծառերի ետևից: Գիշերը խաղաղ է, ինչպես քունը, և կախարդիչ, քան երազ: Կարծես թե այս գիշերն էլ արևելյան մի հի՛ն-հի՛ն հեթիաթ լինի...

Երկու հոգի այս պահուն ծառերի տակովն անցան... մոտեցան Սիմոնի դռանը:

Թե ինչ էին անում նրանք, դժվար էր ասել, միայն շուտով ետ բացվեց դուռը շրջիկալով, և երբ բացվեց, ներսից պարզ լավեց մի սուր ճիչ, որ իսկույն լռեց, և մի կանացի ձայն միաժամանակ աղաղակեց՝ «ո՞վ եք, ի՞նչ եք ուզում... ո՞վ

եք, ո՞վ, ո՞վ...»։ Դուռը շուտ փակվեց, ձայնը խլացավ, բոլորովին կարվեց։

Այդ գիշեր ուստա Սիմոնը գնացել էր մոտիկ գյուղը, կարծեմ փուռը շինելու, և, երևի, խորը քնած, մի վատ երազ էր տեսնում յուր տան գլխին։

III

Գյուղական դատարանում ուստա Սիմոնի գանգատը լսելուց հետո ոմանք հանդիմանելով, ոմանք թքելով, մի քանիսը բարկամալով խորհուրդ տվին, որ ձեռք քաշի Վեդատոտ բանից։

— Թե սր կեղտոտ բանն ուզում չեք, դե դատաստան արեք, թե չէ՝ ես իմ ձեռովը կանեմ... — գոռում էր ուստա Սիմոնը և կարմրած աչքերը քիչ էր մնում դուրս թափվելին բներից։ Նրա կողքին հեկեկում էր փոքրիկ Մարուշին։

— Հա՛, անգաճը կկտրես, էլի, — ձայն տվին շորս կողմից և ծիծաղելով նայեցին մեղադրյալին։

Սա գյուղի հայտնի լոթիններից մեկը՝ Սանդրոն էր։ Մահուղ շուքայով, երկայնաճիտ, բարձրակրունկ կոշիկները հագին, ֆուրաշկան մի ականջի վրա թեքած, կարմիր բաղադրին վղովը ձգած, մի կողմ կանգնած, նա ժպտում էր ուստա Սիմոնի և նրա բարկության վրա։ Հերոսին շրջապատել էին յուր ընկերներից մի քանիսը, որոնք եկել էին դատին ներկա լինելու։

— Կսպանե՛մ, ետո պատասխանը դուք կտաք, — բարձրաձայն սպառնում էր Սիմոնը, տեսնելով, որ դատարանն անուշադիր է յուր բողոքին։

— Սպանող ես՝ թու կնիկը պահի, շաշ գետինը մտած, — ձայն տվեց մեկը, և սրան հետևեց ընդհանուր ծիծաղ։

— Սպանիլ մի՛, ուստա Սիմոն ջան, մեղք աս, մուրազի վրա շահել աս, — հեզեց մի ուրիշը՝ նոր հռհռոց բարձրացնելով։

Այնտեղ տանուտերը մերթ ծիծաղելով ու հանաքներով, մերթ սպառնալով ու բարկանալով ստիպում էր Սիմոնին, որ ձեռք քաշի Վեդատոտ բանից»։ բայց այդ չէր հաջողվում։

— Ես ասում եմ, որ արին պետք է անեմ... հիմի էս աս, որ ասում եմ... — իբրև հաստատ որոշում շուտ-շուտ կրկնում էր Սիմոնը, սակայն բոլորն էլ գիտեին, որ նա արյուն անող մարդ չի։

Սանդրոյի ընկերներից մեկը պատի տակը քաշեց տանուտերին, ականջումը մի բան փսփսաց. տանուտերն էլ Սիմոնին մի կողմ քաշեց՝ ականջումը փսփսաց։

— Չեմ ուզում, — նրա ձեռքից ազատվելով գոռաց ուստան, — չեմ ուզում։

— Դե՛ որ չես ուզում, վկաներդ բեր, գործը շարունակում եմ, — դեմքը թթվացնելով ասաց տանուտերը և պաշտոնական դիրք ընդունեց։

Սիմոնը շվախեցավ։

— Ա՛յ վկա, — համարձակ ցույց տվեց Մարուշին։

— Դա երեխա աս, երեխա՛ վկայութունը զակոնը չի ընդունում։

— Իմ կնիկը ձանաչել աս, — իսկույն վրա բերեց ուստան։

— Քու կնիկը շատ կարելի աս սուտ աս ասում, զա՛կոնք առանց ֆակտի, գանգատավորի խոսքին չի հավատում, — կրկին խիստ ու կոպիտ մերժեց տանուտերը։

Սիմոնը հուսահատութենից ու կատաղութենից քիչ էր մնում վրա թռչել, խեղդեր յուր երեսին սառն հանգարտությամբ նայող տանուտերին, բայց, իրան գապելով, հարցրեց։

— Բաս էս ո՞նց պլտի ըլիլ...

— Էնհենց պլտի ըլիլ, որ դրուստն իմանալու համար ես պետք է քննութուն անեմ, պետք է թու կնգանը տանեմ դոխտուրի մոտ, որ դոխտուրը քննի...

Սիմոնը մնաց դիք կանգնած, արյունը զլուխը տվեց, ականջները տոթացին. նա չէր իմանում, թե որտեղ է կանգնած. շար մտքերն արդեն խռնվում էին նրա գլխում...

— Ա՛ղա, գնացեք սրա կնգանը բերեք, — հրամայեց տանուտերը և մի աղմուկ ընկավ։ Ոմանք տանուտերին էին խընդրում. ոմանք գնացողներին էին բռնում, ոմանք էլ Սիմոնի հետ էին կովում յուր «շաշուկայան» համար, որ բանն այստեղ հասցրեց, և աշխատում էին համոզել, որ գոնե այժմ ետ կանգնի խայտառակութունից։ Փոքրիկ Մարուշը կպել էր Սի-

մոնի փեշերին և յուր վախեցած աչքերով մե՛կ խոսողների երեսին էր նայում, մե՛կ՝ Սիմոնի:

Այս ժամանակ դատարանի լուսը մթնեց, և յուր ահագին գայլենի քուրքը ներս բերեց գյուղի հարուստներից մեկը՝ Պետրոս աղեն:

— Ի՞նչ խաբար ա, ի՞նչ եք դալմադալ անում,— ծանր-ծանր հարցրեց աղեն:

Եվ բոլոր պատմությունը, թեպետ հայտնի էր իրան, ուշադիր լսեց, իբրև թե նոր էր իմանում:

Գլուխը պտտելով, խոր հառաչեց գյուղի հայրը և խորհրդավոր ձայնով դարձավ շուրջը. գետինը մտե՛ք... ձեններուդ կտրեցե՛ք, անաբուռներ, աննամուսնե՛ր...

Այս խոսքերն այնպիսի ազդու կերպով արտասանեց, որ բոլորն էլ գլուխները կախ արին, և եթե մի օտար մարդ լիներ, կկարծեր, թե ամաչեցին:

— Սրան մտիկ արեք, սրա՛ն,— գլուխը վեր քաշելով, ձեռքը դեպի Սիմոնը մեկնեց աղեն,— օղլուշաղի անունը բերել ազցել գեղամեջ...

— Բա սուս կենա՛մ... նամուսս գետինն եք կոխել... բա սուս կենա՛մ...— գոռալով ընդհատեց ուստա Սիմոնը:

— Բաս ի՞նչ կանես, որ սուս չես կենալ...

— Ե՛րևի՛կ կանե՛մ...»,— արին կանեմ, արի՛ն...

— Ա՛յ տղա, դեռ կանգնած ե՞ք, էս բոպեիս գնացեք, սրա կնգանը բերեք,— տեղիցը վեր թռավ տանուտերը:

— Կացե՛ք,— աչքերը շոնեց աղեն, և նորից աղմուկն ընկավ: Այս ժամանակ տանուտերն ու Պետրոս աղեն իրար մի բանի խոսք ասացին:

— Մո՛ւս կացեք,— ձայն տվեց աղեն,— ի՞նչ եք գորտան ժամատուն շինել... Սանդրո՛, էստեղ արի:

Սանդրոն մոտեցավ:

— Մի հինգ մանեթ հանիր էստեղ:

— Ախար զուր ա, է՛, աղա:

— Ես քեզ ասում եմ, հանի՛ր:

— Ախար զուր ընչի՛ հանեմ:

— Ես քեզ ասում եմ զո՛ւր հանիր,— բարկացած հրամայեց աղեն:

Սանդրոն, քթի տակը ծպտալով, մի հնգանոց հանեց, տվեց աղին և ուզում էր հեռանալ:

— Կա՛ց, ո՛ւր ես գնում... դու էլ էստեղ արի, Սիմոն:

— Գալ չեմ, էդ խելքից հեռու բան ա... ես իմ նամուսը փողով չեմ առել, որ փողով էլ ծախեմ:

— էստեղ մո՛տիկ արի:

— Ասեցի, որ գալ չեմ:

— Դե գնացե՛ք, ասեցի... ես էստեղ խաղ չեմ անում... Շուտ գնացեք, սրա կնգանը բերեք,— կրկին մեջ ընկավ տանուտերը:

— Կացե՛ք, դեռ չգնաք... Սիմո՛ն, քեզ ասում եմ էստեղ արի:

— Առաջ գնա, է՛լի,— խառնիխուռն աղաղակում էին այս ու այն կողմից:

— Գնա բարըշի, հինգ մանեթն առ, է՛լի...

— Տո, շաշ, գնա, մուֆթա փող ա, առ, ջեբդ դիր. մի տարի որ տանջվես, պատ դնես, էդքան աշխատիլ չես...

— Կասես թե մենձ բան ա էլել... առաջ գնա՛...

Աղաղակելով, շղկացնելով ու հրելով առաջ բերին Սիմոնին, մոտեցրին Սանդրոյին. աղեն նրանց ձեռք ձեռքի տվեց, հնգանոցը կոխեց Սիմոնի բուռն ու գոռաց — «պոռոշտի՛»:

— Պոռոշտի՛, պոռոշտի՛,— աղաղակեցին գյուղացիք:

Սիմոնն անզգայաբար գլուխն առաջ ծռեց...

— Ան՛ւշ, ան՛ւշ,— ձայն տվին գյուղացիք:

Հաշտությունը կայացավ... Երբ որ սկսեցին արդեն ուրիշ բաներից խոսալ, Սիմոնն աննկատելի կերպով, փոքրիկ Մարուշի ձեռքը բռնած, էնպես թաքուն դուրս եկավ դատարանից, որ ոչ ոք չնկատի...

ԼԵՌՆԵՐԻ ՀՈՎԻՎԸ

Լեռնե՛ր... բարձր ու կանաչ լեռներ, դուք հայրենիքն ու գահը զով գեփյուռների, անուշաբույր ծաղիկների, սուրբ ցուղերի ու շաղերի, անմահական սառն աղբյուրների, սև-սև

ամպերի, հրեղեն կայծակների, ջրեղեն տարափների... Պո՛ւր— մոտիկ աստծուն, աստղերին, լուսնին, երկնային շնորհքներին ու գաղտնիքներին, վեհ ու վեհապանծ լեռներ...

Եվ ո՞վ է հողեղեններից այնքան ձեռք նման հպարտ, հզոր, վեհանձն ու մաքուր, որքան ձեր հարազատ որդեգիրը, ձեր մրրիկների ու գեփյուղների, ծաղիկների ու կայծակների ծնունդը, ձեր պահած ու փայփայած հովիվը:

Լեռների հովիվը. անծանոթ ու խորթ կյանքի սրտամաշ հառաչանքներին, գետնաքարշ արարքներին, հացկատակ խաղերին ու տաղերին, հպարտ ու զվարթ, որպես այդ ձեր վայրենի ծաղիկները:

Բայց ձեր վայրենի ծաղիկներն էլ իրանց բույրով-հրապույրով ընկնում են ծանր ու կռափտ ոտների տակ և արականվում, ցեխ դառնում:

Քաղաքում, բարձրահարկ տան բակում՝ յուր սրինգն ածում ու պար էր գալիս մի բարձրահասակ, թիկնավետ երիտասարդ: Նրա հագին բազմատարազ շորերի ցնցոտիներ էին, գլխին՝ ծանր քրդի քոլոզ:

Զվարթ էր նրա հովվական սրնգի ձայնը, ուրախ էր պարի եղանակը, աշխույժ էր և պարը, միայն տխուր էին թուխ, կրակոտ աչքերը, որ երբեմնակի նայում էին վերև: Նրանք երբեմնակի նայում էին վերև, երևի տեսնելու, թե օքմի՞ն կա պատշգամբներում, թե չէ. նայում էին, սակայն չէին աղերսում...

Տխուր էր և նրա առնական դեմքը յուր շիկասև նորածիլ շրջանակի մեջ, ուր նշանավոր էին արծվի քիթն և ուռած շրթուները: Եվ նա ինքն ամբողջ մի մարմնացած վայրենի վիշտ էր, բայց յուր սրինգն ածում ու պար էր գալիս:

Նրա հնամաշ շորերի ձորձորը թռչկոտելով դիպչում էին բարձր ազդրերին ու բաց սրունքներին, հորինելով մի ծիծաղաշարժ տեսարան, որ սաստիկ վիրավորում էր նրա հզոր կերպարանքն ու դառն տխրությունը:

— Պո՛ւրդը, քո՛ւրդը... — աղաղակեցին երեխաները, և տանըցիք նոր ճաշերն ավարտած, թմփթմփալով սրնգի ձայնին դուրս եկան պատշգամբը, նայելու աղքատ քուրդին:

Ավելի ոգևորված՝ քուրդը կրկնապատկեց եռանդը, աշ-

Ֆաստում էր ցույց տալ յուր բոլոր շնորհքը զանազան ծամա-ծռություններ ու խեղկատակություններ անելով... Եվ նա հասնում էր յուր նպատակին. վերևից հրճվում, ուրախ կրկրչում էին:

Բայց նրանցից ոչ ոք չէր մտածում, թե ինչու ինքը՝ պարողը չի ուրախանում, ինչու մենակ նա է տխուր...

Եվ ի՞նչ կավելանար աղքատ քրդին, եթե մեկն այդ հարցաներ: Նրան մի քանի կոպեկ սև փող էր հարկավոր, առավ դուրս եկավ:

Մտավ ուրիշ բակ:

Պատրաստվում էր դարձյալ յուր պարն սկսելու, եթա մեկը հարցրեց.

— Ո՞րտեղացի ես, տղա՛:

— Սասունիցն, աղա:

— Հապա օ՛ւր ես եկել:

— Ես շոքան էի, աղա. թուրքեր մեր գեղ քանդեցին... քիմ ոչխար լե թալլեցին...

Նա բաց արավ կուսն տակը, որտեղ երևում էր խանչալի տված լայն վերքի սպին, քոլոզը վերցրեց, ցույց տվեց գլխի պատուվածք, երևի դրանով ուզում էր ասել, թե հեշտ չի տեղի տվել թշնամուն, և դարձյալ ծածկելով՝ սկսեց յուր սրինգն ածել ու պարել:

— Где это Сасун, папа? — հորը փարելով հարցրեց օրիորդը:

— Это там... далеко, — ձեռը թափ տալով, իբրև պատասխանեց հայրը և շարունակեց «ղնչոտալով» նայել աղքատ սրնգահարին, որ, զանազան ուսումներ ու ծամածռություններ անելով, պար էր գալիս ներքև՝ բակում:

Զվարթ էր նրա սրնգի ձայնը, պարի եղանակը, աշխույժ էր և պարը, միայն տխուր էին նրա թուխ, կրակոտ աչքերը, որ երբեմնակի նայում էին վերև...

Եվ այսպես պար էր գալիս հայրենիքից հալածված, ոչխարը խլած Սասունի լեռների հովիվը: Նրա հնամաշ շորերի ձորձորը թռչկոտելով դիպչում էին բարձր ազդրերին ու բաց սրունքներին, հորինելով մի ցավալի տեսարան:

Գյուղացի Համբոյի տունը կոխվ էր ընկեր:

Համբոն ուզում էր իր տասներկու տարեկան Գիքորին տանի քաղաք, մի գործի տա, որ մարդ դառնա, աշխատանք անի: Կինը չէր համաձայնում:

— Չեմ ուզում, իմ բորփա էրեխին էն անիրավ աշխարքը մի գցիլ, չեմ ուզում,— լալիս էր կինը:

Բայց Համբոն չսեց:

Մի խաղաղ առավոտ էր. մի տխուր առավոտ. Տանըցիք ու հարևանները եկան մինչև գյուղի ձեռք, Գիքորին թշուր պաշեցին ու ճամփա դրին:

Քույրը՝ Զանին, լաց էր լինում, իսկ փոքրիկ Գալոն մոր գրկից ձայն էր տալի. «Գիքոր՛ւ, էդ ո՛ւլ ես գնում, հե՛ Գիքոր՛ւ»:

Գիքորը շուտ-շուտ ետ էր նայում: Տեսնում էր դեռ գյուղի ձեռին կանգնած են նրանք, ու մայրը գոգնոցով սրբում է աչքերը: Դարձյալ հոր կողքով վազում կամ առաջն էր ընկնում: Մին էլ ետ նայեց. գյուղը ծածկվել էր բլուրի ետև:

Այնուհետև Գիքորը ետ էր ընկնում:

— Արի հա՛, Գիքոր ջան, արի հա՛, հասանք հա՛,— որդուն կանչելով գնում էր Համբոն, շալակին մի խուրջին, մեջք մի քանի հաց ու պանիր ու մի երկու դաստա թուփուն:

Իրիկնապահին, երբ անց էին կենում սարերը, մի անգամ էլ երևաց գյուղը հեռո՛ւ մշուշում:

— Ա՛յ, ապի, մեր տունն էն ա հա՛,— ցույց տվավ Գիքորը՝ մատը մեկնելով դեպի գյուղը, թեև տունը իսկի չէր երևում, ու անցան:

Առաջին իրիկունը ղոնախ ընկան մի գյուղում: Տանտերը Համբոյի հին ծանոթն էր:

Դեղին օսմովարը թշուր էր տախտի ձեռին: Մի ջահել աղջիկ շրջխկշրջխկացնելով բաժակները լվանում ու թեյ էր շինում: Նա մի կարմիր սիրուն շոր ուներ հագին: Գիքորն էնտեղ մտքումը դրեց, որ երբ քաղաքում փող աշխատի, իրենց Զաննի համար մի էն տեսակ շոր դարկի:

Իրիկնահացից ետը տանտերն ու Համբոն թինկը տված, շիրուխ քաշելով զրուց էին անում: Խոսեցին Գիքորի մասին: Տանտերը գովեց Համբոյին, որ շարշարվում էր որդուն մարդ շինի: Հետո սկսեցին խոսել կովի վրա, հացի թանգության վրա, բայց Գիքորը շատ էր հոգնած, բունը տարավ:

Մյուս օրը քաղաք մտան: Գնացին ձեռուների թավալու մոտ: Առավոտը բազարն իջան:

— Բիճա, էդ էրեխին ծառա ես տալո՞ւ,— խանութի ներսից հարցրեց մի վաճառական:

— Հրամանք ես,— ասավ Համբոն ու Գիքորին էն կողմը հրեց:

— Բեր ինձ տուր, ես կբռնեմ,— առաջարկեց վաճառականը:

Նրան ասում էին բազաղ Արտեմ:

Համբոն քաղաքում Գիքորին ծառա տվավ բազաղ Արտեմի տանը: Պայմանն էն էր, որ Գիքորը պետք է տունը մաքրեր, ամանները լվանար, ոտնամանները սրբեր, դուքանը բաժին տաներ, ու էս տեսակ մանր ծառայությունները մինչև մի տարի:

Մի տարուց ետը բազաղը նրան պետք է տաներ դուքան, շիներ դուքանի «աշկերա», ու էսպես Գիքորը պետք է բարձր բանար:

— Հինգ տարի դեռ փող չեմ տալ,— ասավ բազաղը վաճառականին: Թե դրուստը կուզես, դեռ դու պետք ես տաս, որ քու որդին բան է սովորելու: Ախար իսկի օան տի... ԳՐԱԳՐԱԿԱՆ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԳՐԱԳՐԱԿԱՆ

— Որտեղից գիտենա, խազեին ջան,— պատասխանեց Համբոն,— որ գիտենար, էլ ո՞ւր կբերեի, ես էլ բերել եմ որ բան սովորի... ԳՐԱԳՐԱԿԱՆ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԳՐԱԳՐԱԿԱՆ

— Կսովորի, ամեն բան կսովորի: Էնպես սովորի ո՞ր... Զեր կողմերից էն նիկուն ինչ է, որ իրեն համար դուքան ունի բաց արած, նա էլ ինչ մտքով ու պատկերով կարողանա... ԳՐԱԳՐԱԿԱՆ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԳՐԱԳՐԱԿԱՆ

— Չէ՛, խազեին ջան, սա գողանալ չի: Որ էդպես բան անի, կգամ կոնիցը կբռնեմ, էն Քուռը կգցնեմ:

— Հա՛, որ ձեռը հալալ է՝ մարդ կդառնա:

— Իմ դարդն էլ էն ա, աղա ջան, որ մարդ դառնա. լեզու սովորի, գրիլ-կարդալ սովորի, նստիլ-վերկենալ սովորի, մարտաճանաչի, որ աշխարհումն ինձ նման խեղճ ու զուրկ չմնա... Ինքն էլ աչքաբաց էրեխա ա, մեր գեղական շկոլումն էլ գրաճանանչ ա էլել, գրի սեն ու սպիտակը ջոկում ա: Ամա աղաչանքս էն ա, որ լավ մտիկ անեք, դարիք էրեխա ա, քորփա ա...

Բազազը Համբոյին միամտացրեց ու դուրս գնաց, բարձր ձենով հրամայելով. «Չալ բերեք, հաց բերեք սրանց համար...»

3

Շիր ու որդի նստած էին բազազ Արտեմի խոհանոցում: — Դե, հիմի դու գիտես, Գիքոր ջան, տեսնեմ՝ ինչ տեսակ աղա ես դուրս գալի... Հենց պետք է անես, որ... ես ի՞նչ գիտեմ... Ե՛վ տեղ աստո՞ժ... — մռնչաց Համբոն ու շիբուխը լցրեց:

Այնինչ Գիքորը շորս կողմն էր դիտում:

— Ապի, սրանք բուխարի շունե՞ն:

— Չէ, սրանցը փեչն ա, ա՛յ էն ա փեչը...

— Կալ էլ շունե՞ն:

— Սրանք քաղաքացի են, գեղացի հո չեն, որ կալ կտան:

— Բա ո՞րտեղից են հաց ուտում:

— Փողով առնում են ուտում: Հացն էլ են փողով առնում, եղն էլ, կաթն էլ, մածունն էլ, փետն էլ, շուրն էլ...

— Վա՛...

— Բա՛, սրան Թիֆլիզ կասեն: Դու հլա դոշաղ կաց, դեռ շատ բան կիմանաս:

— Ապի, սրանք ժամ ունե՞ն...

— Ունեն բա՛ս, սրանք էլ մեզ նման հայ քրիստոնյա են: Մտիկ արա հա՛ — ձեռնաքաշություն շանես: Կարելի ա քեզ փորձելու համար. փող վեր կգցեն, մոտենաս ոչ: Թե վերց-

նես էլ, տար ասա — «խանո՛ւմ, էս ի՞նչ փող ա, էստեղ վեր ընկած էր. աղա՛, էս բանն էստեղ գտա», թե չէ...»

— էստեղ էլ պրիստավ կա՞ որ...

— Կա բա՛ս... Վախտ ու անվախտ դես-դեն շքնկենս, ձեռք ընկած փողը քոռուփուշ շանես, հազար ու մի պակասություն ունենք: Քեզ էլ լավ պահի, գիշերները բաց լըլես, մրսես ոչ... Մի-մին եկողի հետ գիր դարկի... — մերթ-մերթ շիբուխը բերանից հանելով որդուն խրատում էր Համբոն: Այնինչ Գիքորը ննջում էր:

— Հացի կտորտանքն ու քարթուն կտան, կերակուրի թերմացքը կտան, շատ անգամ էլ իրենք կուտեն, քեզ տալ չեն, բան չկա. առայի կարգն էդ ա... Օրեր են, կմթնեն անց կկենան...

Շարունակում էր հերն իր հոտաքը, բայց Գիքորը հորթ թինկը տված քնել էր ազգե՛

էն երկու օրը նա էնքան բան էր տեսել, էս ու էն կողմը նայել, որ հոգնել էր բոլորովին:

Մրգով լիբը խանութները, դեզերի նման դարսած գուլնըզ-գուլն շթերը, տեսակ-տեսակ խաղալիքները, ուսումնարան գնացող կամ դարձող երեխաների խմբերը, իրար ետևից սլացող կառքերը, ուղտերի շարքերը, կանանչի բարձած ավանակները, թաբախները գլխներին կինտոնները... էս ամենի գոռոցն ու զնգոցը, աղմուկն ու աղաղակը իրար խառնված ղժվժում էր նրա գլխում: Եվ նա հոգնել էր ու հորը թինկը տված քնել:

էս ժամանակ բազազն ու իր կինը վիճում էին ներսը: Կինը տրտնջում էր, որ ծառան խամ էր, նոր սարիցն եկած, վայրենի, իսկ մարդն ուրախ էր, որ մի քանի տարով անվարձ ծառա էր գտել:

— Կսովորի, հո էդպես չի մնալ, — ասում էր նա կնոջը:

— Կսովորի, որդի, սիրտդ շուռ մի՛ բերի, — խնդրում էր բազազի պառավ մայրը:

Բայց տիկին Նատոն չէր համոզվում: Նա արտասովելուք անիծում էր իր բախտը:

Գիքորը մենակ նստած էր բազազ Արտեմի խոհանոցում: Նա արդեն ծառայութեան մեջ էր:

Խազեհիսի հին զլխարկը մինչև ականջները կոխած գլուխը, հին ոտնամանները ոտներին, մի մավի բլուզ էլ հագին, էսպես ոտից գլուխ փոխված, նա նստած էր խոհանոցում ու միտք էր անում, թե ընչի եկավ իրենց գյուղից, որտեղ է ընկել, հիմի ինչ պետք է անի...

Էս ժամանակ ներս մտավ տիկին Նատոն:

Գիքորը տեղը նստած էր:

Տիկինը մի բան ասավ: Գիքորը լավ չլսեց, թե չհասկացավ:

— Քե՞զ չեմ ասում, տո արջի քոթոթ:

Գիքորը շփոթվեց, քրտնեց. մին ուզեց հարցնի, թե ինչ է ասում, մին էլ սիրտ շարավ: Աղջիկ պարոնը բարկացած շուրս գնաց:

— Ը՛հ, հոգեմ ձեր գլուխը, որ վայրենի եք ու գալիս եք մարդի գլխի խաթա դառնում... Ես բան եմ ասում, սա տեղիցն էլ ժած չի գալի, ձեն էլ չի հանում...

— Վերջացավ,— անցավ Գիքորի մտքովը:— Բայց ի՞նչ շուտ վերջացավ... ի՞նչ վատ վերջացավ... Հիմի ես ի՞նչ անեմ... հերս էլ գնաց...

Եվ ամեն բան նա վերջացած էր համարում, երբ իրեն-իրեն խոսելով ներս մտավ սև շորերով բարի պառավը՝ բազազի մերը:

— Որ աղջիկ պարոնը ներս է գալի, տեղիցդ ընչի՞ չես կանգնում, որդի,— խրատում էր նա Գիքորին.— որ բան են հարցնում, ձեն հանի... ո՞նց կըլի էդպես...

Պառավին դեղի էին ասում:

Դեղին սովորեցնում էր Գիքորին, թե ինչ պետք է անի. ինչպես սամովարը գցի, ոտնամանները սրբի, շտակը բռնի, ամանները լվանա...

Բացի պառավ դեղին, ամենքը նեղացնում էին նրան:

Բազազի «դուբանի աշկերտներն» էլ շարունակ ծաղրում էին նրան, «քիթի» էին կանչում, քիթը քաշում, գլխին խփում, գլխարկը կոխում ականջները: չ

Բայց էս բոլորը տանելի բաներ էին:

Անտանելին էն էր, որ նա չէր կարողանում քաղցին դիմանա: Իրենց տանը, երբ սովում էր, գնում էր տաշտիցը հաց էր առնում, կճուճիցը պանիր էր հանում, ուտելով գնում խազալու, կամ թե չէ՝ փեշն էր դնում, դնում հանդը: Երբ ուզում էր՝ մի ծառի տակի կամ աղբորի վրա նստում էր ուտում:

Հիմի էստեղ ուրիշ տեսակ էր: Ինչքան էլ սոված լիներ՝ պետք է սպասեր մինչև ճաշի ժամանակը գար, էն էլ ամենքն ուտեին, հետո ինքը: Էդ անիծած ժամանակն էլ էնքան ուշ էր գալի, որ խեղճի սիրտը քամ էր ընկնում, թրթռում:

Մին, երկու, տասը համբերելուց ետը նա սկսեց շորս կողմն աչք ածել խոհանոցում, թե արդյոք մի բան չի գտնիլ ուտելու, որ սիրտը կանգնեցնի, մինչև ճաշի ժամանակը գա:

Սկզբում ինչ գտնում էր — շոր հացի փշրանք, կրծած ոսկոր թե ուրիշ բան, պցում էր բերանը: Մի քիչ հետո մտածեց խոհանոցի պահարանները որոնել: Ապա թե սովորեց կերակուրի պղնձից կիսեփ մսի կտոր դուրս քաշել...

Բայց եթե նկատեի՞ն...

Ինչ վատ բան դուրս կգա՞ր...

Եթե նկատեի՞ն...

Հապա ի՞նչ անես...

Թողնե՞ս, փախչե՞ս...

Եվ Գիքորն սկսեց մտածել փախչելու մասին:

Բայց ո՞նց փախչես, ո՞ր կողմը փախչես. մենա՞կ, ճամփա չգիտես, մարդ չես ճանաչում... իսկ հերը...

Էնքան շարշարվեց, խոսեց, խրատեց՝ «Օրեր են, որդի, կմթնեն, անց կկենան...»

Եվ ահա Գիքորի գլխում հնչում է հոր խանձված ձենը.— «Օրեր են, կմթնեն, անց կկենան... անց կկենան...»:

Զանգը ասիլի:

Գիքորը վեր թռավ: Ասել էին, թե երբ զանգը տալիս են, գնա տեսնի՞ ով է, ինչ է ուզում: Նա դուրս եկավ, պատշգամ-

բից նայեց, տեսավ՝ մի պարոն ու մի քանի տիկին դռան առաջ կանգնած։

— Էդ ո՞վ եք, հե՛յ,— ձայն տվավ վերևից։

Ներքևից վերև նայեցին։

Տիկինները ծիծաղեցին, իսկ պարոնը, ականջներն ուղղելով, հարցրեց։

— Աղջիկ պարոնը տա՞նն է։

— Ի՞նչ եք անում,— հարցրեց Գիքորը։

Ներքև ծիծաղն ավելի սաստկացավ։

— Քեզ հարցնում են՝ տա՞նն է, թե չէ,— բարկացավ պարոնը։

— Բան ունե՞ք։

Էս աղմուկի վրա տիկինը դուրս եկավ։

— Քրքրվես դու, գնա դուռը բաց արա, շո՛ւտ,— ճշաց ու սկսեց անիծել Գիքորին և իր ամուսնուն։ Քայց շուտով հյուրերն երևացին, և նա ժպտալով դիմավորեց։

— Ա՛ բարև, բարև... Էս ո՞ր խաչիցն էր, ի՞նչպես է որ մտաբերեցիք...

— Էս ո՞րտեղից եք գտել,— ոտից գլուխը Գիքորին շափելով հարցրեց պարոնը, իսկ տիկինները շարունակ ծիծաղում էին։

— Ի՞նչ եք նախանձում, կուզեք ձեզ տանք,— կատակի տվավ տիկինն, ու հյուրերը խնդալով ներս մտան։

Գիքորին շտապով մի տեղ ուղարկեց ու նրանց հետևից իսկույն ներս մտավ և տիկին նստոն։

Իրար առողջություն հարցնելուց հետո հյուրերն սկսեցին պատմել իրենց ներս մտնելու պատմությունը, և դուրս եկավ մի ահագին պատմություն։

— Օ՛ֆ, սիրտս մաշել է,— գանգատվում էր տիկին նստոն.— թե իմանաք՝ ինչ եմ քաշում ես դրա ձեռիցը։ Ասում եմ՝ դուրս անենք կորչի, բայց դե Արտեմի բնավորությունը գիտեք էլի, ասում է՝ մեղք է, գեղացի երեխա է, թող կենա, մի կտոր հաց է, ուտի, կսովորի... Ախր էլ ե՞րբ... սիրտս մաշեց...

— Օ՛հ, օ՛հ, օ՛հ, էդ ծառաների բանն էլ մի՛ ասի,— էս ու էն կողմից սկսեցին բողոքել տիկին հյուրերը։

Մի կես ժամ խոսեցին դեսից-դենից, ծառաներից, քա-

ղաքի նորություններից։ Հենց էդ խոսակցության ժամանակ ներս մտավ քրտնած Գիքորը։

— Աղջիկ պարոն, մի՞րգը բերի։

— Հա, լավ, գնա՛,— հրամայեց տիկինը կարմրելով, իսկ հյուրերն սկսեցին ծիծաղել։

— Աղջիկ պարոն, խազեինն ասում էր՝ բալը թանգ ա, հարկավոր չի...

Էս խոսքերի վրա հյուրերից ոմանք պոռթկացին ու թաշկինակով բերաններին հուպ տվին, ոմանք էլ տանտիկնոջ խայտառակությունը ծածկելու համար վկայեցին, թե իրավ բալը շատ թանկ է, էս ժամանակին ով է բալն առնում։ Ապա սկսեցին հանդիմանել, թե ի՞նչ հարկավոր է մի՞րգը, հո ուտելու համար չեն եկել, ի՞նչ են նեղություն քաշում...

Տանտիկինը, մինչև ականջակոթերը կարմրած, աշխատում էր մի կերպ եղածն ուղղի։

— Ով գիտի ինչ է ասել, չի հասկացել էս հիմարը։

— Ով սուտ ասի՝ գետինը մտնի,— երդվեց Գիքորը, ու ամեն բան լրացավ։

6

Հյուրերին ճամփու դնելուց հետո տիկին նստոն բարկացած, բարձր-բարձր խոսելով վեր էր քաղում մրգի սեղանը։ Նա հայհոյում էր Գիքորին, մեկ-մեկ թվում էր, թե ինչոր է անում նա, անիծում էր իր բախտը, իր ամուսնուն։

— Քա՛, խամ է, որդի, կսովորի, որդի... ինչի ես սիրտդ շուռ բերում... Ախ աստոծ, ի՞նչի չես հոգիս առնում,— հառաչում էր պառավ դեղին։

— Երանի մի իմանամ՝ մարդու սրտի էս նեղացած ժամանակը դու ինչ ես խոսում... Խամ է, դե գնացեք դուք շինեցեք, ես հո ձեռ գիրին չեմ,— ձենն ավելի բարձրացնելով պատասխանեց պառավին հարսը ու շարունակեց իր տրտունջն ու անեծքը մինչև ամուսինը տուն գար։

Ամուսնու ոտնաձայնը որ լսեց՝ սկսեց արտասվել, ավելի բարձր խոսել ու ամանները իրար գլխով տալ։

— Ասում եմ՝ դուրս արա կորչի. ես ծառայի բանն էլ կանեմ. թե խնայում ես՝ փող տաս, կարգին ծառա բռնես...

Վա՛յ է մարդ ծառայի տեղ էլ քաշ գա, քան թե ամեն օր էսենց սիրտը շուռ բերի... Իմ թշնամին հո չե՞ս...

— Ի՞նչ է պատահել,— հարցրեց բազազը՝ տան մեջտեղը կանգնելով:

— Ի՞նչ պետք է պատահի. էս էլ մնացել, որ խալխի մոտ էլ մարդ գետինը մտնի, էս էլ արիբ. էլ ի՞նչ պատահի,— վրա թռավ տիկինը ու պատմեց բալի պատմությունը:

— Վա՛հ,— բացականչեց բազազը:

— Ա՛խ աստ՞ժ,— հռուշում էր բարի պառավը՝ դեռ ու դեռ ընկնելով:

(Բազազը Գիբորին ձեն տվեց):

Թմփթըմփացնելով Գիբորը ներս ընկավ:

— Մոտիկ արի,— կանչեց բազազը:

Գիբորը վախեց նրա գույնից, մնաց տեղը կանգնած:

— Քեզ ասում եմ՝ մոտիկ արի...

Գիբորն էս անգամ շարժվեց, բայց դարձյալ մնաց տեղը կանգնած:

— Տո՛, արջի քոթոթ, ես քեզ ասում եմ՝ աղջիկ պարոնին ասա, դու գալիս ես զոնաղներին ասում, թե բալը թանգ է՞ր...

— Ես... ես... աղջիկ պարոնին...— ուզում էր արդարանա Գիբորը, բայց խոսքը բերանում՝ ապտակը հասավ, աչքերը կաթմակին տվին, գլուխը դիպավ կողքի պատովն ու վեր ընկավ: Հենց ընկած տեղն սկսեց բազազը ոտքել, անդադար կրկնելով — «բալը թանգ էր, հը՞... բալը թանգ էր, հը՞...»:

Պառավ դեղին դողողալով մեջ ընկավ, աշխատում էր ետ քաշի կատաղած որդուն, աղջիկ պարոնն էլ եկավ, երեսաներն էլ սկսեցին ճշալ, բազազը ետ կանգնեց հեռավոր ու կրկնելով — «բալը թանգ էր, հը՞», — աչքերը միշտ շոած անկյունում կծկված Գիբորի վրա, որ դողալով ու ցավագին մըրմընջում էր.

— Վա՛յ, նանի ջան, վա՛յ... վա՛յ, նանի ջան, վա՛յ...

7

Տեսան տանը շի կարողանում ծառայի՝ խանութ տարան Գիբորին: Էնտեղ ապրանք պետք է տային մուշտարիների հետ տանելու, շիթ պետք է ծալեր, խանութը սրբեր, իսկ պարապ ժամանակը մուշտարի կանչեր:

24

Եվ ա՛հա Գիբորը հաց է տանում խանութը: Կերակրամանը ձեռքին, մաշված ու տժգույն, մեծ-մեծ ոտնամանները քաշ տալով անց է կենում կամուրջով: Նայեց ներքև: Քարվանսարանների բարձր պատերին զարկելով ծառս էր լինում Քուռը, ոլորվում, պտտվում ու ճնշվելով խեղդվում, խուլ թշշում կամուրջի տակին:

Ափից մոտիկ պտտում էր մի կանաչ նավակ: Երկու հոգի կային նրա մեջ. մինը ուռկան էր ձգում, մյուսը նավն էր կառավարում:

— Ա՛յ հիմի կհանի,— ասավ Գիբորն ու կանգնած նայում էր ձկնորսներին: Ուռկանը դատարկ դուրս եկավ:

— Էս մինն իմ բախտից,— ասավ Գիբորն ուռկանը ձգելիս: Գիբորի բախտը դատարկ դուրս եկավ:

— Էս մինն էլ մեր Զաննի բախտիցը:

Էս էլ դատարկ դուրս եկավ:

— Էս մինն էլ Գալոյի բախտիցը:— Գալոն էլ էր անբախտ:

— Էս մինն էլ բաս...

Բայց էդ ժամանակ մոտիկ քարվանսարի դռանը աղմուկ բալ բացալ: Մի պարսիկ կապիկ էր պար ածում երգելով:

Ա՛յ արի, արի, մեյմուն,

Ճիպտոց սարի, մեյմուն,

Պառավի պես կուզի-կուզ,

Ջահելի պես պարի, մեյմուն:

Ժողովուրդը հավաքվել էր գլխին ու վազում էին շորս կողմից: Գիբորն էլ վազեց: Աշխատեց կանգնած ժողովրդի արանքը մտնի, առաջ անցնի, շկարողացավ: Վիզը ձգեց, պճեղների վրա կանգնեց ու ճգնում էր անպատճառ տեսնի, թե ինչ է կատարվում մեջտեղը:

— Ի՞նչ ես ներս խցկվում, տո լածիրակ, զնա քու բանին,— ասավ մի կինտո ու զարկեց գլխին:

Գիբորը հանկարծ սթափվեց ու վազեց դեպի խանութը:

8

Իրիկունը Գիբորը կուշ էր եկել խոհանոցում: Դեռ սրտասուքը չէր ցամաքել նրա երեսին, դեռ այրվում էին խաղերի-ապտակների տեղերը, դեռ նոր էր լռել աղջիկ պարոնի ձենը — շվշվացնելով ներս մտավ Վասոն՝ բազազի աշկերտը:

25

Գիքորին նկատելով՝ նա իսկույն կանգ առավ ու, մասխարա դեմքին լրջություն տալով, սպառնալի հարցրեց.

— Կլուբումն ուշացա՞ր, տո արջի քոթոթ, թե գուբերնատի մոտ վռագ գործ ունեիր...

Գիքորը գլուխը շէր բարձրացնում:

— Ասա մի տեսնեմ է, տո՞...

Գիքորը լուռ էր:

— Չե՞ս իմանում, տո՞. ո՞րտեղ էիր է՛, որ էսօր ինձ քաղցած սպանեցիր. որ մեռնեի՝ հետո՞...

էսպես խոսելով կամաց-կամաց մոտեցավ, մի քիչ կանգնեց ու հանկարծ զարկեց Գիքորի գլխին: Գիքորը երկու ձեռքով գլուխը պաշտպանեց ու սեղմվեց պատին: Վաստն պատրաստվում էր մի ուրիշ ձևի հարված էլ հասցնելու, բայց դուրսը բարձրացավ խաղեհինի ձայնը: Գալիս էր:

— Աբա տես հիմի քեզ ի՞նչ է անում,— սպառնաց Վաստն:

«Հիմի ինձ կսպանեն», անցավ Գիքորի մտքովը, ու խեղճի հոգին տապ արավ:

Խաղեհինը արդեն բավականին ծեծել էր խանութում, այժմ միայն հրամայեց հաց շտան, որ իմանա, թե ինչ բան է քաղցածությունը:

Վտանգն անցավ:

Գիքորը հանգստացավ, թեև լսում էր աղջիկ-պարոնի ձայնը, որ ճշում էր.— Ախր ընչի՞ ես պահում, դուրս արա կորչի էլի, դուրս արա կորչի՞...

9

Գիքորը կծկվեց վերմակի մեջ, գլուխը կոխեց տակը, տապ արավ:

«Վտանջակ գիշեր, բոլորովին քուն չունեմ,

Ինձ տեսնողը կարծում է, թե տուն չունեմ, վա՛յ, տուն չունե՞մ...»

իր երգը երգելով Վաստն հաց էր ուտում: Գիքորը վերմակի տակից երբեմն զգուշ ծիկրակում, թաքուն նայում էր նրան, կրկին աչքերը ծածկում: Նա էն օրը հաց չէր դրել բերանը.

ծեծվել ու լաց էր եղել, այժմ էլ քաղցած պառկեց, ու քունը չէր տանում:

— Հը՞, ո՞նց ա, սոված քունդ չի՞ տանում հա՛, էդպե՛ս...— նկատեց շարաճճի Վաստն ու մի կտոր հաց ու պանիր տվավ Գիքորին:— Դե, առ, տեղի տակին թաքուն կեր, խաղեհինը չիմանա:

Գիքորը հափշտակեց հաց ու պանիրը, գլուխը կոխեց տեղի տակը, թաքուն ուտում էր ու մտածում: Մտածում էր իրենց տան վրա, էն օրերի վրա, երբ ազատ խաղում էր հանդերում ու լիասիրտ հաց ուտում, մտածում էր էն երեկոների վրա, երբ հերն ու մերը կռվում էին իրեն քաղաք բերելու համար... մերը լաց էր լինում, չէր ուզում...

— Ա՛խ, նանի ջան, ի՞նչ լավ էր սիրտդ իմացել,— հառաչում էր Գիքորը տեղի տակին ու հաց ու պանիրը ուտում, ականջը սրած, թե խաղեհինը հո չի գալի:

(Իսկ առավոտը կանգնած էր խանութի դռանը:)

10

խանութի դռանը կանգնած ձեն էր տալի Գիքորը, մուշտարի էր կանչում ու բարձր ձենով գովում իրենց ապրանքը:

— Կանչի է՛, տո՞. ի՞նչ ես մնջվել, մնացել կանգնած: Բերանումդ հո ջուր չկա՞:

— Է՛ստի համեցե՛ք, է՛ստի համեցե՛ք...— կանչում էր Գիքորը:

Ներսը ծիծաղից թուլանում էին:

Նրան սովորեցրել էին, որ մուշտարի քաշի դեպի իրենց խանութը: Եվ նա հաճախ բռնում էր էս կամ էն անցորդի փեշից, կոպիտ ու համառ սկսում էր քաշել դեպի խանութը, ու բաց չէր թողնում, մինչև որ մարդը դուրս էր գալի համբերությունից: Գալիս էր դարձյալ իր տեղը կանգնում ու կանչում:

Ամառվա տոթ օրերին, խանութի դռանը երկար կանգնելուց հոգնած, նա երբեմն նստած քնում էր խանութի առաջին դարսած լիթերի վրա:

էդ ժամանակ շարաճճի ընկերները կամ հարևանները բռնոթի էին բռնում նրա բթի տակը:

Նա փռշտալով վեր էր թռչում:

Շոգից թմրած վաճառականները զվարճանում էին: Իսկ խազեհինը կուշտ ծիծաղելուց հետո ձայն էր տալի:

— Քնում ե՞ս, տո, արջի քոթոթ, կանչի է՞...

— Է՛ստի համեցե՛ք, է՛ստի համեցե՛ք,— ձեն էր տալի Գիբորը:

11

Մի օր էլ Գիբորը երբ մուշտարի էր կանչում՝ դիմացից երկու գյուղացի դուրս եկան: Նա վազեց, փաթաթվեց գյուղացիներին:

— Ա՛յ տղա, իսկի ճանաչեցի ոչ, էս ի՞նչ բան էր,— զարմացած բացականչեց գյուղացիներից մինը ու դարձավ ընկերին:

— Բազո, դու կճանաչեի՞ր...

— Ես աչքերիցը կճանաչեի,— պարծեցավ ընկերը:

Ճշմարիտ որ Գիբորը շատ էր փոխվել, շատ էր մաշվել: Ինքն էլ էր փոխվել, շորերն էլ: Դժվար էր ճանաչելը:

— Ա՛յ տղա, էս կարգին մարդ ա դառել... հալա սրա շորերին, սրա շնորհքին...— հիանում էին գյուղացիները:

— Համբոյի հողը մեր գլխին. տես, նա իր տղին ո՞րտեղ հասցրեց, մեր տղերքը էնտեղ խոզ են արածացնում...

Այնինչ Գիբորը իրար ետևից հարցնում էր.

— Իմ մերը ո՞նց ա... մեր էրեխեքը ո՞նց են... իմ հերն ընչի՞ չեկավ... մեր կովը ծնել ա, թե չէ... մեր գեղումն ո՞վ ա մեռել...

— Ամենն էլ լավ են, շատ բարով կանեն,— պատասխանեցին գյուղացիք:— Էն ա Սուքնանց Ղուկասը մեռավ. մին էլ Պուճուրանց պառավը, մնացածը լավ են:

— Բա իմ հերն ընչի՞ չի գալի:

— Քու հերը լավ ուղում ա, ամա ո՞նց գա: Ինքը մեռնակ մի մարդ ա, սաղ տան ջափեն վրեն...

— Բա բան չեն դարգե՞լ...

— Ինչ ունեն, որ ինչ դարգեն, դու ձեր տան բանը գիտես ո՞չ: էս տարի էլ հացը բարակ էր, խեղճ հերդ գոռով

ծերը ձերին ա հասցնում: Երանցից ի՞նչ ես ուզում: Թե ունիս. դու դարգի. հրեն խարջ են ուզում — ձեռին գոռ չունի:

— Հո մեր տանիցը օքմի չի՞ հիվանդացել:

— Չէ՛, էն ա ձեր Ծաղիկ կովը Միրզանց գոմի փլեկովը. ներքև ընկավ, սատկեց:

— Ծաղիկը սատկե՞ց...

— Խեղճ մերդ էնքան լաց էլավ՝ աչքերն ուռան:

էս ասելով, գյուղացիներից մեկը մի նամակ հանեց տվավ: Գիբորին ու ասավ.

— Հիմի ի՞նչ ես ասում. մենք էլ քեզ տեսնիլ չենք, փնալու ենք. թե մորդ կամ քվորդ համար բան ես դարգելու, տուր տանենք:

— Ո՞րտեղից բան դարգեմ, դեռ փող չեմ ստանում... ամա...

— Ամա ի՞նչ...

— Ուզում եմ՝ ես էլ գամ ձեզ հետ: Համ մեր գեղին, համ մերոնց կարոտել հմ, համ էլ...

— Վա՛յ, վա՛յ, մենք հենց իմացանք մարդ ես դառել, խելոքացել ես... էդ տեսակ բան կասե՞ն: էստեղ քեզ համար աղավարի ապրում ես — շորերդ թազա, ոտն ու ձեռդ իստակ... Մենք ասում ենք մեր էրեխանցն էլ տեղ անես՝ բերենք, դու էդ ի՞նչ ես ասում: էն որ ասել են՝ «խոզի գլուխը դրին խալիչին, գլորվեց հա ցեխն ընկավ», հալալ քեզ համար են ասել:

էսպես հանդիմանեցին գյուղացիները, խրատեցին, մնասբարով ասին ու ղնացին:

Նրանց գնալուց հետո Գիբորն իր անկյունը քաշվեց ու բացարավ հոր նամակը:

«Իմ սիրելի որդի Գիբոր ջան:

Ի քաղաքն Թիֆլիզ:

«Մենք ողջ և առողջ ենք, միայն քու առողջութիւնն ենք ուզում, ամեն: Քեզ շատ կարոտով բարով են անում ապին, նանը, Ջանին, Մոսին, Միկիչը, Գալոն, ամեն: Մեր սիրելի որդի Գիբոր. ա՜հա իմացած լինես, որ տեղներս շատ նեղ ա և խարջը սաստիկ ուզում են և փող չենք ձարում, և նանն ու Ջանին տկլոր են և տեղներս շատ նեղ ա: Գիբոր ջան, մի քանի»

մանթ փող դարգի և մի գիր դարգի քու որպիսութենիցը: Եվ իմացած ըլես, որ Մաղիկը սատկեց, և նանն ու Ջանին տկլոր են»:

(Նամակը կարդաց ու տեղը կանգնած միտք էր անում Գիբորը, դարդ էր անում իրանց տան համար: Սիրտը էրում էին նամակի տողերը:

— Նանն ու Ջանին տկլոր են... Տեղներս նեղ ա...

— Կանչի է՛, տո, ի՞նչ ես վերացել, ուշքդ հետները գնա՞ց... — ձեն տվին ներսից:

— Է՛ստի համեցե՛ք, է՛ստի համեցե՛ք, — կանչում էր Գիբորը խանութի դռանը կանգնած:

12

Չմեռը եկավ: Սառն աղմուկով ձյունախառն բուքը թռչում է քաղաքի վրով: Փողոցներում սուրում, սուլում, հոսան է անում: Վզզալով մտնում է անկյունները, աղքատի ու տրկլորի է ման գալի, պանդուխտ ու անտեր երեխա է որոնում: Ահա գտավ Գիբորին:

Մի բարակ բլուզ հագին, խանութի դռանը կանգնած ձեն էր տալի նա.

— Է՛ստի համեցե՛ք, է՛ստի համեցե՛ք...

— Հրե՛սս... — շարախինդ սուլելով ցուրտը, աներևույթ թրի նման, զարկեց անցավ ոսկորները: Գիբորը դողաց:

Առանց էն էլ նա շատ էր մաշված. էդքանն էլ հերիք էր նրան: Ու անկողին ընկավ:

13

Հիվանդ պառկած էր Գիբորը բազազ Արտեմի խոհանոցում: Չառավ դեղին օրը մի քանի անգամ ներս էր մտնում՝ իրեն-իրեն խոսելով:

— Ի՞նչ կուզես, որդի՛, Գիբոր՛:

— Զա՛ւր...

Դեղին ջուր էր տալիս: Հիվանդը դողդոջուն ձեռներով բռնում, ագահ խմում էր ու կրկին ուզում:

— Էս սիրտս հովացնում չի, դե՛ղի... ես մեր աղբրի սառը

30

ջրիցն եմ ուզում, դե՛ղի... ես մեր տունն եմ գնում... ես իմ նանին եմ ուզում...

Բաղաղ Արտեմը ցավի մեջ էր ընկել: Նա դես-դեն ընկավ, նրանց կողմերից մարդ գտավ, ապսպրեց, որ Համբոն գա, իսկ Գիբորին տարավ քաղաքային հիվանդանոցը:

Էնտեղ շատ հիվանդներ կային շարքերով պառկած: Տխուր տնքում էին ու օճորքին նայում անզոր հայացքներով:

Գիբորին էլ պառկեցրին նրանց շարքում:

Էտեղ գտավ նրան հայրը:

— Էդ ինչ ես էլել, Գիբոր ջան, — մղկտալով վրա ընկավ Համբոն:

Գիբորը տաքության մեջ շիմացավ հոր գալը:

— Գիբոր՛ը ջան, բա եկել եմ, է՛, Գիբոր ջան... ես քու ապին եմ, է՛...

Հիվանդը ոչինչ չհասկացավ: Նա զառանցում էր ու զառանցանքների մեջ կանչում էր — «Միկի՛չ, Զանի՛, ապի՛, նանի՛...»:

— Էստեղ եմ, Գիբոր ջան, նանը դարգել ա, որ քեզ տանեմ մեր տունը... գալիս չե՛ս... Միկիչն ու Ջանին հրեն կտերը կանգնած քեզ ճամփա են պահում: Ի՞նչ ես ասում. դե խոսա է, Գիբոր ջան...

— Է՛ստի համեցե՛ք, է՛ստի համեցե՛ք, — բացականչեց հիվանդը, զանազան անկապ, կցկտուր խոսքեր ասավ ու ծիծաղում էր տաքության մեջ:

14

Մի երկու օրից ետը Համբոն գնում էր իրենց գյուղը:

Նա թաղել էր Գիբորին ու գնում էր: Կռան տակին տանում էր շորերը, որ մերը լաց լինի վրեն: Շորերի գրպաններում մի բուռը փայլուն կոճակներ, նախշուն թղթեր, չթի կտորներ ու մի քանի քորոց գտան: Էն էլ երևի, քորոց — Զանիի համար էր հավաքել ու պահել...

Գնում էր Համբոն ու մտածում: Շատ ժամանակ չէր անցել, սր էդ միկնույն ճամփով քաղաք եկավ իր Գիբորի հետ: Ահա էտեղ էր, որ նա ասավ.

— Ապի, ոտներս ցավում են...

31

Յվ ահա էն ծառը, որի տակ նստեցին հանգստանալու...
Ահա էնտեղ էր, որ ասավ.

— Ապի, ծարավ եմ...

Ահա էն աղբյուրն էլ, որ ջուր խմեցին...

Ամենը, ամենը կան, մենակ նա չկա...

Մյուս օրը, երբ Համբոն անցնում էր լեռները՝ հեռվում
ճրեաց իրենց գյուղը՝

Գյուղից դուրս կանգնած սպասում էին նանը, Զանին,
Միկիլը, Մոսին, իսկ փոքրիկ Գալոն մոր գրկից կանչում էր.

— Ալի՛, ալի՛, հե՛ Գիբոլ...

2895

ԱՐՋԱՌՐԾ

Ա

Մի կերի տարի ես ու մեր Ավագը Մասրեքում խոզ էինք
պահում: Հիմի մի աշունքվա գիշեր բերել ենք խոզը իր նիս-
տը արել ու դափի դռանը մի կրակ վառել, որ բոցն աստժու
ոտներն էրում է: Մի լուսնյակ գիշեր է: Ես պկու եմ ածում,
էս Ավագն էլ մի բայաթի է վեր քաշել, որ սար ու ձոր գրվ-
գրվում են:

Մին էլ Ավագը թե՛ «Ա՛յ տղա, էն ո՞վ է, հրե մի մարդ է
գալի վերի կանիցը»:

Մտիկ տամ տեսնեմ, դրուստ որ՝ մի մարդ է գալի վերևի-
ցը: Ամա ես էլ լսել եմ, որ արջը գողության գալիս՝ խաբելու
համար առաջի երկու ոտը դռշին է դնում, երկու ոտանի
մարդի նման է գալի, ոնց որ մարդ ըլի:

Ասի՛ Ավագ, էս օքմին չի, արջ է:

Թե՛ բո՛հ, չէ չէ պողկեր:

Ա՛յ տղա, ասի՛ արջ է:

Ես՛ հա, սա՛ չէ. ես՛ հա, սա՛ չէ: Իսկ նա էլ կամաց-կամաց
կողքահան մոտենում է, ու ձեռներին էլ հրացան չկա: Մին
էլ էն տեսանք՝ առաջի երկու ոտը վեր գրավ, դառավ շորստ-

նանի ու, ա՛ռ հա կտաս՝ խոզի կես տեղը: Խոզը ճղճղալու՛վ
իրար խառնվեց, հավաքվեց արջի վրա:

— Այաբա՛շ, բռնի հա՛ բռնի, հրես հա՛, հրես:

Ամեն մի նս մի ածխակոթ վեր կալանք, վազեցինք: Մի
հաստիկ մերուն ունեինք. ականջ դնենք, որ սրա ճղղոցը
ներքի փոսերիցն է գալի: Վազ տվինք փոսերի վրա: Ածխա-
կոթը քաշել ենք, հիմի էս անիրավին վեր ենք հատում, տա-
լիս ենք, ինչ անում ենք, չենք անում, մերունը բաց չի թող-
նում. առաջներս խտրած ձորն է ընկնում: Վերջը՝ շատ
տեղը նեղացրինք, չէ՛, թող արավ, փախավ:

Առավոտը ասի՛ Ավագ, դու խոզի կշտին կաց, ես գնամ
տանիցը մի հրացան բերեմ:

Թե՛ դե՛, լավ:

Բ

Ավագը խոզի կշտին կացավ, ես գնացի. տանը մի հին
հրացան ունեինք, վեր կալա եկա: Եկա, շիտակ գնացի ներքի
մոշուտնին, որտեղ դիտեմ արջի տեղն է: Ման էկա. որ գտա
ոչ, մի տեղ մի լավ մոշուտ պատահեց, կանգնեցի, ասի՛
մի քիչ մոշ ուտեմ: Միամիտ մոշ ուտելիս՝ հենց մոշնու տա-
կիցը մի նը ֆրթացրեց ու հրացանս բռնեց:

Դու մի ասիլ, գնացել եմ հենց անտեր արջի վրա եմ
կանգնել:

Որ հրացանիս լուլիցը բռնեց, ես էլ կոթը պինդ բռնեցի:
Հիմի նա օլորում է, ուղում է կտորի, ես էլ օլորում եմ, որ
հենց անեմ ձերը վրեն ընկնի, հուպ տամ, ծուխը փորն անեմ:
Բայց անտերը գլխի է ընկել, թողնում չի:

Ես ձգեցի, նա ձգեց. տեսա, որ բան չի դառնում, ձեռս
զցեցի, ասի հանկարծ խլեմ: Ձեռս զցեցի թե չէ, թանթիկը
բերավ ուսովս պատ տվավ: Որ թանթիկն ուսովս պատ տվավ,
հրացանը բաց թողեց: Էնքան արի՛ հրացանի ձերը փորին դեմ
առավ, շախմախը ձեռս զցեցի, ասի՛ էս է, բանը պրծավ: Վե-
րի ոտը քաշեցի՛ շրթկացրի, տրաքեց ոչ: Մտիկ տամ, տեսնեմ՝
բարը վեր է ընկել, կորել: Էնտեղ մեջքս կտորեց: Հրացանը
բաց թողի, ասի՛ խտրտիցն ազատվեմ. եղավ ոչ: Բռնեցինք
իրար:

Դես քաշեցինք, դեն քաշեցինք: Տեսնեմ՝ անտերն էս է, ինձ ուտում է: Ձեն տվի՝ «Ա՛լաբաշ հե՛յ... Ա՛լաբաշ հե՛յ...»

Մին էլ տեսա շունը կլանչելով գալիս է: Եկավ, հասավ: «Ա՛լաբաշ, օգնի, ասի, ինձ կերավ...»: Հա՛յ քեզ մատաղ, շո՛ւն: որ հասավ մեջքին տվավ էլի, ոնց որ մի գնդակ ըլի: Ամա ի՛նչ, էն շունը թե նրա մեջքին տված, թե էն լեռ քա-րափին:

Ոնց որ երկու փահչևան պինդ իրար բռնեն, բռնել ենք ու աչք աչքի ենք գցել: Մին էլ տեսա՝ կում արավ ու մարդի պես երեսիս մի մեծ թքեց — թո՛ւ: Որ թուքն աչքերս բռնեց, գլուխս դռչիս վրա կուացրի, ետնուց էլ թանթլիկով մի թունդ ապտակ հասցրեց, ու ինձ կորցրի:

Տեսա՝ էլ ազատվելու դուռը չկա, ասի՝ ես առաջուց երե-սիս վրա վեր ընկնեմ, որ երեսս փշացնի ոչ: Բերանսիվեր տա-կին վեր ընկա: Որ տակին վեր ընկա, շունն ավելի կատաղեց: Արջն ընկել է ինձ վրա, շունը ետևից իրեն ուտում է, որտեղից բռնում է՝ օգուտ չի անում: Դու մի ախլ վարպետ շուն է, գիտի արջը որտեղից կխեղճանա: Մեջքին վեր էլավ, ականջ-ներիցը բռնեց: Որ ականջներիցը բռնեց, արջը ինձ թռեց: Անտերը գազազեց, շանը թափ տվեց մեջքից, վեր գցեց ու բռնեց, հուպ տվավ թե լանչեց, էլ գիտեմ ոչ՝ ինչ արավ, որ բաց թողեց, շունը կլանչելով ձորն ընկավ, փախավ, հարստվ:

Շունն էլ գնաց. մնացինք ես ու ինքք: Հիմի առկին երեսս բռնած միտք եմ անում: Իմացել եմ, որ արջը ալանջ է դնում, տեսնի շունչ կա, թե չէ: Թե իմանում է, որ շունչ է քաշում տակի օքմինը, ջարդում է, մինչև շունչը կարի, թե հա չէ՝ բոթբաթաղ է անում, թողնում գնում, որ հոտի, հետո դա հանի ուտի: Էս միտք անելիս մին էլ էն տեսա՝ գլուխը բերավ գլխիս վրա դրավ, շունը իրեն քաշեց. ականջ է դրել: Ես էլ շունչս փորս գցեցի, ոնց որ թե մեռած եմ: Գլուխը վեր քա-շեց, մի քիչ կոացավ՝ մին էլ ականջ դրավ: Էլ ես շունչս պահեցի: Սա որ տեսավ՝ ես էս է մեռած եմ, ինձ թող արավ

մրթմրթալով գնաց: Աչքս ծերպ արի, ասի՝ մտիկ անեմ, տես-նեմ ուր է գնում: Ասում եմ՝ հենց լինի մի քիչ տեղ հեռանա, վեր կենամ փախչեմ:

Գնաց՝ մտիկ ցախ ու մախ կար, փետ կար, հավաքեց բերավ վրես ածավ: Մեջքիս վրա դրավ, շինքիս վրա դրավ, էլ ետ գնաց: Գնաց, մի թեթև ցրցրորի կար, էն էլ բերավ ոտ-նեքիս վրա դրավ, մին էլ ետ գնաց:

Տեսնեմ՝ մի ահագին քոթուկ կա, շարշարվում է պոկի, որ բերի էն էլ վրես գցի: Միտք արի որ՝ թե էս քոթուկը բերի վրես գցի, տակին շունչս կկտրի: Ասի, քանի ուշքը քոթու-կումն է, վեր կենամ կորչեմ: Փորսող տալով փետերի տակի-ցը դուրս եկա, փախա մտա մտոիկ մամխուտը, տապ արի:

Հիմի տապ արած տեղիցս մտիկ եմ անում: Չարշարվեց, քոթուկը պոկեց ու, ոնց որ մարդը խտրտի, խտրտեց, բերավ թե վրես գցի: Եկավ տեսավ փետերի տակին մարդ չկա: Քո-թուկը խտրտին զարմացած կանգնեց, փետերի տակին մտիկ արավ, շորս կուռը մտիկ արավ, հանկարծ քոթուկը վեր գցեց ու՝ թո՛ւ հա թո՛ւ, թո՛ւ հա թո՛ւ, մարդի նման թքտում է. ասի երևի ափսոսում է, էլի՛:

Թո՛ւ հա թո՛ւ անելով, ճոճուացնելով ընկավ ներքի ձորը: Ես էլ վեր կացա, դուրս պրծա դեպի Ավագը: Գալիս եմ, ոնց եմ գալիս, ոնց որ հետ ածած լինեմ: Ետ եմ մտիկ անում, ասում եմ տեսնեմ, հո արջը դալիս չի: Հասա մեր խոզի նիստը: Էս Ավագը թե՛ ա՛յ տղա, էդ ի՛նչ խաբար է, էդ ի՛նչ ես եղել: Ասի՝ էլ խաբարը ո՞րն է, քո տունը քանդվի, էսենց բան եկավ գլուխս: Թե՛ բա հրացանըդ ո՞ր է:

Նոր տեսնեմ, որ հրացանս մտիցս ընկել է. թողել եմ տեղը:

Եկանք մի քանի հոգի հավաքվեցինք, գնացինք հրացանս բերինք: Հրացանիս քարը շինեցի, պնդացրի, ասի՝ Ավա՛գ, էլի պետք է գնամ: Թե՛ ա՛յ տղա, ձեռը վեր կալ, կրճի կզդի: Ասի՝ հիմի սովորեցի, էնպես չեմ անի, որ բռնի:

Թե՛ դու գիտես: Հրացանս վեր կալա, քարը պնդացրի ու գնացի: Տանձի

էլ կաթոցի ժամանակն է: Գնացի մինչև ճաշ ման եկա, ոտնա-
հան եղա. գտա ոչ: Միտք արի՝ ախպեր, սա ուր կլինի քաշ-
ված, ախր սա պետք է որ էս խոզի կողմերից հեռանա ոչ:
Վեր կացա, ասի ներքեւմ մոշուտների վրա:

Մի քիչ գնացի, մին էլ տեսնեմ, ըհը՛, արջի հետքը առա-
ջիս: Հետքն ընկա գնացի. գնամ՝ տեսնեմ հրես մի բարդի
կրծել է, կրծել ու թողել: Գլխի ընկա, որ սրանում մեղր կա:
Վերև մտիկ տամ, ճանճը արկանոցից բանում է: Ասի՝ հիմի
թե իրեն գտնեմ էլ ոչ, էս հո որս է ու որս: Մի քիչ էլ գնացի,
տեսնեմ առաջիս մի մորմոռնջարուն է քանդել, բայց հողը
դեռ թաց է: Տեսա որ մոտեցել եմ: Էստեղ մի անտեր ահ ըն-
կավ սիրտս: Հրացանի քարին մտիկ տվի ու առաջ գնացի:
Հենց ոտս փոխեցի, մի թըմփթըմփոց եկավ: Կանգնեցի...
Բացատի գլխին մի լավ մեղրատանձի կա. տեսնեմ՝ հրես
տակին տանձ է ուտում: Էս կռանը մի տանձ է կաթում,
դեսն է վազում, մրթմրթալով ծամում ու ականջ դնում, էն
կռանը մի տանձ է կաթում, դենն է վազում: Մին էլ որ կանգ-
նեց տանձի կաթոցին ականջ դնելու, ծառի տակը մտա, հրա-
ցանն երեսս կալա: Տեսնեմ հրացանի ծեըը տըմբտըմբում է:
Չէ՛, սիրտս պնդացրի, մին էլ նշան դրի, հուպ տվի... Հրա-
ցանը որ տրաքեց, սա մի գոռաց, պըտիտ եկավ, ու առ հա՛
կտաս, ընկավ ներքի ձորը: Հրացանս մին էլ լցրի, մոտիկ
թմբի գլուխը բարձրացա, տեսնեմ սա ջրին է վազում. ասի՝
բաս սրա բանը խարաբ է. վիրավորը որ ջրին գնաց, ջուր
խմեց — պրծավ, էլ ապրիլ չի:

Մին ասի՝ ետևիցը գնամ, մին էլ ասի՝ անեծք շար սա-
տանին. վիրավոր արջը գեշ է, կրոնի, կփշացնի: Էն է, ինչ
նա դենը գնաց, ես էլ ետ եկա, էլ գիտեմ ոչ ինչ եղավ:

Միայն էն օրերում ձորի վրա շատ ուրուր պըտիտ եկավ...
1899

ԳԱՐՈ ԲԻՋՈՒ ՇԵՐԱՄԱՊԱՀՈՒԹՅՈՒՆԸ

Ես ու Գաբո բիձեն անցնում էինք Լոռու ձորով:

— Հե՛յ, տիրացու, — ձայն տվավ նա:

— Համմե՛:

— Հրամանքդ շատ: Ես տեսնում եմ, որ էս մեր նոր

ուսում առածները շատ աշխարհքից դուրս մարդիկ են, դու
սրան ի՞նչ կասես:

— Ինչո՞ւ, Գաբո բիձա:

— Ընդուր համար, որ հենց գիտեն՝ ամեն բան իրենք են
հասկանում, իրենցից առաջ էլ ոչ մարդիկ են էլել, ոչ բան
են հասկացել: Մին էլ կտեսնես նստեցին ու գլխիդ գելի ալե-
տարան կարդացին — հա՛ էս ճանճ պահի՛ր, էս աբրեշումի
ճիճու պահի՛ր, էսպես մածուն շինի՛ր, էսպես ցանի՛ր, էն-
պես հնձի՛ր... Տո՛, հեր օրհնած, մի առաջ հարցրո՛ւ, տես՝ էդ
բաները դրանք էլ միտք են արել թե չէ, նրանցից ետը՝ թե-
կուզ ուշունց տուր:

— Ետո մի՞տք եք արել որ, Գաբո բիձա:

— Ախպեր, ա՛յ, ես հիմի՛ օրինակի համար՝ մինն ասեմ,
դու տես՝ մենք էլ հացակեր մարդիկ ենք, բան ենք հասկա-
նում թե՞ չէ: Մի աշունք մեր Գավոն գնաց քաղաքը խոզ ծա-
խելու: Մի ճանանչ մարդ աբրեշումի ճիճվի սերմ էր տվել թե՛
տարեք ձեր տեղը բհամ բերեք: Ծամփա պահեցինք մինչև
գարունը բաց էլավ: Գարունը որ բաց էլավ, ոնց որ խրատ
էր տվել՝ էս ճիճվի սերմը բերինք մեր խիզանի ծոցում դրինք,
որ տաքանան, դուրս գան: Դուրս էկան ասեղի ծերի չափ մանր
սև զադեր — մի խոսքով մոնը քեզ օրինակ: — Գաբո բիձեն
այստեղ հանկարծ ձայն տվեց: — Տիրացո՛ւ:

— Համմե՛:

— Էդ ձեր ուսումնականները թե գիտեն — աբրեշումի ճի-
ճուն ի՞նչ կուտի:

— Թթան տերև:

— Ապրե՛ս, դրուտ ա: Գնացի ձորիցը մի շալակ թթան
տերև բերի, կապեցի մենձ տան ամբարի ոտիցն ու ճիճուն
վրեն ածի: Ինչքան մարդ էկավ թամաշա, ոչ մնի տուն չթո-
ղինք՝ որ աչքով շտան, ասինք՝ թող մի տեսնենք ինչ ա դուրս
գալի: Ա՛յ տղա, էդ անտեր ճիճունները մի քանի օր կացան
ու կոտորվեցին: Հիմի թե ասենք նրանից էր, որ գոմշի ձագը
շատ էր մոտ կապած, ոտնատակ էր տալիս, թե նրանի՞ց էր,
որ հավերը տուն էին թափում — մե-մեն կուտ ուտում, դե
ո՞նց անենք: Խո չէինք կարող հավերը կոտորել կամ ձագն
սպանիլ: Թե ասենք անձրևիցն էր, որ երդիկովը ներս էր
թափվում, մին էլ մարդ միտք ա անում, թե բա քաղաքումն

անձրև չի գալի՞ր... Մի խոսքով՝ բան գլուխ չեկավ: Տեսանք, որ մեր երկրումը արբեշումի ճիճուն անում չի, բան չի դառնում: Դե՛, զարմանալի ի՞նչ կա որ. էնպես երկիր կա՝ դուշ չի ապրում, էնպես երկիր կա՝ ցորեն չի դուրս գալի. ամեն մի աշխարհք մի տեսակ բնություն ունի. ամա էս մեր նոր ուսումնականները էսքանն էլ չեն հասկանում:

1899

ԵՐԿՈՒ ԶԱՅՐ

1896-ի կոտորածի ձմեռն էր: Մի խումբ փախապականներ Սասունի կողմերից հասան էջմիածին: Նրանց մեջն էր և Ա. գյուղի ծերունի տեր Սարգիսը:

— Հայրիկի աջը կուզեմ համբուրել, — խնդրեց նա վեհարանում, ու ներս թողին:

— Բարով, տեր հայր, — աջը մեկնեց Հայրիկը. քահանան համբուրեց ու ետ եկավ, կանգնեց դահլիճի մեջտեղը հոգնած, խորատակված:

— Որտեղի՞ց կուգաս:

— Սասունի կողմերեն. ես Ա.-ի տեր Սարգիսն եմ...

— Ա.-ի տեր Սարգի՞սը...

— Այո, Հայրիկ:

— Է՞...

— Ես քսան հոգուց գերդաստան ունեի, Հայրիկ. տղաներս կոտորեցին, հարսներս տարան, թոռներս կորան, տունս թալանեցին, վառեցին, մնացի այսպես...

— Է հիմի...

— Ես ոչինչ չեմ ուզում, Հայրիկ, ես... աչնպես, եկել եմ... եկել եմ... Հայրիկին ասեմ... էլ ոչինչ չեմ ուզում...

Ու Հայրիկի առջև կանգնած էր մարդը, որ ամեն ինչ կորցրել էր ու ոչինչ չէր ուզում:

Երկուսն էլ լուռ էին:

— Քանի՞ որդի կորցրիր, տեր Սարգիս, — գլուխը վեր քաշեց կաթողիկոսը:

— Ամենքը միասին քսան, Հայրիկ:

— Դու քսան որդի ես կորցրել, իսկ ես քսան հազար, — պատասխանեց Հայրիկը. — այդ էլ քսան՝ եղավ քսան հազար ու քսան... Ո՞ւմն է շատ, տեր Սարգիս...

Քահանան ցնցվեց ու լուռ կանգնած էր:

— Ո՞ւմ վիշտն է մեծ, տեր Սարգիս:

— Հայրիկիներ...

— Դե ե՛կ, տեր Սարգիս, մոտ եկ, աջդ դիր գլխիս, աղոթիր, օրհնիր, որ այս վշտին դիմանամ:

Ասավ ու գլուխը խոնարհեց:

Քահանան շտապեց առաջ, աջը դրավ իր Հայրապետի գլխին, սկսավ աղոթք մրմնջալ ու աչքերը լցվեցին արտասուրով...

Նա օրհնում էր հայոց կաթողիկոսին...

Նրա առջև խոնարհած էր հայոց Հայրիկը...

1907

ԵՐԿԱԹՈՒՂՈՒ ԾԻՆՈՒԹՅՈՒՆԸ

1898 թվին նոր էր բացվել Թիֆլիսից Կարս գնացող երկաթուղին: Լոռու գյուղերից մեկում մի իրիկնազեմ Ուհանես բիճու դուռն գերանների վրա նստոտած զրույց էինք անում: Ուհանես բիճեն մեզ պատմում էր, թե ինչպես սկսվեց երկաթուղու շինությունը:

«Մի տարի ես ու մեր Սիմոնը ներքի ճալումը ճիպոտ էինք կտրում»: Էսպես էր պատմում նա:

«Մին էլ տեսանք մի քանի սիպտակ շլապկավոր մարդիկ ներքեկից դուրս եկան ու ջուրնիվեր, ջուրնիվեր գնացին:

— Ա.սի՛ հե՛ Սիմոն:

— Թե՛ ի՞նչ ա:

— Ա.սի՛ էստեղ մի բան կա:

— Թե՛ ի՞նչ պըտի ըլիլ, ճամփորդ մարդիկ են, կարելի ա ճամփեն կորցրել են, իրենց համար գնում են:

— Ա.սի՛ չէ, էստեղ մի բան կա, ետնա կիմանաս:

Սկանք տեսանք Տերսանց ջաղացի կտերը մի սիպտակ փետ ա տնկած:

— Ասի՛ հե՛ Սիմոն:

— Թե՛ ի՞նչ ա:

— Ասի՛ հիմի տեսնում ե՛ս:

— Թե՛ էս ի՞նչ ա որ:

— Ասի՛ հալա դեռ կաց, ետնա կիմանաս...

Սրանից մի քանի ժամանակ անցկացավ — մին էլ տեսնենք կազեթ եկավ, թե՛ բա՛ երկաթուղու ճամփեն դեսն են տանում...

— Ասի՛ հե՛ Սիմոն:

— Թե՛ ի՞նչ ա:

— Ասի՛ հիմի տեսա՞ր՝ խոսքս որտեղ դուրս եկավ...

— Ա՛յ լեզուդ պապանձվեր հա՛,— ձայն տվեց էն կողմից որսկան Օսեփը:

— Ա՛յ տղա, ընչի՞ ես էդպես ասում, ի՞նչ մի վնաս բան ա երկաթուղին,— մեջ մտան մի քանի գյուղացի:

— Վնաս չի, բա ինչ ա; եկավ ձորերումը ծղրտաց, էլ պախրա շմնաց, կխտար շմնաց, ձենիցը խրտնեցին, փախան կորան:

— Պախրեն ու կխտարը չէ որ, հավատա՛ ես էլ կկորչեմ,— խոսքն առավ մի հովիվ, որ դագանակին հենված կանգնած էր:— Գնում եմ քարի գլխին կանգնում եմ, ձորերին մտիկ եմ անում, որ էն քարափները քանդելիս տեսնում եմ, սրտիս ծերը մղչտում ա, ոնց որ թե մարդի երեխն թըշնամու ձեռին քրքրելիս ըլեն, ու մարդ կարենա ոչ թե օգնի...

— Չէ, շատ բան կփշանա,— սրա հետ էլ հառաչեցին մի քանիսը:

Ու սկսվեց վեճը երկաթուղու վրա, թե երկաթուղին օգուտ էր բերելու, թե վնաս:

էդ վեճի ժամանակ երկաթուղու գծի վրա աշխատող օտարականներից մինը ձորիցը դուրս եկավ ու մոտեցավ մեզ:

— Բարի իրիկուն ձեզ:

— Աստժու բարին, ուստա:

— Ինձ մի շափ ալյուր է հարկավոր, ձեզանից ո՞վ ալյուր կծախի,— դիմեց օտարականը ամենքիս:

— Ո՞րտեղացի ես, ուստա,— հարցրեց Ուհանես բիձեն:

— Օսմանլի հողիցն եմ:

— Ուհանես բիձա, հալա մի հարցրու տես ո՞ր քաղաքիցն ա,— խնդրեց մի գյուղացի:

— Քու քաղաքի անունն ի՞նչ ա, բարեկամ,— կրկին հարցրեց Ուհանես բիձեն:

— Սըվազ:

— Սըվա՛զ,— երկարացնելով ու խորհրդավոր կերպով կրկնեց Ուհանես բիձեն:

— Ի՞նչ ասավ, Ուհանես բիձա:

— Սըվազ...

— Պա՛հ, բու տունը չքանդվի...— ծափ տվին ու ծիծաղեցին մի քանի գյուղացի:

— Էնտեղից էստեղ քա՛նք ամսվա ճանապարհ է,— շարունակում էր հարցուփորձը Ուհանես բիձեն:

— Երեք ամսվա:

— Պա հո՞...— միաբերան զարմացան ամենքը:

— Համեցեք, զարիբ ախպեր, նստիր, հաց բերեն, հաց անուշ արա:

— Չէ, շնորհակալ եմ, վռազ եմ. ձեզանից ո՞վ ալյուր կծախի, մի շափ ալյուր տա՛ գնամ:

— Ախչի, մի շափ ալյուր դուրս բերեք,— դռնից ձեն տվեց Ուհանես բիձեն,— գլուխ-գլուխ լցրա՛ք:

Հարսներից մինը մի շափ ալյուր դուրս բերեց, ուզեց դատարկի մեջը, բայց նա թող շարավ:

— Ի՞նչ արժե...

— Աժա, դեռ աժա տոպրակիդ մեջը:

— Չէ, առաջ մի գինն իմանանք:

— Դեռ աժա, հետո կիմանաս. թե որ թանգ ըլի, դարտակելը հեշտ ա:

Ուստեն իր տոպրակը բաց արավ, հարսն ալյուրը մեջը դատարկեց ու գնաց:

— Դե հիմի ի՞նչ տամ,— հարցրեց ուստեն, ծոցից քսակը հանելով:

— Ոչինչ, ուստա, ոչինչ չի հարկավոր, քեզ փեշքեշ, մեր աշխարհումը դարիբից հացի փող չեն առնիլ, էդ տեսակ աղաթ չկա...— ասավ Ուհանես բիձեն ու շարունակեց իր շիբուխը ծխել:

Ուստեն մի քիչ շփոթվեց, չեմ ու շում արավ ու գնաց:

Ուստի գնալուց հետո մի կարճատև լուսթյուն տիրեց, ապա թե խոսեց մի գյուղացի:

— Էն օրը մինն էկել ա թե՛ մածոն են ուզում: Հարսները մածոն դրին առաջին. կերավ պրծավ, հիմի վեր ա կացել, թե՛ ինչ արժե...

— Ասում եմ՝ ի՞նչը...

Թե՛ մածոնը...

— Ասի՛ ա՛յ մարդ, գլխիցս քաշվի, կոպես բաներ մի խոսիլ, թե չէ ոչխարի էլած կաթն էլ կցամաքի...

— Ա՛յ տղա, բա ի՞նչպես անենք... Էն լա՛վ ա, որ ով գա մուֆտա ուտի ու տանի՞... Էս վրա քանիսն են գալի, գիտե՞ս թե չէ... Էն օրը մնին էլ ես եմ մի խան ալյուր չափել տվել... Էդ ո՞ւր կերթա, — մեջ ընկավ Ուհանես բիձու փոքր ախպերը:

— Որ գա՛ մին էլ տուր... — գլուխը վեր քաշելով հանդարտ խոսեց Ուհանես բիձեն:

— Օջախդ շին կենա, — վռչացին մի քանի ծերեր:

— Աչքս լուս էլի՛. Սըվազից սկսած ով գա՛ չափի տուր. կասես ես նրանց համար եմ աշխատել... Ով գալիս ա՛ բարով, հազար բարի. բան ա ուզում՝ փողը բերի՛ տանի...

Ու սկսեցին վիճել: Ուհանես բիձեն էլ տաքացավ, աղմուկը մեծացավ:

— Ո՛ւ-ո՛ւ-ո՛ւ... Չորերում սուլում էր երկաթուղին:

Նոր էր մտել նա մեր ձորերը:

ԱՀՄԱԴԸ

Ա

Ես իմ մանկության գարունները անց եմ կացրել մեր սարերում:

Շատ էի սիրում իմ տատոնց տունը ու միշտ այնտեղ էի լինում: Իմ քեռիներից ամենից փոքրը՝ Ահմադը, հովիվ էր: Նա ինձ տանում էր, ման էր ածում գառների մեջ, հետը

հանդից հաղարձի կարմիր ճյուղեր էր բերում ինձ համար, իսկ իրիկունները հանում էր սրինգը ու ածում:

Ու աստղալի, լուսնյակ գիշերները, ահագին խարույկի շուրջը բոլորած, ծափ էին տալի, խնդում էին իմ պապն ու տատը, իմ քեռիները, իսկ ես թիթեռի նման թրթռում, պար էի գալի նրանց շրջանի մեջ:

Ահմադը թուրքի անուն է, դրա համար էլ երբ մենք խոզի միս էինք ուտում, միշտ տանեցիք հանաք էին անում, ծաղրում, ծիծաղում էին Ահմադի վրա, թե՛ Ահմադը հայացավ, Ահմադը հայացավ...

Իհարկե, անունը լսողը կասեր թուրք է. բայց հենց նորս մտներ, տեսներ թե Ահմադը՝ ինչպես է ծած գալի տանը, հերթը էր, իսկույն կիմանար, որ նա տան սիրելի տղան է:

Ում կամենում էր, տուն էր բերում, պատվում, ճամփու դնում: Աղքատը ողորմություն ուզեր թե հարևանը հացփոխ, իր ձեռքով տաշտից վերցնում էր, տալի: Տան աղջիկներին ու փոքրերին հրամայում էր, ծեծում էր, սիրում էր, ինչպես ե մյուս քեռիներս: Անասունների համար հոգին տալիս էր: Մինը հիվանդանալիս գրեթե ինքն էլ հետն էր հիվանդանում. էնքան էր սիրում: Ինքն էլ էնպես սիրելի էր ամենքին: Ահմադը հիվանդանում էր թե չէ, մեր ուրախությունն էլ հետը կտրում էր: Ու ամբողջ օրը տատս ու պապս շորս կողմը պտտվում էին, ինչ որ լավ բան էին գտնում, շուրջն էին հավաքում, խնդրում էին, թե էլ ուրիշ ինչ կուզի սիրտը:

Բ

Մի առավոտ էլ վեր կացա, տեսնեմ՝ բոլոր տանեցիք ախուր են:

Իմ տատը արտասովելով քթքթում էր, ման էր գալի անկյուններում ու ինքը շէր իմանում, թե ինչ էր անում: Հարսներն ու աղջիկները լուռ, տխուր ներսուզուրս էին անում: Վրանի դռան կողքին նստած խոսում էր իմ պապը, իսկ մի քիչ հեռու գլխակոր նստած էին քեռիներս:

— Աստված լինի քո օգնականը, բալա ջան, — խոսում էր պապս: — Չոր քարին գնալիս՝ շոր քարն էլ կանաչի քեզ համար: Պակաս օրդ խնդությունով անց կենա... Դե, վեր կաց,

օրն անց է կենում, ճամփեդ երկար է: Վեր կաց, բալա ջան,
աստված բարի ճամփա տա, ոտդ ոչ դիպչի քարի...

Ահմադը շուխի փեշով աչքերը սրբեց, վեր կացավ, եկավ
մոտեցավ իմ պապին: Պապս գրկեց, համբուրեց Ահմադին, ու
աչքերը լցվեցին արտասուքով:

— Քո աշխատանքը մեզ հալալ արա, Ահմադ ջան, մեր
աղ ու հացն էլ քեզ հալալ լինի, քո մոր կաթնի պես: Մեզ
մտիցդ զցես ոչ: Քե աշողություն ունենաս՝ իմացրու, որ
մենք էլ ուրախանանք, թե պակասություն ունենաս՝ իմացրու,
որ հարեհաս լինենք: Դե, գնա, քեզ մատաղ, աստված բարի
ճամփա տա:

Ապա թե տատս գրկեց, համբուրեց Ահմադին, հետո մնա-
ցածները լաց լինելով ձեռն առան: Ապուշ կտրած փոքրերիս
էլ Ահմադը համբուրեց և մի երկու կով, հորթ, գոմեշ, ձագ,
մի կտրկան ոչխար, մի բարձած էշ առաջն արած, մի երկու
շուն էլ ետը զցած, ճանապարհ ընկավ: Մյուս քեռիներս ուղեկ-
ցում էին Ահմադին:

— Աստված բարի ճամփա տա, Ահմադ ջան, գնաս բա-
րով, բալա ջան,— ձեռքը ճակատին դրած ետևից ձայն էր
տալիս պապս:

Պ

Ահմադը անցավ սարի մյուս կողմը, մյուս քեռիներս վե-
րադարձան: «Բայց ինչո՞ւ էին լաց լինում մեր տանը, քեռի
Ահմադը ո՞ւր գնաց», մտածում էի ես:

— Ահմադը ո՞ւր գնաց, նանի,— հարցրի իմ տատին:

— Իրենց տունը գնաց,— պատասխանեց տատս:

— Իրենց տունը ո՞րն է...

— Ուրիշ տեղ է:

— Ահմադը ո՞վ էր որ...

— Ահմադը թուրք էր, մեր ծառան էր: Է՛, քանի տարի
մեր տանն էր... Հիմի իր իրավունքն առավ ու գնա՛ց...

— Բա էլ չի՞ գալու:

— Չէ՛, բալա ջան, գնա՛ց...

ԳՐԱԶԸ

1

Այնտեղ սարերն իրար են հանդիպել, իրենց արանքում
մի մեծ ձոր են ստեղծել, որ կոչվում է Մութը Ձոր:

Մութը Ձորը բաժանում է հայերին ու թուրքերին իրարից:
Նրա մի կողմը թուրք սարվորն է իջնում, իր բինեն զարկում,
մյուս կողմը՝ հայը:

Բայց նրանց իգիթները գիշերվա մթնով էլ անցնում են
այն խոր անդունդը, իրարից ոչխար են զողանում, ձի, կով
կամ գոմեշ են քշում: Նրանց հովիվները հանդիպում են հաս-
նում ու փետակոխով են անում:

Մեկ էլ տեսար մի սարի ուսից տարածվեց մի զիլ, առաձ-
գական ձայն— «Հավար հե՛յ...» Այդ գուժավոր ձայնը ձգվե-
լով՝ տարածվում է լեռներում, ու հանկարծ երկու կողմն էլ
բինեքում իրարով են անցնում:

2

Թուրք Ղափըշողլին իր բինեն զարկել, ձվար էր արել
Մութը Ձորի մի կողմը: Այնտեղից խրոխտ ու սպառնալի
նայում էր դիմացը վեր եկած հայերին: Նրա մարդիկը այդ
սարերի ամենահոշակավոր գողերն էին: Դատաստանից փա-
խածները նրա մոտ էին ծածկվում, սարերով անցնող ավա-
զակային խմբերը նրա հարկի տակ էին ապաստան գտնում:

3

Մի իրիկնագեմ վրանում թինկը տված նա զրույց էր
անում իր սովորական հյուրերի հետ: Նրանք հայտնի ավա-
զակներ էին, որ անցնում էին լեռներով:

— Էս դիմացի հայերին լա՛վ է տղերքը տակնուվրա շեն
անում,— իր զարմանքը հայտնեց հյուրերից մի քուրդ:

— Էդքան էլ խեղճ մի գիտենալ դրանց,— պատասխա-
նեց տանտերը:

— Դրա՞նց...

— Հա՛, դրանց: Դրանց մեջ Չատի անունով մի շորան կա, իգիթ եմ ասում, որ մենակ էն մի տղի դեմը դուրս գա:

— Փա՛ հա՛,— բացականչեց վրդոված ավազակը ու շրջվա- կալով վրա նստեց:

— Ի՞նչ կտաս գիշերս էնպես անեմ, որ առավոտն էլ ծուխ չբարձրանա դիմացը:

— Կապուտ ձին փեշքեշ:

— Չեռքդ տուր:

Նրանք ձեռք-ձեռքի խփեցին ու դրազ եկան:

4

Սարսափելի մութն են Մութը Չորի գիշերները:

Մի մթնագիշեր էր. անձրևն էլ անընդհատ տեղում էր միալար: Քնած էր հայերի բիներն: Երբեմն-երբեմն հովիվները այս կամ այն կողմից խուլ «հեյ-հե՛յ...» կանչելով, իմացնում էին, որ հսկում են դեռ:

Գիշերվա մի ժամանակը մի թմփթըմփոց անցավ վրան- ների մոտից: Ծները վեր կացան, վրա տվին, ոչխարը խըրտ- նեց, ձիաները փախան, տավարը ցրվեց: Հովիվները հավար կանչեցին, հրացանները բացվեցին, և այս բոլոր սարսափ- ներն ու ձայները խառնվելով մութին, հեղեղին ու ամպի որոտմունքին, հորինեցին մի դժոխային գիշեր:

— Շունը տարա՛ն, բինեն պահեցեք, հե՛յ...— գոռաց աժ- գահա հովիվ Չատին:

— Շունը տարա՛ն...— Չայն տվին ամեն կողմից ու սև սարսափը կալավ բինին: Լեռներում ամեն մարդ լավ է հաս- կանում, թե ինչ կնշանակի՝ «շունը տարան»:

Գողերը միշտ մի կամ երկու հոգով վազում ընկնում են բինեն, ոչխար, ձի, տավար խրտնացնում, խառնում են իրար: Ծներն ընկնում են նրանց ետևից: Նրանք էլ շներին հաչեց- նելով տանում, հեռացնում են բինից: Այնուհետև խառնված, անշուն բինին ետևից վրա են տալիս նրանց ընկերները և շփոթի ու խավարի մեջ զրում են անասունները:

Շուտով հետևեց երկրորդ հարձակումը, հարահրոցն ըն- կավ, հրացանները բացվեցին, ամեն բան մթնումը խառնը- վեց իրար ու իրար խառնված ընկավ դեպի ներքև:

Ակնակիր մթնում ոչինչ չէր երևում: Փայլակի լուսով վայր- կենաբար բացվում էր ահռելի տեսարանը, բայց մարդու աչքերը որոշ բան չէին կարող նկատել այն թոհուրոհի մեջ: Աչքերը չէին կարող նկատել, բայց հրացանների ձայները ցույց էին տալիս, թե որ կողմից են գնում, և հովիվների աղաղակը, որ կանչում էին՝ «Տարա՛ն, տարա՛ն... Ալարա՛ջ հե՛յ...»:

Այդ ձայներն էլ հետզհետե հեռացան, նվազեցին ու էլ ոչինչ չէր լսվում:

Անձրևը միալար շրջվում էր և ամպը խուլ ճայթում ու որոտում հեռու լեռներում:

5

Լուսադեմին տղերքը վերադարձան: Դեռ հեռվից լսվում էր նբանց ուրախ-ուրախ խոսուցն ու ծիծաղները թանձր մշու- շի մեջ: Ապրանքն ակած ու անվնաս հտ բերին հանձնեցին սարվորին, իրենք հավաքվեցին հովիվ Չատնի վրանը, որ հաց ուտեն:

Նրանք իրենց հետ բերել էին մի քրդի քոլոզ, վահանն ու թուրը:

Իսկույն տարածվեց, թե տղերքը մի քուրդ են սպանել ու հետաքրքրված սարվորները եկան խոնվեցին վրանի ներսն ու դռների արանքում:

Չատնի մայրը սոված հովիվների համար կրակի վրա կե- րակուր էր շինում ու հետն էլ իրեն-իրեն դունդունում.

«Ա տղա, նա էլ մեր կունենա՛...»

Ա տղա, հիմի նրա մերը ճամփա կպահի՛...»

Ա տղա, կասի, տղես հտ չեկավ...»

Ա տղա, ճամփա կպահի՛ հտ չի գնա՛լ...»

Գլուխներն օրորելով նրան ձայնակցում էին մի քանի ուրիշ կառայք: Այնինչ՝ հովիվները սարվորին պատմում էին, թե բանն ինչպես եղավ:

— Չորս կողմից հավաքեցինք, տարանք արինք մի ձոր: Էստեղ սրանց տեղը որ նեղացրինք, սրանք ապրանքը թող արին ու ամենքը մի կռան վրա փախան: Մընին ջրեցի, տա- րա քարափին դեմ արի: Որ քարափին դեմ էլավ, մին էլ տե-

սա ետ դառավ, թուրը հանեց, վրա քշեց թե՛ գլուխդ ազատի, միջիցդ կես եմ անում: Ոնց թե միջիցդ կես եմ անում — դա-
գանակը պտտեցի, ուսախառը վեր բերի, ա՛ն հա կտաս...

— Ա՛յ տո՛ւր,— բացականչեցին սարվորները:

— Շրըխկալով փովեց,— վերջացրեց Չատին իր պատ-
մությունը:

— Հա՛, հա՛, հա՛, հա՛,— քահ-քահ խնդացին սարվոր-
ները:

6

Այս դեպքից մի քանի շաբաթ անց էր կացել: Մի օր շները հաչեցին. դուրս եկան, տեսան մի պառավ քուրդ ձայն էր տալի բինի ներքևից:

— Ի՞նչ ես ուզում, ա՛ քիրվա:

— Չորբան Չատնի վրանն եմ ուզում,— ասաց քուրդը:

Բերին չորբան Չատնի վրանը: Չատին հաց դրեց հյուրի առաջ: Դեսից-դենից խոսեցին, մինչև հացը կերավ, պրծավ: Երբ որ հացը կերավ, պրծավ, Չատին հարցրեց.

— Խեր ըլի, ընչի՞ համար է եկել քիրվա:

— Էստեղ մի քանի շաբաթ առաջ մի քուրդ են սպա-
նե՛լ,— խոսեց հյուրը:

— Սպանել են,— պատասխանեց հովիվը:

— Ասում են՝ դու ես սպանել:

— Դրուստ է:

— Ես նրա հայրն եմ,— ասավ ծերունին:— Եկել եմ, որ նրա արինը քեզ հալալ անեմ: Դու նրան ճամփին շես սպա-
նել, իր ոչխարումը շես սպանել, իր տանը շես սպանել... Քանի անգամ ասի՝ ա՛յ որդի, ձեռը վեր կալ էդ հարամ ճամ-
փից, հեռու կաց էդ ընկերներից. ուրիշները քեզ համար շեն աշխատել... Ինձ չլսեց: Երևի էդպես մահը մոտեցել էր,— ասավ քուրդը ու գլուխը քաշ արավ, լռեց:

— Հավատիդ հաստատ կենաս, որ արդարն ես խոսում,— չորս կողմից ձայն տվին սարվորներն ու իրենք էլ լռեցին:

— Արինը քեզ հալալ,— բացականչեց ծերունին,— միայն մայրը... գիտես էլի, մայր է... չի հանգստանում... Շորերն

ինձ տվեք, տանեմ, շորերի վրա լաց ըլի, իր սիրտը հովաց-
նի, իր կարոտն առնի:

Չատին բերեց, ծերունուն հանձնեց արյունոտ քուրդը, վա-
հանն ու թուրը, մի ոչխար էլ առաջն արավ ու շներն անց-
կացրեց, տարավ ճամփու գցեց:

— Դե մնաս բարով, զավակս,— հրաժեշտ տվավ ծերունի
քուրդը:

— Գնաս բարով, քիրվա՛:

1908

ՄԱՅՐԸ

Ա

Մի գարնան իրիկուն դռանը նստած զրույց էինք անում. երբ այս դեպքը պատահեց: Եվ էս դեպքից հետո ես շեմ մո-
ռանում էն գարնան իրիկունը:

Միծեռնակը բուն էր շինել մեր սրահի օճորքում: Ամեն տարի աշնանը գնում էր, գարնանը ետ գալի, ու նրա բունը միշտ կպած էր մեր սրահի օճորքին:

Ե՛վ գարունն էր բացվում, կ՛մեր սրտերն էին բացվում. հենց որ նա իր զվարթ ճիշով հայտնվում էր մեր գյուղում ու մեր կտուրի տակ:

Եվ ի՞նչ քաղցր էր, երբ առավոտները նա ծլվլում էր մեր երդիկին, կամ երբ իրիկնապահերին իր ընկերների հետ շար-
վում էին մի երկար ձողի վրա ու «կարդում իրիկնաժամը»:

Եվ ահա նորից գարնան հետ վերադարձել էր իր բունը: Չու էր ածել, ճուտ էր հանել, ու ամբողջ օրը ուրախ ճչալով թռչում, կերակուր էր բերում ճուտերին:

Բ

էն իրիկունն էլ, որ ասում եմ, եկավ, կտցումը կերակուր բերավ ճուտերի համար: Ծուտերը ճվճվալով դեղին կտուց-
ները դուրս հանեցին բնից:

էդ ժամանակ, ինչպես եղավ, նրանցից մինը, գուցե ամենից անզգուշը կամ ամենից սովածը, շտապեց, ավելի դուրս ձգվեց բնից ու ընկավ ներքև:

Մայրը ճշաց ու ցած թռավ ճուտի ետևից: Բայց հենց էդ վայրկյանին, որտեղից որ էր, դուրս պրծավ մեր կատուն, ճուտն առավ ու փախավ:

— Փի՛շտ, փի՛շտ,— վեր թռանք ամենքս, իսկ ծիծեռնակը սուր ծղրտալով ընկավ կատվի ետևից՝ նրա շուրջը թրթռալով ու կտցահարելով, բայց չեղավ: Կատուն մտավ ամբարի տակը: Եվ այս ամենն այնպես արագ կատարվեց, որ անկարելի եղավ մի բան անել:

Միծեռնակը դեռ ծղրտալով պտտում էր ամբարի շուրջը. իսկ մենք, երեխաներս, մի-մի փայտ առած պտտում էինք ամբարի տակը, մինչև կատուն դուրս եկավ ու փախավ դուն-լը լիզելով:

Միծեռնակը դատարկ կատվին որ տեսավ, մի զիւ ծղրրտաց ու թռավ, իշավ դիմացի ծառի ճյուղին: Այնտեղ լուռ վեր եկավ: Մին էլ տեսանք, հանկարծ ցած ընկավ մի քարի կտորի նման: Վազեցինք, տեսանք՝ մեռած, ընկած է ծառի տակին:

Մի գարնան իրիկուն էր, որ այս դեպքը պատահեց: Շատ տարիներ են անցել, բայց ես չեմ մոռանում ոչ այս դեպքը, ոչ այն գարնան իրիկունը, երբ ես առաջին անգամ իմացա, որ ծիծեռնակի մայրն էլ մայր է ու սիրտն էլ սիրտ է, ինչպես մերը:

1900

ԵՂՋԵՐԱՆ

Մի սեպտեմբերի մեր գյուղացի որսկան Օսեփը ինձ գիշերակաց որսի տարավ Եղնուտի կիրճը: Գիշերներն էդ կիրճով իջերուններն իջնում են ձորերն ու հովիտները, արածում են, արշալույսից առաջ ջուր են խմում ու էլ ետ իրենց «պնդոցն» են տալի:

Գնում էինք գիշերը մնանք բոստանչի Օվակիմի դափումը, որ լուսադեմին հասնենք որսատեղը պահելու:

Ես էի, որսկան Օսեփն էր ու մեր գյուղացի մի տղա, որ Օսեփի շալակտարն էր:

Մենք գնում էինք էն դաժան հրճվանքով, որով միայն որսի են գնում: Ճամփին որսից էինք խոսում:

— Որսը բախտի պես բան է,— ասում էր Օսեփը:— Մին էլ տեսար երևութք էլավ ու քամի դառավ կորավ: Անսովոր մարդը նրան հեշտ չի նկատիլ. կշփոթվի, կողողողա, կփախցնի: Աչքդ առնելուն պես պետք է թվանքդ բացվի. թե չէ որ ուզեցիր նշան դնես, մինչև աչքդ ճպես, նա սարն անց կացավ:

— Հապա դուք ի՞նչպես եք որսի ման գալի, ուստա Օսեփ:

— Լավ որսկանը ման չի գալ, նա որսը կպահի,— պատմում էր որսկանը:— Գիտի, ո՞ր ժամանակին, ի՞նչ տեղ որսը ժած կգա՝ կգնա էն տեղը կպահի: Թե ման էլ գա, քիչ, էն էլ էնպես ման կգա, որ որսն իր քամին շառնի, թե չէ որսն էնպես սուր հոտառութուն ունի, որ թե քու քամին (հոտը) նրա վրա էլավ — պրծար, որտեղ որ է հոտդ առավ կորավ:

Էսպես խոսելով իրիկունը հասանք բոստանչի Օվակիմի դափին: Մերունի բոստանչին փետ էր հավաքել, կրակը վառել ու կողքին թինկը տվել:

— Բարի բիզուն, Օվակիմ բիձա:

— Այ աստու բարին ձեզ, դուք բարով եկաք. ա՛յ տղա, էդ ինչ լավ ղոնխիներ եք: Ես հենց մենակ միտք էի անում, թե մի գրիցընկեր ըլի... էս հենց աստո՞՞ հասցրեց ձեզ... — ուրախացած գոգոտում էր Օվակիմ բիձեն:

— Դու էն ասա՛ որս ա ժած գալի թե չէ, Օվակիմ բիձա,— անհամբեր հարց տվավ որսկանը:

— Այ տղա, մի անտեր պախրի բուղա կա, Օսեփ ջան, գիշերները գալիս ա լոբին ուտում ու գնում: Էնքան լոբիս փուշ արավ. թվանք շունեմ, շուն շունեմ... Պախրա մի՛ ասիլ — մի սար ասա: Չարդախ ունի (պոզեր), ոնց որ մի կաղնի:

— Էդ մինը ոչինչ. բա իսկի բուղազոտոցի ձեն չի գալի՛:

— Այ տղա, էլ ասում ես, ինչ անես, քնահարամ են արել: Երեկ գիշեր էս վերի մատներումը հենց գոտում էին, որ գետինը որոտում էր:

— Հա՛յ հող ու ջրի աստոծ հա՛,— աղաղակեց որսկանը: Օվակիմ բիձեն մեզ հրավիրեց, տակներս խոտ ածավ, ինքն էլ կրկին թիկնը տվավ իր տեղը:

— Տղերք, ես որ խորը միտք եմ անում, տեսնում եմ, որ աշխարհի երեսին մարդիցն էլ վերը անիրավ շնչավոր չկա:

— Ի՞նչի, Օվակիմ բիձա:

— Ինչին էլ ո՞րին ես ասում. տեսնում ես՝ դուք թվանք-ներդ առել եք ետևներիցն ընկել, մենք էլ ուրախացել ենք, թե ինչ ա — մի պախրա կսպանենք, կուտենք: Ախր չէ՞ որ նա էլ մեզ նման շունչ կենդանի ա, հրեն կես գիշերին էրվելով գոռում ա, ձեն ա տալի, իր կովին կանչում. չէ՞ էն էլ նրա սերն ու մուրազն ա...

— Թե ձենը դուրս կգա՛, ես նրա սերն ու մուրազը նշանց կտամ, — ծիծաղելով բացականչեց որսկան Օսեփը:

— Չէ՛, շատ մեղք բան ա, շա՛տ, — գլուխը շարժելով կրկնեց բոստանչին ու ձենը ավելի բարձրացնելով, կանչեց.

— Տղերք, էս ա որ պախրիցը խոսք ընկավ, ես ձեզ մի բան պատմեմ:

— Պատմի, Օվակիմ բիձա:

— Մի տարի սարումն էի: Էկան, խաբար բերին, թե բա թող հիվանդացել ա, քեզ ուզում ա, արի: Սարիցը վեր կա-րա, հիմի տուն եմ գալի: Ճամփին ծովեցի, ասի կարելի ա որսից, բանից պատահի: Ման եկա, ման, մի տեղ տեսնեմ բրնուտումը մի բան խշխշացնում ա, թփերը ժաժ ա տալի: Ախպեր, էս թե մոշահավ ա, մոշահավի բան չի, թե անասուն ա, ի՞նչի չի երևում: Մի բար գցեցի թփուտը. մին էլ տեսնեմ մի պախրի ճուտի ականջներ ցցվեցին, էլ ետ ցածացան, ու սկսեց թփերը ժաժ տալ, ճամփա բաց անել, որ փախչի: Թվանքն երեսս կալա հենց թփերի էն ժաժ էկող տեղը: Թվանքը որ տրաքեց, սա վեր թռավ, դուրս ընկավ ու ետ գետնովը դիպավ: Տղերք, հիմի մի ձեն ա ածում, մի տնքում ա, ոնց որ մեռնող էրեխա: Ուտա որսկաններից լսել էի, ասի՝ էս ա սրա մերը ինձ տեսել ա, էստեղից փախել, որտեղից որ է հիմի ետ կգա: Մտա մի ծառի տակ ճամփա պահեցի: Շատ մնացի թե քիչ, մին էլ տեսնեմ հրես էկավ, բայց ոնց էկավ, ես տեսա, դուք ոչ տեսնեք — մի խոսքով մոր նման, թվանքի ձենը իր էրեխի վրա լսած մոր նման: Էկավ տեսավ իր ճու-

տը հրես անշունչ, արնակոլով մի ծառի տակ փոված: Տղերք, դունչը մեկնել ա, ոնց ա տխուր մզգացնում, ոնց ա վերքը լիզում... Թվանքը վեր կալա, էդտեղից քաշվեցի, էկա տուն: Էկա տուն. էկա տեսա էրեխեն դժար ա, հոգու հետ կոխված ա բառաչում ա... Ասում եմ, փառքը շատ ըլի, աստոծ, ի՞նչ ա էնպես էն պախրի ճուտի նման ա տնքում, որ աչքս խուփ եմ անում, հենց իմանում եմ դեռ էն թփի կողքին եմ կանգնած: Վերջապես, էրեխեն մեռավ. հիմի մերը ընկել ա վրեն — բառանչում ա... Ասում եմ, փառքը շատ ըլի աստոծ, ի՞նչ ա մեր ու էն սարի պախրի զանազանությունը — ոչինչ... ամենի սիրտն էլ սիրտ ա, ամենի ցավն էլ — ցավ...

Օվակիմ բիձու տխուր պատմության տպավորության տակ միաժամանակ լուռ էինք:

— Օվակիմ բիձա, չէ որ ասում են պախրեն էլ տեր ունի. — խոսեց շալակտար Ղազարը:

— Ունի բաս, պախրեն մեծ տեր ունի:

— Ծտնա էդ դրո՞ւտ բան ա:

— Դրուտ ա, բաս: Որսկան Փիրումն ինքը գլուխ որսկան էր ու նրա գնդակը իր օրումը գետին շէր ընկած: Մի անգամ մի պախրա ա վիրավորում: Պախրեն փախչում ա, սա լնկ-նում ա ետևիցը: Քշում ա տանում հասցնում Զորավոր կաղ-նըքու տակը: Էստեղ, Զորավոր կաղնըքու տակին պախրեն շոքում ա. պախրեն շոքում ա — որսկան Փիրումը թվանքն երեսն ա կալնում: Հենց էս տժժան րոպեին Զորավոր կաղնը-քուց մի դուռն ա բացվում, մի սիրուն հարսն ա դուրս գալի. էս սիրուն հարսը դուրս ա գալի՝ որսկանի դեմը ծղրտում.

— Ի՞նչ ես հալածում իմ անմեղին, անիրավ մարդ, ի՞նչ ա արել քեզ: Ագա՛հ, ոչ կշտանաս դու, որ չես կշտանում լիքն աշխարհը: Թվանքդ արնով լցվի, գնդակդ խմոր դառ-նա, շորանա էդ թվանքը բռնող կուռը...

Միայն որսկան Փիրումը խելոք մարդ էր — գլխի ա ընկ-նում, որ էս որսի տերն ա, ձեռաց թվանքը գցում ա մի ծառի ճյուղի, անիծելուն պես ծառի ճյուղը տեղն ու տեղը շո-րանում ա:

— Օվակիմ բիձա, ուրեմն էդ ա, որ ասում են որսկանու-թյունը անիծած ա:

— Անիծած ա, բաս, մին որսկանությունը, մին էլ ձկնոր-

սությունը, երկուսն էլ անիծած են: Հնուց դրած նզովք ա, որ սրսկանի ու ձկնորսի փորը կշտանա ոչ: Որսկանի վրա Քյարամն էլ նզովք դրեց: Երբ էրվելով իր Ասլու ետևից ման էր գալի՝ մի վիրավորված պախրա տեսավ: Տեսավ՝ անասունը մղկտալով շունչը տալիս ա, հորթն էլ մոլորած մնացել ա կողքին կանգնած, էստեղ սազն առավ ու մի խաղ ասավ:

Մենք խնդրեցինք Օվակիմ բիձուն, որ էդ խաղն ասի մեզ համար, ու ծեր բոստանչին իր պառավ ձենով, խարուկի առաջ երգում էր մութը ձորում:

Ընչ պարոններ, տեսա կանանչ պարուքին՝
էս սարերում լաց էր լինում մի պախրա.
Միրուն հորթը մոլոր կանգնած իր կողքին՝
էս սարերում լաց էր լինում մի պախրա:

Գրնդակն առած գընում էր փուշ աշխարհքից,
Գանգատվելով մարդու անզուժ արարքից,
Արյուն տալով, մղկտալով իր վերքից
էս սարերում լաց էր լինում մի պախրա:

Ասաված սիրող՝ որսին թզվանք չբռնի-
ծրկինք սիրող՝ որսի միսը թող շանի.
Գարդոտ Քյարամ տեսավ ծովում արյունի՝
էս սարերում լաց էր լինում մի պախրա:



Ամենքը քնեցին. ես մնացի դարթուն: Գիշերն էս տեսակ ամուլքում անասուք մտրալը չի կարողանում քնել, հազար ու մի ձեն է լսում, հազար ու մի բան է երևակայում:

էն անշուշտ գիշերվա հովն էր, որ շարժում էր սիմինդրո-
ները, բայց ինձ թվում էր, թե Յվակիմ բիձու առած պախրան
էր բոստանը մտել: Գիշերվա մթության մեջ հեռվում սև կեր-
պարանքներ էին երևում ու կարծես շարժվում էին:

Ու անքուն էի ես:

Գիշերվա մի ժամին դուրս եկա դափի դուռը: Պարզ աշ-
նանային գիշեր էր: Չոր ցուրտը սեղմում էր: Ձորերը խուլ
թշուր էին: Նրանք էլ ասես քնել էին, Օվակիմ բիձու նման
փշաքնում էին խոր ու հանգիստ:

Բայց Քարվան-դուան աստղը արդեն դուրս էր եկել. մեր
ճամփա ընկնելու ժամանակն էր: Ես վեր կացրի իմ ընկեր-
ներին: Նրանք շուտով հագան իրենց տրեխները ու վեր կա-
ցանք դեպի Եղնուտի կիրճը...



Արշալույսից առաջ մենք դարան էինք մտած Եղնուտի
կիրճում: Ես իմ դիրքից պահում էի առաջիս ընկած բա-
ցատը: Դիմացս կանգնած էր խոր ու անթափանցելի մութն
անտառը:

Հետզհետե գիշերվա խավարն սկսեց նոսրանալ: Փայռերը
խոժոռ, քնաթաթախ դուրս նայեցին աղջամուղջի միջից: Եր-
կինքն սկսեց գունատվել ու պարզվել: Ապա երևաց Եղջե-
րուն — Լուսաստղը: Վեր կացավ վաղորդյան զեփյուռը: Մա-
ղիկները շարժեցին իրենց գլխիկները, խոտերը դողդողացին,
տերևները շրջացին: Անտառն սկսեց զարթնել: Մոտակա թփից
մի ծիտ ձկաց, մի ուրիշը՝ մյուս թփից, մեկն էլ հեռվից...

Ես աննկատելի դուրս էի եկել իմ թաքստոցից ու զմայ-
լած դիտում էի շուրջս — բնությունը, էն սրբազան ժամին,
եբբ ծագում է առաջին լույսը:

Հանկարծ մի ձայն... շորացած ճյուղ կոտրվեց մոտիկ
անտառում: Նայում եմ էն կողմը: Անտառը տակավին մութն
է: Աչքս չի որոշում, թե ինչ կա էստեղ, միայն պարզ լսում
եմ զգույշ ոտնաձայնը, որ խաշամը կոխելով առաջ է գալի—
խը՛շտ, խը՛շտ, խը՛շտ... Բան չի երևում, բայց դարձյալ
խը՛շտ, խը՛շտ, խը՛շտ, մոտենում է ավելի ու ավելի... Եվ,
ահա, դուրս եկավ...

Ես առաջին անգամն էի տեսնում եղջերուն ազատ բնու-
թյան մեջ: Նա դուրս եկավ մի խաղաղ հպարտությունամբ, վեհ
ու շքնաղ, ինչպես բնության էն ամեն գեղեցկությունների
տերն ու թագավորը: Կիսովին, դեռ անտառի մթության մեջ
կանգնեց, թուխ դունչը դրավ գետնին, ապա թե գլուխը բարձ-
րացրեց, վայրենի շնորհքով ոլորեց երկայն վիզը ու նայեց
իմ կողմը:

Ամենագեղեցիկ հայացքը, որ ես տեսել եմ իմ կյանքում:
Ես շփոթվեցի, ամաչեցի, ուզեցի թաքցնել հրացանս...

Շարժվեցի թե չէ, նա շտապով ետ թեքեց իր կարապի վիզը. վիզը ետ թեքելուն պես հարևան դիրքից որոտաց որսկան Օսեփի հրացանը: Հրացանի ձայնից անտառը որոտաց ու սկսեց ճոճուալ: Էն եղջերուն էր փախչում:

— Հա՛յ բո տունը չքանդվի,— ինձ հանդիմանելով դուրս թռավ որսկանն ու վազեց դեպի մոտիկ բլուրը, տեսնի ո՛ր կողմից կերևա փախած որսը: Առավոտը բացվում էր, և էն-քան լուս էր, որ կարողացանք կանաչ խոտերի վրա գտնել թարմ արյան հետքը:

Վիրավորված էր եղջերուն: Արյան հետքը բռնեցինք ու գնացինք որոնելու:

— Էսքան որ արյուն է տվել, ինչքան ուզում է գնա՝ մերն է,— հայտնեց որսկան Օսեփը:



Իրիկնապահին նրան գտանք մի խոր անտառում: Նա ընկած տեղից իր երկայն վիզը մեկնեց մեզ վրա: Ես տեսա՝ ինչպես շէր կարողանում գլուխը պահի, շարժում էր անդադար ու նայում էր մեզ իր պղտոր, շրշկած, անորոշ հայացքով: Հանկարծ կարծես գլխի ընկավ, աշխատեց վեր կենա, ծնկները վեր բարձրացրեց ու կրկին ճղփալով ընկավ իր արյան մեջ մի ծանր, անզոր թառանջով:

Որսկանը վրա վազեց... Ես ուզեցի մի բան ասեմ, ամաչեցի... Նա բռնեց եղջերուի գլուխը, ոլորեց գեղեցիկ վիզը... Ես կրկին ուզեցի մեջ մտնեմ... դարձյալ սիրտ շարի... Եվ ահա դաշույնը փայլատակեց:

Ես երեսու շրջեցի, իբրև թե սարերին եմ նայում: Ետևից մի խուլ տնքոց լսեցի... ու լզգիտեմ ինչու, սկսեցի մտածել կյանքի ու մահվան մասին, և էնպե՛ս տգեղ էր թվում ինձ կյանքը...

Կիրակոսը մրսել էր, անկողին էր ընկել, տանջվում էր տաքության մեջ: Հարևանները հիվանդի շուրջը հավաքված օղեն լիքը զրույց էին անում, շիրուխ քաշում:

— Տղե՛ք, սա որ քրտնի ոչ, բան չի դառնալ, էկեք սրան մի քարաբաղնիս անենք,— ծխի միջից առաջարկեց Նեսո բիձեն:

— Հա, էդ խելքս կտրեց,— հավանութուն տվեց մի ուրիշը:

— Դրան էլ ուրիշ ճար չկա,— ձեն տվին էս ու էն կողմից:

— Կիրակո՛ս...

— Հը՛՛:

— Ասում ենք քարաբաղնիս անենք, ի՞նչ ես ասում:

— Վախենում եմ... չգիմանամ...

— Տո՛, կղիմանաս, էրեխա հո չե՛ս:

— Դե... դուք գիտեք... ձեզ... մատաղ:

— Ա՛ղջի, պղինձը ջուր լցրեք բերեք. մի փեշ էլ քար բերեք կրակն ածենք տաքանան:

Պղինձը դրին կրակին, քարերն ածին կրակի մեջ ու նըստոտեցին: Նեսո բիձեն սկսեց պատմել, թե քանի հոգի են աղատվել քարաբաղնիսով. Մատնանց Դանելը, Մաթոսանց Մինասը, Մատուրանց Ստեփանը, Մաշկավորանց Միկոն — մինչև որ ջուրն եփ էկավ, քարերն էլ կարմրեցին:

— Դե ժամանակն ա, վե՛ր կացեք:

— Տղե՛ք վախում եմ... — կանչեց հիվանդը:

— Դու սո՛ւս կաց: Աղջի, մի երկու հաստ լեճեր բերեք, մի շորս ու հինգ ուժով տղեք էլ էկեք էստեղ:

Շորերով փաթաթած եռման ջրով լիքը պղինձն ու հիվանդին դրին իրար հետ, կարմրած քարերը լցրին ջրի մեջ. քարերը թշտացին, ամպի նման գոլորշին սկսեց բարձրանալ, շտապով վերմակները ծածկեցին ու շորս կողմից վրեն պինդ նստոտեցին:

— Վա՛յ, խեղդվեցի՛,— խուլ գոռում էր հիվանդը:

— Խեղդվիլ չես... տղեք, պինդ նստեցեք: Գլուխն ու ոտները ամուր պահեցեք:

Հիվանդը աղաղակում էր, օրհասական ջանքեր էր անում

շարժվելու, բայց հինգ-վեց ածղահա տղամարդ վրեն նստած շէին թողնում:

— Ո՞ր ես գնում,— կանչում էին էս ու էն կողմից, վերևից սեղմում ու հռհռում:

— Հիմի թե չբրտնի՞:

Ու նեսո բիձեն, հիվանդի վրեն նստած, շիբուխը բերանին շարունակում էր իր պատմութունը:

— Մի տարի էս մեր Աբգարն էլ էսպես մրսել էր: Ղանթափու ծաղիկ բերին շայ շինեցին խմացրին, պրաշոկ բերին, ջուր արին, տվին իրան, քացախ քսեցին, բան չի դառավ:

Ասի՞ տղեք, բերեք ես դրան մի քարաբաղնիս անեմ: Թե՛ դե դու գիտես: Բերի մի թեժ կրակ արի, Գարան տատի պոռնգը կտորած պղինձը ջուր լցրի վրեն դրի, քար հավաքեցի ածի շեղջը: Ջուրն եփ էկավ, քարը կարմրեց: Սա թե՛ վախում եմ: Ախր նա էլ սրա նման մի լեղապատառ օբմին ա:

— Աղա, ընչի՞ ես ասում, Աբգարը հո սրտոտ մարդ ա:

— Վա՛յ է՛, նրա սրտոտը որն ա: Մի աշունք ես մի արջի բուն գտա: էկա ասի՛ Աբգար, արջի բուն եմ գտել, արի գնանք արջին բնիցը հանենք: Գնացինք: Ծս մի ձող վեր կալա էս արջի բունը խըրխըթորեցի: Մին էլ հանկարծ էն անաւեր արջը դուրս եկավ ու ինձ կալավ: Աբգար, քոմագ հա քոմագ: Ո՞վ կտա Աբգար — մին էլ տեսնեմ հրեն փախած գնում ա: Արջի ձեռիցը մի կերպով պրծա էկա տուն: Ասում եմ, աղա, դու էս ի՞նչ արիր: Թե՛ էկա տուն, որ թվանք բերեմ: Սուտս վախիցը փախավ:

— էն էի ասում — հիմի սա կանգնել ա, թե նեսո ջան, վախենում եմ, ինձ քարաբաղնիս մի՛ անիլ:

Ականջ չի դրինք, բերինք կեծացած քարերն եփման ջուրը լցրինք ու հենց էնպես բուզը վեր ըլելով սրա հետ կոխեցինք տեղի տակը.— վա՛յ, մեռա հա, մեռա: Լսողն ո՞վ ա: Վրեն նստոտեցինք: Ծս եմ, էս մեր Ղուկասն ա, Փիլոն ա, Գաբոն ա, Արութն ա: Հիմի սա տակից գոռում ա, ո՞նց ա գոռում... էնքան գոռաց, մինչև դինջացավ: Բաց արինք, տեսանք ջուր ա կարել: էն էր ու էն, լավացավ, տեղիցը վեր կանգնեց ողջ, առողջ մարդ:

Նեսո բիձու պատմութունը որ վերջացավ, վեր կացան

վերմակները ետ քաշեցին: Գոլորշին օդն բռնեց: Բայց Կիրակոսը...

— Կի՛րակոս:

Ժած չի գալի:

— Կի՛րակոս...

Պատասխան չի տալի:

— Կիրակո՞ս.— ձեն տվին, շարժեցին, քաշեցին: Կիրակոս չկա:

— Ա՛յ տղա, էս ո՞նց էլավ,— մտորված արտասանեց նեսոն: Մյուսները լուռ էին:

— Վա՛յ, տունս քանդվե՛ց...— Մղրտաց Կիրակոսի կթնը: Իրար հրհրելով տղերքը դուրս էկան կտուրը: Ու մինչդեռ ներքև Կիրակոսի կինը սուզ էր անում, կտերը արևում նստոտած տղեքը պատմում էին, թե քանի-քանի հոգի են խեղդվել քարաբաղնիսից. Հանըսանց Հարոնը, Մելիքանց Վանեսը, Հախվերդոնց Աղեն, Եմալանց Շամիրը... ո՞ր մինն ասես:

— Տո՞ դե ճակատի գիր ա էլի, հո նրանց էլ նեսոն չի խեղդել:

Նեսոն լուռ, գլուխը կախ արած լսում էր ու շիբուխ էր քաշում:

1910

ՔՆՈՒ ԽԵՉԱՆՔ

— Բարի լիս ձեզ:

— Ա՛, բա՛րով, բա՛րով, քեռի խեչան: Ազջի, շայ բերեք, հաց բերեք, արաղ բերեք քեռի խեչանի համար: է՛, խեր ըլի, քեռի խեչան, ի՞նչ կա, ի՞նչ է պատահել, որ դու քաղաք ես եկել:

— Ինչ պետք է պատահի. ձեր կարոտն էինք քաշում: Ասի՛ մեռնիլ կա, ապրիլ կա, մի գնանք տեսնենք:

— Շնորհակալ ենք, շնորհակալ ենք, քեռի խեչան: Քեռի խեչանը դեսից-դենից խոսելով թեյ խմեց, հաց կերավ, վերջը լոնց ու սկսեց շիբուխ քաշել:

Մին էլ շիբուխը բերնից հանեց թե՛

— Բա էս ո՞նց պըտի ըլի:
 — Ի՞նչը, քեռի խեղան:
 — էս, որ էրեխին սալդաթ են տանում:
 — Չգիտեմ... ես ի՞նչ կարող եմ անել...
 — էլ ինչը ո՞րն ա, հրեն քեռեկինդ նստած լաց ա ըլում:
 — Դե ասա, ինչ որ կարող եմ անել, պատրաստ եմ:
 — Ասում եմ՝ գնանք մի մետրիկեն հանենք, տեսնենք ինչ ենք անում:
 — Լա՛վ, համեցեք գնանք:
 Գնացինք կոնսիստոր:
 Դիվանապահին խնդրեցի՝ քեռի խեղանի ցույց տված թվա-
 կանի մետրիկական մատյանները հանեց, ման եկանք, քըր-
 քըրեցինք, քեռի խեղանի տղեն չկա:
 — էդ ոնց ա, ախպեր:
 — Դե չկա էլի, քեռի խեղան:
 — Հլա մի քանի տարի էլ ցած մտիկ արեք, կարելի՛ ա սխալվել ենք:
 Նոր մատյաններ բերինք, ման եկանք, նրանց մեջ էլ չկա:
 — Մենք սխալվել ենք... անպատճառ սխալվել ենք էլի,—
 կրկին խոսեց քեռի խեղանը,— էրեխեն իմ հաշվով մեծ պետք է ըլի: Մթամ պետք է ասեի բարձր մտիկ արեք, ցած եմ ասել:
 — Լավ, քեռի խեղան, բարձր էլ մտիկ կանենք:
 Նոր մատյաններ բերինք, նորից ման եկանք: Դարձյալ չկա:
 — Չկա, քահանեն գրել չի:
 — Բա էս ո՞նց պըտի ըլի:
 — Դե որ չկա՝ ի՞նչ անենք... Գնանք, քեռի խեղան:
 — Գնալով ո՞նց կըլի... հրեն քեռեկինդ նստած լաց ա ըլում:
 — Դե ինչ անենք, որ չկա:
 Դուրս եկանք: Մի հիսուն քաջլ գնացինք, քեռի խեղանը կանգնեց:
 — Կա՛ց հլա:
 — Ի՞նչ կա, քեռի խեղան:
 — Մըթամ էս ո՛ւր եկանք, ուր ենք գնում:
 — Մեր տունն ենք գնում, էլի:
 — Ծտո էդ էլավ որ...

— Բա ի՞նչ անենք:
 — Ախր էնտեղից էստեղ քու անունը տվել եմ եկել, հիմի որ գնամ՝ ի՞նչ խաբար տանեմ:
 — Դե ի՞նչ անեմ, քեռի խեղան, մատյաններն էն էին, էնքան տարի տեսանք, տակնուվրա արինք — չկա:
 — Ո՞նց թե չկա. էն ոնց ա մամենի տղեն էլ կա, հենց իմը չկա...
 — Դե որ էդպես է, ի՞նչ անենք:
 Քեռի խեղանը մինչև տուն բան չխոսեց:
 — Հը՞, ինչ արիք,— հարցրեց կինս:
 — Դեռ հալա տեսնենք,— պատասխանեց քեռի խեղանը:
 — Էլ ի՞նչ տեսնենք, մատյանումը գրած չէ, վերջացավ գնաց,— մեջ մտա ես:
 Քեռի խեղանը տնքաց:
 — Վերջացավ, վերջացավ, ես էլ ինչ ճամփով եկել եմ, էն ճամփովն էլ ետ կերթամ մեր տունը,— վճռեց ու վշտացած նստեց, սկսեց շիբխին զոռ տալ:
 Ծաշի ժամանակն եկավ: Լուռ նստած ճաշում էինք. հան-
 կարծ քեռի խեղանը ճաշն ընդհատեց ու ինձ դիմեց.
 — Բաս ես որ հիմի գնամ՝ քեռեկինդ ի՞նչ ասեմ:
 — Ընչի՞ համար:
 — էս մետրիկականի:
 — Վա՛հ, չկա, չկա, քեռի խեղան. տերտերը գրել չի, չկա:
 — է՛, դե ասում ես, է՛լի:
 — Ի՞նչպես թե ասում ես, էլի. քեզ ասում են — չկա:
 Քեռի խեղանը դարձյալ տնքաց ու շիբուխը սարքեց:
 Ծաշից հետո մտա իմ առանձնասենյակը, որ հանգստա-
 նամ: Մտածում էի, թե ինչ տեսակ մարդիկ են մեր գյու-
 ղացիք...
 Մին էլ տեսնեմ ներս մտավ քեռի խեղանը:
 — Քնո՞ւմ ես:
 — Հա՛:
 — Բա էս քնելու ժամանակ ա՞:
 — Բա՛ ինչ անեմ, քեռի խեղան:
 — Ախր ես եկա էստեղ մնացի, բա ի՞նչ ես անում:
 — Ի՞նչ անեմ, քեռի խեղան:
 — էս մետրիկի համար բա ի՞նչ ես ասում:

— Վա՛հ, դարմանալի մարդ ես, ա՛յ մարդ, քեզ հայերեն ասում են՝ չկա՛, չկա՛, քեռի տեղան:

— Դե լավ, լավ, էլ ինչ ես նեղանում, չկա, ես էլ կզնամ մեր տունը: Մնաք բարով,— ու քրթմնջալով դուրս գնաց:

— Գնաս բարով. դե ինչ անեմ, որ չկա:

Վեր կացա, տեսնեմ քեռի տեղանը պատշգամբում նստած չիբուխ է քաշում: Գլխարկս վերցրի, որ տանիցը դուրս գամ:

— Էդ ո՞ւր ես գնում,— ետեկիցս կանչեց քեռի տեղանը,— բա ի՞նչ ես ասում...

— Բան չեմ ասում:

— Գնո՞ւմ ես...

— Հա՛:

— Էլ մետրիկին չես տեսնի՞ր...

— Չէ՛, չեմ կարող:

Էս պատմությունից հետո քեռի տեղանը գնացել էր գյուղումը պատմել, թե իր տեղը նեղ էր, եկել էր քաղաք՝ ինձ խնդրել, որ օգնեմ, իսկ ես ասել էի՝ չեմ կարող, ու ոչ նրա խոսքին էին ականջ դրել, ոչ երեսին էին մտիկ արել:

1910

ԾՂՐԻԿԸ

Ճըռո՛... ճըռո՛... ճը՛ոճը՛ո, ճըռո՛...

Լսե՛լ եք է՛ն թախծալի ճըռոտցը, որ ծագկի բուրմունքի ու փանաչի թարմության հետ խառնված հոսում է գաբնան դաշտերի երեսով:

Իհարկե լսել եք, և ինչքա՛ն եք լսել: Դեռ ով գրտի, գուշի էդ ժամանակ մի ծառի կամ թփի տակ էլ պառկած խորասուզվել եք շինջ, կապույտ երկնքի խորության մեջ, մաքուր, թեթև երազների մեջ, իսկ շորս կողմերդ ծավալվում է համատարած՝ ճըռո՛... ճըռո՛...:

Հանդի կամ դաշտի ծղրիգն է իր անթիվ ու անհամար ընկերներով:

Կամ գուցե հիշում եք է՛ն մելամաղձոտ ճըռոտցը, որ ամառվան իրիկունները մենակ ու միալար հնչում է գյուղական

խաղաղ տան մի որևէ անկյունից: Եվ ի՞նչ դյուրեկան թախիժ է բերում մարդու հոգուն, ի՞նչ խաղաղություն, ու մանկության օրերից, մանկության իրիկուններից, նրանցից էլ կարծես թե դենը՝ հեռավոր ու անորոշ հիշողությունների:

Էս էլ տան ծղրիգն է: Ապրում է տաք անկյուններում, սովորաբար բուխարու կողքին կամ վառարանի ետևը, մի որևէ փոքրիկ ճեղքում: Գիշերները իր թաքստոցից դուրս է գալիս, հացի, պանրի և ուրիշ ուտելիքների փշրանքներ է որոնում, նրանով ապրում ու երգում ամբողջ տարին: Նրա տան մեջ լինելն ու երգելը մեր տատերը բախա՛թ նշան էին համարում:

Ճշմարիտ որ, բախտ է էս տեսակ երգիչ ունենալ տանը:

Հին հույները ծղրիգներին բռնտում, ածում էին փոքրիկ վանդակներն ու կախում իրենց լուսամուտների շրջանակներից, որ երգեն:

Եվ, օրական մի թերթ սալաթ ստանալով, գերության հետ հեշտ հաշտվում են ծղրիգներն ու երգում, ու ավելի էլ շատ են ապրում, քան ազատ ժամանակը, երբ ենթակա են հազար ու մի փորձանքի:

Մի մեծ միջատագետ, որ և մեծ բանաստեղծ է միաժամանակ, ասում է՝ ես ծղրիգին հաճույքով կղնեի գաբնան վերածնության երգիչների գլուխը:

Եվ սրանով՝ միջատ սոխակը քիչ է մնում խլի թռչուն սոխակի փառքը:

Թայց դուք գուցե էս էլ եք փորձել: Ուզել եք գտնել, տեսնել մեր փոքրիկ ու նշանավոր երգչին ու շեք կարողացել: Առաջիկ երգում է, ձենի վրա գնում ես, մին էլ տեսնում ես կարեց ու սկսեց հեռվից: Էն կողմն ես գնում, հաճկարծ լսում ես, որ աչից է երգում, ձախից, ետեկից...

Ջարմանում ես, շշկում ես: Ո՞րտեղ է վերջապես:

Ինչ ուզում ես՝ արա, ձենով չես գտնիլ նրան, շարունակ էսպես խաբսը կտա:

Բայց ինչո՞ւմն է հնարքը, ո՞նց է անում, որ էսպես խաբսն է տալիս:

Շատ հասարակ ու պարզ բան:

Երկու գոգոռուն, սպիտակ, բարակ, չոր ու թափանցիկ արտաքին թևեր ունի, որոնց եզերքները իջնում են ցած:

Սրանց աջը միշտ գալիս է ձախի վրա, ու արմատում տակից մի կոշտ ունի: Էդ կոշտից հինգ փայլուն ամուր երակներ են ձգվում, երկուսը վերև, երկուսը ներքև, իսկ հինգերորդը, որ շեկավուն է և փշփշոտ՝ մեջտեղով:

Հենց սա է էն գործիքը, որ թևին քսելով ձեն է հանում ու նվազում ծղրիդը: Կընտընտոցի (СМЫЧОК) պաշտոն է կատարում:

Ներքևի ձախ արտաքին թևն էլ նույն կազմն ունի, միայն թե սրա կընտընտոցն ու մյուս երակները վերևի կողմիցն են: Էնպես որ վերևի ու ներքևի արտաքին թևերի երակները խաշածն գալիս են իրար վրա:

Կընտընտոցներն իրար քսելիս, նայած թե որ երակին կամ թևի ինչ տեղին է քսում — նրա համեմատ էլ ձենը փոխում է:

Սրա հետ միասին, եթե նվագելիս թևերը բարձրացնում է — ձենը ազատ ու լիահնչյուն է տարածվում, իսկ եթե թևերն իջեցնում է, կպցնում է մարմնին, թևի ձենը խլանում է, էնպես, ինչպես եթե մատդ սեղմես զրնգող ամանին — ձենը խլանա: Եվ նայած, թե որ կողմից ու ինչպես է թևը սեղմում, նրա համեմատ էլ մին թույլ է գալիս ճրոտոցի ձենը, մին ուժեղ, մին զվարթ, մին ճնշված, մին էս կողմից, մին էն:

Դրա համար էլ ձենը լսում եք, բայց չեք կարողանում նրան գտնել:

Նրան գտնելու համար պիտի գտնեք նրա բունը: Գրեթե միշտ իր բնումն է կամ բնի առաջը, ու չի հեռանում:

Ահա, տեսե՛ք, բնից դուրս հանած նրա սև գլուխը. դետուդեն է շարժում երկար շոշափուկները, որ մենք բխեր ենք ասում: Իմացավ՝ մոտենում ենք — շտապով ետ-ետ գնաց, ներս մտավ, թաքնվեց: Էլ դուրս չի գալ: Բայց ես գիտեմ՝ նրան դուրս բերելու ձևը: Էսպես դեպքերում, երեսա ժամանակ, շոփ էինք անում, կոխում ծղրիդի՝ մատնաշափ երկարություն ունեցող՝ բունը, խառնում ու ետ հանում: Էլ չէինք իմանում, զարմացած թե զարհուրած, ծղրիդը շշկված դուրս էր գալիս ու դես-դեն ընկնում: Իսկ եթե նորից ներս էր մտնում, կամ իսկի դուրս չէր գալիս, ավելի հիմնավոր բան գիտեինք — ջուր էինք լցնում նրա փոքրիկ բունը, կամ

տունը: Էս անգամ արդեն ուզեր-չուզեր մեր երգիչը դուրս էր գալիս արևի տակ:

Տունը ջրով լցվեց:

Տուն որ ասում եմ — հանաք չիմանաք: Ես չեմ եղել նրա տանը, բայց հայտնի միջատագետների ասելով, ծղրիդի տունը թե մաքրության, թե գեղեցկության և թե առողջապահության կողմից ավելի լավն է ու հարմար, քան մարդկանցից շատ շատերի տները:

Տեղն ընտրում է արեգունի ու ջրփախ մի կանաչ տեղ. արևոտ, առողջ ու դիրքը գեղեցիկ: Բնի մուտքի վրա սովորաբար կախված է լինում մի փունջ խոտ կամ ծաղիկ, որ համ դուռը ծածկի շար աչքերից, համ հովանի լինի շոգի դեմ: Մուտքի առաջ փոքրիկ ավլած բակը:

Ինչպես մուտքը, էնպես էլ ներսը — սենյակը, պարզ, մաքուր ու չոր: Իսկ ներսի սենյակի պատերը կոկ ու հղկած, դեռ սենյակում էլ պահարան: Ու միշտ էլ քանի կենդանի է ու ապրում է իր բնում, աշխատում է ավելի ու ավելի գեղեցկացնի, կատարելագործի: Եվ իր ցեղակից — ուղղաթևների մեջ մենակ ինքն է, որ էսպես բուն է շինում իր համար, նստակյաց կյանքի, մշտական բնակության համար: Համ բակ, համ նախասենյակ, համ սենյակ, համ պահարան:

Ասացեք խնդրեմ, ի՞նչով է տանից պակաս: Ինքն էլ համ հիանալի նվազում է, համ էսպես տուն է շինում. ինչո՞վ է մարդուց պակաս: Գլխին էլ որ լավ մտիկ անեք, պառավ մարդի գլխի նման է: Երևի էդ շնորհքի ու էդ գլխի պատճառով էս տեսակ մի ավանդություն էլ կա: Ասում է. «Մղրիդը մի ժամանակով մարդ է եղել: Շատ ուրախ ու կյանքը սիրող մարդ է եղել: Աստծուն խնդրել է, որ իրեն հավիտենական կյանք տա, բայց մոռացել է հավիտենական կյանք խնդրելիս էն էլ խնդրի, որ միշտ ջահել մնա: Աստված նրա կիսատ խնդրքը կատարել է: Էս մարդն ապրել է, ծերացել, ծերացել, էնքան ծերացել, կորացել, չորացել ու կուչ եկել, փոքրացել, որ վերջը ծղրիդ է դարձել»:

Ինչպես բոլոր արտիստ մարդիկ — ծղրիդն էլ ատում է ամբոխը և սիրում է մենակությունը: Մենակ ապրում է իր գեղեցիկ տանը ու շատ էլ ծույլ է, ինչպես առհասարակ երգիչները: Մայիսը գալիս է թե չէ — տուն ու տեղը սարքում

է թե չէ — սկսում է երգել: Եվ միշտ իր շեմքում: Իրիկնապահներին դուրս է գալիս վերջալուստի դիմաց կամ խազաղ լուսնյակ գիշերները լուսնի լուսի տակ, իր մաքուր շեմքում նվազում, կամ ինչպես ընդունված է ասել՝ երգում.— ճը՛ռու... ճը՛ռու...

Սկզբում երգում է իրեն համար, փառաբանում է գարնան գիշերների գեղեցկությունը, նոր կյանքի քաղցրությունը: Մի քիչ հետո սկսում է սեր երգել ու քնքշալով կանչել իր զբրկից հարևանուհուն՝ տան առջևը կախած ծաղկի կամ խոտի փնջի տակ գտնվող մաքուր բակում — լուսնյակի լուսի տակ ժամանակ անցկացնելու:

Հարևանուհին երգել չգիտի ու երբեք չի երգում, սակայն սիրում է երգը, մանավանդ երբ երգում իրեն են գովում ու կանչում: Լսում է երգչին, և լսում է իր առաջին ծնկներով, ու էդ ձենի վրա գալիս է հրավերքին:

Գալիս է, գուրգուրում, գգվում են իրար, սիրում են իրար, սիրելով էլ իրար հետ կապում են իրենց կյանքը: Բայց շատ կարճատև ու դժբախտ է լինում առհասարակ նրանց էդ բարեկամությունը: Մի տասը տեսակցությունից հետո հաճախ մեռնում է մեր ուժասպառ երգիչը: Էն էլ է պատահում, որ էս ամենից հետո իր նախկին ընկերուհին է վրեն հարձակվում, ծեծում, ծվատում, ուտում, դեն շարտելով անբախտ երգչի փալաս դարձած ջուժակը: Էն ջուժակը, որ էնքան սըրտառու էղանակներ էր նվազել իրեն համար:

Եթե կերպարանափոխության շրջանումն է պատահում, որ ծղրիդը կորցնի իր մարմնի որևէ մասը, նորից պոկված անդամը դուրս է գալի, ինչպես բույսի կտրած ճյուղը դուրս գա:

Տան ծղրիդը իր ապահով տեղը, իր տաք անկյունում սովորաբար երկար է ապրում, իսկ հանդիներ ենթակա է հազար ու մի փորձանքի: Քարաթոթոշ կա, մողես կա, մեղու կա, վերջապես էն շարաճճի ծտերը կան, որ անդադար թռչկոտում են շորս կողմը, մին էլ տեսար մինը մոտակա թփի վրից պըժժ զարկեց, կտցեց մեր տկար երգչին ու տարավ շամփրեց մամխի թփի փշերին — իրեն համար ձմեռվա պաշար:

Բայց եթե դրանից էլ ազատվի — բնությունից ո՛ւր պիտի փախչի:

Հասնում են աշնան ցրտերը: Հոկտեմբերյան մի ցուրտ

օր էլ, վերջին անգամ իր շեմքի առաջ, աշնան սառը վերջալուստի դեմ, երգում է ծղրիդն իր վերջին երգն ու քնում հավիտենական քնով: Սառը քամին շորացած խոտերով ու թառամած ծաղիկներով ծածկում է նրա անհայտ գերեզմանը, իսկ մի քիչ հետո, անհետ թաղում է ձյունի տակ և վրեն սուլում է ձմռան բուբը — Վո՛ւ, ո՛ւ... Էսպես է բնության կարգը: Մնվեց, ապրեց ու մեռավ, ետևից թողնելով իր սերունդը՝ 300—600 ծղրիդ, ինչպես ասում են գիտնականները:

Մարիկ ծղրիդը էսքան ձու է ածել մի էն տեսակ հարմար ու ապահով տեղ, որ համ վտանգից ու փորձանքից ազատ լինեն ձվանը, համ էլ, երբ ձագերը դուրս գան, հենց տեղն ու տեղը կերակուր լինի նրանց համար:

Չարմանում են գիտնականները, թե ո՞րտեղից է ծղրիդին էսքան խելք ու բանականություն, որ առաջուց ամեն բան հոգում է իր ձագերի համար: Չէ որ ինքը՝ ծղրիդը երբեք ոչ մեր է տեսնում, ոչ ձագ, որ սովորած լինի, փորձով գիտենա: Երբ որ գարնանը ձվից աշխարհք է դուրս գալիս — մերն արդեն մեռած է լինում անցյալ աշնանը, ինքն էլ երբ ձու է ածում — դրանից հետո մեռնում է նույն աշնանը, ու չի տեսնում, թե էն ձվից ինչ է դուրս գալիս եկող գարնանը: Հապա ինչպես է, որ ամեն բան հասկանում է, նախատեսում ու հոգում: Եվ դրան մի պատասխան են տալի, թե դա կյանքի, բնության անգիտակից թելադրությունն է, բնազդն է, ինստինկտն է:

Բայց ով գիտի, մի՞թե չի կարող պատահել, որ բացի բնազդից ուրիշ ընդունակություն էլ ունենա մեր փոքրիկ երգիչը, օրինակ՝ գիտակցություն, դատողություն: Հեշտ կարող է պատահել, որ էդպես լինի, թեև ինքը բնազդն արդեն շատ մեծ բան է, և շատ կենդանիների մեջ ավելի է զարգացած, բան թե մարդու մեջ:

Ահա էսպես հոգում է ծղրիդն իր ապագա սերունդի համար, ապահովում է նրա ծնունդն ու ապրուստը և նոր գալունքին հայտնվում են նրա ձագերը: Նորից ձագերը ձվից դուրս գալուց հետո շորս անգամ իրենց կաշին ու կերպարանքը փոխում են ու շորորդ կերպարանափոխությանը դուրս են գալիս կատարյալ ծղրիդներ: Անմիջապես իրենց բնակարանի հոգան են քաշում, իրար հետ կովում են ծնողական

օջախին տիրելու համար, որն էս կովում մեռնում է անժամանակ, որը տիրում է, մյուսներն էլ գնում են իրենց աշխատանքով նոր բնակարան են շինում, և դարձյալ նույն կայույտ, ժպտուն երկնքի տակ, նոր կանաչ ծաղկոտ դաշտերի մեջ խնդալով ու թնդալով շարունակվում է նույն կյանքն ու նույն երգը — ճը՛՛ռռռո՛՛՛՛ ճը՛՛ռռո՛՛՛՛...

Կարծես թե ոչինչ չի փոխվել:

1913

ԳԵԼԸ

1

Խորն աշունքին կոռու սարերով անցկենալիս մի գյուղում մութը վրա հասավ: (Հյուր ընկա Անդրիաս քեռու տանը, որ մի հին ու փորձված հովիվ էր:

Սարերում սովորություն կա, որ տեսան մեկի տունը հյուր եկավ՝ հարևանները կհավաքվեն եկվորի գլխին, կհետաքրքրվեն, հարցուփորձ կանեն՝ իմանան ի՞նչ կա, ի՞նչ չկա աշխարհքում: Եվ ահա հետզհետե գյուղացիք հավաքվեցին Անդրիաս քեռու օթախը:

Տանտերը բուխարին թեժ արավ, մենք էլ, ով ինչպես ուզեց, տեղավորվեցինք լին ու արձակ տախտերի վրա ու սկսեցինք զրույց անել:

Էս խոսակցության միջոցին գյուղի շներն սկսեցին անհանգիստ հաչել ու ոռնալ:

— Գել է, — միաբերան բացականչեցին գյուղացիք:

— Ընչի՞ց եք իմանում, — հարցրի ես:

— Գիլահաչ են տալի, աղա:

— Գիլահաչը ո՞րն է: Մի՞թե շները միշտ մի տեսակ չեն հաչում:

— Չէ, աղա, գիլի վրա ուրիշ տեսակ են հաչում, մարդի վրա՝ ուրիշ: Մարդկանցից էլ՝ գողի վրա ուրիշ տեսակ են հաչում, անցորդի վրա՝ ուրիշ: Խմբի վրա ուրիշ տեսակ են հաչում, կենդու մարդի վրա՝ ուրիշ...

Շենց էվ խոսքի մեջն էինք, որ մի հրացան տրաքեց, շների հաչոցը սաստկացավ ու միաժամանակ մի աղմուկ բարձրացավ:

— Հասեք հե՛յ... տարա՛վ, տարա՛վ, հե՛յ...

Գյուղացիք դուրս թափեցին:

2

Գյուղիցը դուրս գիշերվա մթնում լսվում էր խուլ աղմուկ: Ես մենակ էի մնացել: Տան կնանիքն էին միայն դան առջև հավաքված վաշ ու մե: անում: Միջների պառավն անիծում էր.

— Վո՛ւյ, անտեր մնաս դու, անտեր:

Ու մրմնջում էր «Գիլկապի» աղոթքը:

«Ալալուս,

Գալալուս,

Գելը կապեմ երկու բըթով,

Երկու բըթով, երկու մատով,

Աստվածածնա քաղցր կաթով,

Սուրբ Սարգսի ձիու ձարով,

Նահատակաց կարմիր քարով:

Գիլի ճամփեն մոլոր անեմ,

Գիլի ատամ խըմոր անեմ,

Ոտները թուլ,

Ականջը խուլ...»

Ու կրկնում էր.

— Վո՛ւյ, անտեր մնաս դու, անտեր...

— Էն ի՞նչ է, նանի, — հարցրի ես, թեև համոզված էի, որ գել էր:

— Գել է, որդի, գել: Ոչխարը սարից գեղն են բերել — ետևիցն եկել է:

3

Վերջապես խառնիխուռն բարձր-բարձր խոսելով ու ծիծաղելով եկան գյուղացիք:

— Աղա, բա որ ասի՞նք:

— Ուրեմն գե՛լ էր:

Ինձ պատասխան տալու փոխարեն առաջ բերին մի թխահեմ 17—18 տարեկան պատանու:

— Այ տղա, Միմոն, էդ ո՞նց էլավ:

— Այ տղա, դե էն ա ոչխարը բերում էի տուն անեմ: Բերի գեղին մոտեցրի, մին էլ տեսնեմ ոչխարը դես ու դեն խախալ-խախալ է անում. շունն էլ հա է անում, թե ոչխարի մեջն ընկնի: Հենց էս ժամանակը շները թփի տակիցը մի գիլի վեր կալան ու ետևիցը լարվեցին:

— Հասի՛ հա հասի՛, բռնի՛ հա բռնի...

Մին էլ տեսնեմ ոչխարը կտրկան էլավ ու փախս առավ: Ետ մտիկ տամ, որ մի անտեր գել էլ մի ոչխարի բռնել է, հետը կողք-կողքի ընկել ու պոչով ետևիցը քշում է, ոչխարն էլ հետը շափ ընկած գնում է, ոնց որ հարսանիքի ձիավոր ըլի...

— Հա՛յ հա հա՛յ... շուռ եկա դեսը: Թվանքը որ տրաքեց, սա ոչխարը թող արավ փախավ:

— Անտերը ոչխարի միջին տապ արած է էլել հա՛,— նկատեց քեռի Անդրիասն ու դարձավ դեպի ինձ:

— Էդպես է դրանց սովորությունն, ա՛ղա: Էգ ու որձ գնում են: Մինը ոչխարիցը մոտիկ տապ է անում, կամ եթե աջողեցնում է՝ հենց ոչխարի միջին է տապ անում, մյուսը գալիս է երևութք ըլում, խաբսը տալիս, շանն ու շոբանին առնում փախչում: Տապ արած ընկերը ետևիցն էս խառնակ ժամանակը ոչխարը տանում է: Շատ անգամ էլ ոչխարը տանում է պահում ու ետ գալիս ընկերին օգնություն: Ուստա շոբանը փախած գիլի ետևից գնալ չի, գիտի որ ետնուց վտանգ կա պատրաստած:

— Սա էլ է լավ ժած եկել,— գովեցի ես պատանի հովվին,— կարողացել է գիլի բերանից անփորձանք աղատել ոչխարը:

— Գիլի բերանից անփորձանք ոչխար աղատիլն ինչպե՛ս կլինի, աղա,— խոսեց պատանին:— Գելը տեսավ, որ ոչխարը ձեռիցը գնում է, մինչև իմ հասնելը մի ոխելում ոչխարի դմակը պոկեց տարավ:

— Հա՛, էդպես է,— դարձյալ մեջ մտավ տանտերս:— Գելը ոչխարին հասավ թե չէ, եթե տանելու հնար չկա, դմակին կտա ու մի տալումը դմակը կպոկի:

— Տավարին էլ հասավ թե չէ՝ բողազիցը կռնի, քեռի Անդրիաս,— մեջ մտավ մի տավարած:

— Տավարին էնքան էլ հեշտ չի,— պատասխանեց քեռի Անդրիասը:— Տավարիցը մինը գոռաց թե չէ, ամբողջ տավարը հասկանում է բանն ինչումն է, որովհետև գիլի գոռացնելն ուրիշ տեսակ է. իսկույն բոլորը հավաքվում են, քամակի տալիս ու պոչները դեմ անում, կանգնում...

— Տավարը հեշտ է շաղվում, քեռի Անդրիաս, ու հեշտ էլ գիլի փայ է դառնում: Էն, ինչ ձի՛ն է անում գիլի հետ, ոչ մի անասուն չի անիլ:

Ձին գիլի հոտն առավ թե չէ, ականջները սրում է, փրոնացնում, փնշացնում ու ձեռաց բոլոր ձիերը հավաքվում են մի տեղ: Մադիանները իրենց բուռակները մեջտեղն են առնում ու նրանց շրջապատում կանգնում, երեսները դեպի ներս, քամակները դեպի դուրս — գելերի կողմն արած՝ քացիները պատրաստի: Ու աստոծ հեռու տանի, թե մի գել մոտեցավ: Բայց կովում գիլի համար ամենավտանգավորը որձ ձին է: Որձ ձին մադիանների հետ շրջանի մեջ չի մտնում: Բաշը թափ տալով ու փռացնելով կատաղի պտտվում է շրջանի շորս կողմը, հարձակվում է գելերի վրա ու առաջն ընկած գելին տրորում, ջարդում առաջի ոտներով կամ քացու մի զարկով փռում գետին:

Եթե մադիանը մենակ է, քուռակը դռչի տակն է առնում ու կանգնում:

Մենակ ձիու էս կողմն էն կողմն է թռչում գելը ու հանկարծ վրա է թռչում բողազիցը բռնում կամ մի զարկով փորը պատում: Երբեմն քնթիցն էլ է բռնում, շունչը կտրացնում: Երբեմն էլ ձիու առաջն է ընկնում ու փախսը տալիս — իբրև թե վախենում է. ձին էլ դունչը տնկած ետևիցն է ընկնում, իբրև թե հալածում է: Հանկարծ ետ է դառնում ու բռնում:

— Էդ հո էշն է,— խոսեց քեռի Անդրիասը:— Գելն էջի հետ խաղում է, խաղում, ու ականջներն իրեն քաշում, առաջը փախսը հարում: Էշն ընկնում է ետևիցը, իբրև թե հալածում է: Էսպես հեռացնում է, հասցնում մի ապահով տեղ ու ետ դառնում ուտում... Դրա համար էլ ասում են՝ «Իշի գերեզմանը գիլի փորն է»:

— Ոչխարն էլ է գիլի հտեկիցն ընկնում,— նկատեց մի ուրիշը:

— Հենց գելն էլ էդ երկուսին — իշան ու ոչխարին ամենից շատ է սիրում:

— Իսկ ամենից քիչ մոտենում է խոզին ու գոմշին:

— Բա ի՞նչ:

— Պա՛, ի՞նչ բանը ծիծաղ է: Խամ գելն ի՞նչ բռնած ժամանակը՝ էժը էնպես է ճղըղում, որ գելը թող է անում, փախչում:

— Բայց մի՞թե գելն էդքան անվախ ու համարձակ մոտենում է գյուղին,— հարց տվի ես:

— Գելը, երբ որ կուշտ է, շատ վախկոտ կենդանի է, աղա,— պատասխանեց քեռի Անդրիասը:— Բայց հիմի սկսվում է գիլի դժար ժամանակը: Չմեռը գալիս է, անտառի որսը դժարանում է, ապրանքը սարից ցած է գալիս — տուն է մտնում: Գիլի ապրուստը կտրվում է: Սովը որ նեղացնի՝ գեղ էլ կմտնի, դեռ տուն էլ: Սովի ձեռիցը ձմեռը գալիս է շեմքիցը շուն է տանում լափում: Մուկն է որսում: Մառի փթուակ է ուտում, իր լակոտն է ուտում... Գիլ խոզին է պատճառն է՛ի, որ ձմեռը միանում են, բոլորե՛լ են (ո՛հմակ)՝ կազմում, որ ուժեղ լինեն, միասին հարձակվեն...

Չմեռը դեռ էլի մեզանում, մեր սարերում, մեր անտառներում մի բան է ճարվում. նապաստակներ են կամ ուրիշ մանր-մունր կենդանիներ: Վերջապես եղնիկների ու եղջերուների հտեկից են ընկնում, քշում են դեպի սառած գետերը: Տանում են սառույցի վրա ճղատում — ու վրա են հասնում խեղդում, ուտում: Բայց էն ինչ դաշտ տեղերն են, որ դրանք էլ չկան, գելը սովից ավելի համարձակ ու վտանգավոր է դառնում: Շատ անգամ կատաղում է: Ու՛ դաշտ տեղերը մարդկանց վրա էլ է հարձակվում ու վնասում:

— Տղեք, դե խոսքն էստեղ ինձ տվեք,— էն կողմից խոսեց Շորագյալցի Ավոն ք սկսեց իր պատմությունը:

— Մեզանում, դաշտ տեղերում, գելը շատ ավելի վտանգավոր է, քան սար տեղերում: Մեզանում գելերը ձմեռվան գիշերը գալիս են գեղի մեջը ման գալիս: Շներին պահում ենք, որ շտանեն — չուտեն: Չմեռները մեզանում շատ վտանգավոր է մենակ ճանապարհորդելը. մանավանդ, եթե մութն

էլ վրա հասավ: Այ ձեզ պատմեմ իմ գլխին եկած մի դեպք:

Միրան անունով մի եզն ունեինք: Մի ձմեռ էս եզը կորավ: Ախպերս ինձ դրկեց ման գալու: Ես էլ էսպես 16—17 տարեկան ջահել տղա եմ: Գնացի գեղի շորս կողմը ման եկա ման — չգտա: Գոմահանդ ունենք, էնքան էլ գեղիցը հեռու չի: Ասի՛՛ եզը սովոր է, կարելի է էդ կողմն ըլի գնացած: Գնացի էդ գոմահանդը: Գնացի, էս գոմը նայեցի, էն գոմը նայեցի, վերջը տեսնեմ՝ դրուստ որ եզը մի գոմումն է: Եզը դուրս արի. դուրս գամ տեսնեմ արդեն մութն ընկնելու վրա է: Միրտս մի ա՛հ ընկավ: Տեսնում եմ, որ լուսով չեմ կարող գեղը հասնեմ: Մտածում եմ՝ գնա՛մ-չգնա՛մ:

Ի՞նչ անեմ...

Չորս կողմս ամալի ձյունապատ դաշտ, շեն չկա, ձեն չկա. ձեռիս էլ մի ճիպոտ ու մի դանակ:

Ի՞նչ պետք է անեմ, Աստծու անունը տվի, եզն առաջս արի քշեցի: Մի քիչ տեղ անց էի կացել. հանկարծ իրիկվան էն դառը քամու հետ մի տխուր ձեն ընկավ ականջովս: Կանգնեցի, ականջ դրի...

Տեսնեմ գիլի ոռնոց է.— ո՛ւտ՛...

Ո՛ւտ... էս ոռնոցին միացավ ամբողջ խումբը ու սարսափով լցվեց դաշտը: Մտիկ տամ՝ որ աչ կողմս, հեռվում, մթան մեջ, ջուխտ-ջուխտ վառված ճրագների մի բազմություն է շարժվում... էլ ի՞նչ. ձեռաց հասկացա, որ գելերի աչքերն են — սոված բուրեղ է... Եզը ետ տվի դեպի գոմերն ու քշում եմ, ո՛նց եմ քշում, վազում եմ, ո՛նց եմ վազում... Ետ նայեմ, որ արդեն գալիս են: Եզը թող արի փախա, ընկա գոմը: Ընկա գոմը, բարձրացա սների գլխներին գերանների վրա դատարկ տեղեր են լինում է՛...

— Հա՛, իմանում ենք, կոնդերի վրա:

— Հա՛, էդ կոնդերից մեկին վեր էլա: Դեռ չէի տեղավորվել — մին էլ տեսնեմ եզանս գոռոցը բարձրացավ: Զարմանք բան է, թե էնքան տարածությունը ինչպես մի երկուրոպիումը կտրեցին ու հասան:

— Վա՛հ, գիլի ոտին ինչը կհասնի,— խոսեց քեռի Անդրիասը:— էն սարի գլխիցը որ մի բան նկատեց՝ մին էլ կտեսնես կողքիդ դուրս եկավ: Դրա համար են ասում էլի, թե՛ գելն ազրեիլ է:]

— Հա՛, էն էի ասում,— շարունակեց Շորագյալցի Ավոն:— Եզանս գոռոցը բարձրացավ ու իսկույն էլ կտրեց, խոխոցն ընկավ: Խոխոցն էլ կտրեց, միայն գելերի ժընգժընգոցն եմ լսում, ու լսում եմ՝ ոնց են լափում...

Վա՛յ Միրան ջան... դուրս թռավ սրտիցս: Բայց ի՞նչ Միրանի ժամանակն է: Ես իմ գլուխն եմ լաց ըլում: Մտածում եմ թե՛ էս լավ էր, եզնովը կըլեն, մինչև կլուսանա, կամ կկշտանան ու կգնան, կամ, ասում եմ, ինձ շեն գտնիլ... Դու մի ասիլ՝ սոված գիլի բոլո՛ւկ, ես հիսուն ասեմ, դու հարյուր իմացի, ձեռաց հախոել են, ու մին էլ տեսնեմ, մութը գոմը լցվեցին էն ջուխտ-ջուխտ վառած ճրագները սեխները բաց արած...

Գտան...

Եկել են լցվել, ներքեից ազահ-ազահ ինձ են մտիկ անում: Ես էլ շորացել եմ մնացել վերևը գերանին կպած: Մտիկ արին, մտիկ ու թող արին դուրս գնացին:

Շունչս ետ եկավ: Ասի՝ «փառքդ շատ ըլի աստոծ, էս էր՝ ազատվեցի...»:

Դեռ աստծու փառքը բերանումս, մին էլ ինչ եմ լսում: Իմ ուղղությամբ վերևից կտուրը քանդում են, շանգերովը հողը ետ են տալի: Արդեն լսում եմ շանգերը կոճերին է դիպչում...

Սառը քրտինքը վրա տվեց... Շտապեցի տեղս փոխեցի, անց կացա մյուս կոնդի վրա կուշ եկա:

Բաց արին, կոճը վեր կալան, տեսան տակին չկամ:

էլի եկան ներքև: Մտիկ արին, որ մյուս կոնդի վրա եմ. ետ դուրս գնացին: Հիմի էս կոնդի վերևից սկսեցին քանդել կտուրը:

Դարձյալ տեղս փոխեցի: Էսպեսով՝ նրանք քանդելով, ես տեղս փոխելով՝ հասանք վերջին կոնդին:

էլ ո՛ր գնամ:

Եկան մտիկ արին կատաղած ու ետ գնացին: Քանդում են, ո՛նց են քանդում...

Մի սուր դանակ ունեի գրպանումս, հանեցի, բաց արի ու ձեռիս բռնած՝ մտքումս աղոթք եմ անում.— Տեր աստոծ, դու ինձ ազատ անես էս նեղ տեղիցը...

Իսկ հենց անգաճիս վերևը քանդում են: Քանդելով հասան կոճերին: Հասան կոճերին. մինը կոճերի արանքովը թա-

թը մեկնեց, որ կոճը ետ քաշի: Թաթը բռնեցի ու էն սուր դանակովը ղըռթ կտրեցի... Թաթը փախցրեց, ոռնալով, կոնձկոնձալով ետ գնաց, ու կտերն իրարով անցան: Իմացել էի, որ գելերի մինը եթե վիրավորվեց՝ մյուսները վրա են թափում նրան ուտում: Ասի՝ ուրեմն սրան ուտում են: Հիմի սպասում եմ, որ սրան կուտեն կպրծնեն ետ կգան: էլի դանակս ձեռիս պատրաստ սպասում եմ:

Ականջս ձենի է: Գիշերվա մի ժամին, ոնց որ երազում՝ մի բարակ ձեն եմ լսում.

— Ավո հե՛յ...

Ինձ են կանչում...

— Տեր աստոծ, մի՞թե ինձ են կանչում... մի՞թե ախպերս է... Մի՞թե մերոնք են... Գոմից ձեն եմ տալիս, գոռում եմ.

— Աղանիկ հե՛յ... էստեղ ե՛մ... Գոմերումն ե՛մ... Գելերն ինձ ուտում ե՛ն... Օգնեցեք հե՛յ...

էլի նրանք ձեն են տալի, իմ ձենը շեն լսում, թեև ես շարունակ կանչում եմ:

Մին էլ տեսնեմ հրացանները տրաքեցին, ետևից լավեցին հեռացող գելերի կաղկանձն ու մարդկանց հարահրոցը: Պարզ ճանաչեցի ախպորս ու մեր գեղացի տղերանց ամեն մեկի ձենը:

— Ավո հե՛յ...

— էստեղ ե՛մ... էստեղ ե՛մ... կենդանի ե՛մ...

Ներս թափեցին գոմը:

— Փառք քեզ աստոծ... Փառք քեզ աստոծ,— ուրախացած ու զարմացած կանչում են ամենքը: Ցած եկա վերջին կոնդի վրից: Ախպորս գիրկն ընկա ու սկսեցի հեկեկալ:

— էլ լաց մի ըլի, գնա աստծուն փառք տուր, որ էսօր նոր մորից ծնվեցիր,— կանչեցին էս ու էն կողմից ու ինձ դուրս բերին դուռը, ուր թափված էին մեր Միրան եզան ոսկորները:

Դեռ լուսը չէր բացվել:

Հեռվից լավում էր գելերի ոռնոցը:

Շորագլացի Ավուրի պատմութիւնից հետո խոսքն ընկավ գիլի ոհմակի վրա:

Երկար ձմեռներն ու ապրուստի դժվարութիւնն են պատճառը, որ գելերը ոհմակ են կազմում, ըրացատրում էին գյուղացիք:

Ոռնում են, իրար կանչում, հավաքվում, միանում, որ ուժեղ լինեն թե՛ հարձակվելու և թե՛ հարձակման դիմադրելու ժամանակ:

Ամեն մինը մենակ հեշտ կհաղթվի ձմեռն ու կկորչի, քան թե խմբով, և ամեն մինը չի կարող էն ճանկել, ինչ որ կճանկի խումբը:

Եվ հավաքվում են հիսունով, հարյուրով, մի քանի հարյուրով:

Սարսափելի բան է գիլի ոհմակը. մանավանդ էդ լինում է ձմեռը, գիլի ամենաքաղցած ժամանակը, երբ շատ անգամ գելը քաղցից կատաղում է: Էդ ժամանակ, ասում են, գելերը իրենք էլ են իրարից վախենում: Երբ ոհմակով մի տեղ կանգնում են հանգստանալու՝ շրջան են կազմում ու էնպես են վեր թափում, որ իրար երես պահեն, չեն հավատում մեկմեկու: Վախում են իրար ուտեն: Բայց ոմանք էլ ասում են՝ նրա համար են էդպես անում, որ իրար տեսնեն ու հարկավոր դեպքում իսկույն նշան տան իրարու, և իբրև թե բոլորը նայում են իրենց գլխավորին:

Գիլի համար մութը, ճամփի դժվարութիւնը, հեռավորութիւնը — ոչ մի նշանակութիւն չունեն:

Գելն էնքան արագավազ է, որ մի գիշերվա մեջ երեք-չորս օրվա ձիու ճամփա կկտրի: Իսկ գիլի սրատեսութեան վրա էսպես մի գրույց կա ժողովրդի մեջ:

Ասում են: Մի անգամ արծիվն ու գելը վեճի բռնվեցին, թե իրենցից ո՞րն է ավելի սրատես: Գելն ասավ՝ մի ամպոտ օր ես սարի գլուխն ելա, ամպի միջով մտիկ արի տեսա՝ հեռու մի դաշտում մի սև ցելի (վարած հողի) մեջ մի ակոսում մի սև գառն է նստած:

Արծիվն էլ թե՛ ես էլ երկնքի երեսն էլա, ներքև մտիկ արի, մի ծխնելույզի միջից տեսա կրակի վրա դրած մի պղինձ

խուփը վրեն: Խփան ճեղքիցը նայեցի, տեսա պղնձի միջին կաթը, կաթնի երեսին էլ մի սիպտակ մազ:

Էսքան արագավազ ու սրատես գազան է գելը: Եվ էս ամենի հետ միասին՝ շատ խորամանկ:

Նա մինչև լավ չիմանա, որ հարձակումն ապահով է — չի հարձակվիլ: Ուրիշ բան է, եթե սովից խելագար մի գել իրեն կորցրած գցի ափաշկարա վտանգի մեջ. բայց սովորաբար գելը շատ է զգույշ ու խորամանկ:

Մի գյուղացի էսպես պատմութիւն արավ: Ասում էր. մի տարի թակարդ էի սարել: Առավոտը վաղ վեր կացա գնացի տեսա մի գել է ընկել մեջը: Միայն ոտիցն է ընկել ու ոտը փշրվել է, սատկել է: Վեր կալա թակարդիցը հանեցի, էն կողմը գցեցի: Մինչև գլուխս կախ ես թակարդովն էի էղած, մին էլ տեսնեմ վեր կացավ կաղին տալով փախավ: Հա՛յ հա հա՛յ, էլ ո՞րտեղ, իրեն տվեց անտառը: Դու մի՛ ասիլ անտերը ստամենուկ է տված եղել:

Գիլի ոհմակն էլ, ձմեռը ճամփա կտրելիս իրար ետևից է գնում — ծլլաշարուկ, ու միշտ ամենից ուժեղն ու փորձվածը առաջին է գնում: Եվ սա երկու հարմարութիւն ունի նրանց համար: Մին, որ առաջի գնացողները ձնի մեջ կոպար (շավիղ) են բաց անում, ետևից եկողների համար բաց-պատրաստ ճամփա է լինում, մին էլ՝ որ ոչ ոք չի կարող իմանալ, թե իրենք քանիսն են եղել: Եվ էդ է պատճառը, որ ոչ մի որսկան չի կարող ասել, թե էս ոհմակը, որ անցել է, քանի գել է եղել մեջը:

Աստված հեռու տանի, թե ոհմակի աչքովը մի որս ընկավ: Ուրիշ գազան լինի, թե ընտանի կենդանի, իսկույն շորս կողմից շրջապատում են ու էլ փրկութիւն չկա: Իսկ կճղակավորներին, հատկապես եղնիկներին ու եղջերուներին, քշում են դեպի սառած գետերը, սառույցի վրա ճղատում ու վրա թափում, կամ քշում են դեպի բարձր ժայռերը, ժայռերից թըռցնում ու իջնում ներքև լափում:

Ոհմակը վտանգավոր է և մարդու համար: Եթե բազմութիւն չեղավ՝ մի կամ երկու մարդից ոհմակը չի վախենալ, թեկուզ հրացան ունենան: Մինչև անգամ հրացանն ավելի վտանգավոր է: Հրացան արձակես թե չէ, իսկույն կհարձակվեն: Հիմի կասեք՝ հապա ինչի՞ց է վախենում գելը:

Էս մասին գյուղացիք մի քանի պատմութիւն արին:

Գիւլը ոչ մի բանից էնպէս չի վախենալ, ինչպէս կրակից] — առաջինը խոսեց իմ տանտերը, քեռի Անդրիասը:

Մեր կողմերը, դե գիտեք, որ գել շատ կա՝ էնպէս տեղ ունենք, որ հենց գիլի բուն է, որ կա: Մի մեծ ծմակ ունենք, Մոտկորա ծմակ ենք ասում: էդ ծմակումը մի թալա (անտառումը բաց տեղ, բացատ) կա: էդ թալումը էնքան գել կա, որ անունը դրել են Գիլի թալա:

Մի ձմեռնամուտ իրիկուն սարի գոմերիցը տուն եմ գալի: Հակառակին էլ էս Ստեփան տղեա էլ հետս է. ինը-տասը տարեկան էրեխա է: Որ եկանք էդ թալի դիմացը, մի շան ձեն ընկավ ականջովս: Ասի՝ ով գիտի ոչխար են բերել էս կողմերը, շոբանի շունն է հաշում: Ձեն տվի:

— Ա՛յ շոբան, հե՛յ...

էս ձեն տալն էր, էլի:

Շան հաշոցը կտրեց ու, ձեզ մատաղ, մին էլ էն տեսնեմ՝ էդ ծմակիցը գիլի տուտը բաց էլավ, ուխները բաց արած գալիս են, ո՛նց են գալիս, աչքերս սևացան...

Դու մի՛ ասիլ, հաշողը գել է եղել: Ախր չէ որ գելը ունում է, բայց շանից հաշել է սովորում ու շատ անգամ էլ հաշում է:

Ձեռիս թվանք կա, միայն լավ գիտեմ, որ գիլի բոլուկի վրա թվանք չեն գցիլ. թվանք գցես թե չէ՝ ավելի կատաղի վրա կտան: էրեխեն թի՛ ապի, էն ի՞նչ են:

Ասի՛ վախիլ մի՛, քեզ մատաղ, զոչաղ կաց: Արի օգնի էս խաշամն (չոր տերև) ու շոր ճյուղերը հավաքենք: Չորս կողմից խաշամն ու շոր ճյուղերը ձեռաց կիտեցի ու կրակ տվի, բոցը ծուլ էլավ: Մոտկորա ծմակը լիքը փետ: Մինչև սրանց հասնելը վրա տվի, թեժ արի. բոցն էլավ ծառերի ծերը:

Սրանք եկել են, ի՛նչքան են եկել. շորս կողմներս կտրել են հեռու կանգնուտել ժընգժընգում են ու առամները չխկըխկալացնում: Աչքները ծմակի մթան մեջ քուքուրթի (ծծումբի) փոցի նման ջուխտ-ջուխտ վառվում են: Մարդ մտիկ տալիս կամիկանդում է:

էրեխեն կպել է փեշիցս ու լաց է լինում:

— Վախիլ մի՛, Ստեփան ջան, վախիլ մի՛, ես էստեղ եմ... լաց մի՛ ըլի, որ լաց ըլես — կգան մեզ կուտեն...

էրեխեն ձենը փորն է գցել ու փեշիցս կպած դողում է, ո՛նց է դողում...

Տեր աստված, ասում եմ, դու ազատես էս նեղ տեղիցը: Ի՞նչ անեմ: Հուլիսս դրել եմ կրակի վրա: էն էլ փետը հատնում է, էրեխեն էլ փեշիցս պինդ բռնել է, թողնում չի մի քիչ հեռանամ, փետ բերեմ կրակին վրա տամ:

Մոտիկ մի ցըցչորի ծառ կար: Կրակը բոթեցի սրա տակը, սրա կողքին էլ մի կտորած ծառի շոր բլավ (կատար) կար, էն էլ քաշեցի վրեն, թեժացավ, ոնց թեժացավ, կարմիր լույսն ընկել է ամբողջ ձորը:

Դիմացի սարիցը շոբանները նկատում են, որ, ախպեր, էս ձորումը, էս ժամանակին, էս ի՞նչ կրակ պետք է լինի, որ քիչ է մնում ծմակը կրակի:

Մտածում են, մտածում ու ձեն են տալի:

Ականջ դնեմ, որ էս մեր Շամիրի ձենն է:

Ուրախանաք, ինչ որ մենք ուրախացանք:

Ձեն տվի:

— Շամիր հե՛յ... գիլի բոլուկ է. շորս կողմս կտրել են... էրեխեն հետս է... օգնեցեք հե՛յ...

Հենց էս կանչելն էր: Մի քանի շոբան իրար հետ ձեն տվին:

— Վախիլ մի՛ք, վախիլ մի՛ք, գալիս ենք հե՛յ...

Ու պարզ լսում ենք, ոնց են իրար ձեն տալիս շտապեցնում, ոնց են շներին կանչում:

— Թորլան հե՛յ, Ղայթար հե՛յ, Չամբար հե՛յ, Չալակ հե՛յ...

Շների կանչոցը վեր էլավ ու մտավ ձորը:

էստեղ էրեխեն նորից սկսեց հեկեկալ ու լաց ըլի:

— Վախիլ մի՛, Ստեփան ջան, վախիլ մի՛, հրես կգան:

— Տղե՛ք, էս մեր Շամբրին Թորլան անունով մի գելխեղզ շուն ուներ: Մին էլ տեսա էս շան ձենը մոտիկ ծմակում զըրնգաց: Սրա ետևից մնացած շները, շների ետևից կրնկակոխ շոբանները: Չոբանների դըրողուն ու շների հաշոցը ծմակը դրմբացնում է: Մին էլ Ստեփանս թե՛ «ապի, գելերը փախչում են»:

Ասավ, ու ուրախութիւնը խառնվեց սարսափին, սկսեց աղաղակել ու առաջն ընկած փետի կտոր, քար, հող շարտել գելերի ետեից:

էլ գելն ո՞վ կտա: Մմակի մթնումը կորան, գնացին:

Տղեքն եկան:

— Ա՛յ տղա, էս ի՞նչ բան էր:

— Բանն էլ որն է, ձեր տունը չքանդվի, հապա էսպես, էսպես...

էստեղից վեր կացանք գնացինք շրջանների մոտ, մինչև լուսացավ, առավոտը խմբով եկանք տուն:

էս բանն, խխպեր, իմ գլուխն եկավ: Կրակը մեզ աղա-տեց,— վերջացրեց խոսքը քեռի Անդրիասը:

6

— Ուստա Սարգիս, հիմի քո պատմութիւնն արա,— էս ու էն կողմից ձեռն տվին գյուղացիք.— Շորագյալից գալիս ոնց էլա՞վ:

— էլ ի՞նչ ասեմ, դե գիտեք էլի,— պատասխանեց ուստա Սարգիսը:

— Մենք գիտենք, ամա աղեն գիտի ոչ:

— Պա՛տմի, ուստա Սարգիս, պա՛տմի լսենք, տեսնենք Շորագյալի ճամփին քեզ հետ ի՞նչ է պատահել,— խընդ-րեցի ես:

Ուստա Սարգիսը զուռնաչի էր: Թինկը տված շիբուխ էր քաշում, վրա նստեց ու սկսեց պատմութիւնը.

— Շորագյալի ճամփին պատահած պատմութիւնն էս-պես է, աղա ջան:

Մի հացապակաս տարի վեր կացանք ես, դամբաշ (զուռ-նի ձեռն պահող) Ակոփն ու դհոլչի (թմբկահար) Դավիթը մեր զուռնադհոլը վեր կալանք, ասինք գնանք Շորագյալ գե-ղերը հարսանիքներ անենք, հացահատիկ հավաքենք բերենք ձմեռը կառավարվենք:

Դե գիտեք էլի, որ Շորագյալա հացը համ լավն է լինում, համ առատ, իսկ մեզանում, սարերում, սակավ է լինում, եղածն էլ շատ անգամ կարկուտը տանում է:

Գնացինք զուռնա ածելով, հարսանիք անելով գեղեզեղ

ման եկանք: Բավական ցորեն-գարի հավաքեցինք, մի ծանո-թի պահ տվինք, մենք ետ ճամփա ընկանք դեպի մեր տները:

Գիտեմ ոչ Շորագյալ եղել եք թե չէ, Հոռոմ անունով մի գեղ կա. էդ գեղիցը դուրս ենք եկել գալիս ենք դեպի Արթիկ: Եկանք, ճամփին մութն ընկավ: Մնկահար ձյուն. ցուրտն էլ հո թրի նման մարդի երես է կտրատում: Ծամփեն էլ լավ չգիտենք: Գնա թե պետք է հասնես Արթիկ:

էս մեր Դավիթն առաջին էր գնում: Մին էլ թե՛ տղեք, եկեք, որ գեղը գտել եմ:

— Այ տղա, ո՞ւր է:

— Թե՛ հրեն ճրագները երևում են:

Մտիկ տանք տեսնենք, ճշմարիտ որ հեռվում շատ ճրագ-ներ են երևում: Միայն ես նկատում եմ, որ էս ճրագները ծած են գալի, դես-դեն են գնում:

Ասի՛ տղեք:

Թե՛ ինչ է:

Ասի՛ էս գեղ չի: Մին, որ ձմեռը սրանց գեղերի տների դուռն ու կտուրը փակ, ճրագները շեն երևալ, մին էլ որ՝ էս ճրագները որ տեսնում եք՝ ման են գալի:

Թե՛ բա էս ի՞նչ են:

Ասի՛ գելեր են: Գիլի բոլուկի բերան ենք ընկել, պատ-րաստվեցեք: Ես լսել եմ, որ զուռնի ձեռնին գելը — էլ վախե-նում է, թե ինչ,— մոտ չի գալի: Զուռնա-դհոլը սարքեցեք: էս խոսքումն ենք, տեսանք ճրագները մոտենում են, մթնումը, ձնոտ դաշտումը, դեսուդեն վազում են, ցրվում են, ուզում են մեզ շրջապատեն: էնքա՛ն են, էնքան են, որ էլ հաշիվ չկա:

Ես ու Ակոփը զուռնեն զլեցինք, էս Դավիթն էլ դհոլը — դը՛մբ հա դը՛մբ, կեսգիշերին, էս վերանա դաշտումը ածում ե՛նք: Զուռնա դհոլի ձեռնը վեր էլավ թե չէ — էս գելերս, ոնց որ տեղնուտեղը մեխես, մնացին իրենց տեղերը մեխ-ված:

Մին էլ ոռնոց վեր քաշեցին, տեր աստված, ի՛նչ ոռնոց: Զուռնի հետ ձեռն ձեռնի են տվել, ոռնում են:

— Վայ ծիծա՛ղ,— էս ու էն կողմից բացականչեցին գյու-

ղացիք:— Ուստա Սարգիս, լավ է ծիծաղներդ գալիս չէր:

— Այ տղա, ի՞նչ ծիծաղ կգար, սիրտներս սևացել էր. դանակ տայիր՝ արյուն չէր կաթիլ:

— Ետո՞, ետո՞...

— Ետո մենք ճամփա ընկանք, սրանք էլ մեզ հետ: Մենք ածելով գալիս ենք, սրանք էլ շորս կողմերս կտրած հեռու մթնումը ցինգիր-ցինգիր անելով գալիս են: Կարծես պար են գալիս: Գլուխներդ ինչ ցավեցնեմ. էսպես գնալով գիշերվա մի ժամանակը առաջներս մի շան հաշոցի ձեռք լսեցինք հեռու: Էս հաշոցի վրա մի քանի շներ սկսեցին հաշել ու ոռնալ, ու մին էլ տեսնենք մոտիկ գեղի ճրագները գուռը դուրս եկան: Մարդկանց ձեռքերը հասնում է մեզ:

Ուրախությունից զուռնա-դհուլի ձեռքն ափելի վեցիներ:

Քանի գեղին մոտենում ենք, գելերը ետ են ընկնում: Վերջ ջապես հասանք գեղին, սրանք ետ դառան, կորան:

Գեղացիք ճրագներով, աղմուկով առաջ եկան — մնացին զարմացած: Տեսնում են՝ երկու զուռնաչի ու մի դհուլի ածելով գալիս են ու հետները հարսանքավոր չկա:

— Այ ուստեք, բա հարսանքավորները որտեղ են:

Ասում ենք՝ հարսանքավորները ետ դառան գնացին: Զուգեցին ձեր գեղը մտնեն:

— Էդ ո՞վ էին որ...

— Գելերը...

— Ո՞նց թե գելերը...

— Ախպեր, ասինք, պատմելու ժամանակը չի, ցրտատար էլանք, մեռնում ենք, մեզ մի տաք տուն տարեք, էնտեղ կպատմենք:

Տարան մի տաք օդա, բուխարին թեթ արին, հացը դրին առաջներս, գլխներիս հավաքվեցին էսպես, ինչպես որ մենք հավաքվել ենք, ու սկսեցինք պատմել: Պատմում ենք ու ծիծաղում, պատմում ենք ու ծիծաղում:

Վերջն էլ իմանանք, որ էն գեղը չենք եկել, որտեղ գալիս էինք, ճամփեն կորցրել ենք — ընկել ենք Պարնի գեղ:

— Դուք հո կրակն ու զուռնեն եք ասում, բայց գելը մի բանից էլ է վախենում. թե իմանաք ընչի՞ց, — հարց տվեց օտարականը:

— Թոկից, — ձեռք տվին մի քանիսը:

— Ո՞նց թե թոկից, — զարմացան չգիտեցողները:

— Հա՛, ճշմարիտ է, թոկը որ ետևիցդ քաշ տաս՝ գելը կվախենա, մոտ չի գալ, — հաստատեց քեռի Անդրիասը:

— Ա՛յ տղա, թոկն ի՞նչ է, որ գելը թոկից վախենա:

— Ո՞վ գիտի, օձի տեղ է դնում, ինչ է, ի՞նչ իմանաս:

— Մեր գեղումը Եղո անունով մի ջահել մարդ կար, — պատմեց Շորագյացին: — Մի շատ սրտոտ ու քաջ մարդ: Երեսին որ թուր բռնեիր՝ երեսը ետ չէր թեքել: Ինքն էլ թրի-թվանքի հետ խաղացող մարդ էր:

Սրանից մի 4—5 տարի առաջ մի ձմեռ գործով գնում է մեր հարևան գյուղերը ու մի քանի օր ուշանում: Մի երեսխա ունեք, շատ էր սիրում: Մի իրիկուն լուր է առնում, թե բա՛ երեսեդ հիվանդ է, քեզ է ուզում: Վեր է կենում, թե՛ պետք է գնամ: Սրա առաջն են ընկնում, բռնում են, համոզում են, թե մուժը գիշեր — հազար ու մի շար փորձանք, հազար ու մի գել ու գազան, սպասիր, ասում են, գիշերը լուս ունի, կլուսանա կգնաս երեսիդ կտեսնես: Սա պըպին է կանգնում թե՛ չէ որ չէ, հենց էս կես գիշերին պետք է գնամ, թուրը վրես, ձին տակիս, ի՞նչ պետք է պատահի: Ինսանի թարսություն էլի: Չեն կարում հաղթեն, կես գիշերին ձի է նստում, ճամփա ընկնում: Կիսաճամփին գիլի բոլուկը սրան շրջապատում է: Դու մի ասիլ հետը թոկ ունի, ինքն էլ փորձված, բանգետ մարդ է. թոկը երկար բաց է թողնում ու ձիու ետևից քաշ տալիս: Գելերն էլ մոտ չեն գալիս, երկու կողմից թոկին մոտիկ տալով վազ են տալի: Էսպես բավական տեղ անց է կենում: Մի տեղ էլ, ո՞նց է լինում, ի՞նչ է լինում, թոկի ծերը ձեռքից դուրս է պրծնում ու վեր է ընկնում: Սա ձին քշում է: Մի քիչ տեղ գնում է, գելերը վրա են տալիս: Թուրը հանում է հենց առաջին հասնողին տալիս... Դե գելերի սովորությունն էլ գիտեք էլի. մինը թե վիրավորվեց — մյուսները նրա վրա կթափվեն, կուտեն: Էդպես էլ ձիավորին

թող են անում, վրա են թափում էս վիրավորվածին: Եղոս ձիուն մտրակում է, քշում, բավական տեղ քշած գնում է: Գելերը վիրավորվածին լափում են պրծնում, ետ նորից ընկնում սրա ետևից: Սա էլի ուզում է թուրը հանի, որ զարկի, քաշում է, քաշում, դուրս չի գալի: Տեսնում է՝ հասնում են իրեն — հերսից պատյանը ատամով կրծոտում է, ինչ անում է, չի անում՝ թուրը դուրս չի գալիս: Դու մի ասի՝ գիլին որ զարկել է, առանց արյունը սրբելու տեղն է դրել, արյունոտ թուրը կպել է պատյանին, ամրացել:

էլ ի՞նչ երկարացնեմ, գելերը վրա են տալիս, իրեն էլ են ուտում, ձիուն էլ:

Մյուս օրը լուրն եկավ. գնացինք տեսանք արնոտ ձյունի վրա իր ոսկորներն էլ, ձիունն էլ, թուրն էլ, պատառոտած շորերն էլ թափված, ցրված դեռուդեն:

— Բա էն մարդին, որ գելերը կերել էին՝ ձեզ էդ բոլորն ո՞վ պատմեց. — հարցրեց մի գյուղացի:

— Հապա մարդուս խելքն ու փորձն ընչի՞ համար է, — պատասխանեց պատմողը: — Գնացինք տեսանք ձրնի պարզ հետքերը երևում են, որ կողմից է եկել ու որտեղ է շրջապատել գիլի բուլուկը, որտեղից է Եղոն սկսել թոկը քաշ տալ, մինչև որտեղ է քաշ տվել, որտեղ է ձեռիցն ընկել: Մի քիչ էլ գնացած է ու հետքերն իրար են խառնված, տակնուվրա են եղած, ու թափված են գիլի բուրդն ու ոսկորները: Նրանցից բավական հեռու էլ իրեն ու ձիուն են կերել: Թուրն էլ բերինք, տեսանք պատյանը մարդու ատամներով կրծոտած: Քաշեցինք, քաշեցինք, շկարացինք դուրս քաշել, տվինք վարպետին, քանդեց, հանեց. տեսնե՞ք արյունոտ, կպած պատյանին:

— Ափսոս մարդ, — էս ու էն կողմից ափսոսացին գյուղացիք: — Ա՛յ թե ընչի համար են ասել, թե համբերությունը կյանք է: Ասա, հեր օրհնածի մարդ, մի քիչ համբերի, լուսանա էլի...

8

— Տղե՛ք, հավատա, գիլիցն էլ վերը վնասակար գազան չլինի, դուք ի՞նչ եք ասում, — խոսեց մի գյուղացի էս պատմությունից հետո:

84

— էդպես էլ իմացած կենաք, որ չի լինիլ, — հաստատեց բեռի Անդրիասը ու դիմեց ինձ.

— Դու ի՞նչ կարծիքի ես, պարոն:

— Ես էլ էդ կարծիքին եմ, — պատասխանեցի ես: — Այլին գրքերից էլ հայտնի է, որ ոչ մի գազան գիլի շափ վնաս չի տալիս մարդուն: Մանավանդ էն երկրներում, որտեղ գլխավորապես անասնապահությունը են պարապում: Ամեն տերության մեջ էլ ահագին վնաս է տալիս: Միայն Ռուսաստան տարեկան մոտ մեկ միլիոն անասուն է փչացնում:

— Հապա ի՞նչպես է, որ տերությունները դրա մասին չեն մտածում, մի ճար անում, — խոսքս կտրեց մի գյուղացի:

— Ի՞նչպես չեն մտածում: Տերություններ կան, որ առանձին վարձատրություն են տալիս գել սպանողներին: Կանոնավոր կովում են գիլի դիմ: Դրա համար էլ էնպես տերություններ կան, որ մեջներն էլ գել չկա. օրինակ Անգլիան, Գերմանիան...

— Վա՛հ, — զարմանքից բացականչեցին գյուղացիք: — Ո՞նց թե... հիմի էդ երկիրներում էլ գել չկա՞:

— Չկա...

— Ա՛յ երկիր... Ապրանքդ ազատ բաց թող ու հանգիստ գնա քու գործին...

— էնպես տերություն էլ կա, — շարունակեցի ես, — որ հաշվով գիտեն, թե քանի գել կա իրենց երկրում, շորսը թե հինգը...

— էդ ի՞նչ բան է, — ավելի զարմացան գյուղացիները, — մեզանում իսկի մարդի հաշիվը գիտեն ոչ, նրանք գելն էլ են հաշվել:

— Որ ասում ես գելը վերջացնում են, ի՞նչպես են անում, վարժապետ, — հարցրեց մի ծերունի, որին Սահակ էին ասում:

— Ձանազան միջոցներով, բի՛ճա Սահակ: Ինչպես ասի՝ տերություններն առանձին վարձատրություն կամ պարգև են տալիս ամեն մի սպանած գիլի համար, որսկաններն էլ աշխատում են շատ գել սպանեն, որ շատ փող ստանան: Մինչև անգամ կազմակերպված ընկերություններ կան, որ միայն գիլի որսի համար են: էնպես երկիր էլ կա, օրինակ, Իսպա-

85

նիսն, որ եթե տերութիւնը չի վարձատրում գեղ սպանողին — ժողովուրդն է վարձատրում: Սպանողը գելը գցում է իշի կամ ձիու վրա ու գեղը գեղ ման ածում, ապրանքատերերից փող է հավաքում: Եվ ամենքն էլ ուրախությամբ տալիս են:

— Չէ՛, ես էդ չէի հարցնում, պարոն շան, ես էն էի հարցնում՝ թե ընչո՞վ են սպանում, ինչպես են կոտորում:

— Հա, էդ ես հարցնում: Ասեմ, բիճա Սահակ, էդ էլ ասեմ:

Իհարկե, հրացանով սպանելն ու թակարդով բռնելը արդեն դուք էլ գիտեք: Բացի հրացանն ու թակարդը, էնպես տեղեր էլ կան, որ խորը փոսեր են փորում, օրինակ մի սածենն ու կես խորությամբ, մի սածենն էլ լայնությամբ: Երեսը ցախ Եւ մախով ծածկում են, վրեն միս են դնում, շորս կողմն էլ դեռ ցած ցանկապատում, որ գելը թռչի, հանկարծ ընկնի մեջը: Սրանով, իհարկե, չի կարելի շատ բան անել:

էնպես տեղ էլ կա, որ ամբողջ հասարակութիւններով հավաքվում են, գնում են շրջապատում անտառի որոշ մասերը: Որսկանները հրացանները ձեռներին պատրաստի երեք կողմը կտրում են, իսկ շորորդ կողմից մի բազմութիւն անտառ է մտնում ու հրացան արձակելով, աղմկով, հարայ-հրոցով, շանով-բանով գազաններին քշում, բերում գցում որսկանների բերանը: Էս էլ անտառոտ տեղերն է լինում, ու էս միջոցն էլ չի մեծ արդիւնք տալիս: Պատահում է, որ ահագին աղմուկից հետո մեջտեղը մի կամ երկու նապաստակ են հայտնվում կամ պատահում է, որ դուրս եկող գազանները անվնաս էլ փախչում, ազատվում են: Շատ քիչ են սպանվում:

Ռուսաստանի ձնոտ դաշտերումն էլ մի ուրիշ տեսակ որս են անում: Ձիով ընկնում են գիլի ետևից: Մնկնահար ձյունի մեջ թաղվելով՝ գելը զոռով է վազում և շուտ էլ հոգնում է: Ծտակիցը հասնում են՝ հենց տեղնուտեղը դազանակով սպանում: Բայց ավելի շատ գիլին կոտորում են թուլնով: Սատկած ոչխարը մաշկում են, միսը շերտ-շերտ կտրատում, արանքները թուլն են լցնում, ետ նորից մորթին վրեն քաշում ու տանում գիշերը հանդերում վեր գցում: Սոված գելեր— գալիս են ուտում ու տեղնուտեղը կոտորվում:

— Վարժապետ, ճշմարիտ է, գելը գազան է ու մարդուն էլ շատ է վնաս տալիս, միայն էդ որ պատմեցիր, ախպիր, ինչ թաքցնեմ, մեղքս եկավ,— խոսեց ծերունի Սահակը:

— Հետո գիլին մեղք կգա՞ն որ, Սահակ բիճա,— ձեն տվեց մի հովիվ:

— Ընչի՞, գելը շունչ կենդանի չի՞,— սկսեց վիճել Սահակ բիճեն:

— Գելն ի՞նչ է որ,— մեր շան պես անասուն էլի,— խոսքն առավ քեռի Անդրիասը:— Ուղիղ շան պես: Որ էն շունն էլ շոլերը գցես՝ անտեր, սոված թողնես, հալածես — կվայրենանա, կդառնա գիլի պես մի բան, էլի: Ինչպես որ էն սոված, վայրենի գելն էլ, որ բերես կուշտ պահես, պահպանես, խնամես, կընտելանա, կդառնա մեր շան պես տանու կենդանի:

— Հետո գելը տանու կըլինի՞ որ, քեռի Անդրիաս:

— Լա՛վ: Շատ է պատահել: Գիլի ձուտը բռնի բեր տանու արա, տես կլինի թե չէ:

— Հապա ինչո՞ւ է ասած՝ գելն ինչքան էլ տանու անես — էլի աչքն անտառումը կլինի:

— Էդ էլ է ճշմարիտ: Մի սերնդի, երկու սերնդի աչքն անտառումը կլինի, բայց կամաց-կամաց անտառը կմոտանա — կդառնա տանու կենդանի շան նման: Եվ հենց ինքն էլ շան ցեղից է, էլի: Գելն էլ կաղմված է էնպես — ինչպես շունը: Գելն էլ շան պես տարին մի անգամ 3—10, բայց սովորաբար 4—6 ձագ է ծնում, ու ինչպես շունն իրեն համար բուն է փորում կամ մի անկյուն է գտնում ու էնտեղ ծնում ու մեծացնում ձագերը, էնպես էլ գելը: Կամ գետնում բուն է փորում, էնտեղ ծնում ու մեծացնում իր ձագերը կամ ընկած ծառի փշակում, կամ մերում, կամ հենց ծմակի խիտ տեղերը: Նա էլ է էնպես սիրում իր ձագերին, ինչպես ամեն մի ծնող կենդանի: Մի վտանգի հոտ առնելիս բերանով՝ շատ զգույշ ու քնքույշ իրենց տեղից տանում է ավելի ապահով

տեղ: Եվ երբեք իր բնի մոտերքում որս չի անիլ ու վնաս չի տալ, որ կասկած չբերի էդ տեղի վրա:

Գիլի էգն էլ, ինչպես շանը, ավելի քնքույշ է, դունչն ավելի սուր ու պոչն ավելի բարակ: Գելն էլ պատահում է, որ նույնպես կատաղում է, ինչպես շունը: Եվ կատաղած գիլից շատ են վախենում ու սարսափով հեռու են փախչում բոլոր վայրենի կենդանիները:

Վերջապես գելն էլ շան պես 12—15 տարի է ապրում: Ավելի երկար շատ քչերն են ապրում, ինչպես և շների մեջ:

Մի խոսքով, միևնույն կենդանիներն են. մինը խնամքի տակ ու կուշտ, մյուսը վայրենի, հալածված ու սոված: Իսկ սովը...

Սովն ինչ ասես կանի, ձեզ մատաղ: Սովը մարդին էլ կդարձնի սարսափելի, ո՛ւր մնաց էն անտառի գիլին,— խոսքը վերջացրեց քեռի Անդրիասը:

— Ճշմարիտ ես ասում, քեռի Անդրիաս,— ասացի ես: Մեզանում սովորութուն չկա, միայն լուսավոր երկրներում շատ է պատահում, որ մարդիկ վայրենի անասուններին ու գազաններին բռնում են, բերում են տանու անեն. փորձում են, վարժեցնում են, բան են սովորեցնում: Մինը երկու գիլի ճուտ էր բռնել բերել տանը պահել: Կարճ ժամանակում էնքան էին ընտանիացել, որ ազատ տան մեջն ամենքի հետ էլ խաղ էին անում ու շան հետ միասին միևնույն բնումը բնում: Մի քանի ժամանակից ետը մինը սատկում է: Ասում է՝ մենակ մնացածը քանի ժամանակ էր էլ ոչ խաղ էր անում, ոչ կարգին կերակուր էր ուտում: Տխուր վեր ընկած դարդ էր անում ու ոռնում: Իհարկե հետզհետե մոռացավ ու էլ ետ աշխուժացավ: Մեծացավ, ու ասում է, մեզ հետ էնքան էր կապվել, որ որտեղ նստում էինք, միշտ կողքներին վեր էր ընկնում և ուրիշներին շէր թողնում, որ մեզ մոտենան: Ասում է՝ վախեցինք մարդու վնաս տա, շղթայով կապեցինք, իսկ մի քանի ժամանակից ետը մի շրջիկ գազանանոցի վրա ծախեցինք: Անցավ դրանից մի տարի ու կես թե երկու տարի, լավ չի միտս, էդ գազանանոցին պատահեցի մի քաղաքում: Է-

տաքրքրվեցի, ներս մտա, ասի տեսնեմ իմ գելը կենդանի է, թե՛ չէ: Ներս մտա հարցրի: Դու մի ասիլ գելը մոտիկ վանդակում պառկած է եղել: Ձեռնս իմացավ թե չէ՝ վեր թռավ, ճանաչեց, ուրախացավ, ու ի՛նչ էր անում, ի՛նչ էր անում, չեք կարող երևակայել: Աշխատում էր ինձ մոտենալ, պոչը շարժելով, ծմբալով դեսուղեն է ընկնում վանդակում: Ինձ էլ թվաց թե մոտիկ, հարազատ արարածի հանդիպեցի, և դուրս գալիս մի տեսակ ցավ զգացի:

Ինչ կասեք սրան: Ահա պատահած դեպքը: Եվ ճշմարիտ է ասում քեռի Անդրիասը. գելն էլ շան պես մի արարած է, միայն վայրենի, հալածված ու սոված:

Արդեն գիշերվա կեսն էր, որ մեր գրույցը վերջացրինք: Շները դուրսը հաշում ու երկար ու ձիգ ոռնում էին:

— Անտերը գեղի վրա պտիտ է գալիս. հեռանում չի: Հանգստանալու չի, մինչև էս գիշեր մի վնաս չտա: Տղե՛ք, զգույշ կացեք, ապրանք չտաք ոեխը,— ասավ քեռի Անդրիասը գյուղացիներին, որ բարի գիշեր ասելով, իրար ետևից դուրս էին գնում մեր օթախից: Դուրսը նրանցից մինը երկար ու զիլ հե՛յ հե՛յ աղաղակեց, ու գյուղի շները հեռու թաղերից սկսած ավելի կատաղի սկսեցին հաշել ու ոռնալ խրմբովին:

Սոված գելը պտտվում էր գյուղի շորս կողմը:

1913

ԻՄ ԸՆԿՅՐ ՆՆՍՈՆ

I

Մի խումբ ընկեր երեխաներ էինք: Գյուղացի երեխաներ:

Ոչ ուսումնարան կար, ոչ դաս, ոչ դաստիարակություն. ազատ էինք միանգամայն ու խաղում էինք. ի՛նչքան էինք խաղում: Ու ո՛նց էինք իրար սիրում, ո՛նց էինք իրար սովորել: Սոված ժամանակներս էլ՝ վաղում էինք հացի տաշտիցը

մի կտոր հաց անում, պանրի կարասից մի կտոր պանիր ու էլ ետ շտապում իրար մոտ: Իրիկուններն էլ հավաքվում էինք, ծիծաղ բաներ ասում կամ հեքիաթ պատմում:

ՉՄի ընկեր ունեինք, անունը Նեսո: Է՛նքան հեքիաթ գիտեր, է՛նքան հեքիաթ գիտեր, ոչ ծեր ուներ, ոչ տուտը:

Ամառվա լուսնյակ գիշերները մեր դռան գերանների վրա շուրջ-բոլոր նստոտում էինք, հիացած պլըշում Նեսոյի՝ ոգևորութունից գեղեցկացած դեմքին: Ու պատմում էր նա Հուրի փերիներից, Զմրուխտ Ղուշից, Լիս ու Մութ աշխարհից... 2-

— Նեսո ջան, Նեսո, հիմի էլ Կուր Փագավորի հեքիաթը պատմի, հիմի էլ Փութի դուշի հեքիաթը պատմի... հիմի էլ Քաշալի ու Քոսակի հեքիաթը պատմի...

II

Էնպես պատահեց, որ մեր գյուղում ուսումնարան բաց արին: Ինձ ուսումնարան տվին, ինձ հետ էլ մի քսան-երեսուն երեխա: Ամեն մի երեխի համար տարեկան երեք ուրլի վարձ էին ուզում. էս պատճառով էլ գյուղի երեխաներից շատերը, որոնց ծնողները չէին կարող տարեկան երեք ուրլի տան, մնացին դուրսը: Դուրսը մնացին և իմ խաղընկերների մեծ մասը, նրանց հետ և Նեսոն:

Առաջին անգամն էր, որ մեզ ջոկում էին իրարից և ջոկում էին ուսումնարանն ու վարժապետը, առաջին անգամն էր, որ մենք գլխի էինք ընկնում, թե մինս ունևոր ենք, մյուսս աղքատ: Ինձ էսօր էլ ականջումս է Նեսոյի լացի ձենը, որ իրենց դռանը թավալ գալով գոռում էր, թե՛ ես էլ եմ ուզում ուսումնարան գնամ: Եվ դեռ ականջումս է նրա հոր ձենը, որ կանջում էր.— Կա ո՛չ, կա ո՛չ, ա՛յ ոչ ու փուշ, ո՞րտեղից տամ... Երեք մանեթ ունենամ՝ կտանեմ հացի կտամ, կրեբեմ կուտեք, հրես մնացել եք սոված նստած. կա ո՛չ...

Նեսոն ու մյուս դուրսը մնացած ընկերներս գալիս էին ուսումնարանի շեմքում հավաքվում՝ մեզ մտիկ անում, բայց վարժապետը թող չէր անում, էնտեղից քշում էր: Դասամիջոցներին խաղի ժամանակ էլ չէր թողնում մեզ հետ խաղան, ասում էր՝ կողմնակի, օտար երեխաները իրավունք չունեն

աշակերտների խաղերին խառնվելու: Եվ նրանք գնում էին ուսումնարանի պատի տակին նստոտում՝ սպասում էին մինչև դասներս վերջանար, որ միասին գնալինք: 2

Էսպեսով էլ առաջին տարին ուսումնարանում ես մոտեցա նոր ընկերների հետ, Նեսոն ու մյուս դուրսը մնացած ընկերներս էլ տարվա վերջը էլ չէին գալիս ուսումնարանի պատի տակին նստոտում ու սպասում ինձ:

III

ՉՄի երկու տարի մեր գյուղի ուսումնարանումը կարդալուց ետը՝ հերս ինձ տարավ մեր կողմերի գյուղաբաղաբը, էնտեղի ուսումնարանը տվավ: Էս արդեն բոլորովին ուրիշ աշխարհք էր: Տները սիպտակ, կարմիր տանիքներով, ժողովուրդը զուգված ու մաքուր. ուսումնարանն էլ մեծ ու գեղեցիկ, ու ոչ թե մի վարժապետ, ինչպես մեր գյուղումն էր, այլ մի քանի վարժապետ ու մինչև անգամ վարժուհիներ, որ նորութուն էր ինձ համար ու զարմանալի, սակայն շատ դուրեկան: 3

Տեղին ու դպրոցին վայել իմ հագուստն էլ փոխեցին: Քաղաքացի աշակերտի շորեր հագա, գեղեցիկ, մաքուր,— ու էսպես կերպարանափոխված էլ տոների արձակուրդին վերադարձա մեր գյուղը: 3

Նեսոն ու հին ընկերներս իմացել էին, թե վերադարձել եմ, առավոտից եկել էին մեր տան շորս կողմը պտտվում էին ու պատմատակերիցը ծիկրակում: Դուրս եկա, գնացի մոտեցա: Չեմ հիշում ինչպես բարևեցինք. միայն էն է միտս մնացել, որ նրանք էլ առաջվա նման մտերիմ ու համարձակ չէին ինձ հետ: Ամենից առաջ ուշադրութուն դարձրին իմ շորերի վրա: Նեսոն մինչև անգամ իմ աշակերտական կարճ բլուզն ակնարկելով մի սրախոսութուն արավ՝ մյուսներին դառնալով ասավ.— Կասենասս պոչատ կաշաղակ ըլի... Նրանք ծիծաղեցին: Ես վշտացա, բայց բան չասացի: Ապա թե Նեսոն ձեռքը քսեց իմ շորերին, նրան հետևեցին մյուսները ու զարմանք հայտնեցին, թե ինչ փափուկ են: Էդ օրը առաջին անգամն էր, որ ես էլ ուշք դարձրի նրանց շորերի վրա ու նկատեցի, թե ինչքան էին կեղտոտ ու պատռտված: Եվ առհասարակ մեր ամբողջ գյուղը թվաց աղքատ ու կեղտոտ:

Երկու տարուց հետո էստեղից էլ հերս ինձ տարավ մեծ քաղաք, ավելի մեծ ուսումնարան: Երբ էստեղից էլ վերադարձա՝ իմ առաջվա խաղընկերները, որ արդեն մեծ տղերք էին, եկան բարևեցին մյուս գյուղացիների նման ու նրանց հետ էլ հեռու կանգնեցին: Միայն մի անգամ, խոսակցության մեջ, երբ ուրիշները ինձ հարցնում էին, թե հիշո՞ւմ եմ արդյոք, որ միասին կարդում էինք, Նեսոն էլ հարցրեց թե՛ «Միտդ ա, որ ձեր դուռն գերանների վրա գիշերները հեքիաթ էինք ասում...»

— Վա՛, ի՞նչպես չի միտս... Միթե կմոռանամ: Էդ իմ մանկության ամենալավ հիշողություններից միինն է,— պատասխանեցի ես:

Նեսոն կարծես թե ուրախացավ, բայց դարձյալ մնաց օտար ու հեռու:

Իսկ քաղաք վերադառնալու ժամանակ էնպես պատահեց, որ Նեսոյի հոր ձին վարձեցինք, որ ես հեծնեմ: Նեսոն էլ պետք է ձիու հետ ոտով գար: Եվ երբ ճանապարհ ընկանք, ես ձիու վրա, իսկ Նեսոն իր ցնցոտիներով ու պճեղները դուրս պրծած տրեխներով ոտով՝ ձիու ետևից — ինձ սաստիկ ծանր եկավ: Մի քիչ անցնելուց հետո հայտնեցի, թե ես ոտով գնալն ավելի եմ սիրում քան ձիով, ու ձիուց իջա: Եվ այնուհետև կամ միասին ոտով էինք գնում, կամ հերթով էինք ձի նստում:

Նեսոն սրա վրա ուրախացավ, բայց նկատեցի, որ նա իմ արածը վերագրում է ոչ թե իմ բարեսրտությանն ու ընկերական զգացմունքին, այլ իմ հիմարությանը: Ես վշտացա իմ մեջը, բայց ավելի մեծ վիշտը առաջս էր:

Ճանապարհին մի տեղ իջանք, հանգստացանք ու հաց կերանք: Չմերուկ ուտելու ժամանակ իմ գրպանի դանակը հանեցի տվի Նեսոյին, որ ձմերուկը կտրի: Ճամփա ընկնելու ժամանակ դանակը կորավ: Նեսոն պնդում էր, թե դանակն ինձ տվավ, գրպանս դրի: Ես թեև լավ գիտեի, որ ինձ չէր տվել, բայց գրպաններս ման եկա ու ճանապարհ ընկանք: Ես պարզ նկատեցի, որ նա իմ դանակը տակով արավ, վերջն

էլ ուրիշները տեսել էին ձեռին: Եվ ճանապարհ ընկանք սրբտունս մի ծանր վիշտ, որ ոչ թե դանակս եմ կորցնում, այլ մի ուրիշ շատ թանկագին բան, որ Նեսոյի համար անհասկանալի էր... Իսկ երբ տեղ հասանք, ու Նեսոն պետք է ետ վերադառնար, ես նրա համար մի ալխալուողացու առա նվիրեցի, բացի ձիու վարձը, իսկ նա ինձ դիմեց թե՛ «Բա մի շայի փող շեա բաշխո՞ւմ...»:

Ես սաստիկ ամաչեցի ու էդ շայի փողն էլ տվի: Բայց նրանից հետո, ամեն անգամ, երբ հիշում էի իմ մանկության օրերը և էն երեկոները, գերանների վրա, լուսնյակի տակ նստած մեր խումբը ու Նեսոյին՝ հեքիաթ ասելիս — ամեն անգամ սիրտս լցվում էր ցավով ու ափսոսանքով:

V

— Նեսոն աղքատ է... Նեսոն տգետ է... Նեսոն լցված է գյուղական շարքաշ կյանքի դառնություններով... Նա էլ եթե ուսում առներ, կրթվեր, ապահով լիներ՝ լավ մարդ կլիներ, գուցե ինձանից էլ շատ ավելի լավը...

Այժմ Նեսոյին հիշելիս միշտ էսպես եմ մտածում ու աշխատում եմ արդարացնեմ, լավացնեմ ու նորից սիրեմ էնպես, ինչպես սիրում էի էն ժամանակ: Ուզում եմ՝ շարունակ էն խնդաղ, աստղալի լուսնյակ գիշերների Նեսոյի պատկերը լինի աչքիս առաջին, մտքիս միջին, բայց չի լինում, էլ չի լինում. իսկույնեթ առաջ է գալիս մի ուրիշ պատկեր, մի շատ ամոթալի ու ցավալի պատկեր:

Երբ արդեն ուսումս ավարտած, կյանք մտած մարդ էի, մի անգամ էլ մեր գյուղը վերադարձա ու գնացի գյուղամեջ: Գյուղամիջում ժողովուրդը հավաքված աղմկում էր ու աղաղակում, իսկ մեջտեղը մի հաշից թոկով կապած ու գլխակոր կանգնած էր Նեսոն: 2

Իմ հարցին պատասխանեցին, թե՛ գողություն է արել: Ես յիշամտեցի, բաց թողնել տվի նրան: Բայց իմ երևակայու-

թյան մեջ նա դեռ մնում է թե՛ արևի տակ թռկերով հաշիցը կապած ու գլխակոր, իսկ շուրջն աղմկում է մեր գյուղը: 2

Մեր գյուղում սովորական բան է և՛ գողությունը, և՛ հաշիցը կապելը, և՛ ծեծելը, բայց էս մինը իմ աչքի առաջից ու մտքի միջից չի հեռանում, ինչպես չի հեռանում և էն մանուկ նեսոն, լուսնյակ գիշերներին գերանների վրա նստած հեքիաթ ասող նեսոն, մաքուր ու միամիտ նեսոն, իմ մանկության ընկեր նեսոն:

1914



ԵՔԻԱՇԻՆ

ԱՆԽԵԼՔ ՄԱՐԴԸ

Փամանակով մի աղքատ մարդ կար. որքան աշխատում էր, որքան շարշարվում էր, դարձյալ միևնույն աղքատն էր մնում:

Հուսահատված, մի օր նա վեր կացավ, թե՛ պետք է գնամ գտնեմ աստծուն, տեսնեմ ես երբ պետք է պրծնեմ այս աղքատությունից, ու ինձ համար մի բան խնդրեմ:

Ճանապարհին մի գալլ պատահեց.

— Առաջ բարի, մարդ-ախպեր, ո՞ւր ես գնում,— հարցրեց գալլը:

— Գնում եմ աստծու մոտ,— պատասխանեց աղքատը,— դարդ ունեմ ասելու:

— Դե որ գնաս աստծու մոտ,— խնդրեց գալլը,— ասա մի սոված դալլ կա, գիշեր-ցերեկ ման է գալիս սար ու ձոր, ուտելու բան չի գտնում, ասա՛ մինչև ե՞րբ պետք է սոված մնա. որ ստեղծել ես՝ ինչո՞ւ շես կերակուր հասցնում:

— Հա՛վ,— ասաց մարդն ու շարունակեց ճանապարհը:

Շառ. գնաց թե քիչ, պատահեց մի սիրուն աղջկա:

— Ո՞ւր ես գնում, ախպեր,— հարցրեց աղջիկը:

— Գնում եմ աստծու մոտ:

— Երբ որ աստծուն տեսնես,— աղաչեց սիրուն աղջիկը,— ասա այսպիսի մի աղջիկ կա՛ շահել, առողջ, հարուստ— բայց չի կարողանում ուրախանալ, բախտավոր զգալ իրան— ի՞նչ պիտի լինի նրա ճարը:

— Կասեմ,— խոստացավ ճամփորդն ու գնաց. պատահեց մի ծառի, որ թեև ջրափին էր կանգնած, բայց չոր էր:

— Ո՞ւր ես գնում, ա՛յ ճամփորդ,— հարցրեց չոր ծառը:

— Գնում եմ աստծու մոտ:

— Դե կանգնի՛ր, մի երկու խոսք էլ ես ապսպրեմ,— խնդրեց շոր ծառը,— աստծուն կասես, այս ի՞նչ բան է. բուսել եմ այս պարզ ջրի ափին, բայց ամառ-ձմեռ շոր եմ մնում. ե՞րբ պետք է ես էլ կանաչեմ:

Այս էլ լսեց աղքատն ու շարունակեց ճանապարհը:

Այնքան գնաց, մինչև գտավ աստծուն: Մի բարձր ժայռի տակ, մեջքը ժայռին դեմ տված, ալևոր մարդու կերպարանքով նստած էր աստվածը:

— Բարի օր,— ասաց աղքատն ու կանգնեց աստծու առաջին:

— Բարով եկար,— պատասխանեց աստված,— ի՞նչ ես ուզում:

— Էն եմ ուզում, որ ամեն մարդի էլ հավասար աչքով մտիկ անես, մեկին ավար շանես, մյուսին խավար. ես այնքան տանջվում, աշխատում եմ, էլ չեմ կարողանում կուշտ փորով հաց գտնեմ, իսկ շատերը, որ իմ կեսի չափ էլ չեն աշխատում, հարուստ ու հանգիստ ապրում են:

— Դե գնա, հիմի կհարստանաս, քո բախտը տվեցի, գնա վայելի՛ր,— ասաց աստված:

— էլ բան ունեմ ասելու, տե՛ր,— ասաց աղքատն ու պատմեց սոված գալլի. սիրուն աղջկա ու շոր ծառի ապրանքը:

Աստված բոլորի պատասխանը տվեց, և աղքատը շնորհակալություն արավ ու հեռացավ:

Վերադարձին պատահեց շոր ծառին:

— Ինձ համար ի՞նչ ասաց աստված,— հարցրեց շոր ծառը:

— Ասաց, քո տակին ոսկի կա. մինչև այդ ոսկին չհասնեն, որ արմատներդ հողին հասնի, դու շես կանաչիլ,— պատմեց մարդը:

— էլ ո՛ւր ես գնում. արի՛ ոսկին հանիր էլի, համ քեզ օգուտ կլինի, համ ինձ, դու կհարստանաս, ես էլ կկանաչեմ:

— Չէ՛, ես ժամանակ չունեմ, շտապում եմ,— պատասխանեց աղքատը,— աստված ինձ բախտ տվեց, ես շուտով պետք է գնամ իմ բախտը գտնեմ, վայելեմ,— ասաց ու գնաց:

Շնտո սիրուն աղջիկը պատահեց ու ճամփորդի առաջը կտրեց.

— Ի՞նչ լուր բերիր ինձ համար:

— Աստված ասաց՝ դու պիտի քեզ համար մի մտերիմ կյանքի ընկեր գտնես, այն ժամանակ էլ տխուր չես լինիլ, ուրախ ու հրջանիկ կլինես:

— Դե որ այդպես է, արի՛ դու եղիր իմ կյանքի մտերիմ ընկերը,— թախանձեց աղջիկը ճամփորդին:

— Չէ՛, ես քեզ ընկերակցելու ժամանակ չունեմ, աստված ինձ բախտ է տվել, պետք է գնամ իմ բախտը գտնեմ, վայելեմ,— ասաց աղքատն ու հեռացավ:

Ճանապարհին սպասում էր սոված գալլը, հեռվից հենց որ տեսավ ճամփորդին, վաղեց առաջը կտրեց:

— Շը, աստված ի՞նչ ասաց:

— Ախպեր, աստծու մոտ գնալիս քեզանից հետո մի սրբուն աղջիկ ու մի շոր ծառ էլ պատահեցին. աղջիկն ապսպրեց, թե ինչու ինքը չի կարողանում ուրախանալ, ծառն էլ թե՛ ինչո՞ւ է գարուն-ամառ շոր: Աստծուն պատմեցի, ասաց.— աղջկանն ասա իրան համար մի կյանքի ընկեր գտնի — կբախտավորվի, ծառին էլ ասա՝ քո տակին ոսկի կա, պետք է այդ ոսկին հասնեն, արմատներդ հողին հասնեն, որ կանաչես: Եկա իրանց պատմեցի աստծու խոսքերը. ծառն ասաց, դե արի, հանիր ոսկին տար, աղջիկն էլ թե՛ ես հենց քեզ եմ ընտրում ինձ ընկեր: Ասացի, չէ՛, ախպեր, չեմ կարող, աստված ինձ բախտ է տվել, պետք է գնամ իմ բախտը գտնեմ, վայելեմ:

— Իսկ ինձ համար ի՞նչ ասաց աստված,— հարցրեց սոված գալլը:

— Քեզ համար էլ ասաց՝ սոված ման կգաս, ի՞նչև մի անխելք մարդ կգտնես, կուտես, կկշտանաս:

— էլ քեզանից անխելք մարդ ո՞րտեղից գտնեմ, որ ուտեմ,— ասաց գալլն ու կերավ անխելք աղքատին:

Լինում է, չի լինում մի պառավ: էս պառավն իր էծը կթում է, կաթը վեր է դնում, գնում է ցախ ու փետ բերի, որ կրակ անի, կաթն եփի:

Մի աղվես գալիս է, գլուխը կոխում կաթնի ամանը, ուտում:

Պառավը վրա է հասնում, ցաքատով տալիս է, աղվեսի պոչը կտրում:

Պոչատ աղվեսը փախչում է, գնում է մի քարի վրա կանգնում է ու էսպես խնդրում:

— Տատիկ, տատիկ, պոչս տուր, կցեմ, կցմըցեմ, գնամ ընկերներին հասնեմ, որ ինձ շասեն՝ պոչատ աղվես, ո՞րտեղ էիր:

Պառավն ասում է.

— Դե գնա իմ կաթը բեր:

Աղվեսը գնում է կովի մոտ:

— Կովիկ, կովիկ, կա՛թ տուր ինձ, կաթը տանեմ պառավին տամ, պառավը պոչս տա, կցեմ, կցմըցեմ, գնամ ընկերներին հասնեմ, որ ինձ շասեն՝ պոչատ աղվես, ո՞րտեղ էիր:

Կովն ասում է.

— Դե գնա ինձ համար խոտ բեր:

Աղվեսը գնում է արտի մոտ:

— Արտիկ, արտիկ, խո՛տ տուր ինձ, խոտը տանեմ կովին տամ, կովը ինձ կաթ տա, կաթը տանեմ պառավին տամ, պառավը պոչս տա, կցեմ, կցմըցեմ, գնամ ընկերներին հասնեմ, որ ինձ շասեն՝ պոչատ աղվես, ո՞րտեղ էիր:

Արտն ասում է.

— Դե գնա ինձ համար ջուր բեր:

Աղվեսը գնում է աղբյուրի մոտ:

— Աղբյուր, աղբյուր, ջո՛ւր տուր ինձ, ջուրը տանեմ արտին տամ, արտը ինձ խոտ տա, խոտը տանեմ կովին տամ, կովը ինձ կաթ տա, կաթը տանեմ պառավին տամ, պառավը

պոչս տա, կցեմ, կցմըցեմ, գնամ ընկերներին հասնեմ, որ ինձ շասեն՝ պոչատ աղվես, ո՞րտեղ էիր:

Աղբյուրն ասում է.

— Դե գնա կուժ բեր:

Աղվեսը գնում է աղջկա մոտ:

— Աղջիկ, աղջիկ, կուժդ տուր, կուժը տանեմ աղբյուրին տամ, աղբյուրը ինձ ջուր տա, ջուրը տանեմ արտին տամ, արտը ինձ խոտ տա, խոտը տանեմ կովին տամ, կովը ինձ կաթ տա, կաթը տանեմ պառավին տամ, պառավը պոչս տա, կցեմ, կցմըցեմ, գնամ ընկերներին հասնեմ, որ ինձ շասեն՝ պոչատ աղվես, ո՞րտեղ էիր:

Աղջիկն ասում է.

— Դե գնա ուլունք բեր ինձ համար:

Աղվեսը գնում է շարչու մոտ:

— Չարչի, շարչի, ուլո՛ւնք տուր, ուլունքը տանեմ աղջկան տամ, աղջիկը ինձ կուժ տա, կուժը տանեմ աղբյուրին տամ, աղբյուրը ինձ ջուր տա, ջուրը տանեմ արտին տամ, արտը ինձ խոտ տա, խոտը տանեմ կովին տամ, կովը ինձ կաթ տա, կաթը տանեմ պառավին տամ, պառավը պոչս տա, կցեմ, կցմըցեմ, գնամ ընկերներին հասնեմ, որ ինձ շասեն՝ պոչատ աղվես, ո՞րտեղ էիր:

Չարչին ասում է.

— Դե գնա ինձ համար ձու բեր:

Աղվեսը գնում է հավի մոտ:

— Հավիկ, հավիկ, ձու-ձու տուր, ձու-ձուն տանեմ շարչուն տամ, շարչին ինձ ուլունք տա, ուլունքը տանեմ աղջկան տամ, աղջիկն ինձ կուժ տա, կուժը տանեմ աղբյուրին տամ, աղբյուրը ինձ ջուր տա. ջուրը տանեմ արտին տամ, արտը ինձ խոտ տա, խոտը տանեմ կովին տամ, կովը ինձ կաթ տա. կաթը տանեմ պառավին տամ, պառավը պոչս տա, կցեմ, կցմըցեմ, գնամ ընկերներին հասնեմ, որ ինձ շասեն՝ պոչատ աղվես, ո՞րտեղ էիր:

Հավն ասում է.

— Դե գնա ինձ համար կուտ բեր:

Աղվեսը գնում է կալվորի մոտ:

— Կալվոր, կալվոր, կո՛ւտ տուր ինձ, կուտը տանեմ հավին տամ, հավը ինձ ձու տա, ձուն տանեմ շարչուն տամ,

չարչին ինձ ուլունք տա, ուլունքը տանեմ աղջկան տամ, աղջիկն ինձ կուժ տա, կուժը տանեմ աղբյուրին տամ, աղբյուրը ինձ ջուր տա, ջուրը տանեմ արտին տամ, արտը ինձ խոտ տա, խոտը տանեմ կովին տամ, կովը ինձ կաթ տա, կաթը տանեմ պառավին տամ, պառավը պոչս տա, կցեմ, կցմըցեմ, գնամ ընկերներինս հասնեմ, որ ինձ շասեն՝ պոչատ աղվես, ո՞րտեղ էիր:

Կալվորի մեղքը գալիս է. մի բուռ կուտ է տալիս: Աղվեսը կուտը տանում է հավին, հավը ձու է տալի, ձուն տանում է շարշուն, շարշին ուլունք է տալի, ուլունքը տանում է աղջկան, աղջիկը կուժ է տալի, կուժը տանում է աղբյուրին, աղբյուրը ջուր է տալի, ջուրը տանում է արտին, արտը խոտ է տալի, խոտը տանում է կովին, կովը կաթ է տալի, կաթը տանում է տալի պառավին, պառավը պոչը տալիս է իրեն, կցում է, կցմըցում, վազում է գնում, իր ընկերներին հասնում:

1907

ՈՒԼԻԿԸ

Խոր անտառում մի այծ է լինում: Ունենում է մի գեղեցիկ ուլ:

Ուլին ամեն օր թողնում է տանը, ինքը գնում է արոտ անելու: Արածում է ու իրիկունը կուրծքը լիքը տուն է գալիս: Տուն է գալի, դուռը զարկում ու մկրկում, էսպես կանչում:

Անուկ ուլիկ,
Սիրուն բալիկ,
Ման եմ եկել սարս սար,
Կաթն եմ արել քեզ համար.
Դոնակը բա՛ց, ներս գամ ես,
Անուշ-անուշ ծիծ տամ քեզ.
Անուկ ուլիկ,
Սիրուն բալիկ:

Ուլիկն իսկույն վեր է թռչում, դուռը բաց անում: Մայրը ծիծ է տալի նրան ու կրկին գնում արոտ:

102

էս բոլորը թաքուն տեսնում է գայլը: Մի իրիկուն այծից առաջ գալիս է, դուռը զարկում ու իր հաստ ձայնով կանչում:

Անուկ ուլիկ,
Սիրուն բալիկ,
Ման եմ եկել սարս սար,
Կաթն եմ արել քեզ համար,
Դոնակը բա՛ց, ներս գամ ես,
Անուշ-անուշ ծիծ տամ քեզ.
Անուկ ուլիկ,
Սիրուն բալիկ:

Ուլիկը լսում է, լսում ու պատասխանում. «էդ ո՞վ ես դու, չեմ ճանաչում: Իմ մայրը էդպես չի կանչում: Նա քաղցր ու բարակ ձայն ունի: Քու ձայնը կոշտ է ու կոպիտ: Դուրը բաց չե՛մ անի... Գնա՛... Չեմ ուզում քեզ...»

Ու գայլը հեռանում է, գնում:

Գալիս է մայրը, դուռը ծեծում:

Անուկ ուլիկ,
Սիրուն բալիկ,
Ման եմ եկել սարս սար,
Կաթն եմ արել քեզ համար,
Դոնակը բա՛ց, ներս գամ ես,
Անուշ-անուշ ծիծ տամ քեզ.
Անուկ ուլիկ,
Սիրուն բալիկ:

Ուլիկը դուռը բաց է անում, ծիծ է ուտում ու մորը պատմում:

— Գիտե՞ս, մայրի՛կ, ինչ եղավ: Մի քիչ առաջ մինը եկավ, դուռը զարկեց ու կանչում էր:

Անուկ ուլիկ,
Սիրուն բալիկ:

Ասում էր՝ դուռը բա՛ց արա: Էնպե՛ս հաստ ձայն ունե՛ր: Էնպե՛ս վախեցա՛, էնպե՛ս վախեցա՛... Դուրը բաց չարի, առի՛ չեմ ուզում, գնա՛...»

103

— Պա՛, պա՛, պա՛, պա՛, Սևուկ ջան, ի՛նչ լավ է եղե՛լ, որ բաց շևս արե՛լ,— ասավ վախեցած մայրը:— էդ գայլն է եղե՛լ, եկե՛լ է, որ քեզ ուտի: Մյուս անգամ էլ որ գա, բաց շանես, ասա՛ զնա՛, թե չէ՛ իմ մայրը քեզ կսպանի իր սուր պողբրով:

ԾԻՏԸ

Լինում է, չի լինում մի ծիտ:

Մի անգամ էս ծտի ոտը փուշ է մտնում: Դես է թռչում, դեն է թռչում, տեսնում է՝ մի պառավ փետի է ման գալի, թռնիր վառի, հաց թխի: Ասում է.

— Նանի ջան, նանի, ոտիս փուշը հանի, թռնիրդ վառի, ես էլ գնամ քուշուջ անեմ, գլուխս պահեմ:

Պառավը փուշը հանում է, թռնիրը վառում:

Ծիտը գնում է, ետ գալի, թե՛ իմ փուշը ետ տուր ինձ:

Պառավն ասում է.

— Փուշը թռնիրն եմ գցել:

Ծիտը կանգնում է, թե՛

— Իմ փուշը տուր, թե չէ՛ դես թռչեմ, դեն թռչեմ, լոշիկդ առնեմ, դուրս թռչեմ:

Պառավը մի լոշ է տալիս: Ծիտը լոշն առնում է թռչում:

Գնում է տեսնում՝ մի հովիվ անհաց կաթն է ուտում: Ասում է.

— Հովիվ ախպեր, կաթն ինչո՞ւ ես անհաց ուտում: Ա՛յ լոշը ա՛ռ, կաթնի մեջ բրդի՛, կե՛ր. ես էլ գնամ քուշուջ անեմ, գլուխս պահեմ:

Գնում է, ետ գալի, թե՛ լոշս տուր:

Հովիվն ասում է.

— Կերա:

— Չէ՛,— ասում է,— իմ լոշը տուր, թե չէ՛ դես թռչեմ, դեն թռչեմ, գառնիկդ առնեմ, դուրս թռչեմ:

Հովիվը ճարահատած մի գառն է տալի: Առնում է թռչում: Գնում է տեսնում՝ մի տեղ հարսանիք են անում, մսացու շունեն, որ մորթեն:

Ասում է.— Ի՞նչ եք մոլորել: Ա՛յ, իմ գառն առեք, մորթեցեք, քեֆ արեք: Ես էլ գնամ քուշուջ անեմ, գլուխս պահեմ:

Գնում է, ետ գալի, թե՛ իմ գառը տվեք:

Ասում են.— Մորթել ենք կերել, ո՞րտեղից տանք: Սա կանգնում է, թե՛ չէ, իմ գառը տալիս եք՝ տվեք, թե չէ՛ դես թռչեմ, դեն թռչեմ, հարսին առնեմ, դուրս թռչեմ: Ու հարսին առնում է թռչում:

Գնում է, գնում. գնում է տեսնում՝ մի աշուղ մի ճամփով գնում է:

Ասում է.— Աշուղ ախպեր, առ էս հարսին պահի քեզ մոտ: Ես էլ գնամ քուշուջ անեմ, գլուխս պահեմ:

Գնում է, ետ գալի աշուղի առաջը կտրում, թե՛ իմ հարսը ինձ տուր:

Աշուղը ասում է.— Հարսը դնաց իրենց տուն:

Սա թե՛ չէ, իմ հարսը տուր, թե չէ՛ դես թռչեմ, դեն թռչեմ, սաղիկդ առնեմ դուրս թռչեմ:

Աշուղը սազը տալիս է իրեն:

Սազն առնում է, ուսը գցում, թռչում, մի տեղ նստում է, սկսում է ածել ու ճըտվրտալով երգել.

Ծընգը, մընգը,

Փուշիկ տվի, լոշիկ առա,

Լոշիկ տվի, գառնիկ առա,

Գառնիկ տվի, հարսիկ առա,

Հարսիկ տվի, սաղիկ առա,

Սաղիկ առա, աշուղ դառա,

Ծընգը, մընգը,

Ծի՛վ, ծի՛վ:

Մին էլ հանկարծ սազը վեր ընկավ ջարդվեց, ծիտը թռավ գնաց, հեքիաթն էլ վերցացավ:

1907

Ը ԱՄՓՈՐԴՆԵՐ

Աբլորը մի օր կտուրը բարձրացավ, որ աշխարհք տեսնի: Վիզը ձգեց, երկարացրեց, բայց բան չտեսավ. դիմացի սարը խանգարում էր:

— Քուշի՛ ախպեր, կարելի է դու գիտենաս, էն սարի ետևն ի՞նչ կա,— հարցրեց վերևից բախում պառկած շանը:

— Ես էլ չգիտեմ,— պատասխանեց Քուչին:

— Հապա մինչև ե՞րբ պետք է այսպես մնանք. արի՛ գնանք մի տեսնենք՝ աշխարհումս ինչ կա, ինչ չկա:

Շունն էլ համաձայնեց: Խոսքը մին արին ու փախան:

Գնացին, գնացին, իրիկունը հասան մի անտառ: Գիշերը մնացին էնտեղ: Շունը պառկեց մի թփի տակ, իսկ աքլորը բարձրացավ մոտիկ ծառին, քնեցին:

Լուսադեմին աքլորը կանչեց՝ ծուղորուղո՛ւ:

Մի աղվես լսեց աքլորի ձայնը:

— Վա՛հ, սա ո՞րտեղից դուրս եկավ, ա՛յ լավ նախաձա՛շիկ,— մտածեց աղվեսը ու վազեց:

— Բարի՛ լուս, սանահեր աքլոր: Ի՞նչ ես շինում էս կողմերը:

— Գնում ենք աշխարհ տեսնելու,— պատասխանեց աքլորը:

— Օ՛, ինչ լավ բան եք մտածել,— խոսեց աղվեսը:— Քանի ժամանակ է ես էլ մի կարգին ընկերի եմ ման գալի: Ինչ լավ էր՝ պատահեցինք: Դե՛, ցած արի, որ շուշանանք:

— Ես համաձայն եմ,— ասավ աքլորը,— տես, թե ընկերս էլ համաձայն է, ցած գամ՝ գնանք:

— Ո՞րտեղ է ընկերդ:

— Էն թփի տակին:

«Մրա ընկերն էլ երևի իր նման մի աքլոր կլինի. էս էլ իմ ճաշը»,— մտածեց աղվեսը ու վազեց թփի կողմը: Հանկարծ որ շունը դուրս եկավ, աղվեսը, պո՛ւկ, փախավ, ո՞նց փախավ:

— Կա՛ց, աղվե՛ս ախպեր, մի՛ վռազի, մենք էլ ենք գալի, էդպես ընկեր չի լինի,— ծառի գլխից ձայն էր տալիս աքլորը:

1907

ԿԱՑԻՆ ԱԵՊԵՐ

Մի մարդ գնաց հեռու երկիր աշխատանք անելու: Ընկավ մի գյուղ: Տեսավ՝ այս գյուղի մարդիկ ձեռով են փայտ կտրատում:

— Ախպե՛ր, ասավ, ինչո՞ւ եք ձեռով փայտ անում, մի՞թե կացին չունեք:

106

— Կացինն ի՞նչ բան է,— հարցրին գյուղացիք:

Մարդը իր կացինը գոտկից հանեց, փայտը ջարդեց, մանրեց, դարսեց մյուս կողմը: Գյուղացիք այս որ տեսան, վազեցին գյուղամեջ ձայն տվին իրար:

— Տո՛, եկե՛ք, տեսե՛ք, կացին ախպերը ինչ արավ:

Գյուղացիք հավաքվեցին կացնի տիրոջ գլխին, խնդրեցին, աղաչեցին, շատ ապրանք տվին ու կացինը ձեռիցն առան:

Կացինը առան, որ հերթով կոտորեն իրենց փայտը:

Առաջին օրը տանուտերը տարավ: Կացինը վրա բերավ թե չէ՝ ոտը կտրեց: Գոռալով քնկավ գյուղամեջ:

— Տո՛, եկե՛ք, եկե՛ք, կացին ախպերը կատաղել է, ոտս կծեց:

Գյուղացիք եկան, հավաքվեցին, փայտերն առան, սկսեցին կացնին ծեծել: Ծեծեցին, տեսան՝ բան չդառավ, փայտերը կիտեցին վրան, կրակեցին:

Բոցը բարձրացավ, շորս կողմը բռնեց: Երբ կրակն իջավ, եկան բաց արին, տեսան՝ կացինը կարմրել է: Գոռացին.

— Վա՛յ, տղե՛ք, կացին ախպերը բարկացել է, տեսե՛ք՝ ոնց է կարմրել. որտեղ որ է, մեր գլխին մի փորձանք կբերի: Ի՞նչ անենք:

Մտածեցին, մտածեցին, ու վճռեցին տանեն բանտը գցեն:

Տարան գցեցին տանուտերի մարագը: Մարագը լիբը դալ՝ ման էր. գցեցին թե չէ՝ կրակն առավ, բոցը երկինք բարձրացավ:

Գյուղացիք սարսափած վազեցին տիրոջ ետևից թե՛ «Ե՛կ, աստծու սիրուն, կացին ախպորը բան հասկացրու»:

1907

ՍՈՒՏԱՍԱՆԸ

Լինում է, չի լինում մի թագավոր: Էս թագավորը իր երկրումը հայտնում է.

«Ով էնպես սուտ ասի, որ ես սուտ՝ սուտ է, իմ թագավորութան կեսը կտամ նրան»:

Գալիս է մի հովիվ: Ասում է.

— Թագավորն ապրած կենա, իմ հերը մի դադանակ

107

ուներ, որ էստեղից մեկնում էր, երկնքում աստղերը խառնում:
— Կպատահի՞,— պատասխանում է թագավորը:— Իմ պապն էլ մի շիբուխ ուներ. մի ծերը բերանին էր դնում, մյուս ծերը մեկնում, արեգակիցը վառում:

Ստախոսը գլուխը քորելով դուրս է գնում:

Գալիս է մի դերձակ: Ասում է.

— Ներողութի՞ւն, թագավոր, ես վաղ պիտի գայի, ուշացա: Երեկ շատ անձրև եկավ, կայծակները տրաքեցին, երկինքը պատռվեց, գնացել էի կարկատելու:

— Հա՛, լավ ես արել,— ասում է թագավորը,— բայց լավ չէիր կարկատել. էս առավոտ էլ մի քիչ անձրև թափվեց:

Սա էլ է դուրս գնում:

Ներս է մտնում մի աղքատ գյուղացի, կոտը կռնատակին:

— Դո՞ւ ինչ ես ուզում, ա՛յ մարդ,— հարցնում է թագավորը:

— Ինձ մի կոտ ոսկի ես պարտ, եկել եմ տանեմ:

— Մի կոտ ոսկի՞,— զարմանում է թագավորը:— Սո՛ւտ ես ասում, ես քեզ ոսկի չեմ պարտ:

— Թե որ սուտ եմ ասում, թագավորութանդ կեսը տուր:

— Չէ՛, չէ՛, ճշմարիտ ես ասում,— խոսքը փոխում է թագավորը:

— Ծճմարիտ եմ ասում՝ մի կոտ ոսկին տուր:

1907

ՉԱԽՉԱԽ ԹԱԳԱՎՈՐԸ

Լինում է, չի լինում մի աղքատ շաղացպան:

Մի պատռված քուրք հագին, մի ալրոտ փոստալ գլխին աչրելիս է լինում գետի ափին, իր կիսավեր ջաղացում: Ունենում է մի մոխրոտ բաղաճ ու մի կտոր պանիր:

Մի օր գնում է, որ շաղացի ջուրը թողնի, գալիս է տեսնում պանիրը չկա:

Մին էլ գնում է ջուրը կապի, գալիս է տեսնում՝ բաղաճը չկա:

էս ո՞վ կլինի, ո՞վ չի լինի: Մտածում է, մտածում ու ջաղացի շեմքում թակարդ է լարում: Առավոտը վեր է կենում, տեսնում մի աղվես է ընկել մեջը:

— Հը՞, գող անիծված, դու ես կերել իմ պանիրն ու բաղաճը հա՞. կաց՝ հիմի ես քեզ պանիր ցույց տամ:— Ասում է շաղացպանն ու լինզը վերցնում է, որ աղվեսին սպանի:

Աղվեսը աղաչանք-պաղատանք է անում:— Ինձ մի սպանի,— ասում է,— մի կտոր պանիրն ինչ է, որ դրա համար ինձ սպանում ես: Կենդանի բաց թող, ես քեզ շատ լավություն կանեմ:

Ջաղացպանն էլ լսում է, կենդանի բաց է թողնում:

էս աղվեսը գնում է, էդ երկրի թագավորի աղբանոցում ման է գալի, ման, մի ոսկի է գտնում: Վաղ է տալի թագավորի մոտ:

— Թագավորն ապրած կենա, ձեր կոտը մի տվեք: Չախչախ թագավորը մի քիչ ոսկի ունի, շափենք, ետ կբերենք:

— Չախչախ թագավորն ո՞վ է,— զարմացած հարցնում է թագավորը:

— Դու դեռ չես ճանաչում,— պատասխանում է աղվեսը:— Չախչախը մի շատ հարուստ թագավոր է, ես էլ նրա վեզիրն եմ: Կոտը տուր, տանենք ոսկին շափենք, հետո կճանաչես:

Կոտը առնում է տանում, աղբանոցում գտած ոսկին ամբացնում կոտի ճեղքում, իրիկունը ետ բերում, տալիս:— Օֆ,— ասում է— դոռով շափեցինք:

— Մի՞թե ճշմարիտ սրանք կոտով ոսկի են շափել,— մտածում է թագավորը: Կոտը թափ է տալիս, զրնգալեն մի ոսկի է վեր ընկնում:

Մյուս օրը աղվեսը ետ է գալիս, թե՛ Չախչախ թագավորը մի քիչ ակն ու մարգարիտ ունի. ձեր կոտը տվեք, շափենք կբերենք:

Կոտն առնում է տանում: Մի մարգարիտ է գտնում. կոխում է կոտի արանքը, էլ ետ իրիկունը ետ բերում:

— Օֆ,— ասում է,— մեռանք, մինչև շափեցիք:

Թագավորը կոտը թափ է տալի, մարգարիտը դուրս է թռչում:

Մնում է զարմացած, թե էս Չախչախ թագավորն ինչքան

հարուստ պետք է լինի, որ ոսկին, ակն ու մարգարիտը կոտորվ է շահում:

Անց է կենում մի քանի օր: Մի օր էլ աղվեսը գալիս է թագավորի մոտ խնամախոս, թե՛ Չախչախ թագավորը պետք է ամուսնանա, քու աղջիկն ուզում է:

Թագավորն ուրախանում, աշխարհքով մին է լինում:

— Դե գնացեք, ասում է. շուտ արեք, հարսանիքի պատրաստություն տեսեք:

Թագավորի պալատում իրար են անցնում, հարսանիքի պատրաստություն են տեսնում, իսկ աղվեսը ջաղացն է վազում:

Վազում է ջաղացպանին աչքալուս տալի, թե՛ հապա թագավորի աղջիկը քեզ համար ուզել եմ: Պատրաստ կաց, որ գնանք հարսանիք անենք:

— Վա՛յ, քու տունը քանդվի, այ աղվես. էդ ի՞նչ ես արել,— ասում է վախեցած ջաղացպանը:— Ես ով, թագավորի աղջիկը ով: Ոչ ապրուստ ունեմ, ոչ տուն ու տեղ, ոչ մի ձեռք շոր... Հիմի ես ի՞նչ անեմ...

— Գու մի վախենա, ես ամեն բան կանեմ,— հանգստացնում է աղվեսն ու ետ վազում թագավորի մոտ:

Վազելով ընկնում է պալատը:— Հայ-հարա՛յ, Չախչախ թագավորը մեծ հանդեսով գալիս էր, որ պսակվի: Ճամփին թշնամի գորքերը հանկարծ վրա տվին, մարդկանց կոտորեցին, ամեն բան տարան: Ինքը ազատվեց փախավ: Չորում մի ջաղաց կա, եկել է մեջը մտել: Ինձ ուղարկեց, որ գամ իմաց անեմ, շոր տանեմ, ձի տանեմ, գա պսակվի, շուտով գնա իր թշնամիներից վրեժն առնի:

Թագավորն իսկույն ամեն բան պատրաստում է, տալիս աղվեսին, հետն էլ շատ ձիավորներ է դնում, որ պատվով ու փառքով իր փեսին պալատ բերեն:

Գալիս են հանդեսով ջաղացի դուանը կանգնում: Ջաղացպանի քուրքը հանում, թագավորի շորերը հագցնում, նստեցնում են նժույգ ձիուն: Շրջապատված մեծամեծներով, առջևից՝ ձիավորներ, ետևից՝ ձիավորներ — էսպես հանդեսով բերում են թագավորի պալատը: Իր օրում պալատ չտեսած ջաղացպան — շշկված: բերանը բաց մին շորս կողմն է նայում, մին հագի շորերին է նայում, իլշկոտում ու զարմանում:

— էս ինչո՞ւ շտեխ նման դես ու դեն է նայում, աղվես ախպեր,— հարցնում է թագավորը:— Կարծես տուն չլինի տեսած, շոր չլինի հագած:

— Չէ, դրանից չի,— պատասխանում է աղվեսը:— Նայում է ու համեմատում իր ունեցածի հետ, թե իր ունեցածը որտե՞ղ, էս որտեղ...

Նստում են ճաշի: Տեսակ-տեսակ կերակուրներ են բերում: Ջաղացպանը չի իմանում՝ որին ձեռք տա կամ ինչպես ուտի:

— Ինչո՞ւ չի ուտում, աղվես ախպեր,— հարցնում է թագավորը:

— Գալու ժամանակ ճամփին որ կողոպտեցին, նրա համար միտք է անում: Չեք կարող երևակայել, տեր թագավոր, թե ինչքան բան տարան և վերջապես ինչ անպատվություն էր էդ մեր թագավորի համար: Ի՞նչպես հաց ուտի,— պատասխանում է աղվեսը հառաչելով:

— Բան չկա, դարդ մի անի, սիրելի փեսա, աշխարհք է, էդպես էլ կպատահի,— խնդրում է թագավորը:— Այժմ հարսանիք է, ուրախանանք, քեֆ անենք:

Ու քեֆ են անում, ուտում, խմում, ածում, պար գալի. յոթն օր, յոթ գիշեր հարսանիք անում: Աղվեսն էլ դառնում է քավոր:

Հարսանիքից հետո թագավորը իր աղջկանը մեծ բաժինք է տալի ու հանդեսով ճամփա դնում Չախչախ թագավորի հետ:

— Կացե՛ք, ես առաջ գնամ տունը պատրաստեմ, դուք իմ ետևից եկեք,— ասում է քավոր աղվեսը ու վազ տալի:

Վազ է տալի վազ, տեսնում է մի դաշտում մեծ նախիր է արածում:

— էս ո՞ւմ նախիրն է:

Ասում են.— Շահ-Մարինը:

— Պա, Շահ-Մարի անունը էլ շտաք, որ թագավորը նրա վրա բարկացել է, գորքով իմ ետևից գալիս է. ով նրա անունը տվավ՝ գլուխը կտրել կտա: Որ հարցնի թե ումն է, ասե՛ք՝ Չախչախ թագավորինը. թե չէ՝ վայն եկել է ձեզ տարել:

Վազ է տալի վազ, տեսնում է ոչխարի հոտը սարերը բլուսել է:

— էս ո՞ւմն է:

— Շահ-Մարինը:
 Հովիվներին էլ նույնն է ասում:
 Վազ է տալի վազ, տեսնում է ընդարձակ արտեր, հնձվոր-
 ները միջին հնձում են:
 — էս ո՞ւմ արտերն են:
 — Շահ-Մարինը:
 Հնձվորներին էլ նույնն է պատվիրում:
 Վազ է տալի վազ, տեսնում է անվերջ խոտհարքներ:
 — էս ո՞ւմն են:
 — Շահ-Մարինը:
 Խոտ հարողներին էլ նույնն է ասում:
 Հասնում է Շահ-Մարի պալատին:
 — Շահ-Մար, ա Շահ-Մար,— գոռում է հեռվից վազե-
 լով:— Քու տունը շքանդվի, միամիտ նստել ես: Թագավորը
 քեզ վրա բարկացել է, մեծ զորքով գալիս է, որ քեզ սպանի,
 տուն ու տեղդ քանդի, տակնուվրա անի, ունեցած-չունեցածդ
 էլ թագավորական գրի: Մի անգամ քեզ մոտ մի վառիկ եմ
 կերել. էն աղուհացը դեռ չեմ մոռացել: Վազեցի, եկա, որ
 քեզ իմացնեմ: Շուտ արա, գլխիդ ճարը տես, քանի չի եկել:
 — Ի՞նչ անեմ, ո՞ւր գնամ,—հարցնում է սարսափած Շահ-
 Մարը ու տեսնում է, որ ճշմարիտ, հեռվից փոշի բարձրացնե-
 լով գալիս է թագավորը:
 — Փախի՛ր, շուտով ձի նստի փախի, էս երկրից կորի, էլ
 ետ չնայես:
 Շահ-Մարը իսկույն նստում է իր լավ ձին ու փախչում
 էր երկրից:
 Աղվեսի հտեից գալիս են հարսանքավորները: Գալիս են
 գուռնով, թմբուկով, երգով, զորքով, հրացան արձակելով ու
 աղմուկով:
 Գալիս են Չախչախ թագավորն ու իր կինը ոսկեզօծ կառ-
 քի մեջ, նրանց առջևից ու հտեից անհամար ձիավորներ:
 Հասնում են մի դաշտի: Տեսնում են մեծ նախիր է արա-
 ծում:
 — էս ո՞ւմ նախիրն է,— հարցնում են ձիավորները:
 — Չախչախ թագավորինը,— պատասխանում են նախրա-
 պանները:

Անց են կենում: Հասնում են սարերին: Տեսնում են ոչ-
 խարի սիպտակ հոտը սարերը բռնել է:
 — էս ո՞ւմն է,— հարցնում են ձիավորները:
 — Չախչախ թագավորինը,— պատասխանում են հովիվ-
 ները: Անց են կենում: Հասնում են ընդարձակ արտերի:
 — էս ո՞ւմ արտերն են:
 — Չախչախ թագավորինը:
 Հասնում են խոտհարքներին:
 — էս ո՞ւմն են:
 — Չախչախ թագավորինը:
 Ամենքը մնացել են զարմացած, Չախչախ թագավորն ինքն
 էլ քիչ է մնում խելքը թոցնի:
 էսպեսով Աղվեսի հտեից գալիս են, հասնում Շահ-Մարի
 պալատներին:
 Քավոր Աղվեսն էնտեղ արդեն տեր է դառել, կարգադրու-
 թյուններ է անում: Ընդունում է խնամիներին ու նորից սկը-
 սում են քեֆը:
 Յոթն օր, յոթ գիշեր էլ էստեղ են քեֆ անում, ու խնամի-
 ները վերադառնում են իրենց տեղը:
 Չախչախ թագավորը, իր կինն ու քավոր Աղվեսը ապրում
 են Շահ-Մարի պալատներում:
 Իսկ թագավորից վախեցած Շահ-Մարը մինչև էսօր էլ
 դեռ գնում է:

1907

ՈՍԿՈՒ ԿԱՐԱՍԸ

Ես մեր ծերերիցն եմ լսել, մեր ծերերը իրենց պապերից,
 նրանց պապերն էլ իրենց մեծերից, թե մի ժամանակ մի աղ-
 քատ հողագործ է լինում, ունենում է մի օրավար հող ու մի
 լուծ եզր:
 Չմեռը էս աղքատ հողագործի եզները սատկում են: Գա-
 րունքը, վար ու ցանքի ժամանակը որ գալիս է, եզը չի ունե-
 նում թե վարի, հողը վարձով տալիս է իր հարևանին:
 էս հարևանը վարելու ժամանակ խոփը մի տեղ դեմ է
 8 Հովն. Քումանյան, հատ. II 113

ընկնում, դուրս է գալի մի կարաս, մեջը լիքը ոսկի: Եղներք լծած թողնում է, վազում է գյուղը՝ հողատիրոջ մոտ:

— Հե՛յ, աչքդ լուս,— ասում է,— քու հողումը մի կարաս ոսկի դուրս եկավ, արի տար:

— Ձէ՛, ախպե՛ր, էդ իմը չի,— պատասխանում է հողատերը:— Հողի վարձը դու տվել ես, դու վարում ես, էն հողումն ինչ էլ դուրս գա, քունն է. ոսկի է դուրս եկել, թող ոսկի լինի, էլի քունն է:

Սկսում են վիճել. սա ասում է՝ քունն է, նա, թե չէ՛ քունը: Վեճը տաքանում է, իրար ծեծում են: Գնում են թագավորի մոտ գանգատ:

Թագավորը մի կարաս ոսկու անունը լսում է թե չէ՛ աչքերը շորս է բաց անում: Ասում է.

— Ոչ քունն է, ոչ դրանը, իմ հողում կարասով ոսկի է դուրս եկել — իմն է:

Իր մարդկանցով գնում է, որ հանի բերի: Գնում է կարասի բերանը բաց անել է տալի, տեսնում — ի՞նչ ոսկի — կարասը լիքը օձ...

Զարհուրած ու կատաղած ետ է գալի: Հրամայում է պատժեն անգետ ունչպարներին, որ համարձակվել են իրեն խաբել:

— Ձէ՛, թագավորն ասրած կենա,— գոռում են խեղճերը,— մեզ ինչո՞ւ ես սպանում. լավ չես տեսել, օձ չկա էնտեղ, ոսկի է, ոսկի...

Թագավորը նոր մարդիկ է ուղարկում, որ գնան ստուգեն: Մարդիկը գնում են, ետ գալի, թե՛ ճշմարիտ, ոսկի է:

— Վա՛հ,— զարմանում է թագավորը: Ասում է.— երևի լավ շտեսա, կամ տեսածս էն կարասը չէր:— Վեր է կենում մին էլ գնում:

Կարասը բաց է անում,— դարձյալ մեջը լիքը օձ: էս ի՞նչ հրաշք է, ի՞նչ միտք ունի,— շեն հասկանում:

Թագավորը հրամայում է, հավաքում է իր երկրի իմաստուններին:

— Բացատրեցեք,— ասում է,— ո՞վ իմաստուններ, ի՞նչ հրաշք է սա: էս հողագործներն իրենց հողում կարասով ոսկի են գտել: Ես եմ գնում — կարասը լիքն օձ է դառնում, սրանք են գնում — ոսկի: էս ի՞նչ կնշանակի:

— Դրա բացատրությունն էս է, թագավոր, եթե չես բարկանալ,— ասում են իմաստունները:— Կարասով ոսկին աղքատ հողագործներին պարգև է ղրկած իրենց ազնվության ու արդար աշխատանքի համար: Երբ որ նրանք են գնում, իրենց արդար վարձին են գնում ու միշտ էլ ոսկի գտնում, իսկ երբ որ դու ես գնում, գնում ես ուրիշի բախտը հափշտակես, նրա համար էլ ոսկու տեղ օձ ես գտնում:

Թագավորը ցնցվում է. խոսք չի գտնում պատասխանելու:

— Լա՛վ,— ասում է,— դե հիմի էն որոշեցեք, թե էդ երկուսից ո՞րին է պատկանում գտած ոսկին:

— Իհարկե հողատիրոջը,— ձայն է տալի վարող գյուղացին:

— Ձէ, վարողինն է,— մեջ է մտնում հողատերը: Ու նորից սկսում են կռվել:

— Լա՛վ, լա՛վ, կացե՛ք,— կանգնեցնում են իմաստունները,— ի՞նչ ունեք դուք — տղա կամ աղջիկ:

Դուրս է գալի, որ մեկը մի տղա ունի, մյուսը մի աղջիկ: Իմաստունները վճռում են, որ սրանք գնան իրենց աղջիկն ու տղեն իրար հետ պսակեն, էն գտած ոսկին էլ տան նրանց: էստեղ համաձայնում են բարի մարդիկը, ուրախանում են, ու կռիվը վերջանում է, սկսում է հարսանիքը: Օխտն օր, օխտը գիշեր հարսանիք են անում, կարասով ոսկին էլ, որ պարգև էր ղրկած իրենց ազնվության ու արդար աշխատանքի համար, տալիս են իրենց գավակներին:

Բարին էստեղ, շարը էն ազահ թագավորի մոտ:

ՏԵՐՆ ՈՒ ԾԱՌԱՆ

Աստված բարի տա ձեզ էլ, երկու ախպորն էլ: Կինում են, շեն լինում երկու աղքատ ախպեր են լինում: Մտածում են ինչ անեն, ոնց անեն, որ իրենց տունը պահեն: Վճռում են՝ փոքրը տանը մնա, մեծը գնա մի ունևորի ծառա մտնի, ոտճիկ ստանա, ղրկի տուն:

էսպիս էլ մեծը վեր է կենում գնում մի հարուստի մոտ ծառա մտնում:

Ժամանակ նշանակում են մինչև մին էլ կրկվի ձեն ածելը: Էս հարուստը մի շտապ պայման է դնում ծառային: Ասում է՝ «մինչև էն ժամանակը թե դու բարկանաս — դու հազար մանեթի տուգանք տաս ինձ, թե ես բարկանամ — ես տամ»:

— Ես որ հազար մանեթ չունեմ, ո՞րտեղից տամ,— ասում է ծառան:

— Բան չկա, փոխարենը ինձ տասը տարի ձրի կծառայես: Տղեն մին վախենում է էս տարօրինակ պայմանից, մին էլ մտածում է, թե ինչ պետք է պատահի: Ինչ ուզում են անեն, ես եմ ու չեմ բարկանալ, պրծանք գնաց: Իսկ թե իրենք կբարկանան, թող իրենք էլ տուժեն իրենց դրած պայմանով: Ասում է լավ. համաձայնում է:

Պայմանը կապում են ու մտնում է ծառայության:

Մյուս օրը վաղ տերը վեր է կացնում ծառային, դրկում է արտը հնձելու:

— Գնա՛, — ասում է, — քանի լուս է հնձի, որ մութն ընկելի կգաս:

Մտան գնում է ամբողջ օրը հնձում, իրիկունը հոգնած գալիս է տուն: Տերը հարցնում է.

— Էդ ո՞ւր եկար:

— Դե արևը մեր մտավ, ես էլ եկա:

— Չէ՛, էդպես չի: Ես քեզ ասել եմ՝ քանի լուս է, պետք է հնձես: Արևը մեր մտավ, բայց տես, նրա ախպեր լուսնյակը դուրս եկավ: Սա ինչ պակաս է լուս տալի...

— Էդ ո՞նց կլինի... — զարմանում է ծառան:

— Չը՞, դու արդեն բարկանում ես, — հարցնում է տերը:

— Չէ՛, չեմ բարկանում... ես միայն ասում էի՝ հոգնած եմ... Մի քիչ հանգստանամ... — կրկնում է վախեցած ծառան ու գնում է նորից հնձելու:

Հնձում է, հնձում, մինչև լուսնյակը մեր է մտնում: Բայց լուսնյակը մեր է մտնում թե չէ, դարձյալ արեգակն է դուրս գալի: Մտան ուժասպառ արտում վեր է ընկնում:

— Վա՛յ, քու արտն էլ հարամ ըլի, քու հացն էլ, քու տված ոտձիկն էլ... — սկսում է հայհոյել հուսահատված:

— Չը՞, դու բարկանում ես, — կանգնում է գլխին հա-

րուստը: — Երբ որ բարկանում ես, մեր պայմանը պայման է: Էլ չասես թե քեզ հետ առանց իրավունքի վարվեցին:

Ու պայմանի ուժով ստիպում է, ծառան կամ հազար մանեթ տուգանք տա, կամ տասը տարի ձրի ծառայի:

Մտան մնում է կրակի մեջ: Հազար մանեթ չունեիր, թե տար հոգին ազատ անեիր, տասը տարի էլ էս տեսակ մարդու ծառային անկարելի բան էր: Միտք է անում, միտք, վերջը հազար մանեթի պարտամուրհակ է տալի հարուստին, դառն ու դատարկ վերադառնում տուն:

— Չը՛, ի՞նչ արիր, — հարցնում է փոքր ախպերը: Ու մեծ ախպերը նստում է, գլուխն էկածը պատմում, ինչպես որ պատահել էր:

— Բան չկա, — ասում է փոքրը, դարդ մի անի. դու տանը կաց, հիմի էլ ես գնամ:

Վեր է կենում հիմի էլ փոքր ախպերն է գնում ծառա մըտնում է՛լ նույն հարուստի մոտ:

Հարուստը դարձյալ ժամանակը որոշում է մինչև գարնան կրկվի ձեն ածելը, ու պայման է դնում, որ եթե ծառան բարկանա, հազար մանեթ տուգանք տա կամ տասը տարի ձրի ծառայի, թե ինքը բարկանա, հազար մանեթ տա ու էն օրից էլ ծառան ազատ է:

— Չէ՛, էդ քիչ է, — հակառակում է տղեն: — Թե դու բարկանաս, դու ինձ երկու հազար մանեթ տաս, թե ես բարկանամ, ես քեզ երկու հազար մանեթ տամ կամ քսան տարի ձրի ծառայեմ:

— Լա՛վ, — ուրախանում է հարուստը: Պայմանը կապում են, ու այժմ էլ փոքր ախպերն է մտնում ծառայության:

Առավոտը լուսանում է, էս ծառան վեր չի կենում տեղիցը: Տերը դուրս է գնում, տուն է գալի, էս ծառան դեռ քնած է:

— Ա՛յ տղա, դե վեր կաց է՛, օրը ճաշ դառավ:

— Չը՞, բարկանում ես դու... — գլուխը վեր է քաշում ծառան:

— Չէ՛, չեմ բարկանում, — վախեցած պատասխանում է տերը. — միայն ասում եմ՝ պետք է արտը գնանք հնձելու:

— Հա, որ էդ ես ասում, ոչինչ, կգնանք, ինչ ես վռազում: Վերջապես ծառան վեր է կենում, սկսում է տրեխները

հագնել: Տերը դուրս է գնում, ներս է գալի, սա դեռ տրեխ-
ները հագնում է:

— Ա՛յ տղա, դե շուտ արա, հագի է...

— Հը՛, հո չե՞ս բարկանում:

— Չէ՛, ո՞վ է բարկանում, ես միայն ուզում էի ասել՝
ուշանում ենք...

— Հա՛, էդ ուրիշ բան է. թե չէ՛ պայմանը պայման է:

Մինչև ծառան տրեխները հագնում է, մինչև արտն են
գնում, ճաշ է դառնում:

— էլ ինչ հնձեղու ժամանակ է, — ասում է ծառան, — տես-
նում ես ամենքն էլ ճաշում են, մենք էլ մեր ճաշն ուտենք՝
հետո:

Նստում են, ճաշն ուտում: Ճաշից հետո էլ ասում է՝ «Մշակ
մարդիկ ենք, պետք է մի քիչ քնենք, հանգստանանք, թե չէ՞»:
Գլուխը կոխում է խոտերի մեջն ու քնում մինչև իրիկուն:

— Տո՛, վեր կաց է, մթնեց է՛, ուրիշները հնձեցին, մեր
արտը մնաց... Վա՛յ քու դեսը դրկողի վիզը կտտրի, վա՛յ քու
կերածն էլ հարամ ըլի, քու արածն էլ... էս ինչ կրակի մեջ
ընկա... — սկսում է գոռոռալ հուսահատված տերը:

— Հը՛, չի՞նի՞ թե բարկանում ես, — գլուխը վեր է քաշում
ծառան:

— Չէ՛, ո՞վ է բարկանում, ես էն էի ասում թե՛ մթնել է,
տուն գնալու ժամանակն է:

— Հա՛, էդ ուրիշ բան է, գնանք, թե չէ՛ հո մեր պայմանը
գիտես. վա՛յ նրա մեղքը, ով բարկացավ:

Գալիս են տուն: Տեսնում են հյուր է եկել:

Մառային դրկում են թե՛ գնա ոչխար մորթի:

— Ո՞րը:

— Որը կպատահի:

Մառան գնում է: Մի քիչ հետո լուր են բերում հարուս-
տին, թե՛ հասի, որ քու ծառան ամբողջ հոտդ կոտորեց: էս
հարուստը վազում է, տեսնում է՝ ձիշտ որ, ինչ ոչխար ունի,
բոլորը ծառան մորթել է: Գլխին տալիս է, գոռում:

— էս ի՞նչ ես արել, ա՛յ անաստված, քու տունը քանդվի,
ինչ իմ տունը քանդեցիր...

— Գու ասիր՝ «ո՛ր ոչխարը պատահի՛, մորթի», ես էլ
եկա, բոլորը պատահեցին, բոլորը մորթոտեցի — ուրիշ ավել

պակաս ի՞նչ եմ արել, — հանգիստ պատասխանում է ծա-
ռան, — բայց կարծեմ դու բարկանում ես...

— Չէ՛, բարկանում չեմ, միայն ափսոսս գալիս է, որ էս-
քան ապրանքս փչացավ...

— Կա՛մ, որ բարկանում չես, է՛լ կծառայեմ:

Հարուստը մտածում է՝ ինչ անի, ոնց անի, որ էս ծառա-
յիցն ազատվի: Պայման է կապել մինչև մին էլ գարնան՝
կրկվի ձեն ածելը, այնինչ դեռ նոր են մտել ձմեռը, դեռ
ո՞րտեղ են գարունն ու կրկուն...

Միտք է անում միտք, մի հնար է մտածում: Կնոջը տանում
է անտառում մի ծառի վեր հանում ու պատվիրում, որ «կու-
կու» կանչի: Ինքը գալիս է ծառային տանում թե՛ արի գնանք
անտառը որսի: Հենց անտառն են մտնում թե չէ, կինը ծա-
ռի վրայից կանչում է — «կուկո՛ւ, կուկո՛ւ...»:

— Ըհը՛, աչքդ լուս, — ասում է ծառային տերը. — կրկուն
կանչեց, ժամանակդ լրացավ...

Տղեն գլխի է ընկնում տիրոջ խորամանկությունը:

— Չէ՛, ասում է, ով է լսել, որ տարու էս եղանակին,
ձմեռվա կիսին, կրկուն ձեն ածի, որ սա ձեն է ածում: Ես
պետք է էս կրկվին սպանեմ, սա ինչ կրկու է...

Ասում է ու հրացանը քաշում դեպի ծառը: Տերը գոռա-
լով ընկնում է առաջը.

— Վա՛յ չզարկես, աստծու սիրուն... սև լինի քու պա-
տահելու օրը, էս ինչ փորձանք էր, որ ես ընկա մեջը...

— Հը՛, չի՞նի՞ թե բարկանում ես...

— Հա՛, ախպեր, հերիք էր. արի՛ ինչ տուգանք տալու
եմ տամ, քեզանից ազատվեմ: Իմ դրած պայմանն է — ես էլ
պետք է տուժեմ: Հիմի նոր եմ հասկանում էն հին խոսքը՝ թե
«մարդ ինչ անի, իրեն կանի»:

էսպես հարուստը խելոքանում է, իսկ փոքր ախպերը մեծ
ախպոր տված պարտքի թուղթը պատռում է, հազար մանեթ
տուգանքն էլ առնում ու վերադառնում տուն:

1908

Երկու ախպեր են լինում. մինը խելոք, մյուսը հիմար: Խելոք ախպերը միշտ բանեցնում ու շարշարում է հիմարին: Էնքան շարշարում է, որ հիմարը հուսահատվում է, մի օր էլ կանգնում է, թե՛

— Ախպեր, էլ չեմ ուզում քեզ հետ կենամ, բաժանվում եմ. իմ բաժինը տուր, գնամ ջոկ ապրեմ:

— Լա՛վ,— ասում է խելոքը,— էսօր էլ դու ապրանքը ջուրը տար, ես կերը տամ. երբ ջրից բերես, ո՛ր ապրանքը գոմբ մտնի — ինձ, որը դուրսը մնա — քեզ:

Ժամանակն էլ լինում է ձմեռ:

Հիմարը համաձայնում է: Ապրանքը ջուրն է տանում, ետ բերում: Ձմեռվա ցուրտ օ՛ր, մրսած անասուններ. հենց տաք գոմի դուռն են հասնում թե չէ՝ իրար ետևից ներս են թափում: Դռանը մնում է մի հիվանդ քոսոտ մոզի գերաններին քոր անելիս: Էն է մնում հիմարին:

Էս հիմարը թոկը վիզն է կապում, իր մոզին տանում ծախելու:

— Ա՛ մոզի, արի, հե՛յ,— կանչելով գնում է:

Մի հին ավերակի մոտից անցնելիս էլ որ ձեն է տալի — ա՛ մոզի, արի, հե՛յ... — ավերակի արծազանքը կրկնում է.

— Հե՛յ...

Հիմարը կանգնում է:

— Ինձ հետ ես խոսում, հա՛...

Ավերակը ձայն է տալիս.

— Հա՛...

— Մոզին ուզում ե՞ս:

— Ե՛ս...

— Քա՛նի մանեթ կտաս:

— Տա՛ս...

— Հիմի կտա՞ս, թե չէ:

— Չէ՛...

— Դե էգուց կգամ, որտեղից որ է՝ ձարի՛:

— Արի՛...

Հիմարը համաձայնում է ու մոզին ծախված համարելով՝

ավերակի դռանը կապում է, շրվշվացնելով վերադառնում տուն:

Մյուս օրը առավոտը վաղ վեր է կենում գնում փողերն առնելու: Դու մի՛ ասիլ՝ գիշերը գայլերը մոզին կերել են: Գնում է տեսնում՝ ոսկորները դեռ ու դեն ցրված ավերակի առջև:

— Հը՞,— ասում է,— մորթիլ ես կերել, հա՛:

— Հա՛...

— Չաղ է՞ր, թե չէ:

— Չէ՛:

Հիմարը էստեղ վախենում է, կարծում է ավերակի մըտքումը կա, որ իր փողը շտա:

— Էդ իմ բանը չի,— ասում է,— առել ես պրծել, ես իմ փողի տերն եմ, բեր իմ փողը — տասը մանեթ դեղին ոսկի՛...

— Սկի՛...

Էս էլ որ լսում է հիմարը, բարկանում է, ձեռի փետը ետ է տանում, տուր թե կտաս, ավերակի խարխուլ պատերին: Մին, երկու զարկում է. պատերից մի քանի քար են վեր ընկնում: Դու մի ասիլ՝ հնուց էդ պատում գանձ է եղել պահած: Քարերը որ վեր են ընկնում՝ ոսկին թափում է հանկարծ առաջը լցվում:

— Այ էդպես... բայց էսքանն ի՞նչ եմ անում. տասը մանեթ ես պարտ — իմ տասը մանեթը տուր, մնացածը քու փողն է, ընչի՞ս է պետք...

Մի ոսկի է վերցնում, գալի տուն:

— Հը՞, մոզիդ ծախեցի՞ր,— ծիծաղելով հարցնում է խելոք ախպերը:

— Մախեցի:

— Ո՞ւմ վրա:

— Ավերակի:

— Հետո, փող տվա՛վ:

— Իհարկե տվավ: Դեռ չէր ուզում տա, ամա ձեռիս փետովը որ մի քանի հասցրի, ինչ ուներ՝ առաջիս փոեց: Իմ տասը մանեթը վեր կալա, մնացածն իրենն էր, հենց թողեցի էնպես փռված:

Ասում է ու ոսկին հանում ցույց տալիս:

— Էդ ո՞րտեղ է,— աչքերը շորս է անում խելոք ախպերը:

— Է՛հ, ցույց չեմ տալ, դու աչքածակ ես, էնքան կհամարես, շալակս կտաս, որ մեջքս կկտորի:

Եկելոքը հրդովում է, որ մենակ ինքը կշալակի, միայն թե տեղը ցույց տա:

— Բեր,— ասում է,— ձեռինդ էլ ինձ տուր, մնացածի տեղն էլ ցույց տուր, որ ես տեսնեմ, տկտր ես, քեզ համար նոր շորեր առնեմ:

Հիմարը նոր շորերի անունը որ լսում է՝ ձեռինն էլ է տալիս ախպորը, տանում է մնացածի տեղն էլ ցույց տալի: Եկելոքը ոսկին հավաքում է, բերում տուն, հարստանում, բայց ախպոր համար նոր շորեր չի առնում:

էս հիմարը ասում է, ասում է, որ տեսնում է չի լինում, գնում է դատավորի մոտ գանգատ:

— Պարոն դատավոր,— ասում է,— ես մի մոզի ունեի, տարա ավերակի վրա ծախեցի...

— Հերիք է, հերիք,— ընդհատում է դատավորը.— էս հիմարը ո՞րտեղից եկավ, ո՞նց թե մոզին ավերակի վրա ծախեցի...— վրեն ծիծաղում է ու դուրս անում:

Գնում է ուրիշներին գանգատվում, նրանք էլ են վրեն ծիծաղում:

Ու ասում են, մինչև էսօր էլ խեղճ հիմարը կիսամերկ ման է գալի, պատահողին գանգատվում, բայց ոչ ոք չի հավատում, ամենքն էլ ծիծաղում են վրեն, իսկ խելոք ախպերն էլ ծիծաղում է ամենքի հետ:

1908

ԽՈՍՈՂ ՋՈՒԿԸ

1

Լինում է, չի լինում մի աղքատ մարդ: էս աղքատ մարդը գնում է դառնում մի ձկնորսի շալակտար: Օրական մի քանի ձուկն է աշխատում, տուն բերում, նրանով ապրում են ինքն ու կնիկը:

Մի անգամ էլ ձկնորսը մի սիրուն ձուկն է բռնում, տալիս իր շալակտարին, որ պահի, ինքն էլ ետ ջուրն է մտնում: էս

շալակտարը գետափին նստած՝ նայում է, նայում էն սիրուն ձկանն ու միտք է անում:

— Տեր աստված,— ասում է,— սա էլ, որ մեզ նման շունչ կենդանի է, դու ասա՝ սա՞ էլ մեզ նման ծնող ունի, ընկեր ունի, աշխարհքից բան է հասկանում, ուրախություն կամ ցավ է զգում՝ թե չէ...

Հենց էս մտածելու ժամանակ ձուկը լեզու է առնում:

— Լսի՛,— ասում է,— մարդախապեր: Ընկերներին հետ ես խաղում էի գետի ալիքների մեջ: Ուրախությունից ինձ մոռացա ու անզգույշ ընկա ձկնորսի ուռկանը: Հիմի, ով գիտի, իմ ծնողն ինձ որոնում է ու լաց է լինում, հիմի ընկերներս տխրել են: Ես էլ, տեսնում ես, ինչպես եմ տանջվում, շունչս կտրում է ջրից դուրս: Ուզում եմ էլ ետ գնամ ապրեմ ու խաղ անեմ նրանց հետ էն պաղ ու պարզ ջրերում: էնպես եմ ուզում, էնպես եմ ուզում... Եկ խեղճ արի, ազատ արա ինձ, բա՛ց թող, բա՛ց թող գնամ...

էսպես էր ասում ցած, շատ ցած ձկնով, ցամաքած բերանը բաց ու խուփ անելով:

էս շալակտարի մեղքը գալիս է, առնում է ետ գցում գետը:

— Գնա, սիրուն ձկնիկ, թող լաց չիների քու ծնողը: Թող շտխրեն քու ընկերները: Գնա ապրի ու խաղ արա նրանց հետ:

Ձկնորսը սաստիկ բարկանում է շալակտարի վրա:

— Տո՛ ախմախ,— ասում է,— էստեղ ջրի մեջ թըջվելով ձուկն եմ բռնում, դու իմ աշխատանքն առնում ես էլ ետ ջուրը գցում... Դե գնա կորի, էլ իմ աչքին չերևաս, էլ իմ շալակտարը չես էս օրից. գնա սովից մեռի:

Ձեռի տոպրակն էլ խլում է ու ճամփու դնում:

— Հիմի ես ո՞ւր գնամ, ի՞նչ անեմ, ո՞նց ապրեմ...— ատարակուսած մտածելով դառն ու դատարկ վերադառնում է աղքատը դեպի տուն:

2

էս տխուր մտածմունքի ժամանակ ճամփին դեմը դուրս է գալի մի մարդակերպ Հրեշ՝ առաջը մի գեղեցիկ կով:

— Բարի օր, ախպերացու, էդ ի՞նչ ես մոլորել, ի՞նչ ես միտք անում,— հարցնում է Հրեշը:

Աղքատը պատմում է իր գլխին եկածը, թե ինչպես հիմի մնացել է անգործ, անճար ու չի իմանում, թե ոնց պետք է ապրեն ինքն ու իր կնիկը:

«Ախ՛, բարեկամ,— ասում է Հրեշը:— էս կաթնատու կովը ես քեզ կտամ երեք տարվան ժամանակով: Ամեն օր էնքան կաթը տա, որ քու կնիկն ու դու կուշտ-կուշտ ուտեք, ապրեք: Երեք տարին լրացավ թե չէ, հենց էն գիշերը կգամ ձեզ հարց կտամ: Թե հարցիս պատասխանեցիք — իմ կովը ձեզ լինի, թե չէ՛՝ երկուսդ էլ իմն եք, տանելու եմ, ինչ ուզեմ կանեմ: Համաձայն ե՞ս:

— Մի բան՝ որ առանց էն էլ սովից մեռնելու ենք,— մտածում է աղքատը,— կովը կտանեմ, էս երեք տարին կապրենք, մինչև երեք տարվա լրանալն էլ աստված ողորմած է: Մի տեղից մի դուռը կբացվի, կամ գուցե հենց պատասխանը տալիս ենք, ով գիտի...

— Համաձայն եմ,— ասում է, ու կովն առաջն անում, տանում տուն:

3

Երեք տարի կթում են, լիուլի ուտում, ապրում: Չեն էլ նկատում, թե ինչպես անցավ երեք տարին. և ահա հասնում է նշանակած օրը, որ Հրեշն էն գիշեր պիտի գա:

Մարդ ու կնիկ վերջալուսի տակ տխուր նստում են դռանը ու միտք են անում, թե ինչ պատասխան տան Հրեշին, կամ ով գիտի՝ ինչ կհարցնի նա. ո՞վ կիմանա Հրեշի միտքը:

— Ա՛յ թե ինչ դուս կգա, երբ մարդ Հրեշի հետ գործ բռնի... Հրեշի հետ հաշիվ ունենա... Հրեշից լավութուն ընդունի... — Հառաչելով զղջում էին մարդ ու կին, բայց անցկացածն անց էր կացել, էլ հնար չկար: Իսկ զարհուրելի գիշերն արդեն վրա էր հասնում:

էս ժամանակ նրանց մոտենում է մի անծանոթ գեղեցիկ երիտասարդ:

— Բարի իրիկուն, ասում է, ճամփորդ մարդ եմ. մութն քնկնում է, ես էլ հոգնած եմ, հյուր չե՞ք ընդունի ձեր տանն էս գիշեր:

— Ընչի չէ, ճամփորդ ախպեր, հյուրն աստծունն է: Բայց

մեզ մոտ վտանգավոր է էս գիշեր: Մենք Հրեշից մի կով ենք առել էն պայմանով, որ երեք տարի կթենք, ուտենք, երեք տարուց ետը գա մեզ հարց տա, թե պատասխանենք, կովը մեզ լինի, թե չէ — իր գերին ենք: Հիմի ժամանակը լրացել է, էս գիշեր պիտի գա, ու մենք էլ շգիտենք, թե ինչ պատասխան տանք: Հիմի մեզ ինչ անի՝ մենք ենք մեղավոր, վայ թե քեզ էլ վնասի:

— Բան չկա, որտեղ դուք՝ էնտեղ էլ ես,— պատասխանում է օտարականը:

Համաձայնում են. հյուրը մնում է:

Մին էլ կես գիշերին դուռը դղրդում է:— Ո՞վ է.— Հրեշը: Եկել եմ, որ հկել եմ, դե պատասխանս տվեք:— Ինչ պատասխան. սարսափից մարդ ու կնկա լեզուն կապվում է, մնում են տեղները քարացած:

— Մի՛ վախենաք, ես ձեր տեղակ սրա պատասխանը կտամ,— ասում է երիտասարդ հյուրը ու զնում է զեպի դուռը:

— Եկել ե՞մ,— դռան ետևից ձայն է տալիս Հրեշը:

— Ծս էլ եմ եկե՛լ,— պատասխանում է ներսից հյուրը:

— Ո՞րտեղից ես եկել:

— Մովի էն ափից:

— Ընչո՞վ ես եկել:

— Կաղ մոծակը թամբել եմ, վրեն նստել եմ, եկել:

— Ուրեմն ծովը պստիկ է եղել:

— Ի՞նչ պստիկ. արծիվը չի կարող մի ափից մյուսը թռչի:

— Ուրեմն արծիվը ճուտ է եղել:

— Ի՞նչ ճուտ. թևերի շվաքը քաղաք է ծածկում:

— Ուրեմն քաղաքը շատ է փոքրիկ:

— Ի՞նչ փոքրիկ. նապաստակը մի ծայրից մյուսը չի հասնի:

— Ուրեմն նապաստակը ձագ է:

— Ի՞նչ ձագ. մորթին մի մարդու քուրք դուրս կգա, գրլ-խարկն ու տրեխն էլ ավել:

— Ուրեմն մարդը թզուկ է:

— Ի՞նչ թզուկ, ծնկան ձերին արլորը ծուղրուղու կանչի, ձենը ականջը չի հասնի:

— Ուրեմն խուլ է:

— Ի՞նչ խուլ. սարում որ պախրեն խոտ պոկի, նա կլսի:

Հրեշը մնում է կապված, մոլորված. զգում է, որ ներսը մի ուժ կա իմաստուն, համարձակ, անհաղթելի, էլ չի իմանում ինչ ասի, սուս ու փուս քաշվում, կորչում է գիշերվա խավարի մեջ:

Սրանք նոր մեռած տեղներիցը ետ են գալի, ուրախանում, աշխարհքովը մին են լինում: Հետն էլ բացվում է բարի լուսը, և երիտասարդ հյուրը վեր է կենում, մնաք բարով է ասում, որ գնա իր ճանապարհը:

— Չենք թողնի, որ չենք թողնի,— առաջը կտրում են մարդ ու կին.— դու որ փրկեցիր մեր կյանքը, ասա՛, ինչով ետ վճարենք քո լավությունը...

— Չէ՛, անկարելի բան է, պետք է գնամ իմ ճանապարհը:

— Դե, գոնե անունդ ասա, եթե լավությունդ կորչի, ու չկարողանանք ետ վճարել, գոնե իմանանք՝ թե ում ենք օրհնելու...

— Լավությունը արա ու թեկուզ ջուրը գցի — չի կորչի: Ծս հենց էն խոսող ձուկն եմ, որի կյանքը դու խնայեցիր... — ասում է անծանոթն ու շքանում ապշած մարդ ու կնկա աչքերից:

1903

ԿՈՆԱՏ ԱՂՋԻԿԸ

Ժամանակով լինում են, շեն լինում, մի քույր ու մի ախպեր են լինում: Քույրը էնքան սիրուն, էնքան շարմաղ է լինում, ինչպես լուսի կտոր, անունն էլ Լուսիկ:

Ախպերը պսակվում է, կնիկ է բերում:

Սա տեսնում է, թե ինչպես ամենքը սիրում են Լուսիկին, ու նախանձը օձի նման բուն է դնում սրտի մեջ: Սկսում է Լուսիկին բամբասել ու լացացնել ամեն օր, ամեն օր...

Ախպերը ամեն կերպ աշխատում է ուրախ պահի քրոջը: Մին տուն է գալիս՝ հետը ծաղիկ է բերում նրա համար, մյուս օրը միրգ, մի ուրիշ անգամ՝ հագուստ:

Եվ Լուսիկը մնում է միշտ բարի, գեղեցիկ ու սիրված ամենքից:

Հարսը նախանձից քիչ է մնում տրաքի, մտածում է, ինչ անի, ոնց անի, որ մեջտեղից կորցնի Լուսիկին:

Մտածում է, մտածում է. մի օր էլ, երբ մարդը տանից դուրս է գնում, վեր է կենում, տան կահ-կարասին, աման-չամանը իրար գլխով է տալի, ջարդում ու գնում ձեռները ծոցին դռանը կանգնում մինչև մարդու գալը:

Որ տեսնում է մարդը գալիս է, սկսում է լաց լինել:

— Ա՛յ,— ասում է,— էս էլ քու սիրած քույրը, տանը ինչ ունեի՞նք-չունեի՞նք՝ ջարդեցի:

— Բան չկա, այ կնիկ, դրա համար ինչո՞ւ ես լաց լինում. էդ բոլորն առնելու բաներ են: Աման է՛ կոտրեց, նորը կառնենք, բայց Լուսիկի սիրտը որ կոտրենք, հետո ի՞նչ անենք:

Կինը տեսնում է, որ էս մինը շեղավ: Մյուս անգամ, երբ մարդը դուրս է գնում, նրա սիրած ձին տանում է, քշում կորցնում ու գալիս ձեռները ծոցին կտերը կանգնում, մինչև մարդը ետ է գալի:

— Ա՛յ,— ասում է,— էս էլ քու սիրած քույրը. քու էն լավ ձին դուրս է արել, կորցրել, մեզ էսպես տնաքանդ արել: Մարդը ասում է.

— Բան չկա. ձի է, կորել է, կաշխատեմ մի ուրիշ ձի էլ կառնեմ, բայց հո չեմ կարող մի ուրիշ քույր առնել:

Չար կինը տեսնում է, որ էս անգամ էլ զուր անց կացավ, ավելի է կատաղում, իրեն կրծում:

Մի գիշեր էլ քնած ժամանակը իր երեխին օրորոցումը մորթում է, արնոտ դանակը թաքուն դնում քնած Լուսիկի գրպանը:

Գիշերվա մի ժամանակը մագերը շաղ է տալի, երեսը պուկում, ճշում, ծղրտում.

— Վա՛յ, երեխես, երեխես...

Տանըցիք վեր են թռչում, տեսնում երեխեն օրորոցումը մորթած: Մնում են սարսափած, սասանած կանգնած: էս ո՞վ կլինի, ո՞վ չի լինի...

Հարսն ասում է.

— էլ ո՞վ պետք է լինի. էս տունը մեզանից բացի հո էլ ուրիշ մարդ չի մտել. ման գանք, ում գրպանում արնոտ դանակը գտնենք — նա կլինի:

Համաձայնում են: Ման են գալի, ու... արնոտ դանակը հանում են Լուսիկի գրպանից:

Մնում են քար կտրած, բայց էլ ի՞նչ...

— Է՛ս էլ բու սիրած քույրը,— ճշում է շար կիսը ու երկուր պոկում — երեսես, երեսես...

Առավոտը լուսի հետ աշխարհքով մին լուրը տարածվում է: Ժողովուրդը վրդովվում է, դատաստան է պահանջում, մայրը լալիս է, դատաստան է պահանջում, ու գեղեցիկ Լուսիկին քաշում են դատաստանի դուռը: Դատում են, վճռում, կոնքերը կտրում են ու էնպես, կոնատ, տանում, հեռացնում, կորցնում, են հեռո՛ւ, հեռո՛ւ անտառներում:

էսպես կոնատ, մեն-մենակ թափառում է Լուսիկը անբնակ անտառներում: Շատ թափառելուց թփերն ու փշերը հագի շորերը տանում են, մնում է տկլոր: Մոծակներն ու մծեղները կծոտում են, ձեռ շի ունենում թե քշի, մտնում է մի ծառի փշակ:

Օրերից մի օր թագավորի տղեն էս անտառը որսի է գալի: Որսի շները անտառում էս ու էն կողմն են ընկնում, մի ծառի շրջապատում ու սկսում են հաչել:

Թագավորի տղեն, իր հետի մարդիկը մտածում են, թե շները երևի գազանի հետքի վրա են ընկել կամ որշ են գտել, ու սկսում են շներին հիս անել:

— Հիս մի՛ անիլ ինձ վրա, թագավորի որդի,— ձեն է տալի աղջիկը ծառի փշակից,— ես մարդ եմ, գազան չեմ:

— Թե մարդ ես, դե դուրս արի:

— Չեմ կարող, մերկ եմ, ամաշում եմ:

Թագավորի տղեն ձիուց իջնում է, վերարկուն հանում տալիս իր մարդկանց, որ տանեն պցեն աղջկա վրա: Վերարկուն տանում են, պցում են աղջկա վրա. դուրս է գալի մի սիրուն, մի աննման աղջիկ, որ ոչ ուտես, ոչ խմես, կանգնես ու մտիկ անես: Թագավորի տղեն հայիլ-մայիլ է մնում:

— Ո՞վ ես դու, սիրուն աղջիկ, ի՞նչ ես շինում էս անտառում, ի՞նչու ես մտել էս ծառի փշակը...

— Ես մի էսպես աղջիկ եմ. աշխարհքումը մի ախպեր ունեմ. բայց ախպերն էլ է ինձ թողել, աշխարհքն էլ...

— Ախպերդ էլ է քեզ թողել, աշխարհքն էլ, բայց ես չեմ

թողնիլ,—ասում է արքայորդին ու առնում է Լուսիկին տանում իրենց տունը:

Տանում է իրենց տունը, հորն ու մորը հայտնում, թե պետք է պսակվի նրա հետ:

— Թե սրա հետ կպսակվեմ, լավ, թե չէ՝ հո՛ ինձ մի փորձ շանքի կտամ:

Հերն ու մերն ասում են.

— Ա՛յ որդի, աշխարհքի աղջիկները հո վերջացել չեն. թագավորի աղջիկներ կան, նազիր-վեզիրների աղջիկներ կան, հարուստ, գեղեցիկ... էդ կոնատ, տկլոր, անտեր աղջիկն ո՞վ է, որ դու դրան ուզում ես:

— Չէ՛, որ չէ...

Հերն ու մերը ճարահատված իրենց քաղաքի խելոք մարդկանց հավաքում են, մի խորհուրդ են հարցնում, թե ինչպես անեն, իրենց որդուն էդ կոնատ աղջկա հետ պսակեն, թե չէ: Խելոք մարդիկ ասում են.

— Մարդ ու կնկա բախտը որ կա՛ սրտիցն է: Չեր տղի բախտն էլ, երևի, էդ աղջիկն է, որ սիրտը կպել է դրան: Աստված դրանց համար էլ էղպես է բարի տեսել:

էս որ լսում են՝ հերն ու մերն էլ համաձայնվում են, յոթն օր, յոթը գիշեր հարսանիք են անում, ու թագավորի տղեն ամուսնանում է գեղեցիկ Լուսիկի հետ:

Միառժամանակ անց է կենում, էս թագավորի տղեն գնում է հեռու երկիր: Գնալիս տանը պատվիրում է, որ երբ կինը ծնի՝ իրեք տեղեկություն գրեն: Պատվիրում է ու գնում:

Սրա գնալուց մի քանի ամիս անց է կենում, Լուսիկը ազատվում է, մի սիրուն, շարմաղ, ոսկեպանգուր տղա է ծնում:

Թագավորն ու թագուհին էնպես ուրախանում են, էնպես ուրախանում են, որ աշխարհքովը մին են լինում: Աշքալուս են գրում, նամակը տալիս են սուրհանդակին, ուղարկում են: Դու մի ասիլ, էս նամակը տանողը գնում է ճանապարհին հյուր է ընկնում Լուսիկի եղբոր տանը ու գիշերը մնում է նրանց մոտ: Իրիկունը զրույց անելիս պատմում է, թե՛ հապա՛, էսպես-էսպես մի բան է պատահել ու հիմի աշքալուսի թուղթ եմ տանում թագավորի տղին:

Չար հարսը էստեղ գլխի է ընկնում բանը: Գիշերվա մի

ժամանակը վեր է կենում, էս մարդի գրպանից նամակը հանում, կրակը դցում ու ինքը մի նոր նամակ գրում, դնում տեղը: Գրում է, թե՛ հապա շես ասիլ, քու դնալուց ետը կինդ ծնեց՝ մի շան լակոտ բերա՛վ... էսպես խայտառակվեցինք աշխարհքի մեջ. հիմի քեզ իմացնում ենք — գրի ինչ անենք, ինչ շանենք:

Սուրհանդակը էս նամակը տանում է տալի թագավորի տղին: Կարգում է թագավորի տղեն ու շա՛տ շատ վշտանում: Հորն ու մորը նամակ է գրում, թե իմ բախտն էլ երևի էդ է եղել. ինչ որ աստված տվել է — իմն է, պահեցեք, կնկանս էլ մի թթու խոտք շասեք, մինչև ես գամ:

Գրում է, նամակը տալիս սուրհանդակին, ետ դրկում: էս սուրհանդակը վերադարձին գալիս է կրկին իր հյուրատունը ու էլի գիշերը մնում է նրանց մոտ:

Չար հարսը գիշերվա մի ժամանակն էլի վեր է կենում, սրա գրպանից թագավորի տղի նամակը հանում, գցում կրակը, ինքը մի նորը գրում, դնում տեղը: Գրում է, թե՛ իմ կինն ինչ որ ծնեւ է, իր ծնած շան լակոտը դռշիցը կկապեք ու դուրս կանեք, կկորցնեք, որ ես չգամ ու մեր տանը տեսնեմ, թե չէ ինձ մի փորձանքի կտամ:

Հերն ու մերը էս նամակը որ ստանում են, մնում են զարմացած: Ասում են.

— էս ի՞նչ բան է. ինքը բերավ մեր կամքին հակառակ հետը պսակվեց, հիմի էլ գրում է, թե՛ դուրս արեք...

Շատ են տխրում, շատ է մեղքնիրը գալի, բայց ինչ որ գրել էր՝ պետք է կատարեին:

Բերում են երեխին կապում են մոր դռշիցը, լաց են լինում, օրհնում են ու իրենց տանիցը դուրս են անում:

Երեխեն դռշիցը կապած՝ Լուսիկը գնում է լալով: Անց է կենում խոր ձորեր, մութ անտառներ, անբնակ դաշտեր, ընկնում է մի անջուր, ամայի անապատ:

էս անապատում՝ ծարավ, ջրչոր՝ գնում է, գնում է, շատ է գնում, թե քիչ է գնում, շատն ու քիչն էլ աստված գիտի — հասնում է մի ջրհորի: Նայում է ջրհորի մեջը, աչքին թվում է, թե ջուրը մոտիկ է: Կռանում է թե ջուր խմի՝ երեխեն գրկիցը ընկնում է ջրհորի մեջը: Ծշալով ջրհորի էս կողմն է թռչում, էն կողմն է թռչում: Հանկարծ ետևից մի ձեն է գալի.

— Մի՛ վախիլ, աղջիկ ջան, մի՛ վախիլ, հա՛նի...
Նա է նայում, տեսնում՝ սիպտակ միրուքը մինչև գոտկատեղը մի ծերունի: Ասում է.

— Ո՞նց հանեմ, շեմ կարող, պապի ջան, ձեռներ չունեմ:

— Հա՛նի, հա՛նի, աղջիկ ջան, ձեռներ ունես, մեկնի...

Լուսիկը կռները մեկնում է, ձեռները բացվում են, ու երեխեն ջրհորից հանում է: Նա է դառնում թե շնորհակալություն անի, տեսնում է ծերունի չկա, աներևութացել է:

Սրան էստեղ թողնենք իր երեխի հետ ու հիմի ո՞ւմնից տեղեկություն տանք: Հիմի տեղեկություն տանք թագավորի տղիցը:

Թագավորի տղեն օտարությունից վերադառնում է, ամեն բան իմանում է, ու էլ տուն չի մտնում. դռնից ետ է դառնում, գնում է աշխարհքի աշխարհք ման գա, որ իր կնկանն ու երեխին գտնի:

Գնում է ման գալի. էս կողմը հարցուփորձ, էն կողմը հարցուփորձ, մի տեղ պատահում է մի մարդու:

— Բարի օր:

— Աստժու բարին:

— Ո՞ւր առաջ բարի:

— Իմ քրոջն եմ ման գալի:

— Դե մին շինենք, երկու լինենք, գնանք, ես էլ իմ կնկան ու երեխիս եմ ման գալի:

Ընկերանում են, գնում են ման են գալի, մի տարի, երկու տարի, երեք տարի, ոչ տեղն են իմանում, ոչ տեղեկություն: էս թագավորի տղեն վերջը գալիս մի մեծ ճանապարհի վրա քարվանսարա է պահում, ընկերն էլ իր տուն ու տեղը, իր կնկանը բերում է ու էնտեղ ապրում են, որ գուցե թե գնացող-եկողից մի բան իմանան:

Մի անգամ էս քարվանսարի դուռն է գալի մի աղքատ կին իր փոքրիկ տղի հետ:

Թագավորի տղեն իր ընկերոջը ասում է.

— Եկ ներս կանչենք էս աղքատ կնկանն ու իր երեխին: Սրանք լավ հեքիաթներ են գիտենում ու լավ էլ պատմում են. հեքիաթ կպատմի, մենք էլ դարդի տեր մարդիկ ենք, կլսենք, գիշերն անց կկենա:

Ընկերոջ կնիկն էն կողմից հակառակում է, թե՛ մենք հա-
զիվ ենք տեղավորվում, դրանց ո՞րտեղ բերենք:

Թագավորի տղեն որ շատ խնդրում է, ներս են թողնում
մուրացկան կնկանն ու իր երեխին: Մերը պատի տակին կուշ
է գալի, երեխեն էլ կողքին: Թագավորի տղեն ասում է.

— Քուններս չի տանում, քուրիկ, հեքիաթից, առակից
կիմանաս, պատմի լսենք, գիշերն անց կենա:

— Ես ոչ հեքիաթ գիտեմ, ոչ առակ,— պատասխանում է
աղքատը,— ես մի ճշգրիտ պատմություն գիտեմ, մի պա-
տահած դեպք և շատ հետաքրքրական. թե կուզեք, պատմեմ,
լսեցեք:

— Կավ, էդ պատմի:

Ու աղքատ կինը սկսում է պատմել:

— Մի ժամանակ մի աշխարհքում լինում են, շեն լինում,
մի քույր, մի ախպեր են լինում: Ախպերը պսակվում է, կին
է բերում, մի շար ու նախանձոտ կին:

Տանտիկինը էն կողմից բարկանում է:

— Հը՛, սկսեց գլխիցը դուրս տալ:

— Ա՛յ կնիկ, ի՞նչ ես ուզում, ինչո՞ւ ես խանգարում, թող
պատմի,— նեղանում է մարդը:— Պատմի, քույրիկ, դու պատ-
մի...

Աղքատ կնիկը շարունակում է իր հեքիաթը.

— Քույրը մի գեղեցիկ ու բարեսիրտ աղջիկ է լինում,
ամենքը սիրում են նրան: Ախպերն էլ ամեն տուն գալով
միշտ նրա համար մի բան է բերում՝ կամ ծաղիկ, կամ միրգ,
կամ հագուստ և կամ թե չէ՝ մի քաղցր խոսք է ասում: Նա-
խանձում է շար հարսը, հնարքներ է մտածում, թե ինչպես
անի, որ կորցնի գեղեցիկ աղջկանը:

— Հը, դե տեսեք ինչ է ասում է՛ս անզգամը...— կրկին
մեջ է ընկնում տանտիկինը:

— Ա՛յ կնիկ, ի՞նչ պատահեց քեզ. թող լսենք, տեսնենք
ինչ է ասում: Դու շարունակի, քույրիկ, սրան ահանջ մի
դնիլ:

Աղքատ կնիկը շարունակում է.

— Հնարքներ է մտածում շար հարսը: Մի օր տան կահ-
կարասին է շարդում ու դնում անմեղ աղջկա վրա, մյուս օրը
մարդու սիրած ձին է բաց թողնում, կորցնում ու մեղադրում

բրոջը. տեսնում է բան չի դառնում, վերջը իր երեխին օրո-
րոցի մեջ մորթում է, դանակը դնում քնած աղջկա գրպանը...

— Ձենդ կտրի, լիրբ, անզգամ, ո՞վ է իմացել, որ մերն իր
երեխին մորթի,— ճշում է տանտիկինը:

— Ի՞նչ ես ընդհատում,— գոռում է մարդը կնոջ վրա:—
Թող պատմի, չե՞ս տեսնում՝ ինչ հետաքրքրական բան է
պատմում:

Աղքատը շարունակում է.

— Դատաստան են անում, կտրում են անմեղ աղջկա կրո-
նեղը ու էնպես կոնատ հալածում, կորցնում հեռո՛ւ,
հեռո՛ւ...

Հալածված թափառում է նա անծանոթ անտառներում:
էն երկրի թագավորի տղեն օրերից մի օր որսի է դուրս գալի
էն անտառները, գտնում է գեղեցիկ աղջկանը ու պսակվում է
նրա հետ: Թագավորի տղեն հեռու երկիր է գնում: Նրա գնա-
լուց հետո կինը ծնում է մի ոսկեզանգուր երեխա: Աչքալուսի
նամակ են գրում հորը: Նամակատարը ճամփին հյուր է ընկ-
նում կոնատ աղջկա եղբոր տունը:

Չար հարսը գիշերը փոխում է նամակը, նոր նամակ է
գրում թագավորի տղին, թե՛ «քու կնիկը ծնել է, շան լակոտ
է բերել...»

— Սո՛ւ, հերիք էր ինչ որ տակից-գլխից դուրս տվիր,
դուրս կորի գնա,— կատաղում է տանտիկինը:

— Ախպեր, կնկանդ ասա հանգիստ կենա, լսենք, տես-
նում ես ինչ պատմություն է անում,— խնդրում է թագավորի
տղեն ընկերոջը:

Աղքատը շարունակում է.

— Թագավորի տղեն կարդում է փոխած նամակը, վըշ-
տանում է. բայց էլի գրում է, որ պահեն, մինչև ինքը կգա:
Նամակատարը վերադարձին կրկին հյուր է ընկնում նույն
տունը: էս նամակն էլ է փոխում շար հարսը ու գրում է,
թե՛ «նամակն ստանալուն պես իր ծնածը կրծքիցը կապե-
ցեք ու դուրս արեք իմ կնոջը»: էս նամակն ստանում են թա-
գավորն ու թագուհին, շատ են զարմանում, շատ են տանջ-
վում — բայց ինչ անեն — կատարում են ինչ որ գրած է. երե-
խին մոր դոշիցն են կապում ու դուրս անում:

— Էս ո՞րտեղից եկավ էս շունը,— աղաղակում է տանտիկինը:

— Բավական է,— գոռում են վրեն մարդն ու թագավորի տղեն:— Պատմի, քույրիկ, հետո՞... հետո՞...

Աղքատը շարունակում է.

— Հետո թագավորի տղեն տուն է գալի: Լսում է ինչ է պատահել, ետ է դառնում, գնում է իր կնոջն ու երեխին ման գալու: Պատահում է կոնատ աղջկա եղբորը: Նա էլ դուրս էր եկել իր քրոջը ման գալու: Ընկերանում են ու ման են գալի: Շատ են ման գալի, շեն գտնում: Գալիս են, մեծ ճանապարհի վրա մի քարվանսարա են պահում...

— Սուտ է ասում,— գոչում է տանտիկինը: Իսկ մարդն ու թագավորի տղեն ապուշ կտրած սպասում են վերջին: Եվ աղքատ կինը հասնում է վերջին:

— Սոված ու ծարավ թափառում է հալածված մերը իր ոսկեզանգուր երեխի հետ, վերջը աղքատ, տկտր գալիս է, հասնում էր քարվանսարայի դուռը... Ախպերն ու ամուսինը մեղքանում են, ներս կանչում, խնդրում են, որ մի հեքիաթ ասի իրենց համար:

— Վա՛յ...— ուշաթափվում է տանտիկինը:

— Լուսիկ ջա՛ն... մի՞թե դու ես...— վեր են թռչում թագավորի տղեն ու քնկերը,— Լուսիկ ջան...

— Հա՛, ձեր Լուսիկն եմ ես, ահա իմ ախպերը, ահա իմ ամուսինը, ահա իմ ոսկեզանգուր երեխան, և ահա շար հարսը...

Լեզվով չի պատմվիլ, թե ինչպես են ուրախանում ամենքը, որ իրար որոնում էին ու գտնում են վերջապես:

Իսկ շար հարսին կապում են կատաղի ձիու պոչից ու բաց են թողնում արձակ դաշտերում: Որտեղ արյունն է կաթում, էնտեղ փուշ ու տատասկ է դուրս գալի, որտեղ արտասուքն է թափվում, էնտեղ լիճ է գոյանում: Էն լճի խորքում երևում է մի երեխա՝ քնած օրորոցում, դանակը դրած գլխի տակին: Ասում են՝ երևում է և մի վանք. էն վանքում շքած է մի կին ու լալիս է, լալիս է, անվերջ լալիս է:

Լինում է չի լինում՝ մի աքլոր է լինում: Էս աքլորը քուշուշ անելիս մի ոսկի է գտնում: Կտուրն է բարձրանում, ձեն է տալի.

— Մուղրուղո՛ւ, փող եմ գտե՛լ...

Թագավորը լսում է, իր նազիր-վեզիրին հրամայում է՝ գնան խլեն բերեն:

Նազիր-վեզիրը գնում են՝ խլում բերում:

Աքլորը կանչում է.

— Մուղրուղո՛ւ, թագավորն ինձանով ապրե՛ց...

Թագավորը ոսկին ետ տալիս է իր նազիր-վեզիրին, ասում է.

— Ետ տարեք իրեն տվեք, թե չէ աշխարհքովը մին կխայտառակի մեզ էդ անպիտանը...

Նազիր-վեզիրը ոսկին տանում են ետ տալիս աքլորին:

Աքլորն էլ կտուրն է բարձրանում.

— Մուղրուղո՛ւ, թագավորն ինձանից վախե՛ց...

Թագավորը բարկանում է, իր նազիր-վեզիրին հրամայում է.

— Գնացե՛ք,— ասում է,— բռնեցեք էդ սրիկային, գլուխը կտրեցեք, եփեցեք բերեք ուտեմ, պրծնեմ դրանից:

Նազիր-վեզիրը գնում են աքլորին բռնում, որ տանեն: Տանելիս կանչում է.

— Մուղրուղո՛ւ, թագավորն ինձ հյուր է կանչե՛լ...

Տանում են մորթում, պղինձն են կոխում, որ հիփեն, ձեն է տալի.

— Մուղրուղո՛ւ, թագավորն ինձ տաք-տաք բաղնիք է զրկե՛լ...

Եփում են բերում՝ թագավորի առաջն են դնում, կանչում է.

— Թագավորի հետ սեղան եմ նստե՛լ, ծուղրուղո՛ւ...

Թագավորը շտապով վերցնում է կուլ տալի: Կոկորդով գնալիս կանչում է.

— Նեղ-նեղ փողոցներով անց եմ կենում, ծուղրուղո՛ւ...

Թագավորը որ տեսնում է՝ կուլ տվեց, էլ չի ձենը կըտրում, իր նազիր-վեզիրին հրամայում է թուրները հանած պատրաստ կենան, որ մին էլ ձեն ածի — զարկեն:

Նազիր-վեզիրը թրերը հանած՝ պատրաստ կանգնում են մինը էս կողմը, մյուսը էն:

Աքլորը որ թագավորի փորն է հասնում, ձեն է տալի:

— Լուս աշխարհքումն էի, մութ տեղն եմ ընկել, ծուղրուղո՛ւ...

— Զարկեցե՛ք... — հրամայում է թագավորը:

Նազիր-վեզիրը զարկում են, տալիս են թագավորի փորը պատում:

Աքլորը դուրս է պրծնում, փախչում է, կտեր ծերին կանգնում ձեն տալի:

— Մուղրուղո՛ւ...

ԲԱՐԵԿԵՆՌԱՆԸ

Ժամանակով մի մարդ ու մի կնիկ են լինում:

էս մարդ ու կնիկը իրար հավանելիս շեն լինում:

Մարդը կնկանն է ասում հիմար, կնիկը մարդուն, ու միշտ կովելիս են լինում:

Մի օր էլ մարդը մի քանի փութ եղ ու բրինձ է առնում, տալիս մշակի շալակը, տանում տուն:

Կնիկը բարկանում է.

— Ա՛յ, որ ասում եմ հիմար ես, շես հավատում. էսքան եղն ու բրինձը միանգամից ինչի՞ համար ես առել բերել. հորդ քե՛լեխն ես տալիս, թե տղիդ հարսանիքն ես անում:

— Ի՞նչ քելեխ, ի՞նչ հարսանիք, ա՛յ կնիկ, ի՞նչ ես խոսում, տար պահի, բարեկենդանի համար է:

Կնիկը հանգստանում է, տանում է պահում:

Անց է կենում միառժամանակ, էս կնիկը սպասում է, սպասում է, բարեկենդանը գալիս չի: Մի օր էլ շեմքումը նստած է լինում, տեսնում է մի մարդ վռագ-վռագ փողոցով անց է կենում: Ձեռը դնում է ճակատին ու ձեն տալի:

— Ա՛խպեր, ա՛խպեր, հալա մի կանգնի:

Տղեն կանգնում է:

— Ա՛խպեր, բարեկենդանը դու հո չե՞ս:

Անցվորականը նկատում է, որ էս կնկա ծալը պակաս է, ասում է՝ հա՛ ասեմ, տեսեմ ինչ է դուրս գալի:

— Հա, ես եմ բարեկենդանը, քույրիկ շան, ի՞նչ ես ասում:

— Էն եմ ասում, որ մենք քո ծառան հո չենք, որ քո եղն ու բրինձը պահենք: Ինչ որ պահեցինք, հերիք չէ՞ր... շես ամաչո՞ւմ... Ընչի՞ շես գալի քո ապրանքը տանում...

— Դե էլ ի՞նչ ես նեղանում, քույրիկ շան, ես էլ հենց դրա համար եմ եկել, ձեր տունն էի ման գալիս, չէի գտնում:

— Դե արի տար:

էս մարդը ներս է մտնում, սրանց եղն ու բրինձը շալակում ու կրունկը դեսն է անում, երեսը դեպի իրենց գյուղը: Մարդը գալիս է տուն, կնիկն այսում է.

— Թ՛ա՛, էն բարեկենդանն եկավ, իր բաները իրեն սևցրի տարավ:

— Ի՞նչ բարեկենդան... ի՞նչ բաներ...

— Ա՛յ էն եղն ու բրինձը... Մին էլ տեսեմ՝ վերևից գալիս է. մեր տունն էր ման գալի. կանչեցի, մի լավ էլ խայտառակ արի, շալակը տվի, տարավ:

— Վայ քու անխելք տունը քանդվի, որ ասում եմ հիմար ես — հիմար ես էլի... Ո՞ր կողմը գնաց:

— Այ էն կողմը:

էս մարդը ձի է նստում, ընկնում բարեկենդանի ետևից: Ճանապարհին բարեկենդանը ետ է մտիկ անում, տեսնում է՝ մի ձիավոր քշած գալիս է: Գլխի է ընկնում, որ սա էն կնկա մարդը պետք է լինի:

Գալիս է հասնում իրեն:

— Բարի օր, ախպերացու:

— Աստու բարին:

— Հո էս ճամփովը մարդ չի անց կացավ:

— Անց կացավ:

— Ի՞նչ ուներ շալակին:

— Եղ ու բրինձ:

— Հա, հենց էդ եմ ասում: Ի՞նչքան ժամանակ կլինի:

— Բավականին ժամանակ կլինի:

— Որ ձին քշեմ, կհասնե՞մ:

— Ո՞րտեղից կհասնես, դու ձիով, նա ոտով: Մինչև քու ձին չորս ոտը կփոխի — մի՛ն, երկո՛ւ, երե՛ք, շո՛րս — նա երկու ոտով մե՛կ-երկո՛ւ, մե՛կ-երկո՛ւ, մե՛կ-երկո՛ւ, շուտ-շուտ կգնա, անց կկենա:

— Բա ի՞նչպես անեմ:

— Ինչպես պետք է անես. ուզում ես, ձիդ թող ինձ մոտ, դու էլ նրա պես ոտով վազի, գուցե հասնես:

— Հա՛, էդ լավ ես ասում:

Վեր է գալիս, ձին թողնում սրա մոտ ու ոտով ճանապարհ ընկնում: Սա հեռանում է թե չէ, բարեկենդանը շալակը բարձում է ձիուն, ճամփեն ծոում, քշում:

էս մարդը ոտով գնում է, գնում է, տեսնում է չհասավ, նստ է դառնում: Ետ է դառնում, տեսնում՝ ձին էլ չկա: Գալիս է տուն: Նորից սկսում են կովել, մարդը եղ ու բրինձի համար, կնիկը՝ ձիու:

Մինչև օրս էլ էս մարդ ու կնիկը կովում են դեռ: Սա նրան է ասում հիմար, նա սրան, իսկ բարեկենդանը լսում է ու ծիծաղում:

1910

ՍՈՒՏԻԿ ՈՐՍԿԱՆԸ

Հորս կնունքով, մորս ծնունդով, վեր կացանք մի օր հինգ ու վեց հոգով, թրով-թվանքով որսի գնացինք: Հաղին էր, Հյուղին էր, Չատին էր, Մատին էր, հերս էր, ես էի, գնացինք որսի...

Սարեր, ձորեր դուզ գնացինք, որտեղ որս կար՝ սուս ու փուս գնացինք, որտեղ աճ էր՝ կուզ ու կուզ գնացինք...

Գնացի՛նք, գնացի՛նք, շատ թե քիչ, մին էլ տեսնենք երեք լիճ. երկուսը ցամաք, մընի մեջ էլ ըսկի ջուր չկա: Մին էլ, ըհը, մտիկ տանք, որ էս անջուր լճում լողում են ճշում երեք հատ սիպտակ բադ, երկուսը սատկած են, մինն էլ կենդանի չի:

— Հաղի՛, տո՛ւր հա, տո՛ւր:

— Թե՛ թվանք շունեմ:

— Հյուղի՛, տո՛ւր հա, տո՛ւր:

— Ես էլ շունեմ:

— Չատի... Մատի...

— Մենք էլ շունենք:

138

— Բա ի՞նչ անենք...

Հորս ձեռին կարճ ու երկար, հաստ ու բարակ մի փետ կար. երեսն առավ, նշան դրեց, մին էլ տրա՛ք, որ կրակեց... Նա կրակեց, ես զարկեցի. որ զարկեցի՝ փովեց էսպես—ամեն թևը հինգ գազ ու կես...

— Հաղի, դանա՛կ...

Թե՛ դանակ շունեմ:

— Հյուղի, դու...

— Ես էլ շունեմ:

— Չատի՞, Մատի՞...

— Մենք էլ շունենք...

— Բա ի՞նչ անենք...

Հերս էլ ունի, բերան շունի:

էս անբերան դանակը քաշեցինք: Հաղին մորթեց, չկարաց. Հյուղին մորթեց, չկարաց, Չատին չկարաց, Մատին չկարաց, հերս էլ չկարաց, ե՛ս քաշեցի մորթեցի:

Մորթեցի, վեր գցեցի. բադ մի ասիլ — մի գոմեջ ասա: Հաղին շալակեց, չկարաց, Հյուղին շալակեց, չկարաց, Չատին չկարաց, Մատին չկարաց, հերս էլ չկարաց, ե՛ս շալակեցի: Շալակեցի, գնացինք:

Գնացինք, գնացինք, հասանք մի տեղ, մին էլ տեսնենք երեք գեղ, երկուսի տեղն իսկի չի երևում, մընումն էլ իսկի շենլիկ չկա: էս անշեն գեղում դես ման եկանք, դեն ման եկանք, մի տուն գտանք, մեջը երեք պառավ, երկուսը մեռած, մընի բերնումն էլ շունչ չկա:

— Տղերք, ասինք, եկեք բաղով փլավ անենք:

էս անշունչ պառավը գնաց դես ման եկավ, դեն ման եկավ, կես բրինձ գտավ, երեք պղինձ, երկուսը ծակ, մինն էլ իսկի տակ շունի:

Ջուրը լցրինք էս անտակ պղինձը, մեջը ածինք բաղն ու բրինձը, անկրակ եփեցինք: Եփեց, եփեց, միսն ու բրինձը գնացին, մնաց ջուրը:

Որսից եկած սոված մարդի՛կ, վրա եկանք, կերա՛նք, կերա՛նք. ոչ աշքնիրս բան տեսավ, ոչ բերաններս բան մտավ:

1910

139

ԱՆՔԱՆ ՀՈՒՌԻՆ

Լինում է, շի լինում մի կնիկ: Էս կնիկը մի աղջիկ է ունե-
նում՝ անունը Հուռի: Մի ծուլ, անշնորհք աղջիկ: Օրը մինչև
իրիկուն պարապ-սարապ նստած:

Բանն ինչ կանեմ՝ կեղտոտ է,
Բամբակը կորիզոտ է:
Մաստակ պիտի, որ ծամեմ,
Կրտերը տիտիկ անեմ,
Անցնողին մըտիկ անեմ.
Ուտեմ, խմեմ,
Մթնի, քնեմ:

Հարեանները անունը դնում են Անբան Հուռի: Ինչ մերն
է՝ աղջկանը գովելով ման է գալի.— լիզրը գզոզ, լիզրը մա-
նոզ, համ խճճոզ, համ խճուճը հանոզ, ձևոզ-կարոզ, հուն-
ցող-թխոզ, եփող-թափող, մի խոսքով՝ հուռի-հրեղեն, մատ-
ները ոսկի:

Էս գովասանքը գնում մի երիտասարդ վաճառականի
ականջն է ընկնում: Էս երիտասարդ վաճառականն ասում է՝
իմ ուզածն էլ հենց սա է, որ կա: Գլխապատառ գալիս է Ան-
բան Հուռին ուզում է, հետը պսակվում, տանում իրենց տու-
նը: Մի քանի ժամանակից ետը մի տասը-քսան բեռը բամ-
բակ է առնում տալիս կնիկանը, թե՛ հս գնում եմ հեռու տեղեր
առուտուրի, դու էլ էս բամբակը գզի, մանի, գամ տանեմ ծա-
խեմ, հարստանանք:

Անբան Հուռին է, իրեն համար մաստակ ծամելով ման է
գալիս: Մի օր էլ գետի ափովն անց կենալիս լսում է, որ
գորտերը կոկոում են:

— Փե՛փել... Կե՛կել... Փե՛փել... Կե՛կել...

— Վո՛ւյ, աղջի Փեփել, Կեկել,— ձեն է տալի անբան Հու-
ռին,— որ բամբակը բերեմ ձեզ տամ, կգզե՞ք...

— Բե՛ր, բե՛ր, բե՛ր...

Անբան Հուռին ուրախանում է: Գնում է բամբակը կրում
բերում, ածում գետը:

— Դե գզեցեք, մանեցեք: Մի քանի օրից ետ կգամ, մա-
նածը կտանեմ, որ ծախենք:

Գնում է մի քանի օրից ետ է գալի:

Գորտերը էլի կոկոում են.

— Փե՛փել-Կեկել... Փե՛փել-Կեկել...

— Աղջի Փե՛փել, Կեկել, դե մանածը բերեք:

Գորտերը շարունակում են կոկոալ, իսկ մանածը շեն
բերում:

Հուռին մին էլ որ նայում է, աչքովն ընկնում է գետի
ափերին ու քարերին փաթաթված կանաչ մուռը:

— Վո՛ւյ,— ասում է,— ջրոտանամ ես, տե՛ս, համ գզել
ու մանել են, համ խալիչա են գործել իրենց համար:

Ձեռը ճակատին է դնում ձեն տալի.

— Դե որ խալիչա եք գործել, մեր բամբակի փողը բե-
րեք:— Ձեն է տալիս ու ոտը փոխում է, մտնում ջուրը: Հան-
կարծ ոտը առնում է մի կոշտ բանի: Հանում է տեսնում՝ մի
կտոր ոսկի: Փեփելին ու Կեկելին շնորհակալություն է անում,
ոսկու կտորը փեշը դնում, գալիս տուն: Մարդն էլ առուտուրի
տեղիցն է գալիս: Գալիս է տեսնում՝ իրենց թարեքին մի մեծ
ոսկու կտոր:

— Այ կնիկ, էս ի՞նչ ոսկի է:

Թե՛ բա շես ասիլ բամբակը Փեփելի ու Կեկելի վրա ծա-
խեցի, բամբակի փողն է:

Մարդը ո՛նց է ուրախանում, էնպես էլ դուք ուրախանաք:
Ձոքանչին հրավիրում է, ընծաներ է տալի, գովում է, շնոր-
հակալություն է անում, որ էնպես խելոք, շնորհքով, աշխա-
տասեր անաղջիկ է մեծացրել: Քեֆ է սարքում. նստում են
քեֆի:

Ձոքանչը խորամանկ կին է լինում: Իմանում է, թե բանը
ինչպես է պատահել. վախենում է փեսեն էլի աղջկանը գործ
հանձնի, ու գաղտնիքը բացվի: Քեֆի լավ ժամանակը մի
բզեզ է ներս մտնում ու բրոռացնելով պտտվում սենյակում:
Էս զոքանչը վեր է կենում զլուխ է տալի բզեզին: Ասում է.

— Բարով եկար, մորքուր ջան, ո՛նց ես. ո՛րտեղ ես, էս-
քան ժամանակ շես երևում... Ախր քեզ ո՛վ էր ասում էդքան
բան անես, որ էդ օրն ընկնես...

Փեսեն մնում է զարմացած: Ասում է.

— Այ մեր, խելագարվեցի՞ր, քեզ ի՞նչ պատահեց. էդ բզե-
զին էդ ի՞նչ ես ասում — մորքու՛րս օրն է...

Չորքանչը թե.— Այ որդի, քեզանից ինչ թաքցնեմ, դու էլ իմ որդին ես: Չես ասիլ էս բզեզն իմ մորթուրն է: Խեղճը շատ աշխատասեր կնիկ էր: Ամբողջ օրն աշխատում էր, շատ աշխատելուց կուշ եկավ, պստիկացավ. էնքան պստիկացավ, որ դառավ բզեզ: Մեր ցեղն էսպես է: Շատ աշխատասեր ենք: Բայց աշխատելուց պստիկանում, բզեզ ենք դառնում:

էս որ փեսեն լսում է, վախից քիչ է մնում պոռոջը ճաքի. էն է լինում որ էն, արգելում է Նուռնին ձեռն էլ բանի շտա, որ մորթուրի նման բզեզ չդառնա:

1911

ՔԵՑ ԱՆՈՂԻՆ ՔԵՑ ԶԻ ՊԱԿՍԻԼ

Ա

Ժամանակով Բաղդադ քաղաքում նստում էր Հարուն Ալ Ռաշիդ թագավորը: Հարուն Ալ Ռաշիդ թագավորը սովորություն ուներ՝ շորերը փոխած ման էր գալիս իմանալու, թե ինչ է կատարվում իր մայրաքաղաքում: Մի գիշեր էլ էսպես, դերվիշի շոր մտած, անցնելիս է լինում մի խուլ փողոցով: Մի աղքատ տնակից երգի ու նվագածություն ձայներ է լսում: Կանգ է առնում, միտք է անում միտք, հետաքրքրվում է ու ներս է մտնում: Ներս է մտնում տեսնում՝ դատարկ ու մերկ մի տնակ, կրակի դեմը փռած կարպետի վրա նստոտած տան տերն ու երաժիշտները: Աղքատ ընթրիքի շուրջը բոլորած նվագում են, երգում ու զվարճանում:

— Խաղաղություն ձեզ, ո՛վ ուրախ մարդիկ,— ողջունում է դերվիշն ու խոնարհություն է անում տան տիրոջը:

— Բարով եկար, դերվիշ բաբա, համեցեք, միասին ուտենք աստըծու տված մի կտոր հացն ու միասին ուրախանանք,— խնդրում է տան տերը: Դերվիշին էլ նստեցնում են իրենց հետ ու շարունակում են քեֆը:

Գիշերվա մի ժամին տան տերը երաժիշտներին վճարում է իրենց հասանելիքն ու ճամփու դնում: Երբ երաժիշտները հեռանում են՝ դերվիշը տան տիրոջը հարցնում է.

— Անունդ ի՞նչ է, բարեկամ:

— Հասան:

— Ամոթ չլինի հարցնելը, Հասան ախպեր, ի՞նչ արհեստի տեր ես դու, ի՞նչքան փող ես աշխատում, որ էսպես քեֆով ես անց կացնում քո ժամանակը:

— Քեֆը շատ փողով չի լինում, դերվիշ բաբա,— պատասխանում է տան տերը:— Ամենաշնչին ապրուստն էլ կարող է մարդ ուրախ վայելել: Ես մի փինաչի եմ, շուտեր եմ կարկատում, օրը մի շնչին բան եմ վաստակում: Երեկոները բերում եմ մի մասը ապրուստի եմ տալիս, մյուս մասն էլ էս երաժիշտներին, որ տեսար: Նստում ենք, ուրախանում: Թե քեզ նման մի աղնիվ հյուր էլ աստված հասցնում է՝ ավելի լավ:

— Անպակաս լինի քո ուրախությունը, ո՛վ Հասան, բայց եթե հանկարծ աշխատանքիդ էդ բարակ աղբյուրն էլ կտրի՝ ի՞նչ պիտի անես:

— Ինչո՞ւ է կտրում, դերվիշ բաբա:

— Օրինակ, թագավոր է ու թագավորի քմահաճույք. հանկարծ հրաման արավ, որ էլ փինաչությունը չպիտի լինի:

— Է՛հ, թագավորի դարձը կտրե՛լ է ընկնի փինաչիների հտակից... կամ ի՞նչ են արել նրան փինաչիները: Երբ էդպես բան կպատահի, էն ժամանակ կմտածենք. այժմ քեներ, դերվիշ բաբա: Աստված ողորմած է. քեֆ անողին քեֆ չի պակսիլ: Աշխարհքի բան է՝ ինչպես բռնես՝ էնպես էլ կերթա:

— Է՛ս՛վ, աստված տա, որ էդպես լինի,— բարեմաղթում է դերվիշն, ու քնում են:

Բ

Առավոտը վաղ դերվիշը գնում է: Նրա գնալուց հետո մտնետիկները լցվում են Բաղդադի փողոցներն ու հրապարակները, գոռալով հայտարարում, թե թագավորի հրամանն է, փինաչիների խանութները փակ պիտի մնան. էս օրվանից էլ ոչ ոք իրավունք չունի էդ արհեստով պարապելու: Զանցառուների գլուխները կթռնեն:

Խեղճ Հասանի ձեռքից էլ քիզը խլում են, վզակոթին տալով դուրս անում իր նեղլիկ խանութից ու դուռը փակում:

Մյուս գիշերը, դարձյալ դերվիշի շոր մտած, Հարուն Ալ Ռաշիդ թագավորը գնում է քաղաքը շրջելու: Դարձյալ անցնում է էն փողոցով, ուր ապրում էր ուրախ Հասանը: Դարձյալ երգի ու երաժշտության ձայներ է լսում նրա տանից: Ներս է մտնում:

— Օ՛, բարով, բարով, դերվիշ բաբա. համեցեք, նստիր քո տեղը:

Նստում են, ուտում, խմում, ածում, երգում, ուրախանում մինչև կես գիշեր:

Կես գիշերին երաժիշտներն իրենց վարձն առնում են հեռանում: Մնում են տան տերն ու հյուրը:

— Գիտե՞ս ինչ պատահեց, դերվիշ բաբա:

— Ի՞նչ պատահեց:

— Հենց էն, ինչ որ դու գուշակեցիր երեկ իրիկուն: էսօր թագավորը հրաման հանեց — մեր արհեստն արգելեց...

— Ի՞նչ ես ասում,— զարմանում է հյուրը:— Հապա ո՞ր տեղից փող գտար, որ էս գիշեր էլ քեֆ սարքեցիր:

— Մի կավե կուժ եմ գտել, հիմի էլ ջուր եմ ծախում: Օրական ինչ աշխատում եմ՝ մի մասը տալիս եմ ապրուստի, մյուսը՝ երաժիշտներին ու դարձյալ քեֆ եմ անում:

— Իսկ եթե թագավորը ջուր ծախելն էլ արգելի՞ էն ծամանակ ի՞նչ ես անելու:

— Զուր ծախելով թագավորին ի՞նչ վնաս ենք տալի, որ արգելի: Եվ ինչո՞ւ էսօրվանից դարդ անեմ դրա համար: Երբ որ կարգելի, էն ծամանակ կմտածեմ: Մի՛ վախենաք, բարեկամ, երբեք չի պակսիլ մի կտոր հաց ու մի անկյուն, որ ես էնտեղ ուրախանամ:

— Անպակաս լինի ուրախությունը քո օջախից, ով Հասան,— բարեմաղթում է դերվիշն ու հեռանում:

Գ

Առավոտը վաղ ամբողջ Բաղդադը թնդում է մունետիկների ձենից, թե Հարուն Ալ Ռաշիդ թագավորն էսպես է հրամայում. ջուրը աստըծունն է, և էսօրվանից ոչ ոք իրավունք չունի փողով ծախելու: Պատռել բոլոր ջրկիրների տիկերն ու ջարդել նրանց կժերը:

Աղքատ Հասանի կուժն էլ ջարդում են ջրի ճամփին ու դատարկ ետ դրկում:

Մյուս գիշեր թագավորը կրկին դերվիշի շոր է հագնում ու գնում քաղաքը շրջելու: Կրկին մոտենում է ուրախ Հասանի տանը: Դարձյալ ուրախության և երգի ձայներ: Ներս է մտնում:

— Ա՛յ, դերվիշ բաբա՛, համեցե՛ք, համեցե՛ք, նստիր քո տեղը, քեֆ անենք, ցերեկը երկարացնենք, գիշերը կարճացնենք: Ուրախանանք, դերվիշ բաբա, ավելի լավ է ուրախանալ, քան տրտմել:

— Իհարկե, ուրախությունը ավելի լավ է: Ամենքս էլ մեռնելու ենք, ո՛վ կարող է, թող ուրախանա,— բացականչում է դերվիշն ու նստում Հասանի կողքին:

Գիշերվա մի ժամին Խրգիշներն իրենց վարձն առնում են ու հեռանում: Մնում են դերվիշն ու տանտերը:

— Հասան ախպեր. էսօր ի՞նչ լսեցի. ասում են թագավորը արգելել է ջուր ծախելը, ճշմարի՞տ է արդյոք:

— Ի՞նչպես չէ, ի՞նչպես չէ, ամենքիս ջրի ամաններն էլ ոչնչացրին: Ա՛խպեր, դու կատարյալ մարգարե ես եղել. ինչ ասում ես՝ մյուս օրը կատարվում է:

— Հապա ի՞նչպես է, որ դու դարձյալ քեֆ ես անում: Ո՞րտեղից ես գտել էս փողը:

— Երանի թե մարդու պակասը փողը լինի: Փողի գտնելը հեշտ է, դերվիշ բաբա: Գնացի մի գործատիրոջ մշակ մտա. օրական մի բան է տալիս. բերում եմ մի մասը ապրուստիս եմ անում, մյուսը երաժիշտներին եմ տալիս ու շարունակում եմ իմ քեֆը: Բանը մարդու սիրտն է, դերվիշ բաբա:

— Ես իմ հոգին, արժե, որ էդ սրտով թագավորի պալատական լինեիր դու,— բացականչեց դերվիշը:

— Վա՛հ, դերվիշ, քո ասածները կատարվում են ճշտությամբ, հիմի որ էս խոսքդ էլ կատարվի՞:

— Ինչո՞ւ չի կատարվի, աշխարհքում անկարելի բան չկա,— պատասխանեց դերվիշն ու բաժանվեցին:

Առավոտը վաղ տերության պաշտոնյաները կտրեցին Հասանի աղքատ տնակի դուռը:

- էստե՞ղ է կենում քեֆ սիրող Հասանը:
- Ես եմ,— պատասխանեց զարմացած Հասանը:
- Թագավորի հրամանով հետևիր մեզ:

Ուղիղ պալատը տարան Հասանին: Հայտնեցին, որ թագավորը իրեն պալատականի պաշտոն է տվել: Պալատականի զգեստ հագցրին, մի թուր էլ կապեցին մեջքը ու կանգնեցրին պալատի մուտքերից մեկի առջև: Ամբողջ օրը էն մուտքի առջև պարապ կանգնեց Հասանը: Իրիկունը որ մթնեց, դատարկ ճամփու դրին տուն, թե՛ գնա, առավոտը ետ կգաս քո տեղը կանգնելու:

Գիշերը դարձյալ դերվիշի շոր մտավ Հարուն Ալ Ռաշիդ թագավորն ու գնաց քաղաքը շրջելու:

Գնաց մոտեցավ Հասանի տանը: Ականջ դրեց: Զարմանքով լսեց, որ դարձյալ հնչում են երգն ու երաժշտությունը: Հասանը քեֆ է անում դարձյալ: Ներս մտավ:

— Դերվի՛շ, դերվի՛շ, քո տունը չքանդվի, արի է՞. երեկ վա խոսքդ էլ կատարվեց, թագավորն ինձ պալատում պաշտոն է տվել:

- Ի՞նչ ես ասում:
- Աստված վկա:
- Եվ երևի շատ փող է տվել...

— Չէ՞ ինչ փող. մի գրոշ չտվին: Գատարկ տուն դրկեցին:

— Հապա որտեղի՞ց ես փող գտել, որ դարձյալ քեֆ ես անում:

— Նստի՛ր, ասեմ որտեղից: Մի թուր են կապել մեջքս: Իրիկունը տուն գալիս մտածեցի, թե՛ հո ես մարդ չեմ սպանելու: Տարա պողպատի շեղբը (մեջք) ծախեցի, պողպատի փոխարեն փայտե շինել տվի, մեջք դրի՛ եկա տուն: Եկա պողպատի փողով քեֆ սարքեցի: Լավ եմ արել, չէ՞, դերվիշ, ավելի լավ է ուրախություն ունենալ, քան մարդ սպանելու սուր:

— Հա՛, հա՛, հա՛,— ծիծաղեց դերվիշը:— Լավ անելը՝ լավ

ես արել, Հասան, բայց եթե էգուց քեզ թագավորը հրամայի, թե՛ կտրի էս հանցավորի գլուխը՝ ի՞նչ ես անելու:

— Բերանդ բարի բաց արա, ա՛յ շարագուշակ դերվիշ,— բարկացավ Հասանը:— Հակառակի նման ինչ էլ ասում ես, կատարվում է. չե՞ս կարող մի լավ բան ասել...

Ու շատ վշտացավ Հասանը: Սիրտը երկյուղ ընկավ, ամբողջ գիշերը շկարողացավ քնի:

Իրավ որ, մյուս օրը թագավորը կանչեց Հասանին ու ամբողջ արքունիքի առջև հանդիսավոր հրամայեց, որ մի հանցավորի գլուխը կտրի:

— Հանիր թուրդ ու կտրի էս հանցավորի գլուխը:

— Ապրած կենաս, մեծ թագավոր,— պատասխանեց սարսափած Հասանը,— ես իմ օրում մարդու գլուխ չեմ կտրել, չեմ կարող: Փորձված մարդիկ շատ կան քո պալատում. հրամայիր մի ուրիշը կտրի...

— Ես քեզ եմ հրամայում,— սաստեց թագավորը,— եթե մի վայրկյան էլ ուշացրիք, գլուխդ կթաշի: Հանի՛ր թուրդ...

էս խոսքի հետ թշվառ Հասանը մոտեցավ հանցավորին, ձեռքերը տարածեց ու աղաղակեց դեպի երկինք.

— Տեր աստված, արդարն ու մեղավորը դու գիտես: Եթե էս մարդը մեղավոր է, ինձ ուժ տուր, որ մի զարկով թոցնեմ սրա գլուխը, իսկ եթե արդար է, թող փայտ դառնա իմ թուրը...

Ասավ, դուրս քաշեց թուրը... Փա՛յտ: Հրաշքի վրա պալատականները մնացին ապշած: էստեղ Հարուն Ալ Ռաշիդ թագավորը փառ-փառ ծիծաղեց ու ամեն բան բաց արավ, պատմեց իր պալատականների առջև: Եան՝ ծիծաղեցին պալատականները ու շատ գովեցին թե՛ ուրախություն սիրող Հասանին, թե՛ թագավորին: Ծիծաղեց մինչև անգամ էն դժբախտ հանցավորը, որ չոքած, վիզը մեկնած սպասում էր թրի զարկին: Թագավորը բաշխեց հանցավորին իր կյանքը, իսկ Հասանին դառնալով՝ հռչակեց նրան իր սիրելի մարդը ամբողջ տերության մեջ ու լավ պաշտոն տվեց, որ միշտ աշխատի ու անպակաս, ուրախ ապրի, ուրիշներին էլ սովորեցնի ուրախ ապրել աշխարհքում:

Ժամանակով մեր աշխարհքում մի վաճառական է լինում: Էս վաճառականը ունենում է մի աղջիկ՝ անունը Մաղիկ: Մաղիկ որ ծաղիկ, էնքան քնքույշ, էնքան նախշուն, էնքան սիրուն է լինում:

Հերը անշափ սիրելիս է լինում աղջկանը: Մի անգամ էլ օտարություն գնալիս հարցնում է.

— Ի՞նչ կուզես քեզ համար բերեմ:— Թե՛ եղեմական ծաղիկը կուզեմ ինձ համար բերես:— Լավ, ասում է, կբերեմ: Գնում է աշխարհքից աշխարհք անց է կենում, իր առուտուն անում է, իր գործը պրծնում, ուզում է աղջկա համար էլ եղեմական ծաղիկ գտնի, որ տուն գա: Դես է հարցնում եղեմական ծաղիկ, դեն է հարցնում եղեմական ծաղիկ, ոչով չի իմանում, թե ինչ բան է եղեմական ծաղիկը կամ որտեղ է բացվում: Վերջը մի ծեր մարդ է պատահում: Էս ծեր մարդը մի ճամփա է ցույց տալի. ասում է էս ճամփով որ գնաս, էսինչ տեղը կգտնես քո հարցրած ծաղիկը: Բայց զգույշ կաց Սիպտակ դեփց, նա եղեմական ծաղիկին հսկում է:

Հոր սիրտ է: Մերունու ցույց տված ճամփեն բռնում է գնում: Գնում է, գնում, շատ է գնում թե քիչ, դուրս է գալիս էնտեղ, որտեղ բացվում է եղեմական ծաղիկը: Հենց հասնում է ծաղիկը պոկում է թե չէ, մի հողմ, մի փոթորիկ է վեր կենում, փոթորկի հետ հայտնվում է մի հրեշ: Մարդ ասես, մարդ չի, գազան ասես, գազան չի, բայց գազանի նման մռնչում է.

— Ո՛ւր պոկեցիր իմ ծաղիկը... քո մահն է հիմի...

— Քո մահն է հիմի...— ձեն է գալի ամեն կողմից...

Մարդը ոչ մեռած, ոչ կենդանի՝ հրեշի առաջն է ընկնում:

— Ներիբ,— ասում է,— ո՛վ հզոր... իմ աղջիկն էր ուզել...

— Կներեմ,— կանչում է հրեշը,— միայն էն պայմանով, որ էդ աղջիկը ինձ տաս:

— Համաձայն եմ:

— Որ համաձայն ես՝ քեզ եմ բաշխում քո կյանքը: Գնա: Հենց որ ձեր տան դիմացի սարը սիպտակի — էդ իմ նշանն է, կգամ Մաղիկին տանելու:

Դու մի ասիլ Սիպտակ դեք ինքը հրեշն է, որ կա:

Վաճառականը վերադառնում է տուն: Աղջիկը միամիտ առաջն է վազում, վզովը փաթաթվում: Հերը համբուրում է՝ եղեմական ծաղիկը տալիս իրեն, իսկ պատահած դեպքն ու իր խոստումը թաքցնում է: Թաքցնում է, բայց ինքն իր մեջ միտք է անում ու տխրում: Քանի օրերն անց են կենում, էնքան ավելի է տխրում: Մի առավոտ էլ վեր է կենում տեսնում իրենց տան դիմացի սարն արդեն սիպտակել է: Լաց է լինում: Պատճառը հարցնում են. էլ չի կարողանում ծածկի, պատմում է, թե՛ հապա շեք ասիլ էսպես-էսպես բան է պատահել, ես էլ խոսք եմ տվել, հիմի Սիպտակ դեք գալու է Մաղիկին տանի:

— Բան չկա: հայրիկ,— ասում է Մաղիկը,— դու լաց մի լինի, ես կերթամ Սիպտակ դեփ հետ. ինչ կլինի կլինի:

Այնինչ Սիպտակ դեք արդեն դուռը կտրել է ու մռնչում է.

— Ո՛ւր է Մաղիկն, ո՛ւր... ինձ տո՛ւր...

Մռնչում է ու նրա սառը շնչից դողում են ծառերը, աշխարհքը գունատվում. ի՛նչ պետք է անեին խեղճ մարդիկը: Զուգած, զարդարած, եղեմական ծաղիկը ձեռքին դուրս են բերում Մաղիկին հանձնում են Սիպտակ դեփն, որ շարախինդ սուլոցով ու ազահ ոռնոցով, սառով, սևով, հողմի թևով իսկույն հափշտակում է տանում: Տանում է Մասիսի մեծ վիհը: էնտեղ, Մասիսի էն մեծ վիհում, էն անմատչելի, միշտ մռայլ ու միշտ սառն աշխարհքում կանգնած էր իր բյուրեղյա ապարանքը: էն ապարանքից իջնում էր նա, սառով ու սարսափով աշխարհքը պատում, հափշտակում տանում ամեն կյանք ու կենդանություն: Մաղիկին էլ տանում է փակում էն բյուրեղյա ապարանքում:

էսպես ամիսներ են անց կենում: Մի անգամ էլ, գարնան սկզբին, երբ Սիպտակ դեք տանից դուրս է գնում, աղջիկը վեր է կենում փախչում: Ետ է գալի դեք՝ տեսնում է՝ Մաղիկը չկա: Կատաղում է, հավաքում է իր բոլոր դիվական ուժն ու մրրիկի նման սուրալով, օձի նման սուլելով՝ ընկնում է ետևից: Աղջիկը արդեն Արագածի ստորոտն է լինում հասած: Ետ է նայում տեսնում է Սիպտակ դեք գալիս է: Գալիս է, ո՛նց է գալիս, աստված ետ ու հեռու անի: Սարսափից ճշում է, օգնություն է կանչում: Կանչելու հետ, աստըծու հրամանով, առաջը մի դուռն է բացվում: էն դռնովը

մտնում է սարի մեջն, ու կրկին դուռը փակվում է դեի առաջին:

Ավելի է կատաղում Սիպտակ դևը. իր լայն թևերով բամփում է Արագածի գագաթին ու մոնչում:

— Ո՛ւր է Մաղիկն, ո՛ւր... ինձ տո՛ւր...

Սա էստեղ թող մոնչա, մենք գնանք Մաղիկի ետևից, տեսնենք էն կախարդական դոնից որ մտավ, ինչ եղավ:

Մաղիկը էն կախարդական դոնից ներս է մտնում թե չէ, դուրս է գալի մի դրախտական այգի, որտեղ հազարավոր ձայներ երգում են:

*Ջմրուխտ պալատում, ոսկի դագաղում
Պառկած է շարի ուժով կախարդված,
Պառկած է Արին ոչ մեռած, ոչ քուն,
Ու աշխարհքն ամեն սև սուգ է մտած:
Պառկած է մինչև օրը ցանկալի,
էն պայծառ օրը, երբ որ նա կըգա,
Կըգա նոր կյանքով ու նոր սիրով լի,
Կարտասովի անուշ ու համբույր կըտա:*

Առաջ է գնում Մաղիկը, հանկարծ այգին լցվում է զվարթ աղմուկով ու տարածվում են ուրախ երգի ձայները:

*Ահա եկավ, հասավ չքնաղ
Իր թագուհին, իր սիրելին,
Հիմի կելնի պաղ դագաղից
Մեր քաջ Արին-Արմանելին:
Հիմի կելնի թագավորը,
Չգոր Արին-Արմանելին
Ու կըժպտան վառ աչքերը
Ողջ աշխարհքին, ծաղկին, ծըլին:
Հիմի կընկնի կախարդանքը
Չար թշնամու, Սիպտակ դևի,
Հիմի կըգա դալար կյանքը,
Բույրը ծաղկի, շողն արևի:*

Եվ ճիշտ որ, Մաղիկը գնում է, ինչ է տեսնում, այգու մեջ մի զմրուխտ պալատ, պալատի մեջ ոսկի դագաղ, դագաղի մեջ մի ջահել, գեղեցիկ երիտասարդ, որ ոչ քնած է, ոչ մեռած, շունչը վրեն հազիվ տրբփում է: Տեսնում է թե չէ, սիրտը

փուլ է գալի, էլ չի դիմանում, լաց է լինում ու կռանում է համբուրում: Արտասուքի կաթիլներն ընկնում են երիտասարդի երեսին. երիտասարդը հանկարծ բաց է անում աչքերն ու վեր է կենում կանգնում, ինչպես էն դրախտում բուսած սոսիներից մինը:

Դու մի՛ ասիլ՝ հենց ինքը Արին-Արմանելին է, որ կա:

— Ո՛վ ես դու, սիրուն աղջիկ,— հարցնում է Արին-Արմանելին,— և ինչպես ընկար էս աշխարհքը:

Ու Մաղիկը կանգնում պատմում է իր զխին եկածը, թե ինչպես ինքը գերի էր եղած Սիպտակ դևին, որ այժմ էլ ետևիցն է ընկել ու հալածում է իրեն:

— Լսում եմ, լսում եմ նրա դաժան ձայնը.— պատասխանում է Արին-Արմանելին:— Ինձ էլ նա է կախարդել ամիսներ առաջ ու գցել էս մահաճանճան քնի մեջ: Էսպես է անում ամեն տարի: Պետք է էսպես էլ մնայի, մինչև մինը խորտակեր նրա շար կախարդանքը: Դու եղար էդ մինը: Այժմ ես դուրս կգնամ նրա դեմ:

Ասելն ու անելը մին է լինում: Առնում է կայծակի թուրը ու դուրս է գալի: Երկու թշնամի ուժերը պատահում են իրար. բացվում է օրհասակոխվը: Զարկում են զարկվում — երկինք ու գետինք իրար են խառնվում: Մութն ամպերում մոնչում է Սիպտակ դևը, Արին-Արմանելին ահավոր որոտում ու շողացնում է կայծակի թուրը. երկիրը դողում, դղրդում է հիմքից: Կովի վերջում պարտված-զարկված Սիպտակ դևը վշշալով ու թշշալով, լացով ու թացով քաշվում է նորից իր մռայլ թագավորությունը, Մասիսի էն մեծ վիհը, դարձյալ փակվում է իր բյուրեղյա սառն ապարանքում: Աշխարհքը մնում է գեղեցիկ հաղթողին:

Ու աստվածային հանդես է բացվում Արաքսի հովտում: Արին-Արմանելին պսակվում է Մաղիկի հետ: Բնությունը առատորեն փռում է իր փարթամ վարդերն ու զարդերը, ինս ու ջինս, մրջյուն ու թռչուն իրար են խառնում իրենց զվարթ աղմուկն ու աղաղակը, խաղն ու տաղը, ամենի վրա հոյակապ կամար է կապում կանաչ-կարմիրը՝ ծիածանը, իսկ նրանց վերև ճառագում ու աշխարհքովը մին ժպտում է գարնան կենսատու արևը:

Ու էսպես կրկնվում է ամեն տարի, որովհետև ամեն տարի Սիպտակ դեր կախարդում է Արին-Արմանելին ու հափըշտակում է սիրուն Ծաղիկին:

1911

ՔԱՋ ՆԱԶԱՐԸ

1

Լինում է, չի լինում մի խեղճ մարդ՝ անունը Նազար: Էս Նազարը մի անշնորհք ու ալարկոտ մարդ է լինում. է՛նքան էլ վախկոտ, է՛նքան էլ վախկոտ, որ մենակ ոտը ոտի առաջ չէր դնիլ, թեկուզ սպանեիր: Օրը մինչև իրիկուն կնգա կողքը կտրած՝ նրա հետ դուրս գնալիս դուրս էր գնում, տուն գալիս՝ տուն գալի: Դրա համար էլ անունը դնում են Վախկոտ Նազար:

Էս Վախկոտ Նազարը մի գիշեր կնգա հետ շեմքն է դուրս գալի: Որ շեմքն է դուրս գալի՝ տեսնում է ճրջճրջքան լո՛ւս-լուսնյակ գիշեր՝ ասում է.

— Ա՛յ կնիկ, ի՛նչ քարվան կտրելու գիշեր է՛... Սիրտս ասում է՝ վեր կաց գնա Հնդրստանից եկող Շահի քարվանը կտրի, բեր տունը լցրու...

Կնիկը թե.

— Ձեռք կտրի, տեղդ նստի, քարվան կտրողիս մտիկ արա...

Նազարը թե.

— Ա՛նզգամ կնիկ, ինչո՞ւ չես թող անում ես գնամ քարվան կտրեմ բերեմ տունը լցնեմ: Էլ ի՞նչ տղամարդ եմ ես, էլ ինչո՞ւ եմ գդակ ծածկում, որ դու համարձակվում ես իմ առաջը խոսես:

Որ շատ կռվում է՝ կնիկը տուն է մտնում, դուռը փակում:

— Հո՛ղեմ էդ վախկոտ գլուխդ, դե հիմի գնա քարվան կտրի:

Էս Նազարս մնում է դռանը: Վախից լեղապատառ է լի-

նում: Ինչքան աղաչում-պաղատում է, որ կնիկը դուռը բաց անի, չի լինում, բաց չի անում: Ճարը կտրած գնում է մի պատի տակի կուշ է գալի, դողալով գիշերն անց է կացնում, մինչև լուսը բացվում է: Նազարը խռոված պատի տակին արևկող արած սպասում է, որ կնիկը գա տուն տանի, ու միտք է անում: Ամառվա շոգ օր՝ զազազած ճանճեր. ինքն էլ էնքան ալարկոտ, որ ալարում է քիթը սրբի — ճանճերը գալիս են սրա քիթ ու պտունգին վեր գալի, լցվում: Որ շատ նեղացնում են՝ ձեռք տանում է երեսին զարկում: Որ երեսին զարկում է՝ ճանճերը շարդվում են առաջին վեր թափում:

— Վա՛հ, էս ինչ էր... — մնում է զարմացած:

Ուզում է համրի թե մի զարկով քանիսն սպանեց՝ չի կարողանում: Մտածում է, որ հազարից պակաս չի լինիլ:

— Վա՛հ, — ասում է, — ես էսպես տղամարդ եմ էլիլ ու մինչև էսօր չեմ իմացել... Ես, որ մի զարկով կարող եմ հազար շունչ կենդանի շարդել, էլ ի՞նչ եմ էս անպիտան կնգա կողքին վեր ընկել...

Էստեղից վեր է կենում ուղիղ գնում իրենց գյուղի տերտերի մոտ:

— Տե՛րտեր, օրհնյա ի տեր:

— Աստված օրհնի, որդի՛ս:

— Տե՛րտեր, բա չես ասիլ էսպես-էսպես բան:

Պատմում է իր քաջագործությունը ու հետն էլ հայտնում է, որ պեթք է իր կնգանից կորչի, միայն խնդրում է՝ իր արածը տերտերը գրի, որ անհայտ շմնա, ամենքն էլ կարդան իմանան: Տերտերն էլ, կատակի համար, մի փալասի կտորի վրա գրում է.

Անհաղթ հերոս Քաջըն Նազար,

Որ մին զարկի՝ շարդի հազար:

Ու տալիս է իրեն:

Նազարս էս փալասի կտորը մի փետի ծերի ամրացնում է, մի ժանգոտած թրի կտոր կապում մեջքը, իրենց հարևանի իշին նստում ու գյուղից հեռանում:

Իրենց գյուղից դուրս է գալի, մի ճամփա է ընկնում ու գնում: Ինքն էլ չի իմանում, թե էդ ճամփեն ուր է տանում:

Գնում է գնում, մին էլ ետ է նայում, տեսնում է գյուղից հեռացել է: Էստեղ սիրտն աճ է ընկնում: Իրեն սիրտ տալու համար սկսում է քթի տակին մոռալ, երգել, իրեն-իրեն խոսել, իշի վրա բարկանալ: Քանի հեռանում է՝ էնքան վախը սաստկանում է, քանի վախը սաստկանում է՝ էնքան ձենը բարձրացնում է, սկսում է գոռգոռալ, հարայ-հրոց անել, հետն էլ մյուս կողմից էջն է սկսում զռալ... Էս աղմուկից ու աղաղակից թռչունները մոտիկ ծառերից են թռչում, նապաստակները թփերից են փախչում, գորտերը կանաչիցն են ջուրը թափում...

Նազարը ձենն ավելի է գլուխը պցում. իսկ որ մտնում է անտառը — թվում է թե ամեն մի ծառի տակից, ամեն մի թփի միջից, ամեն մի քարի ետևից՝ որտեղ որ է գազան է հարձակվելու կամ ավազակ. սարսափած սկսում է գոռգոռալ, ոնց գոռգոռալ — ականջդ ոչ լսի:

Գու մի ասիլ հենց էս ժամանակ մի գյուղացի ձին քաշելով անտառում միամիտ գալիս է: Էս զարհուրելի ձենը ականջն է ընկնում թե չէ՝ կանգնում է.

— Վա՛յ, ասում է, ո՞նց թե իմն էլ էստեղ էր հատե՛լ. կա-չկա էս ավազակներ են...

Ձին թողնում է, ընկնում է ճամփի տակի անտառն ու՝ երկու ոտն երկուսն էլ փոխ է առնում՝ փախչում:

Քախտդ սիրեմ, Քաջ Նազար. գոռգոռալով գալիս է տեսնում մի թամբած ձի ճամփի մեջտեղը կանգնած իրեն է սպասում: Իշիցը վեր է գալի էս թամբած ձիուն նստում ու շարունակում իր ճամփեն:

Շատ է գնում, քիչ է գնում, շատն ու քիչն էլ ինքը կիմանար, գնում է ընկնում մի գյուղ. ինքը գյուղին անծանոթ, գյուղն՝ իրեն: Ո՛ւր գնա, ուր չի գնա: Մի տանից գլուխի ձեն է լսում. ձին քշում է էս ձենի վրա, գնում է ընկնում մի հարսանքատուն:

— Բարի օր ձեզ:

— Ա՛յ աստծու բարին քեզ, բարով հազար բարի եկար: Համե՛ցեք հա, համե՛ցեք. դե դոնախն աստծունն է. սրան տանում են իր դրոշակով սուփրի վերի ծերին բազմեցնում: Աչքդ էն բարին տեսնի, ինչ որ լցնում են առաջը — թե ուտելիք, թե խմելիք:

Հարսանքավորները հետաքրքրվում են՝ իմանան, թե ով է էս տարօրինակ անծանոթը: Ներքի ծերից մինը բռնում է իր կողքի նստածին ու հարցնում, սա էլ իր կողքի նստածին է բռնում, էսպես հերթով իրար բռնելով ու հարցնելով բանը մնում է վերի ծերին նստած տերտերին: Տերտերը մի կերպով դոնախի դրոշակի վրա կարդում է.

Անհաղթ հերոս Քաջըն Նազար,
Որ մին զարկի՝ շարդի հազար:

Կարդում է ու զարհուրած հայտնում է իր կողքի նստածին, սա էլ իր կողքի նստածին, սա էլ երրորդին, երրորդը շուրորդին. էսպեսով հասնում է մինչև դռան տակը, ու ամբողջ հարսանքատունը դրմբում է թե՛ բա՛ շես ասիլ նորեկ դոնախն է ինքը.

Անհաղթ հերոս Քաջըն Նազար,
Որ մին զարկի՝ շարդի հազար:

— Քաջ Նազարն է հա՛... — բացականչում է պարծենկոտի մինը: — Ի՛նչքան է փոխվել. միանգամից լավ չճանաչեցի...

Եվ մպրդիկ են գտնվում, որ պատմում են նրա արած քաջագործությունները, հին ծանոթությունն ու միասին անցկացրած օրերը:

— Հապա ինչպես է, որ էսպես մարդը հետը ոչ մի ծուռա չունի, — դարմանքով հարցնում են անծանոթները:

— Էդպես է դրա սովորությունը, ծառաներով ման գալ չի սիրում: Մի անգամ ես հարցրի, ասավ՝ ծառան ի՞նչ եմ անում, ամբողջ աշխարհքն իմ ծառան է ու իմ ծառան:

— Հապա ի՞նչպես է, որ մի կարգին թուր չունի, էս ծանագոտ երկաթի կտորն է մեջքին կապել:

— Շնորհքն էլ հենց դրա մեջն է՛, որ էս ծանագոտ երկաթի կտորով մին զարկես շարդես հազար, թե չէ լավ թրով — ի՞նչ կա որ, սովորական քաջերն էլ են ջարդում:

Ու ապշած ժողովուրդը ոտի է կանգնում, խմում է Քաջ Նազարի կենացը: Իրենց միջի խելոքն էլ դուրս է գալի ճառ է ասում Նազարի առաջ. ասում է՝ մենք վաղուց էինք լսել քո մեծ հռչակը. կարոտ էինք երեսդ տեսնելու և ահա էսօր բախտավոր ենք, որ քեզ տեսնում ենք մեր մեջ: Նազարը հառաչում է ու ձեռքը թափ է տալիս: Ժողովականները խորհրդավոր իրար աչքով են անում, հասկանում են, թե էդ հառաչանքն ու ձեռի թափ տալը ինչքան բան կնշանակեր...

Աշուղն էլ, որ էնտեղ էր, ձեռաց երգ է հորինում ու երգում:

Բարով եկար, հազար բարի,
Հըզոր արծիվ մեր սարերի,
Քազ ու պարծանք մեր աշխարհի,
Անհաղթ հերոս Քաջըդ Նազար,
Որ մին զարկես՝ շարդես հազար:

Խեղճ տրկարին դու ապավեն,
Ազատ կանես ամեն ցավեն,
Մեզ կրփրկես անիրավեն,
Անհաղթ հերոս Քաջըդ Նազար,
Որ մին զարկես՝ շարդես հազար:

Մատաղ ենք մենք քո դըրոշին,
Մեջքիդ թըրին, տակիդ ուշին,
Նրա ոտին, պոշին, բաշին,
Անհաղթ հերոս Քաջըդ Նազար,
Որ մին զարկես՝ շարդես հազար:

Ու ցրվելով հարբած հարսանքավորները տարածում են ամեն տեղ, թե գալիս է

Անհաղթ հերոս Քաջըդ Նազար,
Որ մին զարկի՝ շարդի հազար:

Պատմում են նրա զարմանալի քաջագործությունները, նկարագրում են նրա ահռելի կերպարանքը: Ու ամեն տեղ իրենց նորածին երեխաների անունը դնում են Քաջ Նազար:

Հարսանքատնից հեռանում է Նազարն ու շարունակում է իր ճամփեն: Գնում է հասնում մի կանանչ դաշտ: էս կանանչ դաշտում ձին թողնում է արածի, դրոշակը տնկում է, ինքն էլ դրոշակի շվաքումը պառկում քնում:

Դու մի՛ ասիլ օխտը հսկա եղբայրներ կան, օխտը ավազակապետ, էս տեղերը նրանցն են, իրենց ամրոցն էլ մոտիկ սարի գլխին է: էս հսկաները վերևից մտիկ են տալիս՝ որ մի մարդ եկել է իրենց հանդում վեր է եկել: Շատ են զարմանում, թե էս ինչ սրտի տեր մարդ պետք է լինի, քանի գլխանի, որ առաջ քաշվելու եկել է իրենց հանդում հանգիստ վեր է եկել ու ձին էլ բաց թողել: Ամեն միևր մի գուրզ ուներ քառասուն լղրանոց: էս քառասուն լղրանոց գուրզերը վերցնում են գալիս: Գալիս են ի՞նչ են տեսնում. հրես մի ձի արածում է, մի մարդ կողքին քնած, գլխավերևը մի դրոշակ տնկած, դրոշակի վրեն գրած.

Անհաղթ հերոս Քաջըդ Նազար,
Որ մին զարկի՝ շարդի հազար:

Վա՛յ, Քաջ Նազարն է՛... Մատները կծում են հսկաներն ու մնում են տեղները սառած: Դու մի՛ ասիլ հարբած հարսանքավորների տարածած լուրը սրանց էլ է լինում հասած: էսպես թուքները ցամաքած, շորացած սպասում են, մինչև Նազարն իր քունն անում է ու զարթնում. որ զարթնում է, աչքերը բաց է անում, տեսնում գլխավերևը քառասուն լղրանոց գուրզերն ուսներին օխտն ահռելի հսկաներ կանգնած՝ էլ փորումը սիրտ շի մնում: Մտնում է իր դրոշակի ետևն ու սկսում է դողալ, ոնց որ աշունքվա տերևը կղողա: էս հսկաները որ տեսնում են սա գունատվեց ու սկսեց դողալ, ասում են՝ բարկացավ, հիմի որտեղ որ է մի զարկով օխտիս էլ կսպանի, առաջին գետին են փովում ու խնդրում են.

Անհաղթ հերոս Քաջըդ Նազար,
Որ մին զարկես՝ շարդես հազար:

Մենք լսել էինք քո ահավոր անունը, տեսությանդ էինք փափագում. այժմ բախտավոր ենք, որ քո ոտով ես եկել մեր հողը: Մենք, քո խոնարհ ծառաներդ՝ օխտն ախպեր ենք,

ահա մեր ամրոցն էլ էն սարի գլխին է՝ մեջը մեր գեղեցիկ քույրը: Աղաչում ենք շնորհ անես գաս մեր հացը կտրես...

Էստեղ Նազարի շունը տեղն է գալի, նստում է իր ձին, նրանք էլ դրոշակն առած առաջն են ընկնում ու հանդիսավոր տանում են իրենց ամրոցը: Տանում են ամրոցում պահում, պատվում թագավորին վայել պատվով, ու էնքան են խոսում նրա քաջագործություններից, էնքան են գովում, որ իրենց գեղեցիկ քույրը սիրահարվում է վրեն: Ինչ ասել կուզի՝ հարգն ու պատիվն էլ հետն ավելանում է:

5

Էս ժամանակ մի վագր է լուս ընկնում էս երկրում ու սար, սափ է գցում ժողովրդի վրա: Ո՞վ կսպանի վագրին, ո՞վ չի սպանիլ: Իհարկե Քաջ Նազարը կսպանի: Էլ ո՞վ սիրտ կանի վագրի դեմ գնա: Ամենքն էլ Նազարի երեսին են մտիկ տալի: վերևը մի աստված, ներքևը մի քաջ Նազար:

Վագրի անունը լսելուն պես Նազարը վախից դուրս է վազում, ուզում է փախչի ետ գնա իրենց տունը, իսկ կանգնածները կարծում են թե վազում էր, որ գնա վագրին սպանի: Նշանածը բռնում է կանգնեցնում, թե՛ ո՞ւր ես վազում էրպես առանց զենքի, զենք առ հետդ, էնպես գնա: Զենք է բերում տալիս իրեն, որ գնա, իր փառքի վրա մի քաջություն էլ ավելացնի: Նազարը զենքն առնում է, դուրս գնում: Գնում է անտառում մի ծառի բարձրանում, վրեն տապ անում, որ ոչ ինքը վագրին պատահի, ոչ վագրը իրեն: Ծառի վրա կուշ է գալի ու Նազարն ո՞վ կտա — հոգին դառել է կորկի հատ: Հակառակի նման անտեր վագրն էլ գալիս է հենց էս ծառի տակին պառկում: Նազարը որ վագրին չի տեսնում — լեղին ջուր է կտրում, աչքերը սևանում են, ձեռն ու ոտը թուլանում են ու, թրը՛մփ, ծառիցը ընկնում է գազանի վրա: Վագրը սարսափած տեղիցը վեր է թռչում, Նազարն էլ վախից կպչում է սրա մեջքին: Էսպես զարհուրած Նազարը մեջքին կպած էս խրտնած վագրը փախչում է, ոնց է փախչում, էլ սար ու ձոր, քար ու քոլ չի հարցնում:

Մարդիկ մին էլ տեսնում են, վա՛հ, Քաջ Նազարը վագրին նստած քշում է:

— Հա՛յ-հարա՛յ, եկե՛ք հա, եկե՛ք, Քաջ Նազարը վագրին ձի է շինել հեծել... տվե՛ք հա տվե՛ք... Սրտավորվում են, ամենքը մի կողմից հարալ-հրոցով, հոհոցով հարձակվում են՝ խանչալով, թրով, թվանքով, քարով, փետով տալիս են սպանում:

Նազարը որ ուշքի է գալի, լեզուն բացվում է:— Ափսո՛ս,— ասում է,— ընչի՞ սպանեցիք, զոռով մի ձի էի շինել նստել... էնքան պետք է քշի ո՞ր...

Լուրը գնում է հասնում է ամրոցը: Մարդ, կին, մեծ, պոստիկ՝ ժողովուրդը դուրս է թափում Նազարին ընդունելու: վրեն երգ են կապում ու երգում:

Էս աշխարհքում,
Մարդկանց շարքում
Ո՞վ կըլինի քեզ հավասար,
Ո՞վ Քաջ Նազար:

Ինչպես ուրուր,
Կայծակ ու հուր,
Բարձր բերդից թուր հասար,
Ո՞վ Քաջ Նազար:

Ահեղ վագրին
Արիք քո ձին,
Հեծար անցար դու սարեսար,
Ո՞վ Քաջ Նազար:

= Մեզ փրկեցիր,
Ազատեցիր,
Փառք ու պարծանք քեզ դարեդար,
Ո՞վ Քաջ Նազար:

Ու պսակեցին Քաջ Նազարին հսկաների գեղեցիկ քրոջ հետ. օխտն օր, օխտը գիշեր հարսանիք արին, երգերով գովեցին թագավորին ու թագուհուն:

— Լուսընկան նոր սարն ելավ,
էն ո՞ւմ երման էր:

— Լուսընկան նոր սարն ելավ,
էն Քաջ Նազարն էր:

— Արեգակ նոր շաղեշաղ,
էն ո՞ւմ նըման էր:

— Արեգակ նոր շաղեշաղ,
էն իր նազ-յարն էր:

Մեր թագավորն էր կարմիր,
Իրեն արևն էր կարմիր,
Թագն էր կարմիր, հա՛յ կարմիր,
Կապն էր կարմիր, հա՛յ կարմիր,
Գոտին կարմիր, հա՛յ կարմիր,
Սուրբ կարմիր, հա՛յ կարմիր,
Թագուհին կարմիր, հա՛յ կարմիր,
Կարմիր թագուհուն բարև,
Կարմիր թագավորին արև:

Շնորհավոր, շնորհավոր,
Քաջ նազարին շնորհավոր,
Իր նազ-յարին շնորհավոր,
Ողջ աշխարհին շնորհավոր:

6

Դու մի՛ ասիլ էս պղջկանը ուզած է լինում հարևան երկրի
թագավորը: Որ իմանում է իրեն չեն տվել՝ ուրիշի հետ են
ամուսնացրել՝ զորք է կապում, պատերազմով գալիս է օխտն
ախպոր վրա:

էս օխտը հսկան գնում են Քաջ նազարի մոտ, պատերազ-
մի լուրը հայտնում են, գլուխ են տալի առաջը կանգնում՝
հրաման են խնդրում:

Պատերազմի անունը որ լսում է՝ սարսափում է նազարը.
դուրս է պրծնում, որ փախչի ետ գնա իրենց գլուղը: Մարդիկ
կարծում են ուզում էր իսկույն դուրս վազել հարձակվել թըշ-
նամու բանակի վրա: Առաջն են ընկնում, բռնում են, խընդ-
րում, թե՛ ախր առանց զենքի ու զրահի մենակ ո՞ւր ես գնում,
ի՞նչ ես անում, գլխիցդ ձեռք ես վերցրել, ի՞նչ է:

Բերում են զենք ու զրահ են տալի, կնիկն էլ եղբայրնե-
րին խնդրում է, որ չթողնեն նազարին իր քաջությունից տար-
ված մենակ հարձակվի թշնամու զորքի վրա: Եվ լուրը գնում
տարածվում է զորքի ու ժողովրդի մեջ, լրտեսների միջոցով:

էլ հասնում է թշնամուն, թե՛ Քաջ նազարը մենակ առանց զեն-
քի թռչում էր դեպի պատերազմի դաշտը, հազիվ են կարո-
ղացել զսպել ու շրջապատած բերում են...

Պատերազմի դաշտում մի ամեհի նժույգ ձի են բերում
նազարին նստեցնում վրեն: Ոգևորված զորքն էլ հետը վեր է
կենում ահագին աղմուկով,— կեցցե՛ Քաջըն նազա՛ր... մա՛հ
թշնամո՛ւն...

Նազարի տակի նժույգը, որ տեսնում է վրեն ինչ անպետ-
քի միսն է նստած՝ խրխնջում է, գլուխն առնում ու թռչում
առաջ, ուղիղ դեպի թշնամու բանակը: Զորքերը կարծում են
Քաջ նազարը հարձակվեց, ուռռա՛ են կանչում ու իրենք էլ
ետևից հարձակվում ամենայն սաստկությամբ: Նազարը որ
տեսնում է չի կարողանում իր ձիու գլուխը պահի, քիչ է մնում
վեր ընկնի, ձեռը պցում է, ուզում է մի ծառից փաթաթվի,
դու մի՛ ասիլ ծառը փտած է, մի գերանաչափ ձյուղը պոկ է
գալիս մնում ձեռին: Թշնամու զորքերը, որ առաջուց համ-
բավը լսել էին ու ահը սրտներումն էր, էս էլ որ իրենց աչքով
տեսնում են՝ էլ փորներումը սիրտ չի մնում. երես են շուռ
տալիս,— փա՛խի, որ փա՛խի, թե մարդ ես գլուխդ պըր-
ծացրու, որ Քաջ նազարը ծառերն արմատահան անելով գա-
լիս է...

էդ օրը թշնամուց ինչքան կոտորվում է, կոտորվում, մնա-
ցածները թուրները դնում են Քաջ նազարի ոտի տակին,
հայտնում են իրենց հպատակությունն ու հնազանդությունը:

Ու պատերազմի ահեղ դաշտից Քաջ նազարը հսկաների
ամբողջ է վերադառնում: Ժողովուրդը հաղթական կամարներ
է կապում, աննկարագրելի ոգևորությամբ, ուռաներով և կեց-
ցեներով, երգով ու երաժշտություներով, աղջիկներով ու ծա-
ղիկներով, պատգամավորություներով ու ճառերով առաջն
է դուրս գալիս, էնպես մի փառք ու պատիվ, որ նազարը
մնացել էր ապշած շըշկված:

էնպես առքով-փառքով էլ բերում հրատարակում են իրենց
թագավոր ու բազմեցնում են թագավորի թախտին: Քաջ նա-
զարը դառնում է թագավոր, էն հսկաներից ամեն մեկին էլ
մի պաշտոն է տալիս: Մին էլ տեսնում է աշխարհքը իր բռան
մեջ:

Ասում են միևնույն էսօր էլ դեռ ապրում ու թագավորում է

Քաջ Նազարը: Ու՛ երբ քաջութիւնից, խելքից, հանճարից մտոր խոսք են գցում՝ ծիծաղում է, ասում է.

Ի՛նչ քաջութիւն, ի՛նչ խելք, ի՛նչ հանճար. դատարկ բաներ են բոլորը: Բանը մարդու բախտն է: Բախտ ունե՛ս՝ քեֆ արա...

Եվ ասում են՝ մինչև էսօր էլ քեֆ է անում Քաջ Նազարը ու ծիծաղում է աշխարհքի վրա:

1912

ԿԻԿՈՍԻ ՄՍԸԸ

Մի աղքատ մարդ ու կնիկ են լինում, ունենում են երեք աղջիկ:

Մի օր հերը աշխատելիս է լինում, ծարավում է, մեծ աղ-ջրկանը ջուրն է ղրկում: Էս աղջիկը կուծն առնում է գնում աղբյուրը: Աղբրի գլխին մի բարձր ծառ է լինում: Էս ծառը որ տեսնում է՝ իրեն-իրեն միտք է առնում.

— Հիմի որ ես մարդի գնամ ու մի որդի ունենամ, ահա՛նքն էլ դնենք Կիկոս. Կիկոսը ցա էս ծառին բարձրանա ու վեր ընկնի, քարովը դիպչի մեռնի...

— Վա՛յ, Կիկոս ջան, վա՛յ...

Տեղնուտեղը ծառի տակին նստում է՝ սկսում է սուգ ածել.

Գընացի մարդի,
Ունեցա որդի,
Գըղակը պոպոզ,
Անունը Կիկոս.
Վեր ելավ ծառին,
Ցած ընկավ քարին...
Վա՛յ Կիկոս ջան,
Վա՛յ որդի ջան...

Մերն սպասում է սպասում, տեսնում է չեկավ, միջին աղջկանն է ղրկում: Ասում է.— Գնա՛ մի տե՛ս, քույրդ ընչի՛ ուշացավ:

Միջնեկ աղջիկն է գնում:

Մեծ քույրը սրան որ հեռվից տեսնում է՝ ձենն ավելի է բարձրացնում:

— Արի՛, արի՛, անբախտ մորքուր, տես քո Կիկոսն ինչ եղավ:

— Ի՛նչ Կիկոս:

— Բա չես ասիլ՝

Գընացի մարդի,
Ունեցա որդի,
Գըղակը պոպոզ,
Անունը Կիկոս.
Վեր ելավ ծառին,
Ցած ընկավ քարին...
Վա՛յ Կիկոս ջան,
Վա՛յ որդի ջան...

— Վա՛յ, Կիկոս ջան, վա՛յ,— գոռում է միջնեկ քույրը, նստում է մեծ քրոջ կողքին ու սկսում են միասին սուգ անել:

Մերն սպասում է, սպասում, տեսնում է չեկան, պստիկ աղջկանն է ղրկում: Ասում է.

— Աղջի՛, մի գնա տես քույրերդ ի՛նչ եղան: Գնացին, ես չեկան:

Հիմի պստիկ աղջիկն է գնում: Գնում է տեսնում՝ երկու քույրերն էլ աղբրի գլխին նստած լաց են լինում:

— Քա՛, ընչի՛ եք լաց ըլում:

Մեծ քույրը թե՛ բա չես ասիլ՝

Գընացի մարդի,
Ունեցա որդի,
Գըղակը պոպոզ,
Անունը Կիկոս.
Վեր ելավ ծառին,
Ցած ընկավ քարին...
Վա՛յ Կիկոս ջան,
Վա՛յ որդի ջան...

— Վա՛յ քու մորքուրին, Կիկոս ջան, վա՛յ,— սա էլ է գլխին տալիս ու մյուսների կողքին նստում, ձեն-ձենի տալիս:

Մերն սպասում է, սպասում, տեսնում է աղջիկները չեկան, ինքն է գնում:

Հեռվից իրենց մորը տեսնում են թե չէ՝ երեք աղջիկն էլ կանչում են.

— Արի՛, արի՛, անբախտ տատի, տե՛ս թոռանդ գլուխն ի՞նչ է եկել:

— Ի՞նչ թոռ, ա՛յ աղջկերք, ի՞նչ է պատահել:
Մեծ աղջիկը թե՛ բա շես ասիլ, ա՛յ մեր՝

Գրնացի մարդի,
Ունեցա որդի,
Գրգալը պոպոզ,
Անունը Կիկոս.
Վեր ելավ ծառին,
Ցած ընկավ քարին...
Վա՛յ Կիկոս ջան,
Վա՛յ որդի ջան...

— Վա՛յ թոռանան քու տատի աչքերը, Կիկոս ջան.— մերն էլ ծնկանը զարկում է, նստում է աղջիկների կողքին, սկսում է նրանց հետ սուգ անել:

Մարդը տեսնում է՝ կնիկն էլ գնաց աղջիկների Լուկից ու սա էլ շեկավ: Ասում է՝ մի գնամ տեսնեմ էս ինչ պատահեց, որ սրանք իրար ետևից գնացին մնացին աղբրումը:

Վեր է կենում գնում:

Կնիկն ու աղջկերքը հենց սրա գլուխը հեռվից տեսնում են թե չէ, ձեն են տալի:

— Արի՛, արի՛, անբախտ պապի, արի տես քու Կիկոսի գլուխն ի՞նչ է եկել... վա՛յ քու Կիկոսին...

— Ի՞նչ Կիկոս, ի՞նչ եք ասում,— զարմանում է մարդը:
Մեծ աղջիկը թե՛ բա շես ասիլ, ա՛յ հեր՝

Գրնացի մարդի,
Ունեցա որդի,
Գրգալը պոպոզ,
Անունը Կիկոս.
Վեր ելավ ծառին,
Ցած ընկավ քարին...
Վա՛յ Կիկոս ջան,
Վա՛յ որդի ջան...

— Վա՛յ, Կիկոս ջան,— ծնկներին տալիս են ու սուգ են անում մեր ու աղջիկերք:

Սրանց միջի խելքը հերն է լինում: Ասում է.

— Ա՛յ հիմարներ, ի՞նչ եք նստել էստեղ ու սուգ եք անում: Ինչքան էլ սուգ անեք, ինչքան էլ լաց ըլեք, հո Կիկոսն էլ կենդանանալու չի: Վեր կացեք, եկեք գնանք մեր տունը, մարդ կանչենք, ժամ ու պատարագ անենք, Կիկոսի քելխը տանք. լացով ի՞նչ պետք է անենք: Աշխարհքի կարգ է, ինչպես եկել է, էնպես էլ պետք է գնա:

Դու մի՛ ասիլ՝ սրանց ունեցած-չունեցած շորստանին մի եզն է լինում, ունեցած փոշին էլ մի քթոց ալյուր:

Գալիս են էս եզը մորթում, էս մի քթոց ալյուրն էլ հաց թխում, ժողովուրդ են կանչում, ժամ ու պատարագ են անում, Կիկոսի քելխն ուտեցնում, որ նոր հանգստանում են:

1913

ՁԱՆՈՐԴ ՓԱՆՈՍԻ ՀԵՔԻԱԹԸ

Ժամանակով մի աղքատ մարդ է լինում, անունը Փանոս: Ինքը մի բարի մարդ է լինում, բայց ինչ գործ որ բռնում է՝ ձախ է գնում: Դրա համար էլ անունը դնում են Ձախորդ Փանոս: Ունեցած-չունեցածը մի լուծ եզն է լինում, մի սել ու մի կացին:

Մի օր եզնիքը սելում լծում է, կացինը առնում գնում անտառք փետի: Անտառում էս Փանոսը միտք է անում, թե՛ մի բան որ ծառը կտրելուց հտը մին էլ նեղություն պետք է քաշեմ՝ ահադին գերանը գետնից բարձրացնեմ գցեմ սելի մեջը, ավելի լավ է՝ հենց սելը լծած բերեմ ծառի տակին կանգնեցնեմ, որ ծառը կտրեմ թե չէ, ընկնի մեջը:

Ասածն արած է:

Եզներով սելը բերում է մի մեծ ծառի ներքև կանգնեցնում, ինքը անցնում վերի կողմը, կացինը քաշում — թրը՛խկ հաթրը՛խկ: Շատ է քաշում, թե քիչ, էդ էլ ինքը կիմանա, ծառը ճոճալով գալիս է զարկում, տակովն անում սելը շարդում, եզներն էլ հետը: Փանոսը մնում է ապշած կանգնած: Ի՞նչ պետք է անի: Կացինը վերցնում է ու ծոծրակը բորելով ճամփա է ընկնում դեպի տուն:

Ճամփին մի լճի ափով անց կենալիս է լինում: Տեսնում է մեջը վայրի բաղեր են լողում: Ասում է՝ գլուխը քարը, շեղավ շեղավ, արի գոնե մի բաղ սպանեմ, տանեմ տամ կրնկանս: Ասում է ու կացինը պտըտում, շարտում դեպի բաղերը, որ մինն սպանի. բաղերը ճղճղալով ցրվում են, փախչում, որը հղեգնուտն է մտնում, որը թռչում գնում, կացինն էլ ընկնում է լճի խոր տեղը, տակն անում, կորչում: Փանոսը մնում է լճի ափին կանգնած միտք անելիս: Ի՞նչ անի, ի՞նչ շանի: Շորերը հանում է դնում լճի ափին, ինքը մտնում մեջը, որ կացինը հանի: Գնում է, գնում, քանի առաջ է գնում, շուրն էնքան խորանում է, տեսնում է կարող է խեղդվել, ետ է դառնում, դուրս գալի:

Դու մի՛ ասիլ՝ Փանոսը որ լիճն է մտնում ու խորը գնում, էդ ժամանակ լճափով մի անցկենող է լինում, տեսնում է էստեղ թափած շորեր կան, հղեգնուտի մեջ խորը գնացած Փանոսին էլ շի նկատում, էս շորերը հավաքում է, առնում գնում:

Փանոսը լճից դուրս է գալի, տեսնում շոր չկա: Մնում է տկլոր կանգնած:

Միտք է անում. «Ի՞նչ անեմ, տեր աստված, էսպես տկլոր ո՞ւր գնամ»:

Սպասում է մինչև մութն ընկնի: Մթան հետ վեր է կենում. գնում գլուղը: Որ գլուղին մոտենում է, ասում է՝ էսպես տկլոր որ գնամ մեր տունը — տանըցիք ի՞նչ կասեն: Արի գնամ ախպորիցս շոր առնեմ հագնեմ՝ էնպես գնամ կնկանս մոտ:

Ճամփեն ծռում է դեպի ախպոր տունը:

Դու՛ մի ասիլ՝ էդ գիշեր էլ ախպոր մոտ մեծարք կա, քեֆի էլ էն տաք ժամանակն է: Դուռը ծերպ է անում, տեսնի ով կա, ով չկա. հյուրերից մինը կարծում է, թե շունն է, ձեռի կըրծած ոսկորը շարտում է դեպի դուռը, ոսկորը դիպչում է աչքին, աչքը հանում:

Փանոսը ցավից վայ-վայ անելով հտ է դառնում, շներն էս ձենի վրա վեր են կենում, տեսնում են, օհո՛, մթնումը հրես մի տկլոր օքմին, ու շորս կողմից վրա են տալիս: Շների հաչոցի վրա մարդիկ դուրս են թափվում, տեսնում են՝ մի տկլոր մարդ փախած գնում է, շները հտեկից: Առանց երկար

ու բարակ մտածելու վճռում են, որ կա թե չկա՝ սա սատանա է:

Բավական տեղ զըշրդու տալով, հայհոյելով, հարայ-հրոցով ընկնում են հտեկից, հալածում, տանում գցում անտառները: Շներն էլ հտեկիցը մի ճուռը պոկում են, ու էսպես տրվելու, աչքը հանած, կաղին տալով՝ խեղճ Փանոսը գնում է կորչում:

Մյուս օրը գլուղում տարածվում է, թե «հապա շեք պսիլ՝ Փանոսը կորել է: Գնացել է անտառը փետի ու հտ շի եկել»: Գեղահավան հավաքվում են գնում. գնում են անտառը ման գալի, սեղն ու եղները գտնում են ծառի տակին շարդված — ինքը չկա:

Դեռ Փանոս, դեն Փանոս. հարց ու փորձով հաղուստն էլ գտնում են մեկի մոտ:

— Ա՛յ մարդ, էս հագուստը ո՞րտեղից է ընկել քեզ մոտ:

— Թե՛ ախպեր, էս հագուստը էսպես մի լճի ափին վերածած էր, հավաքեցի բերի:

Գնում են լճի շորս կողմը պտըտում, կանչում՝ «Փանո՛ս, Փանո՛ս», Փանոսը չկա:

վճռում են, որ Փանոսը խեղդվել է:

Գալիս են ժամ ու պատարագ են անում, քելիսը տալիս: Կնիկն էլ մի քիչ սուգ է անում, Փանոսին գովում, ափսոսում, հետո մի ուրիշ մարդ է ուզում, հետը պսակվում, գնում:

ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Աղջիկը պատմում է ծերին, թե ինչպես է ինքը մոլորվել անտառում, ու խնդրում է, որ տեղ տա գիշերը մնալու: Մերունին դիմում է իր կենդանիներին:

— Միրուն հավիկ, իմ լավիկ,
Չալ ու նախշուն իմ կովիկ,
Եվ դու, աքլոր փահլեան,
Ի՞նչ եք ասում դուք սրբան:

ԱՆՏԱՌԻ ՏՆԱԿԸ

Մի խոր անտառի բերանում մի խրճիթ է լինում: Էն խրճիթում կնկա ու երեք աղջիկների հետ ապրելիս է լինում մի աղքատ փայտահատ:

Մի առավոտ, գործի գնալիս, կնկանն ասում է.— Ա՛յ կնիկ, էսօր բանս մինչև կեսօր շեմ վերջացնիլ: մեր մեծ աղջրկա հետ ինձ համար ճաշ կուղարկես անտառը: Ես էլ հետս մի տոպրակ կորեկ կվերցնեմ, շաղ տալով կերթամ, որ էն նշանովը գա ու ճամփեն շկորցնի:

Ճաշ է դառնում թե չէ՝ մեծ աղջիկը կերակուրն առնում է, ճամփա ընկնում: Բայց ծտերը, արտուտները, սարեկներն ու գեղձանիկները շաղ տված կորեկն արդեն վեր քաղած են լինում, ու աղջիկը չի կարողանում հոր հետքը գտնի: Գնում է, գնում, մինչ արևը մեր է մտնում ու մութը վրա է հասնում անտառում: Մառերը շրշում են խավարում, բուերը կանչում, կռնչում, ու աղջիկը սկսում է վախենալ:

Մին էլ տեսնում է՝ հեռվում, ծառերի արանքից մի կրակ է փայլվում:

— Էնտեղ երևի մարդիկ են ապրում, գնամ նրանց մոտ մնամ էս գիշեր,— մտածում է աղջիկն ու գնում էն կրակի վրա:

Գնում է հասնում մի տնակի, դուռը ծեծում է:

— Ո՛վ ես, ներս արի,— կանչում է ներսից մի ձայն:

Աղջիկը ներս է մտնում, տեսնում է՝ հրես նստած մի ալևոր մարդ, գլուխը կախ արած, սիպտակ միրուքն ալիքաձև իջնում է մինչև գետին: Իսկ էն կողմը մի շալ կով, մի հավ ու մի աքլոր:

Կենդանիները միասին պատասխանում են.— Լա՛վ:— Էն ժամանակ ծերունին աղջկանն ասում է.

— Համեցե՛ք, մեր աչքի վրա, սիրուն աղջիկ, մեր դուռը բաց է, տունը լիքը: Համեցե՛ք, մոտեցիր օջախին, կերակուր շինի մեզ համար էլ, քեզ համար էլ:

Աղջիկը մտնում է խոհանոց և, ճիշտ որ, ամեն բան գտնում է առատ-առատ: Մի լավ ընթրիք է պատրաստում, բերում է ծերունու առաջ լիքը սեղան է բաց անում, ինքն էլ նրա հետ նստում, ուտում, խմում, կշտանում: Որ կշտանում է պրծնում,— բա ես հոգնած եմ,— ասում է,— հիմի ո՞րտեղ բնեմ:— էստեղ կովը, հավն ու աքլորը պատասխանում են.

— Ողջ դրա հետ դու կերար
Ու խրճիթի, ինչ որ կար,
Մըտիկ լարի բսկի մեզ.
Գրեա, քրեի ուր կուգես:

Էն ժամանակ ծերունին ասում է.

— Բարձրացի, սանդուղքի գլխին մի սենյակ կա: Էն սենյակում երկու անկողին կա. անկողինները պատրաստի, ես էլ կգամ, կքնեմք:

Աղջիկը վերև է բարձրանում, անկողինները պցում, ու էլ ծերունուն չի սպասում, ինքը պառկում է քնում: Մի քիչ հետո ծերունին գալիս է, մոմի լուսով նայում է աղջկանը՝ ու գլուխը ծած տալի: Գիշերվա մի ժամանակ, երբ տեսնում է խորը քնած է, մահճակալի տակին մի գաղտնի դուռն է լինում, բաց է անում, աղջկանը թողնում ցած ու կրկին փակում:

Փայտահատը իրիկունը տուն է գալի, բարկանում է կնկա վրա, որ իրեն ամբողջ օրը սոված է թողել:

— Ես ի՞նչ անեմ,— պատասխանում է կինը,— ճաշը

տվել եմ մեր մեծ աղջկանը — դրկել, ինչպես երևում է, ճամփեն կորցրել է, չի գտել, ինքն էլ ետ չի եկել դեռ:

Փայտահատը մյուս օրն էլ առավոտյան վաղ վեր է կենում գնում անտառը: Պատվիրում է, որ էս անգամ միջնեկ աղջիկը տանի ճաշը:

— էսօր հետս ոսպ կվերցնեմ,— ասում է,— որ ճամփին շաղ տամ: Ոսպը կորեկից խոշոր է, աղջիկս հեշտ կտեսնի ու ճամփեն չի կորցնի:

Կեսօրին միջնեկ աղջիկը ճաշն առնում է ճամփա ընկնում: Գնում է, գնում. ոչ մի տեղ ոսպ չի գտնում: Դու մի ասիլ՝ դարձյալ թռչունները կերել են, մի հատ էլ չեն թռչել:

Աղջիկն անտառում թափառում է, թափառում, գիշերը ընկնում էլ նույն ծերունու մոտ, հաց ու քնելու տեղ է խընդրում: Ծերունին դիմում է կովին, հավին ու աքլորին.

— Սիրուն հավիկ, իմ լավիկ,
Չալ ու նախշուն իմ կովիկ,
Եվ դու, աքլոր փահլեան,
Ի՞նչ եք ասում դուք սըրան:

— Լա՛վ,— պատասխանում են կենդանիները: Միջնեկ քույրն էլ, մեծ քրոջ նման ընթրիք է պատրաստում, ծերի հետ ուտում, խմում-կշտանում. կենդանիների վրա ուշք էլ չի դարձնում: Երբ հարցնում է, թե՛ ես որտեղ պիտի քնեմ, կենդանիները պատասխանում են.

— Ողջ դրա հետ դու կերար,
Ու խըմեցիր, ինչ որ կար,
Մըտիկ շարիր խկի մեզ,
Գընա, քընի ուր կուզես:

Հենց նա էլ գնում է թե չէ, ետևից գնում է ծերունին գլուխը թափահարում ու դարձյալ թողնում է ներքև:

Երրորդ առավոտը փայտահատը կնկանն ասում է.

— էսօր մեր փոքրիկ աղջկա ձեռքով ղրկի ճաշը: Նա բարի է ու ականջով: Նա ճամփեն կգտնի, իր քույրերի նման չի, որ դես ու դեն ընկնի:

Մայրը չի ուզում երրորդ աղջկանն էլ անտառը ղրկի:

Լաց է լինում, ասում է — աչքիս սև ու սիպտակը սա է մնացել, ինչու ես ուզում սրան էլ կորցնես մեծերի նման:

— Դու հանգիստ կաց,— ասում է փայտահատը,— սա կորչիլ չի, սա էնպես խելոք է որ... ես էլ էսօր հետս սիսեռ կտանեմ ճամփին շաղ տալու: Սիսեռը ոսպ հո չի, նրանով անպատճառ ճամփեն կգտնի:

Բայց երբ աղջիկը ճաշն առած անտառն է մտնում, թռչուններն արդեն սիսեռը կերած են լինում: Աղջիկը մնում է տարակուսած. չի իմանում՝ ո՞ր կողմը գնա: Մտածում է, դարդ է անում, թե հիմի հայրը կտովի, մայրը լաց կլինի...

Ման է գալի ման, հորը չի գտնում: Երբ մութը ընկնում է, հեռվից տեսնում է անտառի տնակի լուսն ու գնում է էն լուսի վրա: Մտնում է ներս, տեղ է խնդրում, ու ալեհեր ծերունին դարձյալ դիմում է իր կենդանիներին.

— Սիրուն հավիկ, իմ լավիկ,
Չալ ու նախշուն իմ կովիկ,
Եվ դու, աքլոր փահլեան,
Ի՞նչ եք ասում դուք սըրան:

— Լա՛վ...— պատասխանում են կենդանիները: Էն ժամանակ աղջիկը մոտենում է, գուրգուրում հավին ու աքլորին, կովի ճակատը քորում: Ծերի պատվերով ընթրիք է պատրաստում, դնում սեղանին ու ասում.

— Ինչո՞ւ ես պետք է ուտեմ, էս բարի կենդանիները քաղցած նայեն:

Գնում է, կուտ բերում ածում հավի ու աքլորի առջև, կովի համար էլ մի խորոմ խոտ:

— Կերեք,— ասում է,— իմ սիրելիք, այ հիմի ջուր էլ կբերեմ: Գնում է մի դուլ ջուր էլ բերում դնում առաջները:

Ամենքին կշտացնում է, նոր ինքն է նստում ուտում, ինչ որ թողել էր ծերունին: Իսկ երբ քնելու ժամանակը գալիս է, ասում է.— Ժամանակը չի՞ արդյոք, որ ամենքս էլ հանգըստանանք...

— Սիրուն հավիկ, իմ լավիկ,
Չալ ու նախշուն իմ կովիկ,
Եվ դու, աքլոր փահլեան,
Ի՞նչ եք ասում դուք սըրան:

— Լա՛վ,— պատասխանում են կենդանիները.

— Մեզ հետ կերար դու միասին
Ու հոգացիր մեր մասին,
Բարի գիշեր քեզ, բարի,
Մուրազդ աստված կատարի:

էստեղ աղջիկը բարձրանում է վերև, անկողինները պատ-
րաստում: Մերունին գալիս է քնում: Ինքն էլ մյուս մահճա-
կալին է պառկում ու քուն մտնում հանգիստ:

Գիշերվա մի ժամանակ տունը հանկարծ դղրդում է, կար-
ծես քանդվում ու տակն ու վրա է լինում: Աղջիկը վախեցած
զարթնում է, բայց աղմուկն անցնում է, ինքն էլ քնում է նո-
րից:

Առավոտը աչքը բաց է անում — Ի՛նչ է տեսնում: Տես-
նում է պառկած մի մեծ, շքեղ զարդարած ու կահավորած
դահլիճում, շուրջը թավիշ ու ոսկի, հարավային փարթամ
բույսեր ու ծաղիկներ այրվում վառվում են առավոտյան արևի
ճառագայթների տակ: Տեսնում է, բայց աչքերին չի հավա-
տում, ասում է՝ երազի մեջ եմ երևի: Էսպես մտածելիս ներս
են մտնում երեք ճոխ հագնված ծառաներ, խոնարհ գլուխ են
տալի ու հարցնում.

— Ի՛նչ կհրամայեք, տիրուհի:

— Լա՛վ, Լա՛վ, գնացեք,— պատասխանում է քնաթաթա
աղջիկը,— հիմի վեր կկենամ, ծերունու համար կերակուր
կպատրաստեմ, կովին, հավին ու աքլորին կհոգամ:

Կարծում է, թե ծերունին էլ արդեն վեր է կացել: Նայում
է նրա անկողնին, տեսնում է՝ ծերունին չկա, տեղը պառկած
է մի օտար ջահել ու գեղեցիկ երիտասարդ...

Ով ահա երիտասարդը աչքերը բաց է անում ու էսպես
խոսում զարմացած աղջկա հետ.

— Լսի, սիրուն աղջիկ: Ես էս երկրի թագավորի որդին եմ:
Չար վճուկը կախարդել էր ինձ ու դատապարտել, որ ես ծերի
կերպարանքով պարբի անտառում, ոչ ոք էլ չլինեի ինձ հետ,
բացի իմ երեք ծառաները, նրանք էլ կովի, հավի ու աքլորի
կերպարանքով: Ով էդպես պետք է մնայինք, մինչև հայտնվեի
էն բարի աղջիկը, էն քնքույշ սիրտը, որ ոչ միայն մարդկանց,
այլև կենդանիներին լինեի սիրող ու կարեկից...

էն աղջիկը դու եղար:

Քու շնորհիվ էս գիշեր — կես գիշերին, մենք ամենքս
ազատվեցինք կախարդանքից ու իմ պալատը, որ դարձել էր
անտառի մի հին տնակ, նորից դարձավ առաջվան պալատը:
Ու կանչում է թագավորազնը իր ծառաներին, որ գնան
աղջկա ծնողներին բերեն հարսանիքին:

— Բայց ո՞րտեղ են իմ քույրերը,— հարցնում է աղջիկը:

— Նրանց ես փակել եմ ներքնահարկում,— պատասխա-
նում է երիտասարդը:— Էգուց կուղարկեմ անտառը, էնտեղ
ածխարարի մոտ ծառայեն ու էնքան մնան, մինչև որ դառ-
նան ավելի բարի ու սովորեն մտածել կենդանիների մասին:

ՈՍԿԻ ՔԱՂԱՔԸ

(Հնդկական եեփաք)

1

Ժուկով-ժամանակով Հնդկաստանի Բենարես քաղաքում
տիրելիս է լինում Ուփանա թագավորը: Օրերից մի օր մեռնում
է նրա սիրելի կինը: Դժբախտ թագավորը չի կարողանում
մխիթարվի ոչ մի բանով, իրեն որսորդության է տալի: Մի
անգամ էլ, երբ որսի է դուրս գալի, անտառում մի գեղեցիկ
փոքրիկ աղջիկ է գտնում: Ուրախանում, աշխարհքով մին է
լինում, առնում տուն է բերում, որդեգրում, անունը դնում
Քանաքարա:

2

Մեծանում է Քանաքարան, դառնում է տխուր թագավորի
միակ մխիթարանքը: Երբ հասնում է ամուսնության ժամա-
նակը, թագավորը հրավիրում հավաքում է իր երկրի երի-
տասարդ արքայազուհիներին ու իշխանազուհիներին, որ նրանց
միջից ընտրություն անի Քանաքարան: Բայց աղջիկը դուրս
չի գալի իր սենյակից:

— Հայրիկ,— ասում է,— գիշերս մորս հոգին երազ եկավ
ինձ: Ասավ. Քանաքարա, շատ շատերը կխնդրեն քու ձեռքը,
չխաբվես ոչ գեղեցկության, ոչ քաջության, ոչ հարստության,
որովհետև անբախտ կլինես, որին էլ ընտրես քեզ ամուսին,

ընտրի միայն նրան, ով իր կյանքում գոնե մի անգամ եղած կլինի Ոսկի քաղաքում:

— Շատ լավ, աղջիկս, — ասում է բարի ծերունին. — Իմաստուն են երագները, ու մորդ հոգին քու երջանկութեան համար է խոսում: Ես էդպես էլ կհայտնեմ հավաքված փեսացուներին, ինչպես ազդել է երազը ու ինչպես քու սիրան է ուզում: Նրանք աշխարհք տեսած մարդիկ են և անշուշտ նրանց մեջ կգտնվեն էնպեսները, որ իրենց կյանքում գոնե մի անգամ եղած են Ոսկի քաղաքում:

Էսպես էլ հայտնում է թագավորը հավաքված արքայազուններին ու իշխանազուհիներին: Երբ Ոսկի քաղաքի անունը լսում են, ամենքը նայում են իրար երեսի ու զարմանքով վեր են քաշում ուսերը:

— Էդպես քաղաք մենք չենք էլ լսել մեր օրում, ուր թե տեսել...

Նստում են ձիանքը ու իրար ետևից հեռանում, ցրվում իրենց աշխարհքները:

3

Բենարեսում մի երիտասարդ է լինում Դիվանա անունով: Մի շտալ, զվարճասեր երիտասարդ է լինում Դիվանան: Իր կարողությունը խնշույթներում ու քեֆերում վատնած, դատարկ, ձանձրացած կյանքից ու աշխարհքից: Հենց որ թագավորի աղջկա որոշումը լսում է, մտածում է. — Այ քեզ լավ դեպք՝ աշխարհքում մի քիչ էլ զվարճանալու, միանգամից և կհարստանաս, և գեղեցիկ կին կունենաս: Եվ ի՞նչպես ոչ ոքի մտքով չի անցել գնա ասի՝ տեսել է Ոսկի քաղաքը ու ամուսնանա հետը:

Վեր է կենում, շիտակ գնում Ռեքանա թագավորի պալատը:

— Հայտնեցեք շքնաղ Քանաքարային, որ ես, երիտասարդ Դիվանաս, եղել եմ Ոսկի քաղաքում:

Ամբողջ պալատը թնդում է ցնծությունից. վերջապես Բիավ սպասած հերոսը:

— Ներս համեցեք, — խնդրում են դրանիկները ու ներս են տանում երիտասարդին գեղեցիկ Քանաքարայի մոտ: Քա-

նաքարան խնդրում է նրան, որ պատմի, թե ինչ բան է Ոսկի քաղաքը: Ու Դիվանան սկսում է իր սուտ պատմությունը.

— Ոսկի քաղաքը... էլ մի՛ ասի, տիրուհի, թե ինչ զարմանալի բան է էդ Ոսկի քաղաքը, որ ես ընկա մեջը... Առևտրական գործերով անցնում էի աշխարհից աշխարհ, հազար ու մի աշխարհ ընկա, հազար ու մի քաղաք տեսա՝ հազար ու մի հրաշալիքներով լիքը... Մի անգամ էլ, մի աշխարհքում, որի անունը լեզվիս ծերին է և հիմի կասեմ որտեղ որ է, տեսնեմ հեռվում մի ահագին տարածություն վառվում է արևի տակ, ինչպես մի հսկայական հրդեհ:

— Էս ի՞նչ հրաշք է, — հարցնում եմ ընկերներիս:

— Ոսկի քաղաքն է, — ասում են ինձ:

— Ծճմարիտ որ Ոսկի քաղաք... Մոտենում ենք, ի՞նչ տեսնենք՝ տները ոսկի, ծառերը ոսկի, փողոցները ոսկի... Մարդիկ էլ ոչ աշխատում են, ոչ շարշարվում են, նստած ուտում-խմում են...

— Դուրս արեք էս անաճառ՝ ստախոսին, — բարկացած կանչում է Քանաքարուն: Վզին առավ դուրս են անում երիտասարդ Դիվանային և պալատը նորից ընկղմվում է տրիսթյան մեջ...

4

Բայց էն օրվանից, ինչ երիտասարդ Դիվանան տեսնում է գեղեցիկ Քանաքարային, սիրահարվում, փոխվում, դառնում է բոլորովին ուրիշ մարդ: Քունը փախչում է նրա աչքերից, գիշեր-ցերեկ միայն էն է մտածում, որ գնա՛, գնա՛, գնա՛, գտնի Ոսկի քաղաքը, ուր ուզում է լինի, ու գա պատմի Քանաքարային: Թողնում է տուն ու տեղ, հերն ու մեր, գլուխը փեշն է դնում՝ գնում — ո՞րտեղ ես, Ոսկի քաղաք, քեզ եմ գալի: Գնում է, գնում, ամեն պատահողի հարցուփորձ է անում, ոչով չի էլ լսել Ոսկի քաղաքի անունը, ուր մնաց թե տեղն ասեր:

5

Մի օր էլ Դիվանան հոգնած, տխուր անց է կենում մի խոր անտառով: Տեսնում է մի ծառի վրա նստած մի մեծ ար-

ծիվ: Նետն ու աղեղը պատրաստում է, որ զարկի, մին էլ աստծու հրամանով արծիվը լեզու է առնում, ասում.

— Ինչո՞ւ ես ինձ սպանում, ով բարի մարդ. առանց էն էլ վիրավորված եմ ես: Որսկանի նետը մտել է թևի տակը, անտանելի ցավ է տալի ու արյունաքամ է անում ինձ: Եթե գթաս՝ նետը հանես ու առողջացնես ինձ, ես քեզ էն լավու-թյունը կանեմ, ինչ որ միայն արծիվը կարող է անել:

Ջարմանում է երիտասարդ Դիվանան, թե ինչպես է ան-լեզու հավթը խոսում մարդկային լեզվով, ապա ուշաբերվելով մոտ է գնում, ծառիցը վեր է բերում վիրավոր արծվին, նետը հանում է թևի տակից ու տանում անտառում մի խրճիթ, սկը-սում է բժշկել:

Արծիվը առողջանում է ու դիմում է Դիվանային.

— Ես խոսք տվի, թե քեզ էն լավությունը կանեմ, ինչ որ միայն արծիվը կարող է անել: Խոսք եմ տվել ու խոսքս — խոսք է, պետք է կատարեմ՝ ինչ էլ որ սիրտդ ուզի, լեզուդ ասի: Ասա տեսնեմ՝ ի՞նչ ես ուզում:

Ու նստում է երիտասարդը, պատմում արծվին իր պատ-մությունը, աղաչում, որ իրեն տանի Ոսկի քաղաքը:

— Դժար բան ուզեցիր. բայց արծվի համար չի դժարը: Դու միայն ամուր կաց իմ մեջքին, դեռ ճրագները չվառած քեզ վեր կբերեմ Ոսկի քաղաքում, — ասում է արծիվը ու վեր թռցնում երիտասարդին:

Բաց է անում իր հսկայական թևերը, բարձրանում է մինչև ամպերը, սլանում հեռո՞ւ դեպի արևուտ: Երկյուղից ու արագությունից գրեթե շնչասպառ է լինում, ուշքից գնում է Դիվանան: Մին էլ էնտեղ է ուշքի գալի, որ արծիվը ծղրը-տում է.

— Ահա Ոսկի քաղաքը, — ու իջեցնում է գետին:

6

Աչքը բաց է անում Դիվանան: Առջևը, կանաչ այգիների մեջ թաղված, տարածվում է մի քաղաք: Կապույտ գետը ոլորվելով անցնում է նրա միջից: Հեռվից շատ ծանոթ քա-ղաքների նման մի քաղաք և էն էլ փոքրիկ քաղաք: Առաջ է գնում: Չորս կողմը բարելից այգիներ, զմրուխտ կանաչ,

Քաղաքագունի ծաղիկների Օդը լիքն է թարմությունով ու բուրմունքով, թռչունների՝ ծլվլոցով ու ջրերի կարկաշով, և նրանց հետ միախառնվելով հնչում են մարգերում ու այգի-ներում աշխատողների երգերը.

Ա՛խ, ի՞նչ լին է աշխարհն ազատ
էս կյանքի համար, ամենքի համար.
Ի՞նչքան լիքն է, ի՞նչքան առատ
էս կյանքի համար, ամենքի համար:

Ա՛խ, ի՞նչ լավն է աշխատանքը,
Առողջ ձեռքով, խաղաղ հոգով,
Ի՞նչ անուշ է հոսում կյանքը
լիքը սիրով, ծաղկով, երգով:

«Երջանիկ մարդիկ», մտածում է Դիվանան ու դիմում է նրանց.

— Ասացեք, աղաչում եմ, ով երջանիկ մարդիկ, ի՞նչ է էս քաղաքի անունը:

— Ոսկի քաղաքն է սա, բարի օտարական:

— Իսկ դուք ծառաներ եք, որ բանում եք ձեր տերերի այգիներում, թե՞...

— Մենք տեր ու ծառա չգիտենք:

— Իսկ ձեզ ո՞վ է կառավարում:

— Գոհար թագուհին:

— Շատ զորեղ թագուհի է երևի:

— Այո՞, նա գիտի երջանկացնելու գաղտնիքը:

— Արդյոք կարելի՞ է նրան տեսնել:

— Նրա դուռը բաց է ամենքի առջև, իսկ օտարականնե-րին միշտ նրա մոտ են տանում, և քեզ էլ կհրավիրեն ան-շուշտ:

7

Ճշմարիտ որ, ներս է մտնում քաղաքը թե չէ, Դիվանա-յին խնդրում են Գոհար թագուհու ապարանքը: Ապարանքում երբ կերակրվում է, կազդուրվում ու հանգստանում, հրավի-րում են թագուհու մոտ: Թագուհին մի շատ բարի ու ազնիվ կին է լինում և էնքան շքնաղ, որ հրեղեն-փարեղեն մի արա-
12 Հովհ. Թումանյան, ճատ. II 177

րած է թվում Դիվանային: Կախարդ որ կախարդ, հենց մի տեսնելով կախարդում է նրան:

— Ի՞նչն է քեզ բերել մեր աշխարհքը, երիտասարդ օտարական,— հարցմունք է անում Դիվանային.— վիճշտն է քեզ հալածում, թե՞ բախտն է առաջնորդում, և ինչո՞վ կարող ենք օգտակար լինել քեզ:

Թագուհու ազնվութունից ու հարցմունքից ոգևորված, Դիվանան սրտաբաց պատմում է մի առ մի, թե ով է ինքը, ինչ է եկել իր գլուխը ու ինչպես է հասել Ոսկի քաղաքը:

— Միշտ լավ է,— ասում է թագուհին,— երբ մարդիկ թողնում են իրենց վատ սովորություններն ու կրքերը, լցվում են բարձր կարոտով ու ձգտում են, գնում են հասնելու մի բարձր նպատակի: Թե կհասնեն,— լավ, թե չեն հասնի, դարձյալ միշտ լավ է ու լավ, որովհետև կյանքը ոչ այլ ինչ է, եթե ոչ ձգտումն ու ճանապարհ:

— Իսկ երջանկությունը...

— Աշխատել լավ ճանապարհի վրա ու գոհ լինել իր ունեցածով:

— Է՞դ է երջանկությունը:

— Ուրիշ ոչինչ:

— Իսկ ես կարծում էի՝ ձեր քաղաքը լիքն է սակո՞վ, և նրանից է, որ գոհ ու երջանիկ են ձեր մարդիկը,— հայտարարում է զարմացած Դիվանան:

— Ոսկի՞,— քմծիծաղ է տալի Գոհար թագուհին.— Ոսկին մետաղ է, որ հողից է դուրս գալի, երջանկությունը զգացմունք է, որ սրտից է բխում: Ի՞նչ կապ կա նրանց մեջ:

— Իսկ ես կարծում էի՝ ահռելի բանակ ունեք և զենքի ուժով եք պահպանում ձեր երկրի սքանչելի կարգն և խաղաղությունը,— շարունակում է Դիվանան:

— Օ՛, երբեք: Ահն ու սպանալիքը և խաղաղությունը իրար չեն տեսել և միասին չեն ապրում:

— Իսկ ես կարծում էի, թե դուք հազարավոր ոսկեգմբեթ տաճարներ ունեք, նրանց մեջ անգաղար աղոթում են ձեր հոգևոր հայրերը ու ասածու աչքը քաղցր են պահում ձեզ վրա:

— Ոչ, քարեկամ, մենք բնության ընդարձակություն մեզ

ենք պաշտում նրան և միջնորդներ չենք ճանաչում մեր հոգու ու նրա մեջ:

— Սքանչելի երկիր,— բացականչում է Դիվանան. հիշում է իր հայրենի երկիրն ու ընկնում է մտքի տունը:

Ապա թե տանում է կախարդ թագուհին, ման է ածում Դիվանային իր ապարանքի սրահները: Սրահներից մեկում Դիվանան տեսնում է պատիցը կախած մի աղջկա պատկեր:

— Վա՛հ, ի՛նչքան նման է,— բացականչում է ու մնում է առաջը քարացած:

— Ո՞ւմ նման է:

— Նրա...

— Ո՞վ է նա:

— Քանաքարան... Իմ Քանաքարան...

— Բայց ո՞վ է Քանաքարան:

— Քանաքարան, թագուհի, հենց էն աղջիկն է, որի մասին քեզ պատմեցի: Նրա համար եմ ես հեռացել իմ հայրենի երկրից, ընկել աշխարհից աշխարհ ու արծվի թևով հասել Ոսկի քաղաքը և կրկին պետք է վերադառնամ նրա մոտ:

— Ինչո՞ւ ես վերադառնում, ազնիվ Դիվանա,— խոսում է գեղեցիկ թագուհին:— Մի՛ վերադառնա, Դիվանա, մնա մեզ մոտ. ապրի մեզ հետ: Մի՞թե ավելի փարթամ չէ Ոսկի քաղաքը, մի՞թե հոյակապ չեն էս ապարանքները, մի՞թե հրաշալի չեն էս կախարդական այգիները...

— Ոչ, թագուհի, չեմ կարող:

— Մի՞թե գեղեցիկ չեմ ես...

— Ոչ, չի լինելու, որ չի լինելու:

Էն ժամանակ թագուհին պատվիրում է, նավ են պատրաստում ու ճանապարհ է դնում Դիվանային դեպի իր հայրենի երկիրը, դեպի Քանաքարան:

Ճանապարհին ծովում սաստիկ ալեկոծություն է վեր կենում, նավը գցում է մի կղզի: Մի կանաչ կղզի՛ լիքն ամեն բարիքով ու ամեն գեղեցկությունով: Բայց ամենից գեղեցիկը լինում է նրա ջահել տիրուհին, որ Դիվանային առաջար-

կում է ամուսնանա իր հետ, թագավորի էն ազատ ու առատ աշխարհում:

— Չեմ կարող, նազելի տիրուհի,— հրաժարվում է Դիվա... նան:— Ծա դարձյալ իմ ճանապարհն եմ շարունակելու, ինչ ուզում է լինի — դեպի իմ հայրենի տունը, դեպի իմ Քանաքարան, որ շեմ փոխելու ոչ ոքի և ոչ մի թագավորութայն հետ:

Էս ասելու հետ հենց աչքը ճպում է Դիվանան, մին էլ բաց է անում,— կղզում տիրուհու փոխարեն առաջը կանգնած է Գոհար թագուհին:

— Մի՛ վախենա, Դիվանա, ու մի՛ զարմանա,— անուշ ծպտալով խոսում է նա:— Տեսնո՞ւմ ես, Ոսկի քաղաքի թագուհին եմ ես — կախարդ Գոհարը: Իմ աղջիկն է Քանաքարան: Մանուկ հասակում Սև դեք նրան հափշտակեց ու տարավ: Էն օրվանից ամեն եկվորի ինձ մոտ էի հրավիրում, հարցուփորձ էի անում, պատկերն էի ցույց տալի, բայց ոչ ոք չէր իմանում, թե ուր է ընկել նա: Եվ ահա դու եկար նրա սիրով ոգևորված ու վերադառնում ես կրկին նրա մոտ: Քո սերը փորձելու համար էր, որ ես քեզ արի էն ամեն առաջարկներն իմ քաղաքում: Եվ դարձյալ քեզ փորձելու համար էր՝ ես առա ուրիշ կերպարանք, քեզ փորձելու համար ստեղծեցի էս փորձանքն ու էս վաչելութունները, որ լուկ երևույթ են միայն: Այժմ ես հավատում եմ քեզ, հավատում եմ քո սերին ու քո բարութայնը: Դու, հիրավի, այժմ երջանիկ կանես և իմ Քանաքարային և ամեն մարդու: Վերջապես այժմ դու գիտես երջանկության գաղտնիքը:

Էս խոսքի հետ մի փետուր է կրակում կախարդ թագուհին և, սև ամպի նման, հակնթավոր թևերը փռած հայտնվում է մի մեծ արծիվ:

— Տա՛ր,— բացականշում է կինը, ու ամեն բան չքանում է Դիվանայի աչքից, այնինչ օդի մեջ հնչում է երգը:

Գոհ աշխարհից, գոհ իր կյանքից,
Սիմուրդ հավթի զմրուխտ թևին,
Երջանկության հայրենիքից
Գնում է նա, գնում կրկին:

Գնում է նա վերածնված
Մաքուր սիրով, բարի սրտով,
Դեպի երկիրն իր նախահարց —
Ցավերի տուն, արցունքի ծով:

Տանում է նա ուժը ոգու,
Անվերջ սերը, անհատ բարին,
Երջանկությունն ամեն մարդու,
Խաղաղությունն օղջ աշխարհին:

9

Հոգու վրա է լինում Ուբանա թագավորը, որ արծիվը փղտում ու վեր է դնում Դիվանային իր հայրենի քաղաքի սահմանում: Քաղաքն է մտնում Դիվանան ու գնում ուղիղ թագավորի ապարանքը:

— Հայտնեցեք գեղեցիկ Քանաքարային, որ ես, երիտասարդ Դիվանաս, գալիս եմ Ոսկի քաղաքից:

Ընդունում են ներս: Դեմքը տեսնելուն պես Քանաքարան բարկանում է իր ծառաների վրա:

— Մի՞թե չեք ճանաչում սրան, որ ներս եք թողել նորից: Մի՞թե էն սրիկան չի սա, որ մի անգամ փորձեց ինձ խաբի և ահա նորից հանդգնում է, ուզում է հին խաղը խաղա: Դուրս արեք իսկույն:

— Սպասի, չքնաղ Քանաքարա,— խնդրում է Դիվանան:— Հիրավի, ես նա էի, բայց էլ նա չեմ: Ծա այժմ Ոսկի քաղաքից եմ գալի, քո կախարդ մոր՝ Գոհար թագուհու ապարանքիցն եմ վերադառնում, քո մանկության ննջարանումն եմ եղել, ուր դեռ կախ է արած քո սիրուն պատկերը... Ծա այժմ գիտեմ՝ ինչ բան է Ոսկի քաղաքը, ինչ է ոսկին և ինչ է երջանկությունը: Ծա այժմ գիտեմ երջանկության գաղտնիքը:— Եվ ամեն բան նստում պատմում է մի առ մի:

— Այժմ ես քոնն եմ,— բացականշում է Քանաքարան, և աշխարհով մին է լինում ուրախությունից: Ուբանա թագավորն էլ շնչի է գալի. օխտն օր, օխտը գիշեր ամբողջ երկիրը կատարում է նրանց հարսանիքը: Ամենքն ուրախանում են ու լիանում: Էս ուրախությունը տեսնելուց հետո ծեր թագավորն էլ կյանքն ու արևը բաշխում է ապրողներին ու մեռ-

նում: Նրա տեղը թագավոր է նստում Դիվանան ու սկսում է իր երկիրը կառավարել էն կարգով, ինչ որ տեսել էր Ոսկի քաղաքում: Ոսկի շկար նրա երկրում, բայց մարդիկ ապրում էին արդար աշխատանքով, գոհ ու երջանիկ իրենց ունեցածով: Եվ էն ժողովուրդը, որ մի ժամանակ տրտնջում էր, թե աշխարհքը նեղ է ու ցավով լիքը, հիմա երգում էր ամեն տեղ.

Ի՞նչքան լին է աշխարհն ազատ
էս կյանքի համար, ամենքի համար.
Ի՞նչքան լիքն է, ի՞նչքան առատ
էս կյանքի համար, ամենքի համար:

Ի՞նչ ազնիվ է աշխատանքը
Առողջ ձեռքով, խաղաղ հոգով,
Ի՞նչ թեթև է անցնում կյանքը
Լիքը սիրով, ուրախ երգով:

1909

ԳԵՂԵՑԿՈՒՉԻ ՎԱՍԻԼԻՍԱՆ

Լինում է շի լինում մի վաճառական. տասներկու տարվա պսակված է լինում, ունենում է միայն մի աղջիկ, անունը Գեղեցկուհի Վասիլիսա: Վասիլիսայի ութ տարին լրացած — մերը մեռնում է: Մեռնելիս աղջկանը կանչում է, ասում է.

— Լսի՛ր, Վասիլի՛սա, միտդ պահիր ու կատարիր իմ վերջին խոսքը: Ահա ես մեռնում եմ ու իմ մայրական օրհնաւթյան հետ էս տիկնիկն եմ թողնում քեզ: Միշտ մոտդ ու հետդ կպահես էս տիկնիկը, ոչ ոքի ցույց չես տալ, իսկ մի ցավ կամ վիշտ ունեցած ժամանակդ կերտկուր կաաս իրեն, կկերակրես ու խորհուրդ կհարցնես: Կուտի ու քեզ կասի, թե ինչ ճար ու հնար անես քո ցավին:

Ասում է, աղջկանը համբուրում ու մեռնում:

Կնոջ մահից հետո, ինչպես սովորութուն է, վաճառականը սուգ է պահում, հետո սկսում է մտածել, որ նորից ամուսնանա: Ու ամուսնանում է մի այրի կնոջ հետ: Էս այրին էլ ինքը հասակն առած կին է լինում, համարյա թե Վասիլիսային հասակակից էլ երկու աղջիկ է ունենում:

169

Վասիլիսան իրենց տեղի առաջին գեղեցկուհին է լինում: Խորթ մերն ու իր աղջիկները նախանձում են նրա գեղեցկության վրա ու շատ բանի դնելով շարշարում են, որ աշխատանքից նիհարի, արևից ու քամուց սևանա: Մի խոսքով՝ օր չեն տալի:

Վասիլիսան էս ամենը տանում է անտրտունջ ու, ընդհակառակը, օրն օրի վրա լցվում, լավանում է. այնինչ խորթ մերն ու իր աղջիկները իրենց ներսի շարությունից հավլում են, մաշվում ու նիհարում, թեև ամբողջ օրը ձեռները ծալած, աղջիկ-պարոնների նման տպնը նստած են լինում:

Ոչ ոք էլ չի իմանում սրա գաղտնիքը: Չեն իմանում, թե էս բոլորը Վասիլիսայի մոր թողած տիկնիկն է անում:

Թաժին կտային, Վասիլիսան ամենալավ պատառը կպահեր իր տիկնիկի համար: Իրիկունը, երբ ամենքը կպառկեին քնելու, նա իր նկուղում կփակվեր ու տիկնիկի հետ կխոսեր.

— Տիկնիկ ջան, ա՛հ, ա՛նուշ արա,
Իմ սև դարդին ա՛կանջ արա:
Նորս օջախումը ապրում եմ ես:
Միշտ անխնդում ու լուռ էսպես:
Իմ խորթ մերը խաթուն-խանում —
Ինձ աշխարհից դուրս է անում:
Ասա՛, հո՛գիս, էս ցավի դեժ
Ես ի՞նչ անեմ, ես ո՞նց անեմ:

Տիկնիկը կուտեր, խորհուրդներ կտար, կմխիթարեր, առավոտն էլ նրա բան ու գործն էլ ինքը կաներ: Վասիլիսան իրեն համար գինջ ու հանգիստ կնստեր ծառերի շվաքներում, ծաղիկ կքաղեր, ու մին էլ էն կտեսներ, որ իր մարգերը քաղահանած են, բանջարեղենը ջրած, ջուրը բերած, կրակն արած:

էսպես մի քանի տարի անց է կենում: Վասիլիսան մեծանում է, հասնում, դառնում հարսնացու: Առեն կողմից փեսացուները խնամախոսներ են ղրկում նրան ուզելու, իսկ խորթ մոր աղջիկներին հարցնող չէ: Չար կինը ափիլի է կատաղում, ու բալոր եկողներին մի բերան էն է պատասխանում, թե մեծերից առաջ փոքրին չեմ կարող մարդու տալ: Խնամախոսներին էսպես ճամփու է դնում ու բռնում Վասիլիսային ծեծում, ջարդում, ջիգրը նրանից է հանում:

183

Մի անգամ էլ էս վաճառականը առևտրական գործերով ուրիշ աշխարհ է գնում: Խորթ մերն ուրիշ տուն է փոխվում:

Իսկ էս նոր տան կողքին մի մութն անտառ է լինում, է՞ն անտառում էլ բնակվելիս է լինում մի Կախարդ պառավ, որ ոչ ոքի մոտ չի թողնում, մարդկանց էնպես է ուտում, ոնց որ հավի ճուտեր: Խորթ մերը ամեն մի դատարկ բանի համար շարունակ անտառն է ղրկում իր աչքի փուշ Վասիլիսային, թե ինչ է՝ Կախարդի ճանկն ընկնի: Բայց տիկնիկը միշտ Վասիլիսային ճամփա է սովորեցնում, չի թողնում Կախարդի որջին մոտենա, ու ամեն անգամ էլ Վասիլիսան ողջ առողջ վերադառնում է տուն:

էսպեսով հասնում են աշունքը: Մի աշունքվա իրիկուն մերը երեք աղջկա ձեռքն էլ գործ է տալի — էն էլ դաս: Մինը պետք է ժանյակ գործեր, մյուսը գուլպա աներ, Վասիլիսան էլ պետք է մաներ: էս Կախարդը տան բոլոր ճրագները հանգցնում է, մենակ մի մոմ է թողնում վառած ու ինքը պառկում է ընի:

Աղջիկները բանում են: Բանելու ժամանակ որ մոմի պատրույզն էրվում է, խորթ մոր աղջիկներից մինը մաղաշն (ունեկիքը) առնում է՝ իբրև թե մոմի քիթը կտրի, ուղղի: Ուղղելու փոխարեն, իբրև թե հանկարծ լույսը հանգցնում է: Դու մի՛ ասիլ՝ մերն է սովորեցրել, որ էդպես անի:

— Հիմի ի՞նչ անենք, — ասում են աղջիկները: — Լուս չկա, դասներս էլ կիսատ են:

— Ի՞նչ պետք է անենք, պետք է մինս ու մինս գնանք Կախարդ պառավից կրակ բերենք:

— Ինձ ի՞մ ձեռի ասեղներն էլ են լույս տալիս. կրակն ի՞նչ եմ անում. ինչ ուզում է լինի, ես չեմ գնա, — ասում է ժանյակ գործող աղջիկն ու տեղը պինդ նստում:

— Ծս էլ չեմ գնալ, — էն կողմից վրա է բերում մյուս քույրը, որ գուլպա էր գործում, — ինձ ի՞մ միլերի լույսն էլ է բավական:

— Դե՛ վեր կաց դու գնա, — միաձայն կանչում են երկուսն էլ ու դուրս են հրում Վասիլիսային: — Գնա՛ Կախարդ պառավից կրակ առ բեր:

Վասիլիսան վեր է կենում գնում իր նկուղը, պահած ընթրիքը գնում է տիկնիկի առաջն ու ասում.

— Տիկնիկ ջան, ա՛ռ, ա՛նուշ արա,
Իմ սև դարդին ա՛կանջ արա:
Ինձ ղրկում են կրակ բերեմ շար պառավից,
Չար պառավը կուտի հո ինձ...
Ասա՛, հո՛գիս, էս ցավի դեմ
Ծս ի՞նչ անեմ, ես ո՞նց անեմ:

Տիկնիկը որ ուտում է պրծնում, աչքերը ջուխտ մոմի պես վառվում են, ասում է.

— Մի՛ վախենար, Վասիլիսա. ուր որ ղրկում են — գնա՛, միայն թե ինձ հետդ պահիր: Ծս որ հետդ լինեմ, պառավը քեզ բան չի անիլ:

Վասիլիսան վեր է կենում, տիկնիկը գրպանն է դնում ու ճամփա ընկնում դեպի մութն անտառը: Գնում է, բայց ոչ մեռած է, ոչ կենդանի. հետը գնում է, հետը դողում: Մին էլ էն է տեսնում՝ մի սիպտակ ձիավոր ցուլաց ու անցավ. ինքը սիպտակ, հագինը սիպտակ, ձիու սարքը սիպտակ, ու սկսեց ծեգել:

Մի քիչ էլ գնում է, տեսնում՝ հիմի էլ մի կարմիր ձիավոր անցավ. ինքը կարմիր, հագինը կարմիր, տակինը կարմիր. էստեղ էլ արևը բացվեց...

Օր ու գիշեր գնում է Վասիլիսան, մին էլ մյուս օրվա իրիկունը դուրս է գալիս էն բացատը, որտեղ կանգնած է լինում Կախարդ պառավի խրճիթը: Խրճիթի շորս կողմի ցանկապատը մարդկային ոսկորներից և էստեղ-էնտեղ վրեն ցից հանած մարդկային գանգեր: Դարբասի սյունների փոխարեն մարդկային ոտներ, — փակիչի տեղը — ձեռներ, կողպեքի տեղակ — ատամները վրեն ծնոտներ:

Սարսափից մարում է Վասիլիսան ու տեղն ու տեղը քարանում մնում: Եվ ահա դարձյալ մի ձիավոր, ինքը սև, հագինը սև, տակինը սև. քշած գալիս է ու Կախարդի դռանը շփվում, տեղն ու տեղը անհետանում: Ու վրա է հասնում գիշերը: Բայց ցանկապատի վրա ցից հանած գանգերի աչքերը լույս են տալի մթնում, ու բացատն էնպես է լուսավորվում, ոնց որ թե ցերեկ լիներ: Վասիլիսան ահից ու սարսափից դողում է, բայց չի իմանում որ կողմը փախչի, մնում է մեխված:

Հանկարծ անտառից մի զարհուրելի աղմուկ է տարած-

վում. ծառերը ճոճուում են, խաշամը խշխշում է. դու մի՛
ասիլ՝ Կախարդ պառավն է, անտառից դուրս է գալիս:

Գալիս է սանդի մեջ մտած, թակով թակելով, ջարդելով
ու հալածելով, ավլով հետքը սրբելով: Գալիս է դռանը կանգ-
նում, շորս կողմի վրա հոտոտում ու իրեն-իրեն վրոշում.

— Թո՛ւհ, թո՛ւհ, թո՛ւհ, մարդ — մարդահոտ է գալիս...
ա՛վ կա էստեղ...

Վասիլիսան էն կողմից ահ ու դողով մոտենում է, խորը
գլուխ է տալիս ու ասում.

— Ես եմ, նա՛նի ջան, իմ խորթ մոր աղջիկներն ինձ
ղրկել են քեզ մոտ կրակի:

— Լա՛վ, լա՛վ, — ասում է կախարդը, — ճանաչում եմ ինչ
պտուղներ են: Դե ինձ մոտ կացի ու աշխատի: Որ ինձ մոտ
կենաս ու աշխատես, կրակ կտամ տանես նրանց համար, թե
չէ — քեզ էլ կուտեմ:

Հետո դառնում է իր դարբասին ու ճշում.

— Հե՛յ բացվեցեք, ամուր փակեր, ետ գնացե՛ք, լեն դար-
բասնե՛ր...

Դռները իսկույն բացվում են: Կախարդը սուլելով ներս է
մտնում, Վասիլիսան էլ ետևից, ու բոլորը նորից փակվում են:
Ներս են մտնում թե չէ, Կախարդ պառավը իր թախտի
վրա ձգվում է ու Վասիլիսային ասում.

— Հապա մի էստեղ բեր կրակի կողքին ինչ որ կա, սո-
ված եմ, ուզում եմ հաց ուտեմ:

Վասիլիսան ցանկապատի գանգերից մարխը վառում է
ու իրար ետևից բերում ուտելիքները պառավի առաջը շա-
րում: Ուտելիքն էնքան է լինում, որ տասը հոգի ուտեին —
հերթ կաներ ներքնատանից էլ գինի, արաղ է բերում, ու
պառավը նստում է ընթրիքի: Բոլորն ուտում է, խմում, Վա-
սիլիսային թերմացքից մի քիչ բան է թողնում ու վաշալով
պառկում է քնի: Քնելուց առաջ գլուխը վեր է քաշում, Վա-
սիլիսային ասում.

— Լա՛վ մտիկ արա հա՛, առավոտը որ ես կերթամ —
դուռը կարբես, խրճիթը կավլես, ճաշը կեփես, լվացքը կա-
նես, հետո կերթաս հորից մի թաղար ցորեն կհանես, կընտ-
րես, սև տրիճը կզոկես: Միայն թե տե՛ս, ամեն բան արած
լինի էնպես, ինչպես ասում եմ, թե չէ՝ քեզ կուտեմ:

Պատվիրում է ու քնում: Վասիլիսան պառավի թերմացքը
տանում դնում է իր տիկնիկի անոջև, հետն արտասուք է թա-
փում, հետն ասում.

— Կե՛ր, տի՛կնիկ ջան, ա՛նուշ արա,
Իմ սև դարդին ա՛կանջ արա:
Չար պառավը իմ ուժից վեր
Տվել է ինձ ծանրը դործեր.
Անեմ — էնքան ես ուժ չունեմ,
Չանեմ — կուտի, ես ի՞նչ անեմ...

Տիկնիկը պատասխանում է.

— Մի՛ վախենար, սիրուն Վասիլիսա: Հաց կե՛ր, աղո՛ղ
թի՛ր ու քնիր: Լուսը կգա՝ բարին հետը:

Առավոտը ծեղին զարթնում է Վասիլիսան, տեսնում է
պառավն արդեն վեր է կացել, բուսամուտից դուրս է նալում,
ու գանգերի աչքերը հետզհետե մարում են: Ահա ցուլաց և
սիպտակ ձիավորն ու լուսը բացվեց: Պառավը դուրս ելավ,
սուլեց. հայտնվեցին սանդը, թակն ու ոտնավելը, ցուլաց
կարմիր ձիավորը — արևը ծագեց: Ու պառավը մտավ սանդի
մեջ, թռավ գնաց, թակով թակելով, ջարդելով, փշրելով ու
քշելով, ոտնավելով հետքը սրբելով ու ավելելով:

Վասիլիսան էլ ետ մնում է մենակ: Ման է գալիս պառա-
վի տունը, աչք է ածում ամեն անկյուն ու մնում է զարմա-
ցած ամեն բանի լիության վրա: Ապա սկսում է միտք առնել,
թե ի՞նչպես անի, որ պառավի պատվերը կատարի: Մին էլ
տեսնում է ամեն բան կատարած, պատրաստ, ու տիկնիկը
ցորենի միջի վերջին տերեփուկներն է ջոկում:

— Քեզ միայն էն է մնում, որ կերակուրն եփես, Վա՛մի-
լիսա, — ասում է տիկնիկը ու մտնում գրպանը:

Իրիկնադեմին Վասիլիսան սեղանը բաց է անում ու սպա-
սում է պառավին: Սկսում է մթնաժողով: Դարբասի առջև սևին
է տալիս սև ձիավորն, ու ակնակիր մութը կոխում է գետինը:
Միայն գանգերի աչքերն են, որ վառվում են խավարում:

Ապա անտառն սկսում է ճոճուալ ու խաշամը խշխշալ. —
պառավը գալիս է: Վասիլիսան գուրս է գալի դեմը:

— Հը՛, ամեն բան պատրա՞ստ է, թե չէ:

— Պատրաստ է, նա՛նի ջան, արի՛ր քո աչքովը տես,—
պատասխանում է Վասիլիսան:

Պառավը ներս է մտնում, տեսնում ամեն բան պատրաստ
ու կատաղում է, որ բարկանալու բան չկա: Ասում է.

— Դե՛ ւա՛վ,— ու ճշում է.— իմ ընկերնե՛ր, իմ աչ ձեռ-
նե՛ր, եկեք, տարեք իմ աղունն աղացեք:

էս ձեռնի վրա երեք ջուխտ ձեռքեր են հայտնվում, ցորենն
առնում տանում:

Պառավն ուտում է կշտանում, սկսում է պառկել ու Վա-
սիլիսային նոր հրամաններ է տալիս. ասում է.

— էգուց էլ էն կանես, ինչ որ էսօր արել էիր, ու բացի
դրան՝ հորիցը մի թաղար խաշխաշի սերմը կհանես ու հողը
կջոկես հատիկ-հատիկ: Չեմ իմանում, թե ո՛վ է հողն ու
խաշխաշն իրար խառնել:

Ասում է, երեսը պատին անում ու խոմփացնում:

Վասիլիսան գնում է դարձյալ տիկնիկին ուտեցնում ու
հարցնում.

— Աղոթի՛ր ու քնիր, Վա՛սիլիսա,— պատասխանում է
տիկնիկը.— լուսը կգա՝ բարին հետը: Ամեն բան պատրաստ,
կլինի վաղը:

Առավոտն էլ ետ իր սանդն է մտնում պառավն ու գնում,
իսկ Վասիլիսան իր տիկնիկի հետ ամեն բան անում են վեր-
ջացնում: Պառավն իրիկունը վերադառնում է, մտիկ է տալիս
ու կանչում.

— Իմ ա՛ջ ձեռներ, իմ ընկերնե՛ր, եկեք, տարեք, խաշ-
խաշից յուղ հանեցեք ինձ համար:

Իսկույն հայտնվում են երեք ջուխտ ձեռներ, խաշխաշն
առնում են տանում:

Ապա պառավն ընթրիքի է նստում, իսկ Վասիլիսան լուռ
կանգնած է առաջին:

— Ինչո՞ւ չես խոսում,— հարցնում է Վախարդը,— էնպես
լուռ ու մունջ կանգնել ես, կարծես թե բերանումդ լեզու չկա:

— Չեմ համարձակվում խոսեմ, նա՛նի ջան,— պատաս-
խանում է Վասիլիսան.— իսկ եթե դու հրաման ես տալի խո-
սելու, մի բան կհարցնեմ:

— Հարցրո՛ւ, միայն թե իմացած եղիր — լավ չի, որ ամեն
բան իմանաս. շատ իմանաս — շուտ կպառավես:

— Ես էն էի ուզում քեզ հարցնեմ, նա՛նի ջան, ինչ որ
աչքով տեսել եմ: էստեղ գալիս ճամփին մի ձիավոր ընկավ
աչքովս — ինքը սիպտակ, հագինը սիպտակ, տակինը սիպ-
տակ. էն ո՞վ է էն ձիավորը, նա՛նի ջան:

— էն իմ պայծառ օրն է,— պատասխանում է Վախարդը:

— Հետո տեսա մի ուրիշ ձիավոր — ինքը կարմիր, հա-
գինը կարմիր, տակինը կարմիր. էն ո՞վ է:

— էն էլ իմ կարմիր արևն է:

— Իսկ էն սև ձիավորն ո՞վ է, որ քո դարբասի դռանը
վրա հասավ. ինքը սև, հագինը սև, տակինը սև:

— էն էլ իմ մութը գիշերն է: Երեքն էլ իմ հավատարիմ
ծառաններն են:

Վասիլիսան էստեղ հիշում է երեք ջուխտ ձեռներն ու
տում:

— էլ ինչո՞ւ չես բան հարցնում:

— էս էլ հերիք էր, նա՛նի ջան: Չէ՞ դու ինքդ ասիր՝ թե
որ շատ իմանամ, շուտ կպառավեմ:

— Կավ ես անում, որ էն ես հարցնում՝ ինչ որ դուրսն ես
տեսել, էն չես հարցնում, ինչ որ ներսն ես տեսել: Ես չեմ
սիրում, որ իմ տան աղբն ու կեղտը դուրս են հանում, ու
շատ հետաքրքիրներին ուտում եմ: Դե կա՛ց, հիմի էլ ես քեզ
հարցմունք անեմ: Դու էդ ի՛նչպես ես կարողանում անել ու
հասցնել էսքան գործը, որ ես քեզ հանձնարարում եմ:

— Իմ մոր օրհնանքն ինձ օգնում է, նա՛նի ջան,— պա-
տասխանում է Վասիլիսան:

— Ո՞նց թե... դու օրհնած ես, հա՛... Դե էստեղից դո՛ւրս
գնա կորի՞ դու, օրհնված աղջիկ: Օրհնվածներն ինձ պետք
չեն էստեղ:

Ասում է ու խրճիթից դուրս քաշում, դարբասից դուրս հրում,
անկապատի վրա վառվող աչքերով գանգերից մինն էլ մի
դի ծեք է անց կացնում ձեռք տալի, թե՛

— էս էլ քեզ կրակ՝ քո խորթ մոր ու իր աղջիկների հա-
մար: Չէ՞ որ նրանք քեզ կրակի են ղրկել ինձ մոտ, որ իրենց
համար կրակ տանես:

Ու վազում է Վասիլիսան, վազում է դեպի տուն: Ձեռքի
գանգը ճամփին լուս է տալի մինչև ծեղը ու ծեղին հանգում:
Մյուս օրն իրիկունը վերջապես տուն է հասնում: Որ հասնում

է, ուզում է ձեռքի գանգը դնել գցի, մտքումն ասում է՝ մինչև հիմի երևի արդեն կրակ կլինեն արած: Էս մտքի մեջ՝ մին էլ հանկարծ գանգից մի խուլ ձեն է գալի. «ինձ դեն մի՛ գցիլ, տար քո խորթ մոր մոտ»...

Տանն էլ մտիկ է տալիս, տեսնում է մութը, կրակ չի երեւում, գանգը հետը ներս է տանում:

Խորթ մերն ու իր աղջիկները Վասիլիսային որ տեսնում են՝ սկզբումը ուրախ հանդիպում են, պատմում են, թե էն օրվանից, ինչ դու գնացել ես՝ մեր տանը դեռ կրակ չի վառվել: Մենք շենք կարողացել կրակ անենք, հարևաններից էլ ինչքան բերել ենք, տուն ենք հասցրել թե չէ՝ հանգել է:

— Հիմի քո կրակը վառ կմնա,— ասում է խորթ մերը:

Գանգը ներս են տանում թե չէ՝ աչքերն էնպես են նայում խորթ մորն ու իր աղջիկներին, որ էրում են, կրակում: Ուզում են թաքչեն, բայց ուր որ թաքչում են, աչքերը ամեն տեղ հետևում ու նայում են նրանց, էրում, կրակում են նրանց:

Ու լուսադեմին խորթ մերն ու իր աղջիկներն արդեն էրվել, ածուխ էին կտրել. միայն Վասիլիսային էր, որ ոչինչ չէր եղել:

Առավոտը Վասիլիսան գանգը հողումը թաղում է, տան դուռն ամուր կողպում, ինքը գնում է քաղաք, մի անորդի պառավի խնդրում է, որ մոտը կենա, մինչև իրեն հերը օտարությունից գա: Պառավը սիրով ընդունում է իր աղջկա նման, Վասիլիսան էլ նրան սիրում, պատվում է իր մոր պես, մոտը ապրում է ու սպասում: Պարապությունից որ հոգնում է, մի օր էլ պառավին ասում է.

— Էսպես պարապ-սարապ նստելուց հոգնում եմ, նա՛նի ջան, ի՛նչ կլինի գնաս վուշ առնես բերես, մանած անեմ:— Պառավը գնում է, վուշ է առնում բերում: Վասիլիսան նստում է մանած անում, էնքան բարակ ու նուրբ, ոնց որ մազ: Մանածն անում է պրծնում, հիմի պետք է գործի: Բայց էն տեսակ տորք չի գտնվում, որ էն մանածին գա, ոչով էլ չի կարողանում շինի: Վասիլիսան էլ ետ իր տիկնիկին է խընդրում:

Տիկնիկն ասում է.

— Գնա՛ ինձ համար մի հին տորք բեր ու մի մաքուր, մին էլ մի քիչ ձիու ձար, ես քեզ համար ամեն բան շինեմ:

Վասիլիսան գնում է գտնում ինչ որ հարկավոր է, տալիս է տիկնիկին, ինքը քնում: Առավոտը վեր է կենում, տեսնում՝ տիկնիկը մի հիանալի տորք է շինել:

Վասիլիսան կտավը հինում է, նստում գործում ու ձմեռվա վերջը արդեն պատրաստ է լինում մի կտավ, որ ասեղի ծակովն անց կկենար: Գարունը կտավը ձերմակացնում են, ու Վասիլիսան պառավին ասում է.

— Նանի ջան, տար էս կտավը ծախի, փողը բեր — քեզ լինի:

Պառավը կտավին մտիկ է անում՝ մնում է բերանը բաց: Ասում է.

— Աղջիկ ջան, էս կտավը թագավորին վայել կտավ է: Արի տանեմ պարատը՝ տեսնեմ:

Էս կտավն առնում է պառավը, գնում թագավորի պալատի մոտերը պատվում: Թագավորը նկատում է, որ մի պառավ իր պալատի մոտերը պատվում է, ասում է.

— Ի՞նչ ես ուզում, ա՛յ նանի:

Պառավը թե՛ թագավորն ապրած կենա, ես քեզ վայել մի էն տեսակ ապրանք եմ բերել, որ ուզում եմ դու տեսնես:

Թագավորը հրամայում է պառավին ներս բերեն: Պառավին որ ներս են բերում, թագավորը կտավը տեսնում է՝ էստեղ էլ սրա բերանն է մնում բաց: Ասում է.

— Ի՞նչ է պրա գինը, ա՛յ նանի:

Թե՛ սրան գին չունի, թագավորն ապրած կենա, քեզ նվեր եմ բերել:

Թագավորը շնորհակալություն է անում, ինքն էլ իր կողմից պառավին է նվերներ տալիս ու արձակում:

Ուզում են էս կտավիցը թագավորի համար շապիկ կարեն. բերում են ձուլում, բայց էնպես կարող չեն գտնում, որ կարի: Ման ձե պառլիս ման, ավերը թագավորն էլ ետ էն պառավին է կանչում թե՛

— Ա՛յ նանի, ոնց որ էս կտավը գործել ես, էնպես էլ այնտեղ է կարես, թե չէ ուրիշ կարող չկա:

Պառավն ասում է.

— Թագավորն ապրած կենա, ոչ ես եմ մանել ու գործել

էս կտավը, ոչ էլ ճա կարող եմ կարել: Մի որդեգրուհի ունեմ տանը, էս նրա ձեռքի գործն է:

— Կավ, որդեգրուհիդ լինի: Տար տուր նրան, թո՛ղ նա կարի:

Պառավը վերադառնում է տուն, Վասիլիսային պատմում ինչ որ պատահել էր:

— Ես էլ գիտեի, որ էս գործը վերջը ինձ էր հասնելու,— ասում է Վասիլիսան: Փակվում է իր սենյակում ու սկսում է կարել: Գիշեր-ցերեկ է անում, կարում, պատրաստում, տալիս է պառավին, թե՛ դե տար տուր թագավորին:

Պառավը շապիկն առնում է տանում պալատը, տալիս թագավորին, իսկ Վասիլիսան երեսը լվանում է, գլուխը սանրում, հագնվում, զուգվում, նստում լուսամուտի առաջն ու սպասում: Սպասում է թե տեսնի ի՞նչ պետք է լինի:

Մին էլ էն է տեսնում, որ թագավորի մարդիկը գալիս են դեպի պառավի տունը: Գալիս են, ներս են մտնում ու հայտնում, թե ո՞վ է կարել թագավորի շապիկը, թագավորն ուզում է նրան տեսնի ու ինքը իր ձեռքով վարձատրի:

Վասիլիսան վեր է կենում, գնում թագավորի առաջին կանգնում: Թագավորի տեսնելն ու սիրահարվելը մին է լինում:

— Էլ ես քեզանից՝ ձեռը քաշողը չեմ, սիրուն Վասիլիսա,— ասում է թագավորը:— էսօրվանից դու իմն ես, ես էլ քոնը, էսօրվանից իմ կյանքի ընկերն ու իմ աշխարհքի թագուհին ես դու...

Ասում է, ձեռիցը բռնում, բարձրացնում, նստեցնում իր կողքին ու սկսվում է հարսանիքը: Վասիլիսայի հերն էլ վրա է հասնում, աղջկա բախտավորությունը տեսնում է՝ ուրախանում, աշխարհքովը մին է լինում, ու էն մնալն է, որ մնում է աղջկա մոտ: Իր մերացու պառավին էլ չի մոռանում Վասիլիսան. բերում է պալատ, պահում է իրեն մոտ, իսկ տիկնիկից չի բաժանվում մինչև մահը ու միշտ, ամեն տեղ պահում է իր գրպանում:

1913

Մի ամառվա շոգ օր էր. բայց շնայած անտանելի շոգին ու թեժ արևին, Բաղդադի փողոցները լիքն էին ժողովրդով: Հարուն Ալ Ռաշիդ թագավորը փառավոր հաղթությունից հետո պետք է վերադառնար իր մայրաքաղաքը: Աղքատ ժողովուրդը հավաքվել էր թամաշա անելու: Մարդիկ անհամբեր սպասում ու գովում էին թագավորին. փառաբանում էին նրա քաջությունը, խելքը, մեծահոգությունը, իմաստությունը, արդարադատությունը և շատ ուրիշ բարձր առաքինությունները: Էս ժամանակ բազմության միջից դուրս եկավ Սայիդ անունով մի աղքատ ու սկսեց ամենախիստ խոսքերով հայհոյել թագավորին:

Ամբոխը սաստիկ վրդովվեց. շորս կողմից վրա դառան, որ ոտնատակ տան Սայիդին, երբ մեջ մտավ մի անծանոթ: — Կանգնեցե՛ք,— ասավ,— ո՞վ ազնիվ մարդիկ, ու ձեր ուշադրության ականջները միառժամանակ կախ արեք իմ մտքի ճյուղերին:

Ամբոխը կանգ առավ:

— Ի՞նչ լավ է խոսում, է՛,— ձեն տվեց մինը.— խոսի՛ր, խոսի՛ր, լսում ենք:

— Դուք ուզում եք սրան ծեծե՞ք,— հարցրեց անծանոթը:

— Հա՛, անպատճառ պետք է ծեծենք:

— Բայց պետք է խելոք ծեծեք:

— Ի՞նչպես թե խելոք ծեծեք... էլ խելոք ծեծելը ո՞րն է...

Կողքերը կփշրենք — պրծավ գնաց:

— Չէ՛, էդպես չի. սպասեցեք ու ինձ ականջ արեք: Դուք ուզում եք սրա կողքերը փշրեք: Շատ լավ: Ասենք թե տեղն է ու արդարացի: Բայց կարող է պատահել, որ հարկավոր է սրա երկու կողքը փշրել, իսկ դուք միայն մի կողքը կփշրեք: Էդպեսով էլ կվարվեք և անարդար, և անխելք:

— Կավ ես ասում, ես իմ աստվածը,— ձեն տվին ամեն կողմից:— Հապա ի՞նչ անենք. ներե՞նք էն վիրավորանքը, որ սա հասցրել է մեր ամենախիմաստուն, ամենագերագույն, ամենահեռատես, ամենասրատես թագավորին, աշխարհքի կենսորոնին, աստծու սովերին, աստղերի աստղին, արեգակների արեգակին...

— Չէ, ես հո չեմ ասում՝ ներենք, ես ասում եմ՝ մի հարց-
նենք ու լսենք, թե ի՞նչ է ասում էս մարդը, ի՞նչպես է ար-
դարանում:

— Ես արդարանալու բան չունեմ,— խոսեց Սայիդը:—
Մեղավորներն են արդարանում. իսկ ես ոչ մի մեղք չեմ արել:
Ես միայն էն պետք է ասեմ, ինչ որ ինձ են արել: Եվ ասեմ
թե չէ, դուք ձեռքերով կծածկեք ձեր երեսները, բայց էդ էլ
չեք կարող անել, որովհետև ձեր երեսների ամոթից ու բար-
կության տաքությունից ձեր ձեռքերը կերվեն:

— Վա՛հ, էս ի՞նչ է պատահել: Ինչպես երևում է, շատ
հետաքրքրական բան պետք է լինի: Պատմի՛ր, պատմի՛ր,—
գոռացին ամեն կողմից:

— Ոչ թե հետաքրքրական, այլ մի ցավալի ու անիրավ
գործ,— պատասխանեց Սայիդը:— Ականջ արեք, պատմեմ՝
տեսեք:

«Ես մի գեղեցիկ, խելոք ու աշխատասեր կին ունեի ու
երկու կարմրաթշիկ, առողջ, աշխույժ երեխա: Ինձ հաճաք-
երջանիկ ապրում էի, ու իսկի մարգարեի խոստացած դրամ-
տըն էլ չէր պետք...»:

— Տեսե՛ք, տեսե՛ք՝ ինչեր է հաշում: Ա՛յ լիրք հայհոյիչ...
Չենց դրա համար էլ էդ բախտին ես արժանացել...— Ընդ-
հատեց մեկը:

— Բախտը որ կա՝ ծնվելիս է գրվում մարդու ճակատին.
Նրանից պրծնում չկա,— մեջ մտավ մի ուրիշը:

— Դե լավ, խելքներիդ զոռ մի՛ տաք, թո՛ղ արեք պատմի:
Ու Սայիդը շարունակեց.

«Քանի տարի էսպես ապրեցիք, ամեն մի տարին, ամեն
մի ամիսը, շաբաթը, օրը, ժամն ու վայրկյանը անցան լիքը
երջանկություններով: Բայց շար նախանձը, որ աշխարհքում
կործանում է ամեն բան — վերջը իմ երջանկությունն էլ կոր-
ծանեց: Իմ կողքին ապրում էր մեր քաղաքի դատավոր Իբրա-
հիմը: Նախանձեց իմ բախտին, կնոջս ու երեխաներիս խլեց
ինձանից: Կնոջս իրեն հարձ առավ, երեխաներիս ստրուկ տվեց
ուրիշներին: Ու էսպես նրանք ընկան կրկնակի գերություն մեջ:
Գերի մոր սիրտը իր երեխաների մոտ էր ու նրանց հետ էլ
կրկնակի գերի. երեխաների ուշքն ու միտքն էլ իրենց մոր
մոտ էր ու նրա հետ կրկնակի գերի...»:

— Ա՛յ էդ լավն էր: Ի՞նչ սիրուն ասիր — կրկնակի գերի...
«էսպես մնացի մենակ, ու կյանքը մահից էլ ավելի ան-
տանելի դարձավ ինձ համար:

Եվ ահա տեսնում եք, անտուն, անտեր թափառում եմ, ու
չեմ իմանում՝ աշխարհքում էլ ի՞նչ է մնում ինձ համար»:

Ամենքի սիրտը շարժվեց:

— Էլ երկար ու բարակ մտածելու ի՞նչ կա էստեղ. հրեա
թագավորը գալիս է, գնա գանգատ արա, էլի՛,— խորհուրդ
տվեց աղքատներից մինը:

— Գա՛նգատ արա... լավ ես ասում. բայց թագավորը
ըրջապատված կլինի իրեն մոտիկների ու մեծամեծների էն
տեսակ բազմությունով, որ արի ու մոտեցիր: Հա, կմոտենան
հարուստները, բայց ես ի՞նչպես մոտենամ: Դուք ասում եք՝
նա մեզ համար արեգակ է, բայց արեգակի նման էլ հեռու
է մեզանից:

— Վախիլ մի՛,— սիրտ տվին մյուս աղքատները.— մենք
կմոտենանք: Ինքն էլ էնպես բնավորություն չունի, ամենքին
մոտ է թողնում: Ոչ մի աղքատ դեռ նրա շեմքից ետ չի դա-
ռել առանց բարերարվելու:

Էս խոսքումն էին, որ ամբողջ տակնուվրա եղավ, ալե-
կոծվեց, ամեն մարդ տեղ բռնեց, ու ամենքի աչքերը դար-
ձան դեպի քաղաքի դարբասները տանող գլխավոր փողոցը:
Վերջապես երևաց արքայական թափորը: Ահա և Հարուն Ալ
Ռաշիդն ինքը իր ճոխ ու փայլուն շքախմբով: Թափորը կանգ
առավ գլխավոր հրապարակում, պալատի առջև: Թագավորը
ձիուց իջավ, բազմեց մեծամեծներով ըրջապատված ամպսո-
վանու տակ դրած գահին ու իրավունք տվեց, որ ցանկացող-
ները ներկայանան իրեն: Առաջ եկան նշանավոր հարուստնե-
րը. թանկագին նվերներ տվին: Առաջ եկան վաճառականնե-
րը — ծանրագնի շալեր, մետաքսի ու կերպասի կտորներ տվին:
Առաջ եկան արհեստավորները — սքանչելի նուրբ բանվածք-
ներ ու ձեռագործներ տվին: Թագավորն ուրախ ու գոհ ընդու-
նեց ամենքին ու ամեն մեկին մի որևէ քաղցր խոսք ասավ:
Մին էլ հանկարծ ամբոխի միջից մի պատառոտված, հյուծ-
ված աղքատ դուրս եկավ, գլխին մի ահագին քար, ու մո-
տեցավ թագավորին:

— Թագավորն ապրած կենա, ահա էս էլ իմ նվերը:

Քաղաքը դարձացավ, մթնեց ու խստութեամբ հարցրեց.

— էս ի՞նչ կնշանակի... էս ի՞նչ ես տալիս դու ինձ...

— Քաղաքըն ապրած կենա,— պատասխանեց աղքատը,— թագավորին նվեր տվողը պետք է իր սրտիցը տա... իմ սրտումն էլ էս քարն է ծանրացած, ես էլ էս եմ քեզ նվիրում:

Քաղաքը ժպտաց, ապա թե մտքի տունն ընկավ:

— Անունդ ի՞նչ է:

— Երբ դեռ երեխա էի՝ հերս ու մերս ինձ ասում էին Ջան Սայիդ: Երբ հասակ առա, հարևաններս ասում էին Աշխատասեր Սայիդ: Երբ ամուսնացա, կինս ասում էր լավ Սայիդ. ծանոթներս ու բարեկամներս ասում էին Ազնիվ Սայիդ. իսկ այժմ ասում են — խեղճ, անբախտ, Աղքատ Սայիդ:

— Ո՞րտեղ ես ապրում:

— Էնտեղ, որտեղ թուղուններն են թուղում, որտեղ քամին է սուլում:

— Գե, լա՛վ,— խոսեց Հարուն Ալ Ռաշիդ թագավորը.— իմ տերութեան մեջ ոչ մի շար գործ չի խուսափիլ իմ հայացքից՝ որ անդնդում կուզի թաքնվի: Գնա՛ աղոթիր աստծուն. ո՛վ գիտի, գուցե մի օր էլ գա, որ քեզ ասեն Բախտավոր Սայիդ:

Սայիդը գնաց:

էս դեպքի վրա մի քանի օր անց կացավ: Հարուն Ալ Ռաշիդը մանրամասն իմացավ Սայիդի պատմությունը, համոզվեց ճշմարտությանը ու կամեցավ դատել արդարն ու մեղավորը:

Մի օր էլ խնջույքի հրավիրեց, հավաքեց իր բոլոր մեծամեծներին: Մեծամեծներն եկան հավաքվեցին մարմար ավազաններով ու շատրվաններով լիքն այգիները, ծաղիկների մեջ, ծառերի տակին խալիչաների վրա բազմեցին, սկսեցին զալիան քաշել, ուտել, խմել, քեֆ ու զրույց անել:

Քեֆի թունդ ժամանակը թագավորը հրամայեց հրավիրեն իր հեքիաթախոսին, որ հայտնի էր իր շիտակ ու անկեղծ բնավորությամբ: Հեքիաթախոսն եկավ, բարև տվեց, բարև առավ, նստեց, սկսեց զալիան ծխել ու պատմություն անել:

— Աշխարհքում շատ գանձեր կան,— ասավ նա,— բայց ամենաթանկ գանձը լավ անունն է: Լավ անունով մարդը միա-

ժամանակ ապրում է հազար ու մի տեղ, հազար ու մի մարդու սրտում: Լավ անունով մարդը էնպես տեղեր է հասնում, որ չի կարող հասնել ոչ ձիով, ոչ ուղտով և ոչ ուրիշ միջոցով: Լավ անունով մարդը չի մեռնում: Նա մահից հետո էլ անտեսանելի ապրում է մեր միջում, ինչպես ոգի: Միշտ մեր միտն է գալիս, մեր սիրտն է հոսում իր գեղեցիկ հատկությունները: Լավ բան է լավ անունը:

Մի գանձ էլ կա — հարստությունն է:

Հարստությունով մարդ հազար ձեռն է ունենում, հազար ոտք, հազար լեզու և հազար ձևով կարող է հազար լավ գործ կատարել: Լավ բան է հարստությունը:

Մի գանձ էլ կա — էդ էլ խելքն է:

Խելքը մարդը գերմարդ է դառնում: Խելքով՝ տկարն ուժեղ է, աղքատը — հարուստ, վախկոտը — անհա: Նրանից է, որ անխելի շնչությունով ասած խոսքը որոտում է ու անցնում աշխարհքի մի ծերից մյուս ծերը: Լավ բան է խելքը:

Բայց մի գանձ էլ կա, որ լավ անունից էլ, հարստությունից էլ, խելքից էլ վեր է: Առանց նրան էս բոլորը համարյա թե սարսափելի ու կործանարար կլինեին մարդու համար: Առանց նրան աշխարհքը կթառամեր ու կամայանար: էս գանձը — խղճմտանքն է:

էս գանձը արդեն մեծ մարդիկն են ունենում, և սրա համար էլ նրանք, ինչ էլ որ ունենան, երջանիկ չեն լինում: Ինչքան հարստություն մտքովդ կանցնի, տուր նրանց, որ նրանք բաժանեն մարդկանց ու բարեբարեն, դարձյալ քիչ է նրանց համար: Իսկ ես ճանաչում էի մի աղքատի, որ երեք գանձ ուներ և իրեն համարում էր երջանիկ ու շարունակ փառաբանում էր աստծուն: Եվ հպարտությունը մտավ նրա սիրտը, թե ինքն էր ձեռք բերել էն երջանկությունը ու ոչ ոք էլ չէր կարող խլել իր ձեռքից: էս բանն իմացավ շար ոգին ու հասցրեց աստծուն: Աստված անիծեց շար ոգուն ու իրենից ետ մղեց, զոկեց էդ երջանիկ մարդու ապրած քաղաքի դատաժյուրի սիրտը: Դատավորը հանկարծ զգաց, որ իր ներսը մի նոր, անծանոթ ու թունավոր բան է շարժվում: Սրտի մեջ սկսեց եռալ մի շարունակ, ու միտքը մթնեց խավար մշուշից: Ինքն էլ լավ չիմացավ, թե ինչ էր պատահել իրեն, վեր կացավ դուրս եկավ որ հովին տա իրեն, ու երջանիկ աղքատի տան

մոտից անցնելիս՝ սկսեց նրան նախանձել: Բայց ի՞նչ էր աղքատի ունեցած-չունեցած գանձն ու երջանկութիւնը: Մի ջրհոր, երկու արմավենի ծառ: Զրհորից սառը ջուր էր խմում, իսկ երկու արմավենին ամբողջ տարին նրան քաղցր պտուղ էին տալիս ու հով ստվեր: Սառը ջուրը խմում էր, քաղցր պտուղն ուտում ու շվաքում նստում, փառաբանում աստծուն: Դատավորին շատ թվացին էս գանձերը աղքատի համար, վճռեց նրանից խլի, ու խլեց: Էն օրվանից աղքատը թափառում է դռնից դուռը. նրա հառաչանքից խավարում են աստղերը, նրա թափած արտասուքներից կարիճներ են ծնվում ու աշխարհքը լցվում:

Ամենքի սիրտն էլ խորը շարժվեց էս պատմութիւնից, ամենքն էլ զայրացան անիրավ դատավորի վրա, ամենքն էլ գռան, որ նա արժանի է խիստ պատժի:

— Իսկ դո՞ւ ինչ ես ասում, Իբրահիմ,— հարցրեց Հարուն Ալ Ռաշիդ թագավորը իր մեծամեծներից մեկին, Բաղդադի դատավորին:— Ի՞նչ պետք է անել հափշտակող դատավորին:

— Թագավորն ապրած կենա,— պատասխանեց Իբրահիմը,— էդ մի էն տեսակ ոճիր է, որին արժանի պատիժ ես գտնել չեմ կարողանում:

— Իբրահիմ,— գոչեց թագավորը,— էդ ոճրագործը դու ես: Դու ես աղքատ Սալիդից խլել նրա կինը, էդ երջանկութեան աղբյուրը մեր կյանքում: Դու ես խլել նրա զավակները, որ մարդկանց կյանքի քաղցր պտուղներն են ու իրենց ծնողներին շվաք են անում ծերութեան օրերում:

Իբրահիմը խոնարհվեց, գետին ընկավ ու խնդրեց, որ իրեն ների թագավորը:

— Ես չեմ քո դատավորը,— խոսեց Հարուն Ալ Ռաշիդը.— քո դատավորն այժմ նա է, ում որ թշվառացրիլ ես դու:

Ու հրամայեց ներս կանչեն Սալիդին:

— Սալիդ,— ասավ,— ահա քո ձեռքն եմ տալիս քո թշվառներն:

— Թագավորն ապրած կենա, իմ ձեռքն ես տալիս, ես ի՞նչ անեմ,— պատասխանեց Սալիդը:

— Հապա ի՞նչ ես ուզում:

— Ես դրանից բան չեմ ուզում: Թո՞ղ իմ կնոջն ու երեխաներին վերադարձնի, ես առաջվա նման երջանիկ կլինեմ: Էս մեծահոգութիւնը շարժեց թագավորին, նրա աչքերը լցվեցին արտասուքով: Բոլոր մեծամեծներն էլ սկսեցին արտասվել:

— Լավ, էդ քո դատաստանը,— դարձավ թագավորը Սալիդին.— այժմ իմ դատաստանը լսիր: Դո՞ւ, Իբրահիմ, քո կալվածքների շուրս բաժնից երեք բաժինը կտաս Սալիդին, դրա հետ էլ էն քարը, որ Սալիդն ինձ պարգև բերեց, էն քարի քաշովը մին ոսկի:

Թագավորի վճիռը վճիռ էր: Ինչ որ վճռեց՝ Իբրահիմը տվեց Սալիդին: Ու Սալիդը իր կնոջ ու երեխաների հետ միասին ստացավ ահագին հարստութիւն: Բայց հարստութիւնից չգոռոզացավ Սալիդը: Դարձյալ առաջվա նման համեստ շարժվեց էր վարում ու աշխատում էր առավոտից մինչև իրեկյանք էր վարում ու աշխատում էր առավոտից մինչև իրեկուն: Երբ ընկերները հարցնում էին, թե՞ ինչո՞ւ չես օգտվում քո հարստութիւնից ու փարթամ ապրում, ասում էր՝ հարստութիւնը փչացնում է մարդու սիրտը, խնջույքներն ու ճոխ ճաշերը հոգնեցնում, մաշում են մարդու զգացմունքները, իսկ ես ուզում եմ մնամ միշտ թարմ ու բարի:

Ու իր ամբողջ կարողութիւնը Սալիդը սպառեց, դրեց բարի գործերի վրա: Ուսումնարաններ բաց արավ, հիվանդանոցներ շինեց, ջրհորներ փորել տվեց անջուր անապատներում ու ամեն մի ջրհորի քարի վրա արձանագրել տվեց. «Մ՛վ մարդ, խմի՛ր ու հիշի՛ր նրանց, որոնք ծարավից տանջվում են աշխարհքում»:

Հարուն Ալ Ռաշիդ թագավորը Սալիդի նվիրած քարը Անգին քար անվանեց ու ամեն անգամ, դատաստան տեսնելիս, դնում էր սեղանին, իր առջևը, էնպես էր դատաստան տեսնում: Ավանդութիւնն ասում է, թե նրա նման էին վարվում նրա հաջորդները՝ արաբական մյուս թագավորները, մինչև թուրքերի գալը: Թուրքերի գալուց հետո անհետացավ կորավ էն անգին քարը, որ աշխարհքի հզորներին հիշեցնում էր արդարութիւնն ու խղճմտանքը:

Լինում է շի լինում մի աղքատ որբևայրի կին: Ապրելիս է լինում մի փոքրիկ տնակում: Տնակի առջև մի պարտեզ է ունենում, պարտեզի մեջ երկու վարդի թուփ, մինը սիպտակ վարդի, մյուսը՝ կարմիր: Էն վարդի թփերի նման էլ երկու փոքրիկ աղջիկ է ունենում. մեկի անունը Լուսերես, մյուսինը՝ Վարդերես: Երկուսն էլ էնքան էին լավն ու բարի, էնքան սրտով մաքուր ու աշխատասեր, որ կարծես թե հենց էն երկուսն էին էնպես, որ կային բովանդակ աշխարհքում: Միայն թե Լուսերեսն ավելի հանգիստ էր ու քնքույշ, իսկ Վարդերեսն ավելի կայտառ ու աշխույժ:

Վարդերեսը շատ էր սիրում հանդերում ու մարգերում թռչկոտել, ծաղիկ քաղել ու թռչուն բռնել, իսկ Լուսերեսը նստում էր տանը, տնտեսության մեջ օգնում էր մորը, կամ թե չէ, եթե գործ չկար, նրա համար գիրք էր կարդում: Երկու քույրն էլ էնքան էին իրար սիրում, որ հենց թե-թեի տված էին ման գալի, ու երբ Լուսերեսն ասում էր.

— Մենք երբեք չպետք է բաժանվենք իրարից, — Վարդերեսը պատասխանում էր.

— Երբեք, քանի կենդանի ենք: — Իսկ մերն ավելացնում էր.

— Մեկդ ինչ որ կունենաք՝ պետք է կիսեք մյուսիդ հետ: Երկուսով հաճախ գնում վազվզում էին անտառներում ու պտուղ էին քաղում. ու ոչ մի կենդանի վնաս չէր տալիս. ամենքը վստահ գալիս մոտենում էին նրանց: Նապաստակը հենց նրանց ձեռքից առնում որոճում էր կաղամբի թերթիկները, եղնիկն արածում էր նրանց կողքին, եղջերուն անհոգ ու զվարթ անցնում էր նրանց մոտից, իսկ թռչունները հանգիստ ունենրին թառած երգում էին, ինչպես կարող էին երգել և ինչ որ գիտեին: Եթե բան է, ուշանում էին անտառում ու գիշերը վրա էր հասնում, միասին պառկում էին մամուռի վրա ու քնում մինչև լուսաբաց: Իրենց մերն էլ գիտեր ու անհանգիստ չէր լինում:

Մի անգամ էլ, երբ անտառում գիշերում են ու լուսաբացին զարթնում են, տեսնում են կողքներին կանգնած ճերմակ ու փայլուն շորերով մի սիրուն երեխա: Էս երեխան վեր է

կենում, ժպտալով նրանց նայում ու, առանց մի խոսք ասելու, հեռանում, մտնում անտառի խորքն, անհետանում: Էստեղ երեխեքը մտիկ են տալիս՝ շորս կողմերը, տեսնում են, որ իրիկունը մթնով եկել են քնել մի անդունդի եզերքին ու եթե մթնումը մի երկու քայլ էլ արած լինեին, պետք է անդունդը լինեին գլորված: Գալիս են իրենց մորը պատմում: Մերն ասում է.

— Էս անպատճառ պահապան հրեշտակն ինքն է եղել, որ միշտ պահպանում է բարի երեխանց:

Լուսերեսն ու Վարդերեսն իրենց մոր տնակն էնպես իստակ ու մաքուր էին պահում, որ մտիկ անելիս մարդու դուր էր գալիս:

Ամառը գլխավորապես Վարդերեսն էր տան բանը շինում ու ամեն առավոտ, մոր զարթնելուց առաջ անկողնի կողքին մի փունջ ծաղիկ էր դնում, փնջի մեջ էլ երկու վարդ՝ մինը սիպտակ, մյուսը կարմիր: Ձմեռը Լուսերեսն էր կրակ անում ու պղինձը դնում կրակին: Պղինձն էլ էնպես մաքուր սրբած էր լինում, որ ոսկու նման պսպղում էր: Իրիկուններն էլ, երբ դուրսը ձյունը փաթիլ-փաթիլ բրդում էր, մերն ասում էր. — Լուսիկ ջան, գնա դռան փակը գցիր: — Հետո նստում էին բուխարու առջև: Մերը գիրք էր կարդում աղջիկների համար, իսկ աղջիկները լսում էին ու մանում: Կողքներին պառկած էր լինում իրենց գառը, ետևերը թառի վրա քնած սիպտակ աղավնին, գլուխը կոխած թեի տակը:

Մի իրիկուն էլ, երբ էսպես նստած են լինում, մինը դուռը ծեծում է: Մերն ասում է.

— Վարդուշ ջան, շուտ վեր կաց դուռը բաց արա. անօթեան ճամփորդ կլինի — դուռը ծեծում է:

Վարդերեսը գնում է դռան փակը ետ գցում, համոզված, որ դուռը ծեծողը մի խեղճ մարդ պետք է լինի. մին էլ ի՞նչ տեսնի — դռան ետևը կանգնած է մի ահագին արջ, որ դուռը բացվելուն պես ներս է կոխում իր հաստ գլուխը: Վարդերեսը վախից ճշում է ու ետ թռչում, գառն սկսում է մայել, աղավնին թևերն է թափահարում, իսկ Լուսերեսը մտնում է մոր մահճակալի ետևը: Այնինչ արջը լեզու է լինում ու խոսում: Ասում է. — Ինչո՞ւ եք վախենում. ինձանից մի՞ վախենաք,

ես ձեզ վնաս չեմ տալ: Քիչ էր մնում ցրտից սառչելի, եկա մի քիչ տաքանամ:

— Վա՛յ, խեղճ իմ արջ ախպեր,— բացականչում է մայրը:— Դե արի, արի կրակից մոտիկ պառկիր, միայն թե զգուշ կաց, բուրդդ չմրկի... Աղջկե՛րք, Վարդուշ ջան, Լուսիկ ջան, դուրս եկեք, եկեք էստեղ, արջ ախպերը ձեզ ձեռք չի տալ, արջ ախպերը բարի է:

Աղջիկները դուրս են գալիս, կամաց-կամաց մոտենում են արջին, գառն էլ, աղավնին էլ, ու շուտով ամեն աճ ու երկյուղ վերանում է մեջտեղից: Արջն էլ ասում է.

— Երեխեք ջան, թե կարաք՝ էս իմ բրդի ձյունը մի թափ տվեք:

Աղջիկները վազում են ավելը բերում՝ արջի բուրդը մաքուր սրբում են, ու արջը բավականությունից մռնչալով մեկնելով է կրակի առջև: Աղջկերքը ձեռաց ընտելանում են իրենց անձոռնի հյուրին ու սկսում են հետք հանաքներ անել: Բրդի հետ են խաղում, ականջներից են քաշում, մեջքին են կանգնում, հատակին դես ու դեն են գլորում, ճիպտով խփում են, իսկ եթե սկսում է վռչալ՝ ծիծաղից թուլանում են: Արջի իրեն քեֆն էլ է գալիս: Բայց երբ շատ են նեղացնում, վռչում է.

— Մի՛ տանջեք ինձ, մի՛ սպանեք, այ աղջկերք,

Ա՛յ Լուսերես, ա՛յ Վարդերես,

Ձեր սիրելի փեսան եմ ես:

Քնելու ժամանակը որ գալիս է ու աղջիկները գնում են քնեն, մերն արջին ասում է.

— Դե դու էլ օջախի առաջը պառկիր, արջ ախպեր, համ տաք կլինի տեղդ, համ քամուց պատսպար:

Օրը բացվում է թե չէ, արջը էլ ետ ձնի մեջ քարշ գալով գնում է դեպի անտառի խորքը: Էն օրվանից էս արջը սովորություն է շինում, ամեն իրիկուն միևնույն ժամին գալիս է սրանց մոտ: Պառկում է օջախի առջև ու թողնում է հետք խաղան, ինչքան կուզեն: Սրանք էլ էնպես են սովորում, որ իրիկունները, մինչև արջը տուն չի գալիս, դուռը փակում չեն:

Ձմեռն անց է կենում. գարունքն ընկնում է, երկիրը դալարում, ու մի օր էլ արջը Լուսերեսին ասում է.

— Դե հիմի արդեն ժամանակն է, որ ձեզանից հեռանամ. ամբողջ ամառը էլ ինձ չեք տեսնիլ:

— Ո՛ւր ես գնում, արջ ախպեր,— հարցնում է Լուսերեսը:

— Պետք է անտառը գնամ, իմ գանձերն ու հարստությունները շար թզուկներից պաշտպանեմ: Ձմեռը գետնի սառած ժամանակը նրանք անհետանում են իրենց մթին ալրերում, բայց արևը երկիրը տաքացնում է թե չէ՝ էդ գող անպիտանները լուս աշխարհք են դուրս գալիս ու՝ ինչ որ աչքները տեսնում է՝ էլ տիրոջն օգուտ չի անում, գողանում են տանում:

Արջից բաժանվելու համար շատ է տխրում Լուսերեսիկը, իսկ երբ դուռն առաջին բաց է անում որ գնա՝ հանկարծ արջն ընկնում է դռան փակին, բրդիցը մի փունջ մնում է փակի վրեն ու բրդի տակիցը ոսկու պես մի բան է պսպղում:— Երևի աչքիս թվաց,— մտածում է աղջիկն ու մտքիցը հանում է էս բանը: Արջն էլ շտապում է դեպի անտառն ու անհետանում է ծառերի հտերը:

Մի օր էլ մերն աղջիկներին անտառն է դրկում, որ գնան ցախ ու մախ հավաքեն բերեն: Գնում են աղջիկները, ման են գալիս ման, մին էլ տեսնում են անտառում ընկած մի ծառ, ու էս ծառի վրա, խոտերի միջին մի բան էս կողմն է թռչում, էն կողմն է թռչում. բայց ինչ բան է — գլխի շեն ընկնում: Մոտենում են, տեսնում են մի թզուկ, դեմքը պառավկոտած, միրուքն էլ սիպտակ ու երկա՛ր, երկար: Էն, որ ասում են՝ ինքը թիզ ու կես, միրուքը գազ ու կես, հենց էն ինքն է, որ կա: Միրքի ծերը մնացել է ծառի ճեղքում, դես ու դեն է ընկնում ու չի իմանում, թե ոնց հանի: Աղջկերանցը որ տեսնում է՝ արնոտ աչքերը վրաները շոտ է ու գոռում.

— Ի՞նչ եք տնկվել էդտեղ: Ձե՞ք կարող մոտ գալ ու օգնել:

— Էդ ի՞նչ է պատահել, գաճաճ քեռի,— հարցնում է Վարդերեսը:

— Ապո՛ւշ, անասո՛ւն, հարցնում է՝ ի՞նչ է պատահել... Ի՞նչ պետք է պատահեր. ուզում էի ծառը ճղեմ, մանր տաշեղներ անեմ մեր խոհանոցի համար, թե չէ մեծ փետերից էրվում են մեր կերակուրները. մենք հո էնքան շատ չենք ուտում, ինչքան դուք, էդ կոպիտ ու անկշտում խալխդ.—

սնայր զարկեցի, հանկարծ դուրս թռավ, ծառի ճեղքն էլ էնպես արագ փակվեց, որ վրա չհասցրի միրքիս ծերը միջիցը հանեմ: Միրքիս ծերը մնաց ծառի ճեղքի մեջն, ու ահա էսպես շարշարվում եմ, շեմ կարում հանեմ, իսկ դուք կանգնել եք, բերաններդ բաց եք արել ու հռհռում եք, ապուշնե՛ր, լպստածնե՛ր... Թո՛ւ, զահլես ինչպես է գնում...

Աղջիկները վրա են գալի, ուժ են անում, քաշում են, քաշում են, չեն կարողանում թզուկի միրուքը ծառի ճեղքիցը հանեն:

— Կացե՛ք, ես գնամ մարդիկ կանչեմ,— ասում է Վարդերեսը:

— Հիմարի գլուխ,— վրա է պրծնում թզուկը.— Ի՞նչ եմ անում մարդիկը: Գուք հերիք չե՞ք, որ զահլես գնա, դեռ ուրիշներին էլ կանչեցեք: Կարող ե՞ք — մի ուրիշ բան էլ հնարեցեք...

Լուսերեսն ասում է.

— Մի քիչ համբերիր, ես ճարը գտա:— Ասում է, գրպանից մկրատը հանում ու թզուկի միրքի ծերիցը կտրում: Թզուկն ազատվում է թե չէ, իսկույն շալակն է պցում իր ոսկով լիքը տոպրակը, որ ծառի փշակումը պահել էր, ու գնում է քթի տակին փնթփնթալով.

— Ա՛յ քեզ անտաշ խալիս... եկան էս փառավոր միրքիս ծերը կտրեցին թողին: Գետինը մտնեք դուք, գետինը...

էսպես մրթմրթալով տոպրակը շալակում է, առանց ետ մտիկ տալու գնում:

էս դեպքի վրա մի քանի ժամանակ անց է կենում, մի օր էլ աղջիկները գնում են ձուկը բռնելու: Գետափին մոտենում են, տեսնում են ծղրիդի նման մի բան էստեղ ետ ու առաջ է թռչկոտում, ու քիչ է մնում ջուրն ընկնի: Մոտ են վազում, տեսնում են իրենց ծանոթ թզուկը:

— էդ ի՞նչ ես անում էդտեղ, զաճաճ քեռի,— հարցնում է Վարդերեսը:

— Ապուշնե՛ր, չե՞ք տեսնում ինչ եմ անում... Չե՞ք տեսնում անիծած ձուկն ինձ ուզում է ջուրը քաշի...

Դու մի ասիլ՝ թզուկը գետափին նստած՝ կարթով ձուկը բռնելիս է լինում, հանկարծ քամին փչում է ու միրուքը փաթաթում կարթի թելին: Հենց էդ խառնված ժամանակը մի մեծ

ձուկն է ընկնում կարթի մեջն ու թզուկին զոռ է անում, քաշում է դեպի ներս: Սա գետափի թփերից ու խոտերից է կրպշում, բայց բան չի դառնում, ձուկը տանում է: Աղջիկները ժամանակին վրա են հասնում, իրեն պինդ բռնում են ու աշխատում են միրուքը թելից բաժանեն, չեն կարողանում, էնպես խճճված է լինում իրար: էլ ուրիշ ճար չի մնում, մկրատը հանում են դարձյալ միրքիցը կտրում, իրեն ազատում: Ազատվում է, տեսնում է միրքիցը էլի կտրել են՝ սկսում է վրաները ճղճղալ.

— Ա՛յ դուք անասուններ, էս մի՞թե կարգ է, հը՞: Գուք համարձակվեք իմ երեսն էսպես ալլանդակե՛լ... Հերիք չէր էն օրը միրքիս ծերը կտրեցիք, հիմի էլ ամենալավ մասը տարաք, հը՞... Ես հիմի ի՞նչպես մերոնց երեւամ... Ա՛յ գետինը մտնեք դուք, գետինը...

Վերցնում է իր մարգարտով լիքը տոպրակը, որ թաքցրել էր եղեգնուտում, ուսովն է ձգում ու անհայտանում մոտիկ քարի ետևը:

Սրանից մի քանի օր ետը մերն իր աղջիկներին մոտակա քաղաքն է ուղարկում՝ թել, ասեղ, մատնոց և ուրիշ էս տեսակ մանրուք առնելու: Մի քարքարոտ դաշտով անց կենալիս էս աղջիկները նկատում են, որ մի մեծ թռչուն օդում պտուտ եկավ, պտուտ եկավ ու նետի նման ներքև սլացավ, զարկեց մի քարի տակի: Թռչունի զարկելուն պես մի սրտաճմլիկ աղաղակ է բարձրանում, ու էս ձենի վրա աղջիկները վազում են, տեսնում են իրենց հին ծանոթ թզուկը. արծիվը ճանկել է, ուզում է տանի: Բարեսիրտ աղջիկները իսկույն բռնում են թզուկից ու կախ ընկնում, ու էնքան են արծիվի հետ էս կողմն, էն կողմն ընկնում, էնքան են կռիվ տալիս, մինչև որ արծիվը որսը թողնում է՝ թռչում գնում: Առաջին սարսափն անց է կենում թե չէ՝ էս թզուկը նորից իր ճղճղան ձենովը աղջիկներին վրա է պրծնում.

— էս ի՞նչ արիք. չէիք կարող ավելի քնքույշ ժած գալ, հը՞... բարակ շորերս պատառոտեցիք թողիք... անճոռնի անպիտաննե՛ր...

Ճղճղում է, անգին քարերով լիքը տոպրակը ուսը պցում ու անցնում քարերի ետևը, կորչում գնում իր քարանձավը: Աղջիկներն արդեն սովոր են լինում նրա ապերախտությանը,

շարունակում են իրենց ճամփեն, քաղաքում իրենց առուտուրն անում են ու ետ վերադառնում: Վերադարձին գալիս են դարձյալ պատահում հանդում մի տեղ նստած թզուկին: Տեսնում են մի խտակ տեղ իր տոպրակը շուռ է տվել, թափել, կիտել անգին քարերը, մտածելով, թե էնպես ուշ էլ անց կենող ու տեսնող չի լինի: Վերջալուսի շողքերն ընկել են փայլուն քարերի վրա, ու գույնզգույն քարերն էնպես են վառվում, շողշողում, հուրհուրատին տալիս, որ աղջիկները տեղները մարում են, մնում հայիլ-մայիլ կտրած՝ մտիկ անելիս:

— Ի՞նչ եք բերաններդ բաց արել կանգնել,— գոռում է թզուկը, ու նրա գորշ դեմքը փոխվում է ծիրանի գույնի: Ուզում է, ինչքան որ կարող էր, մի հայհոյի, մին էլ հանկարծ մի մոնչոց է լավում, ու անտառից մի արջ է դուրս վազում, հարձակվում վրեն: Սարսափահար թզուկը տեղիցը վեր է ցատկում, բայց մինչև վրա կհասցնեն մտնի իր խորշը՝ արջը բռնում է: Զարհուրած սկսում է աղաչել:

— Իմ սիրելի, իմ տեր արջուկ, առ, ահա քեզ լինեն իմ բոլոր գանձերը, միայն թե խնայիր ինձ: Մտիկ տուր, մի տես, թե ինչ շքեղ անգին քարեր են էստեղ թափված: Ինձ բաշխիր իմ կյանքը: Ի՞նչ օգուտ էս տանելու, եթե սպանես ինձ, էսպես մի փոքրիկ, վտիտ արարածի: Ատամիդ տակին իսկի չեմ էլ երևալ: Այ թե ուզում ես ուտես՝ էս անօրեն աղջիկներին կեր, հասկանում եմ. լորի պես գեր ու թխլիկ — անուշ պատառ են... սրանց կեր, քեզ անուշ լինի...

Արջը ականջ էլ չի դնում, թե ինչ է ասում թզուկը, ծանր թաթը ետ է տանում ու որ մի զարկ է հասցնում՝ թզուկս տեղն ու տեղը հանգչում է: Աղջիկները լեղապատառ սկսում են փախչել: Արջը ետևներից կանչում է.

— Լուսիկ, Վարդուշ, մի՛ վախենաք, ապառաջն՝ ք, ես էլ եմ ձեզ հետ գալիս:

Աղջիկները ճանաչում են, որ էս իրենց սիրելի արջի ձենն է, կանգնում են: Արջը մոտենում է նրանց, ու հանկարծ մորթին վրիցը ընկնում է, տակիցը դուրս է գալիս մի գեղեցիկ պատանի՝ ոտիցը գլուխ ոսկու մեջ կորած:

— Ես թագավորի տղա եմ,— ասում է նա:— էս անսիրտ թզուկը ինձ կախարդել, գազան էր շինել ու հափշտակել իմ բոլոր գանձերը: Եվ ես դատապարտված էի անտառներում

թափառելու մինչև սրա մահը: Ահա վերջապես սա առավ իրեն արժանի պատիժը, իսկ ես՝ իմ առաջվան պատկերը:

էստեղից գնում՝ առնում են անհուն գանձերը, որ դիզել էր թզուկը իր մթին քարանձավում: Ապա թե թագավորի տղեն ամուսնանում է Լուսերեսի հետ, իսկ եղբայրը՝ Վարդերեսի: Հետներն ասում են և աղջիկների պառավ մորը, դչում ետ իրենց աշխարհքը, ապրում են ուրախ ու երջանիկ: Բա սրանցից մեկի լուսամուտի տակ սիպտակ վարդի թուփն է ծաղկում, մյուսի լուսամուտի տակ՝ կարմիր վարդի թուփը:

1914

ԶԱՐՄԱՆԱԼԻ ԱՇՈՒՂՂ

Մի աշուղ է լինում: Օրերից մի օր էս աշուղը մենակ վեր է կենում գնում անտառը: Անտառում դես է մտածում, դեն է մտածում, մինչև որ մտածելու բանը հատնում է: Որ մտածելու բանը հատնում է՝ «Օ՛Ֆ, ասում է, ի՞նչ երկար ու ձանձրալի է ժամանակը էստեղ: Պետք է մի լավ ընկեր գտնեմ ինձ համար»...

Ասում է, շութակն ուսից վեր է բերում ու նվագում: Զութակի ձենը հնչում է անտառում: էս ձենի վրա անտառի խորքից վազեվազ դուրս է գալիս մի գել:

— Ա՛խ, գելը... — հառաչում է աշուղը:— Բայց ես սրան չէի ուզում... Փս գիլի հետ ի՞նչ անեմ...

Իսկ գելը՝ մոտ է գալիս ու սկսում է խոսել:

— էդ ի՞նչ լավ ես նվագում, վարպետ: Ի՞նչ կլինի ինձ էլ սովորեցնես:

— Սրա սովորեցնելն ինչ բան է որ,— պատասխանում է աշուղը:— Կսովորեցնեմ, միայն թե ինչ որ ասեմ, պետք է լսես:

— Աչքիս վրա,— խոսք է տալիս գելը:— էնպես լսեմ, ինչպես աշկերտը վարպետին կլսի:

— Դե որ էդպես է՝ ետևիցս արի:

Գնում են: Գնում են, գնում, տեսնում են ճանապարհին մի պառավ կաղնի, մեջը փուշ, ինքը ճղված:

— Գե հիմի լսի՛ր, տես ինչ եմ ասում,— դառնում է աշուղը գիլին:— Եթե ճշմարիտ սրտով ուզում ես նվագել սովորես, ամենից առաջ պետք է առջևի թաթերդ էս ծառի ճեղքումը դնես:

Գեւը լսում է վարպետին, առջևի թաթերը դնում է ծառի ճեղքում: Վարպետը ձեռաց կողքի մեծ քարը վերցնում է էնպես ուժով զարկում աշկերտի ջուխտ թաթերին ու էնպես խորը մխում ծառի ճեղքի մեջ, որ խեղճը տեղն ու տեղը նստում է ու մնում է գերի էն ծառին:

— էստեղ կաց, մինչև մին էլ ետ կգամ,— ասում է վարպետն ու գնում: Մի քիչ որ գնում է, դարձյալ սկսում է ինքն իրեն հետ խոսել:

— Օ՛ֆ, ի՞նչ երկար ու ձանձրալի է ժամանակն էստեղ... Պետք է մի լավ ընկեր գտնեմ ինձ համար...

Ասում է, ջութակն ուսից վեր է բերում ու նվագում: Մին էլ տեսնում է ծառերի արանքից դուրս եկավ աղվեսը:

— Հիմի էլ աղվեսը... բայց ես սրան էլ չեմ ուզում... Աղվեսի հետ ի՞նչ անեմ,— հառաչում է աշուղը, իսկ աղվեսը գալիս է առաջը կտրում:

— էդ ի՞նչ լավ ես նվագում, վարպետ: Ի՞նչ կլինի ինձ էլ սովորեցնես:

— Ինչու չէ, կսովորեցնեմ,— պատասխանում է աշուղը.— միայն թե ինչ որ ասեմ, պետք է լսես:

— Աչքիս վրա,— խոսք է տալիս աղվեսը.— էնպես լսեմ, ինչպես աշկերտը վարպետին կլսի:

— Գե որ էդպես է՝ ետևիցս արի:

Աղվեսն ուրախ-ուրախ ընկնում է վարպետի ետևից ու գնում են: Գնում են, գնում, մտնում են մի նեղ կածան, երկու կողմից բարձր թփեր: Վարպետն էստեղ կանգ է առնում, ճամփի մի կողմից մի փոքրիկ ընկուզի ծառի ծեր է կռացնում դեպի գետին ու ոտը դնում վրեն, մյուս կողմից էլ մի ուրիշ ծառ ու կանչում է աղվեսին:

— Հապա դե ե՛կ, սիրելիս. եթե ուզում ես բան սովորես՝ դեռ բեր առջևի ձախ թաթդ:

Աղվեսը լսում է, թաթը մեկնում է: Վարպետը բռնում է կապում ձախ ծառի կատարին:

— Գե հիմի էլ աջը բեր:

Աջն էլ կապում է աջ կողմի ծառի կատարին: Հետո մտիկ է անում՝ ամուր են կապված թե չէ, ու բաց է թողնում ծառերի կատարները: Ծառերը ետ են գնում, վերև են թոցնում աղվեսին ու սկսում են ճոճել օդի մեջ:

— էստեղ կաց, մինչև մին էլ ետ կգամ,— ասում է վարպետն ու շարունակում իր ճամփեն:

Մի քիչ որ անց է կենում, նորից սկսում է ինքն իրեն խոսել.— Օ՛ֆ, ի՞նչ երկար ու ձանձրալի է ժամանակն էստեղ... Պետք է մի լավ ընկեր գտնեմ ինձ համար...— Ասում է, ջութակն ուսից վեր բերում ու նվագում: Ուստուսալով առաջն է կլնում մի նապաստակ:

— Համեցեք. հիմի էլ նապաստակը... բայց ես սրան էլ չեմ ուզում... Ես նապաստակի հետ ի՞նչ անեմ,— հառաչում է աշուղը, իսկ նապաստակը մոտ է գալի:

— էդ ի՞նչ լավ ես նվագում, վարպետ: Ի՞նչ կլինի ինձ էլ սովորեցնես:

— Ինչու չէ, կարելի է, և հեշտ էլ կսովորես: Միայն թե ինչ որ ասեմ, պետք է լսես:

— Աչքիս վրա,— խոսք է տալիս նապաստակը.— էնպես լսեմ, ինչպես աշկերտը վարպետին կլսի:

— Գե որ էդպես է՝ ետևիցս արի:

Գնում են: Գնում են, գնում, դուրս են գալիս անտառի մեջ մի բացատ: Բացատի մեջտեղը կանգնած է լինում մի բարդի: Վարպետը մի թոկ է հանում, թոկի մի ծերը ծառից է կապում, մյուս ծերը նապաստակի վզից ու կանչում է.

— Հապա, իմ խլուշիկ, դե մի քանի անգամ էս ծառի բոլորքով պտուտ արի, տեսնեմ քո ճարպիկությունը:

Նապաստակը լսում է. քան անգամ պտուտ է գալի ծառի բոլորքով: Թոկը փաթաթվում է ծառին, խեղճը մնում է ծառին կպած ու քանի ձիգ է տալիս, քաշում, քաշքշում, էնքան թոկը վիզը կտրում է:

— էստեղ կաց, մինչև մին էլ ետ կգամ,— ասում է վարպետն ու իր ճամփեն շարունակում:

Վարպետի գնալուց հուր դես է ձիգ տալի, դեն է ձիգ տալի գելը, քարն է կրծում, ծառն է կրծում, էնքան անում է, մինչև թաթերը հանում է կաղնու ճեղքից: Հանում է ու, թե չորս ոտն ուներ՝ չորսն էլ փոխ է առնում, կատաղած, բա-

զագած ընկնում է վարպետի ետեկը, որ հասնի պատառ-պատառ անի: Օդում ճոճվող աղվեսը հեռվից ազատ գիլին տեսնում է թե չէ՝ սկսում է լաց լինել ու աղաղակել:

— Գեյ ախպե՛ր, գեյ ախպե՛ր, հասի՛ր, օգնիր ինձ, կն՛ վարպետը ինձ խաբեց:

Գեյը հասնում է. ծառերը կոացնում, թռվիճրը կրծոտում, կտրատում, աղվեսին ապատում, ու երկուսով միասին ընկնում են վարպետի ետեկից, որ իրենց վրեժը հանեն:

Գնում են, գնում, ճամփին պատահում են ծառին փաթաթված նապաստակին: Սրան էլ էստեղ են ազատում ու երեքով միասին լարվում են ընդհանուր թշնամու — վարպետի ետեկից:

Վարպետը շարունակում է իր ճանապարհն անտառում: Մի անգամ էլ նվագում է, ու էս անգամ բախտը բերում է: Զուժակի ձենը լսում է մի աղքատ փայտահատ, գործը թողնում է, կացինը դնում է կռնատակին՝ գալիս է կանգնում երգը լսելու:

— Վերջապես եկավ իմ ընկերը,— բացականչում է վարպետը:— Ես մարդ էի որոնում, ոչ թե վայրենի գազաններ:— Ու սկսում է նվագել էնքան սրտառուչ, էնքան հրաշալի, որ փայտահատը գմայլում է, սիրտը կրծքում ուրախությունից խաղս է լինում: Հենց էս ժամանակ վրա են հասնում գեյը, աղվեսն ու նապաստակը: Փայտահատը նկատում է, որ նրանց մտքում շար բան կա վարպետի դեմ, իսկույն առաջ է անցնում, բարձրացնում իր սուր կացինն ու ասում — Ով սրա վրա գա, իմացած կենա, որ ինձ հետ է գործ ունենալու:

Գազանները էս որ տեսնում են՝ սարսափում են ու, պո՛ւկ, հտ են փախչում դեպի անտառի խորքերը: Վարպետը փայտահատին շնորհակալություն անելու համար մի երգ էլ նվագում է ու գնում: Գնում է հասնում է իր տունը, ջութակը պատին կախում ու պառկում: Գիշերը գալիս է. ուզում է քնի, քունը չի տանում: Շարունակ գեյը, աղվեսն ու նապաստակն են մտքի միջին: Մին էլ հանկարծ գիշերվա մի ժամանակը հենց լուսամուտի տակին գելն ու աղվեսը սկսում են ձեն-ձենի տալ ու ոռնալ, իսկ նապաստակը նրանց ետեկից ծվծվում է:

— Ճը՛ղը, վը՛ղը, քաշ վարպետ,
էն ի՛նչ արիր դու մեզ հետ.
Մեզ տանջել էիր ուզում դուն,
Տանջվիր հիմի դե գարթուն.
Մինչև լուսը մենք էսպես
Հանգիստ բուն շենք տալու քեզ...
Ճը՛ղը, վը՛ղը, քաշ վարպետ,
էն ի՛նչ արիր դու մեզ հետ...

Երգում են, երգում են անասունները: Զուժակն էլ պատի վրիցն է սկսում իրեն-իրեն նվագել նրանց հետ, ու էնպես աղեկտուր, էնպես ողբալի, որ խեղճ վարպետը չի իմանում ուր կորչի էն երգի ու երաժշտության ձենից: Ամբողջ գիշերը չի կարողանում աչքը կպցնի, տանջվում է ու տանջվում: Մերերն ասում են, իբրև թե վարպետը էն օրվանից հորը ինչքան ապրեց աշխարհքում՝ ամեն գիշեր նրա լուսամուտի տակ հնչում էր էս տխուր, սրտաճմլիկ երգը:

Ճը՛ղը, վը՛ղը, քաշ վարպետ,
էն ի՛նչ արիր դու մեզ հետ...

Ու ջութակը ողբում էր հետը: Ամեն գիշեր, ամեն գիշեր մինչև լուսը, մինչև իր մահը:

1914

ՀԵՆՁՆԵՆ ՈՅ ԳՐԵՏԵԼՐ

Մի մեծ անտառի բերանում ապրում էին մի աղքատ փայտահատ ու իր կինը: Երկու երեխա ունեին, տղի անունը Հենզել էր, աղջկանը՝ Գրետել:

Առանց էն էլ պակասության մեջ են լինում, թանգությունն էլ որ ընկնում է էն կողմերում, իրենց օրվա հացե էլ չեն կարողանում ճարեն: Մի օր էլ, տեղումը պառկած, փայտահատը դես է մտածում, գեն է մտածում, դարդից մի կողքից մյուս կողքի վրա է շուռ ու մուռ գալիս, վերջը կնոջն ասում է.

— Էս ի՛նչպես պետք է անենք, ա՛յ կնիկ, իսկի բան չունենք, ինչո՞վ պիտի պահենք էս երեխաներին:

— Գիտես, ա՛յ մարդ,— պատասխանում է կինը,— արի առավոտը ծեօին երեխաներին տանենք անտառի խորքը, կրակ անենք, մի-մի կտոր հաց տանք ձեռներն ու էնտեղ թողնենք, մենք ետ գանք մեր գործին: Ճամփեն շեն գտնիլ, որ ետ գան տուն, ու մենք էլ կազատվենք:

— Չէ, ա՛յ կնիկ,— պատասխանում է փայտահատը,— ես էդպես բան չեմ անիլ, իմ սիրտը չի տանիլ, որ ես իմ ձեռքով իմ երեխաներին տանեմ մենակ թողնեմ անտառում, վերջապես գազանները կհարձակվեն ու կպատառոտեն նրանց:

— Ը՛հ, հիմար,— ասում է կինը,— էսպես թե էնպես չորսս էլ սովամահ կորչելու ենք, էն ժամանակ գնա ու դազաղների համար տախտակ տաշի... Ու հանգիստ չի տալի մարդուն, մինչև որ չի համաձայնվում իրեն հետ:

— Բայց էլի մեղքս գալիս է խեղճ երեխաների վրա,— ասում է փայտահատը, կնոջ հետ համաձայնվելուց հետո: Իսկ երեխաների քունը սովից չի տանում, լսում են ամեն բան, ինչ որ խորթ մերը ասում է իրենց հորը:

Ազի-ազի լաց է լինում Գրետելը ու դառնում Հենզելին.

— Մենք կորանք, Հենզել:

— Սո՛ւս կաց, Գրետել ջան,— ասում է Հենզելը,— դարդ մի՛ անիլ, ես սրա ճարը գիտեմ:

Եվ ահա մեծերը քնում են թե չէ, Հենզելը վեր է կենում, իր շորերը հագնում, դուռը բաց է անում ու ծլկում փողոց: Լուսինը պայծառ լուսավորում էր ու իրենց տան առջևը ցըրված սիպտակ լափուկները արծաթի փողի նման շողշողում էին: Հենզելը կռանում է, ու գրպանն ինչքան տանում է, էդ քարերով լցնում է: Հետո վերադառնում է տուն: Գրետելին ասում է.

— Հանգիստ կաց, քույրիկ ջան: Քնի՛ր, աստված մեզ չի կորցնիլ:— Ու նորից պառկում է իր անկողնում:

Առավոտը ծեօում է թե չէ, արևածագից առաջ, խորթ մերը գալիս է երեխաներին զարթեցնում:

— Դե, շուտ արեք, վեր կացեք, ծուլլե՛ր, պատրաստվեցեք գնանք անտառը փետ բերելու:— Հետո ամեն մեկին մի-մի կտոր հաց է տալիս ու պատվիրում.

— Ահա էս ձեզ տալիս եմ ճաշի համար. տեսեք, մինչև

ճաշը շուտեք, թե չէ, միկնույն է, հետո էլ ոչինչ չեք ստանալու:

Գրետելը հացը դնում է գրպանը, որովհետև Հենզելի գրպանները բերն-բերան լիքն էին քարերով: Հետո վեր են կենում ու ճանապարհ են ընկնում դեպի անտառը:

Մի քիչ որ անց է կենում, Հենզելը կանգ է առնում ու նայում է ետ՝ դեպի իրենց խրճիթը, ու շարունակ էդպես ետ է մնում: Հերն ասում է.

— Հենզել, ի՞նչ ես դու շարունակ ետ մտիկ տալիս ու ետ մնում, հորանջելու ժամանակ չի, ոտներդ ժաժ տուր:

— Հայրի՛կ, ես մեր սիպտակ կատվին եմ մտիկ տալի, ա՛յ, էնտեղ կտերը նստել է, կարծես թե մեզ վերջին «մնաս քարովն» է ասում:— Խորթ մերը էստեղ խոսքը կտրում է.— Ապուշ, իսկի էլ էն մեր կատուն չի, էն կտուրի վրի սիպտակ ծխնելույզն է, որ փայլում է արևի տակ: Իսկ Հենզելը կտուրի վրա նայելու մասին իսկի չէր էլ մտածում, նա ետ ընկնելով իր գրպանի սիպտակ քարերն էր ցանում ճամփին:

Հենց որ հասնում են անտառի խորքը՝ հերն ասում է.

— Դե՛, երեխե՛ք, փետ հավաքեցեք, ձեզ համար կրակ անեմ, որ շմբեք:— Ձեռաց Հենզելն ու Գրետելը շախ են հաճաքում, բերում կիտում: Զախը վառում են, բոցը վեր է քարձրանում: Խորթ մերը ասում է.

— Դե երեխեք, դուք կրակի կողքին պառկեցեք ու հանգըստացեք, իսկ մենք գնանք մի քիչ հեռու փետ անենք. պրծնենք թե չէ, կգանք ձեզ էլ կվերցնենք, միասին կգնանք տուն:

Հենզելն ու Գրետելը կրակի կողքին նստում են, ճաշելու ժամանակն էլ որ գալիս է, ամենքն իրենց հացի կտորն ուտում են: Եվ որովհետև կացնի ձեռն էին լսում, հավատացած էին, որ իրենց հերը մոտիկ մի որևիցե տեղ է: Բայց որ թրխկացնում էր, էն կացինը չէր, մի կոճղ էր, որ փայտահատը կապել էր մի չոր ծառի. քամուց գնում էր գալիս, զարկում ծառի բնին ու թրխկացնում: Ու էսպես, երեխեքը երկար-երկար նստում են, աչքները հոգնածությունից փակվում են իրանց-իրանց, ու խորը քնում են:

Մին էլ վեր են կենում, տեսնում են՝ արդեն մութ գիշեր է:

— Ո՞նց պետք է էս անտառից դուրս գանք, Հենզել:

Հենգելը սիրտ է տալիս.

— Մի քիչ կաց, հրես լուսնյակը դուրս կգա՝ ճանապարհը կգտնենք:

Հենց որ լուսինը դուրս է գալիս, Հենգելը քրոջ ձեռքը բռնում է ու գնում իր ցանած քարերով, որոնք արծաթի փոշերի նման պսպղում էին ու ցույց տալիս ճանապարհը:

Ամբողջ գիշերը էսպես մինչև լույս գնում են ու լուսաբացին հասնում են իրենց տունը: Դուռը ծծծում են. խորթ մերը բաց է անում, ու թեև շատ է զարմանում, որ տեսնում է Հենգելին ու Գրետելին են, բայց ասում է.

— Ա՛յ դուք շար երեխեք, էսքան ժամանակ ի՞նչ եք անտառում քնել ու մնացել, մենք էլ կարծում էինք՝ էլ չեք ուզում մեզ մոտ վերադառնաք:

Իսկ հերն ուրախանում է, որովհետև նրա սիրտը ցավում էր, որ իր երեխաներին մեռակ անտառում էր թողել:

Մի քիչ ժամանակ անց կենալուց հետք, նորից սով է ընկնում ամեն տեղ, ու նորից երեխաները լսում են, թե ինչպես իրենց խորթ մերը գիշերը հորն ասում է.

— Էլ հոտ ինչ ունեինք-չունեինք կերանք: Մենակ մի կես հաց է մնացել, էն էլ որ կերանք՝ մեք բանք պրծած է: Փետք է էս երեխանցը հեռացնենք: Տանենք անտառն, էս անգամ ավելի խորթ, որ էլ չկարողանան ճամփա գտնեն ու հոտ գան. թե չէ էլ մեզ փրկություն չկա:

Էս բանը քարի նման ճնշում է հոր սիրտը, ու միտք է անում.

— Ավելի լավ է էն մնացած վերջին պատառն էլ բաժանի իր երեխաների հետ:

Բայց ինչ որ ասում է, կինը ոչ մի բան չի ուզում լսի. հենց մի գլուխ հայտնում է ու նախատում: Դե ով որ այլն ասել է, բենն էլ պետք է ասի: Փայտահատն էլ, որ մի անգամ արդեն կնոջ հետ համաձայնել էր, երկրորդ անգամ էլ պետք է համաձայնի:

Իսկ երեխաները դու մի ասիլ քնած չեն, ու էս բոլորը լսում են: Մեծերը քնում են թե չէ, Հենգելը տեղից վեր է կենում, ուզում է առաջվա նման էլի դուրս գնա ու պաշարի համար գրպանը լափուկներով լցնի, խորթ մերը դուռը փա-

կած է լինում, չի կարողանում դուրս գնա, բայց էլի քրոջն ամեն կերպ սիրտ է տալիս.

— Կաց մի լինիր, Գրետել ջան, դու հանգիստ քնիր քեզ համար: Աստված ողորմած է, մեզ չի կորցնիլ:

Առավոտը ծեղին խորթ մերը գալիս է տեղներիցը վեր կացնում: Ամեն մեկին մի կտոր հաց է տալիս, հացի կտորն էլ առաջվա տվածիցն ավելի փոքր: Եվ ահա անտառը գնալիս ճամփին Հենգելը գրպանում շարունակ մանրում է իր հացի կտորը, շուտ-շուտ հոտ մնում ու ցանում ետևներից: Հերն ասում է.

— Հենգել, դու քա՛նի կանգնես ու շորս կողմի վրա հորանջես. ճամփեդ գնա էլի՛:

— Հայրի՛կ, ես իմ ճերմակ աղավնուն եմ մտիկ տալիս, որ հրեն հա՛ մեր տանիքին նստած՝ կարծես թե ինձ բարև է դրկում:

— Հիմա՛ր,— կանչում է մերը,— էն իսկի էլ քո աղավնին չի, էն սիպուակ ծխնելույզն է արևի տակ սիպուակին տալիս: Իսկ Հենգելն էդ ժամանակ հացի փշրանքները հենց զցում է ու զցում իրենց ճամփին:

Երեխաներին տանում են անտառը, էնպես մի խորթ տեղ, որ իրենց օրում չէին եղած. էնտեղ էլ կրակ են անում, ու խորթ մերն ասում է.

— Երեխե՛ք, դուք էստեղ նստեցեք, ու, թե քուններդ կտանի, քնեցեք, իսկ մենք մի քիչ ավելի խորթ գնանք, փետ հավաքենք, հետո իրիկունը, երբ որ գործներս կվերջացնենք, կգանք ձեզ էլ կառնենք ու կերթանք տուն:

Ճաշի ժամանակը որ հասնում է, Գրետելը իր հացի կտորը բաժանում է Հենգելի հետ, որովհետև Հենգելն իր հացը ճանապարհին փշրել էր: Հետո ննջում են. իրիկունն էլ վրա է հասնում, բայց ոչ ոք չի գալիս խեղճ երեխաների ետևից: Զարթնում են կես գիշերին: Հենգելը սկսում է սիրտ տալ իր քրոջը.

— Գրետել ջան, սպասիր մինչև լուսինը դուրս գա, էն ժամանակ կերևան հացի փշրանքները, որ ես ճամփին շաղ եմ տվել. նրանցով կգտնենք մեր ճամփին ու կգնանք տուն:

Լուսինը դուրս է գալիս թե չէ, երեխեքը ճամփա են ընկնում հոտ դեպի տուն, բայց ոչ մի փշրանք չեն գտնում, որով-

հետև դաշտերի ու անտառների հազարավոր թռչունները վեր էին քաղել: Իսկ Հենզելը շարունակ Գրետելին ասում է.

— Ինչպես որ լինի, մենք կգտնենք ճանապարհը...

Բայց ճանապարհ գտնել չեն կարողանում: Թափառում են գիշերը մինչև լուս, հետո ամբողջ օրը առավոտից մինչև իրիկուն, ոչ մի կերպ չեն կարողանում անտառից դուրս գան. հետև էլ սովում են, որովհետև ուտելու ոչ մի բան չեն ունենում, բացի մի քանի մորին, որ էստեղ-էնտեղ կարմրին էին տալիս խոտերում: Վերջապես, երբ որ էնքան հոգնում են, որ երկուսի ոտներն էլ թմրում են, մի ծառի տակի պառկում են, քնում: Բացվում է երրորդ օրվա առավոտը, ինչ որ երեսեքը թողել էին իրենց հորական տունը: Նորից ճանապարհ են ընկնում դեպի տուն, բայց ամեն մի քայլափոխով միայն անտառի խորքն են մտնում ավելի ու ավելի խորը, և եթե շուտով օգնություն չհասնեն, անպատճառ պետք է կորչեին:

Կեսօրին տեսնում են մի ծառի ճյուղին մի սիպտակ սիրուն թռչուն: Էս սիպտակ սիրուն թռչունը էնպես լավ է երգում, որ երեսեքն ակամայից մարում են տեղներն ու ականջ են դնում նրան: Լուս է թե չէ, թևին է անում, երեսանց կողքից թռչում նստում մյուս ծառին, երեսաններն էլ նրա ետևից էսպես գնում են, գնում, մինչև որ հասնում են մի տնակի: Էս տնակի տանիքին թռչունը իջնում է: Երեսեքը տնակին մոտենում են, տեսնում են. ինքը տունը ամբողջովին հացից է շինած, կտուրը գաթից, իսկ լուսամուտները՝ թափանցիկ շաքարից:

— Ահա՛, հենց սրանից էլ կսկսենք, — ասում է Հենզելը. — մի լավ քեֆ անենք: Ես տանիքից մի կտոր կուտեմ, դու էլ լուսամուտից կեր, Գրետել. ով գիտի ի՞նչ անուշ է, չէ՞:

Ու Հենզելը ձգվում է դեպի վերև, տանիքից մի փոքրիկ կտոր է կտրում, Գրետելն էլ կտանում է, սկսում է լուսամուտի ապակին ուտել: Հենց էս ժամանակ, ներսից մի բարակ ձեն է գալիս.

— Կը՛րծ, կը՛րծ, կը՛րծ, խը՛գ, խը՛գ, խը՛գ,
էս ո՞վ է կրծում տունըս:

Երեսեքը պատասխանում են.

էս քամին է անում խիտ,
Չարաճրճին անհանգիստ:

Ու առանց սրանից շփոթվելու շարունակում են ուտել: Հենզելին տանիքն էնքան դուր էր եկել, որ մեծ կտոր կրտրեց, իսկ Գրետելը լուսամուտից հանեց մի ամբողջ ապակի, տեղն ու տեղը նստեց ու անուշ-անուշ ուտում էր:

Մին էլ հանկարծ դռները հտ են բացվում, ու իր գավազանին հենված դուրս է գալիս մի պառավ-պառավ կին: Հենզելն ու Գրետելը էնքան են վախենում, էնքան են վախենում, որ պատառները ձեռներին վեր են գցում: Իսկ պառավը գլուխը շարժելով առաջ է գալիս.

— Վո՛ւյ, երեսեք ջան, էդ ո՞վ բերեց ձեզ էստեղ: Ներս եկե՛ք, եկե՛ք ինձ մոտ կացեք, մի՛ վախենաք, ոչ մեկիդ վնաս չեմ տալ:

Ասում է, թաթներիցը բռնում ու ներս տանում: Տանում է լավ նախաճաշ է տալիս. էլ կաթը, շաքարահաց, էլ խընձոր, էլ ընկուզ: Հետո երկու տեղ է գցում մաքուր, ճերմակ: Հենզելն ու Գրետելը որ պառկում են՝ էնպես է թվում, թե դրախտն ընկան:

Դու մի՛ ասիլ պառավն էսպես բարի փաղաքուշ է ձևանում, բայց իսկապես մի շար կախարդ է եղել, ամեն կերպ հետևում է երեսաններին և դիտմամբ էլ տունը հացից է շինել, որ նրանց հեշտ գրավի դեպի իրեն: Ով ճանկն է ընկնում, սպանում է, եփում, լափում, էդ նրա համար մի ուրախություն է:

Կախարդների աչքերը սովորաբար կարմիր են լինում ու հեռու չեն տեսնում, բայց զարմանալի սուր հոտառություն են ունենում, ճիշտ գիշատիչ գազանների պես: Անց կենող մարդու հոտը հեռվից են իմանում: Երբ որ Հենզելն ու Գրետելը նրա տնակի մոտերքը թափառելիս են լինում, նա հեռվից արդեն նրանց հոտն առնում է, շարախնդաց ծիծաղում ու վռչում:

— Է՛, սրանք արդեն ճանկումս են... սրանք էլ ինձանից չեն պրծնիլ...

Առավոտը ծեղին, երեսաններից առաջ, շար կախարդը մի շուտով տեղիցը վեր է թռչում ու երբ տեսնում է նրանց էնպես խաղաղ քնած, լիքը, վարդագույն թշերով, իրեն-իրեն մոմում է.

— Ուխա՛յ, ինչ անուշ պատառներ են...

Հենգելին բռնում է իր ոսկրոտ ձեռներով, քարշ է առիս, տռնում հավանոցը գցում, վանդակավոր դուռը փակում ու թռչնում էնտեղ գոռա, ինչքան սիրտը կուզի: Ինչքան էլ գոռա՝ էլ ի՞նչ պետք է անի: Հետո գնում է Գրետեի հետևից, հրում է ու ճղճղում:

— Դե՛, շո՛ւտ, վե՛ր կաց, ծո՛ւյլ աղջիկ: Գնա ջուր բեր, եղբորդ համար մի որևէ համով բան եփիր: Հրեն հավանոցում փակել եմ, պետք է նրան կերակրել, որ մի լավ շաղանա ինձ համար... Պետք է շաղանա, որ ուտեմ...

Գրետեն ուզում է լաց լինի, բայց էդ բոլորը զուր էին. մնում է սուսուփուս պառավի հրամանները կատարել: Ու սկսում է Հենգելի համար համով կերակուրներ եփել, իսկ իրեն՝ Գրետեի, բացի չոր օսկրներից, բան չէր տալիս:

Ամեն առավոտ պառավը գնում է հավանոցի դուռը կըտրում ու կանչում.

— Հենգել, մատդ դեսը մեկնիր, տեսնեմ շաղացե՛լ ես թե չէ:

Հենգելը մատի տեղակ միշտ մի ոսկոր է դուրս մեկնում, պառավն էլ որ լավ չի տեսնում, չի կարողանում ջոկի, մտածում է, որ էս Հենգելի մատն է, ու զարմանում է, թե ինչպես է, որ Հենգելն իսկի չի շաղանում:

Էսպես շորս շաբաթը անց է կենում, Հենգելը էլի մնում է նիհար. պառավի համբերությունը հատնում է ու էլ չի ուզում սպասի:

— Դե՛, հա՛յդե, Գրետե՛լ, գնա ջուր բեր. շաղ լինի թե նիհար, միևնույն է, էգուց Հենգելին մորթելու եմ, եփեմ ուտեմ:

Ինչքան է զարդ անում խեղճ Գրետեը, ինչքան է դարդ անում ջուր բերելիս, արտասուքը էն ջրի նման աչքիցը թափվում է:

— Ողորմած աստված, դու մեզ օգնության հասնես, — կանչում է նա: — Երանի թե անտառումը մեզ գազանները պատառոտեին, գոնե ես ու Հենգելը միասին կլինեինք:

— Զուր սիրտդ մի՛ մաշիր, — ասում է պառավը, — միևնույն է, էլ ոչ մի բան չի օգնի:

Առավոտը վաղ Գրետեը պետք է վեր կենար, պղինձը կրակին դներ, ջրով լցներ ու տակին կրակ աներ:

— Ամենից առաջ դեռ մի թխվածք անենք. ես արդեն փուր վառել եմ ու խմորը հունցել:

Ասում է պառավն ու տանում է խեղճ Գրետեի փոռն առաջը կանգնեցնում, հրում է դեպի բոցավառ փոռն բեռանը:

— Մտի՛ր, — ասում է, — գնա տես, փետերը լա՛վ են դարսած, լա՛վ են էրվում, խմորը գնդելու ժամանակն է՝ թե չէ:

Ուզում է՝ Գրետեը կռանա թե չէ, բոթի գցի փուռը, ծածկոցը դնի, որ Գրետեը փռումը խորովվի, հետո հանի ուտի: Բայց Գրետեը գլխի է ընկնում, թե պառավի մտքումը ինչ կա, ասում է.

— Ես չեմ իմանում ինչպես անեմ, որ մտնեմ մեջը...

— Հիմար անասուն, — բարկանում է պառավը, — չե՞ս տեսնում ահագին փոռն բերանը. ը՛հը՛, մտիկ արա, քիչ է մնում ես էլ մտնեմ մեջը...

Ու ճիշտ որ, տմբամբալով մոտենում է փոռնը, մինչև անգամ գլուխն էլ փոռն բերնից ներս է կոխում: Էստեղ Գրետեը հանկարծ հտեից էնպես է ներս բռթում պառավին, որ ընկնում է փոռն մեջը, իսկույն հտեիցը ծածկոցը ամուր դնում է ու փակիչը հտեից գցում:

Պառավը ոռնում է, ո՛նց է ոռնում... Բայց Գրետեը ետ է վազում, ու անխիղճ վհուկն էլ էնպես էրվում է պրծնում: Գրետեը իսկույն վազում է Հենգելի մոտ, հավանոցի դուռը բաց է անում ու աղաղակում.

— Հենգե՛լ, Հենգե՛լ, մենք ազատվեցինք, շար պառավը կործանվեց...

Գուռը բացվում է թե չէ, թռչունի նման, որ վանդակում փակված կլինի ու դուռը բաց կանեն, Հենգելը դուրս է թռչում: Ո՛նց են ուրախանում երկուսով, ո՛նց են ուրախանում... Իրար ճտով են ընկնում, թռչկոտում են, համբուրվում են, և որովհետև ոչ ոքից վախ չունեին, գնում են մտնում պառավի տնակը, իսկ պառավի տնակի բոլոր անկյուններում դարսված են լինում մարգարտով ու անգին քարով լիքը սնդուկները:

— Էս մեր դռան լափուկներից հո ավելի լավն են, — ասում է Հենգելն ու գրպանները ինչքան որ կտանեին՝ լցնում է, իսկ Գրետեին ասում է.

— Ես էլ եմ ուզում մի բան տանեմ տուն,— ու նա էլ գոզնոցն է լցնում պոնգե-պոունգ:

— Դե հիմի գնանք հեռանանք էստեղից,— ասում է Հենգելը:— Քանի լուս է՝ պետք է դուրս գանք էս կախարդված անտառից...

Մի քիչ որ ճանապարհ են կտրում — հասնում են մի գետակի:

— Մենք ի՞նչպես անցնենք էս գետը,— ասում է Հենգելը:— Ոչ անց ունի, ոչ կամուրջ:

— Գոնե մի նավակ էլ չկա,— վրա է բերում Գրետելը:— Ահա մի սիպտակ բազիկ է լողում, արի խնդրեմ, գուցե մեզ օգնի անց կացնի...— ու կանչում է:

Բազի՛կ, բազի՛կ, սիրուն բազիկ,
Լող տուր դեպ մեզ, արի մոտիկ.
Շվարել ենք Հենգելն ու ես,
Առ քո մեջքին, անց կացրու մեզ:

Բազիկը մոտենում է ափին, Հենգելը նստում է բազիկի մեջքին ու քրոջը կանչում է, որ նա էլ գա գավակին նստի:

— Չէ,— պատասխանում է Գրետելը,— բազիկը չի կարող երկուսիս էլ միասին տանի, ծանր կլինի: Զոկ-զոկ կտանի: Էդպես էլ անում է բարի թռչունը:

Զուրը որ անց են կենում ու մի քիչ ճանապարհ են գնում, անտառը հետզհետե ծանոթ է թվում, ու, վերջապես, նկատում են իրենց հորական տունը: Էստեղ սկսում են վազել ինչքան ոտներումը ուժ ունեին, ներս են թափվում ու ընկնում են իրենց հոր վզովը:

Հերն էլ մի հանգիստ ժամ չէր ունեցել էն օրվանից, հնչ երեխանցը թողել էր անտառում, իսկ խորթ մերը արդեն մեռել էր:

Գրետելը իր գոզնոցը բաց է թողնում ու միջի եղածը հոր առաջին շուռ տալիս, էնպես որ մարգարիտները ու անգին քարերը շաղ են անցնում տանովը մին, իսկ մյուս կողմից էլ Հենգելն է բուռն-բուռն հանում ու թափում իր գրպանից:

Էստեղ էլ ամեն ցավ ու հոգս վերջանում են, ու ապրում են միասին ուրախ ու անհոգ...

Մի հարուստ մարդու կիև հիվանդանում է: Տեսնում է մահը մոտենում է՝ կանչում է իր մինուճար աղջկանը, ասում է.

— Զավա՛կս, եղի՛ր լավն ու բարի, էն ժամանակ աստված միշտ քեզ կսի, ես էլ երկնքից մտիկ կանեմ քեզ ու անբաժան քեզ հետ կլինեմ:

Ասում է ու արևը ապրողներին բաշխում, մեռնում: Աղջիկն ամեն օր գնում է մոր գերեզմանի վրա լաց լինում և մնում է միշտ լավն ու բարի:

Զմեռը գալիս է, ձյունը սիպտակ սավանով ծածկում է մոր գերեզմանը, իսկ գարնան արևը շողալուն պես հերը ետնակին է ուզում, աղջկա համար խորթ մեր է բերում: Խորթ մերն հետը երկու աղջիկ է բերում, դրսից սիրուն ու սիպտակ, ներսից շար սևահոգի: Ու խորթ աղջկա համար սկզբվում են սև օրերը:

— Մի՞թե էս կուռկունն էլ մեզ հետ միասին պետք է տանը պարապ-սարապ նստի: Ով ուզում է հաց ուտի — պետք է աշխատի:— Ասում են խորթ քույրերն ու տանիցը դուրս են անում, քրում խոհանոցը: Լավ շորերն ու կոշիկները հագիցը հանում են, հին գուրչեր ու փետե ոտնամաններ են հագցնում. ծափ են տալիս՝ վրեն ծիծաղում.— «Մի էս իշխանուհուս մտիկ արեք է՛, տեսեք՝ ոնց է զուգվել, զարգարվել...»

Ենեղճ աղջիկն առավոտից մինչև իրիկուն պետք է խոհանոցում շարշարվեր: Առավոտը ծեղին պետք է վեր կենար ջուր կրեր, կրակ աներ, կարեր, կարկատեր, եփեր, թափեր: Խորթ քույրերն էլ շարունակ նրան վշտացնում էին ու վիրավորում, ծաղրում էին, ընտրած ոսպն ու սիսեռը շաղ էին տալիս, մոխիրն էին ածում, ու նա նորից պետք է նստեր հատիկ-հատիկ հավաքեր:

Իրիկուններն էլ, երբ որ բանը վերջացնում էր, անկողին շուներ, կրակի առաջին՝ մոխրի վրա էր պառկում: Դրանից էլ միշտ մոխրոտ էր լինում ու դրա համար էլ քույրերը ավել անունը դրին Մոխրոտ:

Մի անգամ էս Մոխրոտի հերը, ուրիշ տեղ գնալիս, խորթ աղջիկներին հարցնում է, թե՛ ի՞նչ եք ուզում, որ ձեզ հա-

մար բերեմ: Մինն ասում է — «Ինձ համար սիրուն շորեր բեր»: Մյուսն էլ, թե — «Ինձ համար մարգարտե մանյակ բեր»:

— Իսկ դու, Մոխրոտ ջան, դո՞ւ ինչ կուզես, որ քեզ համար բերեմ:

Մոխրոտն էլ ասում է. — Հա՛յրիկ, էն ծառի ճյուղը, որ վերադարձիդ կդիպչի քո գլխարկին, էն ճյուղը կտրի ու բեր ինձ համար:

Հերը գնում է խորթ աղջիկների համար լավ շորեր է առնում, մարգարտե մանյակ ու թանկագին քարեր է առնում ու ճամփա ընկնում դեպի տուն: Վերադարձին մի ծմակով անց կենալիս մի ընկուզենու ճյուղ դիպչում է գլխարկին, գլխարկը վեր պցում: Էն ճյուղն էլ կտրում է հետը վերցնում, որ Մոխրոտին տա: Տուն է հասնում, խորթ աղջիկների ուզածն իրենց է տալիս, ընկուզենու ճյուղն էլ տալիս է Մոխրոտին: Մոխրոտը շնորհակալ է լինում հորից, տանում է էն ընկուզենու ճյուղը մոր գերեզմանի վրա տնկում ու լաց լինում: Էնքան լաց է լինում, էնքան լաց է լինում, որ արտասուքով էն տնկած ընկուզենու ճյուղը ջրում է: Ու ընկուզենու ճյուղը դուրս է գալիս, մեծանում, մեծ ծառ է դառնում:

Մոխրոտը օրը երեք անգամ գնում է էն ծառի տակ լաց է լինում ու աղոթք անում: Ամեն անգամ էլ մի ճերմակ թռչուն գալիս է էն ծառին վեր գալիս ու, Մոխրոտն ինչ որ սրտով ուզում է, էն սրտով ուզածը վերևից պցում է ներքև:

Մի անգամ էլ թագավորը մի հանդես է սարքում, որ երեք օր երեք գիշեր պետք է քաշեր: Իր տերության բոլոր գեղեցիկ աղջիկներին հրավիրում, հավաքում է էն հանդեսին, որ իր սղոնն նրանց միջիցը իրեն համար հարսնացու ընտրի: Խորթ քույրերը որ իմանում են իրենք էլ են հրավիրված, ուրախանում, աշխարհքով մին են լինում, Մոխրոտին ձեն են տալիս. — «Արի՛, Մոխրո՛տ, արի՛, մեր մազերը սանրի, մեր կոշիկները սրբի, մեր կոճակները մեր պցի, գնում ենք թագավորի պալատը խնջույքի»:

Ինչ որ ասում են, ամեն բան Մոխրոտը կատարում է, բայց սիրտն ուզում է, որ ինքն էլ պար գա, ինքն էլ ուրախանա. խորթ մորը խնդրում է, որ իրեն էլ հետները տանեն պալատը:

— Ը՛հ, հողեմ գլուխդ, — ճշում է խորթ մերը — ակաս-

մակաս՝ էդ մոխրոտ տեղովդ հենց դու էիր պակաս թագավորի պալատում: Ոչ հագիդ հագուստ ունես, ոչ ոտիդ ոտնաման, դու էլ ես ուզում պալատումը պար գա՞ս, տո Մոխրոտ:

Դեռ էդպես խնդիրքը մերժում է, վերջն ասում է.

— Դե լավ. մի աման ոսպ եմ ածել մոխիրը, երկու ժամումը թե կշոկես՝ հետներս քեզ էլ կտանենք, թե չէ՝ հո՛ չենք տանիլ:

Մոխրոտն էս լսում է թե չէ, հտեի դռնիցը դուրս է թռչում պարտեզը ու կանչում.

«Իմ ընկերներ՛ր, աղունակներ՛ր,
Երկրների տակ թռչող հավեր,
Թռո՞ք եկե՞ք ամեն կողմից.
Վեր քաղեցեք ոսպը մոխրից.
Լավե՛ ամանը, վատը՝ ձեզ կեր.
Իմ ընկերներ՛ր, թռչուն հավեր՛ր»:

Էս ասելն է լինում: Մին էլ էն է տեսնում խոհանոցի լուսամուտից երկու ճերմակ աղավնի ներս ընկան, նրանց հտեից տատրակները, տատրակների հտեից էլ մնացած թռչունները: Մվլալով իջնում են ուղիղ մոխրի վրա ու, կը՛տկը՛տ, կտուցներով սկսում են ոսպը մոխրից վեր քաղել, վատերն ուտել, լավերն ածեց, ամանի մեջ: Մի ժամ էլ չի քաշում՝ բոլոր ոսպը ջոկում, հավաքում են, ետ թռչում գնում: Մոխրոտը ամանն առնում է, ուրախ-ուրախ տանում տալիս խորթ մորը, ասում է՝ հիմի ինձ էլ հետը կտանի: Խորթ մերն ասում է. — «Չէ՛, չեմ տանիլ, ոչ հագիդ հագուստ ունես, ոչ ոտիդ ոտնաման. ի՞նչպես պետք է պալատումը պար գաս: Դու խաղք ու խայտառակ կլինես, մենք էլ քեզ հետ»:

Մոխրոտը լաց է լինում: Էն ժամանակ խորթ մերն ասում է.

— Դե լավ՝ երկու աման ոսպը մի ժամում թե մոխրիցը ջոկեցիր, հետներս կտանենք, թե չէ՛ հո չէ: Ատրտան՝ էլ ասում է՝ «Էս հո իսկի չի կարող անի»:

Երկու աման ոսպն ածում է մոխիրը, իսկ Մոխրոտը հտեի դռնից պարտեզն է վազում.

«Իմ ընկերներ՛ր, աղունակներ՛ր,
Երկրների տակ թռչող հավեր»:

Քրոնք եկեք ամեն կողմից,
Վեր քաղեցեք ոսպը մոխրից.
Լավն՝ ամանը, վատը՝ ձեզ կեր,
Իմ ընկերներ, թրուռն հավթե՛ր»:

Կանչում է թե չէ՝ խոհանոցի լուսամուտից թրթուրով երկու ճերմակ աղավնի են ներս ընկնում, նրանց հուկից տատրակները, տատրակների հուկից էլ մնացած թռչունները: Մըլվըլալով իջնում են մոխրի վրա ու, կը՛տ-կը՛տ, կտուցներով սկսում են ոսպը մոխրից վեր քաղել, վատերն ուտել, լավերն ածել ամանի մեջ: Մի ժամ էլ չի քաշում, բոլոր ոսպը ջոկում, հավաքում են, ետ թռչում գնում: Մոխրոտը ամանն առնում է, ուրախ-ուրախ տանում է տալիս խորթ մորը, ասում է՝ հիմի անպատճառ ինձ էլ կտանի հետը: Խորթ մերն ասում է.— «Ինչ ուզում ես արա, մին է, քեզ հետներս չենք տանելու. ոչ հագիդ հագուստ ունես, ոչ ոտիդ ոտնաման, ի՞նչպես պետք է պալատում պար գաս: Դու խաղք ու խայտառակ կըլնես, մենք էլ քեզ հետ»: Ասում է, երեսը շուռ տալիս, իր երկու գոռոզ աղջիկներին առնում գնում:

Մոխրոտը տանը մնում է մեն-մենակ: Վեր է կենում գնում մոր գերեզմանի վրա, ընկուզենու տակին կանգնում ու կանչում.

Ժած ե՛կ, իմ ծա՛ռ, ձրգիր դառ-վառ
Ոսկի-արծաթ շոր ինձ համար»:

Կանչում է թե չէ՝ ճերմակ թռչնակը ծառի վրիցը ոսկեկար ու արծաթակար մի ձեռք շոր ու ոտնամաններ է գցում ներքև: Մոխրոտն իսկույն հագնում է ու շտապում պալատը: Արծաթակար ու ոսկեկար զգեստը հագին՝ էնքան գեղեցիկ է լինում, որ խորթ մերն ու քույրերը չեն ճանաչում: Ասում են՝ ով գիտի ինչ թագավորի աղջիկ է: Մոխրոտն իսկի մտքներովն անց էլ չի կենում. ասում են՝ հիմի նա, տանը նստած, կեղտոտ-կեղտոտ՝ մոխրիցը ոսպն է ջոկում:

Թագավորի տղեն որ տեսնում է, իսկույն դեմն է գալիս, ձեռիցը բռնում է, հետը պար է գալիս, ու էլ ձեռք ձեռիցը բաց չի թողնում:

էպես մինչև իրիկուն պար է գալիս, իրիկունն էլ, որ ուզում է տուն գնա, թագավորի տղեն ասում է.

— Ես քեզ ճանապարհ կդնեմ:

Շատ է ուզում իմանա, թե ո՞վ է էն գեղեցկուհին, ի՞նչ անանից է, ո՞ւմ աղջիկն է: Բայց ճամփին Մոխրոտը հանկարծ թռչում է, մտնում իր հոր աղավնոցը, կորչում: Թագավորի տղեն սպասում է, մինչև որ Մոխրոտի հերը գալիս է: Ասում է՝ էն անծանոթ գեղեցկուհին քո աղավնոցը մտավ: Մերունին միտք է անում.— Չլինի թե մեր Մոխրոտն է էս գեղեցկուհին...

Աղավնոցը քանդում են, տակնուվրա են անում, ոչ Մոխրոտ կա, ոչ ուրիշ օբյեկտ:

Դու մի՛ ասիլ՝ Մոխրոտը մի կողմից աղավնոցի գլուխն է բարձրացել, մյուս կողմից ներքև թռել ու մի ակնթարթում ընկուզենու տակ կանգնել: էնտեղ իր ճոխ զգեստները հանել է դրել մոր գերեզմանի վրա ու թռչնակը ետ է տարել, իսկ ինքը վազել է խոհանոց՝ նորից մոխրի վրա պառկել: Խորթ մերն ու աղջիկներն էլ գալիս են տեսնում՝ ինչպես որ թողել են, էնպես էլ՝ Մոխրոտը՝ գուրչերը հագին՝ մոխրի վրա պառկած, կողքին էլ ձիթի ճրագը մխում է:

Մյուս օրը հանդեսն էլ ետ նորոգվում է: Հերը, խորթ մերն ու քույրերը դարձյալ նոր շորեր են հագնում ու գնում, իսկ Մոխրոտը շտապում է իր ընկուզենու տակն ու կանչում.

«Ժած ե՛կ, իմ ծա՛ռ, ձրգիր դառ-վառ
Ոսկի-արծաթ շոր ինձ համար»:

Ճերմակ թռչնակը առաջվանից ավելի գեղեցիկ մի ձեռք շոր է գցում ներքև: էս շորերը հագին Մոխրոտը որ չի հայտնըվում խնջույքո՞ւմ՝ շափաղը պալատի պատերովն է տալիս, հանդիսականները մնում են բերանները բաց: Դու մի՛ ասիլ՝ թագավորի տղի աչքն էլ հենց ճամփին է լինում: Տեսնում է թե չէ՝ դեմն է վազում, ձեռիցը բռնում է տանում ու միմիայն նրա հետ է պարում շարունակ: Ուրիշ պարեկներ էլ որ մոտենում են, ասում է՝ չէ, իմ պարընկերը սա է, միայն սրա հետ պետք է ես պար գամ:

էլ ետ մութը որ ընկնում է՝ աղջիկն ուզում է գնա իրենց տունը: Թագավորի տղեն հուկիցը գնում է, որ աչքով պահի, տեսնի թե ում տունն է մտնում: Մոխրոտը վազում է ընկնում իրենց տան հուկի պարտեզը: Պարտեզում մի տանձենի

է լինում, լիքը հասած հրաշալի տանձերով: Սկյուտի նման ճարպիկ էն ծառն է բարձրանում ու ճյուղերի արանքում էնպես է կորչում, որ թագավորի տղեն չի էլ կարողանում նկատի, թե որտեղ թաքնվեց: Սպասում է, մինչև Մոխրոտի հերը գալիս է: Ասում է.

— Էն անծանոթ աղջիկը էլ ետ աչքիցս թռավ ու, կարծես թե՛ էս ձեր տանձենուն բարձրացավ...

Հերը միտք է անում.— «Չլինի թե էս մեր Մոխրոտն է...»

Հրամայում է, կացինը բերում են, տանձենին կտրում են՝ վրեն ոչ ոք չկա: Մտնում են խոհանոցը. տեսնում են, ինչպես միշտ, դարձյալ մոխրի վրա պառկած է: Դու մի՛ ասիլ՝ ծառի մի կողմից բարձրացել է, մյուս կողմից իջել, լավ շորերը տարել է տվել թռչնակին, հին գուրչը հագել ու էլ ետ եկել մոխրի վրա պառկել:

Երրորդ անգամն են տանըցիք գնում խնջույք: Մոխրոտն էլ երրորդ անգամ վազում է մոր գերեզմանի վրա, իր ընկուզենու տակ կանգնում ու կանչում.

«Ժած ե՛կ, իմ ծա՛ռ, ձրգիր զառ-վառ
Ոսկի-արծաթ շոր ինձ համար»:

Էս անգամ ճերմակ թռչնակը մի էն տեսակ ճոխ ու շքեղ զգեստ է գցում ներքև, որ աշխարհքում հողեղեն մարդը ոչ ունեցել է, ոչ կունենա. իսկ ոտնամանները՝ զուտ ոսկուց:

Էս զգեստը հագին, զուգված-զարդարված որ հանդեսի մեջ դուրս է գալիս՝ ամենքն էլ արմանքից ու զարմանքից բշտում, վերանում են: Իսկ թագավորի տղեն սկսում է հետը պարել, շարունակ պարել, ով որ էլ մոտենում է, ասում է.

— Չէ՛, մենակ ես պետք է պարեմ սրա հետ...

Էլ ետ որ մուծն ընկնում է, Մոխրոտն ուզում է գնա, թագավորի տղեն էլ ուզում է ուղեկցի. բայց էնպես ձեռաց սահում է ու շքանում, որ տղեն չի էլ կարողանում ետևիցը հասնի: Միայն թե թագավորի տղեն էս անգամ խորամանկություն էր բանեցրել: Հրամայել էր, որ պալատի սանդուղքները ձյութեն: Սանդուղքները ձյութած են լինում ու, շտապ իջնելու ժամանակ, աղջկա ձախ ոտնամանը կաշում է սանդուղքին, մնում:

Թագավորի տղեն ոտնամանը վերցնում է ու վրեն զարմանում, թե ինչքան է փոքրիկ ու ինչքան է սիրուն, էն էլ զուտ մաքուր ոսկուց:

Մյուս օրը վեր է կենում, ոտնամանն առնում, գնում Մոխրոտի հոր մոտ: Ասում է՝ կա թե չկա, նա պետք է լինի իմ կինը, ում ոտին էս ոտնամանը կգա:

Խորթ քույրերը ուրախանում են: Իրենք էլ փոքրիկ, սիրուն ոտներ են ունենում: Մեծ քույրն իսկույն խընդմընդալով իր սենյակն է վազում. մերը կողքին կանգնում է, ինքը ոտնամանը ոտի վրա փորձում է: Փորձում է, բայց փոքր է գալիս, ինչ անում է, չի անում, մեծ մատը ոչ մի կերպ ներս չի գնում: Մերը դանակը հանում է իրեն է տալիս, ասում է.

— Ա՛ռ, մեծ պճեղըդ կտրի: Վախիլ մի՛, որ թագուհի դառնաս՝ ոտով հո շե՛ս ման գալու: Աղջիկը դանակն առնում է, մեծ պճեղը կտրում, ոտը կոխում է ոտնամանի մեջ ու, մի կերպ ցավին հաղթելով, դուրս է գալիս թագավորի տղի մոտ:

Թագավորի տղեն ասում է՝ իմ հարսնացուն սա է, որ կա: Էս աղջկանը գավակն է առնում, ձին քշում: Բայց ճամփին էն գերեզմանի մոտից անց կենալիս՝ ընկուզենու վրից երկու ճերմակ աղավնի կանչում են.

Ղո՛ւ, զո՛ւ, տղա՛, շե՛ս նըկատում,
Ոնց է ոտից արյուն կաթում.
Փոքր է ոտին ոտնամանը,
Քու հարսնացուն մընաց տանը.

Էստեղ թագավորի տղեն մտիկ է անում, տեսնում է՝ աղջկա ոտնամանից արյունը ծորելով գնում է: Ձիու գլուխը ետ է շուռ տալիս, էս աղջկանը ետ է տանում, ասում է՝ սա իմ հարսնացուն չի, թող մյուս քույրը փորձի՝ տեսնենք:

Երկրորդ քույրն է վազում իր սենյակը, որ ոտնամանը ոտին փորձի: Պճեղները լավ են գնում, բայց սրա էլ կրունկն է մեծ դուրս գալիս: Մերը դանակը հանում է իրեն տալիս, ասում է.

— Ա՛ռ, կրնկիցդ մի քիչ կտրի, վախիլ մի՛, որ թագուհի դասնաս՝ ոտով հո շե՛ս ման գալու:

Աղջիկը կրնկից մի քիչ կտրում է, ոտը մի կերպ ոտնամանի մեջ է կոխում ու, ցավին զոռելով, դուրս է գալիս թագավորի տղի մոտ:

Թագավորի տղեն ասում է՝ հիմի արդեն գտա, սա է իմ հարսնացուն, որ կա: Ձին նստում է, աղջկանը գավակն է առնում ու քշում:

Գերեզմանի կողքից անց կենալիս՝ ընկուզենու վրից էն երկու աղունակներն էլ ետ կանչում են.

— Ղո՛ւ, ղո՛ւ, տղա՛, շե՛ս նրկատում,
Ոնց է ոտից արյուն կաթում.
Փոքր է ոտին ոտնամանը,
Քու հարսնացուն մընաց տանը:

Թագավորի տղեն մտիկ է անում, տեսնում՝ արյունը դուրս է ծորում աղջկա սպիտակ գուլպաների տակից ու ոտնամանից կաթկթում: Ձիու գլուխը ետ է շուռ տալիս, կեղծ հարսնացուին էլ ետ բերում իրենց տունը: Ասում է.

— Սա էլ չի իմ իսկական հարսնացուն: Գուք էլ ուրիշ աղջիկ շունե՞ք...

Հերն ասում է.— Ձե՛՛, էլ ուրիշ աղջիկ շունենք: Ծճմարիտ է, իմ առաջվա կնկա մահից հետո մի փոքրիկ աղջիկ մնաց, որ մենք Մոխրոտ ենք ասում, բայց դե նա ձեզ վայել հարսնացու չի. որտեղից որտե՛ղ...

Թագավորի տղեն ուզում է անպատճառ Մոխրոտին տեսնի.

— Ձե՛, ամա՛ն,— ասում է խորթ մերը.— նա էնպես կեղտոտ է, որ վրեն մտիկ անել չի լինիլ:

Բայց թագավորի տղեն կանգնում է, թե՛ ինչ ուզում է լինի, պետք է տեսնեմ,— ու ձեն է տալիս, Մոխրոտին կանչում:

Մոխրոտը, երեսն ու ձևները շարմաղ լվացած, դուրս է գալիս, գլուխ տալիս թագավորի տղին: Սա էլ ոսկի ոտնամանը նրան է տալիս, որ ոտին չափի:

Տեղն ու տեղը նստարանի վրա նստում է, փետե կոպիտ ոտնամանները հանում, ոսկի ոտնամանը հագնում: Էնպես

է ոտին գալիս, ոնց որ հալած-թափած: Որ ոտի է կանգնում ու ժպտալով թագավորի տղի աչքերի մեջ նայում, թագավորի տղեն հանկարծ ճանաչում է, տեսնում է՝ սա հենց էն գեղեցկուհին է, որի հետ ինքը պարում էր ու որին ման է գալիս:

— Ահա,— ասում է,— վերջապես գտա իմ իսկական հարսնացուն:

Խորթ մերն ու իր աղջիկները վախից վեր են թռչում, նախանձից ու ցավից քաթանի պես գունատվում: Թագավորի տղեն իր ձին հեծնում է, Մոխրոտին գավակն առնում ու թռչում դեպի իր պալատը: Մոխրոտի մոր գերեզմանի մոտից անցնելիս՝ ընկուզենու վրից էն երկու ճերմակ աղունակները մնչում են.

— Ղո՛ւ, ղո՛ւ, տղա՛, շե՛ս նրկատում,
էլ արյուն չի ոտից կաթում.
Ոտնամանը ոտինն է բուն,
Բարով տանես քո հարսնացուն:

էսպես մնչում են, հետո ցած են թռչում, մինը Մոխրոտի աջ ուսին է բազմում, մյուսը ձախ ուսին: Ու էդպես էլ մնում են:

Հարսանիքի ժամանակ Մոխրոտի խորթ քույրերն էլ են գալիս, որ իրենց վրա էլ կաթի նրա բախտիցը, ու իբրև թե ուրախանում են: Պսակ գնալիս մեծը Մոխրոտի աջ կողմն է կանգնում, փոքրը ձախ կողմը, ու աղունակները մեծի աջ աչքն են հանում, փոքրի ձախ աչքը: Պսակից ետ գալիս մեծը ձախ կողմն է անցնում, փոքրը աջ կողմը: էս անգամ էլ աղունակները մեծի ձախ աչքն են հանում, փոքրի աջ աչքը, ու թողնում: Ու էսպես, երկուսն էլ իրենց շարությունից կուրանում են, ու ամբողջ իրենց կյանքում էլ մնում են կույր:

Լև Տոլստոյ

1

Մի աղջիկ է լինում. էս աղջիկը մի անգամ դուրս է գալիս իրենց տնից ու գնում ընկնում անտառը: Անտառում մտորվում է, ճամփի է ման գալիս՝ ճամփա չի գտնում, ու գալիս է դեմ առնում մի տնակի:

Դուռը բաց է լինում: Նայում է, տեսնում է տանը ոչ ոք չկա:

Ներս է մտնում: Դու մի՛ ասիլ՝ էս տնակում երեք արջ են ապրում՝ հերը, մերը և իրանց քոթոթը: Էդ ժամանակ գնացած են լինում անտառը ման գալու: Տնակը ունենում է երկու սենյակ՝ մինը սեղանատուն, մյուսը ննջարան:

էս աղջիկը սեղանատունն է մտնում, տեսնում է սեղանի վրա դրած երեք աման ապուր: Առաջինը՝ հոր ամանը, մեծ է լինում. երկրորդը՝ մոր ամանը, միջակ, երրորդը՝ քոթոթի ամանը, փոքրիկ: Ամեն մի ամանի մոտ էլ մի-մի գդալ է լինում դրած՝ մեծ, միջակ ու փոքր:

Աղջիկը առնում է մեծ գդալը, ուտում մեծ ամանից, անհամ է լինում:

Հետո վերցնում է միջակ գդալը, ուտում է միջակ ամանից, դուր չի գալիս:

Հետո վերցնում է փոքր գդալը, ուտում է փոքր ամանից: Տեսնում է փոքր ամանի ապուրը համով է:

Ուզում է նստի՝ տեսնում է երեք աթոռ՝ մինը մեծ, մյուսը միջակ, երրորդը փոքր: Բարձրանում է մեծ աթոռին՝ վեր է ընկնում: Նստում է միջակ աթոռին՝ տեսնում է անհարմար է: Նստում է փոքր աթոռին, քեֆը գալիս է, էնքան լավն է լինում: Վերցնում է փոքր ամանը, դնում է ծնկներին ու սկսում է փոքր գդալով ուտել:

Ուտում է կշտանում ու սկսում է օրորվել աթոռի վրա: Աթոռը կոտրվում է, աղջիկը վեր է ընկնում:

Վեր է կենում, աթոռը ետ բարձրացնում ու մտնում մյուս սենյակը:

Մյուս սենյակում երեք մահճակալ է լինում՝ մինը մեծ, մյուսը միջակ, երրորդը փոքր:

Պառկում է մեծ մահճակալի վրա՝ տեսնում է շատ է լին: Միջակի վրա է պառկում՝ տեսնում է շատ է բարձր: Փոքրի վրա պառկում՝ տեսնում է հենց իրենն է որ կա, ու քնում է:

Արջերը քաղցած գալիս են, որ ճաշեն: Հերը մոտենում է իր ամանին, մտիկ անում ու զարհուրելի գոռում.

— էս ո՞վ է կերել իմ ամանից:

Մերը մտիկ է անում իր ամանին ու փնթփնթում.

— էս ո՞վ է կերել իմ ամանից:

Քոթոթն էլ, որ տեսնում է իր դատարկ ամանը, ծըմըրում է.

— էս ո՞վ է կերել իմ ապուրը:

Հերը նայում է իր աթոռին ու փնթփնթում.

— էս ո՞վ է նստել իմ աթոռին ու տեղից ժած տըվել:

— Մերն է նայում իր աթոռին ու փնթփնթում.

— էս ո՞վ է նստել իմ աթոռին ու տեղից ժած տըվել:

Քոթոթն է նայում իր կոտրած աթոռին ու ծըմըրում է.

— էս ո՞վ է նստել իմ աթոռին ու կոտրել:

Մտնում են մյուս սենյակը:

Հերը նայում է իր մահճակալին ու զարհուրելի գոռում.

— էս ո՞վ է պառկել իմ անկողնին ու տրորել:

Մերը նայում է իր մահճակալին ու փնթփնթում.

— էս ո՞վ է պառկել իմ անկողնին ու տրորել:

Քոթոթն է նայում իր անկողնին ու ծըմըրում.


— էս ո՞վ է պառկել իմ անկողնում:

Հանկարծ աղջկանը նկատում է ու Էնպես ճղղում, կարծես թե մորթում էին իրեն:

— էս ո՞վ է... գտել եմ... հրես... բռնեցե՛ք... վայ... վայ... բռնեցե՛ք:

Եվ ուզում է աղջկանը կծի: Աղջիկը վախից վեր է թռչում, աչքերը բաց անում, տեսնում է՝ պառկած է իրենց տանը, իր ննջարանում: Ու էս բոլորը երազ է եղել:

1920



ԳՐԱԵՈՍՈՒԹՅՈՒՆ

Մոնոլյանց Պետրոս:—«Բանաստեղծություններ»:
Աղիքսանդրապոլ. տպարան Աբրահամ Մալխասյանցի,
1892 թ., 68 էրես, գինն է 25 կ.

Այս գրքի մասին ստիպում է խոսել ոչ թե արժանիքը, այլ այն հանգամանքը, որ լռությունը կխաբե հեղինակին, և նա, իրան շարունակ բանաստեղծ համարելով, իզուր, և նույնիսկ վնասակար աշխատանք կանի գրականության համար: Մանավանդ բանաստեղծի հռչակ ունենալու ցանկությունը հիվանդացած է մեր երիտասարդների մի նշանավոր մասը, որոնք, չնչին բացառությամբ, նույնքան զուրկ են բանաստեղծական բնատուր շնորհքից, որքան և պ. Մոնոլյանը:

Սրանց սրտումը բանաստեղծական կրակի տեղ մի ճճիկա, որ անհանգիստ է անում, ստիպում է մի գործ կատարել, մի փառք վաստակել. բայց որովհետև չեն կարողանում կամ չի հաջողվում այդ, գողանում են, մուրում են թեմաներ, մտքեր, այլանդակում են, հանգեր են թխում և անճոռնի հումահատ աղաղակներով բարձրանում Ոլիմպոսի գագաթը՝ անհայտ շկորչելու և ավելի բարձր երևալու համար: Սակայն նոքա չեն խաբիլ ընթերցող հասարակությանը և հայոց Մուսայի համար ընդհանուր արհամարհանք են վաստակել, բանաստեղծի նշանակությունը ծիծաղելի են դարձրել. այն տեղն են հասցրել, որ «Բանաստեղծություններ» վերնագիրը կրող գիրքը շատ անգամ առանց կարդացվելու է պախարակվում:

Այդ դժբախտ հերոսներից մեկն է պ. Մոնոլյանը: Մեր վկան նորա գիրքն է:

Վերցնենք առաջին ոտանավորը — «Մուսա», որ իբրև գոհար գրած է գրքի ճակատին:—

«Ոլիմպոսի սուրբ գագաթից Արամազդը զայրացավ, երբ...

մի հողեղեն տեսավ: Պերսեփոնին հրամայեց նրան Տարտարոս տանել... Դյուցազնները սարսափեցին, բայց Մուսայի ահեղ դեմքը շարսափեց (ղոշաղ դեմք): Այն ժամանակ Արամազդը հարցրեց. «Ասեք, Հերմես, Ապոլլոն... գուցե ձեր է սա (Մուսան) ժառանգ մի երկրային կնոջից: Եվ Ապոլլոնը շոքեց, ներում աղաչեց.

«Ներում եմ, ասաց Արամազդ,
Բայց դու շտապիր ողջունել,
Ոլիմպոսի բարձունքից
Անմահ հողով պսակել»:

Ապոլլոնը չգիտեմ ինչպես հասկացավ այս հրամանը, միայն «խոստացավ Մուսային իր քնար... երգեց տխուր հրաժեշտով (հրաժեշտը), պատվերներ տվեց, «և երկնածին (չէ՞ որ երկրային կնոջից էր ծնվել) վե՛հ Մուսան հեշտագին սլացավ Ոլիմպոսի բարձունքից»:

Մուսայի աշխարհ գալու պատմությունն է երգի առարկան: Բայց ինչու համար Արամազդը զայրացավ և Տարտարոս ուղարկեց հողեղենին. խեղճը խոմ «ասավոր բարձունքը չպղծեց»: Ե՛րբ է Արամազդն արգելել հողեղեններին ներքև շրջել — երևալ: «Զէ՛ր կարելի ուրիշ բանով զայրացնել հայր Արամազդին (օրինակ, մի ճանճ քթին նստեք, կամ մի օրինակ բանաստեղծություններ ստանար Աղեքսանդրապոլից) Մուսայի քաջությունը ցույց տալու համար: Բայց մի՞թե Մուսան յուր ահեղ դեմքից շարսափելու համար աքսորված է Ոլիմպոսի գագաթից. և մի՞թե երկնայիններից ավելի քաջասիրտ է երկրային կնոջ ծնունդը...

Վերցնենք երկրորդ ոտանավորը՝ «Ժմ ընդետային».

Բանաստեղծը յուր պարտիզի ծաղիկներից բաժանում է սիրուն հափրուկին (եթե ընդետան հափրուկ է, էլ ինչու չգրել հափրուկ) և զարդ ընտրում յուր սրտին անշուք (1): Հափրուկը զրկված յուր վիճակից «վարդափթիթ ծաղկի ստվերով անուշ հոտ էլ չի տարածում» (?). երգիչը զղջում է, թե ինչի (ինչու) քաղեց (վերևն էլ ասում է բաժանեցի — ուրեմն պուկել է) յուր քնքույշ ծաղկին և սպասում է (մենք էլ հետը) շորանալուն: Բայց, հանկարծ, ո՛վ հրաշք, ծաղիկը սենյակի մի լուռ անկյունում ուրախ, անհոգ սրտով դարձյալ ծաղկում

է և բուրում՝ «անցածը իսպառ մոռնալով»: Եվ սրան բանաստեղծը անվանում է «անգութ բախտին հնազանդվել»: Ստիպված ենք հայտնելու պ. Մոճոռյանին, որ քաղած հափրուկը եթե յուր անգութ բախտին հնազանդվե՛ր՝ պիտի շորանար, ոչ թե շորանալուց հետո դարձյալ ծաղկեր և բուրբեր...

Երրորդ ոտանավորում պ. Մոճոռյանը պատմում է, որ «Լայն ու ազատ կամարում հուսո վերջին նշույլով մի փոքրիկ վարդագույն ամպ է տեսել սիպտակ թևերով, շար հողմերի ճանկերում դանդաղ լողալիս, որի սիրտը, սակայն, շտապում է...»:

Բնությունը շատ հրաշալի պատկերներ է ստեղծում, բայց բնությանը ծանոթ մարդը լայն ու ազատ կամարում այսպիսի հրաշք չի լինիլ տեսած: Ամպը վարդի գույն է ընդունում արշալուսի կամ վերջալուսի շողերից. և բուրբովին կարմրում է կամ միայն եզերքն են կարմրում, բայց երբեք չի պատահիլ, որ ամպի մեջը կարմրեր, իսկ եզերքը սիպտակ մնային. այն էլ մի փոքրիկ ամպի: Փոքրիկ ամպի «հուսո վերջին նշույլը» և «շտապող սիրտն» էլ բնության զաղտնիքներ են, որ Ոլիմպոսի այս սիրելիին են միայն ըմբռնելի:

Այսպես, կարգով կարելի էր գնալ մինչև այն ցանկալի, խորհրդավոր բառը, որ կոչվում է «վերջ». բայց բանաստեղծը մեզ կանգնեցնում է յուր գերեզմանի վրա: Երես 39 («Գերեզմանիս վերա», նվեր օր <իորդ> Հ. Մ.-ին), Այստեղ իմանում ենք, որ բանաստեղծը մեռած է եղել (և այս երազ չէ), օրիորդը նրա վրա վերջին անգամ մի բուռն սև հող է ձգել լալով, բայց նա յուր շորացած հափրուկի նման կրկին հարություն է առել:

Մի անգամ, երկնքում աստղեր շտեսնելով, պ. Մոճոռյանը բացականշում է.

«Փոռոզ աստված մի ձեզ հանգցրեց
Նախանձելով ձեր ազատ փառքին,
Թե՛ անողոք մի բռնակալ ձեզ վանեց
Դեպի մութ վայրեր, լայն Տարտարոսին...» (երես 18):

Մի ուրիշ անգամ տեսնելով, որ մի աստղ թռավ, նա հարցնում է.

«Ասե՛ք, աստղեր... ազատ, շատ փայլեր
Նրա լուսիցը ծայթբեցին...» (Երես 51):

Այս բոլորի համար պ. Մոճուռյանը մեզ պատասխանում է.

«Դատարկ է սիրտս և ամայացած...
Ա՛խ, ե՛րբ ես տեսնի մի շորցած ծաղկի
Բուրհի ու բացվել գարնան ցողորով» (Երես 44):

Եվ այս խոստովանելով հանդերձ դարձյալ ստիպում է մեզ յուր դատարկ ու ամայի սրտում բանաստեղծի խանդ ու ավյուն որոնել, շորցած ծաղկից բուրմունք ընդունել...

Պր. Մոճուռյանը ոչ թե զուրկ է թեկուզ փոքրիկ բանաստեղծի երևակայությունից և շնորհքից, այլև հասարակ հիշողություն անգամ չունի: Նա առաջին տողում ասածը մոռանում է մյուս տողում և այդպիսով հառաչանում են խայտառակ հակասություններ, որոնք այնքան շատ են և աչքի ընկնող, որ մարդ ամեն մի ոտանավոր կարդալուց հետո, ակամայից հիշում է մի ուրիշ այսպիսի բանաստեղծի նշանավոր դարձած տողերը.—

«Կապույտ երկնքում աստղեր են փայլում,
Կարկուտ ու կայծակ գլխիս են թափվում»:

Ինքնաստեղծ այլանդակ բառեր ու նախադասություններ որքան կամենաք.— մոլեգնային վշտեր, անշուք սիրտ, շարձակատագրի անողոք բախտ, որոտ հրաման, և այլն և այլն:

Հանգերի ու վանկերի մեծ անհամաձայնության մասին էլ չենք խոսում:

Պր. Մոճուռյանը նմանություններ շատ ունի (Վտակ, Ամպ, Տվեք ինձ մի քաղցր բուն, Եթե սիրտս ոչ մի տեղում, և այլն): Այս անհիշատակ նմանություններն էլ այնքան են հաջող, որ ինձ հիշեցնում են մի ուրիշ բան.— Մեր գյուղացի քարտաշին տվել էին ձիու պատկեր, որ նմանը փորագրի մի քաջ մարդու գերեզմանի վերա. ուստի փորագրել էր և ձիու տեղ գուրս էր եկել էջ:

Այստեղ արդեն ժամանակ է բարի խորհուրդ տալու պ. Մոճուռյանին, թողնել բանաստեղծությունը և յուր գործը ճանա-

չել թե չէ, ոչ թե հռեղենների անհայտ մեղքերի, այլ այսպիսի բաների համար միայն Ոլիմպոսի սուրբ գագաթից կզայրանա հայր Արամազդը, և գուցե Տարտարոս էլ ուղարկի:

1892.

ՄԵՐ ՆԱԽՈՐԳ ՇՐՋԱՆԻ ԲԱՆԱՍՏԵՂՄԱՆԵՐԸ

(Խ. Արովյանի հիշատակին)

Այս դարի կեսերից մեր կյանքում ամենուրեք, ուր հայ է ապրում, սկսվում է մի եռանդուն մտավոր շարժում, եղած ուսումնարանների վրա տասնյակներով նոր ուսումնարաններ են բացվում, հին ուսումն ու ուսուցման խալիֆայական եղանակը դատապարտելով, մանկավարժական նոր ձևերով, կյանքի պահանջներին ավելի հարմար նոր գիտելիքներ են ավանդվում. իրար հետևից պարբերական թերթեր են հրատարակվում և հայոց հրապարակախոսը յուր թերթի ճակատին նշանաբան է դնում՝ «Այսուհետև ոչինչ եգիպտական բուրմեր, որ կամեին լինել գիտության միակ պահապանքը, այսուհետև ոչինչ Չինեական պարիսպ, որ պիտո է փակեր լուսավոր գաղափարների մուտքը ազգերի մեջ: Այսուհետև լույս և ճշմարտություն և ազատություն խավարի բաբելոնյան գերությունից» («Հյուսիսափայլ»):

Այդ ժամանակներից տպագրությունը լայն ծավալ է առնում, և հայոց գրողը, որ գրաբար էր գրում, և որքան կարող էր ավելի խրթին, որ զարմացնի ու ցույց տա, թե «որքան խորը տեղյակ է հայերենին», կանգ է առնում՝ միտք անում. «...ում համար գրեմ, որ ազգը լեզու չի՝ հասկանալու թեկուզ ոսրեն, նեմեցերեն, յա ֆոանցուզերեն գրած, թեկուզ գրաբար՝ տասը կըլի, որ հասկանային, բայց հարիր հազարի համար՝ թեկուզ իմ գրածը, թեկուզ մեկ քամու ջաղաց: Ախր որ ազգը էն լեզվովը չի՛ խոսում, էն լեզուն չի՛ հասկանում, սաքի հենց բերնիցդ էլ ոսկի վեր ածի՛ր. ում պետք է ասես...» («Վերջ Հայաստանի»): Եվ այսպես միտք անելով յուր քերականությունը, ճարտասանությունը, տրա-

մաբանությունը ծալում, «ղրաղ» է դնում ու սկսում է յուր հայրենիքի վերքը — յուր սրտի ցավը ժողովրդի լեզվով հայտնել ու պատմել՝ գրականութան մեջ անսասան դնելով աշխարհաբարի հիմքը:

Այդ ժամանակները գյուղերից ուսումնաստենչ պատանիներն փախչում են քաղաք ուսում առնելու, մարդ դառնալու համար: Այդ ժամանակները քաղաքներից երիտասարդները հազար ու մի նեղություններով իրանց պցում են եվրոպական համալսարանները, և միշտ հիշելով հայրենի երկրի խեղճությունը — օր ու գիշեր ձգնում ու տքնում են նրա համար լույս ու մխիթարանք բերելու լուսավորության արևելքից: Եվ իրար հետևից վերադառնում, գալիս են բարոյական ու կենցաղավարական նոր հայացքներով ու հասկացողություններով. ժողովրդի լուսավորությանը ծառայելու, նրան բարձրացնելու տենչանքներով վառված ու ոգևորված սկսում են մի մոլեռանդ գործունեություն — մի շտեմնված իրարանցում ձգելով ընդարձացած ժողովրդի խավերի մեջ:

Այդ՝ կենդանութան թարմ ու առողջ մի շունչ էր, որ փչեց մեր քնաթաթախ թմրած կյանքում սթափեցնելով ու ցնցելով՝ մինչև ուր հասավ: Այդ մեր նոր կյանքի արշալույսն էր, որի նշույլները հենց՝ որ սլացան մեր խավար կյանքում — ազատարար կոչնակի նման Ռուսաստանի հյուսիսային ծայրի: Եվ այդ ազգային վերածնությանը հառաջընթաց բանաստեղծ, ձայնը —

Հառա՛ջ հայություն, հառա՛ջ ազգություն,
Լուսավոր դարուս գաղափարներով:

(Ս. Ծ ա հ ա գ ի զ)

Այդ բոլորովին նոր երգ էր, նոր խոսքերով ու եղանակով: Նա պարզ ու հասկանալի լեզվով հառաջ է կանչում ժողովրդին. գիտության, կրթության, լույսի ու ճշմարտության անունով էր հուզում ու խրախուսում, յուր ոգևորության հետ հասարակաց պիտույքն էր բարձրացնում Պառնաս, և ձգտում էր լինել հասարակաց զգացմունքի թարգմանն ու բարձր արտահայտությունը:

Հիրավի մի այլ երկնքի տակից Պեշիկթաշլյանը կանչում է.

Տո՛ւր ինձ քո ձեռքդ, եղբայր եմք մեք,
Որ մրրկավ էինք զատված.
Բաղդին ամեն ոխ շարանենդ
Ի մի համբույր ցրուին ՚ի բաց:

Եվ այս ուղու, հաշտարար ձայնը դատապարտելով նեղ կրոնական պառակտումները, հեռու նախանձը, դավանական ատելությունն ոգին, բախտի շարանենգ ռիսերը մի համբույրով ցրվելով ու հերքելով հայտարարում է, որ եղբայրությունը վեր է կրոնական դավանություններից, և աստղերի տակ նրանից սիրուն ոչ մի բան չկա:

Այնինչ արդեն հնչում էր Ռ. Պատկանյանի (Գ. Քաթիպայի) քաղաքացիական քնարի ձայնը. իսկ նրանից առաջ թափառական Մ. Թաղիադյանը վաղուց արդեն մրմնջում էր.

Տէ՛ր, կեցո՛ւ զհայս
Եվ արա զնոսա պայծառս...

Եվ Հնդկաստան, Տաճկաստան, Պարսկաստան — երկրերիկիր տարուբերելով ու դեգերելով աղաղակում էր լուսավորություն, կրթություն...

Ահա այս մարդկանց և նրանց գործերի վրա ես կփորձեմ մի թեթև հայացք ձգել¹:

1899

Ղ. ԱՂԱՅԱՆՑ

(Քառասունամյակի օրը)

Այսօր գրական հաղթանակի և փառավոր հիշողությունների օրն է: Քառասուն տարվա հիշողություններ, որ զարդարում են Ղ. Աղայանին:

Ես էլ, որպես նրա մոտիկներից մինը, ունեմ շատ ու շատ հիշողություններ նրա կյանքից, և հատկապես նրա կյանքի այն ծանր շրջանից, երբ որ նա կիր թագավորի նման իր օրե-

1 Հովհ. Թումանյանն այս հոդվածը գրել է «Տարազ» շաբաթաթերթում տպագրելու համար: Գրաքննության արգելքի պատճառով հոդվածը չի տպագրվել, ուստի և մնացել է անավարտ:

րի դեմ կարող էր որոտալ՝ ամ ո թ ձ ե գ, որ վ ե ր ե ք կ ա-
ց ե լ ա յ ս ք ա ն ծ ե ր ու ս պ ի տ ա կ մ ի գ լ խ ի դ ե մ:

Բայց այդ հիշողութիւններն այժմ թողնելով, այսօր սի-
րելի է ինձ հրճվանքով շեշտել նրա երկու բարձր հատկու-
թիւնները:

Նա ունեցել է խոր հավատ ու հարգանք դեպի իր գրիչը,
գրելը համարել է մի սրբազան արարողութիւն, գրիչ առնե-
լիս կարողացել է վերանալ, և նրա բանաստեղծական աշ-
խատանքն էլ եղել է միշտ վեհ, իդեալական, մաքուր, ման-
կական:

Նա երբեք ընկճված չի եղել հոգով և որտեղ հայտնվել է,
իր հետ տարել է երիտասարդական թարմութիւն և բանա-
ստեղծական ոգևորութիւն: Նա ոգևորվել է ամեն բանով, ինչ
որ լավն է, գեղեցիկ է:

Եվ նրա հրճվանքն ու զայրույթը միշտ եղել են անկեղծ,
սրտալի: Դրա համար էլ նրան շատ են սիրել, սիրել են նույն-
իսկ այնպիսի մարդիկ, որոնք երբևից սխալ են համարել
նրան:

Սակայն, այսօր երբ պետք է փառաբանել նրա 40 տարվա
գործքերն ու գրվածքները և նրանց վրա ուրախանալ, ես մի
տարօրինակ վշտով: Ես փսսոսում եմ նրա այն գործքերն ու
գրվածքները, որ մնացին անկատար: Քանի-քանի անգամ նա
սգևորված պատմել է այդ գրելիքների մասին: Երկար տարի-
ներով սիրած-փայփայած հերոսներ ու գաղափարներ, միշտ
պայծառ, միշտ բարի ու սիրուն...

Եվ մի՞թե բոլորը կմնան ծրագիրներ:

1902

ԻՆՔՆԱԿՆԵՍԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր տոհմը Լոռու հին ազնվական տոհմերից մեկն է: Իր
մեջ ունի պահած շատ ավանդութիւններ: Այդ ավանդութիւն-
ներից երևում է, որ նա եկվոր է, բայց պարզ չի՛, թե ո՞ր-
տեղից: Թե եկվոր է՛լ է, անհերքելի հիշատակարանները ցույց
են տալիս, որ նա վաղուց է հաստատված Լոռու Դսեղ գյու-
ղում:

242

Իմ հայրը, Տեյ Թադևոսը, նույն գյուղի քահանան էր:
Ամենալավ և ամենամեծ բանը, որ ես ունեցել եմ կյանքում,
այդ եղել է իմ հայրը: Նա ազնիվ մարդ էր և ազնվական՝
բառի բովանդակ մտքով: Չափազանց մարդասեր ու առա-
տաձեռն, առակախոս ու զվարճաբան, սակայն միշտ ունեւր
ի խոր լրջութիւն: Թեև քահանա, բայց նշանավոր հրացա-
աձիգ էր և ձի նստող:

Իսկ մայրս բոլորովին ուրիշ մարդ էր: Երկու ծայրահեղո-
րեն տարբեր արարածներ հանդիպել էին իրար: Մայրս —
Սոնան, որ նույն գյուղիցն էր, սարում աչքը բաց արած ու
սարում մեծացած, մի կատարյալ՝ սարի աղչիկ էր, ինչպես
գյուղացիքն են ասում, — մի «գիծ պախրի կով»: Նա շէր
կարողանում համբերել հորս անփույթ ու շռայլութիւնը,
և գրեթե մշտական վեճի մեջ էին այդ երկու հոգին:
Այդ էր պատճառը, որ հայրս երբեմն թաքուն էր տեսնում իր
գործը: Շատ է պատահել, որ մայրս տանից դուրս է գնացել
թե չէ, ինձ կանգնեցրել է դռանը, որ հսկեմ, ինքը՝ ցորենը
լցրել, տվել մի որևէ պակասավոր գյուղացու կամ սարից
իշած թուրքի շալակը:

Իրիկունները, երբ տուն էինք հավաքվում, մայրս անդա-
դար խոսում էր օրվան անցածի կամ վաղվան հոգսերի մա-
սին, իսկ հայրս, թինկը տված՝ ածում էր իր շոնգուրն ու եր-
դամ Քյորոզին, Քյարամը կամ Գրեէ հոգեւոր երգ:

Ահա այս ծնողներից ես ծնվել եմ 1869 թվի փետրվարի
7-ին: Մանկութիւնս անց եմ կացրել մեր գյուղում ու սա-
րերում:

Մի օր էլ մեր դռանը մայրս ճախարակ էր մանում, ես
խաղում էի, մին էլ տեսանք, քոշերը հագին, երկար մազե-
րով ու միրքով, երկաթի գավազանը շրխկացնելով, մի օտա-
րական անցավ:

— Ելաւիր, էդ կլեկուն կանչի՛ր, ամանները տանք, կլե-
կիւ, — ասով մայրս: ~~Մայրս փողեցի, ընկա ուստի նտեից~~
կանչեցի: Դուրս եկավ, որ կլեկչի չէ՛, այլ՝ մեր ազգականի
փեսա՝ տիրացու Սահկն է: Սկսեցի գրույց անել: Տիրացուն
խոսք բաց արավ իր գիտութեան մասին:

— Տիրացու ջան, բա ի՞նչ կըլի, մեր գեղումը մնաս, երե-
խանցը կարդացնես, — խնդրեց մայրս:

16*

243

— Որ դուք համաձայնվեք, ինձ պահեք, ես էլ կմնամ, ի՞նչ պետք է ասեմ,— հայտնեց տիրացու Սհակը:

Գյուղումն էլ տրամադրություն կար, և, մի քանի օրից հետո, տիրացու Սհակը դարձավ Սհակ վարժապետ: Մի օթախում հավաքվեցին մի խումբ երեխաներ, տղա ու աղջիկ շարվեցին երկար ու բարձր նստարանների վրա, եղավ ուսումնարան, և այստեղից սկսեցի ես իմ ուսումը:

Մեր Սհակ վարժապետը մեզ կառավարում էր «գաւազանաւ երկաթեաւ»: Իր երկաթե գավազանը, որ հրացանի շամփուրի էր նման, երբեմն ծռում էր երեխաների մեջքին, ականջները «քոքհան» էր անում և մեծ կաղնեների քանոնով «շան լակոտներին» ձեռների կաշին պլոկում: Ես չե՛մ կարողանում մոռանալ մանկավարժական այդ տեղերը:

Վարժապետի առջև կանգնած երեխան սխալ էր անում թե չէ՝ սարսափից իրան կորցնում էր, այլևս անկարելի էր լինում նրանից բան հասկանալ, մեկը մյուսից հիմար բաներ էր դուրս տալի: Այն ժամանակ կարմրատակում, սպառնալի՝ շուփի թևերը ետ ծալելով, տեղից կանգնում էր վարժապետը ու բռնում... Քիթ ու պոռնկն արյունոտ երեխան, գալարվելով, բառաշում էր վարժապետի ոտների տակ, զանազան սրտաճմլիկ աղաչանքներ անելով, իսկ մեներ, սփրթնած, թուքներս ցամաքած, նայում էինք՝ ցրտահար ծտերի նման շարված մեր բարձր ու երկար նստարանների վրա: Ջարդած երեխային վերցնում էին մեջտեղից:— «Արի՛»,— դուրս էր կանչում վարժապետը հետևյալին...

Մի երեխայի ուսումնարան ղրկելիս հայրը խրատել էր, թե՛ «վարժապետն ի՞նչ որ կասի, դու էլ էն ասա»: Եկավ:

Վարժապետն ասում է՝ «Ասա՛ այք»:

Նա էլ կրկնում է՝ «Ասա՛ այք»:

— Տո շա՛ն զավակ, ես քեզ եմ ասում «Ասա՛ այք»:

— Տո շա՛ն զավակ, ես քեզ եմ ասում՝ «Ասա՛ այք»:

Այս երեխայի բանը հենց սկզբի՛ց վատ գնաց, և այնքան ծեծ կերավ, որ մի քանի ժամանակից «ղաշաղ» ընկավ, տանիցն ու գեղիցը փախավ, հանդերումն էր ման գալի: Բայց մեր Սհակ վարժապետի շարությունից չէ՛ր դա: Այս տեսակ անաստված ծեծ այն ժամանակ ընդունված էր և սովորական

բան էր մեր գյուղական ուսումնարաններում: Գյուղացիներից էլ շատ քչերն էին բողոքում: Այդ ծեծերից ես չկերա, որովհետև վարժապետը քաշվում էր հորիցս, բայց մանավանդ մորիցս էր վախենում: Զմոռանամ, որ Սհակ վարժապետին սիրում էին մեր գյուղում և մինչև օրս հիշում են:

Տասը տարեկան, մեր գյուղից հեռացել եմ Զալալօղլի, ուր մեծ և օրինակելի ուսումնարան կար, այդ ժամանակ՝ Լոռում շատ հայտնի «Տիգրան վարժապետի» հսկողության տակ: Այնտեղից էլ անցել եմ Թիֆլիս, Ներսիսյան դպրոց, որ չե՛մ ավարտել:

Շատ վաղ եմ սկսել ոտանավոր գրել: 10—11 տարեկան ժամանակս Լորիս-Մելիքովի՝ վրա երգեր էին երգում ժողովրդի մեջ: Այդ երգերին տներ էի ավելացնում և գրում էի զանազան ոտանավորներ — երգիծաբանական, հայրենասիրական և սիրային: Սիրային ոտանավորներից մեկը, մի դեպքի պատճառով, տարածվեց ընկերներիս մեջ ու մնաց մինչև օրս: Ահա՛ այդ ոտանավորը.

Հոգո՛ւս հատոր,
Սըրտի՛ս կըտոր*,
Դասիս համար
Դու մի՛ հոգար.
Թե կա՛ն դասեր,
Կա՛ նաև սեր,
Եվ ի՛նչ զարմանք,
Ի՛մ աղավնյակ,
Որ կենդանի
Մի պատասր
Սերը սըրտում՝
Դաս է սերտում:

Այս ոտանավորը գրված է 1881 կամ 82 թվին: Զե՛մ կարող չհիշել, որ այն ժամանակ ոտանավոր էր գրում և՛ իմ փոքր

¹ Լորիս-Մելիքով Միխայել (1825—88)— կոմս, գեներալ, 1877—78 թթ. ռուս-թուրքական պատերազմում Կովկասյան հատուկ զորաբանակի հրամանատարը, պատերազմական գործողությունների փաստական ղեկավարը: 1880—81 թթ. Ռուսաստանի ներքին գործոց մինիստրը:

* Այս երկու տողն ընդհանրացած տողեր են, որով ժամանակի սիրահարներն սկսում էին իրանց նամակները: Լ. Ք.

եղբայրը, որ կարդում էր ինձ հետ, և միշտ գտնում էին, որ նա ինձանից լավ է գրում:

Իմ տպաված հոտանավորների մեջ ամենավաղ գրածը «Շունն ու Կատուն» է, որ գրել եմ 1886 թվին:— 1888 թ. ամուսնացել եմ: Մառախուժյան եմ մտել մի քանի տեղ, բայց ամեն տեղ էլ շե՛ն հավանել, այնպես որ «Պոետն ու Մուզայի» մեջ ուղի՛ղն եմ ասել: Սկզբնական շրջանում սիրել եմ ուսուսանաստեղծ լերմոնտովին, ավելի ճիշտը — նրա ա՛յն գործերը, որ սովորել եմ ուսումնարանում: Բայց, հենց որ ծանոթացել եմ եվրոպական բանաստեղծների և ավելի լայն գրականության հետ, այն օրվանից ինձ համար ամենասիրելին մնում է Շեքսպիրը:

1905

ԱՆԿԵՂՄ ՉԵՆՔ

Երբեք այսքան մեծ չի եղել անկեղծության կարիքն ու կարոտը, ինչպես այսօր, և երբեք այսքան ահռելի շփոթում չի հայտնվել կեղծիքը, ինչպես այսօր:

Դարավոր կարգերի ու հասկացողությունների հեղաշրջումի օրը, պատմության ահավոր դատաստանի օրը:

Մեծ ալեկոծություններն ու ակնկալությունները ամենքին տեղահան են արել, դուրս են բերել իրենց անկյուններից. և ահա — ժողովուրդներն իրենց ունեցած ուժերով հրապարակի վրա են:

Ամեն մարդ շարժվում է, ամեն մարդ խոսում է:

Անշուշտ նա պիտի շարժվեր այնպես, ինչպես ինքն է կամենում, և խոսեր այն, ինչ որ ինքն է մտածում:

Այդպես պիտի լիներ մարդը, ևս առավել այս տեսակ մի ժամանակի առաջ, երբ շարժումը կամ խոսքը կարող է ունենալ այնպիսի հետևանք, որ ուրիշ ժամանակ աներևակայելի է:

Նրա այս խոսքից կամ այն շարժումից կախված է շատ բան:

Եվ հանկարծ... դուք տեսնում եք... Նա խաղ է անում, դերասանութուն է անում:

Դերասանութունը գեղեցիկ է բեմի վրա, ուր խաղում են, բայց նա գարշելի է կյանքի մեջ, ուր ապրում են:

Դրա համար էլ բեմի վրա խաղացողները շնորհքով մարդիկ են, իսկ կյանքում խաղացողները՝ ցածերն ու կեղծավորները:

Նրանք խաղ են անում ամեն տեղ, ամեն բանի հետ, և ահա, մեր կյանքը ավելի նման է թատրոնական բեմի, ու այդ բեմը թեև փոքր, բայց, տեսեք, ո՛րքան դերասաններ ունի...

Իրենց վրա առած զանազան դերեր՝ նրանք մտել են ու խաղում են այս կամ այն ասպարիզում:

Ահա սա՛ ներկայանում է ամեն տեղ որպես շճասկացված ու հալածված գաղափարական գործիչ, մյուսը նշանավոր հերոս է խաղում, երրորդը հրապարակախոսություն է սարքել, չորրորդը բարեգործ է ձևանում, հինգերորդը գրող է կեղծում, վեցերորդը հանդիսանում է արդեն որպես նահատակ, յոթերորդը գալիս է որպես դատավոր, ամենքին մեղադրելու և ամենքից հաշիվ ուզելու...

Ու բնականաբար, շնայելով այսքան շատ գործիչների ներկայությանը, դուք զգում եք, որ ցուրտ է, որովհետև չկա անկեղծության ջերմությունը, զգացմունքի հուրը, որովհետև նրանք խոսում են լեզվով, իսկ սիրտները շատ է հեռու և զզվում եք վերջապես:

Սրանք ոչինչ չեն սիւղում, այլ ցույց են տալի, թե սիւղում են:

Եվ ինչպես դերասանն ունի իր դերը, որ տանում է, իսկական գործիչն ունի իր խաչը, որ կրում է, սրանք էլ, այս կամ այն գործին կպչելով, փոխանակ գործի ծանրության տակ մտնելու և տանելու, իրենք են բարձրանում, հեծնում նրա վրա ու շինում են իրենց էջը:

Եվ այս դերասաններից ամեն մեկն ունի իր էջը, ու միշտ էլ իր էջն է զրում, թեկուզ աշխարհը քանդվի:

Հաճախ սրանց շահատակութունը տեղում է շատ երկար, նայած թե ինչ տեղ են մեյդան բաց արել և ով են թամաշավորները կամ երբ են գլխի ընկնելու:

Ու որպեսզի այդ թամաշավոր-ժողովրդի սիրտը շահած լինեն ու բարեկամ պահած, միշտ գոռում են «ժողովրդի» անունը:

Խոսքն ընչի մասին ուզում է լինի, միշտ վերջացնում են «ժողովուրդով»: Ժողովուրդն այսպես է կամենում...

«Ժողովուրդը մեզ հետ է... Ժողովուրդը ձեզ կդատի... Ո՞րն ես, ժողովուրդ, անարգում են քեզ...»:

Այդ հերիք չէ դեռ: Ժողովուրդն էլ են կեղծում:

Իրենց մարդկանցից ոմանց հանդես են բերում կեղծ ստորագրություններով, անգրագետներին իրենց շինած հողավածներով ու ներկայացնում որպես ժողովուրդ:

— Տեսե՛ք, ժողովուրդը մեզ հետ է:

Դե եկեք ու ջոկեցեք իսկականը կեղծիքից: Եվ ո՞վ պիտի ջոկի, ե՞րբ, ո՞ր մի տեղը...

Կեղծի՞ք ու խաչագողություն՝ ամեն օր, ամեն տեղ, ամեն տեսակի:

Եվ մի ժողովուրդ, որ այսքան կեղծիքներ ու կեղծավորներ ունի, այսքան խարդախներ ու խաչագողներ ունի, չի սիրվիլ, որքան կուզե խելոք լինի, որքան կուզե գոռա, թե կուտուրական եմ ես...

Նրա գործերը միշտ գետնին կմնան, որքան ուզում է գործիչներ ունենա:

Նրա մեջ կատարված հասարակական, թե ազգային գործերը խախուտ են միշտ:

Նրա ամեն ընկերակցությունը հենց սկզբից իր մեջ ունի քայքայման բոլոր սաղմերը:

1907

ՀԱՅՈՑ ՆՈՐ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՄՅԱԿԸ

1858 թվականին Թիֆլիսում Ներսիսյան դպրոցի տպարանից դուրս եկավ աշխարհաբար մի գիրք «Վերք Հայաստանի, Ողբ Հայրենասերի» վերտառությամբ, շարադրություն խաչատուր Աբովյանի: Այս այն երջանիկ գիրքն է, որ հայոց նոր աշխարհիկ գրականության առաջին հիմնաքարն է ընդունված: Եվ ահա այս տարի լրանում է այդ գրքի տպագրության — հայոց նոր գրականության սկզբնավորության հիսնամյակը: Մի հոյակապ առիթ՝ մի մեծ համազգային տոն կազմելու,

վերարծարծելու, կենդանացնելու շատ նվիրական զգացմունքներ ու գաղափարներ, որոնցով ոգևորվել է, այո, ժողովուրդը, և մի ընդհանուր հաշիվ տեսնելու այն գեղեցիկ երկերի ու գործերի, ինչ որ կարողացել է տալ հայի հանճարը էս հիսուն տարում: Գուցե կարելի կլիներ և արժանավայել ձեռնարկություններով հավերժացնել հայ մտքի այդ տոնը — նորանոր ուսումնարաններ ու գրադարան-ընթերցարաններ բանալ, կենտրոնական համազգային գրադարան կամ թանգարան հաստատել, կամ հիմնել հայոց գրական ֆոնդը, նրա նով միանգամ ընդմիշտ վերացնել ամեն մի գրողի հոբելյանին փող հանգանակելու սովորությունը և հոբելյանները վերածել զուտ գրական տոների:

Անշուշտ կլինեն և շատ ուրիշ ձեռնարկությունների առաջարկներ, գուցե և հարկավոր չի դատվիլ կամ զլուխ չի գալ այս ձեռնարկություններից ոչ մինը — այսուամենայնիվ պետք է կատարել այդ մեծ տոնը, որ ինքնըստինքյան կունենա բարոյական ահագին նշանակություն և համատարած հայ ժողովրդի ընդհանուր ոգևորության, լավագույն հիշողությունների ու պայծառ հույսերի օրը կլինի: Այդ տեսակ օրեր շատ չեն լինում ժողովուրդների կյանքում: Պետք է տոնել:

1908

ՈՉԳՐԱԿԱՆ ՈՉՆՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՔՆՆԱԳԱՏ

«Մեզմ ու բարի լինելով՝ դու ասում ես. մեղավոր չեմ երանք իրանց շնչին գոյությունով: Իսկ երանց եկ հոգին մտածում է. մեղ է ծանրացած ամեն մի մեծ գոյության վրա»:

Նիցշե

Աշխարհքում մի մարդ կա, անունը Ռ. Դրամբյան: «Մի դիպվածով» էդ Ռ. Դրամբյանի ձեռքն են ընկնում իմ կազմած և իշխանուհի Մ. Թումանյանի հրատարակած մանկական պատկերազարդ գրքույկները: Կարդում է «Միտը»: Բարեբախտաբար միայն էս մեկը: Պարոնը սուր հիշողություն է ունենում: Հիշում է, որ դա վերցված է Ս. Հայկունու առակներից:

219

Հայմեմատում է: Տեսնում է նույնն է «բառացի»: Կարդում է «լուսաբերի» հեքիաթներից — նույն բանը... Մտածում է. ահա թե ինչով են «մեծանում» մեր «Տեղիմակություն ու դիրք ձեռք բերելու տենչով տարված գրագետները...»: Ինչով են փառք վաստակում ու գումարներ դիզում...:

Մաղձը շարժվում է մարդուկի ներսը, տեսնում է «շանտաժ», «ժանտախտ» ու բարձրանում է անխնա «Տարվածելու կծու խայթիչ լեզվով»: Առանց ձեռքը դողալու, առանց զգալու, առանց տատանվելու գրում է «Դրական մեծությունները բանագող», նոր սերունդին բույկոտի է հրավիրում նրանց դեմ («Մշակ» № 162) ու քիթը սրբում, աչքերը ճպճըպացնելով վեր է կենում գնա իր սովորական ճանապարհը, որտեղից եկել էր «դիպվածով»:

Ո՛ր, կանգնեցեք, գրական մեծություններ սանձահարող անսանձ փոքրություն: Էստեղ տվեք ձեր ականջներն ու կանգնեցեք մեր առջև: Էսպես: Ես ճանաչում եմ ձեզ: Դուք մի որևէ Ռ. Դրամբյան չեք: Դուք մինը չեք: Դուք շատ եք: Դուք տիպ եք: Դուք էն պատիկ, մաղձոտ ու մութ հոգին եք, էն հավիտենական անկոչ պրոկուրորը, որ ամեն տեղ, ուր կերևա, միայն «դիպվածով» լսած լինելով մի բան, դատում ու դատապարտում է քամեն գործ ու գործիչ, առանց ճանաչելու, առանց ամաչելու: Դուք էն անհոգի, տափակ ընթերցողն եք, որ կարդում է, պարապությունից ու «դիպվածով» ձեռքն ընկած մի քանի տողով, առանց խոր ու լուրջ նայելու, առանց հասկանալու, տգետ ու թեթև սկսում է քննադատել ու «հարվածել», և առանց հասկանալու էլ շարտում է բառերը, — շանտաժ, ժանտախտ, բանագող... Թեկուզ և դեմը կանգնած լինի մի գրական մեծություն:

Կանգնեցեք ձեզ հասկացնեն, որ եթե մի մարդու ասում եք գրական մեծություն, զգույշ պիտի լինեք նրա դեմ գրական կովի դուրս գալիս, ճանաչեք ձեր շահը ու չհամարձակվեք մյուս անգամ էլ էդպես ստահակորեն հոխորտալով ու բերաններդ շաղ տալով ծառս լինել մի այլ գրական մեծության դեմ:

Ո՛վ Դրամբյան:

Դուք էնքան տգետ եք, չեք էլ իմանում, որ հեքիաթները գրական մարդիկ չեն հորինում, այլ առնում են ժողովրդական

նր ու պատմում: Եվ շնորհքը հենց էդ պատմելու մեջն է. որ իմանան ի՞նչը փոխեն, ինչը դուրս գցեն, ինչը պահեն, ինչ լեզվով, ինչ ռեժով ու ինչպես պատմեն, որ և գեղեցիկ դուրս գա և ժողովրդականի համն ու հոտը շկորցնի:

Էսպես է, ո՛վ հայոց գրողներին «կլթող» Դրամբյան: Եթե ես առած լինեի նույնիսկ Ս. Հայկունու գրքից, դարձյալ կմընար իմ արածն օրինավոր ու անպարսավելի: Սա է էն ուղիղ ճանապարհը, որով հոսանք պետք է տալ, ներս բերել առողջ ժողովրդական ստեղծագործությունները և ուժեղ, հարուստ, կենդանի լեզուն:

Դուք էդ չեք հասկանում, հերիք չէ, դեռ դրա հետ էլ սուտ եք ասում, խաբում եք մարդկանց, իբր թե ես իմ պատմած «Ծիտը» վերցրել եմ Հայկունու գրքից: Էն էլ «բառացի»: Եվ մինչև անգամ երեսն եք ցույց տալիս: Դե այժմ աչքներդ բաց արեք, նայեցեք ձեր ցույց տված երեսին: Ես գրել եմ «Ծիտը», Հայկունին «Աշըղ-Այհլորը»: Իմ ծախ ոտը փուշ է մըտնում, Հայկունու այհլորը փուշ է գտնում: Իմ ծիտը տեսնում է պառավը փետի է ման գալի, ուզում է թոնիրը վառի, փետ շունի. Հայկունու այհլորը տեսնում է պառավը թոնիրը վառում է, չի կաշում: Իմ ծիտը գնում է տեսնում հովիվն անհաց է կաթ ուտում. Հայկունու այհլորը տեսնում է հովիվը «պտըտուրը» փրդել է կաթնի մեջ, էնպես է ուտում: Իմ ծիտը տեսնում է հարսանիքում մսացու շունեն, որ մորթեն. Հայկունու այհլորը տեսնում է շուն են մորթել: Իմ ծիտը հարսը տալիս է աշուղին, ինքը դատարկ ետ գնում. Հայկունու այհլորը հարսը փոխում է «ճունգուլի» հետ: Նրա այհլորը տալիս է աշուղի աչքը հանում, իմ ծիտն էդպես բան չէ անում: Հայկունու հեքիաթի ուղիղ կեսը կրկնություն է, իմ հեքիաթում չկա: Իմ պատմածի ծախ երգը Հայկունու վարիանտում չկա: Վերջապես Հայկունու հեքիաթը նրանով է վերջանում, որ այհլորը հարսին տանում է տիրանում: Իսկ իմ ծիտը բոլորովին մնում է դատարկ, մինչև անգամ ձեռք սազն էլ երգելիս վայր է ընկնում կտրվում ու դատարկ էլ թռչում է, գնում:

Մի քանի տող հեքիաթ և էսքան տարբերություն: Եվ հեքիաթն էլ հենց ամբողջովին կազմված է սրանցից: Դեռ լեզուն էլ թողնենք մնա:

Ասեք, խնդրեմ, դիպվածական պարոն, սրա՞ն եք ասում՝

«նույն պատմությունն է բառացի»: Սրանո՞վ եք եկել բանագող հռչակելու հայոց (ահա թե որտեղ է դժբախտությունը) գրական մեծությունները: Սրա համա՞ր եք հայոց թերթերում նոր սերունդը բոլորի հրավիրում իմ դեմ:

Եվ էս դեռ էն է, որ ասում եք՝ «բառացի» եմ վերցրել, իսկ եթե մյուսներին գամ, որ նույնիսկ ձեր ասելով «փոփոխված են» կամ «ոտանավորի վերածած», ի՞նչ կտեսնեք: Բայց սրանից հետո, որքան էլ դուք Դրամբյան լինեք, գլուխներդ պետք է մտնի, որ ոչ թե չեմ օգտված Հայկունու վարիանտից, այլ իմն ու նրան: Եր միանգամայն տարբեր վարիանտներ են: Նրա հերոսը իր գտածն է տալի, իմը իր ցավը, նրա հերոսը հարսի տեր է դառնում, իմը մնում է դատարկ: Եվ նրա վարիանտը ես չեմ էլ հավանում, սխալ եմ համարում:

էդ պրծանք: Հիմի էս ասեք. ես ե՞րբ եմ էդ հեքիաթը հրատարակել որպես «ինքնուրույն աշխատություն», ո՞վ լուրջ քննադատ Դրամբյան:

Բաց արեք «Նուսաբեր» 1907 թ. ա. տարի, էջ 96. տպված է սև տառերով սպիտակ թղթի վրա՝ «Միտը — ժողովրդակա-նից»: էլ ի՞նչ եք ուզում: Այնուհետև իշխ. Քումանյանի հրատարակությամբ պատկերազարդ տպված է 2400 օրինակ, իսկ 50,000 անգամ, ամենաքիչն եմ ասում, լրագիրներում ու առանձին թերթիկներով հայտարարված է, թե հա՛յ, հարա՛յ, իմացեք ողջ աշխարհն ու բոլոր Դրամբյաններդ, որ էս գրքը-բույկները կազմած են Հովհ. Քումանյանի ինքնուրույն գրք-վածքներից ու ժողովրդականից առած նյութերից: էլ ի՞նչ անեինք, ով Դրամբյան, էլ ի՞նչպես վարվեինք, որ ազատ-վեինք ձեր «լուրջ կրիտիկայից»:

Եվ տեղն է եկել, թող ասեմ: Գրեթե բացառապես ես, եթ. ժողովրդական մի նյութ եմ մշակում, միշտ էլ հիշատակում եմ ու շեշտում, թե տեսեք, որ «ժողովրդականից է»: Բայց չէ՞ որ էս մինչև անգամ ավելորդ է, և սովորաբար էսպես չեն անում, նախ, որովհետև արդեն փոփոխված է, երկրորդ, ամեն խելքը գլխին մարդ, էն նույնիսկ ուսմիկը, գիտի, որ հեքիաթը, առակը կամ լեգենդը էս մարդիկ չեն հնարում, չեն ստեղծում, այլ պատմում են, և հերիք է եթե սկսում են՝ «լինում է, չի լինում», կամ գրում են՝ հեքիաթ, առակ, լեգենդ: Արդեն պարզ է: Դրա համար էլ ուղղակի գրում են՝ «Հեքիաթներ

Ղ. Աղայանի», «Հեքիաթներ Ս. Փամպլյանի», «Волшебные сказки Перро», «Норвежские сказки Андерсена», և այլն, և այլն: Եվ մինչև ձեր ծնվելն ու «դիպվածով» հողված գրելը դեռ էս աշխարհում չէր հայտնվել մի խելոք, որ կարծեր, թե էդ մարդիկը բանագողներ են, թեև միշտ առել ու մշակել են ժողովրդական նյութերից, որ տպված են էս կամ էն ազգա-գրական ժողովածուների մեջ:

Հենց ինքներդ ընչի դեմ որ խոսում եք, նրանից ավելի հեռուն եք գնում: Դուք, ո՞վ «ամենախիստ» Դրամբյան, ձեր հողվածում հայ ժողովրդական առակները անվանում եք «Ս. Հայկունու աշխատություններ...»: Աշըղ այ՛լորը անվա-նում եք «Ս. Հայկունու առակը...», չնայելով որ նա, գոնե ինձ նման, չի կազմել զանազան տեղերից ու վարիանտնե-րից ու չի մշակել, այլ անփոփոխ վերցրել է ժողովրդինը, և մինչև անգամ էն էլ իսկի ինքը չի գրի առել, այլ բառացի, ինչպես կա, արտագրել է ուրիշի ժողովածուից: Զափա քա-շեցեք, կարդացեք հենց ձեր բաց արած երեսը (17), Աշըղ այ՛լորի տակը, տպած է. «Խոչեցոց մանկական առակնե-րից. Հայթաղ գյուղի բարբառով. գրի է առնված Հարություն Ավլյանի ժողովածուեն»:

Արդոք հասկանո՞ւմ եք ինչ եք անում և կամ կարո՞ղ եք հասկանալ, ո՞վ Դրամբյան: Նրան իր արտագրածի համար ասում եք Ս. Հայկունու աշխատությունը, իսկ ինձ իմ կազ-մածի ու պատմածի համար՝ բանագող...

Բայց դեռ կացեք ցույց տամ, որ դուք էդ անհույս կուրու-թյան ու անհատակ տգիտության հետ միաժամանակ և իսկի տեղեկություն չունեք էն առարկայից, ընչից որ խոսում եք:

Թողնում եմ, որ իմ շարաբաստիկ «Միտը» ու «Նուսաբե-րի» մյուս հեքիաթները գրված են շատ առաջ, «Նուսաբերի» ձեռագրի հետ միասին գտնվում էին ցենզորի մոտ և գիրքը տպելու թույլտվություն էր ստացված, որ Հայկունու առակ-ները դուրս եկան: Թողնում եմ մի կողմ, որ ես լոռեցի եմ ու էն գլխից, ոչ «դիպվածով», սիրել և հետաքրքրվել եմ հե-քիաթներով, լեգենդներով, առակներով, և շատերն անդրի գի-տեմ դեռ մանկուց: էդ բոլորը թողնում եմ մի կողմ: Ներքև նայեցեք, բեխաբար պարոն, որ զարմանքով տեսնեք, թե էդ հեքիաթներից քանի-քանի վարիանտներ տպված են եղել Հայ-

կունու գրքի դուրս գալուց ու ձեր տխուր ծագումից տասնյակ ասորիներ առաջ:

Համեցեք Մըտի կամ Աշըղ Այհլորի վարիանտները.

1) «Վարժարան», մանկավարժական ամսագիր, 1883 թ. № 6. էջ 77, Ճ ու տ ի կ ը. Ա. Մեհրաբյան:

2) Գ. Տեր-Աղեքսանդրյան — «Թիֆլիսեցոց մտավոր կյանքը». 1885 թ. էջ 412, Մ ը տ ի վ ու տ ի փ ու շ ը, Թիֆլիսեցոց բարրառով:

3) «Հայ ժողովրդական հեքիաթներ», Տիգրան Նավասարդյանի, 1894 թ. 8 գիրք, էջ 63, Կ ո ռ ս վ ա ծ ա ղ ջ ի կ ը. Խրիմու բարրառով:

4) «Сборник материалов для описания местн. и племен Кавказа», № 32, «Воробей», ингилойск. сказка.

5) Նույնը, էջ 106, «Лиса и пшеничное зерно», греческ. сказка.

6) Сб. 33, Проказы лисы. Имеретинск. ск.

7) Рудченко, Лисичка сестричка. Малорусск. сказка.

Եվ այլն: Եվ այլն: Հասկանո՞ւմ եք, ով միայն Հայկունին «դիպվածով» տեսած Դրամբյան:

Հիմի դուք Չախչախ թագավորը տեսեք, որ առում եք Հայկունու Թողոտ բեկն է. մի վարիանտ, որ անպայման անաջողներիցն է:

1) «Հայ ժողովրդական հեքիաթներ», Տիգրան Նավասարդյանի, 1890. 6 գիրք, Չ ա խ շ ա խ թ ա գ ա վ ո ռ, Վանի բարրառ:

2) Тюлки вэ Чак-чак-бек, татарск. сказка, в стихах. Султан Меджид Ганиев. 1894.

3) Сб. Мат. [ериалов]. Царь Грушь, кюринск. сказка.

4) 13, Лисица, армянск. сказка.

5) Сб. 19, «Лиса и мельник», имеретинская сказка.

6) Сб. 27, «Лесной человек и кот», ск. терск. казаков.

7) Сб. 28, «Лисица и пастух», армянская сказка.

8) Сб. 29, «Старая хлеб-соль не забывается», чеченская сказка.

9) Сб. 35, «Лиса и Армуданбек», татарск. сказка.

10) Афанасьев, «Козьма скоробогатый», русск. сказка.

11) Он-же, «Бухтан Бухтанович».

12) Сб. св. о кавк. горцах, «Букучи хан», аварск. сказка.

13) Волшебные сказки Перро. «Кот в сапогах», франц. ск.

Հերիք է՞ր արդյոք: Մյուսներն է՞լ կուզեք...

Եվ կրկնեմ, որ Հայկունու վարիանտները պատկանում են անաջողների շարքին: Բայց էս բոլորից արդյո՞ք մի բան եք հասկանում, ով գրական մեծութունների դաստիարակ Դրամբյան:

«Լուսաբերից» եք խոսում: «Լուսաբերը» կազմելու համար մենք ամենայայն կերպով օգտվել ենք ժողովրդական նյութերից և պիտի օգտվենք միշտ, որքան էլ կծու լինի Դրամբյանը ու խայթիչ: Էն էլ ոչ միայն մեր ժողովրդականից ենք օգտվում, այլև օտար աղբյուրներից՝ ռուսական, ֆրանսիական, գերմանական, լեհական, բայց մանավանդ անգլիական ու ամերիկական, հարկավ, մեր ինքնությանն ու մեր մտածողության եղանակին հարմարեցնելով:

Հեղինակի անունը հիշում ենք, եթե մի ուրիշ հեղինակից ենք վերցրել նույնությամբ, ինչպես, օրինակ, կտեսնեք տպած՝ Ամիշիս, Մամին Սիբիրյակ, Շիլլեր, Գյոթե, Անդերսեն: Եթե փոփոխած կամ վերապատմած է՝ ըստ Ամիշիսի, ըստ Մամին Սիբիրյակի, որ կտեսնեք ձեր բարի աչքով:

Գալով ժողովրդականին, նույնպես բոլորի դիմաց նշանակում էինք «ժողովրդական» կամ «ժողովրդականից»: Բաց արեք «Լուսաբերի» 1907 թ. Ա. տարվա ցանկը և կտեսնեք: Բայց հետագայում խմբագրությունը, ինչ-որ փոփոխված է, իր իրավունքը չհամարեց անվանել ժողովրդական ու վարվեց էնպես, ինչպես ամբողջ աշխարհքն է վարվում՝ միայն զուտ ժողովրդականի դեմը թողնել «ժողովրդական» բառը:

Եվ ահա էսպես, ո՞վ հայոց գրականության խուզարկու Դրամբյան:

Ինչպես տեսնում եք, ժողովրդական նյութերը՝ հեքիաթները, լեգենդները, առակները, երգերը, անեկդոտները թափառում են գավառից գավառ, երկրից երկիր, լեզվից լեզու, ազատ, անպասպորտ: Եվ իսկի մի զարմանաք, որ Ս. Հայկունու գրքից դուրս էլ նրանց հանդիպում եք էսքան շատ վաթիսնամյաներով կամ հենց նույնությամբ, մանավանդ նույն երկ-

րում, նույն ժողովրդի մեջ: Մի՛ գարմանաք ու մի՛ գայրա-
նաք, ով Դրամբյան:

Տեսնո՞ւմ եք, ես «դիպվածով» չեմ զբաղվել էս գործով: Տեսնում եք, Հայկունու գրքից առաջ էլ ինչքան նյութ ու քանի վարիանտ եմ ունեցել ձեռիս տակ, և ես ավելի զուրջ ու լուրջ եմ վերաբերվել մի «ծրտի», քան թե դուք մի «գրական մե-
ծության»: Դարձյալ մի՛ գարմանաք, ով Դրամբյան, այլ հաս-
կացեք, հենց էստեղ է տարբերությունը «մեծության» ու «ոչըն-
չության»:

Ես էլ շատ եմ ցավում, ով քնքուշ Դրամբյան, որ Հայկու-
նին մեռավ հետին չբավորության մեջ, ինչպես մեռան Բաֆ-
ֆիները, Գամառ-Քաթիպաները, ու դեռ շատերը պիտի մեռ-
նեն էս փուլ աշխարհում: Էդ ճշմարիտ է. բայց, հավատաց-
նում եմ, հանգուցյալը նրանից չմեռավ, որ ես «Միտը» գրե-
ցի... Ահա տեսեք, ինձանից ու Հայկունուց ուղիղ 26 տարի
առաջ Ա. Մեհրաբյանը նույն հեքիաթը գրել է «Վարժարանի»
մեջ...

Ի՞նչ անենք, ով Դրամբյան, ծաղիկը դրած է մեջտեղը և
նույն ծաղկից մեղուն մեղր է շինում, օձը՝ թույն:

Էդ ժողովրդական նյութերը անհիշելի ժամանակներից ան-
հուն ու անսպառ փոված են մեջտեղը. ինչո՞ւ չէիք օգտվում,
ով Դրամբյան: Եվ եթե օգտվողի դեմ խոսելու էր քան ախոր-
ժակ ունեք, ինչո՞ւ ավելի մեծ բանից չեք խոսում, քան թե
«Միտն» է: Մի Սասունցի Դավիթ... քանի ժամանակ էր բա-
նահավաքները Մոկաց մութը լեռներից բերել էին ձեր առջև
ձգել: Բացատրում էին ու հիանում: Սակայն ձեզ համար ու
ձեր հրեխանների համար նա գոյություն չունեի ու չկար: Չէ՞
որ նույն ժողովրդական նյութն եմ վերցրել ու միայն պատ-
մել, կամ ինչպես դուք ասում եք, «վերածել ոտանավորի», և
էն էլ աշխատել եմ որքան կարելի է «բառացի», ժողովրդա-
կանին հավատարիմ. ուրիշ ոչինչ:

Ո՞րտեղ էիք, ո՞վ Դրամբյան: Հիմի համեցեք, երբ որ «բա-
ռացին» էր քան հեշտ է, հմայիչ, հեղինակի կոչում է տալի և
գումարներ է դիզում: Ահա, փոված են...

Բայց ոչ, ձեզ չի տված՝ ոչ եղածը վերցնելու շնորհքը, ոչ
ստացածը գնահատելու առաքինությունը, այլ համբակի թե-
թեամտությունը և տափակ, փոքրիկ հոգու մաղձն ու թույնը:

Եվ դուր եք կարծում դուք, դուք և բոլոր ձեզ նման Դրամբ-
յանները, թե ես իմ էդ գործերով շատ եմ ինքնագոհ ու մեծ
բաներ եմ համարում: Մեծ բաներ են, այո՛, բայց ոչ ձեզ
համար. և ձեր խելը հազիվ թե «Մտին» էլ հասնի, իսկ ինձ
համար — երբեք:

Արդյոք հասկանո՞ւմ եք, ի՞նչ եմ ասում, ով լուրջ կրիտի-
կոս Դրամբյան:

Վերջացնենք:

Այո՛, «Ս. Հայկունին մեռավ հետին չբավորության մեջ,
ինչպես մեռան Բաֆֆիները, Գամառ-Քաթիպաները, Մուրա-
ցանը, Պարոնյանը և ուրիշները»: Լա՛վ. բայց դրա համար
իմ դե՛մ եք ղալմաղալ անում, ո՞վ դուք մեռելների սիրա-
հար ու կենդանիների թշնամի Դրամբյան, ո՞վ ամեն շնորհքի
հավիտենական ոխերիմ Դրամբյան, ամեն բարի աշխատանք
ուրացող, ամեն ազնիվ ու գեղեցիկ գործի շարախոս ու շա-
րակամ Դրամբյան, և, ավա՛ղ, անվերջ, անմահ Դրամբյան:

Ցավում ու գովում եք մեռելներին: Վաղն էլ, անկասկած,
կգովեք և ինձ. ինձ, որից, էսօր, հորդորում եք մանուկ սե-
րունդին — երես դարձնի: Կգովեք: Բայց գիտե՞ք, թե ձեր գո-
վասանքը ձեր հայհոյանքից ինչքան ավելի ծանր է ու գար-
շելի, ինչպես և զզվելի է ձեզ հետ վիճելը:

Եվ էս պատասխանը գրելուց առաջ ես վարանքի մեջ էի. —
լռեմ ու բանագողությունն ընդունեմ ինձ վրա, թե՞ պատաս-
խան տամ սրան. երկուսից ո՞րն է ավելի տգեղ ու անպատ-
վաբեր: Եվ, անշուշտ, ձեզ հետ վեճի բռնվելը շատ ավելի
տգեղ է ու անպատվաբեր, բայց պատասխանեցի, որովհետև,
ինչպես արդեն ասել եմ, դուք մեր կյանքում, դժբախտաբար,
«սովորական երևույթ» եք, թեև միաժամանակ միանգամայն
ոչնչություն:

1909

Շուրջվերցի իմ մի բարեկամը մի անգամ ինձ հետևալ պատմութիւնն արավ:

— Բեհբութովի կովի տարին՝ Ղարս տանող ռազմական ճանապարհը մեր գյուղովն էր անցկենում: Զորանոց չկար, և մեր գյուղում գիշերող զորքը բաժանում էին գյուղի վրա, ամեն մի տան մի կամ մի քանի զինվոր էին տալի պահելու:

Երեխա էի: Մի իրիկուն մեծ ախպերս հանդիցն եկավ, կրկենի արավ (բաղարջ), գցեց կրակը: Կրակի շոթս կողմը կտրած նստել ենք, սպասում ենք կրկենուն, մին էլ տեսնենք քոխվին մի զինվոր բերեց, թե գիշերը պետք է պահէր: Ինչ ասել կուզի, շատ սիրով ընդունեցինք, շոր գցեցինք տակը, կրակի մի կողմն էլ նա նստեց: Դե լեզու չգիտենք, բան չգիտենք: Հիմի հերս շիբուխ է քաշում, մերոնք էլ զրոսց են անում, թե ինչպես ուսն եկավ մեր երկիրը խաղաղության գցեց, ու օրհնում են ուսին, ուս թագավորի թախտը, ասա սալդաթին...

Հենց էս ժամախաղը սարդաթը տեղիցը վեր կացավ, էն կողմից կասկարենքը վեր կալավ բերեց, որ գցի կրակին, թաղած կրկենու վրա:

Ախպերս վրա թռավ կասկարենքը էն կողմը հրեց, աղաղակելով:

— Բրա՛տ, կրկենի՛, կրկենի՛...

Զինժորն, իհարկե, բան չհասկացավ, նեղացավ, մի քանի խոսք փնփնթաց. էն էլ մենք չհասկացանք, ու կրկին կասկարենքը բերեց դեպի կրակը: Ախպերս գարձալ հրեց գնեք: Նա քանի բերեց կրակին, սա հրեց դենը, և սրանց մեջ սկզբվեց մի լուռ կռիվ: Հասավ էնտեղ, որ բռնեցին ու սկսեցին իրար քաշքշել: Բայց էդ միջոցին կարող էր կրկենին այրվել, ու մենք հանեցինք մոխրի տակից: Զինվորն էս որ տեսավ, «ա՛...» բացականչեց ու հանգստացավ, ախպորս օձիքը թողեց, իր տեղը նստեց: Նորից կրակն իրար արինք, նա էլ իր «կատյուրը» դրեց վրեն, մենք էլ, ինչով կարող էինք պատվի-

ցինք: Թյուրիմացութիւնը դուրս եկավ մոխրի տակից. կռիվը վերջացավ սիրով, ու սիրով էլ առավոտը բաժանվեցինք, օրհնանքով ճանապարհ դրինք դեպի կովի դաշտը:

Այժմ ամեն անգամ, երբ խոսք է լինում մեր «սեպարատիզմի» մասին ու քաշքշում են մեզ զանազան լրագիրներում, հրապարակներում, կամ ամեն անգամ երբ ժողովուրդները, կամ ավելի ճիշտը, ժողովուրդների անունով խոսողները իրար օձիք են բռնում ու ատելութիւնը բորբոքում մարդկանց սրտաեքսում — միտս է գալի էս կրկենու պատմութիւնը ու մտածում եմ. անկարելի բան է, որ էս մարդիկը էսքան վատ ու շար լինին, անշուշտ սրանք ինչ որ ասում են, էնպես էլ կարծում են և թյուրիմացութեան մեջ են: Մանավանդ հաճախ պարզ տեսնում եք, որ, հիրավի, վատ մարդ չի իսկի:

Իհարկե, գոյութիւն ունին տարածայնութեան և իրական պատճառներ, բայց երբ մտտիկ ծանոթանում եք գործերին ու հանգամանքների խորն եք նայում, ափաշկարա տեսնում եք, որ գծախտութեան գլխավոր պատճառը թյուրիմացութիւնն է, իրար չճանաչելն ու իրար չհասկանալն է:

Թյուրիմացութիւնը, անգիտութիւնը, անծանոթութիւնը մի մութը դրութիւն է. իսկ ամեն շար բան մութիցն է ծնում: Մթութեան մեջ կասկածում ենք ամեն շարժումից, վախենում ենք իրարից, մեր վախը իրար հաղորդելով՝ վախով վարակում ենք ավելի մեծ բազմութիւններ, դարձնում ենք մի ահոնելի երևույթ, մի հիվանդոտ դրութիւն, ուր ամենափոքր առիթից սուտ ու սխալ ծնունդ են առնում հրեշավոր առասպելներ ու հեշտ էլ դառնում են իրար թշնամի ամբողջ ժողովուրդներ: Այնուհետև կուրանում ենք իրար լավ կողմերը տեսնելու, խլանում ենք առողջ, բարի խոսքի հանդեպ, դառնում ենք հակամետ ամեն շար բանի հավատալու, հետևելու, և էդ տեսակ ժամանակները դուրս եկող ամեն մի սրիկա կարող է խաղալ ժողովուրդների ճակատագրի հետ:

Նորանցյալ թուրք-հայկական ընդհարումները հոյակապ դաս ու օրինակ են մասսայական էս հիվանդ հոգեբանութեան: Երկար տարիների խեթ-խեթ հայացքները, ցեղական շահերի անունով բորբոքվող պաշարները, թշնամական երգերն ու կասկածելի փոփոսցները մարդկանց, ժողովուրդների հոգու մեջ ամբարվում են ժամանակի ընթացքում մի սև օր պայ-

1 1853—56 թթ. ուս-թուրքական պատերազմը:

թեև լու՛ զարմացնելով բոլոր միամիտներին, թե էս ի՞նչպես
եղավ և ո՞րտեղից էր:

Եվ ինչպես երեխաները՝ ինչ էլ որ անեն, սիրում են մեղքը
դեցել ուրիշի վրա ու իրենց արդարացնել, որովհետև ինքնա-
քննադատության ուժն ու ճշմարտությունն ասելու գիտակ-
ցությունը չունին, էնպես էլ ամբոխներն ու ամբոխամիտ
մարդիկ գտնում են մի շեյթան... ա՛, շեյթանն էր, թե չէ
ի՞նչպես կարելի էր, որ իրենցից էդպես բան դուրս գար...

Խաբում են իրենց, հանգստացնում են իրենց վրդովված
խղճատանքը ու գնում են դեպի նոր ընդհարումներ:

Ինչո՞ւ:

Որովհետև գնում են նույն հին ճանապարհով, նույն հին
ձևի պայքարներով, նույն հին երգերով թե դումայի մեջ, թե
մամուլի էջերում, թե դեմաստի շուրջը, թե ուսանողական
շրջանում... միշտ ատելություն բորբոքելով ու հետզհետե
գրավելով ավելի մեծ բազմություններ ու ավելի մեծ տարա-
ծություններ: Եվ զարհուրելի է, երբ մտածում ես, որ մեծ
մասով էդ բոլորն առաջանում են իրար լավ շճանաչելուց,
իրար շնասկանալուց, թյուրիմացությունից:

Ո՛վ թյուրիմացության դժոխային մութը, որի մեջ մարդիկ
միշտ իրար աչքի հրեշներ են երևում, որի խավարչտին ար-
գանդում լուռ, թաքուն հղանում ու հասունանում են աղետ-
ները...

Միտս եկան դարձյալ թուրք-հայկական ընդհարումները և
մի երջանիկ դեպք:

էդ ժամանակ լոռեցիները մի ընդհանուր որոշում էին արել՝
ինչ ուզում է լինի, իրենց շրջանում պահպանել խաղաղու-
թյունը: Եվ որովհետև տեղի թե վարչական, թե զինվորական
մարդիկ էլ շատ սիրով վերաբերվեցին ու ամեն կերպ նպաս-
տեցին, հնարավոր եղավ վերականգնել խանգարված խա-
ղաղությունը և ստեղծել մի եղբայրական կապ հարևան ժո-
ղովուրդների մեջ: Մոտեցան, բացվեցին, և մի օր էլ, երբ
հավաքված էին մի տեղ զանազան ազգության մարդիկ ու
սրտաբաց խոսում էին իրար հետ, վեր կացավ մի պատկա-
ռելի ուս մարդ ու էսպես խոսեց.

— Պարոններ, հայեր ու թուրքեր, էսօր, երբ ամեն բան
պարզ է ամենքիս համար, ես ներողություն եմ խնդրում ձե-

զանից էն կասկածի համար, որ տարել եմ թե մեկիդ և թե
մյուսիդ վրա, ենթադրելով, թե ձեր մեջ մի բան կա Ռուսա-
տանի դեմ... Թուրքերն էլ հայտնեցին, թե ընդհակառակը,
իրենք էին կարծում, թե ուսները միացած էին հայերի հետ
ու նրանց օգնում էին իրենց — մահմեդականների դեմ: Իսկ
հայերը պատմեցին, թե իրենք կասկածում էին, որ ուսների
համակրությունը թուրքերի հետ է իրենց դեմ: Ապա թե դուրս
եկավ, որ հույն գյուղերն էլ վախեցել էին, թե իրենց դեմ
մի բան կա...

Պարզվեց, որ ամենքն էլ թյուրիմացության մեջ են եղել,
թշնամական զգացմունքներով դեպի իրար, և ինչ ասեք, որ
չէր ծագել սրանից, և ի՛նչ հեշտությամբ:

էս ամենը մի՞թե բան շտվորեցրին մեզ: Մի՞թե դեռ ժա-
մանակը չի, որ իրար մոտենանք, ճանաչենք, ներենք, սի-
րենք:

Մեզ չի ճանաչում ոուսը, բայց մի՞թե մենք ճանաչում ենք
նրան: Մեզ չեն ճանաչում մեր հարևանները, բայց մի՞թե
մենք նրանց ավելի ենք ճանաչում:

Մի՞թե մենք լավ ենք ծանոթ ուս մարդու սրտի բարու-
թյանն ու պարզությանը, վրացու հոգու անկեղծությանը, թուր-
քի ասպետականությանը: Ահա թե որ կողմից պետք է մո-
տենալ ժողովուրդներին, անկեղծ ու բաց սրտով: Եվ երբ էս-
պես կմոտենանք նրանց թեկուզ հասարակ մարդուն, ավելի
շատ բան կգտնենք հարգելու, սիրելու, քան երբ նախապա-
շարված մոտենում ենք նրանց մեծ մարդկանց: Հարկավ նրանք
էլ մեր վերաբերությամբ: Ինչ որ լավ բան է լինելու, լինելու
է սիրով, իսկ սրով — երբե՛ք:

էս տեսակետից պետք է սրտալի ողջունել Մոսկվայում
կայացած էն միությունը, որ իրեն նպատակ է դրել ազգերի
մերձեցումը խաղաղ կուլտուրական հողի վրա, պետք է ար-
ձագանք տալ, ծավալել ու ճյուղավորել ամեն տեղ, ուր սի-
րում են ժողովուրդների համերաշխությունն ու խաղաղու-
թյունը:

1909

ՀՈՒՅԵԼՅԱՆՆԵՐԻ ԴԵՄ

Մեր մեջ հոբելյանները համաճարակի կերպարանք են առնում: Հոբելյան են տոնում ու հոբելյանի են պատրաստվում ամենքը թե՛ արժանավոր, թե՛ անարժան ու միշտ էլ հրավիրում են ազգի ընդհանրությունը — մասնակցելու: Տարեցտարի բազմանում են էլ «համազգային» տոները և փառաբանությունների ցանկն ու ցուցակն էլ զարգանում ու մեծանում է հետը մի շատ ինքնուրույն տգեղություններով:

Հարգելու մարդիկ կա՞ն. շատ գեղեցիկ: Տոնելու գործեր կա՞ն, գանք հրձվանքով ու երգերով: Բայց օրինակ պետք է առնել հասկացող ժողովուրդներից, հենց թեկուզ մեզ մոտիկ առանձերը, տեսնենք նրանք ինչպես են անում: Եթե նրանք էլ մեզ նման հոբելյաններ կատարեին, տարեկան մի քանի տասնյակ հազար հոբելյան պիտի տոնեին, և ամեն մեկի հոբելյանն էլ եթե դնեին ամբողջ ողջ ժողովուրդի առջև ու հորդորեին, հրավիրեին, թե եկեք պսակելու, փառաբանելու էս ինչ գրողին, դերասանին, խմբագրին, գյուղատնտեսին, սուսուցչին, քահանային և այլն, և այլն, երևակայում եք, թե ի՞նչ ազգային աղետի բնավորություն կաբող էք առնել: Եվ եթե ամեն անգամ ամեն մեկի հոբելյանին հավաքվեին ու ճառեին, թե դու ես որ կաս և քեզանով է որ մենք կանք, քեզանից է սկսվում ամեն բան և զանազան համեստ հաց ուտողների մեծ ու հանճար հուշակեին աշխարհովը միև, երեւակայում եք, թե ի՞նչ հոյակապ մասխարություն էր լինելու:

Նրանք էլ են հոբելյաններ տոնում, բայց ամեն մեկին իրեն շրջանում: Մին էլ կարողում եք լրագիրներում, թե էս ինչ գրական, հասարակական կամ քաղաքական գործչի հոբելյանը տոնել են էս ինչ շրջանում: Ուրիշ բան է, եթե նա կունենա էն տեսակ մի մեծություն, օրինակ մի Տոլստոյ, որի գլուխը երևում է ամեն աշխարհից, որի հոբելյանն էլ, տոնելու եթե խնդիր լինի, ուզենան էլ, շեն կարող պարտակել մի որևէ շրջանում. և վերջապես նրան կարող էր, այո՛, համայն ողջ ազգը գալ պսակելու աշխարհքի առջև ու աշխարհքի հետ և ասել՝ քեզ պսակելով պսակում եմ ինձ՝ ողջ ազգի ամբողջու-

թյունը, քեզ տոնելով՝ ողջական հոգու, ողջական հանճարի հաղթանակն եմ տոնում:

Ժողովուրդը եթե չի հասկանում, հասկացողները էնքան խղճմտանք պետք է ունենան, որ նրա անհասկացողությունը ի շարք չգործ ածեն ու նրա տգետ գլուխը դարձնեն պատվանդան իրենց համար արհեստական բարձրություններ ստեղծելու և տխուր շփոթություն՝ արժանավորի ու անարժանի, գեղեցիկի ու տգեղի, լավի ու վատի:

Շատ է տգեղ: Օրինակ առնենք ուրիշներից:

1909

ՄԵՍ ՑԱՎԸ

Անցյալները խոսեցինք էն մասին, թե մեր հարևան ժողովուրդները մեզ շեն ճանաչում, մենք էլ նրանց ու հաճախ լինելու ենք ցավալի թյուրիմացությունների մեջ («Հորիզոն» № 40):

Բայց կա ցավի ավելի մեծը, ավելի ամոթալի մի դրություն: Մենք մեզ էլ շենք ճանաչում:

Երկիր ունենք — շենք ճանաչում, պատմություն ունենք — շենք ճանաչում, ժողովուրդ ունենք — շենք ճանաչում, գրականություն ունենք — շենք ճանաչում, լեզու ունենք — շենք իմանում:

Մտածում ենք. ի՞նչ մեծ պակասություն է դատարկ աշխարհագրական էն տգիտությունը, որ մեր երկիրը չգիտենք: Չենք հասկանում, թե էլ չգիտենալով ինչքան բան չգիտենք: Զե՛ք երկիրն է իր «առանձնահատկություններով», որ պայմանավորում է ու բացատրում և պատմություն, և գրականություն, և գեղարվեստ, և տնտեսական վիճակ, և մարդկային հայտնի տիպ ու հոգի: Նա է որոշում ազգերի ճակատագիրը. առանց նրա բնավորությունը հատկանալու ոչ կարող ես անցյալը ըմբռնել, ոչ ներկադ հասկանալ, ոչ ապագադ տնօրինել:

Պատմություն ունենք — տգետ ենք: Եվ դժբախտաբար գեոմի կարգին պատմության գիրք էլ չունենք, թեև քիչ ժողովուրդ կունենա էնքան նյութ իր պատմության համար, ինչքան մենք

ունենք: Նախնական մշուշի մեջ թաղված դարերի մասին չեմ ասում, այլ էն ժամանակների ու անցքերի, որոնց վրա ընկնում է ճշմարիտ պատմության լույսը: Զգիտենք: Զգիտենք մենք ինչ ենք եղել, ինչ ենք արել, ինչու և ինչպես, ինչ օրով, ինչ ճանապարհով ենք էստեղ հասել:

Եվ ինչ զարմանք, որ էս դրուսթյան մեջ գտնվող մարդը իր անհատական խեղճությունն ու դատարկությունը հեշտ կտարածի իր ամբողջ ցեղի ու նրա անցյալի վրա, կարհամարհի իր ցեղը, իր անունից կամաչի, կուրանա, իրեն թույլ կտա իր ցեղին վերաբերյալ ամեն ստորություն, և շատ-շատ կդառնա մի միջազգային ոչնչություն, որ աշխարհքում ոչինչ չի հարգում սկսած իրենից: Կամ թե չէ կընկնի մյուս ծայրը, իր ցեղը կհամարի Աստուծո ընտրյալ ժողովուրդ, «12 խաչապաշտի, եթմիշիթի միլլեթի գլուխը»¹, և կույր ազգասիրական տենչով բռնված չեղած մեծություններ ու փառքեր կզառանցի՝ հասկացողություններ, ժամանակներ ու դեպքեր իրար խառնելով, մի վիճակ, որ հաջող քառյակով ծաղրել է հանգ<ուցյալ> Ռ. Պատկանյանը, թեև ինքն էլ ազատ չէր էդ պակասությունից:

«Հայկ դե Նապոլեոն մի գոռի համար
Սաստիկ թունդ խոսքեր ասացին իրար.
Հայկն ուներ հրացան, Նապոլեոնն աղեղ.
— Ո՞վ հաղթեց.— անշուշտ մեր Հայկը աճեղ»:

Հիմի ժողովրդից հարցրեք: Մինը երգում է, թե նահապետական պարզ ժողովուրդ է, մյուսը հայհոյում է, թե փշացած խալխ է, մինը հավատացնում է, թե ազատամիտ մշակակաճան է ու ամեն հարցում իրեն հետ ու համաձայն, մյուսը պնդում է, թե տիրացու ազգ է, եկեղեցուց ու հոգևորականից դուրս ոչինչ չի հարգում, այնինչ երրորդը ասում է սոցիալիստ է...

Եվ մինչև էսօր շիմացանք ու չգիտենք, թե ինչ բան է էդ խորհրդավոր սֆինքսը, որ տխուր նստած է Ուրարտվի հին արձանագրությունների կողքին աչքերն արցունքով ու վշտով լիբը:

Հապա գրականությունը:

Հայոց ամբողջ նոր գրականությունը հազիվ թե մի քանի ամսվա ընթերցանության նյութ լինի. և սակայն քանի՞ հոգի կգտնեք, որ ծանոթ լինեն իրենց մայրենի գրականությանը: Միշտ կտեսնենք բերան արած կրկնում են էս կամ էն գրողի անունը, գովում երկինք են հանում կամ պախարակում ցեխն են կոխում: Հետաքրքրվեցեք, հարց ու փորձ արեք, կտեսնեք ծանոթ չի, կարդացել չի, էստեղից մի կտոր, էնտեղից մի բրդուճ, հաճախ ծուռն ու սխալ: Եվ որքա՞ն գրական տգիտություն, ի՞նչ կոպիտ ճաշակ, ի՞նչ գոհճիկ վերաբերմունք դեպի գրականությունն ու գրողները: Ի՞նչ վիրավորանք քրննադատելիս, վիճելիս, օգնելիս, հոբելյանը կատարելիս, մինչև գերեզմանի եզրերը, մինչև թաղման օրը: Իսկ գծծիությունը... Ամբողջ նոր գրականության արժեքն ի՞նչ է, գիտե՞ք: Անշուշտ չգիտեք.— մի 100 ուրբուց էլ պակաս: Ամբողջ գրականության արժեքը... Եվ քանի՞ մարդու տան կգտնեք ամբողջ ժողովրդի մեջ... Հայը սովորաբար ցավում է փողը ծախսելիս, բայց գրքի տալի՞ս — էդ ծախսը ուղղակի չի հասկանում, մանավանդ երբ գրքի գինն էլ մի ուրբուց ավել է:

Լեզուն հո... գրականության մեջ անկազմ ու անկերպարան, մամուլի մեջ աղքատ, ողորմելի մի երկու երեք հարյուր բառերի շոր ու ցամաք շարան, շատ անգամ էն էլ ծուռն ու սխալ: Մի քիչ կրթված տուն ենք մտնում, ներողություն են լնդորում, որ հայերեն չգիտեն, կամ թե չէ ամենալավ դեպքում, եթե գիտեն, շարունակ լսում եք «նրա մզտ ձայն չկա... հրացանից արձակեցին... Ձեզ կարելի՞ է ուտել... (Вам можно кушать?)» ու նման մարգարիտներ:

Էսպես է դրությունը, և եթե ճշմարիտ էսպես է, սրանից հետո էլ ինչ ուղիղ ճանապարհի կարող է լինել էս դրության մեջ գտնվող ժողովուրդը, ինչ արժանապատվության զգացմունք կարող է ունենալ և ինչ հարգանք հենց դեպի իրեն: Եվ ինչպես կարող է պատահել, որ մեզ սիրեն ու հարգեն օտարները, երբ պարզ տեսնում են, որ մենք որպես առանձին ժողովուրդ չունենք ինքնուրույն պատկեր ու բովանդակություն և հանդիսանում ենք միմիայն իր աղավաղումը:

¹ Նշանակում է՝ 12 խաչապաշտ և 72 մուսուլմանական ցեղերի գլուխ:

Ամեն երևույթ ունի իր արտաքին կերպարանքը — ձևը և ներքին իմաստը — հոգին: Ապրողը, գեղեցիկը, կատարյալը դրանց ներդաշնակությունն է, բայց էդ ներդաշնակությունը, դժբախտաբար, շատ է դժար, և մարդիկ սովորաբար վազում են հեշտին. իսկ հեշտը ձևն է: Երբ չեն կարողանում ըմբռնել մի որևէ բանի ներքին իմաստը, հոգին կամ թե չէ կորցնում են ժամանակի ընթացքում, պաշտում ու պաշտպանում են ձևը, առանց հասկանալու: Եվ հաճախ մեծ գաղափարների անուններով լուկ ձևեր են պաշտում:

Եկեղեցի ասելով գմբեթավոր էն շենքն են հասկանում, ուր սրբերի պատկերներ կան, վառած մոմեր ու տերտերներ, թեև հենց բառը — եկեղեցի բոլորովին այլ բան կնշանակի:

Նույնիսկ էն մոմերն էլ որ վառում են, մի ժամանակ մթության մեջ միտք է ունեցել, բայց էսօր օրը ցերեկով վառելով պահում են միայն ձևը անմիտ ու անխորհուրդ:

Հոգևորական ասելով երկար շորեր են հասկանում ու երկար միրուք: Եվ եթե նա ավետարանը փշացնի — ոչինչ, բայց եթե միրուքը խոզի, անշուշտ մեծ իրարանցում կձգի հավատացյալների մեջ: Քրիստոնեություն ասելով մկրտություն, պատարագ, պսակի ու թաղման, տնօրհների ու գերեզմանօրհների և այլ արտաքին ծեսեր ու արարողություններ են հասկանում:

էդպես է պատահում և նոր գաղափարների հետ:

Ուսումնարան ասելով ավելի շուտ շենքն են հասկանում, քան թե ուսուցիչ ու աշակերտ: Եվ էդ հասկացողությունն է խոր պատճառը, որ ուսուցիչը մեղանում էնքան հաճախ ու հեշտ ենթարկվում է գրկանքի, հալածանքի ու արհամարհանքի: Ուսումնարանի գաղափարը նրա հետ չի կապված, այլ շենքի:

Կհարցնեք.

- Ձեր գեղեցիկ ուսումնարան կա՞:
- Հա՛:
- Քա՞նի աշակերտ կա մեզը:
- Աշակերտ չկա էս մի քանի տարին և այլն:
- Մի խոսքով գլխավորը պատերն են:

Գրականություն ասելով էլ երբեք կենդանի մարդիկ չեն հասկանում, այլ տպած գրքեր, և մինչև անգամ դրանից ավելի վատը՝ անուններ...

Թատրոնն էլ մի մեծ շենք է, որ բեմ ունի, մեջը տոմսակներ են ծախվում ու դերասաններ են խաղում.

Իսկ դերասան կնշանակի — բեխերը վեր արած մարդ...

Ձևն ու ձևապաշտությունը ամեն տեղ, և վա՛յ էն մարդուն, որ էս տեսակ միջավայրում հասկանում ու սիրում է իրերի ու երևույթների ներքին իմաստը և մանավանդ նրանց առողջ ամբողջությունը:

էս տխուր խորհրդածության առիթը տվեց Թիֆլիսի հայոց թատրոնի խնդիրը, որ վերջին օրերս գրավել է մամուլի ու հասարակության ուշքը: Հայոց թատրոնը մեռնում է, էսպես հայտարարեցին: Եվ ահա կոնսիլիում են կազմել շքնաղ հոգեվարքի շուրջը ծերունի Մանթաշյանը, մի քանի ուրիշ հարուստներ և նրանց թամաշավոր մեծ բազմություն:

— Ի՞նչ է հարկավոր սրան, որ կենդանանա:

— Փող և սեփական շենք:

Նույն ոեցեպտը ինչ որ գրեցին սրանից տարիներ առաջ: Փող տվին, բայց նա կրկին մեռնում է: Մեկն առաջարկում է, որ էս շենքից, Արտիստականից մյուսը փոխադրեն — ազնվականների թատրոնի շինությունը: Բայց նա էնտեղ էլ կմեռնի: Առաջարկում և հանձնաժողով են ընտրում սեփական շենք կառուցանելու: Բայց նա դարձյալ կմեռնի, որովհետև...

Դուք արտաքին ձևի մեջ եք որոնում նրա կյանքը, երկրորդական տեղ եք տալի նրա ներքին բովանդակությանը, արհամարհում եք նրա հոգին, էն, ինչով որ գոյություն կարող է ունենալ և ապրել թատրոն ասածը: Թարս եք հասկանում: Ահա պարզեցրեք: Սկսեք հենց նույն օրերին թատրոնի դրությունը ողբացող հայոց թերթերից:

Ճշմարիտն ասեմ, «Մշակի» եթեներից, բայցերից ու այսուամենայնիվներից պարզ բան չհասկացա, բայց եղբայրուկում է.

«Ծղրափակելով մեր խորհրդածությունները՝ ընդգծում ենք, որ հայ թատրոնական գործը պահանջում է կազմակերպչական գործունեության բարվոքում և միևնույն ժամանակ նյութական ապահովություն, որպեսզի նա կարողանա թե՛ դե-

րասանական ուժերի գրավման, թե՛ ներկայացումների կազմության և թե՛ ղեկավարական գործի ուժեղացման համար անհրաժեշտ ծախքերը հոգալ բավարար կերպով» («Մշակ» № 5):

«Հորիզոնը» հարայ է կանչում.

«Օգնեցե՛ք. հայոց թատրոնը մեռնում է... այն բեմը, որի շնորհիվ է միայն, որ մենք ունենք Սունդուկյաններ... բայց նա պիտի ապրի, եթե մենք ուզում ենք անպրել... նա պիտի ապրի... իբրև մեր գրականությանը կենդան նյութեր հաղորդող հիմնարկություն» («Հորիզոն» № 5):

Հիմի դուք «Սուրհանդակին» ականջ դրեք.

«Այո՛, թատրոնն էլ մեռնում է մեզանում, ինչպես և մեռնում են մեր բոլոր կուլտուրական հիմնարկությունները, և մեռնում են միմիայն այն պատճառով, որովհետև հայ ազգը տրամադիր է ինքն իրեն ոչնչացնելու, ոչնչացնելու մինչ այն աստիճան, որ իր հետքն անգամ չի ուզում թողնել»: Ասում է՝ «մեր հոգեբանությամբ և մեր գործելակերպով ապրող ազգեր ներկայումս շատ քիչ, համարյա թե չկան, իսկ հնումը թեև եղել են, բայց նրանք էլ ոչնչացել են», և սրա նման զարհուրելի բաներ: Բայց որովհետև ոչ հայոց ազգն էրպես տրամադրություն ուժի, ոչ էլ ինքն է էրպես կարծում, այլ միայն հենց էնպես էր ասում, շարունակում է. «Սակայն դա դեռևս չի արգելում այսօր էլ համախմբվել և խորհրդակցել հայ թատրոնի մասին, այն թատրոնի, որը գեղարվեստի աշխարհին տվել է հանձարներ...»: («Սուրհանդակ» № 53):

Էս մտքով էլ ճառեր են խոսել Դրամատիքական Ընկերության ընդհանուր ժողովին, որ իսկապես մի ներկայացում էր, և էս սեզոնի ամենահաջող ներկայացումը մուտքի տեսակետից:

Ես չեմ ուզում խոսել նրանից, թե հայ ազգը առանց թատրոնի ապրել է ու կապրի թե չէ, դա դատարկ խոսք է և մի վատ սովորություն, որ մեզանում ամեն մի հարց ու խնդիր իսկույն կապում են ազգի գոյության հետ: Ես ուզում եմ միայն նկատել էն ցավալի հանգամանքը, թե ինչպես հասկացողներն էլ սխալ են հասկանում: Ասում են՝ հայոց թատրոնն է, որ ստեղծել է Սունդուկյաններ ու հանձարներ: Էլ չեն մտածում թե բոլորովին հակառակն է եղել — Սունդուկյան,

Աղամյան, Հրաչյա, Սիրանույշ, Չմշկյան և այլն, և այլն, մինչև նորերը, նրանք են, որ թատրոն են ստեղծել, և առանց նրանց դուք թատրոն չեք կարող հասկանալ: Եթե ուզում եք թատրոն ունենալ, պետք է նրանց հոգաք: Եվ ահա էդ սխալ տեսակետից էլ առաջ գալով էսօր էլ դեռ, երբ էդքան դարդ եք անում հայոց թատրոնի համար ու հավաքվում եք իբրև թե նրան կենդանացնելու, ասում եմ՝ էսօր էլ դեռ կատարվում է զանցառություն ու հանցանք հայ թատրոնի դեմ, և էն ժամանակ, երբ շենքի ու արտաքին հանգամանքների ցավն եք ողբում, միաժամանակ զրկում ու մոռացության եք տալի նրանց, որ իրոք կազմում են հայ թատրոնը: «Հորիզոնի» հենց նույն համարում պ. էլբեն պատմում է, որ լավ դերասանները հեռացել են, որովհետև նրանց շաղ ոռճիկները կրճատել են: Հետաքրքրական է, թե ի՞նչ կնշանակի էստեղ շաղ բառը: Մյուս կողմից էլ, ասում է, Դրամատիքական Ընկերությունը չի կարողացել կանոնավոր վարձատրել այն հայ հեղինակներին, որոնք աշխատել են թատերական ինքնուրույն ու թարգմանական գրականության համար:

Կսում ե՞ք՝ ի՞նչ են ասում:

Իսկ ես դրա վրա կավելացնեմ: Դրամատիքական Ընկերությանը ուրիշները փող են տվել, որ մրցանակ տան լավ թատերական գրվածքին: Նրանք հավանություն գտած պիեսին, անուն ունեցող գրողներին զլանում են ամբողջ մրցաձեակը տալ, կեսն են տալի, որ կարծեմ 150 ռուբլի է: Կավելացնեմ, որ Շիրվանզադեի, Ահարոնյանի և մյուսների պիեսները խաղում եք շարունակ ու իրենց, դրամատուրգներին թողնում գուրկ, բողոքավոր: Կավելացնեմ վերջապես, որ հայոց թատրոնը, այսինքն թատերական գրականությունը խրախուսելու համար սոված գումարը ծախսել եք, կարծելով թե դուք եք թատրոնը և էդ թատրոնն է, որ հյուսիս է տալի գրականությանը, ոչ թե գրականությունը, որ հյուսիս է տալի թատրոնին:

Էրպես էլ դերասանների վերաբերությամբ: Տաղանդավոր, ջահել մարդիկ են երևում, տարիներով քաշ են գալի էդ կիսամեռ բեմի կուլիսներում, մաշվում, փշանում, և դեռ մինչև էսօր հոգ չի տարված նրանցից մեկն ու մեկի վրա: Բայց ի՞նչ եմ ասում, չեք էլ մտածել, որ նրանցից շատ շատերը մինչև

անգամ կարգին հայերեն շփտեն ու մինչև օրս էլ սրվակին սրիկա են ասում:

Թատրոնն էս է, պարոննե՛ր, իսկ դուք պատերին եք նայում: Եվ ձեր էս սխալը ծանրանում է ավելի ևս, որ դուք ձեր խնամած էդ հիմնարկությունն անվանում եք հայոց թատրոն, մինչդեռ դա միայն Թիֆլիսի, էն էլ Թիֆլիսի մի փոքրիկ մասի թատրոնն է, իսկ հայոց թատրոնն էն կենդան թատրոնն է, որին դուք լավ չեք վերաբերվում:

1910

«ՀԱՄԼԵՏԻ» ԶԱՐԶԱՐԱՆՔԻ ՇԱՐԱԹՐ ԹԻՖԼԻՍՈՒՄ

Վերջին օրերս Թիֆլիսի արքունական թատրոնում երկու անգամ իրար ետևից ներկայացրին Շեքսպիրի «Համլետը», հայերեն՝ պ. Ամո Խարազյանը, ռուսերեն՝ պ. Դայլսկին: Մինչդեռ հայերեն ներկայացման ծանր տպավորության տակ մըտածում էի հալ դերասանի և նրա խմբի ակտիվարության մասին, վրա հասավ անուն հանած ռուս դերասանը—պ. Դայլսկին իր խղճալի թագավորով, իր տիկնիկ թագուհով, իր մուժիկ Պոլոնիոսով, իր անկենդան Օֆելիայով, իր փետի կտոր Լանրտով, վերջապես իր խոհարարուհի ու լվացարարուհի պալատական նաժիշտներով—ի մեծ մխիթարություն հայոց խմբի: Եվ էապես համերաշխ էս երկու խումբը Քրիստոսի շարչարանքի նախընթաց շարաթը շինեցին Համլետի շարչարանքի շարաթ: Մեջները եթե մի երջանիկ բացառություն կար, էդ հայ Պոլոնիոսն էր (պ. Միրադյանը) միայն:

Ես կարծում եմ ոչ հոր եղեռնական մահը, ոչ մոր շուտափուշտ ամուսնությունը, ոչ հորեղբոր ազգապիղծ վարմունքը, ոչ Օֆելիայի թեթևամտությունը, ոչ Պոլոնիոսի պալատական նենգավորությունը, ոչինչ, ոչինչ էնքան վիրավորական չպետք է լինեն դժբախտ Համլետի՝ էն առաջին ինտելիգենտի հոգու ազնվության, արքայազնի վեհության, փիլիսոփայի խորության, հանճարեղ նրբամտության ու վշտի ծանրության համար, որքան հայ դերասանի անճաշակ լավանությունը, վախ-

կոտ հայացքները դես ու դեն, անմիտ վազվզելը պատից սլատ, անտեղի աղաղակներն ու լաց ու կոծք կամ ռուս դերասանի հիստերիկ հեկեկոցներն ու հոհոցները, հիվանդագին գալարումները, անդադար ծամածոթյունները ու գոռում գոչումները:

Եվ ավելի ևս զարմանում եք, երբ մարդիկ էդ բոլորն անում են միաժամանակ արտասանելով Համլետի էս խոսքերը, որ ուղղում է դերասաններին.

«...Արտասանի՛ր թեթև և ազատ: Բայց եթե որոտաս, ինչպես մեր դերասաններից շատերը, ապա ավելի ուրախ կլինեի, որ մունետիկներն արտասանեին իմ տողերը: Չափից ավելի օղբ մի սղոցիր քո ձեռքով աշսպես... այլ թո՛ղ շարժումները չափավոր լինեն, որովհետև կրքերի ամենասաստիկ հեղեղի, փոթորկի, և այսպես ասեմք, ալեկոծման ժամանակ, դու պետք է պահես բավական ինքնիշխանություն, որ այդ բոլորին մի տեսակ փափկություն տա: Օ՛, դա հոգիս տանջում է, երբ տեսնում եմ մի հաղթանդամ մարդ, գլուխը կեղծամով ծածկած, պատառոտում է կիրքը և մաս մաս անում ստոր ամբոխի ականջները... Իսկ խուժանը առհասարակ ընդունակ չի մի բան հասկանալու, եթե ոչ անբացատրելի մնչակատակներ և գոռում գոչում...» («Համլետ», թարգմ. Մասեհյանի, 102):

Մի՛թե էնքան հեռու են էդ մարդկանց ականջները բերանից, որ իրենց ասածը չեն լսում: Եվ խաղում են ոչ թե դրամայի ամբողջությունը, ոչ թե նրա մտքերը, այլ նրա բառերը, առանձին-առանձին բառերը, որ, Համլետի ասածի նման, թեև տգետներին ծիծաղ է պատճառում, բայց խոր վշտացնում է հասկացողներին: Դերասանը արտասանում է էն կտորը, ուր իր մեջ խորտակված Համլետը իր վերջին ապավենը, իր սերը—Օֆելիային զրկում է կուսանոց. ասում է՝ «Մտի՛ր կուսանոց»... և իսկույն կուսանոց բառի հետ վազում է դեպի Օֆելիան, իր սև վերարկվով նրան փաթաթում, իբրև թե կույս շինեց (Դայլսկի), կամ մի տեղ սրի անուն եղավ թե չէ, սուրն են դուրս քաշում, թեև Համլետը իսկի սուրը չի սիրում և ինքն իրեն ասում է՝ «թո՛ղ խոսքերի մեջ լինի սուրը, Համլետ», ծիծաղ բառին են հանդիպում թե չէ, ծիծաղում են, ում մասին ուզում է ասած լինի...

271

Երկուսն էլ խոսք ու մին արած թագուհու տեղը բերել են մի ջահել աղջիկ նստեցրել ու առաջը կանգնել որոտում են. — «Քո հասակում արդեն արյունը սառած է լինում ու կիրքը հանգած...»: Երկու անձոտնի նկար են կախել. մինը — գեղեցիկը իբրև Համլետի հայրն է, մյուսը — տգեղը, հորեղբայրը: Հայոց ներկայացմանը մեկի վրա են հարձակվում, որպես տգեղի, ուսաց ներկայացմանը՝ մյուսի: Հոր ուրվականի մասին հենց իրենք են ասում, թե մորուքը թուխ էր, բայց ճերմակ մազեր էին փայլում մեջը, և ներկայացնում են մի կոշտ ճգնավորանման արարած մինչև ծնկները երկար, տափակ և ճերմակ մորուքով: Մի կույր ճգնավոր կամ պառավ սալդաթ, բայց բնավ Արեւսանման արքայի ուրվական, որ իր անօրինակ վշտով հանդիսավոր ու վեհորեն անցնում է բեմի մթության մեջ: Եվ կարծես ավելի ևս իլյուզիան փչացնելու, հանդիսականներին համոզելու համար, որ նա ուրվական չի, պ. Ամո Խարազյանը ետևից սրի մի հարված հասցրեց՝ շրլիկացնելով «անխոցելի սավերի» թիկունքին:

Խոսքը մասնավորենք հայոց խմբի վրա:

Հայերը չէին գրել, թե ում թարգմանությունն են խաղում, բայց երևում էր, որ ուսանողներից արած մի թարգմանություն էր, և էն էլ անհաջող թարգմանություն: Ասում են՝ «Նորջան բարեծնունդ արարած է մարդը», փոխանակ ասելու «ազնիվ արարած»: Ռուսերեն *благородный* բառն է, որ բարեծնունդ են թարգմանել, և անշուշտ *Его благородие*-ն է պատճառը: Փոխանակ էնեսա ասելու, ասում են էնեն, փոխանակ Պյունոսի — Պիրուս, փոխանակ կախարդի — սքանչելագործ, հին ասելու տեղ — ասում են առաջնակարգ, մահվան քնի մեջ — ասում են մեռյալ քնի մեջ, փոխ. իշխանավորների — իշխանասերներ, փոխ. ինչ պետք է անենք — ինչ պետք է անես, փոխ. Պելիկանի — ձկնորս թռչուն, փոխ. հորեղբոր կինը — հորաբույրը, և այլն: Դրա վրա ավելացրեք էս տեսակ հայերենը՝ «աչքներիս մոտով անցավ», խնջույքները լուրեր են տարածել. կամ էս արտասանությունը՝ «Ձեռք թակավոտական հոսմանը կատառեցինք» (Ռոզենկրանց): Եվ երևակայեցեք, որ էն էլ հաճախ կզկզում են, դերը չեն իմանում, կամ էն քան ցած ու անորոշ են ասում, որ հանդիսականներից ոմանք արդեն իրենց համար դեր են շինել միշտ կանչել դեպի բե-

մը — Բա՛րձր, բա՛րձր... Եվ եթե մեկը կա, որ հայ բեմից բարձր է խոսում, էն էլ հուշարարն է, որի ձայնը իսկի չպիտի լսվի: Ի լրումն ամենի, չեն իմանում, թե յ՛րտեղ են գտնվում և ի՛նչ են խաղում: Թագավորը կարծում է, թե արքայական ծիրանին վրացու շուխա է, փեշեքը հավաքում է պցում կոսան ու վազում, ծիրանին բռնող մանկավիճիկը մնում է ետևից նայելիս: Պալատականները ներկայանում են թագավորին, որը գլխարկը վերցնում է, որը չէ, որը դնում է դուրս գնում, որը պատի միջովը (կուլիսի): Որտեղ թագավորը, թագուհին ու Պոլտնիուսը գաղտնի խորհուրդ են անում և պալատականներին ոչ ոք չպիտի ներկա լինի, բոլորը տնկված են կողքներին, և մին էլ տեսնում եք իրենց գաղտնի խոսակցությունը վերջացնելուց հետո թագուհին կանչում է՝ «Ո՛վ կա այդտեղ նախասենյակում, ներս եկեք...»: Վա՛հ, տնաշեններ, դրանից գոնե հասկացեք, որ ներսը չպիտի լինեիք: Եվ ինչ զարմանք, գոնե հասկացեք, որ ներսը չպիտի լինեիք: Եվ ինչ զարմանք, որ էս տեսակ թագավորն ու թագուհին իրենց պալատականներով պալատից դուրս գնալիս էնպես վայրենի դուրս խուժեցին, որ պալատի տախտակե ու կտավե պատերի մի մասը հետները տարան: Եվ երանի ընդմիշտ դուրս գնան ու իրենց ամբողջ թատրոնն էլ հետները տանեն, որովհետև էդ տեսակ թատրոն չի լինիլ և չպետք է լինի:

1910

Տե՛ղի Գ. Վ.-ին

«Մշակի» 81 №-ում պ. Գ. Վ.-ն արձանագրում է իբրև տխուր փաստ, որ ես, Պոլսի ս. Երրորդության եկեղեցու միտինգի դեմ բողոքելով առիթ տվի «Սուրհանդակին» մի առաջնորդող գրելու (№ 91), որի մեջ հողվածագիրը միտինգ կազմողներին մեղադրում է, թե նրանք էդ ամենն արել են հեշտ ժողովրդականություն ձեռք բերելու համար և շքավականանալով մինչև այժմ իրենց շուրջը տարածած մահ ու ավերով, ուզում են սատանայական մի նոր դավ սարքել ուսահայերիս գլխին:

18 Հովհ. Թումանյան, հատ. II 273

Այժմ պ. Գ. Վ. ինձ հարցնում է, թե ես ի՞նչ զգացի, երբ կարողացի էս տողերը, որոնց առիթը ես եմ տվել:

Ամենից առաջ պ. Գ. Վ.-ին պետք է ասեմ, որ ես, մի բան գրելիս գրում եմ էն, ինչ որ ես եմ զգում ու մտածում, իսկ թե ուրիշը իմ գրածի առիթով ի՞նչ կգրի, այդ միանգամայն իմ գործը չի, ես պատասխանատու չեմ ուրիշների գրածի համար, և նույնիսկ չի կարելի առաջուց ամեն բան նախագուշակել: Օրինակ, ես ի՞նչ կարող էի մտածել, որ իմ բողոքի առիթով «Սուրհանդակի» գրած առաջնորդողից պ. Գ. Վ.-ն էղբան կտխրեր կամ «Մշակ»-ը կվշտանար, մի վիշտ, որ ի՞նչքան անսպասելի էր, էնքան էլ ուրախալի է, որովհետև, հիրավի, մարդիկ գուցե ախալ են, բայց նրա համար հո չեն միտինդ արել, որ մեր գլխին օտտանայական դավեր սարքեն:

Հույս ունիմ, պ. Գ. Վ.-ն չի մոռանալ և կարձանագրի իբրև ուրախալի փաստ, որ սրա առիթն էլ ես տվի ու «Մշակը» վերջապես մի մարդավարի վերաբերմունք ջուլց տվեց դեպի իր հակառակորդները:

Բայց կենտրոնական հարցն էն էր, թե ի՞նչպես ազդեց ինձ վրա «Սուրհանդակի» առաջնորդողը: Համեցեք ասեմ: Ծիշտ էնպես, ինչպես ասողով են մեկնել որս «Մշակի» նույն ձևի ասածները:

Գարձյալ, և ինձ թվում է գլխավորը, պ. Գ. Վ.-ին զարմացրել են իմ հողվածի մի բանի «անտեղի մտքերը», որ ես թույլ եմ տվել ինձ, և նման բառեր: Էստեղ արդեն պետք է դառնամ պարոնին.— պ. Գ. Վ., ես իսկի չեմ զարմանում, որ զարմացրել եմ ձեզ: Մենք հենց նրա համար ենք, որ զարմացնենք ձեզ և ձեր նմաններին: Դուք էս պետք է վաղուց գիտենայիք, և եթե չեք իմացել, այժմ իմացեք:

Օ՛, ես ձեզ բռնի եմ հատկանում: Բայց, որքան էլ տխուր լինի էս փաստը ձեզ համար, պ. Գ. Վ., ես իմ ողջ էությունս ապրում եմ մարդկային կյանքից ավելի մեծ կյանքով: Հենց էնպես, ինձ համար, և անընդունակ եմ մի որևէ վանդակի մեջ փակվելու ու էն տեսակ երգեր երգելու, որ ձեզ գուր գամ: Սակայն, եթե խոսքը կմասնավորեք կոնկրետ խնդրի վրա, կարողություն կունենամ իմ դիրքը որոշելու: Ահա, այժմ խոսքը հայ ժողովրդի վիճակի վրա է, և ասում եմ. իմ սրտին շատ է ծանրանում էս ժողովրդի ճակատագիրը, արա

պատմությունը, էն սոսկալի դրաման, որ կոչվում է հայոց պատմություն ու էնտեղից են բխում նրա գործերի վրա եղած իմ հայացքն ու մտածմունքը: Եվ ինձ մոտիկ ճանաչողները լավ գիտեն իմ վերաբերմունքը մոտանցյալ դեպքերի ժամանակ, որ եղել է շատ որոշ և ժամանակին դուր չի եկել շատ շատերին: Իսկ առաջիկայում եթե տպագրության տամ շատ «Վերք Հայաստանի»-ի 50-ամյակի առիթով, դուք էլ, թեկուզ հաճաճայն չիինք հետս, գոնե կտեսնեք, որ «անտեղի մտքերը» միշտ տեղ են ունեցել իմ մեջ և ես առաջ եմ գալի ոչ թե «տիրող հանդամանքներից», այլ մի արյունոտ հողից, մի անօրինակ զարհուրելի պատմությունից, մի հոշտաված ժողովրդից, ուր ինձ բանաստեղծ է արել ճակատագիրը ու ներշնչել է անկեղծ լինել ամենից առաջ:

1940.

ՀԱՅԻ ՈԳԻՆ

Անհատներ կան, որոնք ապրում են և նշանավոր են միայն յրանով, որ մի բարձր պաշտոն ունեն կամ աստիճան: Առեք նրանցից էդ պաշտոնը կամ աստիճանը՝ կտեսնեք՝ օխտը կորածի միներ: Մարդիկ էլ կան, որ առանց իշխանության էլ, թեկուզ նույնիսկ ձախորդության ու հալածանքի մեջ, միշտ երևում են իրենց ինքնուրույն կերպարանքով, ուժով ու շնորհքով: Էդպես են և մարդկային ցեղերը: Պատմությունը ցեղեր է հիշում, որ իշխել ու նշանավոր են եղել, քանի որ ունեցել են քաղաքական ինքնուրույն իշխանություն, զենքի զոռ ու ֆիզիկական ուժ. հենց որ կորցրել են քաղաքական անկախությունը, հետզհետե հալվել են ժողովուրդների մեջ ու կորել: Ցեղեր էլ կան, որ քաղաքական անկախ կյանքը կորցնելուց հետո էլ կարողացել են պահել իրենց ազգային կերպարանքը երկար դարերի ընթացքում, ամեն տեսակ հալածանքների տակ: Իհարկե, ծանր է եղել միշտ էս մաքառումը և բարոյական ու ֆիզիկական կորուստները անվերջ, բայց այնուամենայնիվ նրանք չեն կորել ու կան: Էդ ժողովուրդներից մինն

է անշուշտ մեր դժբախտ ցեղը, որ քաղաքականորեն անկախ չի եղել գրեթե երբեք, որ իր գոյութեան տարիներից ավելի շատ կարող է կոտորածներ համարել, և սակայն էսօր էլ տակավին կա իր լավ թե վատ՝ ազգային կյանքով ու կերպարանքով:

Գիտութունը, լուսավորութունը մարդկային կյանքի պատմութեան շատ մութ տեղերի հետ միասին լույս կծգի և մեր անցկացած երկար ու դժար ճամփի վրա մինչև նրա սկիզբը, որ ինչքան թանկ է մեզ համար, էնքան էլ վեր է մեր ուժերից: Բայց մեր ուժերից վեր հո չի նայել, քննել, ճանաչել մեր երեկն ու էսօրը:

էսքան փորձութուն ու տառապանք ունեցած մի ժողովրդի անվայել է անգիտանալ իր կյանքը ու ծփալ, տարուբերել ժամանակի ալեկոծութեան քմահաճույքին անձնատուր: Եթե էդ դրութունը հասկանալի է խավար բազմութեան համար, ներելի չի ինտելիգենցիային, որ ինչքան էլ ընդհանուր առումով խորթ լինի էս ժողովրդին իր հոգով ու կենցաղով, այնուամենայնիվ իր մեջ պետք է ունենա և ունի մարդիկ, որոնք ապրում են էդ ժողովրդի կյանքն ու պատմութունը: Նրանք առաջ պետք է անցնեն, որոնեն, ցույց տան, թե որն է էս ժողովրդի ճանապարհը:

Մեզանում, հիրավի, ճանապարհներ կան որոշած, բայց դրանք էս կամ էն կուսակցութեանն են կամ լրագրինը: Ամեն ազգի մեջ կան և միշտ կլինեն ամեն տեսակի հասարակական ու քաղաքական կուսակցութիւններ ու հոսանքներ, բայց բոլորովին ուրիշ բան է ժողովրդի ամբողջութիւնը:

Այ՛ո՛, լինում են դեպքեր, մի որևէ հոսանք ուժ է առնում ու ժամանակավոր էս կամ էն կողմը քաշում կյանքն ու մարդկանց ուշքը, բայց դրանք մոմենտներ են ամեն ժողովրդի կյանքի մեջ, որոնցից ոչ մինը առանձին վերցրած պատասխան չի տալ դրված հարցին. և նա դարձյալ կխոսի ու պատասխան կուզի, թե ո՞րն է էս ժողովրդի պատմական ճանապարհը, սրա գոյութեան խորհուրդը. ի՞նչ է կամենում սա, սրա ոգին: Ե՛վ ուր որոնենք էդ ոգին: Արդյոք Սասունի, Ղեյթունի, Մոկաց, Ղարաբաղի ու Լոռու սարերո՞ւմ, թե՞ Շիրակի, Արարատի ու Մուշի դաշտերում: Արդյոք հին վանքերի միստիք կամարների տա՛կ, ուր ծավալվում է «խորհուրդ

խորին անհաս և անսկիզբն», թե՞ դալար մարգերում ու խաղահանգիստ հովիտներում, ուր «Լուսնյակն անուշ, հովն անուշ, շինականի քունն անուշ»: Արդյոք «ի խորոց սրաի խօսք ընդ Աստուծոյ» խոսողի երկնաշու պաղատանքն՝ իր մեջ, թե՞ «Վերք Հայաստանի» հայրենասիրական ողբի հառաչանքների ու մորմոքների մեջ:

Իհարկե, էս ամեն տեղերում, էս ամենի մեջ: Ե՛վ ի՞նչքան մեծ է խաղաղ կյանքի ու խաղաղ աշխատանքի կարոտը էս ամեն տեղերում ու ամենի մեջ, խորթ արյունի ու պատերազմի, խորթ սրածութեան ու ավերածութեան...

Ո՞րն է հայ ժողովրդի ոգին և ի՞նչ է ուզում նա:

1910

«ՄՇԱԿ»-ի Պ. Գ. Վ.-ին

Պարոն Գ. Վ., եթե կարող եք պարզ պատասխան տալ, խնդրեմ պատասխանեք էս երկու հարցին:

Առաջինը՝ ի՞նչ հիմնական հարց է, որ ես թողել եմ առանց պատասխանի:

Երկրորդ՝ էդ ի՞նչ տեսակ ասեր ու հարգանք է, որ Ձեզ թելադրել է էն լեզուն գործածել իմ դեմ, որ Դուք գործ եք անել Ձեր նամակում: Մի շատ տարօրինակ սովորութիւն ու հանելուկ է սա: Ես ինչ որ աչքս բաց եմ արել՝ հայոց մամուլի մեջ շարունակ կարդացել եմ նման բաներ՝ «մենք սիրում ու հարգում ենք էսինչ կամ էսինչ գրական մարդուն, բայց...»: Հիմի դուք տեսեք ետևից ինչեր են գալի: Ես էլ իմ գրական կյանքում մի քանի անգամ ստիպված եմ եղել եռանդով պաշտպանվելու էդ տեսակ սիրողների դեմ ու արյուն պղտորելու նրանց «սիրո ու հարգանքի» ոչ էնքան քրնքուշ արտահայտութիւններից: Այժմ էլ դուք: Ե՛վ իմանալուց հետո, թե Դուք ո՞վ եք, ճշմարիտն ասեմ, հավատում եմ Ձեր «սիրո ու հարգանքի» հավաստիացումներին, բայց էդ ի՞նչ զարդերով եք զարդարում Ձեր «սիրո ու հարգանքի» տարական: Բա՛ն եմ գրել.— քննադատեցեք: Համաձայն չե՞ք: Խիստ քննադատեցեք: Կպարզվի, վերջը կերևա՝ ո՞վ է ուղիղ դատում:

277

Բայց վիրավորական, ակեղցփեղ դարձվածքներով վեր կենալ մի, ինչպես Դուք բարեհաճում եք վկայել, «սիրած ու հարգված» գրողի դեմ...: Դուք եթե գիտեք ի՞նչ բան է սիրած ու հարգված գրողը, ի՞նչպես եք կարողանում միաժամանակ նրա հետ էդքան անվայել ոճով խոսել, երբ նա Ձեզ ոչ մի բառով առիթ չի տվել, վրդովել, զայրացնել մարդուն ու մի օր էլ չբմեղ ձևանալով՝ կանգնել ու աշխարհքի առաջ աղաղակել, թե՛ տեսեք, մեր բանաստեղծը ի՞նչ հանդուգն խոսքեր է ասում ինձ: Սե՛ր, հարգա՛նք ու հետն էլ չգիտես ի՞նչ համեմներ... ի՞նչպես եք էդ երկուսն իրար պոստ, պ. Գ. Վ., խնդրեմ էս էլ բացատրեցեք:

1910

ԼԵԶՎԱԿԱՆ ՓՈՒՍԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Նոր-Նախիջևանի «Լույս» շաբաթաթերթի № 10-ում պ. Ա. Մեղրյանը մի հոդված է տպել՝ «Մեր մանկական գրականությունը և հայոց լեզուն», որի մեջ ցավով զանգատվում է, թե «...ինչ որ հնչվում է ժողովրդի բերանում, լինի դա հայերեն թե թուրքերին, թաթարերեն թե ուսուներեն, վերցվում է և իսկույն գրվածքի մեջ է դրվում»: Նա վշտանում է, որ մեր գրողներից ոմանք (ի միջի այլոց Ա. Իսահակյանն ու ես) գործ են ածում «ջան, ջիգյար, յար, յարաբ, դարիբ», և այլն: Եթե խոսքը էս կամ էն օտար բառի կամ մի շարք բառերի վրա լիներ, հարկավ վեճը մասնավոր քննադրություն կունենար և միայն ճաշակի խոսք կարող էր լինել, բայց պ. Մեղրյանը դատապարտում է օտար, այլև մինչև անգամ հայերեն գավառական բառերի գործածությունը ու մաքուր հայերեն լեզվի պահանջն է դնում: Լա՛վ: Պ. Մեղրյանին եթե տանք կարդալու էս բառերը. վարդ, վայ, վախել, նվագ, նվաստ, նունուֆար, նամ, նոր, նանիկ, նախշուն, նիստ, նշտար, նշան, նարգիզ, նավ, նուռ, նաշ, նազուկ, մեգ, միլ, մեխ, նահապետ, մոմ, մուճակ, մուր, մուկ, մոռ, ջերմ, գրավ, գրվանքա, կիր, կարիք, կերպաս, քիչ, քիմք, զոմեշ, ոչխար, դրոշակ, կկու, խոտ, խաբել, կուտ, կանթեղ, կանոն, կարապ, փուռը, գավազան, հարս, տոն, տարազ, դայակ,

սապոն, սուզ ու շիվան, շողք, շվաք, գումար, շեն, շաղգամ, դաս, աշակերտ, սուր, շուշան, սամույր, սիպտակ, սեր, սանդ և այլն, և այլն, անշուշտ նա էս բոլորը կհամարի մաքուր հայերեն բառեր: Եթե էդպես էլ չհամարի, կասի դրանք արդեն հայացել են: Էդպես է. ճշմարիտ է: Բայց հիմի մի ուրիշ հարց: Դրանք եթե մեր լեզվի մեջ են մտել ու հայացել, արդյոք դրանցից հետո կա՞նգ է առել էդ պրոցեսը և էլ նոր բաներ չե՞ն մտնում ու հայանում թե՛ մեր ժողովրդական լեզվի մեջ, թե՛ գրական, ուրիշ խոսքով՝ էլ չե՞ն կատարվում ժողովրդական ու գրական լեզվի փոխառություններ: Իհարկե, սրա պատասխանն էլ դրական է լինելու: Քանի որ մի ժողովուրդ հազար ու մի ձևերով հարաբերություն ունի ուրիշ ժողովուրդների հետ, քանի որ նրա կյանքը զարգանում է նաև արտաքին ազդեցությունների տակ, քանի որ մեծանում է, էնքան էլ ազդեցություններ է կրում և նրա լեզուն, հարստանում, ճոխանում ու զարգանում: Նորանոր գաղափարների հետ նորանոր ոճեր ու բառեր է ընդունում, և մինչդեռ դուք բողոքում եք, թե չի կարելի հայերեն լեզվի մեջ գործ ածել դարդ, ջան, շոլ, դիլ ու նման բառեր, մյուս կողմից ներս են հոսում ինտելիգենտ, կուլտուրա, լեզենդ, սոնետ, պոեմ, պոեզիա, օպերա, զիգզագ, պրոպագանդ և այլն:

Ի՞նչ եք անելու: Եվ ինչո՞ւ պիտի վշտանաք ու կովեք, ի սեր Աստուծո: Դուք կարծում եք միայն նրանով պիտի ճոխանաք ու բավականանաք, ինչ որ հայի միտքն ու հանճա՞րն է տալի...

Վերցնենք բառը:

Խնդրեմ ասեք. եթե մեր լեզվից հանեք ձեր հալածած «ջանը», որ չինական է, թե մոնղոլական-թաթարական, ինչո՞վ կփոխարինեք: Մի քիչ մտածեցեք, կտեսնեք մի բառ եք վտարում, որի տեղը համազոր ու համաշունչ մի այլ բառ դնել չեք կարող: Դրա նման և շատ ուրիշ բառեր, որ մաքուր հայերեն չեն: Եթե էդ օտարամուտ բառերի փոխարենը դուք ունեք — ինչ խոսք: Եթե ձեր լեզուն ընդունակ է հարազատ ունեք — ինչ խոսք: Եթե ձեր լեզուն ընդունակ է հարազատ թարգմանելու կամ հարմար բառեր շինելու, տեխնիկոնի հեռախոս ասացեք, տելեգրաֆին հեռագիր կամ վելոսիպեդին հեծանիվ, բայց հո չի կարելի ամեն բան էլ թարգմանել կամ

շինել, էքսպորտարիատորը ճողոպրիստ, ինչպես արել են մեր պոլսահայերը, տրամվայր քարշակ անվանել, հանգ. Գամառ-Քաթիպայի նման, խավիարը ձկնկիթ կամ ֆրակը պոչազգեստ:

Ավելի ձախորդն էն է, որ Մեղրյանը օրինակ է բերում ուսաց և եվրոպական գրականությունները, թե նրանք ինչքան մաքուր լեզվով են գրում իրենց մանուկների համար: Ուրիշ խոսքով՝ իրենց լեզվի մեջ օտար բառեր չեն ընդունում: Էս հո արդեն էնքան է սխալ, որ ես հերքելն ավելորդ եմ համարում: Գրեթե ամեն մի նոր եվրոպական բառ, ինչ որ հայերը շինում են կամ թարգմանում, ուսաները նույնությամբ առնում են ու տալիս իրենց երեխաներին:

Ո՛չ. թե՛ ժողովրդական, թե՛ գրական լեզվի մեջ լեզվական փոփոխությունները եղել են միշտ, կլինեն միշտ, և շատ է գեղեցիկ, որ էդպես է. միայն թե պետք է իմանալ շնորհքով, խելացի առնել ու տեղը գործածել, ահա խնդիրը: Իսկ ինչ վերաբերում է ժողովրդական բարբառներից օգտվելուն, դա ոչ թե դատապարտելի է, այլ հենց դա է բնական ճանապարհը կայտառ ու կենդանի լեզու ստեղծելու: Բավական էր. մեր երեխաներն այլևս չպետք է սարսափեն «հա՛» ասելիս, և մայրերն այլևս չպետք է մատներն սպառնալի թափ տան նրանց վրա. «հա՛» ասացի՛ր, ի՛նչպես կարելի է, ասա՛ «այո՛»: Բավական էր, նղովթը պետք է վեր կենա «հա»-ի վրից, իբրև թե նա գռեհիկ է. դրա մեջ ո՛չ առողջ միտք կա և ոչ էլ ճաշակ:

1910

ԷՍ, ԷԴ, ԷՆ-Ի ՄԱՍԻՆ՝

Մի երկու խոսք էլ «էս, էդ, էն» ձևի վրա: Պ. Մ. Ղազարյանը «Հորիզոնի» № 92-ում նկատել էր, որ էդ ձևը դժվարացնում է երեխանց ուսումը: Էդ շատ է զարմանալի: Ո՞րն է հեշտ՝ էս գրելը, թե այս): Նախ, ոչ մի երեխա, ոչ մի հայկական գավառում այս չգիտի:

¹ Սկզբի շարունակությունը նախորդ՝ «Լեզվական փոխառություններ» հոդվածի:

Ես էս, էդ, էն, փոխանակ այս, այդ, այն-ի, որ գործ եմ ածում, առաջինը մի հոգեբանական նուրբ պատճառ ունեմ, երբ որ ասում եմ էս մարդը, էն օրը, էդ հիմարը և այլն, էս շատ ավելի հարազատ լեզու է ինձ համար, անկեղծ ու սրտիս մոտ, իսկ երբ ասում եմ այս մարդը, այն օրը, այդ հիմարը, միևնույնը չի ինձ համար: Սրա հետ եթե էն էլ ի նկատի առնենք, որ ես մեծ մասամբ ժողովրդական նյութեր եմ առնում մշակելու, ավելի ևս հասկանալի կդառնա, թե ինչու էդ ձևն է տիրապետում իմ լեզվի մեջ:

Երկրորդ պատճառը. մի քանի հարյուր, կամ վերջապես մի քանի հազար մարդ, գրող, ուսուցիչ, հոգևորական և այլն գործ են ածում այս, այդ, այն ձևը, էն էլ մեծ մասամբ միայն գրելու ժամանակ, իսկ միլիոնավոր ժողովուրդը ասում են էս, էդ, էն: Ինչու պետք է դուք անպատճառ դատապարտեք նրա էս, էդ, էն-ը և ձեր այս, այդ, այն-ը սովորեցնեք իբրև նոր լեզու նրա երեխաներին ու իրեն: Մի՞թե դա ավելի գեղեցիկ է, ավելի հեշտ է կամ մի՞թե երբևէ գլուխ գալու բան է և ինչու՞ բաժանվել ժողովրդից:

Երրորդ, մի ենթադրություն ունեմ, հայտնի է, որ է-ն վերջնամուտ է, եղել է հնչյունը, բայց էդ հնչյունը նշանակվել է այ, որ այս, այդ, այն ձևերը գրվել են միայն էդպես, իսկ կարդացվել, հնչվել են էս, էդ, էն: Եթե էդպես չլիներ, մեր ժողովրդի մեջ կմնար էդ ձևը, մինչդեռ ամբողջ հայ ժողովրդի մեջ — Ռուսաստան, Տաճկաստան, Պարսկաստան, — կա էս, էդ, էն, աս, ադ, ան, մինչև անգամ իսիկ, հենց այս, այդ, այն-ն է, որ շկա: Ասում են մեր, վեր, ձեր, սել, գել և այլն կամ մաբ, վաբ, ծաբ, գալ կամ գյուլ, բայց իսկի շկա մայր, վայր, ծայր, գայլ և այլն: Ես կարծում եմ հնում գրվել է այ, ինչպես եվրոպական ai, հնչվել է է, և ահա հնչյունը ճիշտ մնացել է կենդանի լեզվի մեջ, իսկ գիրը պահել է միայն ձևը, մնացել է հին ձևով և անհմուտ անգրագետ մարդիկ արտասանել են այ, փոխանակ է-ի: Ապագայում մեր վանականները կարդացել են սխալ — այ ու էդպես էլ սովորեցրել են իրենց աշակերտներին: Մի խոսքով, եթե էդպես էլ չի եղել, դարձել է էդպես, հիմի պրծանք գնաց: Եվ կարող է խոսք լինել աս, ադ, ան-ի վրա կամ էս, էդ, էն-ի վրա — բայց այս, այդ, այնը...

1. Հոգեբանական պատճառ, որ ավելի անկեղծ ու հա-
րազատ է հնչում:

2. Ես ժողովրդից եմ առնում իմ նյութերը և լեզուն ու նրա
հետ էլ խոսում:

3. Ժող...

4. Լեզվի դարգացման օրհնքով հետզհետե բառերը, ոճերը
ավելի ու ավելի սղվում են, սեղմվում, կարճանում:

5. Լեզվաբանական տեսակետից — aյ — ai-ն է, այլև
պարսկ. փափուկ ա, ֆրանս. գրվում է in, և կարդացվում է
ան:

Պարսկ. փափուկ ա-ն մեզանում արտահայտել են այ-ով
էն ժամանակ, երբ յ-ն պահում էր իր հնչյունը, իսկ այժմ,
երբ յ-ն հօի վամ ինի հնչյունն է առել — դուրս է գալի այ —
դուրս է գալի աի: Ծիշտ էնպես, ինչպես ուսուսական Ե գրում
ենք տոչկո...

6. Մտածել եմ էսպես. մի քանի հարյուր մարդ են, որ
գործ են ածում այս, այդ, այն. իսկ միլիոնավոր ժողովուր-
դը — էս, էդ, էն: Եվ էդ մի քանի հարյուր մարդու մեծ մասն
էլ միայն գրելու ժամանակն է ասում այս, խոսելիս ասում է
էս: Եվ էդ մարդիկ պահելով ուսումնարանի ու գրականության
մեջ էդ ժողովրդին խորթ ու անծանոթ ձևերը, նրա երեխա-
ների ու նրա համար դժվարացնում են մայրենի լեզուն, դարձ-
նելով մի տեսակ օտար լեզու և ամեն մի գյուղացի երեխա
ուսումնարան գալով, նա, որ ավելի լավ հայերեն գիտի,
հաճախ, քան իր ուսուցիչը, գալիս է ու դատապարտվում
տանջվելով թողնելու, հետզհետե մոռանալու իր ավելի
ուղիղն ու գեղեցիկը և սովորելու ավելի տգեղն ու... Հիմի
ասացեք խնդրեմ, ինչո՞ւ պիտի դատապարտեք նրա էս, էդ,
էն-ը ու ձեր այս, այդ, այն-ը սովորեցնեք իբրև նոր լեզու
ժողովրդին ու նրա երեխաներին: Մի՞թե դա ավելի գեղեցիկ
է, մի՞թե ավելի հեշտ է, մի՞թե գրուիս գալու բան է, և ինչո՞ւ
բաժանել լեզուն ժողովրդից:

Բայց ի՞նչն է խրտնեցնում, թե ինչպե՞ս կարելի է ասել
օրինակ հայր Աբրահամ, մայր աստվածածին. այո, խորթ է
գալի, որովհետև դրանք գրքից են մտել ժողովրդի մեջ, բայց

դրա դիմացն էլ էս կա. հապա ինչպես կարելի է ասել —
հայր օրհնած, կոճակդ մայր արա:

Սովորության քան է միանգամայն: Եթե ժողովրդական
երգերում ասվում է.

Հերիկ, վեր կաց գերեզմանեդ,

Մերիկ, վեր կաց գերեզմանեդ: («Սասունցի Գավիթ»)

Շատ ավելի գեղեցիկ են էս հերիկն ու մերիկը, քան հայ-
րիկն ու մայրիկը:

Գներ — գէր, (գնայր, գայր):

Օտարների մեջ նույն բառերը (վրացերեն մգելի, հայե-
րեն գել) թե պետք է է լինի, դրան ապացույց կարող են
լինել և էն բառերը, որ մեր հարեան ժողովուրդներն են գործ
ածում և մենք. օրինակ, վրացիք ասում են մգելի, հայերեն
գայլ. պարզ է, որ էդ գայլը էն գելն է, որ ասում է ժողո-
վուրդը, և զանազան գավառներում փոփոխելիս ըստ իրենց
հնչյունաբանության — գել, գալ, գյուլ, բայց գայլ՝ երբեք...

1910

ԳԱՌՆԱՑԱՆ ԺՈՂՈՎՈՐԻ

Մտածմունքներ կան, որ սաստիկ ծանր են, բայց դուք
դատապարտված եք մտածելու, շեք կարող փախչել նրանցից:
Նրանք էն ծանր հիվանդությունների նման են, երբ դուք գի-
տեք, որ ձեր մարմնի մեջ կրում եք քաղցկեղի խոցը, բա-
րակացավի բացիլները, կամ ժանտախտի թույնը: Չեք կա-
րող անց կենալ ու արհամարհել, կամ նրանք պետք է ձեզ
հաղթահարեն ու սպանեն, կամ դուք պետք է մարդկային
հանճարի տված ամեն միջոցներով վեր կենաք ցավերի դեմ
ու ազատվեք, առողջանաք. իհարկե, եթե էնքան արիության
ու հասկացողություն ունիք:

էն մարդիկ, որ երկար ու լուրջ զբաղվել են մեր ժողո-
վրդով, մեր մարդով, միշտ եկել են մի ծանր եզրակացու-
թյան, թե շատ շարունակաբար կա մեր հոգում:

էսպես են ասում նրանք և ասում են խորը ցավով, ինչ

ցավով որ կարելի է ասել, թե՛ բարակացավի բացիլներ կան իմ կրծքում:

Բայց քիչ են էս տեսակ ազնիվ ու քաջ մարդիկը: Մեծ մասամբ ախտի գոյութունը ընդունելով հանդերձ, իրենց առողջ են համարում ու միշտ ուրիշներին են հռչակում հիվանդ: Ամեն միևր ինքը շար չի, կեղծավոր չի, հայհոյող չի, ստախոս չի, թայֆայական չի, էդ ամենը իրենից դուրս ուրիշներն են:

Բայց, իհարկե, սրանց չպետք է հավատալ, ոչ էլ տկանջ դնել: Ճշմարիտը էն է, որ մեր ամբողջութունը տառապում է մի ծանր ու խոր բարոյական հիվանդութուններով:

Նայեցե՛ք:

Գյուղացի ունձպար մարդիկ են, հարևան, միասին մի-ծացած, իրար հետ օխտը բեռը աղ ու հաց կերած, բայց եթե մեկի արտը լավ է գալի կամ անասունը բազմանում՝ մյուսը նախանձից հիվանդանում կամ ինչպես իրենք են ասում՝ «արնով է ընկնում»:

Վաճառականներ են, առուտուր են անում, թեկուզ մրցակիցներ էլ չեն, բայց մեկը մյուսի հաջողությունը լսելիս քունը կորցնում է ու էնքան էլ իր գործի վրա չի մտածում, որքան նրա հաջողության վրա է դարձ անում, ու, տեղն ընկած տեղը ոչինչ չի խնայիլ նրա գործին վնասելու:

Հոգևորական է. ինչքան վարձ ու պատիվ կուզեք տվեք— միշտ դժգոհ է, բողբոջում է, գանգատվում է անարդարությունից, և գիտե՛ք էդ անարդարությունը որն է, որ իր ընկերն էլ է նույնը ստանում կամ նա էլ է կարողանում ապրել:

Քաղաքացի թե գյուղացի՝ երկուսը վեճ ունեն իրար հետ: Ոչ մի դատաստանում չի վերջանում նրանց վեճը, տևում է երկար տարիներ և հաճախ իրենց ամբողջ կյանքն ու կայքը դնում են էդ վեճի վրա, մինչև կարողանում է մեկը մյուսին խեղդել, գետնին հավասարել կամ հենց երկուսն էլ փշա-նում են:

Մամուլ կա: Տասնյակ տարիներով ու անհամար դեպքերով փորձված է, է՛լ հայհոյանք, է՛լ զրպարտություն, է՛լ ավաշկարա սրտ, է՛լ շարախոսություն, կեղծավորություն: Նեղ թայֆայականություն հո ոչ մի գյուղում գուցե էնքան անվայել կերպարանք չի առել, որքան սրա մեջ: Մի հայտնի

հրապարակախոս պատմում էր, թե պարզ խոսում էին մեր խմբագրատանը, թե էս կամ էն գրողին, ինչքան էլ լավ գրվածք հրատարակի, միշտ պետք է զարկել, ծաղրել կամ լռել, մի խոսքով ամեն կերպ աշխատել սպանել, միայն նրա համար, որ մեղ հետ չի, մեր թայֆիցը չի:

էդպես էլ մտեք ազգային, հասարակական, գրական գործիչների մեջ: Մեկը մյուսի հռչակն ու հաջողությունը տանել չի կարողանում:

Հիմի եկեք ուսուցիչներին տեսեք: Դասերից ավելի շատ էն աշխատանքի վրա են, որ իրար ոտի տակ փորեն, և շարունակ մի որևէ շնչին դեպք, որ կարելի էր ընկերական շըրջանում հեշտ վերջացնել, ազգային հարց դարձրած, տարիներով ձգտում են պաշտոնական ճանապարհով, դատարանով ու մամուլի էջերում մեկը մյուսին անվանարկել, հալածել ասպարեզից ու սպանել բարոյապես... ո՛չ մի մեղմություն, ո՛չ մի ներողամտություն, ո՛չ մի սահման շարունականը: Ինչո՞ւ է էսպես:

Պարզ հասկանալու համար երևույթի վրա պետք է նայել բնության ու պատմության օրենքների բարձրությունից, էն լայն, խաղաղ ու խոր հայացքով, որ նրանք միայն կարող են տալ: Ուրիշ ընդհանուր հանգամանքների հետ զարհուրելի ծնող է եղել մեզ համար մեր պատմությունը: Նա երկար դարերով մեզ դրել է բարբարոս ժողովուրդների ոտների տակ: Իսկ ամեն կենդանի գոյություն, որ ոտնատակ է ընկնում, եթե չի մեռնում, ալլանդակվում է, դառնանում ու փշանում: էսպես է բնության օրենքը:

էն հասարակ վարունկի խուփն ինչ է. հայտնի է, որ եթե նա էլ ոտի տակ է ընկնում՝ էլ նրա պտուղը չի ուտվում, էնքան է դառնանում: Նրա համար էլ ձեզ թույլ չեն տալ, որ նրա թուփը ոտի տակով անեք: էնպես դառնանում ու դաժանանում է և մարդը, նրա հոգին, սիրտը, միտքը, ու ներժանանում է և մարդը, նրա հոգին, սիրտը, միտքը, ու ներքին դառնությունը դուրս է տալի, հայտնվում է և՛ աչքերում, և՛ դեմքին, և՛ խոսքերում, ամեն տեղ, ամեն ասպարեզում, ու ամբողջ կյանքը դարձնում է դառն ու դաժան: Եվ էս տեսակ կյանքը կունենա, այո՛, շատ բան, և՛ «հառաչադիմություն», և՛ «կուլտուրա», և՛ «մամուլ», և՛ «գրականություն», և՛ «դպրոց», և՛ «բարեգործություն», բայց

էդ բուրբ ներսից ճիճվի կերած պտուղի նման են, և տառապում են հիմնական պակասություններով, մի ընդհանուր ցավով, որի ճարը դրսից անել չի կարելի: Էդ տեսակ կյանքը կտա և տաղանդավոր մարդիկ, սակայն նրանք էլ կլինեն դառն ու դաժան: Բայց նա չի կարող ծնել ազնիվ մարդիկ, բարի սրտեր ու բարձր ոգիներ, հենց էն, ինչը որ դարձնում է մի կյանք գեղեցիկ ու հրապուրիչ և մի ժողովուրդ թան ու համակրելի:

Արդ՝ եթե մենք ունենք ազգային իմաստություն, հոգու արիություն և առողջ բնազդներ, անկարելի է աչքներս փակենք մեր էս ծանր հիվանդության առաջ և շղզանք, որ մեր հոգին շատ է դառնացած, մեր ներքին մարդը շատ է փշացած, և դրա դեմ կովելու, առողջանալու առաջին պայմանը էն է, որ մենք և՛ մեր սրտերում, և՛ աշխարհքի առաջ անկեղծ խոստովանենք ու ճանաչենք մեր դժբախտությունը: Ապա թե էդ փրկարար գիտակցությանը կհետևեն ինքնակատարելագործության բարձր ցանկությունն ու ազնիվ գործը:

Ուրիշ ճանապարհ չկա. ներսից էլ լինելու հաստատ փրկությունը, որովհետև ներսից ենք փշացած:

1910

ՎՌԱԶ ՊԱՏԱՍԽԱՆ Պ. Ա. ՄԵՂՐՅԱՆԻՆ

Պ. Մեղրյան, Ձեր «Ուշացած պատասխանի» ու նրանից առաջ տպած հոդվածի միտքն էն է, թե հայ գրողները պետք է մաքուր հայերեն գրեն: Շատ ուշացած ու շատ հասարակ մի խելոք խոսք: Ձեզանից շատ վաղ բոլոր հայ գրողները մտածել են, որ մաքուր հայերեն գրեն: Բայց ի՞նչ կնշանակի՝ մաքուր հայերեն, ահա խնդիրը:

Ձեր առաջն են բոլոր հայ գրողները. ո՞րի լեզուն եք համարում մաքուր հայերեն. ցույց տվեք ու հրամայեցեք, որ նրա նման գրեն: Իհարկե շատ միամիտ կլինիք, եթե ցույց տաք: Մեր լեզուն դեռ կազմակերպվելու շրջանի մեջն է, և առեն մի գրող ընտրում է իրեն համար մի ճանապարհ:

յրանց առջև են և՛ եղած գրական լեզուն, և՛ գրաբարը, և՛ բարբառները, և՛ օտար լեզուները:

Սա էն կարծիքին եմ, էսպես էլ գրեմ եմ իմ հոդվածում. ու հենց իմ բառերն էլ հանել եք Ձեր պատասխանի մեջ, — որ գրողը իր լեզուն հարստացնելու, կազմելու համար ազատ է օգտվելու էդ բոլոր աղբյուրներից, միայն թե պետք է իմանա շնորհքով, խելացի օգտվել և տեղը գործ ածել:

Իսկ Դուք...

Ա՛յ տեսեք ինչ եք ասում Դուք: Դուք ասում եք պետք է լրել մաքուր հայերեն, այսինքն, հայերեն լեզվի միջից դուրս վնդղել թուրքերեն, թաթարերեն, ռուսերեն և այլ օտար բառերը և նմուշի համար մի շարք թուրք-թաթարական բառ եք մեջ բերում, ցույց տալու, թե ինչ տեսակ բառերից պիտի զգուշանանք ու պաշտպանենք հայոց լեզվի մաքրությունը, օրինակ, դարձր, դուրբան, քարդ, մարալ, մոշտաթի, լար, խաթր, զիլ, մուրազ, նազուք, շան, ջեյրան և այլն:

Ձեզ ասում են, թուրք-թաթարականը թողնենք մի առ ծամանակ, դա Ձեզ շատ է խրտնեցնում, փկրոպակաւ բառեր կան, որ միջազգային են և բոլոր ազգերը գործ են ածում, օր. ինտելիգենտ, կուլտուրա, լեզենդ, պոեմ, սոնետ և այլն: Ի՞նչ եք կարծում, մենք էլ գործ ածենք, թե չէ:

Հիմի տեսեք թե Դուք ինձ ինչ եք պատասխանում. լավ ականջ դրեք: Ասում եք. «Ի՞նչ եք ուզում ասել դրանով, որ ի ն տ ե լ ի գ ե ն տ գործածողը իրավունք ունի և դա՞ր դ գործածելու»:

Այո՛, հենց էդ եմ ուզում ասել և լավ տեղն եմ բռնել: Եվ ահա Դուք շարունակում եք ավելի խորը խրվելու համար:

«Սարեր-ձորեր տարբերություն կա. առաջին դեպքում (երբ գործ են ածում դարդ, ջան, շուլ) մենք գործ ունենք զուտ տեղական օտար բառերի հետ, որոնց հայերենը կա. իսկ երկրորդ դեպքում՝ բառերի, որոնք միջազգային բնավորություն են կրում և որոնց համազոր հայերենը չկա. բառեր, որ անխտիր գործ են ածում բոլոր եվրոպական քաղաքակիրթ ազգերը»: Եվ ամփոփում եք.

«Ես հակառակ չեմ եվրոպական միջազգային բառերի գործածությանը: Այլ խնդիր է սակայն, երբ խոսքը

ժողովրդական բարբառներից օգտվելուն է գալիս»:

Ահա. էս է Ձեր հողվածների միտքը և մեր տարածայնության հիմնական պատճառը: Մնացածը ինչ որ պատմում եք, հայ Գամառ-Քաթիպան ծաղրել է բարբառները, նոր-նախիջևանցիք էսպես են խոսում, երևանցիք էնպես... Դրանք բոլորը դատարկ բաներ են և մի գրող մարդու առջև պատմելու անարժան: Նստել եք՝ քրդի աղջկանը լուր եք սովորեցնում:

էականին եկեք:

Ուրեմն Դուք դեմ չեք եվրոպական միջազգային բառերի գործածությանը:

Շատ ենք ուրախ:

Ինչո՞ւ չեք դեմ:

Ասում եք՝ երկու պատճառով. առաջինը, որովհետև նրանց համազոր հայերեն չկա. երկրորդն էլ՝ եվրոպական բոլոր քաղաքակիրթ ազգերն անխտիր գործ են ածում:

Դե հիմի կանգնեցեք:

Ձեր առաջին «որովհետև»-ը ստիպված պիտի լինիք ես վերցնելու, որովհետև նրանց հայերենը կա: Կուտուրային հայերեն ասում են քաղաքակիրթություն, և գործ են ածում էդ մտքով, ու Դուք ինքներդ էլ մի քանի տող վերև գրել եք «եվրոպական քաղաքակիրթ ազգերը», ինտելիգենտին հայերեն ասում են մտավորական, պոեմը — վիպերգություն, լեզենդը — ավանդավեպ: Տեսնո՞ւմ եք, հայերենը կա. բայց... բայց նրանք մտնելու և մնալու են Ձեր մաքուր հայերենի մեջ, որովհետև միջազգային բառերն են, բոլոր ազգերը գործ են ածում: Դուք էլ ընդունեցիք ու սրանով Արևմուտքն ապահովեցիք:

Դե հիմի երեսներդ արեք դեպի Արևելք:

Ձեզ ո՞վ ասավ, պ. Մեղրյան, որ եվրոպական ազգերն ազգեր են և կարող են միջազգային բառեր ունենալ, իսկ ասիական-արևելյան ազգերն ազգեր չեն և միջազգային բառեր ունենալու իրավունք չունեն ու չեն կարող ունենալ:

Արդյոք էստեղ գլխի՞ եք ընկնում, պ. Մեղրյան, թե ինչ խախուտ կոնիվ եք սկսել: Հայոց լեզվի կազմության խնդրում էն զիջումը, որ Դուք ակամա անում եք կուտուրական Արևմուտքի առաջ, ես ուրախությունս էն գլխից արել եմ և անում

եմ թե՛ Արևմուտքի և թե՛ մանավանդ Արևելքի ու մեր ժողովրդական բարբառների առաջ: Եվ կրկնում եմ, էստեղ միայն խելքի ու շնորհքի գործ է, թե ո՞վ ինչպես կօգտվի: Իսկ Դուք ասում եք. «Ըստ իս՝ այստեղ ո՞չ շնորհք է հարկավոր, ո՞չ խելք, այլ հարկավոր է միայն լավ հայերեն իմանալ և գոյություն ունեցող հայերեն բառերի փոխարեն օտարը գործ չածել» («Հորիզոն», № 166, V սյունյակ) ու մեզ համոզելու համար, Ձեր առաջ բերած օտար բառերի տեղ դնում եք մաքուր հայերենը. օրինակ. առաջարկում եք «ջանի» տեղ գործածել «հոգյակ»: Եվ ահա բանը դրսովեց. այսուհետև փոխանակ ախպեր ջան կամ Գրիգոր ջան ասելու, մաքուր հայերենով կասենք հոգյակ եղբայր, կամ հոգյակ Գրիգոր, կամ թե չէ քեֆ անելիս, ներողություն, մաքուր հայերենով ասենք, խրախճանք անելիս կամ անհասարակ ուրախանալիս փոխանակ «ջան» բացականչելու, կկանչենք «հոգյակ»...

Եվ մի՞թե Դուք չեք տեսնում ու չեք զգում, թե ինչքա՞ն է սա անմիտ ու անճաշակ: Մի՞թե չեք տեսնում, որ հոնքը շինելու տեղ աչքն էլ հանում եք:

Եվ ինչպես եք Դուք հայոց լեզվից հանելու մուրազը. արդեն նա ասում է անմուրազ, մուրազատու, ինչպես եք դուրս թշելու մարալն ու ջեյրանը, որ մտած են նույնիսկ եվրոպական գիտական գրքերի մեջ. ինչպես եք մերժելու դարիբը, որի մոլի պաշտպանը չեմ, բայց որը մտել է ձեր բոլոր երգերի ու նույնիսկ Մաշտոցի մեջ և մի շարք թաղման երգեր կոչվում են «ղարիբաթաղի» երգեր. ինչպես եք ջնջելու զիլը, որի հոմանիշը չեք նշանակում կամ նամեն ու նազուբը, որ մտել են ձեր կլասիկների զբովածքների մեջ...

Հապա էս մի քանի բառի փոխարեն՝ եթե էն մի քանի հարյուրը հանդես դնեիք, որ ասում եք գիտեմ, էն ժամանակ տեսնեիք, թե ինչ դուրս կգար:

էսպես: Երկու տարբեր ճանապարհներ են, պ. Մեղրյան, և ձեզանից ու ինձանից չի սկսվում էս կոնիվ մեր գրակա-նություն մեջ: Մինը Մոսկովյան ուղղությունն է, մյուսը Արարատյան: Մի ճամփի սկզբին կանգնած է Ստ. Նազարյան, մյուսին՝ Խ. Աբովյան: էս երկու ճանապարհներից թե որն է

ճշմարիտն ու կենսունակը — էդ հետո կտեսնենք: Հայ ժողովուրդը իր միջից իրար ետևից սերունդներ է դուրս դրվում դեպի ուսումնարանական ու գրական ասպարեզները և նրանք կվճռեն էս խնդիրն ու ցույց կտան, թե որ ճանապարհով է գնալու հայոց գրական լեզուն, էն լեզուն, որ կազմվելով ու ճոխանալով հանդերձ միայն մի խորհուրդ ու մի իմաստ ունի — խոսել հայ մարդու, հայ ժողովրդի սրտին:

Մի նկատողություն էլ: Դուք, պ. Մեղրյան, գրում եք, իբրև թե «նա (այսինքն՝ ես) ուզում է հավատացնել, որ եվրոպացիներն ու ռուսներն իրենց երեխաներին ավելի ազատազգիս են և ոչ մի մաքուր լեզվով գրվածքներ են հրատարակում, քան մենք հայերս», ու վերջումն մի-մի հարցական ու զարմացական եք տնկում: Կարդացեք, խնդրում եմ, № 103 «Հորիզոնը»¹ նորից և տեսեք ես ինչ եմ ասել, Դուք ինչ եք դուրս բերում:

1910

ՀԱՅՈՑ ԹԱՏՐՈՆԻ ԲԱՅՈՒՄԸ

Վաղը բացվում է Թիֆլիսի հայոց թատրոնը և բացվում է Շիրվանզադեի «Պատվի համար» դրամայով:

Մենք չգիտենք ինչն է պատճառը, որ հայոց թատրոնն այսպես ուշ է բացվում, թատրոնի վարչությունը դեռ բացատրություն չի տվել հրապարակավ, բայց ինչ էլ որ լինի լավ չի:

Դերասանական խումբը ընդհանուր առումով հաղող է կազմված, թեև դժբախտաբար դուրսն են մնացել մեք հին ու փորձված գերասաններից մի քանիսը:

Ռեպերտուարին գալով՝ մենք մի կարևոր նկատողություն ունենք անելու: Ամեն մի ժողովրդի թատրոն թատրոն է ամենից առաջ ինքնուրույն ռեպերտուարով:

Դա է, որ թանկ պիտի լինի թատրոնի համար և նրա հա-

¹ Խոսքը վերաբերում է սույն հատորում տպագրված «Լեզվական փոխառություններ» հոդվածին:

շող գործերը չպետք է հնացած համարվեն ու դուրս ընկնեն, և եթե մինը կամ մի քանիսը դուրս են ընկնում՝ միայն այն դեպքում, երբ այդ ռեպերտուարը շատ է մեծ ընտրության համար: Այժմ ինչքան է մեծ հայոց ինքնուրույն ռեպերտուարը, որ նրա եղած աչքի ընկնող գործերն էլ դուրս թողնեք: Սակայն Դրամատիքական Ընկերությունը ոչ թե դրանցից մինը կամ մի քանիսն է դուրս թողել, այլ բոլորը և միայն մի հատն է վերցրել — Շիրվանզադեի «Պատվի համար»-ը, այլևս ոչ մի պիես ո՛չ Սունդուկյանից, ո՛չ Ահարոնյանից, ո՛չ Փափազյանից և ո՛չ ուրիշներից: Սա կնշանակի լավ չնահատել ինքնուրույն գործը:

Զլինի՞ նրա համար, որ հին են:

«Մշակն» էլ զարմանում է, որ Դրամատիքական ընկ. վարչությունը սեզոնը բաց է անում հին պիեսով: Այս զարմանքն էլ մենք գտնում ենք միանգամայն զարմանալի: Ո՞րտեղ է ընդունված և ինչու անպատճառ թատրոնները պետք է բացվեն նոր պիեսով: Այս անշուշտ լավ է իմացել և թատրոնի վարչությունը, որ սեզոնը բաց է անում ծանոթ պիեսով, չնայելով իր ձեռքին ունի երեք նոր պիես — Շիրվանզադեի «Արմենուհին», Մ. Գևորգյանի «Փառանձիմը» և Ս. Թառայանի «Սոկրատեսը»:

Ողջունելով Թիֆլիսի հայոց թատրոնի բացումը, մենք սրտագին կցանկանայինք, որ հայ հասարակությունը գնահատեր ու պաշտպաներ իր մայրենի բեմը, իր դրամատուրգների ու դերասանների, այսպիսով նրանց հնարավորություն տալով ավելի ուժեղանալու և իրեն համար էլ իրավունք ձեռք բերելու ավելի խստապահանջ լինելու:

1910

ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՄԵՆՔ

Եվրոպական և ռուսական թերթերի էջերը մեծ մասամբ բռնված են քաղաքական հարցերով: Ինչո՞ւ. որովհետև այդ ժողովուրդները ապրում են քաղաքական մեծ պայքարներով, երկիրներ ու ազգեր տիրելու և կառավարելու ծրագիրներ ունեն, առևտուրի մեծ շուկաներ ու ազդեցությունների աս-

պարեզներ ձեռք բերելու խնդիրներ ունեն, միլիարդներով փոխառություն անելու, դաշնակցություններ կապելու հոգսեր ունեն, խաղում են իրենց ահռելի ուժերով, աշխարհքներ ու ազգեր են շարժում, և արթուն, ուշի՛ ուշով հետևում են ամեն մեկը մյուսի կամ ամբողջ աշխարհքի քաղաքական կյանքի ընթացքին, մանրամասն հաշվի են առնում դիմացիների այս կամ այն շարժումը, նավերի թիվն ու զորաբանակը, աշխատում են գուշակել մեկը մյուսի տեսակցությունն ու խոսակցությունը, զբաղվում են դրանով, խորհրդածություններ են անում, և այդ պատճառով իրենց թերթերն ու հոդվածներն էլ նվիրում են դրանց:

Այս ամենը շատ է պարզ ու շատ է հասկանալի: Բայց մի բան, որ շատ է անհասկանալի ու անհեթեթ, այն է, որ մեր մամուլն էլ, մենք էլ ամենայն եռանդով միշտ հետևել ենք և հայ ընթերցողների հետ զրույց ենք արել, հաշիվ ենք տեսել քաղաքական այդ բոլոր դեպքերի ու դեմքերի մասին, շարունակ առաջնորդողներ ենք նվիրել մեկի ու մյուսի քաղաքականությանը, խորհրդածություններ արել, եզրակացություններ հանել, սխալներ գտել, և, թո՛ղ զարմանալի չթվա, նույնիսկ զգուշացրել ու սպառնալիքներ արել:

Եվ այս սովորությունը, այս ադաթը այնպես է արմատացել մեր մեջ, այնպես է տիրել մեր ուղեղին, որ, շատ է հավանական, շատերի զարմանքն են հարուցանելու մեր տողերը, թե՛ հապա ի՛նչ կերպ կարող է լինել: Կասեն՝ մենք կուլտուրական ժողովուրդ ենք, մենք մամուլ ունենք, ինչպե՞ս չհետևենք լուսավոր ազգերի քաղաքական կյանքին: Բայց երբ այդ կուլտուրական ժողովրդի մամուլի ներկայացուցչին, բարերարին ու գյուղատնտեսին դուրս են անում հայ գյուղից, նոր են խոստովանում, թե չեն ճանաչել հայ գյուղացուն ու հայ գյուղը, մի խոստովանություն, որ նորերս արին «Մ շ ա կ ու մ»։ կամ թե չէ, այդ քաղաքակիրթ բազմությունը, որ քանի-քանի անգամ տեսել է եվրոպական ազգերի կուլտուրական ու քաղաքական գործերի հաշիվը, նոր է իմանում, որ իր թեմական դպրոցներում աշխարհաբար հայերեն լեզու չկա, և հալածված է եղել իր գրականությունը նրանց մեջ, ինչպես վերջերս բացվեց «Հորիզոն»-ի էջերում:

Իսկ եթե մենք պետք է զբաղվեինք քաղաքականությամբ,

այդ ամենից առաջ այն էր լինելու, որ մի ճշմարիտ հայացք լինեինք ստեղծած, մի պարզ վերաբերմունք լինեինք մշակած դեպի այն պետությունները, որոնց ձեռքի տակ գտնվում ենք: Մի գիտակցական, մտածված վերաբերմունք, որ գոյություն չունի ամենևին և միշտ առաջնորդվում ենք քամու հոսանքներով, նախապաշարումներով ու թյուրիմացություններով, ամեն անգամ էլ դառնություն մեր կուպիտ սխալներն ու կորուստները, ամեն անգամ էլ ամեն մեկս ետին թվով հանդիսանալով խելոք ու հեռատես, երբ եղածն անցել է անդառնալի: Եվ ո՞րտեղից պետք է լինի այդ գիտակցությունն ու մտածված վերաբերմունքը, քանի որ միանգամայն տգետ ենք մեր նույնիսկ մոտիկ անցյալին և այսօրվա անցած դարձածին:

Այսպես է, դժբախտաբար, եվրոպական պետությունները քաղաքականության վրա խորհրդածող կուլտուրական ժողովուրդը: Եզոպոսի աստղաբաշխի նման, որ, դիտակն աչքերին, աստղերը դիտելով, առանց իր ոտի տակի ճանապարհը նայելու առաջ է գնում ու գնում է ընկնում ջրհորը:

Անշուշտ, քաղաքական աշխարհքից պետք է երբեմն-երբեմն տալ տեսություններ և այդ շատ է հեշտ, որովհետև պատրաստ գալիս է տպված, բայց առաջին ու մեծ տեղը պետք է բռնեն մեր աշխարհքը, մեր կյանքը, այդ կյանքի հարցերն ու նրանց լուրջ, ամենակողմանի ուսումնասիրությունը, այն, որ դժվար է, և գուցե դրա համար էլ ամենից քիչ տեղ է ունեցել մեր մամուլի մեջ:

Լ. Ն. ՏՈԼՍՏՈՅԻ ՄԱՀՎԱՆ ԱՌԹԻՎ

Ընկավ ոռուսական վիթխարի հանճարը ու մահվան բոթից թնդում է լայնածավալ Ռուսաստանը մի ծայրից մինչև մյուսը: Թնդում է և ամբողջ լուսավոր աշխարհքը, որովհետև, ինչպես ճշմարիտ մեծ մարդ, կրելով կատարյալ իր ժողովրդի հոգին ու պատկերը, հանդիսանում էր իր ժամանակի գեղարվեստական գրականության այն հոյակապ ուժը, որ կարող էր մի հայացքով ու մի գրվածքով ամփոփել կյանքը ահագին տարածության վրա՝ վերևից մինչև ներքև, արտաքին կեղևից

մինչև հոգու ամենածածուկ խորշերը, հանդիսանում էր իր ժամանակի հսկա փրկիստփան, որ աշխատում էր լուծել կյանքի առեղծվածը, խորամուխ լինել, հասկանալ ու պատասխան գտնել, թե ինչու է ապրում մարդը և փրկիստփայական խաղաղությամբ նայելով մահվան պաղ ու խորունկ աչքերին՝ ուզում էր հաշտություն ստեղծի նրա ու նրա առջև սարսափող հոգիների մեջ:

Գերագույն ապավենն էր որոնում, Աստված էր որոնում տառապող ու դժբախտ մարդկության համար և գտնում էր նրան ոչ թե ուժի մեջ, այլ արդարության, ճշմարտության, ներքին, բարոյական մաքրության և այն սիրո մեջ, որ հավասարեցնում ու եղբայրացնում է մարդկանց, թշնամի չի ճանաչում աշխարհքում, չի հակառակում նույնիսկ շարին. և ազատությունն էլ հենց սրա մեջ էր դավանում:

Մահվան հանդեպ հաշվելով մարդու կարծօրյա կյանքի օրերը՝ իջեցնում է նրա արժեքը ու քարոզում է այն էլ նվիրել սիրո ու բարության Աստծուն:

Դեռ երիտասարդ հասակից նրա միտքը քաշում է դեպի բնությունն ու գյուղացին — մուժիկը: Այնտեղից տարածվում է բոլոր արհամարհվածների ու զրկվածների վրա ու մի օր էլ բացականչում է. «Չեմ կարող շտեմնել մերկերին ու քաղցածներին»: Իհարկե, այս այն տեսնելը չի, որ տեսնում են սովորական աչքեր ունեցողները: Եվ այսպես տեսնելուց հետո ութսունական թվականներին գրում է. «Քաղաքային կյանքը, որ առանց այն էլ խորթ էր իմ հոգուն, զզվեցրել է արդեն և փարթամ կյանքի վայելքները, որ երբեմն հաճույք էին տալիս, այժմ տանջանք են դարձել ինձ համար»: Եվ ահա նա վաղուց խորշում էր այս կյանքից ու սրա վայելքներից, որ հիմնոված են ուրիշների տառապանքների վրա, վայելքներից, որ նա համարում է կեղծ քաղաքակրթության արդյունք ու ընդհանուր առումով կոչում է անառակություն: Բայց խորշում էր շրջապատված այդ վայելքներով, ապրում էր իր համոզմունքներին հակառակ պայմաններում — մի ծանր դրամա, մի ներքին կռիվ, որ պետք է մի օր մի լուծում, մի ելք ունենար:

Այսպես առաջ գալով մենք գտնում ենք, որ նրա գործե-

րից ամենամեծն ու բնորոշը, նրա գլուխ գործոցը եղավ վիրջին փախուստը — ելքը Եգիպտոսից:

Նրա դժգոհ հոգին այլևս չկարողացավ հանդուրժել այս կյանքին, կամ, ավելի ճշմարիտը՝ կյանքի այս եղանակին, ու մեջքն արավ նրան, երեսը դեպի անապատ, այն մեծ դժգոհների նման, որոնք անապատ են քաշվել իրենց հոգու հետ այնտեղ ապրելու և խորհելու, այնտեղ վայելելու այն ցանկալի խաղաղությունը, որ ստեղծագործող ու բարի հոգիների հայրենիքն է, այնտեղ մտածելու կյանքի անառակության ու մարդու փրկության վրա:

Այդ ճանապարհին էլ գտավ իր մահը:

Տրտմության օր է համայն Ռուսաստանի և ամբողջ լուսավոր մարդկության համար, տրտմության օր է ռուսական, այլև համաշխարհային գրականության համար, տրտմության օր է բոլոր նեղվածների ու ճնշվածների համար, որոնք իրենց նեղության մեջ սովոր էին լսելու նրա հուժկու ձայնը, տրտմության օր է բոլոր բարի սրտերի համար, որոնք գիտեին, որ դեռ կենդանի է Տոլստոյը...

Ընկավ մեծ գեղարվեստագետը, մեծ քարոզիչը ու մեծ դժգոհը:

Երախտագետ սրտով ու խորին պատկառանքով խոնարհվում ենք մեծ մարդու հիշատակի առաջ:

1910

ՇԻՐՎԱՆՁԱԳԵՒ ԶՈՒՆՅԱՆԸ

Հրապարակի վրա դրված է մեր նշանավոր վիպասան և գրամատուրգ Շիրվանզադեի գրական գործունեության 30-ամյակի խնդիրը: Թիֆլիսի հայոց Գրամատիքական Ընկերության վարչությունը, որ գործի նախաձեռնությունը առել էր իր վրա, ընդհանուր ժողով հրավիրեց, ուր և ընտրվեց հոբելյանական հանձնաժողով: Այսպիսով առաջներս է գրական մի տուն:

Այստեղ մենք խոսք չենք անելու Շիրվանզադեի տաղանդի ու նրա գրական արժանիքի վրա, այլ միայն ուզում ենք վկայել, որ հայ ժողովուրդը եթե մարդիկ ունի, որոնց պետք

295

է հարգի հոբելյանով, դրանցից մինը Շիրվանզադեն է: Հոբելյանական տոներին ամեն մի ժողովուրդ՝ հանձին հոբելյարի, գալիս է հարգելու, պսակելու ինքը իրեն, իր շնորհքը, իր մտավոր-հոգեկան ուժերը, ուժեր, որ ընդունակ լինելին պատկառանք ներշնչելու ո՛չ միայն ազգի ընդհանրությանը, այլև օտարին: Այդ տեսակետից «Ցավագարի», «Քաոսի», «Արտիստի» և շատ ուրիշ վիպական ու բեմական դրվածքների հեղինակը հանդիսանում է անվիճելի արժանավոր հոբելյար: Մենք միայն կցանկանայինք, որ արժանավոր մարդու հոբելյանն էլ տոնվեր արժանավայել կերպով: Կցանկանայինք՝ ավելի մեծ տարածության վրա լսվեր հայ ժողովրդի խրախուսական ձայնը, որ երեսուն տարուց հետո գալիս է մայրական խոսք բերելու իր տաղանդավոր զավակին: Կցանկանայինք, որ գրական այս տոնին հայտնվեին և՛ ռուսահայը, և՛ տաճկահայը, և՛ պարսկահայը, և՛ Հնդկաստանի, Ամերիկայի ու Բուլղարիայի գաղթական հատվածները, և ոչ միայն այս տոնին, այլև միշտ, նման տոներին, և դա դառնար սովորություն:

Եվ հենց այդպիսով էլ արդարացրած կլինեինք այս տեսակ տոների բարոյական մեծ նշանակությունը: Կցանկանայինք, որ տաժանփլի երեսուն տարիներից հետո տևական հանգրստի հնարավորություն տրվեր նրան, միայն մի պայմանով — վերացած լինեին հարգանքի այն բոլոր միջոցներն ու ձևերը, որ մեր հոբելյարների ստացած պսակների փշերն են կազմում և մարդ չի հասկանում հարգանքի՞ համար են, թե՞ վիրավորանքի: Մանավանդ Շիրվանզադեն, որպես դրամատուրգ, այդ կողմից մեծ հարմարություն է տալիս: Ամեն մի քաղաքում կարելի էր դնել նրա դրամաներից և տալ հոբելյանական ներկայացումներ: Այդ ներկայացումները և նրա երկերի մասին եղած դասախոսությունները շատ բան կապահովեին միանգամայն գեղեցիկ ճանապարհով և կհեշտացնեին հանձնաժողովի գործը — մնացածը հոգալու նույնպես պատվավոր ձևով:

Վերջապես կցանկանայինք, որ մեր ազգն էլ կարողանար տեսնել, տեսնել, գնահատել ու պաշտպանել իր ծնա՝ ուժերը: Եվ երբ որ տեսնի — կհամոզվի, որ նրանց մեջ էլ կան այնպիսիները, որոնք իրենց տաղանդով մրցում են ու հավասար

են եվրոպական ժողովուրդների սիրված, հանրահռչակ հեղինակներին, տարբերությունը միայն սրանց ու նրանց բախտի մեջն է:

1910

ԱՄԵՆՔԸ ՄԻԱՍԻՆ

— Այժմ ի՞նչ պետք է անեք իս. Աբովյանի արձանի համար, երբ միայն 200 ռ. ունեք 18,000-ի փոխարեն, հարցրի Կուլտուրական Միության պ. նախագահին¹:

— Երեկոյթներ պետք է սարքենք, հարուստներին պետք է դիմենք, ուրիշ ի՞նչ անենք, պատասխանեց նա:

Ու սիրտս մի երկյուղ ընկավ: Ուրեմն կարող է պատահել, որ այս ճանապարհով կանգնի իս. Աբովյանի արձանը, երևի վրեն էլ գրած «Հայ ազգը — իր մեծ զավակին»:

Ո՛չ, այդ անկարելի է, այդպես չպետք է լինի: Հայ ժողովուրդը, ինչքան էլ անտարբեր ասենք, ինչքան էլ հոգնած ու աղքատ, թույլ չի տալ և թույլ չպետք է տա, որ այդպես լինի: Դա մի տաղանդավոր գրողի արձան չի, դա մի անհատի արձան չի, դա հայ ժողովրդի վերքոտ սրտի արձանն է, որ կանգնելու է այնտեղ՝ Արարատի սրբազան դաշտում սերունդներին ու դարերին ի տես, որ տեսնեն թե քանի սուր կա ցրցված նրա մեջ, քանի դարդ ու ցավ:

Պետք է կանգնի հավիտյան ու անլուլի պատմի աշխարհքին հայի տանջանքն ու տենչանքը: Սրա նման մի կոթող էլ կա, որ թրևս մի օր հայությունը կբարձրացնի Վանա ծովի ափերին, նարեկա ժայռերի վրա, որ նա էլ Լրկնքին պատմի, «Ի խորոց սրտի» Աստուծո հետ խոսի ու դեպի վեր ուղղի «Ձայն հառաչանաց հեծութեան սրտի ողբոց աղաղակի»...

Եվ կատարյալ կլինի: Թող լսեն և՛ երկիրքը, և՛ երկիրը: Եվ պետք է լսեն, որովհետև այստեղ արդեն հայի լեզուն չի, որ խոսում է, բերանը չի, որ պատմում է, կրակված սիրտն

¹ Կուլտուրական Միությունը հիմնվել է Բաքվում, 1906-ին, Կ. Խատիսյանի ղեկավարությամբ:

է, որ այրվում է երկիրը բռնած, տանջված հոգին է, որ մորնշում է մինչև երկինք:

Սրանց արձանները երեկույթներով ու հարուստների փողով շին կանգնելու, այլ ազգի ընդհանրության: Սա մի պարտականություն է, բայց միաժամանակ և մի իրավունք, որ վերապահված է ամեն մի հայի:

Խ. Աբովյանի արձանն էլ թող ուշանա մինչև հարկավոր գումարի լրանալը, միայն թե հայ ժողովուրդը կանգնի: Նրա արձանը պետք է կանգնի այն տեսակ երեք ուրբիներով, որ այսօր նվիրաբերում է մի դառն աշխատավոր, մի Անուշավան Աբովյան իր սրտի անկեղծ հրճվանքի ու ազգային հպարտության հետ միասին: Բայց այդ երեք ուրբիներ շուրջ է. կոպեկներ լինեն թող, միայն թե ամենքը, ամենքը զան ու մասնակցեն, որովհետև նա ամենքինն է ու ամենքը նրա մեջ են:

ԽՐԻՄՅԱՆ ԵՎ ԻԶՄԻՐԱՅԱՆ

Յրկար տարիներ ունեցել եմ Խրիմյանի մոտեցությունը վաշխելու պատիվը, իսկ Իզմիրյանի հետ, իր կարճ հայրապետության ընթացքում, միայն մի քանի անգամ եմ ունեցել խոսակցություն. բայց, իր բացարտության պատճառով, մի քանի տեսակցությունն էլ բավական էին Իզմիրյանին ճանաչելու: Եվ կարծում եմ հետաքրքրական կլինեն «Նորիզունի» ընթերցողի համար նրանց բնավորության այն գծերը, որոնցով նրանք մոտենում էին իրար, կամ հեռանում էին իրարից: Երկուսն էլ խոշոր հայ դեմքեր էին, գերազանցորեն հայ. երկուսն էլ շատ ապրած իրենց ժողովրդի տառապանքով:

Երկուսն էլ հոգեորակա՞ն էին բառի լավ իմաստով, երկուսն էլ սիրում էին ս. Գիրքը ու նվիրված էին հայրենի եկեղեցուն: Երկուսն էլ ունեին իրենց հավանած մարդիկը հոգևորականների մեջ, բայց առհասարակ չէին սիրում հոգևորականությանը: Իզմիրյանը մինչև անգամ զգուշացնում էր հոգևորականներից, իսկ Խրիմյանը առանձին թշնամություն ուներ աստվածաբանների դեմ: Երկուսի մասին էլ կարծիք էր տարածված թե հեղափոխական մարդիկ էին, բայց երկուսն էլ ուրույն հայացք ունեին հեղափոխության վրա և ասում

էին արյունը: Երկուսն էլ վշտով էին հիշում Գուլիցիյան օրերը և առանձին հաճույքով էին կանգ առնում ներկա փոխարքայի վրա:

Բայց ավելի շատ ևս այն կետերը, որոնցով նրանք պարբերվում էին իրարից:

Իզմիրյանը պատկառում ու ճնշվում էր կաթողիկոսական գահից, իսկ Խրիմյանը թեթև աչքով էր նայում գահի վրա և մինչև անգամ ոտանավոր էր գրում, թե Քրիստոսի հետևողին անվայել է գահը: Իզմիրյանը գահն էր իրենից բարձր նկատում, Խրիմյանը իրեն էր գահից բարձր համարում:

Իզմիրյանը մի տեսակ քաշվում էր, երբ ասում էին՝ Ձեր գլխահարություն, Խրիմյանը նեղանում էր, և սիրում էր, որ իրեն «Հայրիկ» կանչեն, հայոց Հայրիկ:

Իզմիրյանը միշտ և միայն գործից էր խոսում: Խրիմյանը գործից չէր խոսում և ձանձրանում էր գործից խոսելիս:

Իզմիրյանը մարդկանց մոտեցնում էր գործի համար, Խրիմյանը՝ գրույցի:

Իզմիրյանը սիրում էր խորհուրդ հարցնել, Խրիմյանը վերալորում էր, երբ խորհուրդ էին տալիս:

Իզմիրյանը աչք չէր տալիս համբուրելու, Խրիմյանը միշտ մեկնում էր համբուրելու:

Իզմիրյանը ազնիվ մարդ էր ողորնում, Խրիմյանը ջերմ երկրպագուներ:

Իզմիրյանը մարդկանց հարգանքով էր վերաբերվում, Խրիմյանը հեզանքով:

Իզմիրյանը միշտ լուրջ ձևով էր խոսում, Խրիմյանը երբեմն էր լուրջ ձևով խոսում, իսկ միշտ հեզանքով ու կատակով:

Իզմիրյանը պարզ էր ու բաց սիրտ, Խրիմյանը բարդ էր ու խորը:

Իզմիրյանը դյուրազգաց էր ու հուզվող, Խրիմյանը քամահրող ու հանդարտ:

Իզմիրյանը օրենքից էր խոսում, Խրիմյանը Ավետարանից: Իզմիրյանը սրտալի ու շիտակ գործիչ էր, Խրիմյանը խորամիտ փիլիսոփա:

Իզմիրյանը անկասկած մաքուր էր, Խրիմյանը անպայման մեծ:

ՀԱՅ ԳՐՈՂՆԵՐԻՆ

Սիրելի ընկերներ.

Շատ քիչ է պատահում մեզ համար ուրախ բան բերի նոր տարին, որ կարողանանք շնորհավորել սրտալի: Սակայն այսօր, լքումի և ամենքի մենակության օրերին, մի գեղեցիկ երևույթ ծպտում է իմ սրտին այնքան զվարթ, որ ստիպում է շնորհավորել հրապարակավ ի լուր ընդհանուրի: Դա հայ գրողների այն պատկանելի համախմբումն է ու ընկերական այն սրտառու կապը, որով այսօր շողկապված հայտնվում ենք մեր ժողովրդի առաջ: Մի կապ, որ վաղուց պետք է լիներ, քանի որ մենք իրար հարազատ ենք ի ծնե, հոգով, քանի որ մին ենք արդեն սիրով ու ձգտումով դեպի բարին, գեղեցիկն ու ճշմարիտը, քանի որ երազում ենք նույն երազները ու տառապում ենք նույն վշտերով:

Մենք քիչ մխիթարանք ունենք մեր կյանքում, թող դա լինի մեր հաստատուն մխիթարանքը: Եթե շունենք գրականությունը սիրող հասարակություն, թող մենք ինքներս իրար համար փոխարինենք այդ հասարակությունը. եթե պակասում են ոգևորիչ հանգամանքներ, իրար ոգևորենք ու միասին զորացած խմբով գնանք այն բարձր ճանապարհը, որ գծել է մեզ համար նախախնամությունը:

Ազնիվ ընկերներ, մեր ժողովուրդն էլ քիչ մխիթարանք ունի:

Անշուշտ նա էլ է ուրախանալու՝ տեսնելով մեզ միացած և ուժեղ: Երբ ասում են հայոց գրականությունն աղքատ է՝ նա մեր երեսին է նայում ու սպասում: Ու մխիթարվում է մեկիս գրական տոնին գալով իր մայրական նվերներով, մյուսիս թաղմանը իր պսակներով: Մխիթարվում է, որ տաղանդավոր զավակներ ունի և սիրում է ու հարգում: Թող բարձր զորավիզ լինի մեզ համար նրա մայրական սերը և այն գիտակցությունը, որ կարող ենք ուրախացնել մեր հեզ ժողովրդին, և սերն ու հարգանքն էլ դեպի տաղանդավոր մարդը՝ թող մեր մեջը լինի ամենից առաջ:

Գրական կյանքի հիսնամյակը բոլորած մեր ազնիվ նահապետը — Ղ. Աղայանը մեր աշխարհքի խեղդուկ մթնոլոր-

տից նեղվելով եթե աղաղակում է թե՛ քիչ է մնում փախչեմ և՛ գրականությունից և՛ մեր միջավայրից, չի փախչել ու շատ ուրախ օրեր կտեսնի, քանի որ մեզանով կլինի շրջապատված. երեկվա սկսնակն էլ, որ մեզ նայելով գալիս է մեր ետևից, ուժ կառնի ու չի հուսահատվի իր գեղեցիկ ճանապարհին՝ իր առջև տեսնելով մեզ բարձր ու զորեղ միության մեջ:

Եվ, ով գիտի, գուցե մոտիկ է օրը, երբ հայ մարդը, որ երեկ-մյուս օրը եկեղեցու շուրջն էր պատվում, այնուհետև անցավ ուսումնարանին, գալու է հասնի և գրականությանն ու արվեստին:

Թող այդ նշանավոր օրը գա ու գտնի հայ գրական ընտանիքը միասիրտ ու միահամուռ բարու, գեղեցիկի ու ճշմարտության ճանապարհի վրա:

Սրտագին շնորհավորում եմ այս վսեմ կապը, անգին ընկերներ:

1911

ԳԱՎԱՌԱԿԱՆ ԵՐԵԿՈՒՅՑՆԵՐ

Փետրվարի 2-ին Թիֆլիսի ժողովարանում բժ. Ա. Զարգարյանը կազմել էր զոկական երեկույթ, ուր ներկայացնելու էին իր զոկերեն գրած պիեսը — «Աղաթ չի», երգելու էին զոկական երգեր, նազանքներ, արտասանելու էին զոկերեն ժողովրդական ոտանավորներ և պ. Զար. Թումանյանի զոկերեն կուպլետները, պարելու էին զոկական պարեր:

Եվ ահա այդ գիշեր այս փոքրիկ երեկույթի մեջ հանդես եկավ հայ ժողովրդի թերևս ամենակուլտուրական այս հատվածը՝ այնքան ինքնուրույն, այնքան առանձնահատուկ համով ու հոտով և այնքան սրտալի ու շնորհալի, որ հանդիսականների հիշողության մեջ անջինջ կմնա այդ երեկույթի գեղեցիկ տպավորությունը: Եվ ես այդ տպավորության տակ մտածում էի, թե ինչքան լավ կլինեն, եթե մեր զավառները իրար ետևից հանդես դաշին Թիֆլիսում այսպիսի երեկույթներով՝ իրենց առանձին տարազով ու բարբառով, իրենց սարք ու

կարգով, վարք ու բարքով, իրենց ազաթով, լավով-վատով, և ի՞նչ հաճույք կտան այդ երեկույթները, և ի՞նչքան բան կսովորեցնեն:

Մեզանում, Թիֆլիսում, այս կամ այն նպատակով երեկույթներ կազմելու ժամանակ նստում են գլուխ տրաքեցնում, մտածում, որ մի գլուտ անեն, մի նորութուն հնարեն ժողովըդին հրապուրելու: Ահա ձեզ գյուտը: Եվ ասեղ գցելու տեղ չկար փետրվար 2-ի գիշերը Թիֆլիսի ժողովարանում, ոչ վերջ հրճվանքին: Թո՞ղ գան իրար ետևից Արարատը, Շիրակը, Ղարաբաղը, Լոռին, Զավախքը, Զանգեզուրը, Նուխին, Շամախին, նույնիսկ Տաճկաստանի գավառները: Եվ ի՞նչ գեղեցիկ կլինի:

1911

ԶԳՈՒՅՇ ՊԵՏՔ Է ԼԻՆԵԼ

Հերիք չի, որ հայոց գրականությունը ունի իր երդվյալ թշնամիները, որոնք իրենց փեշակ են շինել հայհոյել ու անվանարկել հա՛ գրողներին, կա և մի այլ անախորժ դեպք, երբ վշտացնում ու վիրավորում են նրանց առանց չար դիտավորության, մինչև անգամ բարեկամությունից ու սիրուց, հրապարակական քննության նյութ առնելով նրանց ապրուստն ու նյութական անապահովության խնդիրը: Վիրավորական ու դատապարտելի մի սովորություն կրկին պատճառներով առաջինը՝ որովհետև այդպես չի, երկրորդը՝ որ տգեղ է:

Այդ անապահովության անախորժ ողբերը հաճախանում են մանավանդ հոբելյանների ժամանակ: Ահա նորից հոբելյան, նորից մեզ ծանոթ վիրավորական կարեկցությունները և նորից ստիպված ենք հիշեցնելու, թե՛ զգույշ եղևք: Եթե դուք գալիս եք ողջունելու մի տաղանդավոր գրողի իր երեսուն տարվա գրական հոբելյանի օրը և գալիս եք ձեր գրամական ու այլ ձևի նվերներով, այդ հիրավի նրա համար հո չի, որ նա սոսկ մի անապահով մարդ է: Եթե այդ լինի պատճառը, էլ ինչո՞ւ օտարները գումարներ կնվիրաբերին իրենց ունևոր գրողներին այդպիսի դեպքերում: Բայց թողնենք օտարներին:

Այո՛, շատ ու շատ է ցանկալի, որ այդպիսի օրերը գրամականի խնդիրը չգար մեջտեղ, և ով ավելի շատ կցանկանար որ այդպես լինի — եթե ոչ հենց ինքը գրողը: Ամեն միև, որ կարծում է թե անհարմար մի բան կա, չգիտեմ ինչու՝ արժում է, թե միայն գրողն է, որ չի զգում այդ: Գտեք ձեր գրականությունը պահելու և ձեր հարգանքն արտահայտելու հարմար ու վայելուչ ձևը:

Այդտեղ էլ հո գրողը չի մեղավոր, որ դուք չեք կարողանում գրականություն պահել կամ արժանավայել կերպով ցույց տալ ձեր հարգանքը:

Մտածում եք գրողի մասին, հոբելյան եք տոնում, շուք է մոռանաք, որ նա զգալ գիտի. պետք է միշտ ի նկատի ունենաք նրա ինքնասիրությունը, նրա հոգու հալարությունը, նրա սրտի քնքշությունը. այլապես կարող եք աղավաղել ու աղճատել այն, որ ամենասուրբն ու ամենանուրբն է նրա մեջ և որ ամենաթանկը պիտի լինի ձեզ համար:

Տողերիս գրելու առիթը տվեց «Тиф. листок»-ում տպած մեր սիրելի նկարիչ Գ. Բաշինջաղյանի հողվածը Շիրվանզադեի հոբելյանի առիթով, որի մեջ խոսում է վիպասանի նյութական կացության մասին թեև բարեկամավարի ու սիրով, բայց և այնպես ծանր տպավորություն է անում:

Ցավում ենք մանավանդ, որ Բաշինջաղյանն է այդպես խոսում:

Զգույշ պետք է լինել:

1911

ԱՐՁԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ ԱՐՈՎՅԱՆԻՆ

Խաչ. Արովյանը ծնվել է Երևանի Քանաքեռ գյուղում 1804—5 թվականին: Նա երեխուց աչքը բաց արավ՝ տեսավ՝ թե ինչ անասելի նեղություն էր քաշում մեր ազգը էն ժամանակվա պարսից տիրության ձեռքին ու ազգի էս ծանր վիճակը վերք դառավ՝ կպավ սրտին: Մեծացավ, օտար երկիր գնաց ուսում առավ, իր սրտի վերքն էլ հետը մեծացավ ու խորացավ: Ահա էս խոր վերքը, իր աչքի տեսած տանջանքն ու տա-

ուսպանքը, կոխվն ու քաջությունը հրեղեն լեզվով նա պատմեց մի գրքի մեջ՝ անունը դրեց «Վերք Հայաստանի»։ Մեր ազգի սիրած «Վերք Հայաստանին»։

Բարձրի Հայոց Կուլտուրական Միությունը ձեռնարկել է արձան կանգնելու հաշ. Աբովյանին իր հայրենիքում։

Աշխարհքի ամեն կողմից հայ մարդիկ ուղարկում են իրենց նվերները, ամենքն էլ ուզում են մասն ունենան հաշ. Աբովյանի արձանի մեջ։ Շատն ու քիչը էստեղ նշանակություն չունի. բանը սիրտը, սերը, զգացմունքն է։ Թող հինգ կոպեկ լինի տվածը։ Միայն թե ամենքն էլ լինեն։

Երեխեք ջան, «Հասկերի» ընթերցող երեխեք, դուք էլ՝ ամեն մեկդ ինչքան կարող եք՝ դրկեցեք, որ դուք էլ մասն ունենաք մեր անմահ Աբովյանի արձանի մեջ։ Էն Աբովյանի, որ կանչում է։

«Ձե՛զ եմ ասում՝ ձեզ՝ հայոց նորահաս երիտասարդք՝ ձեր անունին մեռնիմ, ձեր արևին դուրբան. տասը լեզու սովորեցե՛ք, ձեր լեզուն, ձեր հավատը դայիմ բռնեցե՛ք։ Մեկ դարդակ լեզուն ի՞նչ ա, որ մարդ չկարենա սովորիլ։ Բաս չե՞ք ուզիլ, որ դուք էլ գրքեր գրեք, ազգի միջումն անուն թողաք, ձեր գրքերն էլ օտար ազգեր թարգմանեն, ձեր անունը հավիտյանս հավիտենից մնա անմահ»։

«Էրեխեք, ձեր ջանին մեռնիմ, ձե՛զ եմ ասում իմ դարդը. ձեզ համար եմ գրում. ձեր երեսին դուրբան՝ հողումն էլ ըլեմ, եկե՛ք, վրես կանգնեցե՛ք, թե ազգասիրությունն ու հայրենասիրությունը ձեզ վնաս տա, անիծեցե՛ք ինձ, թե օգուտ, օրհնեցե՛ք, ու լսեցե՛ք ձեր ընկերների լացն ու սուրբ. նրանց հորն ու մոր կսկիծն և ձեր հորն ու մոր ծոցումը դինջ հանգրստանալիս՝ ասածներս մտքներդ բերե՛ք»։ (Վերք Հայաստանի)։

Նվերները կարելի է ուղարկել «Հասկերի» խմբագրությանը կամ «Հորիզոն» լրագրին։

1911

Հարգելի պ. Կատոն. «Սուրհանդակ» թերթի № 408-ում տված ձեր պատասխանից երևում է, որ ձեզ իսկի դուր չի եկել իմ տված այն հարցը, թե արդյոք դո՞ւք եք նաև «Կ-ն», «Իրագեկը» և Ս. Չերքեզյանը¹։ Մի հարց, որ ես շատ գեղեցիկ եմ գտնում և շատ է հարկավոր, որ իմ հերթին կարողանամ ձեր հարցի պատասխանը տալ։

Դուք իմ հարցից խուսափելու, այլև ինձ շփոթելու համար պայման եք դնում, որ նախ և առաջ ես հայտնեմ, թե խուզարկու ուստիկանության պաշտոն ունեմ։ Եվ սպասում եք, որ պիտի սարսափեմ։

Ընդհակառակը։ Դուք իսկի չեք սխալվում, պ. Կատոն, որ խուզարկուի պաշտոն ունեմ, բայց ոչ թե գաղտնի ուստիկանության, այլ այն ժողովրդի, որի բանաստեղծներից մինն եմ, և եթե կուզեք, նրանից էլ դուրս, մինչև ուր կկտրեն աչքերս ու կհասնի ձեռքս։ Եվ չեք սխալվում, եթե բացականչում եք՝ չգիտենք որտեղ է վերջանում բանաստեղծությունը և որտեղ է սկսվում գաղտնի խուզարկուի պաշտոնը։

Գրողները, բանաստեղծները միաժամանակ ոչ այլ ինչ են, եթե ոչ գաղտնի խուզարկուներ, որ ոչ միայն ձեր կեղծ անունները հրապարակ կբերեն, այլև ձեր կեղծ հոգին ու կեղծ մտքերը, որ ավելի խորն են ծածկված։

Այդ աստվածային գաղտնի խուզարկությունն է, որ հայտնագործում է մութը արարածների գաղտնի գործերը, ազակում է հրապարակում, և այդպիսով հսկում է բարոյական օրենքներին ու շատ նվիրական բաների՝ գաղտնի սրիկայությունների դեմ։

Գաղտնի խուզարկու...։

Գիտե՞ք, գաղտնի պարոն Կատոն, եվրոպական մեծ բանաստեղծներից մինը, կարծեմ Հեյնեն, իր հայրենիքին դիմելով՝ ասում է. «Ծս բո պահապան շունն եմ»։ Ի՞նչ կա որ, թող ես էլ իմ համեստ ուժերով իմ հայրենիքի պահապան խուզարկուն լինեմ։ Եվ ահա բռնել եմ ձեզ. պատասխան

¹ Բոլոր ծածկանունները պատկանում են հրապարակախոս Ս. Չերքեզյանին։

տվեք իմ հարցին, դուրս եկեք հրապարակ: Ոչ մի բարոյական օրենք չկա, որ մի մարդ խոսի, գործ տեսնի միաժամանակ մի քանի կեղծ անուններով, մի անունը մի բան գրի, մյուսը նրան վկա գա, երրորդն էլ հաստատի, իբրև թե երեք մարդ են մեջտեղը: Մի անունով հայհոյի, զրպարտի, մյուս անունով կանգնի իբրև բանից անտեղյակ ու անմեղ մեկը: Մարդ մի երես պետք է ունենա ու մի անուն, մանավանդ նա, որ առաջ է անցնում խոսելու հասարակական ծանր խընդիրների մասին, անհատների ու հոսանքների դեմ:

Այո՛, հասկանում եմ կեղծ անունը, երբ մարդ մի լավ բան է անում կամ գրում ու ծածկում է իր անունը: Նա փախչում է փառքից ու պատվից: Բայց՝ երբ մեկը հարձակվում է սրա նրա դեմ, զրպարտում, հայհոյում, կասկածների տակ գցում ու թաքնվում կեղծ անունների տակ, նա փախչում է պատասխանից ու պատժից: Երբ բարի գործ անողի, հերոսի անունն են հարցնում, նա իրավունք ունի նեղանալու և խոսելու բարոյական օրենքից, բայց երբ զրպարտչի, հայհոյիչի ու նման մի վատի օձիքը բռնած ժամանակ նա էլ է համարձակվում աղմուկ հանել ու դիմել նույն բարոյական օրենքներին ու էտիկային, և դեռ ուզում է դրանցով վախեցնել իրեն բռնողին, այդ ես շեմ հասկանում, և ոչ ոք էլ չի կարող ինձ հասկացնել, թե հանդուրժելի է:

Դո՛ւրս եկեք արևի տակ: Այսպես է ասում ձեզ խուզարկու Հով. Թումանյանը:

1911

«ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ»

Վաղուց է, որ մեզանում զգացվում է մի կարգին «Հայոց պատմություն» կարիքը: Վաղուց է, որ նշանավոր դեպքերն իրար ետևից գալիս են ու աղաղակում թե՛ հայ ժողովուրդը շունի և չգիտե իր պատմությունը, նույնիսկ երեկ մեկել օրվա պատմությունը, չգիտի թե ո՞վ է ինքը, ո՞րտեղից է գալիս և ո՞ր գնում: Հոգեկան ու մտավոր կուրուսթյան մեջ այս տեսակ ժողովուրդը, անուղեցույց խարխափում է նա ինչպես անգիտակից մի խալիս՝ միշտ ենթակա այս կամ այն պատին ու պատահարին զարկվելու փորձանքին: Եվ փորձանքներն էլ

դաս ու խրատ շնն լինելու նրա համար՝ մինչև որ այդ փորձերի ու փորձանքների պատմությունը շունենա աչքի առաջ ու մտքի մեջ, մինչև որ չհասկանա նրանց իմաստն ու փիլիսոփայությունը: Եվ եթե սխալի ու փորձանքի մեջ ընկնի և պատասխանի կանչվի այս տեսակ ժողովրդի մարդը՝ վերջ ի վերջո նա մի արդարացում կունենա միայն, որ ինքը չի հասկանում իր արածն ու իրեն: Զի հասկանում ինքը, չի հասկանում և նա, ով պետք է պաշտպանի, չի հասկանում և նա, ով պետք է դատի: Մի՞թե սրանից ավելի ողբալի դրուսթյան մեջ կարող է հայտնվել մարդ արարածն աշխարհքում: Եվ զարմանալու ի՞նչ կա, որ նա հաճախ կարող է դատապարտվել ու կորչել և անմեղ:

Այժմ հրապարակի վրա դրված է Հայկական տպագրության շորհարարամյակը տոնելու և այդ տոնը զանազան ձևերով կուրսերով հավերժացնելու խնդիրը: Բավական ժամանակից ի վեր կտրված լինելով արտաքին աշխարհից՝ չգիտեմ դրա համար ինչ առաջարկներ են եղել՝ բայց որոշ տպագրությունների տակ՝ կուղենալի, որ ամենալուրջ առաջարկների հետ դրված լինեի և «Հայոց պատմություն» խընդիրը: Մի «Հայոց պատմություն»: Մի «Հայոց պատմություն» պետք է տալ այս ժողովրդին, որ նրան դատողը դատելիս կարողանա ծանոթանալ ու այնպես դատել, որ նրան պաշտպանողը պաշտպանելիս առաջ քաշի այդ պատմությունը և այնպես պաշտպանի, որ նա ինքը՝ պատասխանի կանչվելիս բաց աճի այդ պատմությունն ու այնտեղից հանի իր պատասխանը, որ ուրիշներն էլ ճանաչեն նրան, ինքն էլ ճանաչի իրեն:

Մի «Հայոց պատմություն»:

1912

ՏԵՈՒՐ ՀԻՇՂՂՈՒԹՅՈՒՆ

(Ղազարի մահվան տարեդարձին)

Ուղիղ մի տարի առաջ՝ մին էլ այսօր էր, որ նա դարձավ հիշողություն: Մենք էլ հիշողություններ կգրենք: Ուրիշ ի՞նչ կարող է անել մեր մարդկային ապիկարությունը ամենազոր մահվան հանդեպ:

Սակայն այսօր, նրա մահվան առաջին տարեդարձին հս
այն շնորհի պատմելու, թե ինչ զգացմունքով էինք կապված մենք
կյանքում ու ինչ օրեր անցկացրինք, ոչ էլ նրանից եմ խո-
սելու, թե ինչ եղավ նրա մահն ինձ համար, այլ հիշատակե-
լու եմ մի երկու տարօրինակ դեպք: Տարօրինակ եմ ասում,
որովհետև սովորաբար տարօրինակ են համարվում, թե չէ
մենք այդ տեսակ դեպքերը ընդունում էինք որպես սովորա-
կան ու բնական երևույթներ:

Մենք հաճախ խոսում էինք բնության ու կյանքի գաղտնի
ուժերից, որ տակավին մարդը չի ճանաչում ու չի գիտակցում
պարզորեն: Խոսում էինք և հոգիների փոխադարձ հաղորդակ-
ցության ընդունակությունից, որ տարածություն չեն ճանա-
չում և ազդում են ամեն տեղ ու ամեն հանգամանքում, բայց
միայն նուրբ բնության տեր մարդիկն են զգում ու հասկա-
նում: Եվ մեր մեջ՝ համարելով մեզ էլ այդ տեսակի մարդիկ՝
շատ դեպքեր էինք բերում մեր կյանքից:

Ահա այդ դեպքերից երկուսը. մինը՝ թե ինչպես նա ինձ
տեսավ վտանգի մեջ, մյուսը՝ թե ինչպես ես տեսա նրա մահը:

Սրանից տասը տարի առաջ, 1902 թվականին, ես Թիֆ-
լիսի Հայոց Ազգագրական Ընկերության խմբագրության մաս-
նաժողովի մեջ եի: Գարնանը, մի գիշեր, երբ հավաքվել էինք
խմբագրական մասնաժողովի նիստին, մի անակնկալից ես
հանկարծ ընկա: Կես գիշերին ինձ բերին մեր տունը: Դրու-
թյունս այդ գիշեր սաստիկ ծանրացավ. բայց, իհարկե, այդ
ժամին ամենքը քնած էին ու ոչ ոք էլ բան չէր կարող իմա-
նալ: Գիշերվա մի ժամին մեր զանգը տվին: Գնացին, եկան,
թե՛

— Աղայանն է կանգնած ներքևը մթնում, քեզ է հարց-
նում:

Դուրս եկա հարցնեմ՝ ինչ կա, ինչ է պատահել:

— Դե լա՛վ, լա՛վ... հետո... Ձայն տվեց ներքևից ու գնաց:
Առավոտը եկավ, դեմս կանգնեց ու զարմանք հայտնեց,
թե ինչպես է, որ ես կենդանի եմ: Պատմեց ու նկարագրեց,
նկարագրեց ամենայն ճշտությամբ, թե ինչ դրություն մեջ էր
տեսել ինձ գիշերը: Նրա համար էր վախեցել ու եկել անժա-
մանակ, համոզված, որ ինձ անպատճառ մի դժբախտություն
է պատահել և զարմանում է, որ ոչինչ չի պատահել:

Ես եղածը ծածկեցի նրանից մինչև մի քանի օր անցավ:
Մի ուրիշ անգամ ես տեսա նրան: Տեսա, թե ինչ պատա-
հեց նրա հետ, ես էլ վախեցած շտապեցի նրա մոտ, բայց
այլևս չէի կարող նրան պատմել...

Այդ անցյալ տարի, ուղիղ մին էլ այսօր, հունիսի 20-ի
առավոտն էր: Մի տոթ առավոտ էր: Ժամը 9-ից նոր էր ան-
ցել:

Նստած էի գրասեղանի առաջ ու միտք էի անում:

Այս խաղաղ մտորման ժամին հանկարծ առաջս փայլա-
տակեց մի պատկեր, մի կենդանի ու զարհուրելի պատկեր...
Ղազարոսն առջև գետին տապալվեց... մեռավ...

Այս պատկերը կայծակի արագությամբ, ավելի վառ, քան
իրականությունը, եկավ ու անցավ մի անսպասելի ծանր հար-
վածի պես և այնպես տակն ու վրա արավ, որ ցավի ու շփո-
թության մեջ սկսեցի մոտիկ բարեկամների անունները որո-
նել, թե ո՞րտեղ են, որ հեռագրենք... Մի կերպ աշխատեցի
ինձ հաղթանակել, հուզմունքս զսպել. վեր կացա, սկսեցի
սենյակումս շրջել, բայց չէի կարողանում ինձ տիրել: Այս
ժամանակ ներս է մտնում կինս ու տեսնելով ինձ այդ դրու-
թյան մեջ, զարմացած հարցնում է՝ թե ի՞նչ է պատահել:
Պատմում եմ, թե այս տեսակ մի հիմար բան է մտել գլուխս
ու չեմ կարողանում ազատվել: Նա ծիծաղում է վրես ու
հանդիմանում: Սկսում է խոսել ուրիշ բանից: Հենց այս խո-
սակցության միջոցին փողոցից ներս է ընկնում գունաթափ
որդիս...

— Պապեն ընկավ...

— Ո՞րտեղ...

— Փողոցում...

— Ի՞նչպես թե ընկավ...

— Ուշաթափվեց... տարան տուն... բժիշկների ետևից են
վազում...

Վազում եմ: Նրա տանից մոտ եմ... Հեռվից մեր բարե-
կամներից մինը ձեռքով դեմս նշան է անում օդի մեջ ու
ձայն է տալի:

— Վերջացա՞վ...

Վազում եմ... Մի երկու բոպեից աչքիս առջևն էր նրա

վիթխարի դիակը, իսկ ականջումս կանչում էր մեր բարեկամի գուժկան ձայնը.

— Վերջացավ... —

Այո՛, վերջացավ: Հավիտյան վերջացավ: Եվ ինչքան բան վերջացավ ինձ համար... որովհետև ինչքան էլ սիրելի լիներ նա որպես գործիչ, հազար անգամ ավելի թանկ էր որպես ընկեր, և ինչքան էլ շնորհալի լիներ որպես ստեղծագործող, անհամեմատ ավելի բարձր էր որպես ստեղծագործություն: Աստուծո հազվադեպ հաջող ու պայծառ ստեղծագործություններից միսն էր նա:

1912

ԵՐԵՎԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՅՍՕՐՎԱՆ ԻՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Նորից ոռնում է հին ծանոթ գույժը — «Տաճկաստանում կոտորում են հայերին»...

Նորից կոտորածի մոռաց մոռացվանքը ծանրանում է մեր հոգնած սրտերին և նորից պմենուրեք դալկանում է Արևելքի հին տառապալը — հայ ժողովուրդը:

Ոմանք ասում են՝ սուտ է, կոտորած չկա: Հայերի դատարկ սարսափն է միայն, որ աղաղակում է այդպես գաբհուրելի: Բայց մեր աշխարհներին ու կիսավայրենի ժողովուրդներին ծանոթ մարդը ամենայն հեշտություններ պետք է հավատա կոտորածին:

Եթե մինչև անգամ միայն սարսափն է գոռում աչսօր, մի՞թե սարսափը դատարկ բան է, էն էլ սարսափելի երկրում ու սարսափելի ժողովուրդների մեջ: էդ էն սարսափն է, որ աղաղակում է ամեն կոտորածից առաջ ի լուր աշխարհի:

Մի՛ ասեք, թե սուտ է և ապարդյուն ու թշվառ քաղաքականության մի՛ դիմեք անհույս ու շատ փորձված կողմերում:

Դիմեցեք հայոց պատմությանը, կովկասի պատմությանը, Արևելքի պատմությանը — նրանք ձեզ կասեն. էդպես է եղել միշտ — սարսափ ու կոտորած, սարսափ ու կոտորած... Իսկ վերջին դարերում սարսափի, կոտորածի հետ միաժամանակ կկարգաք. «ս. պատրիարքը գնաց մեծ եպարքոսի մոտ, նրան

հավաստիացրին, որ արպին կարգադրություն է եղած խաղաղությունը վերականգնելու և շարագործներին պատժելու, կամ թե չէ՝ պատրիարքը հրաժարական տվեց...» և դարձյալ սարսափ ու կոտորած, սարսափ ու կոտորած...

Վերցրեք մեր պատմությունից ժամանակի մի որոշ տարածություն: Ահա ձեզ 1912 տարի:

1912 տարի է մի անհավասար կովի մեջ միսն ատամն առած մտքառում ու տանջվում է էս ժողովուրդը, կոտորվում ու փշանում է էս ժողովուրդը:

1912 տարի է Արևելքի բոլոր հզորներն ու բարբարոսները արյունով ու արտասուքով հեղեղում ու ողողում են էս երկիրը: 1912 տարի է սարսափ ու կոտորած, ջարդ ու գաղթ հետևում են իրար անընդհատ:

էս ամենը դարերով տեսնող ու տանող ժողովուրդը անշուշտ մի իմաստություն պիտի հասներ ու քովորեր էսքան գառը փորձերից ու փորձանքներից, մի քաղաքականություն պիտի ստեղծեր ու մշակեր իր համար էս դժոխք աշխարհքում:

Եվ հայ ժողովուրդը ստեղծեց ու մշակեց իր համար զըխապահություն, ինքնապաշտպանության քաղաքականությունը:

Բայց լավ փորձելով ու տեսնելով, որ անկարող է միայն ինքնապաշտպանությամբ իր զուխը պահել, միշտ աշխատել է միաժամանակ ունենալ մի հզոր դաշնակից կամ ավելի ճշմարիտը — հովանավոր Արևմուտքի քրիստոնյա պետություններից, որովհետև նրան անդադար հոշոտում ու ծվատում էին ոչ թե միայն վաշկատուն ցեղերն ու ժողովուրդները Արևելքի, այլև հենց էն պետությունները՝ զրաղաշտական թե իսլամ, որոնց հավատարիմ հպատակն ու հարկատուն էր նա:

Եվ 1912 տարի շարունակ իր երկրի մերթ էս, մերթ մյուս կողմերում ինքնապաշտպանություն կազմակերպելով ու դիմագրավելով օրհասական տագնապների մեջ, նա՛ հայ ժողովուրդը երկար դարերով անդադար օգնություն ու պաշտպանություն է աղերսել քրիստոնյա Արևմուտքից, և էդքան դարերի ընթացքում միայն երկու անգամ է պատահել, միմիայն

երկու անգամ, որ նա Արևմուտքից գտել է օգնություն և ուժեղ հովանավոր:

Առաջինը եղել է արևելյան հոռովմեակա՛ն կայսրությունից— Քյուզանդիայից, երկրորդը — ռուսական կայսրությունից:

Հայոց պատմությունը հոյակապ է նկարագրում է՛ն տեսարանը, երբ Ձիրավի մեծ դաշտում մի կողմը պարսկական թշնամի զորքն էր ծփում «իբրև ծով իմն ահեղ», իսկ նրա դեմ Հայաստանին օգնության եկած բյուզանդական բանակն էր կանգնած իր խաչանիշ դրոշակով «իբրև լեռն ադամանդեայ»: Եվ մինչդեռ Արևելքի ու Արևմուտքի էս ահագին զորություններն իրար եկած վճռում էին հայ ժողովրդի ճակատագիրը՝ վերև, նպատի նվիրական բարձունքին հայոց մեծ ներսեսը գոչում էր. «Առ Տէր՝ բազկատարած հայցմամբ խընդրելով ի նման է հայի ի խաչակիր դրոշակ իւրոյ ժողովրդեան», որի աշխարհքը դարձել էր «սպանդարան մարտիրոսաց»:

Թերևս ավելի սրտառու է, երբ շատ դարերից հետո էջմիածնին օգնության շտապող ռուսաց բատալիոնները Կրասովսկու առաջնորդությամբ Ապարանի լեռներից Պարսկաստանի գահաժառանգ Աբբաս Միրզայի տասնապատիկ ավելի ուժեղ բանակի կրակի միջով ձգվում էին դեպի հայոց մայր Աթոռը, և մինչդեռ ամբողջ օրը Արարատյան դաշտում, Օշականի ձորում, Մեսրոպ Մաշտոցի գերեզմանի շուրջը ոլլտում էր պատերազմը, մի ուրիշ մեծ ներսես՝ սեղան էր հանել Հայաստանի սրբությունները և լուսավորչի գերեզմանի առջև տարածված ամբողջ միաբանությամբ առ Աստված էր աղաղակում պատերազմի ելքի և պարսկական դժոխքի մեջ այրվող իր ժողովրդի փրկության համար. և աչքերը հանած, լեզուները կամ ոտներն ու ձեռները կտրատած հայ մարդիկ Մայր տաճարի զանգակների տխուր ղողանջյունի վրա սուղում էին էջմիածին կամ դեպի քրիստոնյա բանակը:

Եվ զուր չի էդ հողի վրա հայոց եկեղեցին արձան կանգնեցրել հայ ժողովրդի ապագա սերունդներին ի գիտություն: Այո՛, էդ ամենը պետք է իմանան ապագա սերունդները: Այսօրվա շատ մարդիկ, հայ թե ռուս, չեն էլ կարող երե-

վակայել, թե ինչպես են իրար հանդիպել հայն ու ռուսը: Ականատեսներից մինը, հայտնի դեկաբրիստ Ե. Ե. Լաչինովը, իր «Նոստովանությունների» մեջ սաստիկ սրտաշարժ պատմում ու նկարագրում է անցյալ դարի սկիզբներում էդ հանդիպումները:

Նկարագրում է տաճկական, պարսկական ու քրդական զազանությունները, պատմում է, թե ինչպես էին նրանց առաջ սարսափահար փախչում հայերը գեղահա՛ն ու տեղահա՛ն եղած: Պատմում է, թե ինչպես էին նրանք վազում դեպի ռուսական զորքերը՝ ծեր ու մանուկ, մարդ ու կին, աղաղակելով, русь! русь! здрасти! здрасти!...

Եվ էդ մի բառով էին արտահայտում ամեն բան, և սարսափ, և աղաչանք, և սեր, և խնդիր, որովհետև լեզու չգիտեին: Իսկ մյուս կողմից. «Не бойтесь! не бойтесь!» ձեն էին տալի սարսափահար գյուղացիներին թշնամու դեմ վազող զինվորներն ու արագացնում էին իրենց վազքը:

Ակներև էր, ասում է նա, Լաչինովը, որ գերազանց հանդիսանալու ցանկությունը չէր, այլ յուրաքանչյուրի սրտին հարազատ կարեկցության զգացմունքն էր տանում ամենքին: Մեզանից ամեն մինը մասնակցում էր դժբախտների վիճակին: Նրանք իրենց հանձնել էին մեր պաշտպանությանը, մենք տեսնում էինք նրանց լիովի վստահությունը ռուսական բնավորությանը. նրանց երախտագիտությունը շարժում էր մեզ, հարուցանում էր մեր մեջ աղգային պատվասիրության բարձր ու ազնիվ զգացմունքը: Վերջապես վտանգի միջի կինը, էն թույլ ու անպաշտպան արարածը, որ սակայն ամեն ժամանակ ու ամեն տեղ մեծ ազդեցություն է ունեցել սխրագործությունների վրա, ասպետական ոգու վրա,— ահա թե ինչն էր պատճառը, որ մեզանից ամեն մինը հարձակվողներին նկատում էր որպես անձնական թշնամիների և սլանում էր պաշտպանելու ոչ թե իբրև օտար մարդկանց, այլ իբրև իր արեւակիցների» (Кавказск. сб. т. I. Отрывок из «Исповеди» Лачинова):

Նա, Լաչինովը, պատմում է, թե ինչ սրտառու խանդավառությամբ էր դիմավորում իրենց հայ կեղեքված ու տանջված ժողովուրդն ամեն տեղ, ինչպես էր աղոթում, լալիս ուրախությունից. թե նույնիսկ է՛ն երեխան էլ, որ նոր էր սկը-

1 Կաթողիկոս Ներսես Աշտարակեցի (1770—1857):

սել թոթովել, իրենց տեսնելիս ինչպես էր կանչում «Здравствуй, здравствуй...»:

Իսկ մյուս կողմից ոուս օֆիցերներն են գանգատվում, թե հայերին օգնության գնալիս անկարելի է կարգ պահպանել զորքի մեջ, զինվորական շարքերում. որովհետև ամեն մի զինվոր առաջ է նետվում ավելի շուտ օգնության հասնելու համար և խանգարում են կարգը: Անկարելի է լինում կարգ պահպանել:

Էսպես. էն լացախառն ու աղոթքախառն «Здравствуй»-ն, որով ողջունում էր բազմատանջ հայ ժողովուրդը ոուսական ազտտարար բանակին, հենց էնպես աղոթքով ու արտասուքով էլ արձանագրվեց ու հավերժացավ «Վերք Հայաստանի»-ի մեջ, ինչպես էն ի խորոց սրտի խոսքերից մինը, որ երբևիցե արտասանել է հայ ժողովուրդը աշխարհքի առաջ, և իր մշտական տառապանքի մեջ էլ միայն էն ժամանակ է մի իրական օգնություն տեսել, երբ հնչել է եղբայրական հուժկու «Не бойтесь»-ը հանուն արդարության, հանուն քաղաքակրթության:

Մենք հավատում ենք, որ այժմ էլ, երբ վառվում է Անատոլիայի անմար դժոխքը, չի մարած ոուս մարդու լայն սրտի մեջ էդ ազնիվ ու վեհ զգացմունքը, որով նա պետք է պարծենա աշխարհքի առաջ. մենք հավատում ենք, որ այժմ էլ, երբ միլիոնավոր մարդիկ կոտորածի առաջ սարսափահաշ կարեկցություն ու պաշտպանություն են աղերսում — ոուսական մեծ պետությունը չի հրաժարվիլ Արևելքի մորթվող ժողովուրդներին պաշտպանելու սրբազան ավանդություններից և՛ հիմնվելով միջազգային դաշնագրերով իր ունեցած իրավունքների ու պարտավորությունների վրա՝ կարտասանի իր հսկայական «Не бойтесь»-ը. մենք կյանքի փորձով գիտենք ու հավատում ենք էդ մեծ ուժին ու կենդանի զգացմունքին և հավատում ենք, որ նա վերջ կդնի հայ ժողովրդի էս անվերջ կոտորածին, վայրենի ժողովուրդների անվերջ բարբարոսությանը, քաղաքակիրթ աշխարհքի էս անվերջ խայտառակությանը:

I

«Հորիզոնի» № 196-ում տաճկահայոց նոր սարսափների առիթով ես մի հոդված էի գրել «Մեր երեկվան պատմությունն ու այսօրվան իրականությունը» վերնագրով¹, որի մեջ, շատ թուուցիկ հայացք ձգելով մեր կյանքի ու պատմության վրա, մեր ներկա վիճակը նկատել էի անցյալի շարունակությունը և ասել էի.— եթե մեր բազմադարյան տառապանքի մեջ մի օգուտ ու օգնություն ենք տեսել՝ էդ եղել է Ռուսաստանից վերջին ժամանակներս, և հուսացել էի, թե դարձյալ նա օգնության կգա կոտորածի առաջ կարեկցու, ուն ու պաշտպանություն աղերսող հայ ժողովրդին:

Էսպես գիտեմ ես մեր արյունոտ պատմությունից, էսպես է ասում ինձ Փոքր Ասիայի ու Կովկասի զարհուրելի տարեգրությունը, էսպես է խոսում ինձ հետ հայոց գրականությունն ու իրականությունը, էսպես է թելադրում ինձ իմ հասկացողությունն ու խիղճը:

Արդ, «Հովիտ» շաբաթաթերթի 38 №-ում, պ. Գ. Ենգիբարյանը, ինձ «մեր սիրելի բանաստեղծն» անվանելով հանդերձ՝ էնպես է դուրս բերում, իբրև թե ես տաճկահայերին ապստամբության եմ դրդել իմ հոդվածում, կասկածի է և՛թարկում իմ անկեղծությունը ու շատ է նեղանում, որ ես էս տեսակ մտքեր ու դատողություններ եմ արտահայտում:

Այո՛, սխալ, և շատ սխալ կարող են լինել իմ մտքերը, ինչպես կարող են սխալ լինել և իրեն, պ. Ենգիբարյանի մտքերը, բայց ո՛րտեղ է տաճկահայերի ապստամբության ակնարկն իմ հոդվածում, և կամ ի՞նչն իրավունք տվեց «Հովիտի» աշխատակցին անկեղծության ու սրտի խոսք հարուցանելու:

Մի՞թե էդպես են խոսում «սիրելի բանաստեղծների» հետ...

Հիրավի, էս ի՞նչ այլանդակ սովորություն է մեր աշխարհքում. մարդկանց դեմ խոսելիս՝ պարզ ասածը խեղաթյուրել, ստեր փաթաթել դիմացինի վիզը, ապա մի անգամ փաթա-

¹ Տես նախորդ հոդվածը:

Թած զրպարտութիւնը զարգացնելով հակառակորդին դուրս բերել ոչ թե էնպես, ինչպես որ կա, այլ էնպես, ինչպես որ իրենք են ուզում:

Եվ էս տգեղ սովորութիւնը վերջին տարիներս մեր կյանքում իրեն շատ հարմար մի նյութ է գտել — հեղափոխութիւնն ու ապստամբութիւնը:

Տարիներից ի վեր մենք լսում ենք հայ մարդկանցից, կարդում ենք հայոց մամուլի մեջ, հենց «Հովիտի» վերև հիշած Ռ-ում էլ նույն բանն են գոռում, թե տաճկահայերի կոտորածները հայկական ապստամբության արդյունք են:

Օտարները աղաղակում են, Տաճկաստանում պաշտոնավարող եվրոպացիք ապացուցանում են, որ էդպես բան չի եղել ու չկա, որ հայկական ապստամբութիւնն առասպել է, սուտ է, «...армянское восстание — миф» (Ролен Жекмен, член Института международного права. «Армения, армяне и трактаты», стр. 153), որ էդ մեղադրանքը ոչ մի քննադատության չի դիմանում — Обвинение, будто бы армяне были зачинщиками возбуждения, не выдерживает критики (Мак Коль, «Султан и Державы», стр. 263, телеграмма британского посланника в Константинополе к Лорду Салсбери от 13 дек. 1895 г.): Նրանք ցույց են տալի, որ էդ կոտորածները սարքովի են, եղել են միշտ, և միտք ունին, որ հայ ժողովուրդը ջնջեն, հայկական հարցը ջրնջեն, եթե ջնջել չկարողանան, գոնե թիվը կրճատեն, որ միանգամ ընդմիշտ զրկվի ու ընկնի հարց դառնալու իրավունքից ու կարողութիւնից: Նրանք հրատարակում են, թե կոտորածներից հետո մեծ վեզիրը սովթանին հայտագիր ներկայացրեց Հայաստանի դրութիւն մասին, նրան հավաստիացրեց, որ էլ շանհանգստանա հայկական ռեֆորմների ծրագրի պատճառով, որովհետև այժմյանից արդեն ամեն տեղ մահմեդական տարրը մեծամասնութիւն է կազմում (Там же, стр. 264. Деша итальянского посланника в Константинополе итальянскому министру иностр. дел): Վերջապես, հինգ տերութիւն միասին վեր են կենում, քննութիւն են կատարում ու հայտարարում, թե ամեն մի բողոք անիրավութիւն դեմ, ինչքան էլ նա սուր բնավորութիւն ունենա — ապստամբութիւն չի, թե

հայկական ապստամբութիւն: չի եղել ու չկա... էդ միևնույն է, սրանք իրենցն են շարունակելու:

Եվ ահա ես էլ էսօր ստիպված եմ հերքելու, թե իմ հոգւածում ապստամբութեան շեմ գրգռում թուրքահայերին, այլ ասում եմ կոտորվում են, տանջվում են, և Ռուսաստանը կօգնի էդ կարեկցութիւնն ու պաշտպանութիւնն աղերսող ժողովրդին:

Ես, իմ աշխարհայացքով, հայոց թագավորութեան կարոտով մաշվողը չեմ: Ինձ համար լիուրի հերիք է հայ ժողովրդի կուլտուրական ազատութիւնը կուլտուրական ժողովուրդների եղբայրութեան մեջ:

Սակայն, էսօր իմ առաջուց գրածին ավելացնում եմ հետևյալ խոսքերը: Պ. Ենգիբարյանը պատրաստ պետք է լինի, չպետք է վարմանա ու չպետք է ուշաթափվի, եթե երբեք մի օր էլ էդ տեսակ երկրում լսի ապստամբութեան գոչը: Ամեն մի ժողովուրդ, ինչքան էլ նա ուսյա լինի (որ հոտ կնշանակի), բաղկացած է կենդանի մարդկանցից, հորից, մորից, քրոջից, եղբորից, ամուսնուց, որդուց... Դրանք հավիտյան չեն կարող տանել թե՛ իրենց և թե՛ իրենց հարազատների տանջանքն ու անպատմութիւնը:

Մարդկային կարողութիւնն ու համբերութիւնը, ինչքան էլ մեծ լինի, մի սահման ունի: Իսկ էն հարցին, թե էդ տեսակ դեպքում Ռուսաստանը դուրս կգա կովի դաշտը թե չէ, կօգնի հայերին թե չէ, մի հարց, որի պատասխանը հենց տեղն ու տեղը ինքը պ. Ենգիբարյանն էլ տալիս է բացասաբար, առարկելով, թե Ռուսաստանը պատերազմ չի ուզում, ես դրան էսպես կպատասխանեմ: Ռուսաստանը 1877 թվականին էլ ամեն կերպ աշխատում էր խաղաղ ճանապարհով վերջացնել բոլզարական խնդիրը, էն ժամանակ էլ պատերազմ չէր ուզում, էսպես էլ հայտարարում էր մինչև պատերազմի նախօրյակը և պատրաստ էլ չէր իսկի, բայց ստիպված եղավ պատերազմի դուրս գալու. հետևաբար չի ուզում — ուրիշ բան է, չի գնալ — ուրիշ:

Այնուհետև պ. Ենգիբարյանը իմ դեպի Ռուսաստանը տածած հույսերի վերաբերութեամբ անկեղծութեան ու շիտակութեան հարց է հարուցանում, և ես ինձ զգում եմ ավելի ամուր դիրքի մեջ: Նա հարցնում է, մի՞թե ես հավատում եմ, որ

ուսաները եթե հարյուր տարի առաջ հայերին օգնեցին՝ էսօր էլ կօգնեն:

Ես պատասխանում եմ — այո՛, էսօր էլ մեզ ուսաները կօգնեն, ինչպես օգնեցին 100 տարի առաջ և նրանից հետո էլ շատ անգամ:

1878 թվականին էլ մեզ կօգնեին ուսաները և էսօրվա դրությունը չէր լինի, եթե չլիներ Անգլիան և եվրոպական պետությունների կոնցերտը: Նա դուրս չէր բերում իր զորքերը տաճկական վիլայեթներից, մինչև սուլթանը շիրազործնր հայկական բարենորոգումների ծրագիրը, բայց նրան ստիպեցին, զորքը դուրս բերին, մեջտեղը մնացին դատարկ խոսքերն ու խոստումները, որոնց չկատարելու համար Տաճկաստանը ավելի ևս եռանդով կպավ հայն ու հայկական հարցը մեջտեղից վերացնելու դժոխային գործին: Նրանից հետո էլ, 90-ական թվականների կոտորածներից հետո էլ եվրոպացի դիվանագետները ասում էին. հայկական ռեֆորմների հարցը ձգձգելը կնշանակի էդ հարցը լուծելու գործն ապագայում հանձնել Ռուսաստանին: Նրանցից շատերն էն ժամանակ էլ գտնում էին ու խոստովանում, որ միայն Ռուսաստանն էր լավ վճռում և նրան պետք է թողած լինեին վճռելու հայկական հարցը: Ասացեք խնդրեմ, եթե եվրոպացի քաղաքագետները կարող էն էդքան հույս ունենալ Ռուսաստանի վրա՝ ի՞նչ պարմանալու բան կա կամ ի՞նչ հանցանք, որ մի հայ մարդ ու հայ գրող էլ նույնպես էդ հույսն ունենա ուսաների վրա: Մի հայ գրող, որ գոնե եվրոպացիների շփոթ կարող է գիտենալ իր ժողովրդի պատմությունն ու դրությունը:

Եվ մեզ զբաղեցնող հարցի վերաբերությամբ միշտ ևս ունեցել եմ մի հայացք ու մի համոզմունք, հիմնած մեր պատմության ու իրականության վրա, ու ոչ մի տեղ և ոչ մի ժամանակ էլ չեմ թաքցրել իմ կարծիքն ու իմ զգացմունքը:

Մրանով էլ պետք է բացատրել էն վրդովմունքը, որ ես ունեցա ու հրապարակով հայտնեցի, երբ Պոլսում, Քուրքիայի հողի վրա, էն հողի վրա, ուր երբեք չի ցամաքել մարդկանց արտասուքն ու արյունը և էն օրերն էլ դեռ ծովացած էր 20 հազար աղանաջիների արյունը — միտինգ էին անում ու խոսում Ռուսաստանի դեմ: Մի՞թե ես չգիտեի, թե ուրիշ

նեղացող եթե չլինի, գոնե էն միտինգ անողները կնեղանան ինձանից:

Դրանից մի քանի տարի առաջ էլ, թուրք-հայկական ընդհարումների ժամանակ, երբ հարկադրված, հայի պատմական ինքնապաշտպանությունը դիմելով հանդերձ, աշխատում էի իմ հայրենիքում հաշտություն ու խաղաղություն հաստատել հայ ու թուրքի մեջ, առանց խտրելու, թե որինն է էս սարսափած երեխան կամ էս դաշկացած կինը, էն ժամանակ էլ, թե՛ ինքնապաշտպանության գործում, թե՛ խաղաղության, եղել եմ միշտ ուսաց պետական մարդկանց հետ, հաստատ համոզված լինելով, որ էդ պետությունն է միայն մեր երկրում եղած կարգը հաստատողն ու պահպանողը, որ նրա բացակայությունը Կովկասից կվերադարձնի էն դժոխքը, որի մեջ դարերով էրվել են բոլոր ազգերն ու ցեղերը հավասար, էն դժոխքը, որ տեսել ենք անցյալում և որ տեսանք մեր օրերում, մեր աչքով ուս պետության ժամանակավոր խառնակության ու թուլության օրերում:

Տրամաբանորեն էս հայացքից ու համոզմունքից էլ առաջ գալով, ես «Հորիզոնում» տպած էդ իմ հոդվածը գրել եմ ամենայն հետևողականությամբ ու անկեղծությամբ:

Բայց շարունակեմք:

II

Շատ սառն ու օբյեկտիվ հարցրել եմ կյանքին ու պատմությանը, թե ինչո՞ւ էր տաճկական պետությունը կոտորում հայերին և ինչո՞ւ է կոտորում: Ինչո՞ւ է Ռուսաստանը պաշտպանել հայերին և ինչո՞ւ պետք է պաշտպանի:

Չէ՞ մարդիկ կան, որ կարծում են, թե Աբդուլ Համիդը կոտորում էր հայերին, որովհետև արյունուղուտ մի բռնակալ էր և սիրում էր կոտորել... Տաճկահայերն էլ մի երգ ունեն, ասում է՝ մկները քրդերի արտերը կերան, քրդերը որ տեսան մկներին չեն կարողանում հաղթել՝ ետ դառան հայերին կոտորեցին...

Այո՛, աշխարհքին հայտնի մի պարզ ճշմարտություն է, որ Տաճկաստանում կոտորում են հայերին: Բայց պետք է գտնել

սրա հտերը թաքնված մյուս ճշմարտութիւնը — պատճառը, որը կարող է շատ բարդ լինել:

Ինչո՞ւ է Տաճկաստանը, Համիդյան թե ժյոն թուրքական, բռնապետական թե սահմանադրական, հալածում ու կոտորում հայերին և թույլ տալիս կոտորելու նույնիսկ մկենբի ջգրու, ինչպես ասում է ժողովրդական երգը:

էս մի հարցին մի քանի պատասխան են տալի: Ասում են՝ որովհետև հայերը քրիստոնյա են... որովհետև տնտեսական խնդիր կա... որովհետև հեղափոխականներ կան... որովհետև վրեժ կա... որովհետև անկարգ կառավարութիւն է, խափար է...

էդ ամեն որովհետևներն էլ կարող են լինել և կան. սակայն մի որովհետև կա, որ ինձ թվում է, թե ամենալուրջ պատճառն է հայկական կոտորածները:

Վերցրե՛ք Թուրքիայի քարտեզն ու մտիկ արե՛ք: Դա մի նոր պետութիւն է, որ դրսից եկել է ու կոպիտ ուժով նստել հին կուլտուրական ազգերի ու նրանց հայրենիքների վրա: Եվ էդ երկիրներից մինը թե կա, որ նա համարում է ու դարձրել է իր հայրենիքը, ոչ Բալկանյան թերակղզին է, ոչ Աֆրիկայի հյուսիսը, այլ Անատոլիան, Փոքր Ասիան, էն երկիրը, ուր հայ ժողովուրդն էլ հնագույն ժամանակներից նստած պաշտում է իր Մեծ Հայաստանը, իր ազգային նվիրական վայրերն ու սրբութիւնները ու էն հողի վրա էլ հարուցանում ու զարգացնում է հայկական հարցը: Էս տեսակետից էլ հայկական հարցը Տաճկաստանը հուզող ամենածանր ցավերից մինն է, և հետզհետե թերևս դառնա ավելի ու ավելի ծանր, քանի թուրքն ստիպված լինի սեղմվել դեպի էս կողմերը: Եվ ահա էս հարցից ազատվելու հնարը էսպես է վճռել թուրքի պետական հանճարը — հայերին կոտորել կամ հալածել, քշել, գաղթեցնել: Այո՛, վայրագ ու անօրեն է էս ճանապարհը, այլև խելագար, սակայն հաստատ: Եվ էս ճանապարհով էլ նա արդեն հասել է մեծ հետևանքի: Թե՛ եվրոպական մեծ պետութիւնների հյուպատոսների ու դեսպանների, թե՛ գիտնական ճանապարհորդների, թե՛ հայոց պատրիարքարանի տված ստատիստիկական տեղեկութիւններով Տաճկաստանի ինը հայաքնակ վիլայեթներում հայ ժողովրդի պրոցենտը տատանվում է 14—24-ի մեջ, իսկ ոչ մի վիլայեթում հայը չի

կազմում ազգաբնակչւթյան 50 տոկոսը: Էս դեռ 80-ական թվականների ստատիստիկան. իսկ նրանից հետո ի՛նչքան ժողովուրդ կոտորվեց, ի՛նչքան ժողովուրդ գլուխն առավ փախավ, գաղթեց, ի՛նչքան ժողովուրդ պակասեց...

Վանի ուսաց հյուպատոս Մայիվսկին իր «Ванский вилает» ուսումնասիրութիւն մեջ ասում է՝ Վանի վիլայեթից 15—20 տոկոս պակասեց հայ ժողովուրդը միայն 1895 թվի կոտորածով: Ասում է գյուղեր ու տեղեր կան, ուր ժողովրդի կիսից ավելին ջարդվեց ու գաղթեց:

Եվ էս ջարդին ու գաղթին վերջ չկա:

էսպեսով էլ ստեղծվել է մի դրութիւն, որ նշանավոր գիտնական էլիզե Ռեկլյուին տրամադրում է լուրջ կերպով կարծիք հայտնելու, թե հայ ժողովուրդը ոչնչանալու ճանապարհի վրա է, և շատ չի քաշիլ որ, Արևելքի մի քանի անհետացած կուլտուրական ազգերի նման, նա էլ կիջնի պատմութիւն ասպարեզից:

Մի դրութիւն, որ մանավանդ երբ տեսնում եք չի փոխվում, և որի վրա ձեր հիշողութիւն մեջ երբ գալիս ավելանում են հենց միայն վերջին դարիս նախճիւրները — 1822 թվի հուլիների կոտորածը, 1850 թվի նեստորականների կոտորածը, 1860 թվի մարոնիտների ու սիրիացիների կոտորածը, 1876 թվի բուլղարների կոտորածը, 1892 թվի եզիդների կոտորածը, — կարծեք արդարանում է Գլադստոնի՛ կարծիքը, թե էն սն օրվանից ինչ հայտնվեց էդ ժողովուրդը, հայտնվեց ինչպես մարդկութիւն թշնամի: Որ կողմը հայտնվեց՝ իր ետևից թողեց արյան լայն հետք, և ուր մտավ նրա իշխանութիւնը, ամեն տեղից չբացավ քաղաքակրթութիւնը, անհետացավ միանգամայն: Ամեն տեղ մտցրեց կոպիտ ուժի իշխանութիւնը և երբեք չհասկացավ ու չունեցավ օրենքի վրա հիմնած կառավարութիւն...

• Էս պատճառով էլ Ֆր. Գրինն ասում է. «Երբ Տաճկաստանից Կովկաս ես անցկենում, էդ միևնույն է, թե անապատից պարտեզ ես մտնում, անապահովութիւնից կատարյալ ապահովութիւն ես անցնում, կարիքից ու ցավից լիութիւն ու բարեկեցութիւն մեջ ես ընկնում («Положение армян в Тур-

1 Ոփյամ Գլադստոն (1809—1898)—անգլիական պետական գործիչ:

ԱՈՒՅՆ», 268): Այժմ, միանգամայն ուրիշ պատկեր է Ռուսաստանում: Գրա համար էլ բոլորովին ուրիշ հարաբերություններ են եղել էստեղ և ուրիշ հարաբերություններ էլ պետք է լինեն: էդ պատճառով էլ մենք Ռուսաստանի համար ոչ այլ ինչ ենք, եթե ոչ ավանդադր, ինչպես ասում են ասվորաբար: Եվ հավատարիմ ավանդադր, որովհետև էստեղ կոտորածներից ազատվել ենք, թիֆով բազմապատկվել ենք, տնտեսականապես հարստացել ենք, կուլտուրապես առաջ ենք գնացել, և դեռ սպասում ենք ավելի լավ օրերի: Ռուսաստանն էլ մեզանից ոչ մի վատություն չի տեսել անցյալում, ապագայում էլ ոչ մի հրկյուղ չունի: Էս 25—30 տարվա աստուծությունն էր, որ սկսվում է հայոց Գեորգ IV ֆուրքասեր կաթողիկոսի ու Թովմազ-Վարսակով հայաստաց կառավարչապետի օրերից, Վերջ կարող է վերջանալ Գեորգ V-ի կաթողիկոսության ու Կոնստանդուպոլիսի փոխարքայության օրով: Ռուսաստանն սահմանադրությունն էլ, որ ծանր երկտեղում հաստատարած կլանքն է ծնել, ինչ ուզում է չինի, ինչքան էլ տատանվի — դեպի առաջ է գնալու, դեպի ավելի լայն հորիզոններ ու արագ ծառ տղեր, թուրքական սահմանադրությունը չի որ, անակնկալ ու օտարոտի, Պորթին տիրող բարձունքներից ընկել է թուրքներին ումբի հետ, հար և նման 76 թվաթվանի Համբուրգյան սահմանադրության և հիշտ նույն հանգամանքներում ու միևնույն նպատակով — մինը Տաճկաստանն ազատելու բողոքարկան փորձանքից, մյուսը՝ մակեդոնական, ուրիշ ուղիով: Մին մի ժամանակ մարդիկ կային, որ չէին հավատում, այժմ էդ տեսակ մարդիկ էլ չպետք է լինեն:

Ռուսաստանում մենք ունեցել ենք և կարող ենք ունենալ կուլտուրական մաքսառում: Եվ ևս համաձայն չեմ էս ողբերի ու ողբաացնների հետ, թե մենք կորչում ենք էդ մաքսառման մեջ. էդ տրտունջները պետք է բացատրել գլխավորապես ավելի առաջ գնալու տենչանքով. ընդհակառակը, մի հետամդարձ հայացք կհամոզեր, որ հենց ազգային տեսակետից երբեք էնքան ուժեղ չենք եղել — ինչպես էսօր:

Խոսքս եզրափակելով ասում եմ, մենք Ռուսաստանում գտնվում ենք աշխարհիս լավ ժողովուրդներից մեկի և լավ գրականություններից մեկի ազդեցության տակ, Տաճկահայաստանն էլ կազմում է Ռուսաստանի արևելյան ազդեցու-

թյան մերձավոր շրջաններից մինը, և գրեթե միմիայն Ռուսաստանի էնտեղ էլ անցյալում նա է կամեցել և այժմ էլ նա կկամենա ու կկարողանա վերջ դնել էս ծանր դրությանը:

Հարկավ, մարդիկ կլինեն, որ կառարկեն, թե էր ամենը Ռուսաստանը արել է, կանի, որովհետև էդպես են պահանջում իր շահերը: Ես դրան կպատասխանեմ...— Այլի՞ն լավ, որ հզոր Ռուսաստանի ու հայ ժողովրդի շահերը բռնում են իրար: Հենց դրա մեջն է կայանում հայ ժողովրդի օգնությունը, և դրանով է նա հաստատ:

Ահա թե ինչու և ինչպես իմ հույսերն ու համակրանքը կապվում են Ռուսաստանի հետ:

1912

ՍՍՅԱԹ-ՆՈՎԱՅԻ ԾԻՐԻՄԸ

«Ամեն մար շի՛ կանա կարթս
Իմ գիրն՝ որի՞զ գրեմ է:
Թունիքքս ավագ շրեմեան»
Քարափ է. Բաբուրբեմ է...»

Ս ա յ ա ր - ն ո վ ա

Մեր սիրելի նկարիչ Գ. Բաշինջաղյանը անցյալները «Մշակում» մի նամակ էր տպել ու հիշեցրել էր մեր անմահ երգիչ Սայաթ-Նովայի շիրմի խնդիրը:

Եթե չեմ սխալվում՝ մի անգամ էլ, մի քանի տարի առաջ, մեր ազգայիններից մինը հրապարակ հանեց դարձյալ Սայաթ-Նովայի շիրմի խնդիրը, բայց էնպես անպատասխան էլ անցավ ու մոռացվեց թե հարուցած խնդիրը, թե ինքը՝ հողվածագիրը:

Հիրավի, ծանր է, երբ միտք ես անում, էսքան հոյակապ մի տաղանդ, էսքան խորունկ մի հոգի, էսքան ազնիվ ու կենդանի մի սիրտ ու էսքան մոռացված մի գերեզման...

Այժմ, էս ազգը դառը ժամանակների ու վայրենի հարվածների տակ ջախջախված, խանգարված ու խառնված մի խալիս է դարձել ու դեռ ուշքի չի եկել նորից, մի ամբողջություն չի դարձել ու չի ապրում իր կյանքով. թե չէ ինչպես կարող էր

պատահել, որ Սայաթ-Նովայի երգերն ու գերեզմանը մնա-
լին մոռացված:

Հայոց նորարաց Գրական Ընկերությունը որոշել է մոտիկ
առաջիկայում կազմակերպել հատուկ Սայաթ-Նովային նվիր-
ված մի գրական-երաժշտական երեկո և շիրմի խնդիրն էլ
էս անգամ կարգի կդրվի:

Եվ արժե, որ հայ ժողովուրդը երբեմն-երբեմն էս հարա-
զատ, գեղեցիկ ու մեծ անունները հանդես բերի ու ջերմանա
նրանց մշտավառ հոգիների անշեջ կրակով:

1912

ՄԻՔԵՆ ԴԺՎԱՐ Է

Հայոց Գրական Ընկերության առաջին երեկույթի բացմա-
նը մեր գրեթե ամեն մի ուղղության ու ամեն հոսանքի մար-
դիկ միասին հավաքվեցին, միևնույն ղգացմունքով, միևնույն
անկեղծությամբ խոսեցին միևնույն առարկայի վրա հաշտ
ու համերաշխ: Էս երևույթը էնքան լավ էր ազդել մերոնցից
շատերի վրա, որ չէին իմանում ինչպես արտահայտեն իրենց
ուրախությունը: Իսկ նրանց ուրախությունը էնքան ծանր է
ազդել ինձ վրա, որ չեմ իմանում ինչպես հայտնեմ իմ վիշտը:

Մի՞թե հիրավի, միտք եմ անում ես, մենք էնքան ենք
զուրկ առաքինություններից, որ մի լավ գործի մեջ էլ իրար
կողքի կանգնեն ու միասին ուրախանալը պետք է էսքան մեզ
զարմացնի ու էսքան ուրախացնի:

Եվ հեռու է տանում ինձ էս մտածմունքն ու ավելի մեծ
է վիշտը:

Կյանքն՝ իր ամբողջության մեջ՝ մեծ է, շատ է մեծ: Կյան-
քը — տիեզերական կյանքն է, և մարդու կյանքի ամբողջ վե-
հությունն ու քաղցրությունն էլ հենց էն է, որ իր շրջապատի
միջոցով ապրի էն մեծ կյանքով: Բայց մարդը սովորաբար չի
կարողանում ապրել էն մեծ կյանքով, ապրում է միայն նրա
մի մասով — մարդկության կյանքով: Սակայն նույնիսկ դրա-
նով — մարդկության կյանքով ապրելու էլ քչերն են ընդու-
նակ: Չէ՞ որ կյանքն ինչպես անսահման մեծ է, էնպես էլ
փոքր է անսահման: Եվ ահա ընդհանրապես ապրում են ավե-

լի նեղ ու փոքրիկ կյանքերով: Կա ազգային կյանք, պետական
կյանք, դասակարգային կյանք, կուսակցական կյանք, ավե-
լի — նեղ թայֆայական կյանք — թշնամու բանակների պես
կանգնած իրար դեմ մինչև էն պատիկ ես-ը... էսպես էլ գնա-
լով, գնալով էնքան է նեղանում ու նեղսրտանում, մինչև
կտրում է մարդ արարածի ազատ շունչը ու բանն էնտեղ է
հասնում, որ նույնիսկ իրար հարազատ մարդիկ զարմանում
են, որ կարող են իրար կողքի կանգնել ու միասին ուրախա-
նալ:

Ո՞վ ողորմելի ուրախություն, ի՞նչքան ցավալի բաներ ես
ասում դու...

Բայց մի՞թե ճշմարիտ է, էդքանն էլ չկա մեր մեջը: Մի՞թե
անկարելի է լինել առանձին կարծիքի ու համոզմունքի և հար-
գել իրար ու նույնիսկ միասին ուրախանալ: Մի՞թե դեռ ժա-
մանակը չի հասել, որ կարողանանք լինել ավելի լայն սիրտ,
ավելի համբերատար, ավելի ներող ու սիրող, քան թե ենք:
Մենք շատ ենք քարացել շկամության ու շարակամության
մեջ, շատ ենք ընտելացել ատելության մաղձի դառնությանը
ու դարձել ենք ատելի. մի՞թե խորթ ու անմատչելի պիտի մնա
մեզ սիրո պայծառ ղգացմունքը, մի՞թե չենք կարող իրար
մոտենալ, բարության աչքերով նայել իրար ու տեսնել իրար
մեջ մեր լավ կողմերը, քանզի մարդ չկա, որ լավ կողմեր
չունենա, ու էսպեսով էլ կյանքը դարձնել քաղցր ու սիրելի:

Մի՞թե դժվար է:

1913

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑՆ ՈՒ ԻՐ ԼՈՒՇՈՒՄԸ

Երևակայեցեք թե քսան տարի է, ինչ որ դուք ծանոթ եք
մի նշանավոր մարդու, դրա համար էլ ձեզ համարում են
քսան տարեկան, մինչդեռ 50 կամ 60 տարեկան եք դուք:

Սրա նման մի բան է, որ սովորաբար ասում են 35 տարի
է, ինչ գոյություն ունի հայկական հարցը, որովհետև 35 տա-
րի է, որ դրված է եվրոպական դիվանագիտության առջև և
էդ էլ հաշվում են Բեռլինի դաշնադրության օրից¹:

¹ Բեռլինի կոնգրեսի աշխատանքները սկսվել են 1878-ի հունիսի 13-ին
և ավարտվել հուլիսի 13-ին:

Մի հիմնական սխալ, որ մարդկանց մտածողությունը սահմանափակելով էս 35 տարվա ժամանակի ու դեպքերի շրջանակում, պատճառ է դառնում շատ սխալներին:

Մահայն էթե աղատվենք էդ մեծ սխալից, հարցին նայենք ավելի մեծ տարածության վրա, հեշտ էլ կճանաչենք նրա բնավորությունը, ավելի հաջող էլ կմոտենանք նրա բանական ու բնական լուծման հնարավորությանը:

Եվրոպական դիվանագիտության համար, այո՛, 35 տարի է, ինչ որ գոյություն ունի հայկական հարցը, բայց մեզ համար էլ հո էդպես չի, 35 տարի չի, ինչ որ գոյություն ունի նա:

Երկրորդն էլ մեր հարցը Բեռլինից չի սկսվում և եվրոպական պետությունները չեն դրել, այլ Սան-Ստեֆանոյից է սկսվում, և ուսներն են առաջին անգամ հայկական հարցը մտցրել միջազգային խնդիրների շարքը:

էս երկու ճշմարտության մշտապես հիշելը շատ է կարևոր և շատ բան են ասում սրանք:

Հայկական հարցը շատ է հին: Իր ամբողջությամբ նրան մեղանում քչերն են ժանոթ ու տեղյակ: Նա իր սկզբնական շրջանում զուտ քաղաքական խնդիր էր և հետամուտ էր ձեռք բերելու հայի կորցրած քաղաքական անկախությունը: Բայց ժամանակի ընթացքում ջախջախվեց ինքը — հայ ժողովուրդը, ջախջախվեցին նրա ուժերն ու հույսերը ու իջնելով, իջնելով պարսկական ու տաճկական բռնակալության տակ՝ պահանջը հասավ մինիմումի: Եվ էսօր նա հանդես է գալիս արդեն լոկ որպես քաղաքացիական ազատության խնդիր, որ իր պահանջը, վերջ ի վերջո ձևակերպում է էսպես. կյանքի, գույքի, պատվի և կուլտուրական զարգացման ապահովություն:

Թե հայոց հարցը քաղաքացիական խնդիր է, ոչ թե քաղաքական, էդ լավ գիտեն թե եվրոպայում, թե Տաճկաստանը և թե Ռուսաստանը, և հայոց սեպարատիզմի առասպելին լուրջ մարդիկ չեն հավատում: Ռուս հայտնի գեներալ Ֆադեևը իր «Армянская народность» աշխատության մեջ հերքելով հայկական սեպարատիզմը, որպես քաղաքական ուղղություն, ասում է՝ եթե մինչև անգամ դրսից էլ օգնություն ստանա, դարձյալ անիրագործելի բան է դա:

Եվ էսպես ամենքի համար նա է և մնում է կյանքի, գույ-

քի, պատվի և կուլտուրական զարգացման ապահովության պահանջ:

Արդ, ո՞րտեղ և ո՞ր օրից գոյություն ունի հայկական հարցը իր ներկա բնավորությամբ:

— Էն օրից, ինչ որ վտանգվել է հայ ժողովրդի կյանքը, գույքը, պատիվն ու կուլտուրական զարգացումը: Եվ գոյություն է ունեցել Պարսկաստանում, գոյություն է ունեցել և ունի Տաճկաստանում: Գոյություն չունի և չի ունեցել Ռուսաստանում, թեև ուզ իշխան Գալիցիինի օրերում: Ընդհակառակը, հայ ժողովուրդը միշտ նայել է Ռուսաստանի վրա որպես իր խնդրի ավանդական պաշտպանի վրա:

Գեո 18 դ. սկզբում Օրին, հայոց բարձր հոգևորականությունն ու մեկիքները բանակցության մեջ էին Պֆալցի գերմանական կուրֆյուրստ Հովհան Վիլհելմի հետ և, առաջարկելով Հայաստանի իշխանությունը, խնդրում էին նրան ազատել իրենց երկիրը պարսկական բռնակալությունից, գերեվարություններից, կոտորածներից, կեղեքումներից ու առեվանգումներից:

Ուրեմն էն ժամանակ գոյություն ուներ հայկական հարցը Հայաստանի պարսկական մասում և կոչվում էր պարսկահայկական հարց: Եվ դեռ էն ժամանակ էր, որ գերմանական կուրֆյուրստը, թեև ցանկանում էր օգնել հայերին, հայտնեց, թե եվրոպական պետությունները հակամարտ շահեր ունեն Արևելքում — Պարսկաստանում ու Տաճկաստանում, չեն միաբանել հայկական հարցի վրա, վերջը՝ թե հայ ժողովրդի փրկությունը չի կարող գլուխ գալ առանց Ռուսաստանի: Խորհուրդ տվեց դիմել Ռուսաստան Պետրոս Մեծին: Շատ շուտով փորձն ու գործն էլ ցույց տվին, որ միայն Ռուսաստանը կարող էր վճռել խնդիրը: Եվ թե Օրին ու հայ հոգևորականությունն ու մեկիքները, թե հայ ժողովուրդը էն օրվանից երեսներն արին դեպի Ռուսաստան: Եվ ընդմիշտ դեպի Ռուսաստան: Մինչև էսօրվան օրը:

Ռուսաստանը էն միակ մեծ պետությունն էր, որ, անվերադառնալի վճռած, իր պատմական հարվածներն ուղղել էր Պարսկաստանի, բայց մանավանդ Տաճկաստանի վրա, և ուզում էր մի կողմից Ցարգրադի դարպասի ճակատին կախել իր վահանը, մյուս կողմից իջնել դուրս գալ Պարսից ծոցը:

էսպես. ճանապարհն ուղիղ Կովկասի վրով, այլ քրիստոնյա ու անհամեմատ ավելի բարձր իր քաղաքակրթութեամբ: Եվ հայ ժողովուրդը բազմատանջ Վրաստանի հետ միասին ապավինեց նրան: Իսկ Կովկասը իր բարեկամ քրիստոնյա ժողովուրդներով Ռուսաստանի համար թե՛ ռազմական, թե՛ տընտեսական տեսակետից հանդիսանում էր միակ ու հաստատուն կովանը Արևելքում: Էսպեսով էլ երկուստեք դաշն ու հավատարմությունը ապահովված էին վերին աստիճանի կենսական ու հաստատուն երաշխիքներով:

Եվ ահա

От Урала до Дуная,
До большой реки
Колыхаясь и сверкая
Двигутся полки...

Идут все полки, могучи,
Шумны, как поток,
Страшно — медленны, как тучи,
Прямо на восток!

(Лермонтов)

Եվ մի շարք ռուս-պարսկական պատերազմներից հետո վերջնականապես 1828 թվին Ռուսաստանը տիրեց Հին Սյուսիքը, Գուգարքն ու Արարատյան երկիրը և միանգամ ընդմիջտ վերջ տվեց կոտորածներով, գաղթականություններով ու առեւժանգումներով հայտնի հայկական հարցին հայոց աշխարհքի էս մասում, կամ ուրիշ խոսքով՝ պարսկահայկական հարցին: Մնաց տաճկահայկական հարցը:

1829, 55 և 78 թվականների պատերազմներով էլ իր ձեռքի տակը բերելով Ալեքսանդրապոլն ու Ղարսը և այլ շրջաններ— էդ մասերում էլ լուծեց հայ ժողովրդի կյանքի, գույքի և պատվի հարցը: Սակայն սրանով լուծվեց տաճկահայկական հարցի մի մասը, իսկ մնացած մասում, ինչ որ մնաց թուրքի ձեռքի տակ— էրզերում, Վան, Մուշ և այլ տեղեր, մնացին ու շարունակվեցին նույն կոտորածները, նույն գաղթականությունները, նույն բռնաբարությունները ու առևանգումները — մի խոսքով նույն հին հայկական հարցը:

¹ Մեջբերումն արված է Լերմոնտովի «Спор» բանաստեղծությունից:

Եվ պարբերաբար եվրոպական պետությունների շահերի դիմաց, լուսավոր մարդկության խղճմտանքի դիմաց, ամբողջ հայության մորմոքվող սրտի դիմաց ծառանում է էդ արյունոտ ու արցունքոտ հարցը: Այժմ էլ ահա նորից բարձրացել է նա սրբազան ահավորությունը: Ի՞նչպես պետք է վճովի նա և էդ մնացած մասում:

Առաջին պատասխանը, որ բխում է գործի հիմնավոր ծանոթությունից, ասում է.

— Էս օրվան մնացածն էլ պետք է վճովի էնպես, ինչպես որ վճովել է մինչև այժմ:

Բայց էստեղ մի մեծ հարց:

— Ո՞վ կուզի դրա առաջն առնի և ո՞վ է կարող:

Եվ ահա, հարցի պատմությանն ու ընթացքին հետևելով, եկանք կանգնեցինք էնտեղ, որ հայկական հարցի մնացորդն էլ պետք է լուծի Ռուսաստանն էնպես, ինչպես լուծել է մինչև այժմ. կամ ուրիշ խոսքով, եկանք կանգնեցինք խոյ ու Մակու: Եվ ահա սահմանի մյուս կողմը թյուրք կառավարությունը, որ միշտ խաղացրել է եվրոպական պետություններին, լավ գիտենալով, որ նրանք էլ են խաղ անում, աճապարանքով հրամանագրում է իր պաշտոնյաներին — խաղաղություն պահպանել հայկական նահանգներում, թե չէ ռուսը անց կկենա:

Էսպեսով ամբողջ աշխարհքը գիտի, որ թե... ռուսն անց կկենա:

Թուրքը երբեք չի կարողացել և այժմ էլ չի կարող առնել ռուսի առաջը: Հապա ո՞վ կուզենա առնել ռուսի առաջը:

Եվրոպական մեծ պետությունները կուզենան:

Նրանք են միշտ պաշտպանել թուրքին ռուսի դեմ և կարող է պատահել, որ նորից նրանք պաշտպանեն:

— Արդյոք թուրքի սիրո՞ւց:

— Ո՛չ:

— Գուցե հայերին մարդավայել օր ու կյանք տալու համար:

— Երբե՞ք:

Իրենց շահերի և հատկապես Ռուսաստանի հզորացման առաջն առնելու համար:

Ռուսաստանը հյուսիսից դեպի հարավ իջնելով, Անգլիան Հնդկաստանից դեպի հյուսիս բարձրանալով, աշխարհքի էս

երկու հզորների շահերն ու ազդեցությունները վաղուց են իբար դեմուդեմ եկել Միջին ու Փոքր Ասիայում: Եվ Անզլիան ամեն կերպ աշխատել է միշտ Ռուսաստանի դեմ ստեղծել մի պատվար, պաշտպանել է մերթ Պարսկաստանին, մերթ Տաճկաստանին և առհասարակ Ռուսաստանին թշնամի ամեն մի ուժ, սրա ծավալման ու հզորացման առաջն առնելու համար:

Մյուս կողմից՝ գերման ու սլավոն ցեղերի հին ներհակությունը հաստատվել է նոր իրավուն հանգամանքներով: Գերմանիան է ազդեցություններ ու իրավունքներ ձեռք բերել Տաճկաստանում և հայտնվել ռուսի ճանապարհին: Ավստրիան է տեսնում օրը ցերեկով, որ Ռուսաստանը իր ամեն մի զարկով ոչ թե շարունակ մեծանում է Տաճկաստանի հաշվին, այլև իբար ետեից ազատագրում բոլոր սլավոն ցեղերին, իսկ ինքը Ավստրիան ունի 25 միլիոն սլավոն հպատակ: Սրանց հետ միասին եթե առնենք և այլ ուրիշ հանգամանքներ, քաղաքական թե տնտեսական, պարզ կլինի մեզ համար թե ինչու Ավստրիան ու Գերմանիան էլ հաճախ պաշտպանել են Տաճկաստանին ռուսի դեմ, որ հունա-սլավոնականության մեծ ներթափանցիչն ու վերածնունդն է հանդիսանում:

Պետ 16 դեմից, Ղրիմի թաթար խաների դեմ մղած կռիվների օրից, իր հետ ունենալով սլավոն ցեղերը, վեր է կացել Ռուսաստանը Տաճկաստանի դեմ: Եվ քանի-քանի անգամ մահացու հարվածներ է տվել նրան: Բայց կանոնավոր կերպով ամեն մի հաղթանակից հետո նրա դեմ են դուրս եկել եվրոպական մեծ պետությունները ու կանգնեցրել են պատերազմի դաշտում:— Ո՛չ, Տաճկաստանը պետք է ապրի և դու շպետք է զորանաս նրա հաշվին: Թեև իրենք էս միջոտությունների համար միշտ զորացել են Տաճկաստանի հաշվին. և ռուսին տարել են մի որևէ կոնգրես կամ կոնֆերանս:— Անատոլիա կամ ասիական թաթար, — պահանջ է դրել Ռուսաստանը վեհաժողովներում:

— Ո՛չ, Տաճկաստանի ամբողջությունը պիտի մնա անձեռնմխելի, և ամեն մի բարենորոգում իր երկրի մեջ նորին մեծություն սուլթանի փաղիշահության ներքին գործն է, և նա արդեն ազնիվ արքայական խոսք է տալիս, և ահա հրատարակում է էս ինչ կամ էն ինչ թուղթը. վճռել են ամեն անգամ

եվրոպական մեծ պետություններն ու փակել իրենց վեհաժողովները:

Ահա թե որտեղ է, ինչպես Տաճկաստանի հետ կապված ուրիշ հարցերի, էնպես էլ հայկական հարցի դժբախտության պատճառը, և ահա թե ինչու և ինչպես է ապրել Քյուրթիան:

Հայկական հարցը վայրենի կոտորածների և կեղեքումների հարց է, հալածանքների ու գաղթականությունների հարց է. նա գերազանցորեն ֆիզիկական գոյության խնդիր է: Եվ նրա հաջողությունը միշտ կապված է եղել Ռուսաստանի հաջողության հետ: Ով վեր է կացել Ռուսաստանի հաջողության դեմ, վեր է կացել հայկական հարցի հաջողության դեմ, և ով Ռուսաստանի դեմ պաշտպանել է Տաճկաստանին, նա մեղսակից է տաճկական գաղանություններին ու հայկական սարսափներին:

Նա պատասխանատու է հայ ժողովրդի ծով արյան ու մարդկության պատմության առաջ:

Եվ տեղ չկա խուսափելու:

«Չորիզոնի» նախանցյալ №9-ում մեր խոսքը նրանով վերջացավ, թե Եվրոպական պետություններից որը եղել է Ռուսաստանի ծավալման դեմ—նա դեմ է եղել և հայկական հարցին, էսպես է հայկական հարցը իր ներկա բնավորությամբ, որպես գերազանցորեն ֆիզիկական գոյության խնդիր, կապված Ռուսաստանի առաջնադասության հետ:

Հաստատ կարելի է ասել — բոլոր հայերը գիտեն ու համոզված են, որ Գերմանիան ու Ավստրիան ավելի քան անտարբեր են եղած դեպի հայկական հարցը:

Բայց մեր մեջ հավատ կա արմատացած, թե Անզլիան ու Ֆրանսիան եղել են հայկական հարցի բարեկամները:

Ինձ թվում է մեզ էս քաղցր մոլորության մեջ գցել են Գլադստոնի, Դիլլոնի, Բերարի, Պրեսանսի նման լավ մարդկանց ճառերը ի պաշտպանություն հայ ժողովրդի, ընդգեմ թուրքիայի վատթար կառավարության: Իսկ իրենց պետությունները, որ միշտ եղել են Ռուսաստանի զորացման դեմ Արևելքում, զրա հետ միասին միշտ էլ դեմ են եղել հայկական հարցին:

Անցյալ դարու սկզբից Ռուսաստանը մտավ Կովկասի սահմաններն ու սկսեց իր պարսկական պատերազմները: էդ պա-

սերազմները թե Գուգարք ու Սյունիք, թե Շիրակ ու Արարատ-յան երկրում՝ ազգային սրբազան պատերազմի նշանակու-թյուն ունեին հայերի համար: Վճռվում է պարսկահայկական հարցը:

Հայ ժողովուրդն ազատվում է պարսկական դժոխքից: Հա-յոց հոգևորականությունը խաչը ձեռքին գնում էր ուսաց զորքի առաջին: Հայոց ինքնապաշտպանության խմբերը, որ կամավորներ էին կոչվում, կոչվում էին ուսաց զորքի շարքե-րում կամ ապահովում էին նրա ճանապարհը թշնամու հար-ձակումներից: Հայ ժողովուրդը իր ամբողջությունը ոտի էր կանգնել:

Եվ էդ բոլոր պատերազմներում Անգլիան օգնում էր Պարս-կաստանին: Իհարկե, նա չէր էլ մտածում հայ ժողովրդի մա-սին, և միայն մի ցալ ունեւր — կտրել ուսսի առաջխաղացու-թյան ճանապարհը դնպի հարավ, դնպի Հնդկաստանի իր կալ-վածքները: Եվ էդպեսով գործում էր պարսկահայկական հար-ցի դեմ: Թե 1804—1807, թե 1810—13, թե 1826—28 թվա-կաններին պարսից սարվազների գլուխն անցած՝ ուսաց զոր-քի դեմ, նրանց հետ և հայ կամավորականների ու հայ ժո-ղովրդի դեմ՝ կոչվում էին Անգլիայի օֆիցերներն ու ինժեներ-ները, պայթում էին անգլիական հրացանները, որ 20 հա-զարով ու 40 հազարով իրենց ամեն ուզմամթերքով տալիս էր Պարսկաստանին Հնդկաստանի Անգլիական կոմպանիան: Ղարաբաղի ամրությունների ու էջմիածնի պարիսպների դեմ որոտում էին և անգլիական թնդանոթները, որոնց վրա մա-կազրված էր. «Թագավորների թագավորից — Շահերի Շահին պարգև»:

Սակայն վերջ ի վերջո հաղթվեց Պարսկաստանը ու վճռու-վեց պարսկահայկական հարցը. այսինքն, պարսկահայկական նահանգներն անցան Ռուսաստանին և ապահովվեց հայ ժո-ղովրդի գոյության խնդիրը:

Հերթն եկավ տաճկահայկական հարցին:

Տեսնում ենք դարձյալ Անգլիան Տաճկաստանի հետ Ռու-սաստանի դեմ, և միաժամանակ դեմ հայկական հարցին:

Թե 1829 թվականի, թե 1855 թվականի, թե 1878 թվա-կանի ուսու-տաճկական պատերազմներին հայտնի է, թե ինչ պաշտպանություն ցույց տվեց Անգլիան Տաճկաստանին: Մի

բանի անգամ ուսաց բանակը մտել է էրզերում և մի քանի անգամ հայկական նահանգները Անգլիայի ջանքերով ուսսից խլվել ու հետ են տրվել սուլթանին: Եվ մի քանի անգամ հայ ժողովուրդը, որ էդ պատերազմներում իր համակրանքն ու սերը բաց ցույց էր տվել ուսսներին — Անգլիայի ձեռքով մատնվել է տաճիկ կառավարության ու ժողովրդի վրեժխնդ-րության կատաղությանը:

1855 թվին, երբ Ռուսաստանը հասել էր Պոլիս, երևաց դարձյալ Անգլիան, միաբանության բերեց մեզ անմիաբանու-թյամբ հայտնի եվրոպական կոնցերտը, և ոչ միայն Տաճկաս-տանն ազատեցին ուսսի ձեռքից, այլև ուսսին ջարդեցին ու թուլացրին միացյալ ուժերով, իսկ սուլթանին ուժեղացրին, ստեղծեցին նրա համար մի անձեռնմխելի արտոնյալ դիրք և նրա արյունոտ ձեռքն ավելի ծանր հաստատեցին Տաճկաս-տանի քրիստոնյա ժողովուրդների, նրանց թվում և հայերի վրա, որոնք արնաքամ եղան մինչև 1878 թվականը:

1878 թվականին էլ, երբ կրկին <սկսեց> ուսու-տաճկա-կան պատերազմը, և երբ դարձյալ ուսսական բանակը հա-սավ Պոլսի շեմքը, դարձյալ երևաց Անգլիան, դուրս հանեց իր նավատորմիլը և ուսսին կանգնեցրեց Սան-Ստեֆանոյում: Ապա Գերմանիայի հետ հաղթողին տարավ Բեռլին, դիպլո-մատիկական ջարդ տվեց նրան և միաժամանակ ջարդեց հայ-կական հարցը, կամ ավելի ճիշտը թարսեց, 16-ը շինեց 61, ուսսաց զորքի փոխարեն հողվածի մեջ մտցրեց սուլթանի անունը և նրա բարեհայեցողությանը հանձնեց հայ ժողովուր-դը, էս բոլորի համար ստանալով Կիպրոսն ու հայկական հար-ցի մոնոպոլիան:

Մենք զարմացանք Բեռլինում կատարված էս ֆոկլուսի վրա, թե ինչպես 16-ը դարձավ 61, ուրախացանք, որ դար-ձանք 6 մեծ պետության հոգածության առարկա ու Բեռլինից գնացինք Լոնդոն, էնտեղ էլ տեսանք ինչ գեղեցիկ ճառեր են ասում...

Մինչդեռ մեր աշխարհքում հետզհետե մեծանում էր մեզ ու ուսսին իրարից բաժանող տարածությունը, պաղում էին հին լավ հարաբերությունները, ստեղծվում էին նոր հարաբե-րություններ անպայման վնասաբեր երկու կողմի համար էլ, թե մեծի թե փոքրի, թե ուսսի թե հայի:

Եվ ահա վրա հասան 1894—96 թթ. կոտորածները, երբ Փովհասում հայ-ուսական հարաբերությունների պաղուծյունը հասել էին գալիցիւնյան ռեժիմին և Վերլիկոյի հրապարակախոսութեանը, իսկ Անգլիայում մեր բարեկամութեանն և հոգատարութեանը հասել էր իր գագաթնակետին Գլազգոսոնի ճառերում...

Եվ ի՞նչ...

Վերջ ի վերջո դուրս եկավ, որ Գալիցիւնը գոն՞ տաճկական սրից ազատված 40 հազար հայ գաղթական ընդունեց Կովկաս, իսկ հայկական հարցի ու հույսերի տեղը — Անգլիան հայ ժողովրդի սարսափին ու աղերսախառն դիմումին տվեց հայտնի պատասխանը — «Մեր նավերը չեն կարող լողալ հայոց լեռների գագաթներին»¹:

Մինչդեռ աշխարհքին հայտնի է, որ սուլթան Աբդուլ Համիդը նստում էր ոչ թե հայոց լեռների գագաթներին, այլ Բոսֆորի ջրերի ափերին, ուր միշտ կանգնում են անգլիական նավերը:

Էսպես է եղել Անգլիան մինչև վերջին տարիներս:

Իսկ Ֆրանսիան:

Տասնվեցերորդ դարից սկսած սուլթանի հետ կապած պայմանագրերով ձեռք բերելով թյուրքիայում բացառիկ դեր ու դիրք, Ֆրանսիան դարձավ Արևելքում պաշտպանը եվրոպական քրիստոնյաների, որոնք նույնիսկ Ֆրանկ կոչվեցան անյխտիր, եղան թյուրքիայում արտոնյալ ու ազատ բնակիչներ, լցվեցին ծովեզրյա քաղաքները և միշտ, մինչև Պուսի վերջին շարժը, իրենց լուսամուտներից տեսան հայերի կոտորածը: Եվ հայերը երբեք չնկատվեցին քրիստոնյա ու շտեսան Արևելքում քրիստոնեության մեծ հովանավորի հովանին, որովհետև տաճկահայատակ էին ու ույա:

Եվ հենց Փարիզումն էր (1856 թվին), Ֆրանսիայի արտաքին գործերի նախարարի նախագահությանը եղած վեհաժողովում, որ առաջին անգամ Տաճկաստանն ընդունվեց եվրոպական քաղաքակիրթ մեծ պետությունների շարքը, միջազգային երաշխավորությամբ ապահովեց նրա հողային անձեռնմխելիությունը, սուլթանի անկախության սկզբունքը, նրա՝

իր հպատակ քրիստոնյա ազգերին հոշոտելու խնդիրն անվանվեց Տաճկաստանի ներքին գործ և նրանց բարօրության համար միանգամայն բավարար նկատվեց սուլթանի Հատարչումայունը:

Էստեղ, Փարիզում ստեղծվեց էն ամենը, ընչով որ սուլթանն իրեն զգում էր ուժեղ ու ապրում էր նրա բարբարոսական կառավարությունը, իսկ նրա հպատակ քրիստոնյա ժողովուրդները — դժբախտ ու տառապում էին՝ օրհաստեղան մաքառումներով, ցույց տալով իրենց վեհապետությունն ու վերածնվելու ձգտումը:

Եվ ահա Փարիզյան կոնգրեսի ու դաշնադրութեան վրա խոսելուց հետո էսպես է եզրափակում իր խոսքը մարդկության պատմությունը:

«Եվ էսպես, — ասում է, — քրիստոնյա պետությունների և ժողովուրդների մեջ եղած հակամարտության պատճառով, նրանց <հան> դեպ իրար թունեցած նախանձի պատճառով, էն մշտական անվստահության պատճառով, որով նրանք հսկում էին իրար, և վերջապես, էն երկյուղի պատճառով, որով նրանցից ամեն միքը վերաբերվում էր մյուսի ազգացության շրջանի միակողմանի ծավալումին ու զորացումին — եվրոպական պետությունները իրանց հովանու տակ տեսն տաճկական գիշառիչ պետությունը և երկարացրին նրա գոյությունը, մտիկ շտալով, որ նա խորտակում է իր ազգաբնակչության կուլտուրան և ինչպես իր մուսուլման, էնպես էլ քրիստոնյա հպատակների վերաբերությամբ անընդունակ է կատարելու իր պետական պաշտոնը: Էդ ժամանակից տաճկական պետության գոյությունը միայն մի նպատակ է ունեցել. — արգելել իր սահմաններում ապրող ժողովուրդների պատմական զարգացումը ու ձգձգել Բալկանյան թերակղզու նահանգների վիճակի որոշումը» («История человечества», т. VIII, под ред. Гельмольдта):

Եվ ահա տաճկահայ ժողովուրդն իր հարցով նույնպես եղել է եվրոպական պետությունների հակամարտության զրժբախտ զոհերից միքը, և անպայման ամենադժբախտը:

Ամենադժբախտը, որովհետև գտնվում էր թյուրքիայի զբրտում, ամենադժվար ու ամենաժտանգամվոր տեղում, և թյուրքիան նրան բաց պիտի թողներ միայն իր վերջին շնչի հետ:

¹ Այս պատասխանը 1878-ին Լոնդոն մեկնած հայոց պատվիրակությանը տվել է Անգլիայի արտաքին գործոց մինիստր Սուլբերին:

Եվ նա՝ Թյուրքիան, դիմել է, դիմում է ու կղիմի ամենահրեշավոր միջոցները՝ վերջ դնելու էդ ժողովրդին իր հարցի հետ միասին, հայի հայրենիքի ու ազգային իրավունքների խնդիրը միանգամ ընդմիջտ փակելու համար:

Իր հերթին Ռուսաստանը զարկել է, զարկում է և կզարկի Թյուրքիային, մինչև ուժասպառ շանի նրան՝ հասնելով իր նախորդած նպատակին ու կատարելով մի մեծ պատմական միսիա թե Բալկաններում և թե Արևելքում: Իսկ եվրոպական մեծ պետությունները աշխատել են ամեն կերպ առնել Ռուսաստանի ծավալման ու զորացման առաջը: Իրերի պատմական էս դասավորությունից ափաշկարա պարզ է, որ հայ ժողովուրդը պետք է լիներ ռուսի հետ և իր կյանքի, գույքի ու պատվի ապահովության հույսը պետք է կապեր Ռուսաստանի հաջողության հետ:

Պարզ է նույնպես, որ եվրոպական մեծ պետությունները, որոնք դեմ են եղել Ռուսաստանի զորացմանն Արևելքում — պետք է պաշտպանեին Տաճկաստանին և դեմ լինեին հայկական հարցին:

Եվ էսօր, եթե հայկական հարցը, ինչ ձևով ուզում է լինի — մի լուծում է առնելու, դա լինելու է Ռուսաստանի հաղթանակը կամ, նրան փոխադարձաբար արած մի զիջում: Եվ հավանորեն փոխադարձ զիջում է լինելու, քանի որ Անգլիան ու Ֆրանսիան էսօր հաշտ ու համերաշխ են Ռուսաստանի հետ: Եվ էդ հաշտությունը, եթե կա, զարհուրելի է Տաճկաստանի համար, որ ապրել է նրանց անհաշտության պատճառով, հետևաբար կլուծվի և հայկական խնդիրը, և կլուծվի Ռուսաստանի նախաձեռնությամբ:

էսպեսով 35 տարվան շեղումից հետո՝ մեզ պատմության ընթացքը բերում է դարձյալ նույն տեղը:

Դարձյալ հայկական հարցը Ռուսաստանի պաշտպանությանն ապավինած և Ռուսաստանի հետ:

Դարձյալ ռուսական մամուլն է արծարծում հայկական հարցը, և դարձյալ ռուսական զորքն է կանգնած էն դժոխք երկրի սահմանի վրա, ուր դարձյալ կոտորածի սարսափի տակ արևկոծվում է հայ ժողովուրդը:

էս 35 տարվա ընթացքում ծանր տպավորությունների տակ ծնվել ու մեծացել է մի սերունդ, որ շատ հասկանալի հոգե-

բանական ու իրական պատճառներով թերահավատ է տակավին. բայց էն մարդիկ, որոնք լավ գիտեն, թե կարճատև ու անցողական են ամեն վատ մարդիկ ու վատություններ, էն մարդիկ, որ անսասան հավատում են լավ գաղափարների աստիճանական, բայց հաստատուն զարգացումին ու հաղթանակներին, ինչպես անհատների մարդասիրությանը, էնպես էլ ազգերի առաջադիմությանն ու ազնվացումին, էն մարդիկ, որ պարզ աչքով տեսնում են պատմական ու իրական էն հիմունքները, որ ապահովում են ազգերի լավ հարաբերությունները, — պետք է հավատան լավ օրերին ու լավ հարաբերություններին և պետք է ակնկալեն հայի համար մի մարդավայել ազգային վիճակ ու մի ցանկալի ապագա, որի մեջ Ռուսաստանն ունեցել է ու կունենա վճռական ազդեցություն:

1913

ԵՐԿՈՒ ՄԵՄ ԹԻՖԼԻՍԵՑԻՆԵՐ

Թիֆլիսը: Բայց հին Թիֆլիսը:

էն մի առանձին, յուրատեսակ աշխարհք էր, որի մեջ եկել միացել էին կովկասյան ժողովուրդներն ամենքն իրենց առանձնահատուկ կյանքով ու երանգով և հորինել էին ազգերի մի վերին աստիճանի գրավիչ ու հետաքրքրական խառնուրդ ու կյանք: Եվ որովհետև էդ կյանքին տոն տվող վրացական անհոգ ու զվարթ ոգին էր, էդ պատճառով էլ հին Թիֆլիսը իրարու խորթ տարրերի էտնոգրաֆիական մի ժողովածու չէր հանդիսանում, այլ մի ուրախ հարսանքատուն, ուր հրավիրված էին կովկասի բոլոր ազգերն ու ցեղերը — քեֆ քաշելու:

Եվ հիրավի, 1883 թվին, երբ ես առաջին անգամ Թիֆլիս եկա ուսումնարան մտնելու, ինձ թվաց, թե ընկա մի հսկայական հարսանքատուն: Զուռնա, դհուլ, դայիրա, նաղարա, ծափ-ծիծաղ, պար, երգ... էն էլ ոչ թե տեսնում, այլ դուրսը, դռներին, կտուրներին: Մանավանդ իրիկնապահերին: Կիրակի ու տոն օրերը հո — գլուխ բեր, որ դիմանա: Զուգված, զարդարված շրջակում ու զրբնգում էր ամբողջ քաղաքը:

Տեսնողը զարմանում էր, թե՛ էս մարդիկը ե՞րբ են աշխատում, որ էսպես շարունակ ուրախանում են ու պար գալի: Էսպես էր ապրում հին թիֆլիսը — գծի նման: Եվ դեռ ես հին թիֆլիսի վերջին օրերին վրա հասա: Ասում են՝ ութսունական թվականներից սկսած թիֆլիսն սկսեց փոխվել — փշանալ, ուրիշ խոսքով ասում էին՝ վելիկի կնյազից (մեծ իշխան Միխայիլ Նիկոլաևիչից) ետը մեր քաղաքը խարաք էլավ:

Մեր Բաֆֆին մի բանաստեղծության մեջ շատ հազոտ տատահայտել է թիֆլիսեցու էս վիշտը.

«Կատ աղաթներ ներս բերավ
Մեր քաղաքումը եվրոպեն,
Քեֆն ու սափեն գիփ կորավ,
Փըլացավ էսդանց օրեն...»:

Եվ ճիշտ որ փշացավ: Մի կյանքից եթե զվարթությունը — քեփն ու սափեն հանես, էլ տեղն ի՞նչ մնաց: Մնաց հոգսն ու ջափեն: Եվ գնա տարին տասներկու ամիս հոգս ու ջափի տակին տնքա — թե ապրում եմ: Եվ ամեն օր հաշիվ արա, թե սա իրեն ջուրը պոց, նա կախվեց, մյուսը կարբոլիա խմեց, շորորողը, ինչպես մեր լրագիրներն են ասում, առաջնակից իրեն զարկեց, և... ետևից էլ զանազան դատողություններ, որոնք սակայն ինչքան էլ խելոք լինեն, կյանքին ոչ մի ծպիտ չեն տալիս:

Դրա հետ միասին նկատեցեք, որ կորչում է ժողովուրդների անհատականությունը, առանձին ոգին, սեփական գույնն ու երանդը, էն ամենը, որ էնքան բնակած են, ինչքան նրանց երկրի կլիման ու բնությունը և ինչով որ նրանք կենդանի են, գեղեցիկ են, մեծ են:

Զէ՛ որ ամեն ուժ սնունդ է առնում, զարգանում ու ձեռնունում իր հարազատ կլիմայի մեջ, ու ինչքան էլ մեծանա, թեկուզ գլուխն էլ երկինք հասնի ու աշխարհքն առնի իր հովանու տակ — միշտ ոտը դրած է մի հողի վրա, ու էդ հողը իր հարազատ հողն է, իր հարազատ աշխարհքն է:

Յսինք հին թիֆլիսը, որ մի առանձին ինքնուրույն աշխարհք ու զվարթ կյանք էր ներկայացնում իր համով ու հոտով, լեզվով ու աղաթով, աղ ու հացով, նիստ ու կացով — անցել է արդեն: Անցել է, և անդառնալի: Ինչ որ տվել է, էլ չի

կրկնելու: Բայց ի՞նչ է տվել, ի՞նչ ժառանգություն է թողել գալիք սերունդներին, աշխարհքին, պատմությանը:

Էս հաշիվը կտեսնվի անշուշտ, և կասվի թե՛ հին թիֆլիսը հայոց գրականությանն էլ երկու մեծ անուն է թողել — Սայաթ-Նովա և Գաբրիել Սունդուկյան: Հարազատ — թիֆլիսի լեզվով, թիֆլիսի շնչով, թիֆլիսի հոգով:

Եվ մեծ:

Ո՞ւ անվերջ մեծ Պեպոն կյանքի բեմի վրա մաքար, հաղթական՝ Զիմզիմովի դեմը կանգնած իր հալալ աշխատողի կոշտ ձեռքը կզարկի մուրհակին ու թիֆլիսի բարբառով կորտա.— քու սրտումն ի՞նչ է գրած... ու կվարի իր ազնիվ կոխիլը, ոչ թե մուրհակի համար — այլ ճշմարտության համար, արդարության համար:

Ու անվերջ կհնչի թիֆլիսի բարբառով դժբախտ սիրո մեծ երգչի՝ Սայաթ-Նովայի ձեռք իր «զալում» յարին, որ ինքն էլ է կրակ, հագածն էլ:

«Կըրակե ծովմենն՝ դուրս էկած՝ ուշ, ջեյիրան իս ինձ ամա...»

էն բանաստեղծական խոստումը.

«Թեգուզ անմահութին ուզիս՝ սիրով կու ճարիմ քիզ ամա...»

Նրա փիլիսոփայական, խորիմաստ հորդորը.

«Անգաճ արա՛, մատաղ իմ քիզ, մէ քիչ կամաց գընա՛, գողալ, Աշխարհըս ո՛ւմն է մընացի՛ վուր ինձ ու քիզ մընա, գողալ...»

Նրա առողջ հոյակապ տխրությունը.

«Սիրտըս փուրումըս սըբվուր է,
Ալ աչկիրըս լաց է անում.
Մովըն նընգած ամբի նըման
Դոշս ու եախես թաց է անում»:

Վերջապես.

«Գո՛ւզիմ թուի բըլբուլի պես,—
Բաղերումէն բեզարի իմ...»

Եվ ահա էսօր էս երկու մեծ թիֆլիսցիների անունները գալիս են հրապարակ:

Գ. Սունդուկյանի մահվան տարելիցն է, ու Հայոց Գրական Ընկերությունը հարգանքի գրական երեկույթ է կազմակեր-

պում Արտիստիկական թատրոնում. իսկ Սայաթ-Նովայի մահ-արձանի խնդիրն է մեջտեղը, և նույն Հնկերութունը պատ-րաստել է տալի նրա մահարձանը ու գրական-երաժշտական երեկույթներ է նվիրում աննման երգչի ու նրա երգերը ամե-նակուլ ժամանակի բերանից խլողի՝ Գ<եորգ> Ախվերդյանի հիշատակին: Հայ ժողովուրդը և հատկապես Թիֆլիսի ժողո-վուրդը էս անունները տալիս պետք է թնդա ու միշտ հարա-զատի սիրով հավաքվի ամեն տեղ, ուր խոսում են նրանց մասին, ու ամեն միևնույն անկեղծ ուղեհա մասն ունենալ նրանց տված հարգանքի ու նրանց վրա դրած արձանի մեջ:

Նրանք կան և մնալու են Թիֆլիսի, և հին Թիֆլիսի մեծ ու հարազատ զավակները:

1913

ԳՊՐՈՑ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Հայկական տպագրության 400-ամյակը և տառերի գյու-տի 1500-ամյակը՝ հայ ժողովրդի համար հանդիսանում էին և տակավին հանդիսանում են մի հազվագեղ ատիթ ամեն տեղ թնդալու մի ազնիվ զգացմունքով, վեր կենալու մի լայնա-ծավալ համազգային բարձր ոգևորությանը և կատարելու էր տեսակ պատմական հոյակապ վայրկյաններին վայել մեծ գործեր: Մինչև էսօր թե ինչ եղավ ու ինչպես եղավ — էլ շխո-սենք դրա մասին, ամենը մոռացանք ու քանի ժամանակը չի անցել և մեր ձեռքին է՝ մեծ տոնի օրը, ամենքս միանանք լավ զգացմունքներով ազնիվ գործերի համար: Եվ թե մեզա-յ նում դա հնարավոր է — ապացույցը տվեց ամսի 22-ին Թիֆ-լիզի առաջնորդարանում գումարված ժողովը: Սրբազան առաջ-նորդի կոչին եկած էր ժողովը, որ բաղկացած էր զանազան հոսանքների և մեր գրեթե բոլոր կուլտուրական հաստատու-թյունների ներկայացուցիչներից — մինչդեռ ոմանք հակառակն էին սպասում — ցույց տվեց համերաշխության մեծ պատ-

1 Հայոց գրերի գյուտի 1500-ամյակը և տպագրության 400-ամյակը տոնվել է 1912-ի հոկտեմբերի 13-ից մինչև 1913-ի հոկտեմբերի 13-ը:

րաստականություն և շատ հեշտ համաձայնության եկավ թե արդեն եղած ծրագրի և թե նոր հայտնված ցանկությունները հանդեպ: Թե՛ ծրագրով և թե՛ ցանկություններով նա ընդ-գրկեց հայոց դպրոցական ու գրական ֆոնդերը միասին, ուրիշ խոսքով՝ հայոց դպրոցն ու գրականությունը: Եվ, հիրավի, ինչպե՛ս կարելի էր դպրոցական-գրական մեծ տոնին վար-վել ուրիշ կերպ:

Այժմ մնում է Թիֆլիզի օրինակին հետևեն ամեն տեղ, որ մեր համազգային մեծ տոնը և թե՛ բարոյականի, թե՛ նյութականի կրկին տեսակետներից դարձնենք ճշմարիտ որ մեծ տոն:

Դաժան վիճակն ու երկարատև խավարը դարերի ընթաց-քում շատ ախտ ու կեղտ էր կուտակել մեր կյանքի ու հոգու վրա, բայց մենք կուլտուրաներ ունեցած ու ապրած ժողո-վուրդ ենք, հեշտ կարող ենք թոթափել մեզնից էդ ամենը և նորից կանգնել մաքուր, առողջ ու բարձր: էդ հրաշքը կարող ենք կատարել միայն դպրոցի ու գրականության միջոցով, իսկ դպրոցն ու գրականությունը անբաժանելի հասկացողու-թյուններ են:

Դպրոցը գրականության հիմքն է, գրականությունը դըպ-րոցի բովանդակությունը, երկուսը միացած են պայծառ ու լուսավոր ուժով, որով հզոր ու անխորտակելի են դառնում ժողովուրդները ու մտնում են կուլտուրական ազգերի եղբայ-րության մեջ:

Հոգեկան առանձին բավականությանը ենք արձանագրում ապրիլի 22-ի փաստը: Ամեն հոսանքից հարազատի բազուկ-ներ երկարացան գրկելու հայոց դպրոցն ու հայոց գրականու-թյունը, ամենքը միահամուռ ցանկություն հայտնեցին տեսնե-լու նրանց ապահով ու հաստատուն իրենց արժանի բարձր վիճակի մեջ:

Ճշմարիտ որ սկսվում է մեծ տոնը, և սրտագին ողջունում ենք մեր ազգային ոգու և մեր կուլտուրականության մեծ տո-նը, ողջունում ենք նրա մեջ ապրող ու տոնվող մեծ գաղափա-րը, ողջունում ենք ամենքիս միացնող մեծ ու ազնիվ զգաց-մունքը:

Հարգելի տիկիներն և պարոններ.

Մեր սկսնակ գրողների ավագներից մինը, մեր տաղանդավոր սկսնակ պ. Սեյրին, բաց անելով էսօրվան իրենց գրական-երաժշտական երեկույթը, ջերմ հարգանքով և անկեղծ սիրով խոսեց Հայոց Գրական Ընկերության և հայ գրողների մասին ու նրանց հետ կապեց իրենց ջահել հույսերը:

էս գալար բազմությունը ու սրանց թրթռուն զգացմունքը, սրանց ոգևորված վերաբերմունքը, ինչպես ամեն մի հայ գրողի՝ էնպես էլ ինձ համար էնքան բացառիկ կերպով թանկ են, որ ես ուզում եմ դեպի նրանց դառնալ:

Մեր երիտասարդ և պատանի ընկերներ:

Եթե գրականությունը ազգի հոգին է և գրողները էդ հոգու ծնունդներն ու արտահայտիչներն, ապա դուք մեր գրականության, մեր ազգի հոգու, մեր հոգու ամենամատաղ և դրա համար էլ ամենասիրելի զավակներն եք:

Դուք պատանեկան սրտալի սիրով մեզ մեծարելով անվանում եք հայոց ներկա գրականությունը:

Եթե մենք էք գրականության ներկան ենք, ապա կանգնած ենք մեջտեղը՝ և նայում ենք մի կողմից դեպի նրա անցյալը, մյուս կողմից դեպի նրա ապագան:

Անցյալը, որ շատ ջանքեր ու խրատներ ունի մեզ համար թողած, համոզում է, ցույց է տալիս, որ գրականության ամենաանաչառ ու անողոր քննադատն ու փնհատողը [ժամանակն է]: Ժամանակի ընթացքում շատ շատերը կօքնում են իրենց հմայքն ու հուշակը, ոմանք էլ ընդհակառակը, և ամեն մինը վերջ է վերջո գրական մեծությունների համաստեղության մեջ գտնում է իր տեղը՝ որը համեստ, որն ավելի պայծառ փայլով:

Եվ ահա նրանք անցյալի հեռվից, ժամանակների խորքից իրենց պայծառ ու մաքուր լուսով մեզ հրապուրում ու ոգևորում են լավագույն գործերի համար և ներշնչում են հիացում ու հարգանք:

Մյուս կողմից նայելով ետ, թե ով է գալիս մեր ետևից, տեսնում ենք մեր գրականության ապագան, տեսնում ենք ձեզ, ձեր ոգևորված, զվարթ, ջահել խումբը, որ թարմ ոգևոր-

ություններ ու հարազատ աղմուկով գալիս է մեր ետևից ու մեր սրտերը լցվում են անխորտակելի հույսերով ու անհուն հրեմ-վանքով:

Եվ նրանք, որոնք իրենց կաթնատեսություններ կամ իրենց հասետեսություններ մոռալի միջից շէին նկատել էդ թարմ ու մատաղ շարժումը և ասում էին, թե մեռնում է հայոց գրականությունը, թող գան տեսնելու ձեր ոգևորությունը, թող գան լսելու ձեր կյանքով ու շնորհքով լիքը աղմուկը ու համոզվեն, որ հայոց գրականությունը ոչ թե չի մեռնում, այլ առաջ է խաղում ավելի մեծ ուժով ու աշխուժով:

Մեր սիրելի, մեր ջահել ընկերներ: Ձեզ հետ էսօր էն մասին էին խոսում, թե գրականությունը կյանքի հայելին է: Ես շատ էլ համաձայն չեմ, թե գրականությունը կյանքի հայելին է միայն: Եվ արդեն ինքը՝ պատասխան պ. Իփեկյանը, իր գողտրիկ ճառի մեջ ասավ, թե նա միաժամանակ և ազդակ է կյանքի մեջ:

Այո՛, գրականությունը հայելի չէ լույս և եթե հայելի էլ ասենք, ապա շատ տարօրինակ ու կախարդական մի հայելի է նա: Ես ոչ միայն արտացոլում է ժամանակը և իր դեպքերն ու դեմքերը, այլև տալիս է իր լույսն ու ջերմությունը կյանքին, և ձգտում է կյանքում ստեղծել էն վեհ ու վսեմ, էն մաքուր ու անաղաքտ պատկերը, որ տվել է նրան աստված, կազմված ու հյուսված բնության ամենամաքուր տարրերից:

Եթե գրականությունը կյանքի հայելին է ասենք, ապա գրականության ամեն տեսակի ստեղծագործությունների աղբյուրը ամենից առաջ մարդու սիրտն է:

Չվ երբ էսպես է, աշխատեցեք ձեր սրտերը պահել մաքուր ու լիքը ամենալավ ու ամենաբարի զգացմունքներով և աշխարհքին ու մարդուն նայեցեք բարի սրտով ու պայծառ հայացքով: Եվ արդեն իրեն ստեղծագործական շնորհքի, բանաստեղծության բնությունն էդպես է իր ծնունդից: Դիցաբանությունն ասում է, թե Ապոլլոնը, որ բանաստեղծությունն է ներկայացնում և արևն է միաժամանակ, իր կյանքում երբեք մոլթն ու մոռալ չի տեսած: Որովհետև արևն է ինքը և իր հայացքն արևի, և ամեն մոռալ չբանում է նրա հայացքից:

Արևի նման նայեցեք աշխարհքին:

Խոսքս վերջացնելով, սրտագին կցանկանայի. էդ ոգևոր-

րությունը, որ ունեք էսօր ձեր պատանի հասակում, միշտ ձեզ հետ լինեք ձեր կյանքում, որ դուք շնկատեիք էն նեղություններն ու դժվարությունները, որ պահված են ձեզ համար և սիրով ու հրճվանքով անցնեիք էն անդարձ ու դժվար ճանապարհը, որ ընտրում ու բռնում եք ձեր կյանքի արշալույսից: Եվ որովհետև ձեզ անվանեցի մեր գրականության, մեր ազգի հոգու զավակները, ապա էն կցանկանայի ձեզ համար, ինչ որ կցանկանա ամեն մի սիրող ծնող իր զավակների համար. կցանկանայի, որ դուք ավելի բախտավոր լինեք և ավելի բարձր ու մեծ, քան մենք ենք եղել:

1913

«ՀՈՎԻՏԻ» Ս. Հ.-Ի ՔՆՆԱԴԱՏԱԿԱՆԻ ԱՌԻՔՈՎ

Մի ժամանակ մի Դրամբյան դուրս եկավ: էս Դրամբյանը մտածել էր, որ գրականությունն անտեր է մնացել, մեջտեղը «լուրջ կրիտիկա» չկա ու էդ շափեն իրեն վրա առնելով՝ գլուխը տաքացրել էր ու Երևանի գյուղերի մեկից վեր էր կացել շիտակ եկել Քիֆլիս հայոց «գրական մեծություններին սանձահարելու»: Հենց էսպես: Եվ առաջին հարվածը հասավ իմ գլխին:

— Ա՛յ Դրամբյան, ախր ի՞նչ ենք արել:

Թե՛ դուք վերցրել եք այսինչ հեքիաթը Հայկունուց և փող եք դիզում ու փառք վաստակում:

Եվ «Մշակի» «լուրջ կրիտիկոսին» առաջնորդում էին երկու լուրջ հանգամանք — մինը տգիտությունը, մյուսը հոգու շարությունը:

Այո՛ և հոգու շարությունը, նրա համար էլ ես լուրջ նշանակություն տվի ու մի քիչ էլ կոշտ բռնեցի:

Եթե միայն տգիտությունը լիներ, էն առատ տեղեկություններից ու բացատրություններից հետո, որ ես փոքից մեջտեղը, նա անպայման պետք է խոստովաներ, որ սխալվել է, կամ գոնե լռեր:

Բայց որովհետև հոգու շարությունն էր, որ տաքացրել էր նրա շատ խեղճ գլուխը և շարության թույնն էր եռում նրա նեղ

սրտում, նա տեղի չտվեց ոչ մի փաստի ու ապացույցի առջև, շարունակեց կատաղորեն ձեռին ոտին անել էնքան, մինչև ես բաց թողեցի, որ գնա սկի ջրի տակը:

Ես նրան, իր էդ հատկության համար, անմահ էի անվանել: Եվ ահա, ճշմարիտ որ՝ դարձյալ նա, թեև ուրիշ թերթերում, ուրիշ կերպարանքով «Հովիտում», Ս. Հ. տառերի տակ կուշ եկած: Բայց ի՞նչ նշանակություն ունի թերթի անունը «Մշակ» է թե «Հովիտ», կամ իրեն անունը Դրամբյան է թե Ս. Հ., էականը նույնն է. նույն բթության հետ նույն շար հոգին, նույն դառը շունչը:

Սակայն սա ի՞նչ է գտել, էս «Հովիտի» չգիտեմ սարկավազ, տիրացու թե պարոն Ս. Հ.-ն:

Նույն բանը:

Սա էլ գտել է, որ «Գառնիկ ախպեր» հեքիաթը ես թարգմանել եմ ռուսական «Сестрица Аленушка и братец Иванушка» հեքիաթից: Գտել է, որ ռուսական Ուլիկը դարձրել եմ Գառնիկ, հորթը — կով, — Аленушка-ն — Մանուշ, Иванушка-ն — Մանուկ, և այլն և այլն:

Եթե միայն էսքանը լիներ, այսինքն գործից բացարձակ անգետ ու անտեղյակ լինելը, ես էս «և այլն և այլն» Ս. Հ.-ին կասեի. — տեր հայր, տիրացու կամ պարոն Ս. Հ., էդպես չի, դուք սխալվում եք, էդ հեքիաթը, որ ռուսներն ունեն, հայերն էլ ունեն, և հայերինը թերևս ավելի հին է, քան ռուսներինը: Գերմանացիք էլ ունեն, նրանցն էլ մինչև անգամ հին հայոց հրատարակչական ընկերությունը թարգմանել է, քոչ ու եղբոր անուններն էլ փոխել, դրել Կարեն ու Մանեն: Թուրքերն էլ ունեն — ասում են Ասկյար ու Բիբլի, վրացիք էլ ունեն, էդպես և բոլոր ազգերը:

Ես ռուսականը չեմ թարգմանել, տիրացու Ս. Հ. կամ պարոն Ս. Հ., այլ հայկականն եմ առել ու մշակել: Եվ հայկականն էլ մի հատ չի, տիրացու Ս. Հ. կամ պարոն Ս. Հ., Արարատյան տարբերակը կա, Վասպուրականինը կա, Տարոնինը կա, Շահրիարինը կա, Քիֆլիսինը կա — տպված: Դուք միայն ռուսականն եք տեսել, ինչպես երևում է Դրամբյանի նման դարձյալ «գրիվածով» և էն էլ ռուսական միայն մի տարբերակը գիտեք, որ ու է դառնում, կան և ուրիշ տարբերակներ, ուր հենց գառն է դառնում: Եվ տիրացու Ս. Հ. կամ պարոն

Ս. Ն., ես ոչ ուսական Аленушка-ն եմ փոխել Մանուշի, ոչ Иванушка-ն եմ փոխել Մանուկի, ոչ Ուլիկը Գառնիկի, էդ ամենը զուտ հայկական են, հայ ժողովրդական հեքիաթից, Վասպուրականի վարիանտից, որ գրի է առել հանգ <ուցյալ> Սրվանձոյանը և տպված է նրա «Մանանայում», հեքիաթի անունն էլ հենց Գառնիկ ախպեր, ինչպես կոչվում է նաև հայկական ուրիշ շրջաններում, օրինակ Արարատյան երկրում:

էսպես կիսոսեի ու կպատասխանեի: Բայց որովհետև նրա ոճից ու շնչից, տգիտության հետ կաթում է և հոգու վատությունը, շարունակությունը, ստիպված եմ էսպես ասելու:

— Տիրացու Ս. Ն. կամ պարոն Ս. Ն., գնացե՛ք կարդացե՛ք «Մշակի» 1910 թվականի 169 և 170 համարներում Գրամբյանին տված պատասխանս¹, դա կլինի պատասխան և ձեզ, այլև իմացած եղեք ու միշտ միտներդ պահեցեք, որ եթե աստված ձեզ բերան է տվել՝ նրա համար հո չի տվել, որ էդպես անմիտ ու անքաղաքավարի կերպով լեն-լեն բաց անեք, ձեր խելքիցը դուրս բաներից խոսեք ու գրողներին քննադատեք, այլ նրա համար, որ հաց ուտեք:

1913

ԽՈՍՔ ՐԱՅՅՈՒ ԳԵՐԵՉՄԱՆԻ ՎՐԱ

Ճապոնացիների մեջ մի գեղեցիկ սովորություն կա, որ դիմում են իրենց մեռած գործիչների հոգիներին, ինչպես կենդանի մարդկանց: Հետևելով էս գեղեցիկ սովորությանը, էսօր Հայոց Գրողների Ընկերության անունից ես դիմում եմ Րաֆֆու հոգուն:

Մեծահ հոգի՛, որ հայի բազմադարյան տառապանքով ու նրա լավ ապագայի կարոտով լցված՝ թո տաղանդի կախարդական ուժով դուրս կանչեցիր անցյալի մութից ու ապագայի անհայտությունից հրապուրիչ պատկերներ ու հերոսական

¹ Տես սույն հատորի «Ոչ-գրական ոչնչությունները՝ քննադատ» հոդվածը:

դեմքեր ու նրանցով վառեցիր, ոգևորեցիր վհատներին, որ տկարներին համարձակություն ներշնչեցիր ու զրկեցիր հզորների դեմ նահատակության արյունով լվանալու և սրբելու ստրկության արտասուքը, որ անհանգստություն տվիր հայ ժողովրդի հոգուն և ուղեցիր նրան դեպի ազատագրության ճանապարհը, էսօր եկել ենք թո գերեզմանի վրա դնելու թարմ ծաղիկների հետ և մեր ցավերը, որ միշտ մնում են թաթմ, և մեր զգացմունքները, որ համահված են թո շնչով ու հիշատակով: Եկել ենք թո գերեզմանի վրա օրհնելու և փառաբանելու թո տված անհանգստությունը, էն ճանապարհը, որ ցույց տվիր և էն նահատակների շարքերը, որ գնացին թո ցույց տված ճանապարհով:

Անհանգիստ հոգի՛, անշուշտ այժմ դու սավառնում ես էն դժբախտ աշխարհի երկնքում, ուր թո մահից 25 տարի հետո՞ դարձյալ մի անգամ ալեի մեծ թափով ու սարսափով բարձրացել են հույզերն ու հույսերը, և թերևս հեռու չի օրը, երբ մենք կկարողանանք կրկին գալ թո շիրմի վրա ու կանչել:— Արդեն կատարված է թո իղձը, ո՞վ անհանգիստ հոգի, բեդ-միշտ վերացած ու փերջացած են էնքան արյուններ, էնքան կոտորած, և «ամեն կողմից պանդուխտ հայազգիք դիմում են իրենց սիրուն հայրենիք...»: Արդեն կատարված է հայ ժողովրդի ազատագրության մեծ գործը, հանված է նա հին դժոխքից, ապահով է անվերջ երատրածներից ու հանգիստ անլուր հալածանքներից, դու էլ հանգստացիր թո հավիտենական կայանում, ո՞վ անհանգիստ հոգի:

1913

ՍԱՅԱԹ-ՆՈՎԱՅԻ ԵՐԳԵՔԻ ԲՆԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Ժողովրդի բուռն ցանկության ընդառայն գնալով Հայ Գրագների Ընկերությունն էսօր թիֆլիսում կրկնում է Այաթ-Նովայի երեկույթը:

Մեզանում էնպես մարդիկ կան, որ կարծում են, թե Այաթ-Նովայի երեկույթի արտակարգ հաջողության պատճառը

նորութիւնն էր, իբրև թե մի մոդա էր նա, որ բերեց Գրական Ընկերութիւնը, և անցնելու է երբևիցե:

Ի՞նչքան են սխալվում էս տեսակ մարդիկ, ի՞նչ մակերեսային հայացք են հայտնում, ի՞նչ անծանոթութիւն Սայաթ-Նովայի հետ, ի՞նչ թեթև կարծիք նրա մեծ տաղանդի ու ստեղծագործութեան վրա:

Ո՛չ, նա մի նորօրինակ ձև չի, մոդա չի, որ ժամանակի ընթացքում ձանձրացնի ու փոխվի. նրան մին լսողը երկրորդ անգամ լսելիս ավելի պիտի սիրի, և մին հասկանալուց ու սիրելուց հետո երբեք չպիտի մոռանա: Գեղեցիկ ձևի մեջ մի մշտավառ հուր հոգի է նա, մի ազնիվ ու լիքը սիրտ, մի հարազատ հզոր շունչ, որ մեր աշխարհքի հարազատ շնչի նման միշտ խաղալու է Կովկասի ժողովուրդների վրա, և հայի, և վրացու, և թուրքի վրա, որովհետև հավասար ուժով երգել է և հայերեն, և վրացերեն, և թուրքերեն:

Թիֆլիսը Կովկասի լեռների անցքի առջև տարածված մեծ հանգույցն է եղել հին ժամանակներից, նրա մեջ եկել, խառնել, միացել էին Արևելքի զանազան ժողովուրդները իրենց բարբառներով, կրոններով, փիլիսոփայութիւններով ու ազգային ստեղծագործութիւններով ու ստեղծել էին մի ինքնատիպ քաղաք, որի վրա հիանում էր ամբողջ Փոքր Ասիան ու Մերձավոր Արևելքը: Եվ հեռավոր ժողովուրդները ամեն անգամ երբ պատերազմով վեր էին կենում դեպի Կովկաս՝ Թիֆլիսն էին երազում ու Թիֆլիսի «գյոզալները» — սիրունները:

Ահա, ինչպես մի ուրիշ անգամ էլ նկատել եմ, էդ Թիֆլիսի նման մի ինքնատիպ մեծութիւն էր Սայաթ-Նովան, իբրև Արևելքի բանաստեղծ: Եվ եթե Արևելքի ժողովուրդները հեռվից հեռու վառվում էին Թիֆլիսի սիրունների կնքոտով՝ ինչ ասել կուզի, որ էս հոյակապ աշուղը, աշուղ, որ Արևելքում շատ իմաստուն կերպով և բանաստեղծ կնշանակի և սիրահար միաժամանակ — էդ միևնույն սիրունների սիրով պետք է բռնկեր անմարելի ու իր կրակով վառեր թե իր ժամանակակիցներին և թե գալոց սերունդներին, ինքն էլ այրվեր, հատներ իր կրակի սաստկութիւնից, որովհետև, ինչպես ասում է իր անտիպ թուրքերեն երգերից մեկի մեջ — «Աշուղուղ քուրա դուր, յախար, յանդրար» — աշուղութիւնը հնոց է, կէրի, կավերի:

Եվ ի՞նչ գեղեցիկ է, ճշմարիտ, որ էսպես է մեր վիթխարի Սայաթ-Նովան. մի հոյակապ սիրահար է, բռնված ու բռնկած սիրո հրդեհով, նրա լույսի տակ էլ նկատում է աշխարհքն ու իրերը, զգում է, որ էրվում, վերջանում է ինքը, բայց մնում է արի ու բարի, անշար ու անաշտ, վեհ ու վեմ, որպես աշխարհքի ու մարդու մեծ բարեկամը, հաստատուն սիրով և՛ դեպի էն «գալումը», որ իրեն կրակ տվեց ու միշտ մնաց անտարբեր, և դեպի նրանց, որոնք շորս կողմից տաքացան ու հրճվեցին էն կրակով, որի մեջ էրվում էր ինքը, և դեպի նրանց, որոնք հազար ու մի տեսակ իրեն վշտացրին կյանքում: Զայրացավ, բայց երբեք չարացավ, ցավեց, բայց երբեք չանիծեց:

Ռուս հայտնի բանաստեղծ Я<ков> Полонский-ն, որ երկի Մոսկվայում մեր Գ<եորգ> Ախվերդյանի ուսանողական ընկերներից է եղած, անցյալ դարու հիսնական թվականներին Կովկաս եղած ժամանակ Ախվերդյանի մոտ տեսել է Սայաթ-Նովայի երգերի տետրակը, նրա միջոցով ծանոթացել Սայաթ-Նովայի հետ և երգերից մի քանիսը թարգմանել, հիացմունքով է խոսում մեր Սայաթ-Նովայի երգերի բնավորութեան վրա*:

Ասում է՝ Սայաթ-Նովայի երգերի բնավորութեան մասին ընդհանրապես խոսելով, դժվար թե սխալվեմ, եթե ասեմ, որ նրանք իսկի նման չեն ոչ հարևան ցեղերի երգերին, ոչ էլ էն երգերին, որ եկել են Արևելքից, թեև հիշեցնում են նրանց: Էսպես, օրինակ, կովկասյան բոլոր լեռնական ժողովուրդների երգերի ոգին ռազմական է: Ձին ու թուրք, սերն ու վրեժը, արյունն ու սպանվածի դիակի վրի ողբն են նրանց երգերի հատկանիշները:

Սայաթ-Նովան հեռու է կովից, քուրդիստանի լեռներում ապրող վանա հայերի ռազմական ոգին չէր կարող նրան ոգեվորել, նրան, որ ծնվել էր Թիֆլիս, ուր, օտարութեան մեջ, հայերն առել էին ուրիշ բնավորութիւն, ուրիշ ուղղութիւն:

Թաթարական երգերում պատմվածքը վերջին տեղը չի բռնում: Նրանցից շատերը լեգենդի բնավորութիւն ունեն, շատերն էլ կարծես թե ինչ-որ անհայտ ժամանակներից եկած ու

* «Кавказ», 1851, № № 1, 2.

անհայտ երգիչների երգած՝ երկար պոեմների հատվածներ են, ինչպես օրինակ Քեոռ-Օղլու և իր ձիու երգը:

Յայթ-Նովան, ընդհակառակը, զուտ քնարական բանաստեղծ է, և, թերևս, մեր ժամանակի հասկացողությամբ, շափազանց անհատական:

Վրացական երգերում մեծ տեղ է բռնում սերը, քեֆը և երբեմն անհույս տխրությունը, բայց նրանք կարծես հենց նրա համար են, որ ինքը երգողն էլ, իր լսողներն էլ մի առ ժամանակ, զինու օգնությամբ, մոռանան ամեն ցավ ու դարդ ու նրանց հնչյունների մեջ գտնեն մխիթարություն:

Մայթ-Նովան ընդհակառակը — մխիթարությամբ չի ուզում. նրան ափսոսի դուր է գալիս, երբ ծիծաղի տակ արցունք է նկատում, քան երբ լսում է ծիծաղը, որ արցունքը ճնշում է:

Նրա երգերը հաճախ հանդիսավոր — խրատական են: Էնպիսի — նա իր սրտին ասում է.

«Արթ թե՛ անգամ կան, ա՛յ գիվան սիրտ,
Հայտ սիրե՛, աղոթ սիրե՛, աթ սիրե՛.
Աշխարհս բունն ըլի, ի՞նչ պիտի տանի,
Ասոված սիրե՛, հոքի սիրե՛, յար սիրե՛»:

Մայթ-Նովայի երգում քիչ կան էն վառ փայլուն գոյնները, որոնցից Արևելքում բնությունը հաճախ աննում է մի ստորօրինակ ու խաբուսիկ արասքին փայլ: Չկան և էն ֆանտաստիկ պատկերները, որոնց առես թե հաշիշն է ծնում: Առհասարակ նրա երգերում քիչ երեակայություն կա — շատ զգացմունք է մի զգացմունքները նրա երգերում մեծ մասամբ արտահայտում են էնքան մեղմ ու անվրդով խաղաղություն. «սր նրա սերք նման է ընկերություն, ընկերությունը սիրուս: Որ հայրենի քերականություն մեջ էլ արականի ու իզականի ստորբերությունը չկա — Մայթ-Նովայի մի քանի երգերում դժոխք է հասկանալ, իր արեարկած խոսքով ում է գիմում նա՝ ընթացյշ սիրով սիրած ընկերի՞ն, թե՛ տարփալի սիրով սիրած կնոջը:

Նրա հոգու տարբը, ոգևորության ժամերին, չի կարողանում հաշտվել զգայնականության հետ, ինչպես կրակը չի կարող հաշտվել ջրի հետ: Նա էնքան է բարոյական, որ աշուղի

կոչմանն էլ նայում է բարոյական տեսակետից: Իր երգերից մեկի մեջ ասում է.

«Աշուղի լիզուն բլբուլ է, օրհնանք ունե, անեծք շունի»,

Թեև երբեմն նրան համակում է սոսկալի թախիծը:

Իհարկե, իր հարևանցի ծանոթությունով ու ամեն տեսակի խորթությունով, որս բանաստեղծի համար դժար էր ըստ ամենայնի ճիշտ բնութեղ ու հասկանալի ստեղծագործությունն ու հոգին, բայց նա էլ է նկատել, և նրա կարծիքն ու սուպակորությունը մեջ բերի շեշտերու Մայթ-Նովայի երգերի բնավորությունը, որոնց պարզություն մեջ աջակցկարա եղևում է նրա բարի, քեֆույշ սիրուս ու նրա ազնիվ, խորը հոգին, և էլ ամենը միասնաբար ասանք ու աստղաբաններ Մի աստղը, ուղևորված բունաստեղծ, որ աշխարհք է մտնել սաղավաթ սկզբով, ինչպես ինքն է ասում իր անտույզ քարտեզներն երգերից մեկի մեջ՝ «Չունենեմ արժիշ, ասուլ ազլեղալ շալան զքր Մայթ-Նովայայսինքն — սիրահարված, սաղը ձեռին նվազում է Մայթ-Նովան»:

Ա. աշխարհքին նայելու՛ Արևելքի մեծ բանաստեղծներին հաստակի զիջքառօրյաբանք նվազում է ու որ կյանքը մի կրակ է, մարդն էլ խոտի նման գալարում է ու շարունակում, և ասպրեղով ու տանողիչով վերջը բացականչում է.

«Աշխարհս մե փանդուս է —
Թաղերունն բեգարիլ իմ.
Մըտիկ տըվողըն կու խոցվի —
Դաղերունն բեգարիլ իմ.
Էրկ լավ էր, բանց վար էսօր, —
Վարդունն բեգարիլ իմ...»

Մակայն տանջվելով ու վշտանալով հանգերի և տանջանքից ու վշտերից քեզարեչով հանգերի՝ միշտ էլ մտնում է նույն բարին, քեֆույշն ու ազնիվը և ինչ բանաստեղծական արեղեցկությունք կյանք ու աշխարհք էր մտնել, նույն գեղեցկությամբ էլ թողում է կյանքից ու աշխարհքից:

«Գուլիմ թըղի բլբուլի պես, —
բաղերունն բեգարիլ իմ...»

Մի ամբողջ ժողովրդի պարծանք է Սայաթ-Նովան, անմաշ ու անմահ: Ով նրան մին լսեց, մյուս անգամ ավելի սիրով կլսի, ով նրան մին սիրեց, էլ չի դադարի սիրելուց:

1913

ԽՈՍՔ ԾԵՐԵՆՑԻ ԳԵՐԵԶՄԱՆԻ ՎՐԱ

Հայոց նորագույն գրականության պատմությունն ասում է՝ Ծերենցը եղավ մեր նոր պատմական վիպագրության հիմնադիրը: Եվ երբ ետ եք դառնում դեպի 60-ական թվականները՝ ճանաչելու՝ թե ո՞վ էր էդ հիմնադիր վարպետը — ձեր սիրտը լցվում է անկեղծ հրճվանքով: Զգիտեք նրա ազատասեր ոգու վրա հիանաք, նրա վառ հայրենասիրության ու ժողովրդասիրության վրա զարմանաք, նրա հոգու ազնվության մաքրության վրա ուրախանաք, թե նրա սրտի քնքշության ու ճաշակի նրբության վրա:

Եվ ի՞նչ իմաստուն ու գեղեցիկ է դնում նա իր գործի հիմքը՝ իրեն հերոս առնելով Քորոս Առոնին, բյուզանդական բանտում փակված հայ իշխանազնը, որ բանտից դուրս փախչելով, հասնում է իր հայրենիքը, ազատասիրության շունչ է փչում, սիրտ տալիս, ոտքի է հանում իր ժողովրդին ու կանգնեցնում է ամուր՝ իր ազատ կյանքով ապրելու:

Էսպեսով նա հանդիսանում է մի խորհրդանշան — հայ ժողովրդի ազատասիրության ոգին, մի ոգի, որ թագավորում է հայոց թե պատմական, թե ժամանակակից կյանքի վրա հիմնած գրականության մեջ և զորանում ու ամրանում է ժողովրդական ուժով՝ հերոսական խորհուրդներից հերոսներ ծնելով:

Հայոց Գրողների Ընկերությունը էսօր եկել է ծաղիկներով ու զարդարել Ծերենցի գերեզմանը նրա մահվան 25-ամյակի առիթով:

Սակայն էս ծաղիկները չնչին զարդեր են նրա մեծ շիրմի համար: Սրանց բոլոր արժանիքն էն է, որ մեր զգացմունքների արտահայտությունն են էսօր: Սրանցով չպիտի զարդարվի նրա շիրմը, մի շիրմ, որ զարդարված է տաղանդի, ժո-

ղովրդասիրության ու մաքրության անթառամ զարդերով, թե լավ գրողի, թե ազնիվ մարդու վսեմ առաքինություններով: Եվ մենք չենք եկել մեր հանդեսով ու ճառերով նրան բարձրացնելու, այլ եկել ենք՝ նրան հիշելով՝ նրանով բարձրանալու: Եվ թո՛ղ օրհնված լինի նրանց հիշատակը, որոնք իրենց կենդանության օրով ժողովուրդներին կյանք և շունչ տալուց հետո էլ՝ չեն դադարում իրենց գործերով ու գերեզմաններով էլ ազնվացնելու և բարձրացնելու մարդկանց ու ժողովուրդներին:

Թող օրհնված լինի Ծերենցի հիշատակը:

1913

ՀԱՅՈՑ ԴՐԱՄՐՅԱՆԻՉՄԵՆ ՈՒ ԵՍ

Ետ եկան դարձյալ իմ «լուրջ կրիտիկոսները» — Դրամբյանն ու Ս. Հ.-ն: Եվ ստիպված ենք դարձյալ այժմ-բեն ասելու ի՞նչ պետք է անել. մարդիկ կրիտիկոս են դառնել ու իրենք էլ են ցավի մեջ մնացել, մենք էլ. վերջ. պես՝ ի՞նչ պետք է անել, հայոց մամուլն է խոսում:

Բայց ցավը մենակ էն չի, որ հայոց մամուլի էս կամ էն օրգանը կարող է էսքան տգետ լինել կամ էսպես տգետ կրիտիկոսներ ունենալ: Գրական տգիտությունը կամ տգետ քննադատությունը ամեն մի նոր առաջ եկող գրականության մեջ սովորական երևույթ է, սակայն մեր մեջ տգիտության վրա ավելանում է վատ հոգին, հոգու շարությունը:

Եվ եթե մի «Մշակ» կամ մի «Հովիտ» սրանց տեղ են տալիս, ձայնակցում են ու հրճվում՝ պատճառը մենակ գրական տգիտությունը հո չի, այլև հոգու շարությունը, ապականված սիրտը:

Եվ սա Դրամբյան չի արդեն, այլ դրամբյանիզմ: Ես էլ էդ պատճառով է, որ կարևորություն եմ տալիս ու լուրջ խոսում էս տխուր երևույթի վրա:

Առայժմ մի կողմ թողնենք ամեն երկրորդական բան, գտնենք գլխավոր հարցն ու կանգնենք նրա վրա:

Պարոն Ռ. Դրամբյանն ու չգիտեմ ինչ՝ Ս. Հ.-ն, կամ մի

խոսքով ասենք դրամբյանիզմը— գտել են, որ հայոց «գրական մեծութիւնները» բանագողութիւնով են պարապում, ժողովրդական ստեղծագործութիւններն առնում են ու շնչին փոփոխութիւններով կամ բառացի հրատարակում իբրև իրենց ինքնուրույն գրվածք:

Էդ երևույթը անվանում են զզվելի թալան, կեղտոտ ուղի, ավելի ժանտախտ, գրական շանտաժ և այլն, և այլն, և այլն, և «Մշակի» ու «Հովիտի» էջերում հայոց բաբեպաշտ ազգին հորդոր են կարգում առնել էս ազգային դժբախտութեան առաջը: Էս սրբազան ջհաթը մասնավորապես ուղղած էր ինձ վրա, իբրև նրա համար, որ ժողովրդական նյութեր եմ առել Ս. Հայկունու ժողովածովից, ինչպես 1910 թվականի «Մշակի» մի քանի համարում ցույց էր տալիս Ռեուրեն > Դրամբյանը, ու գրեթե բառացի հրատարակել եմ իմ անունով, առանց հիշելու, թե ժողովրդական է, ապա թե նրանից հետո Ս. Հ.-ն մեղտեղ եկավ «Հովիտի» էս տարվան № 16-ում և հայտարարեց, թե ես «Գառնիկ ախպեր» հեքիաթը թարգմանել եմ ռուսերենից ու տպել եմ իբրև ինքնուրույն գրվածք: «Մշակն» էլ երկու անգամ իրար ետևից էս մասին ավետեց իր «հատաշաղիմական» ընթերցողներին:

Իր ժամանակին ես պատասխան եմ տվել Դրամբյանին, այժմ էլ «Հովիտի» Ս. Հ.-ին պատասխանեցի «Հորիզոնի» № 95-ում, ցույց տվի, որ դա զուտ հայկական հեքիաթ է և առել եմ ահա էս ինչ ու էն ինչ վարիանտներից: Իհարկե, «Մշակն» էս մասին լռեց, մինչև նոր հարմար դեպքը, իսկ Դրամբյանն ու Ս. Հ.-ն նորից ասպարեզ եկան մինը «Հորիզոն» № 45-ում, մյուսը «Հովիտի» № 22-ում և նորից պնդում են իրենցը, այժմ էլ ուրիշ ձևով, թեկուզ Հայկունուց շեռ օգտորվել, թեկուզ ռուսերենից շեռ թարգմանել, բայց հո հայերենից ես առել, թեկուզ բառացի չի, բայց հո էլի էն նյութն է, նույն տիպերն են, նույն արտահայտութիւններն են, և թե ինչու վրեն շեռ գրում ժողովրդական:

Իբրև թե եթե գրեի ժողովրդական, ամեն բան կվերջանար նրանց համար, դրամբյանիզմի համար, հայոց էս մամուլի համար: Բայց, իհարկե, սուտ են ասում: Եթե դրանով վերջանար, ես կասեի — ո՛վ «Մշակ», ո՛վ «Հովիտ», ո՛վ Տերեզնիկ, ո՛վ Քալանթար, ո՛վ Համբարձում > Առաքելյան,

ո՛վ Դրամբյան, ո՛վ Ս. Հ., բայց արեք տեսք 1905 թ. «Հասկերը» № 1, հենց առաջին երեսին մեծ-մեծ տառերով տպած է՝ «Գ ա ո ն ի կ ա խ պ եր» հայ ժողովրդական հեքիաթ:

էդպես էլ մյուսները:

Բայց սխալ է, եթե կարծում եք, էս որ ասի, մի «Հովիտ» կամ մի «Մշակ», մի Ս. Հ.— կամ մի Դրամբյան կամաշեն ու կլռեն: Ո՛չ, հազար-հազար անգամ՝ ոչ:

Դրանից ավելի խիստ ապացույցներ ու փաստեր եմ հանել նրանց դեմ, տպված են, հայտնի են, այսուամենայնիվ ճրանք շարունակում են անվանարկել, թունավորել միշտ նոր ու նոր տրամաբութիւններ ու հայհոյանքներ կուտակելով մեջտեղը:

Իհարկե, էդ բոլորն ինձ ի՛նչ պետք է անեն. ոչինչ, և ժողովրդական առածի ասած՝ քոռամուկն ինչքան հող փորի՝ իր գլխին կածի, բայց երևույթը, երևույթը շատ է գարշելի, հոգին շատ է ցած ու վատ:

Բայց առայժմ մի շատ հետաքրքրական պատմութիւն պետք է անեն:

Եվ ահա պատմութիւնը:

Անցյալ դարի սկզբներին ռուսաց գրականութեան մեջ հայտնվում է մի ջահել մարդ, անունը Ալեքսանդր Սերգեևիչ Պուշկին: Էս Ալեքսանդր Սերգեևիչ Պուշկինը բանաստեղծ է լինում: Եվ որովհետև բանաստեղծ է լինում, գրա համար էլ բանաստեղծութիւններ է գրում, էն էլ զանազան տեսակի: Եվ որովհետև զանազան տեսակի բանաստեղծութիւններ է գրում, բազմազան էլ նյութեր է առնում իր երգերին. էլ սեր, էլ ընկեր, էլ հայրենիք, էլ բնութիւն, էլ ժողովուրդ, էլ պատմութիւն, դրանց հետ նաև ժողովրդական նյութեր — լեզանդներ ու հեքիաթներ:

Լսո՞ւմ եք: Եվ ժողովրդական նյութեր է առնում մշակում, ինչպես խելքը կտրում է, և ինչքան ուժը պատում է, տպում է, վրեն էլ գրում է Ալեքսանդր Սերգեևիչ Պուշկին:

Գրական ճաշակի ու հասկացողութեան տեր մարդիկ հըրձվանքով ողջունում են երիտասարդ բանաստեղծին, սիրում են առանձնապես նրա ժողովրդական նյութերի մշակումը, որոնց

հետ ոռուաց գրականության մեջ էր մտնում ոռուաց ժողովրդրդական ոճն ու շունչը, իսկ հայտնի ժուկովսկին հենց առաջին հերթաթի — Руслан и Людмила-ի համար զրկում է Պուշկինին իր պատկերը վրեն մակագրած՝ «հաղթված ուսուցիչը — հաղթող աշակերտին»:

Հիմի կասեք. Հապա եթե էնտեղ էլ համ բանաստեղծ կար, համ ժողովրդական նյութեր կային, համ էդ նյութերի մշակումը կար, հապա ի՞նչպես է, որ Դրամբյան չկար, Ս. Հ. չկար, «Մշակ» չկար, «Հովիտ» չկար... Ինչպես չկար, հենց էդ եմ ասում:

Գրական տոնի և ուրախության հենց էն տաք ժամանակը իր իշի վրա նստած հայտնվում է տիրահոշակ Каченовский-ն, որ հենց սրանով էլ մնում է անմահ ոռուաց գրականության պատմության մեջ, և Житель Бутырской слободы կեղծ անունով ապում էր իր լուրջ «կրիտիկան» «Вестник Европы» 1820 թվի №11-ում. — Արթուն կացե՛ք, քաղաքացիներ, հայրենիքը վտանգի մեջ է... մի ինչ-որ Պուշկին է դուրս եկել...

Ռուսաց գրականության պատմությունն ասում է. «Житель Бутырской слободы» увидел в мысли Пушкина воспользоваться русским сказочным элементом просто неприлично, бедствие и явление отвратительное...

էնբան նման «Մշակի» Դրամբյանին ու «Հովիտի» Ս. Հ.-ին, որ քիչ է մնում կարծեմ, թե ես էլ Պուշկին եմ:

Իհարկե, ներողություն եմ խնդրում իմ սիրելի հայրենակիցներից, որ էս տեսակ մի համեմատություն անցկացրի մտքովս: Ես լավ գիտեմ, որ նրանք թույլ չեն տալ բնավ, որ Թիֆլիսի էս ինչ փողոցում, էս ինչ համարի տանը մի ուրիշ Պուշկին լինի, էն էլ հայ: Բայց վեճի նմանությունը շատ է մեծ, նրա համար հիշատակեցի:

Եվ հետաքրքրական է ավելին լսել, ավելի վարմանալի նմանությունը տեսնելու:

Ռուս Դրամբյանն էլ մեղադրում է Պուշկինին, թե նա իր հերթաթը վերցրել է ոռուաց Հայկունու — Кирша Данилов-ի ժողովրդական նյութերի հավաքածուից: Ասում է. «Чего ждать, когда наши поэты начинают пародировать Киршу Данилова? Возможно ли просвещенному или хоть

немного сведущему человеку терпеть, когда ему предлагают новую поэму, писанную в подражание Еруслану Лазаревичу».

Եվ ճիշտ «Մշակի» Դրամբյանի ու «Հովիտի» Ս. Հ.-ի նման էլ նմանություններ է գտնում: Ասում է. «Для большой точности, или чтобы лучше выразить всю предосты старинного нашего песнопения, поэт и в выражениях уподобился Ерусланову рассказчику...».

Եվ նախադասություններ ու բառեր է բերում, ցույց տալու, թե պատմությունն ու տրիպերը հո նման էին, արտահայտությունն ու լեզուն էլ ինչքա՛ն նման են:

«Теперь прошу, писал он, обратить ваше внимание на новый ужасный предмет, который, как у Камюэнса Мыс бурь, выходит из недр морских и показывается посреди океана Российской словесности. Пожалуйста, напечатайте же мое письмо; быть может, люди, которые грозят нашему терпению новым бедствием, опомнятся, рассмеются — и остановят намерение сделаться приобретателями нового рода русских сочинений. — Дело вот в чем: Вам известно, что мы от предков получили небольшое бедное наследство литературы, т. е. сказки и песни народные. Что об них сказать? Если мы бережем старинные монеты, даже самые безобразные, то не должны ли тщательно хранить и остатки словесности наших предков?...».

Իսկ մի ուրիշը գրում էր, թե՛

«Мать дочери велит на эту сказку плюнуть».

Իհարկե, հետո բացվեց ու էսօր ապացուցված է, որ Պուշկինը չի էլ օգտվել Кирша Данилов-ի հավաքածուից, և ոռուաց գրականության պատմությունը ցավ հայտնելով որո՞ համար, որ չի օգտվել, ասում է.

«Но нужно помнить, что самое содержание русского фольклора раскрывалось медленно и современные научные воззрения на фольклор и на вопрос об отношении его к книжной словесности в сущности сходятся с тем практическим решением его, какое дал Пушкин в «Руслане и Людмиле». Универсальность сюжетов фоль-

клора и зависимость его от творчества книжного или индивидуального—результат только новейших исследований. В их свете свободное отношение Пушкина к чудесно-фантастическим сюжетам и приурочение их к национальному преданию—есть акт гениального предвидения...» (Библиотека великих писателей, под ред. Венгерова, Пушкин, т. I. соч. Пушкина с объясн. их и сводом отзывов критики, Л. Поливанова, Руслан и Людмила).

Но нужно помнить **էն էլ, որ էս ամենը հետո հայտնվեց ու ասվեց: Դրա համար հարկավոր էր մի բեկինակի գար ու ամեն մեկին ցույց տաք իր տեղը: Իսկ մինչև նրա գալը, էդ ոռւս Դրամբյաններն ու Ս. Հ.-երը և նրանց խրախուսող ոռւսական «Մշակներն» ու «Հովիտները», որ շարունակ կուրծք էին ծեծում, թե իրենք գրականության ու ազգի սիրուց են էրվում, շատ մտքեր ու շատ արյուն պղտորեցին:**

Սառնասիրտ Կрылов-ը էդ «լուրջ կրիտիկայի» ծանր տպավորության տակ իր սրտի ցավը թողեց ոռուսաց գրականության մեջ մի քառյակով:

«Напрасно говорят, что критика легка;
Я критику читал Руслана и Людмилы:
Хоть у меня довольно силы,
Но для меня она ужасно как тяжка».

Պուշկինի բարեկամ իշխան Վյազեմսկին առաջարկեւ՛մ էր ուժով լռեցնել էդ իդիոտներին, իսկ Պուշկինն ինքը, տեսնելով, որ քննադատը չի կանգնած իր առջև, այլ բթովթյունը, որ դուրս է եկել իր կոպիտ ձեռքը բարձրացրել միայն հարվածելու հանուն հայրենիքի ու գրականության, նրա հաստ ու տափակ ճակատը խարանեց մի շարք էպիգրամամաներով, որոնք հայտնի են «На Каченовского» ընդհանուր վերնագրով: Ահա նրանցից միինը:

Нахальство, Аристарх, таланту не замена,
Я буду всё поэт, тебе наперекор,
А ты останешься всё тот же крохобор,
Плюгавый выползок из гузка Дефонтена*.

* Դեֆոնտեն ֆրանսիացի մի եզվիտ հոգևորական էր և մի շար ու գահ-հիկ գրող, որ վեճի էր մտել Վոլտերի հետ: Լ. Թ.:

Եվ էստեղ էս ուզում եմ պարծենալ ու հիշեցնել, որ ևս Պուշկինի նման անքաղաքավարի չեմ վերաբերվել դեպի իմ Արխտարխները, ու էս տեսակ բաներ չեմ ասել սրանց, թեև սրանք շատ ավելի աներես ու շար են, քան ոռուս պոռֆ. Каченовский-ն, և էնպես, ինչպես Պուշկինն է զզված, բացա-կանչել է, թե— «ո՛ր սատանեն արավ, որ ես բանաստեղծ ծնվեի Ռուսաստանում», ես երբեք էդ տեսակ բացականչու-թյուն չեմ արել, թե՛ ո՛ր սատանեն արավ, որ ես բանաս-տեղծ ծնվեի հայերի մեջ, թեև ես հազար անգամ ավելի իրա-վունք ունեի:

Զէ՛ որ միայն մի թշվառ Каченовский և իր նման մի եր-կուար չէին, որ զզվեցրել էին մի Պուշկինի: Զէ՛ որ միայն էդ մի անախորժ վիճաբանությունը չէր նրա զայրույթի ու զզվան-քի պատճառը:

Եվ մի՞թե մեծ ու փոքր Դրամբյանն ու Ս. Հ.-ն նորություն են մեր կյանքում, մի՞թե թշնամությունն ու շարությունը մեր ամենօրյա հացը չեն, մի՞թե հայհոյանքն ու սուտը երբևէ պա-կասել են մեր գլխից, և մի՞թե մենք կտեսնենք դրանց վերջը...

— Բնա՛վ:

Եթե ոռու Каченовский-ներն առաջ են եկել իբրև իմաս-տական և համահեղիմ մնացել ու թաղվել են իրենց մոլորու-թյան մեջ, հայ մեծ ու փոքր Դրամբյանները սկզբից մինչև էսօր հայտնվել են իբրև մաղձոտ հոգիներ և հուսահատորեն ճգնել են միայն հարվածել, թունավորել, վնասել, սպանել: Ուրիշ խնդիր է, թե ուժ չեն ունեցել ու չեն կարողացել, բայց էդ է եղել ձգտումը, հոգին: Եվ նրանցից բան չեք կարող հասկանալ, ոչ էլ կարող եք բան հասկացնել:

Կասեն՝ վերցրել եք բառացի էսնչից: Ցույց կտաք, որ չեք վերցրել: Էդ նշանակություն չունի: Կասեն՝ թարգմանել եք: Ցույց կտաք, որ թարգմանություն չի: Դարձյալ չեն լռի: Կա-սեն ինչո՞ւ չեք վրեն գրում ժողովրդական: Թվականով, տե-ղով, էջով ցույց կտաք, որ գրել եք վրեն ժ ո ղ ո վ ո դ ա կ ա ն: Միևնույն է, նրանք իրենցը կշարունակեն:

Ես ցույց տվի, որ իմ մշակած ժողովրդական նյութերի վրա սովորաբար գրել եմ «Ժողովրդական»: Բայց շատ իզուր: Ես ոչ թե կարող էի չգրել «Ժողովրդական», այլ ուղղակի չպետք է գրեի: Մինչդեռ մեր դրամբյանիզմը հանգ<ուցյալ>

Հայկունու օրինակի վրա ցույց տալով, պահանջում է, որ ես իմ մշակած նյութերի վրա ոչ միայն գրեմ ժողովրդական, այլև՝ թե որտեղ, երբ և ումից եմ լսել:

Եվ մեր մեծ թե փոքր, հառաջադիմական թե կղերական բթամիտ Դրամբյանները մինչև էսօր դեռ չեն հասկացել, թե էն ժողովրդական հում նյութերի համար է, որ բանահավաքները գրում են — որտեղ են լսել, երբ են լսել, ով է պատմողը, քանի տարեկան է և այլն, և այլն, որովհետև էն արձանագրություն է, պրոտոկոլ է, և պարտավոր են նույնիսկ նրա սխալներն էլ էնպես գրի առնելու, ինչպես որ կան: Իսկ մշակածի, գրական լեզվով պատմածի, փոփոխածի, զանազան վարիանտներից կազմածի, չափական ձևի վերածածի վրա չպետք է էլ գրվի, նա արդեն ժողովրդականը չի, թեև բնագիրը ժողովրդիցն է առած: Ճիշտ էնպես, ինչպես հայոց էս կամ էն Դրամբյանը կարող է մի գյուղից լինի դուրս եկած, բայց իրոք էլ գեղջուկ Դրամբյան չի և թույլ չի տալ իրեն գեղջուկ անվանել, այլ մշակված Դրամբյան, «լուրջ կրիտիկոս» Դրամբյան, ազատամիտ թերթի աշխատակից Դրամբյան...

Եվ ահա մենք պարտավորված ենք էդ «լուրջ կրիտիկոս» Դրամբյանին ու հայոց ազատամիտ թերթին ցույց տալու, թե բանահավաքն ուրիշ է, բանաստեղծն ուրիշ, մեկի գրածի պատասխանատուն՝ ժողովուրդն է, մյուսինը — ինքը:

Մի բանահավաք Աֆանասև պարտական է հիշելու, թե որտեղ է լսել, օրինակի համար, «Золотая рыбка» հեքիաթը ու ետևիցն էլ բերում է նրա զանազան տեղերի տարբերակները, թե ինչպես մի տարբերակում ձկան դեբը աղվեսն է կատարում, երրորդում, թռչնակը, չորրորդում՝ ծառը:

Մեկում ծերունու լավության փոխարեն են վճարում, մյուսում ուղղակի լավություն են անում խղճահարությունից: Մեկում հարստություն են ուզում, մյուսում՝ իշխանություն, երրորդում ուզում են սուրբ դառնան: Մեկի վերջում մնում են գատարկ, մյուսում — հարուստ ու երջանիկ, երրորդում — դառնում են շներ...

Եվ ամեն վարիանտի տակ մարդը գրում է — Записано в Чердиском уезде, Пермской губ. կամ Записано в Енисейской губ. Իսկ մի բանաստեղծ Պուշկինն նույն ժողովրդից վերցնում է նույն հեքիաթը և գրում է. «Сказка о рыбаке

и рыбке». Գրում է ու ստորագրում Ալեքսանդր Պուշկին: Եվ որովհետև երբ ասում են հեքիաթ, առակ, լեգենդ, ամեն մի գրականությունից տարրական հասկացողություն ունեցող մարդ, մինչև իսկ ուսմիկը, գիտեն, որ էդ կնշանակի ընդհանուր, ժողովրդական ստեղծագործություն, որ ամեն մարդ էլ կարող է նյութ առնել ու գրել, պատմելով, փոփոխելով, ավելացնելով ու պակասեցնելով, հեռանալով կամ մոտիկ մնալով: Եվ ահա Պուշկինն էլ էսպես է պատմում, շատ <մոտ> ու հավատարիմ մնալով բնագրին, և նրա գրածը արդեն ժողովրդականը չի և չի կարող ու չի էլ գրում վրեն ժողովրդական: Եվ ոուսաց գրականության պատմությունը Պուշկինի գրածի ու ժողովրդականի էսքան մոտիկությունը շեշտելով հանդերձ ոչ թե հայհոյում է նրան, այլ ընդհակառակը, բարձր գնահատելով պոետի նուրբ հոտագությունն ու զգուշավորությունն, ասում է.

«Текст народной сказки, взятый на этот раз Пушкиным, заключал много достоинств и по стройности состава, и по яркой характеристике обеих главных действующих лиц (старика и старухи). Пушкин, почувствовав эти достоинства своего источника, придержался близко к нему» (Соч. Пушкина с объясн. их и свод. отзыв. критики Поливанова).

Մեր «լուրջ կրիտիկոսները» պ. Տեր-Ղևոնդյանի դասագրքում թարգմանած ոուսական հեքիաթը հայկականի տեղ են դնում, իսկ հայկականը անվանում են ոուսերենից թարգմանություն և կամ «Դասընկերում» տպած գերմանականի խառնուրդ «Չանգլո-Պանգլոն» անխառն հայ ժողովրդական հեքիաթի օրինակ են առաջարկում: Եվ բացարձակ բոբիկ ու անտեղյակ են առարկայից, որի վրա խոսում են, դեռ հանդերձնում են սովորեցնել, թե ինչպես պետք էր ժողովրդական նյութեր մշակել ու գրել:

Իսկ ես, մարդու թարսություն է էլի՛, փոխանակ նրանց խորհրդին հետևելու և գործը խաղաղ վերջացնելու, ուզում եմ ցույց տամ, որ ավելի մեծ հանցավոր ու բանագող եմ, քան թե նրանք գիտեն ու կարծում են: Ես իմ լեզունդներն էլ եմ ժողովրդից առել, բոլոր հեքիաթներն ու զրույցներն էլ եմ ժողովրդից ու ժողովրդականիցն առել, ու միշտ աշխատել եմ

և աշխատում եմ ինչքան կարելի է մոտիկ ու հարազատ մնալ, Սասունցի Դավիթը կազմելիս էլ եմ էղպես արել, նույնիսկ Անտուն էլ, Թմկաբերդն էլ, մյուսներն էլ, որտեղ քեֆս տվել է, օգտվել եմ ժողովրդական նյութերից և շատ անգամ հենց ինչպես իրենք են ասում՝ «բառացի»:

Սրան, իհարկե, ամենայն սիրով կհավատան մեր «լուրջ կրիտիկոսներն» ու նրանց թերթերը, միայն մի ծանր խնդիր կա, որ չի կարող վճռել նրանց պատիվ ուղեղը, թե ինչպես է, որ ես Հայկունու կամ ուրիշի ժողովրդական նյութերից «բառացի» առնում եմ ու իմ առած «բառացին» «հեշտ փառք է վատակում ու գումարներ է դիզում...», իսկ բնագիրը, իսկականը չի կարողանում, և կամ իրենք ու Հայկունիները չեն կարողանում անել նույնը:

Այ գարմանալի «բառացի»...

Այ հանելուկ...

Եվ ես խորապես համոզված եմ, որ էս «լուրջ կրիտիկոսներից» սկսած մինչև իրենց խմբագիրները, սրանց խղճուկ բանականությունը էստեղ շշմում է ու մոլորվում, ու ընդմիշտ էլ կմնա նույն ցավալի դրություն մեջ:

Եվ անշուշտ սրանց կարելի էր շատ բան ներել:

էս տեսակ մարդիկ արևելյան ու արևմտյան բոլոր մեծ առակախոսներին մի Ելոպոսի, մի Փեդրոսի, մի Լաֆոնտենի, մի Կոիլովի, մի Ուլիմպիանոսի, մի Գյոթեի և նմաններին միշտ կարող էին անվանել գրական շանտաժիստներ, բանագողներ, ավերիչ ժանտախտներ և ինչ որ բերանները գար, և ճշմարիտ որ նրանց գրքերն ու գրվածքներն էլ բոյկոտի ենթարկել և հայհոյելով գրել սովորեցնել:

Չէ որ ամենքն էլ ունին նույն առակները, նույն ազգավներն իրենց պանիրներով, նույն խորամանկ աղվեսներն ու գայլերը, նույն թակարդները, նույն օձերն ու նույն գյուղացիները, և այլն, և այլն: Եվ նրանք ի՞նչ պիտի անեին: Կամ պետք է աղաղակին— Տե՛ր, թող սրանց մեղքերը, որովհետև շփոթեն ինչ են անում ու ինչ են ասում, և կամ թե չէ պետք է իրենց առակներին նոր առակ ավելացնեին, թե ինչպես էլ սոխակին երգել է սովորեցնում և կամ թե ինչպես խոզը պալատն է ընկնում և միայն աղբ է տեսնում էնտեղ:

Անկասկած կարելի էր էս տեսակ մի բացականչությունով

կամ մի առակով փակել սրանց հետ խնդիրը, եթե միայն տգիտությունը լիներ մեզ զբաղեցնող առարկան. բայց ես ավելի հոգու շարունակումն ու սրտի վատությունն եմ նկատում էստեղ և ճիշտ դեմ է, որ ստիպված եմ գրիչ առնելու էս անհարմար օրերում:

Եվ իսկի նոր չի ու նորություն չի մեզանում գրական անճաշակությունն ու տգիտությունը միացած փոքրիկ հոգու շարունակյալը, որ ես պատահմունքով «դրամբյանիզմ» անվանեցի, և որից ոմանք, սխալվելով, ենթադրում են, թե էս ամենը օւղղած է մի որևէ խեղճ ու կրակ Դրամբյանի դեմ: Ո՛չ, ով կզանա ու կթևրթի մեր մասնուրի հին տարիները, կտեսնի, որ առաջ էր վատ երևույթը, որ ես «դրամբյանիզմ» անվանեցի պատահմունքով, շատ ավելի խոշոր ու ավելի բազմաթիվ ներկայացուցիչներ է ունեցել, և միայն այժմ նրանք սակավացել ու մանրացել են, դարձել Դրամբյաններ ու Ս. Հ.-եր:

Սրանից մի քանի տարի առաջ ո՛ր հայ գրողի երեսնամյակը, քառասնամյակը, կամ հիսնամյակը տոնում էին— երգվում էր, թե էսքան տարվա ընթացքում իր գրվածքների վրա մի լուրջ հոգված շեմ կարդացել ու բացի հայհոյանքը ուրիշ բան չեմ լսել:

Պետք է վերջանա էս գարշելի երևույթը, իսկ եթե նրան վերջ չի լինիլ — վերջ չի լինիլ և գրական մարդու ցատումին ու հարվածներին: Ետտ հին ու սուրբ կոխ է սա:

Սակայն, «Մուրճի» օրերից սկսած մեր մեջ երևում են գրական հասկացողության ու ճաշակի տեր մարդիկ, որոնք քննադատության մեջ դնելով գրական-զեղարվեստագիտական խիստ պահանջներ, միաժամանակ իրենց հետ բերում են լուրջ վերաբերմունք ու հարգանք դեպի գրողն ու գրադասությունը:

Տարեցտարի ավելանում է սրանց թիվը, տարեցտարի ուժեղանում են սրանք, սրանց հետ եկել է և մի նոր, թարմ ու ճաշակավոր բազմություն, և սրանց միջից պիտի պայթի ու որոտա էն դատող ու զատող բարկությունը, որ ամեն մի ժողովրդի գրականության մեջ, որոշ շրջանում, գալիս է պայթում բոլոր մեծ ու փոքր, հին ու նոր Դրամբյանների գլխին ու մաքրում, պարզում ժամանակաշրջանի հաշիվները:

Ինձ թվում է, որ հետո չի էդ օրը մեր մեջ:

«Новое время»-ն գոհ է, որ հայերը նորից վերադառնում են դեպի Ռուսաստան, որից երես էին դարձրել վերջին 35 տարին հատկապես նրա պարագլուխները, և, ողջունելով հայ ժողովրդի էս վերադարձը դեպի հին ավանդությունները, ասում է. «հայկական նոր տրամադրության անկեղծությունը դեռ պետք է փորձենք»:

Առած կա, թե վատ մարդը զատկին էլ վատ կլինի: Հիմի պահն է: Ժողովուրդների բարեկամության տոնական օրն էլ հայտնվում է դարձյալ վատ դերում — փորձի կերպարանքով: Եվ նրա հետ մարդ ուզում է էսպես խոսել:

Ո՞ւմ եք փորձում, ո՞վ փորձիչ:

Հայ ժողովրդի՞ն: Բայց դուք ինքներդ եք հաստատում, թե նրա մեջ ամբողջ է կղել բնական ձգտումը դեպի Ռուսաստանն ու միշտ էլ մնացել է անփոփոխ:

Հին ավանդություններն ու պատմությունն եք փորձում:

Բայց նրանք մնացել են անասան հայ ժողովրդի հետ միասին: Էդ էլ եք դուք վկայում...

Սակայն ես ուզում եմ մի ուրիշ խոսք ասել հին փորձիչին: Ուզում եմ ասել. դուք ո՞վ եք, որ ուզում եք մեզ փորձի ենթարկել: Մի՞թե դուք եք հանդիսանում էն Ռուսաստանը, որին վերադարձել են հայերը, մի՞թե դուք նրա հարազատ ներկայացուցիչն եք: Մի՞թե դուք նրա ոգու թարգմանն եք:

Ո՛չ: Երբե՛ք: Մենք եկել ենք ու գալիս ենք դեպի Մեծ Ռուսաստանը, դեպի մեծ Ռուս ազգը, և եթե սիրել ու հարել ենք — նրան, ոչ թե ձեր ու ձեզ նմաններին, որոնք միշտ եղել են հոգր ու անսիրելի: Եթե մենք միացած ենք անբաժան, ուսական պետությանն ենք միացած, նրանից ենք տեսել բարիքներ, նրա հետ ենք կապել մեր հույսերը, նրան էլ ծառայել ենք հարազատի նման ամեն ասպարիզում: Եվ վկայությունները շատ են:

Իսկ ձեզանից մենք ի՞նչ ենք տեսել, ձեզ հետ ե՞րբ ենք լղել միացած ու բաժանված, որ էս օր էլ ետ գանք դեպի ձեզ ու դուք էլ դեռ մեզ փորձեք:

Եթե վերադառնում ենք հին լավ ավանդություններին,

դուք լավ ավանդություններ չունեք, և դարձյալ խոսքը ձեր ու ձեզ նմանների մասին չի:

Եթե մենք կապված ենք եղել ու էսօր էլ նորից՝ ավելի գիտակցաբար, ամրապնդում ենք կապը, էդ ոուս լավ մարդու հետ է, որի սրտի բարությունն ու մեծությունը վայել են իր հայրենիքի մեծությանն ու ազգային ուժին, ոչ թե ձեզ հետ, որ միշտ եղել եք փոքրոգի ու նեղսիրտ և խոսել եք միայն խորթությունից ու թշնամությունից:

Եվ էսօր էլ, երբ խոսք կա հին ավանդությունների, սիրո ու լավ կապի մասին — փորձիչը խոսք չունի: Նա միայն կարող է մտքեր պղտորել ու վատ զգացմունքներ առաջ բերել:

— Ետ գնա, քո օրը չի էս օրը: Թող առաջ գա նա, ով կարող է Մեծ Ռուսաստանը հանդես բերել հոգու մեծությամբ ու սրտի բարությամբ. նա, որ իր ուժով երկրներ նվաճելու հետ իր առաքինություններով էլ ժողովուրդների սրտերն է նվաճում:

1913

ՎԱՀԱՆ ՏԵՐՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Մեր սիրելի երիտասարդ դասախոսը, որ էնքան բանաստեղծորեն խոսեց մեր տաղանդավոր բանաստեղծ Տերյանի քննարի մասին, հայտնեց նաև մի շատ տարածված կարծիք, թե Տերյանը զուրկ է տեղայնությունից և հարազատ չի մեզ: Ինձ թվում է, որ էդ կարծիքը սխալ է: Չմտնելով քննության մեջ, թե ինչ է հարազատությունը և ինչ նշաններով է արտահայտվում, ես գտնում եմ, որ նրա թախիծն ու երազները, մշուշն ու աղջամուղջը խորթ չեն մեր երկրին ու մեր հոգուն: Ես եղել եմ էն երկնքին մոտիկ լեռնադաշտում, ուր ծնվել է Տերյանը, և կարծես թե նա լիքն է էն մշուշային թախիծով ու քնքույշ երազներով, որ բնորոշում են մեր տաղանդավոր բանաստեղծի քնարը: Վերջապես թախիծն ու երազը խորթ չեն հայի հոգուն, և մենք շատ երապկոտ ժողովուրդ ենք:

Խոսեց և նրա երգերի մոնոտոնության մասին, և լսողները շատ հեշտ կարող են սրա տակ ձանձրալին հասկանալ: Բայց

դուք, ինչպես ամեն բանաստեղծի, էնպես էլ Տերյանի լավ երգերն առեք և բանաստեղծական գոհարներ կտեսնեք, որ ձեզ բարձր գեղարվեստական հաճույքներ կտան: Չպետք է մոռանալ և էն հանգամանքը, որ Տերյանը դեռ տվել է իր առաջին շրջանի երգերը, և այժմ ինչպես ինքն է գրում իր վերջին երգերից մեկում, նոր արշալույս ու նոր հորիզոն, նոր կյանք է ողջունում:

1913

ԱՆՓԻՏԱԿԻՑ ՔՇՆԱՄԻՆԵՐ

Վրացական «Закавказская речь» թերթը նեղացել է, թե ինչու Հայ Գրողների ընկերությունը դիմել է ուր հարկն է, որ Թիֆլիսի մեծ երգչի արձանի բացման առիթով Ալրի կամ Թուրքի մեյդան կոչված հրապարակը, որի կողքին թաղված է Սայաթ-Նովան, կոչվի Սայաթ-Նովայի հրապարակ: Սրա մեջ նկատում է հայերի կողմից Թիֆլիսը զավթելու դիտավորություն և վատ կրքեր է հուզում:

Նույն տեսակ աղմուկ է բարձրացրել ռուսական «Голос Кавказа» թերթը ևս. Աբովյանի արձանի համար, որ կանգնելու է Երևանում, և հորդորում է իշխանությունը՝ ետ առնել իր տված իրավունքը:

Սրանով, իհարկե, իբրև թե ամեն մեկն իր հայրենիքի ու ազգի շահն է պաշտպանում հայերի դեմ: Մի կողմ թողնելով ավելի լայն հայացքը, ես ուզում եմ նկատել, թե էս մարդիկ չավ էլ չեն հասկանում, թե ինչի դեմ են խոսում, և հենց թեկուզ իրենց նեղ տեսակետից էլ եթե առնենք խնդիրը— դեմ չպետք է լինեին ո՛չ մեկը և ո՛չ մյուսը:

Ահա թե ինչո՛ւ

Խ. Աբովյանը մի մոլեռանդ ռուսասեր էր, նրա «Վերք Հայաստանին» հայ ժողովրդի տանջանքի ու տենչանքի արտահայտությունը լինելով հանդերձ՝ միաժամանակ մի ողիվորված շատագովություն է ռուս ազգին ու նրա պետական ուժին, և առաջ քաշել Խ. Աբովյանին, կնշանակի հայերի մեջ

արծարծել նաև սեր ու համակրանք դեպի ռուս ազգն ու ռուս պետությունը:

Եվ հանկարծ... էս մարդու հիշատակին դեմ է մի ռուս թերթ:

Ի՛նչ խոսք, որ սա չի հասկանում, թե որտեղ և ում դեմ է խոսում, և եթե շար է, նեղսիրտ ու փոքրոգի, ապա նաև անգիտակից է, և անգիտակից թշնամի ամենից առաջ իր ազգին ու հայրենիքին, որովհետև ուզում է ետ մղել իր ազգի ու հայրենիքի մեծ բարեկամներին և նրանց տեղը ստեղծել՝ թշնամիներ:

Նույնը պետք է ասեմ և վրացական «Закавказ. речь»-ին:

Ո՞վ է Սայաթ-Նովան: Մի երգիչ, որ համազոր ուժով ու սիրով երգել է թե հայերեն, թե վրացերեն և թե թուրքերեն: Մի համակովկասյան երգիչ, որ, ամենից քիչ երգել է հայերեն: Մի երգիչ, որին վրաց գրականության պատմությունը անվանում է՝ Վրաստանի երգիչ: Բաց արեք վրացի պրոֆեսոր Ա. Խախանովի վրաց գրականության պատմության երրորդ գիրքը, էջ 218, կտեսնեք Սայաթ-Նովա վերնագրով մի առանձին գլուխ, որ սկսում է հետևյալ տողերով.

«Աղա Մահմադ խանի Թիֆլիսն առնելու ժամանակ սպանվեց Վրաստանի նշանավոր երգիչ Սայաթ-Նովան: Նա Հերակլ 2-րդ թագավորի պալատական աշուղն էր (Трубадур): Հարյուր տարի սրանից առաջ Սայաթ-Նովայի անունը հին Թիֆլիսում հռչակված էր ամենուրեք, թագավորական պալատից սկսած մինչև արհեստավորի խրճիթը»:

Եվ վերջանում է հետևյալ խոսքերով.

«Սայաթ-Նովան միայն վրացերեն չի գրել, այլ նաև հայերեն ու թուրքերեն, որ դեռ մնում են անտիպ»:

Սրա մեջ ասված է միայն, որ նա ծնունդով հայ էր և գրել է նաև հայերեն:

Եվ էս տեսակ մի երգիչ, որին հենց իրենց-վրացիների ասելով ամենից շատ իրենք են երախտապարտ, մի երգիչ, որ հավասար թանկ է Կովկասյան բոլոր ազգությունների համար, մի երգիչ, որ միայն սեր է արծարծել դեպի վրացին, վրացական լեզուն ու Վրաստանը, մի երգիչ, որ Թիֆլիս քաղաքի ամենամեծ պարծանքներից միին է, հանկարծ իր հիշատա-

կով, իր անվանը տված հարգանքով շարժում է վրացիներից ումանց մաղձն ու զայրույթը:

Եվ էդ ումանք, թեկուզ և ազգով վրացի, հայերին նեղսիրտ, շարակամ լինելուց առաջ Վրաստանի թշնամիներն են, որովհետև վեր են կենում ու խոսում նրա հոյակապ ու սիրելի երգիչներից մեկի — Սայաթ-Նովայի անվան ու հիշատակի դեմ:

Այո, սրանք անգիտակից թշնամիներ են ամենից առաջ հենց իրենց հայրենիքին ու ազգին, ոուս թերթը՝ ոուսին ու Ռուսաստանին, վրացական թերթը՝ վրացուն ու Վրաստանին: Եվ սրանց համար է ասված, թե՛ պետք է ներել, որովհետև չեն հասկանում, թե ինչ են անում:

1913

Թ. ԹՈՐԱՄԱՆՅԱՆԻ ԳԱՍԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԱՌԹԻՎ

Վերջին տարիներս մեզանում հաճախ է խոսք լինում, թե մենք մեզ չենք ճանաչում և աշխատում ենք մեզ ճանաչել: Մեզ ճանաչելու համար հետզհետե մեր շուրջը դիտելով ու մեր ներկան քննելով հանդերձ ուղում ենք թափանցել մեր անցյալը, ուսումնասիրել մեր հին կյանքն ու պատմությունը:

Վաղուց ասված է, թե ացյալի պատմությունը մի լուսատու լապտեր է, որ ամեն մի ժողովուրդ ձեռքին պետք է ունենա իր ճամփեն անմոլոր գնալու համար:

Մենք, որ մեծ անցյալի ու մեծ ավերակների վրա ապրող մի ժողովուրդ ենք, և ինքներս արդեն ըստ ամենայնի ավերակ ժողովուրդ, նոր ենք ջանքեր անում մեր խորտակված կյանքը վերականգնելու, վերանորոգելու և վերակազմելու, անցյալի ուսումնասիրությունը մեզ համար ունի առանձին կարևորություն, և մեր մեծ արժեքներն ու պարծանքներն էլ անցյալի մեջ են: Անցյալի մեջն են և մեր արվեստները: Գեղեցիկ արվեստները ֆիզիկական ու բարոյական առանձնահատուկ պայմաններ մեջ ծնվելով ու զարգանալով՝ հատկանշում են ամեն մի ժողովրդի ինքնուրույն ազգային ոգին:

Գեղեցիկ արվեստների մեջ առանձին կարևորություն է

ունեցել միշտ ճարտարապետությունը, որ կոչված է «բարացած երաժշտություն» և, միանգամ ընդմիշտ քարացած կանգնած, չի աղավաղվում ժամանակի հետ:

Սրանից տասնյակ տարիներ առաջ մենք չէինք համարձակվիլ մտածելու, թե ունեցել ենք առանձին հայկական ճարտարապետություն, բայց էսօր, շնորհիվ գիտնականների ուսումնասիրության, ոչ թե լուրջ խոսք է լինում հայոց ճարտարապետության մասին, այլև նրա ազդեցության, որ արևլ է շրջակա ժողովուրդների ու հեռավոր ումանական ճարտարապետության վրա, հարկավ, ինքն էլ իր հերթին ազդվելով օտարներից:

Նոր է էս հայտնությունը ինչպես լուսավոր աշխարհքի, էնպես էլ մեզ համար: Եվ էսօր առաջին անգամն է, որ հայ ճարտարապետը հրապարակավ պետք է խոսի հայ ժողովրդի հետ հայոց ճարտարապետության ու նրա ազդեցության մասին, և դուք առաջին ունկնդիրներն եք, որ լսում եք նրան:

Մեր հարգելի պ. Թորամանյանը, որ վկայված է Պետերբուրգի Կայսերական Գիտությունների Ակադեմիայից և Վիեննայի համալսարանից և էս տարի մրցանակ է տարել, տասնևմեկ տարի է լուռ ու անդադրում ուսումնասիրում է հայոց ճարտարապետությունը՝ ավերակից ավերակ անցնելով: Տասնևմեկ տարուց հետո՝ էսօր էնքան նյութ է հավաքել, որ Ստրիժեգովսկու նման հեղինակավոր մի գիտնականի իրավունք է տալիս մեր մասին գրելու էն տողերը, որ այժմ կկարդացվեն ձեր առաջ: «Պատիվ ձեր մեծ ազգին», բացականչում է հայոց ճարտարապետության բեկորների առջև հիացած գիտնականը և խոստանում է հայտնություն անել Եվրոպայի առջև:

Եթե հիշենք, որ մի սառն ու լուրջ գիտնական է էսպես ոգևորված մեզ մեծ ազգ անվանողը Եվրոպայի առջև, և եթե հիշենք, որ Եվրոպան էլ լուկ աշխարհագրական տերմին չի, այլ ժամանակակից քաղաքակրթության հայրենիքը, կարող ենք շափել պ. Թորամանյանի մեծ ծառայությունը և մեր հին կյանքի ու անցյալի ուսումնասիրության նշանակությունը, անցյալի, որ մեր նոր կյանքի ու կուլտուրայի պատվանդանն է:

Մտտիկ առաջիկայում Հայոց Գրողների Ընկերությունը կազմակերպելու է մի մեծ երեկույթ, ուր կցուցադրվեն հայ ճարտարապետության նմուշները մոզական լապտերով ու նկարներով և պ. Թորամանյանը կխոսի ավելի հանգամանորեն, իսկ առայժմ էսօր կանի ընդհանուր տեսությունը և տեղեկություններ կտա մեր նախնիքների բարձր ճաշակից ու մեծագործություններից:

Փառք ու պարծանք մեր նախնիքներին, որ աշխարհավերհ հեղեղների դիմագրավելով հանդերձ, մեզ համար էսքան շքեղ ժառանգություն են թողել, և փառք ու պարծանք գիտության մարդկանց ու հատկապես պ. Թորամանյանին, որ մեր ազգի մեծությունը, ավերակների միջից հանելով՝ ոչ միայն օտարների առջև, այլև մեր աչքում դարձնում են մեզ մեծ ու հարգելի:

1914

ԹՈՐԱՄԱՆՅԱՆԻ «ԹՆԴԱՆՈՒՅՆԵՐԸ»

Եվրոպական նշանավոր գիտնականներից մինը մի մասնավոր նամակում գրում է. «Մենք ճանապարհ ենք բաց անում Թորամանյանի թնդանոթների համար»:

Հարգելի գիտնականը թնդանոթներ անվանում է պ. Թորամանյանի ուսումնասիրած ու հավաքած հայկական ճարտարապետության էն նմուշներն, որոնք մոտիկ ապագայում իրենց լուսաբանություններով լույս պետք է տեսնեն Եվրոպայում: Ասում են, «գրանք նորություններ են Եվրոպայի համար» և առայժմ դրանց մասին ծանոթություններ են տալիս Եվրոպացիներին, այսինքն՝ ճանապարհ են բաց անում Թորամանյանի թնդանոթների համար:

Այո՛, դրանք թնդանոթներ են, հայկական թնդանոթներ, և թնդանոթներից ամենաազնիվն ու ամենաուժեղը, որ երբևից հնարել է մարդը. իրենց հետ տանում են հայ ժողովրդի ստեղծագործական հանճարն ու կարողությունը, զնում են հայերի համար նվաճելու լուսավոր ազգերի սերն ու համակրությունը, հարգանքն ու հիացումը:

Հիրավի, գործիչները նման են զորավարների և նրանց

գործերը թնդանոթներ են, որոնք տիրում են հեռավոր տարածություններ ու ժամանակներ:

Բայց ինչպես ամեն մի զորավար հաղթությունը տանելու համար իր թիկունքին պետք է ունենա մի ոգևորված ու հավատարիմ բազմություն, էնպես էլ ամեն մի գործիչ պետք է զգա ու գիտենա, որ դատարկ չի իր թիկունքը:

Ահա վեր է կացել հայ ճարտարապետ պ. Թորամանյանը, ցույց է տալիս Եվրոպային ու ամբողջ աշխարհին, թե գոյություն է ունեցել հայկական ինքնուրույն ճարտարապետություն և հայկական ինքնուրույն ճարտարապետությունը ազդել է թե՛ հարևան և թե՛ հեռավոր ազգերի ճարտարապետությունների վրա, ստիպում է ազգերի արվեստների պատմության մեջ նոր գլուխ բաց անել «հայոց ճարտարապետությունը» վերնագրով:

էդ նորություն է Եվրոպայի համար, ասում են Եվրոպացիք, բայց էդ նորություն է և մեզ համար, հայերիս համար, պետք է խոստովանենք մենք:

Ահա էդ շատ նշանավոր նորությունն է, որ շարաթ երեկոյան Հայ Գրողների Ընկերության նախաձեռնությամբ կազմած հրապարակական երեկույթում Թիֆլիսի հասարակության առաջ պետք է պարզի ու լուսաբանի պ. Թորամանյանը, բազմաթիվ վկայություններով ու նկարներով:

Թող գան հայերը, տեսնեն ու համոզվին, որ իրենք միշտ էն ժողովուրդը չեն եղել, ինչ որ հանդիսանում են էսօր, տեսնեն, թե ի՞նչ են ստեղծել ու ի՞նչ են եղել անցյալում, որ հոգեպես բարձրանան ու լցվին հավատով դեպի իրենց ազգային ապագան:

1914

ԼՍԵՆՔ ՈՒ ՊԱՇՏՊԱՆՆԵՐ

Արդյոք մի որևէ ձևով վճովե՞ց հայկական հարցը: Արդյոք վերացա՞վ տաճկահայոց ամբողջ կյանքի ու մեր հոգու վրից էդ կարմիր մղձավանջը, և կարո՞ղ ենք այսուհետև հանգիստ սրտով նվիրվել կուլտուրական աշխատանքի ու ավելի լայն խնդիրների:

Ո՞վ գիտի:

Չնայելով հայոց կաթողիկոսի ու նրա ներկայացուցիչ Նուբար փառալի շնորհավորական հեռագիրներին՝ հայ ժողովուրդն ամեն տեղ էս հարցի դեմը խորին լուսթյուն է պահպանում, ծանր ու իմաստուն մի լուսթյուն, իսկ երիտասարդ թուրքերը Ռուսաստանի սահմանի վրա զորահանդեսներ են սարքում:

Այո՛, գուցե վերջը չի հայկական հարցի, բայց վերջի սկիզբն է: Գրա համար էլ խորհրդավոր է և էն համատարած խլրտումը, որ նկատվում է մեր կուլտուրական կյանքում— դպրոցի, գրականության, գիտության— ուսումնասիրության ու բանասիրության ասպարեզներում: Սա էլ սկիզբն է մի նոր վերածնության, որի համար մենք բավականաչափ ուժեր ու տրամադրություն ունենք արդեն:

Հինը ենթարկվում է վերագնահատության, առաջադրվում են նոր, ավելի լուրջ պահանջներ, և ամենամեծ պահանջը— պարզ հասկանալ...

Պարզ հասկանալ մեր երկիրը, մեր ժողովուրդը, մեր գրականությունը, մեր պատմությունը ու մեր պատմական հիշատակարանները: Մինչև այժմ նրանք խոսել են մեր սրտի հետ, և մենք սիրել ենք զգացմունքով, անխտիր, հախուռն, առանց հասկանալու, թե ինչ ենք սիրում և ինչու. այժմ գալիս է ժամանակը՝ նրանց էությունը ներհմուտ լինելու, նրանց լեզուն ու միտքը հասկանալու, և էդ նպատակի համար են և Գրական Ընկերություն, և Ազգագրական Ընկերություն, և Պատմական Ընկերություն, և Երաժշտական Ընկերություն, և ուրիշ նման ընկերություններն ու մասնավոր ձեռնհաս անհատների ջանքերը:

էս ճանապարհին ինչպես կլինեն շատ հայտնություններ ու հիացումներ, էնպես էլ անխուսափելի են շատ հիասթափություններ, բայց էս է հաստատ ու ճշմարիտ ճանապարհը:

Պետք է լռեն վերջապես բոլոր նրանք, որոնք խոսել են ու խոսում են և՛ ժողովրդի անունից, և՛ գրականության, և՛ պատմության, և՛ գիտության— միմիայն մարդկանց աչքերին թող փշելու համար, կուրացնելու ու իրենց ետևից տանելու համար, իրենց համար առաջնորդողի դիրք ու աթոռ ստեղծելու համար, և հանդես պետք է գան ու խոսեն նրանք, որոնք

երկար տքնություններ ու ճգնություններ ուսումնասիրել ու սիրել են իրենց խոսքի առարկան և չեն գալիս դիրք ու աթոռ գրավելու հավանություններ, այլ գիտությունն ու գեղարվեստին ծառայելու պատրաստակամություններ:

Ահա՛ նրանցից մեկը— ճարտարապետ Թորոս Թորամանյանը, տասնումեկ տարի լուռ ու մունջ, հազար ու մի զրկանքով հայոց ավերակներում աշխատելուց հետո՝ վերջապես հրապարակ է գալիս խոսելու հայոց ճարտարապետության, նրա ծագման, զարգացման ու հարաբերությունների մասին: Եվ երկու նշանավոր գիտնականներ էս տեսակ վկայություն են տալիս նրա համար: Պրոֆ. Մառը իր մի աշխատության մեջ վկայում է, թե պ. Թորամանյանը հայոց ճարտարապետության հիշատակարանների լեզվի առաջին ուսուցիչն է: Իսկ պրոֆ. Ստրիժիգովսկին ասում է. ճարտարապետ Թորամանյանը մի մեծ նորություն է բաց անում ամբողջ Եվրոպայի առջև:

Պետք է լսենք ու պաշտպանենք հայոց ճարտարապետական հիշատակարանների լեզվի առաջին ուսուցիչին, թե ու թեկունք պետք է լինենք մեր ազգային ստեղծագործական հանձարը հայտնագործող ու վեր հանող վաստակավորին:

1914

ՄԻ ՊԱՅՄԱՆ ՇԻՐԻՄ

Մայիսի 15-ին, Համբարձման օրը, վարդի ու ծաղկի սոսնիս, Թիֆլիսի հասարակությունը, առանց ազգի ու ցեղի խլրտության, Հայ Գրողների Ընկերության առաջնորդությունով վարդերով ու երգերով գնում է բաց անելու Սայաթ-Նովայի մահարձանը: Գերեզմաններ կան, որ պայծառ են, ժպտում են մարդկանց սրտերին մի խոր հավիտենական ժպտով ու ասես թե կյանքը հաշտեցնում են մահի հետ:

էս տեսակ մի պայծառ գերեզման է Սայաթ-Նովայի գերեզմանը. ամբողջովին հաշտություն ու սեր է բուրում, ու միշտ էլ ժպտալու է ամենքին, ու միշտ էլ կրկնելու է ամենքին.

«Աշխարհքըս քունն ըլի, ի՞նչ պիտի տանի՝
Աստված սիրե՛, հոքի սիրե՛, յա՛ր սիրե՛...
Աստված դիպունանցըն մին հոքի էրիտ՝
Աղկատ սիրե՛, ղոնաղ սիրե՛, տար սիրե՛...»

Միշտ կենդանի մի գերեզման, և կենդանությունը պայ-
ծառ, քնքույշ ու ազնիվ:

1914

ԱԶԳԵՐԻ ՊԱՏԵՐԱԶՄՆ ՈՒ ԻՐԵՆՑ ԳՅՈՒՑԱԶՈՒՆՆԵՐԸ

Ինչպես որ մեծ հեղեղներից առաջ տոթը ճնշում է մարդ-
կանց շնչառությունը, էնպես էլ մեծ պատերազմից առաջ գրե-
թե ամեն մարդու սիրտ ճնշում էր մի ծանր նախազգացում:
Պայթեց փոթորիկը, ծանր զգացումին հետևեցին ահավոր
ցնցումն ու իրարանցումը, էս էլ կանցնի, կբացվի պայծառ
արևն ու կծպտա խաղաղ օրը, բայց անցնելուց հետո էլ՝ եր-
կար-երկա՛ր քաղաքակիրթ աշխարհը կզբաղվի էս շտեմնված
պատերազմով, և, թեքևս, էս սեպտեմբերը, որ ապրում ենք,
պատմության մեջ մնա սոսկալի սեպտեմբեր»: Ասես թե էլ
սովորականի նման զորաբանակներն ու զորավարները չեն, որ
վեր են կացել իրար վրա, այլ ժողովուրդները իրենց ամբողջ
ազգային ուժով ու կարողությամբ: Եվ որովհետև ամեն մի
ազգի ուժն ու ոգին մարմնացած է իր ազգային էպոսի մեջ՝
ամենայն համարձակությամբ կարող ենք էսպես ասենք, թե
ազգերի գլուցազունները՝ սերբական Մարկոն, գերմանական
Զիգֆրիդը, ֆրանսիական Ռոլանդը, անգլիական Բեովուլֆն ու
ռուսական Մուրոմցի Իլյան են առասպելների աշխարհից
դուրս եկել մեր առաջ, ու մենք հանդիսատես ենք էս հեղանների
կովին: Եվ տեսեք թե ի՞նչքան հարազատ են գծված ու բնո-
րոշված սրանցից ամեն միսը:

Ահա՛ գերմանական հուժկու Զիգֆրիդը, վեր է կացել՝ ձեռ-
քին չեղած ամբողջյան էն սուրը, որ դարբնել էր աշխարհի
անհուն գանձերը մենակ տիրապետելու համար...

Ահա ֆրանսիական քաջարի Ռոլանդը, որտապահն հնչեց-
նում է իր հսկայական օլիֆանտը (փողը), օգնության է կան-

չում ֆրանսիական ազգային զորությունը՝ պաշտպանելու
չքնաղ Ֆրանսիան...

Ահա սերբական ըմբոստ կտրիճը, արքայազն Մարկոն, իր
Շարացի վրա, աչ ու ձախ շարդելով՝ խորը մեխվել է սերբա-
կան ազգից շատ ավելի ուժեղ թշնամու բանակը, լողում է
արյան մեջ ու աղաղակում է՝ էլ ի՞նչ անեմ, տե՛ր աստված...

Ահա անգլիական ազգային հսկան, ծերունի Բեովուլֆը,
որ լողալու արտասովոր ընդունակություն ունի և մայր ցա-
մաքն է դուրս գալիս՝ ժողովուրդներին իր հրեղեն շնչով
սպանող մի վիշապի դեմ, նրան խորտակելու և նրա հավաքած
անհուն գանձերը իր ազգին տանելու համար...

Ահա վերջապես և ռուսական վիթխարի գյուղացին, ծերուկ
Իլյա Մուրոմցին, հայրենիքին սպառնացող վտանգի առջև
Владимир Красное Сольнышко-ից, իշխանավորից զուր
տեղը իրեն հասած վիրավորանքը մոռացության տալով՝ իր
հսկայական գուրզն առած գնում է անմեղ ժողովուրդն ու եր-
կիրն աղատելու վայրագ թշնամու արշավանքից: Գնում է
անհոգ, հանդարտ ու բարի, բայց հզոր ու հաստատուն:
Գնում է իր «խապերացունների» հետ:

Ի՞նչ խոսք, որ ցաք ու ցրիվ են անելու դերմանական Զիգ-
ֆրիդի տիրած ինչերն ու տիրապետելու տենչերը, և անգլիա-
կան Բեովուլֆը շատ գանձեր է տանելու իր կղզին: Ի՞նչ կաս-
կած, որ էս հսկանների զարկերի տակ մասնատվելու են Եվ-
րոպայի Թուրքիան՝ Ավստրո-Հունգարիան, և Ասիայի Թուր-
քիան, որոնք նույնիսկ էս դուցազունների շարքում չունեն
իրենց ներկայացուցիչը, և շատ բարիքների ու ազատութուն-
ների հետ միասին, որ հետևելու են մեծ պատերազմին, վերջ-
նականապես պետք է վճովի և Տաճկահայկական հարցը, կամ,
եթե կուզեք, արդեն վճոված է: Զե՛ որ Մուրոմցի հսկայի
«խապերացունների» թվում է և մեր Սասունցի Դավիթը, եթե
միայն Մարա Մելիքի փորած հորից լուս աշխարհ է դուրս եկել:

Սակայն ավելի մեծը կա: Ժողովուրդների էպոսներն առ-
հասարակ վերջանում են խաղաղության սրբազան խոսքով:
Եվ ճշմարիտ որ, էս պատերազմից հետո շտեմնված թափով
ու ծավալով է բարձրանալու խաղաղության հարցը, այլև նրա
հետ միասին մի ուրիշ մեծ հարց, քաղաքակիրթ մարդու հար-
ցը, կամ, ավելի ճիշտ մարդու հարցը, որ իր գաղանություն-

ներով հարուցանում է լուսավոր գերմանացին ու դարձնում է լուրջ խորհրդածության նյութ աշխարհքի բոլոր ազգերի և բոլոր մտածողների համար:

1914

ԿՈՎԿԱՍԻ ՄԵԾ ՈՐԴԵՂԻՐԸ

Մեծ է Կովկասը, արևելքի ու արևմուտքի, հարավի ու հյուսիսի մեջտեղը կանգնած հին հսկան: Աստվածների բնակավայրեր են եղած նրա երկնահաս բարձունքները: Նրանց ստորոտների վրա հանգչում են հին դարերի ու հին ժողովուրդների գերեզմաններն ու ավերակները, տներն ու տաճարները, իսկ գագաթները շողշողում են ամպերից վերև, արևին ու աստղերին ճակատ առ ճակատ:

Մեծ բան է՝ լինել Կովկասի որդեգիրը:

Հազար հազարավոր մեծ մարդիկ են եկել անցել Կովկասից, բայց նրանք բոլորը Կովկասի համար եղել են անցվորներ, ախոյաններ, բարեկամներ կամ հյուրեր, իսկ որդեգիր՝ նա շատ քիչ է ունեցել:

Էդ երջանիկ, քչերիցն եղան երկու մեծ ոռու բանաստեղծները — Պուշկին և Լերմոնտով: Արդյոք հարավի ու լեռնաստանի ժառանգական արյունն էր, որ խոսեց նրանց մեջ, թե՞ ջինջ ու հստակ մեծություններին ձգտող բանաստեղծի ոգին, ո՞վ գիտի, թերևս և՛ մինը և՛ մյուսը, բայց նրանք Կովկասը սիրեցին, Կովկասը նրանց, ու մեծ Կովկասին մեծ որդեգիրներ եղան հավիտյանս հավիտենից:

Եվ ահա էսոր լրանում է ոռու ժողովրդի մեծ զավակներից մեկի և Կովկասի մեծ որդեգիրներից մեկի — Լերմոնտովի ծննդյան հարյուրամյակը¹, բայց պատերազմի պատճառով հետաձգվում է էդ պայծառ, էդ ցանկալի տոնը, որ Ռուսաստանի մի ծերից մինչև մյուսը պետք է խնդացներ ու թնդացներ շատ միլիոնավոր սրտեր ազնիվ ու խոր զգացմունքներով առանց ազգի ու ցեղի խտրության:

Հետաձգվում է:

Ամենքս էլ հետաձգում ենք: Բայց բոլորովին լուել չի կարելի: Եվ ինձ էսոր համակում է մի խոր տխրություն:

Ես մտածում եմ. ինչպես էսոր ժամանակը չի, որ Լերմոնտովի ծննդյան հարյուրամյակի տոնը գար, էնպես էլ հարյուր տարի առաջ ժամանակը չէր, որ Լերմոնտովը ծնվեր. բայց ծնվեց. ծնվեց հրեղեն ու վերասլաց մի հոգով, որ դեռ մանկուց շնաշխարհիկն էր որոնում հարյուր տարի առաջ եղած Ռուսաստանի միջավայրում, շինովնիկական մունդիրի մեջ ամուր սեղմված ու շորացած մի կյանքում, ու կատարվեց մեծ դրաման:

Այո՛, դրամաների մեջ ավելի զարհուրելին չկա, քան մեծ հոգիների դրաման:

Լերմոնտովն էլ ունեցավ իր մեծ ընկերի — Պուշկինի ճակատագիրը: Մինը եղավ որպես ջինջ երկնակամարի վրա թափառող մենակ մի ամպ:

Последняя туча рассеянной бури!
Одна ты несешься по ясной лазури,
Одна ты наводишь унылую тень,
Одна ты печалишь ликующий день!

Մյուսը՝ որպես ծովի ընդարձակության վրա, կապույտ մշուշի մեջ հաժող մենակ մի նավ:

Белеет парус одинокий
В тумане моря голубом²...

Եվ երկուսն էլ Ռուսաստանի լայնածավալ տափաստանների վրա չհասկացված ու հալածված մենակ հոգիներ...

Բայց ինչո՞ւ էին նրանք հալածված իրենց հայրենիքում: Մի՞թե իրենց հայրենիքը չէին սիրում: Մի՞թե Լերմոնտովը իր հայրենիքը չէր սիրում:

Սիրում էր, այո՛, բայց «տարօրինակ» սիրով, ոչ էն սիրով, ինչ սիրով որ սիրում էին մնացած շատերը: Եվ ինքն էր խոստովանում հրապարակով, թե՛ ոչ արյունով զնած փառքը, ոչ

¹ Պուշկինի «Туча» բանաստեղծությունից:

² Լերմոնտովի «Парус» բանաստեղծությունից:

¹ Մ. Լերմոնտովը ծնվել է 1814-ի հոկտեմբերի 3-ին:

գոռոզ ինքնալստահութունով լիքը հանգիստը, ոչ խավար անցյալի նվիրական ավանդները—ուրախության ոչ մի զգացմունք չեն շարժում իր մեջ: Իսկ էն «տարօրինակ» սերը, որով սիրում էր, և որը չէր մկրտում ոչ մի անունով, սակայն շուսյորեն փոռում էր իր երկերում ու երգերում, ոչ հասկացող կար, ոչ գնահատող: Կյանքի ասպարեզը բռնած էին կամ ոչնչությունները և կամ նրանք, որոնց մասին ասում է՝ «իրենց սրիկայի սիրտը ծածկած էին մունդիրով»: Հասկացող, գնահատող հասարակություն չկար, և «տարօրինակին» հազարավոր աչքերով հետապնդում, հազարավոր ձեռքերով մերժում, քշում էին իրենց շրջանից: Մի շրջան, որից Պուշկինն ուզում էր մինչև Զինաստան մին փախչի, որից զզված Գրիբոյեդովը Պարսկաստան ընկավ...

Էս ամենի վրա ավելացավ և էն ամենամեծ վիշտը, որ Լերմոնտովը ունեցավ իր կյանքում: Նա պաշտում էր Պուշկինին, և տեսավ Պուշկինին... բամբասված ու գնդակահար: Որոտաց մի հրաթափ, մի անուն զայրույթով, որի անունն է «На смерть Пушкина», ամբողջ Ռուսաստանի երեսին նախատինքի ու դատապարտության էն տեսակ խոսքեր շարտեց, որ մինչև էդ օրը Ռուսաստանը դեռ չէր լսել, ու սրանով ամեն բան լրացավ:

Պետք է հնոանար:

Հեռացավ՝ մնաս բարով ասելով «տերերի ու ստրուկների Ռուսաստանին, կապույտ մունդիրներին ու նրանց նվիրված ժողովրդին: Գուցե, ասավ, էնտեղ, Կովկասի սարերի ետևը կարողանամ ծածկվել քո (ժողովրդի) ղեկավարների ամենատեսա աչքերից ու ամենալուր ականջներից»¹:

Էսպես ժամանակը, երբ իրեն շրջապատող ամեն բան ընկած է մարդու աչքից ու պառից, հիասթափված մարդը կյանքի մեջ մի նեցուկ, մի ապավեն է որոնում ու նրան է փարում, նրան է փաթաթվում իր բոլոր հույսերով ու սիրով: Կովկասը էդ ապավենն ու մխիթարանքը եղավ Պուշկինի ու Լերմոնտովի համար: Եվ երբ նրանք իրենց ժամանակի ուսուսական կյանքի ու իրենց հիասթափության անապատից քշված, հալածված

¹ Լերմոնտովի «Прощай, немытая Россия» բանաստեղծության տողերի արձակ շարադրանքը:

դիմում էին դեպի հարավ՝ նրանց խոցված ու գազազած սրբտերին հեռվից, ամպերի միջից առողջ ու պայծառ ժպտացին Կովկասի ձյունափառ գագաթները՝ հոյակապ ցնորքների նման, նրանք էլ իրենց հոգու ամբողջ ուժով ու աշխուժով փաթաթվեցին Կովկասին, որդեգրվեցին Կովկասին ու ախպեբրացան մեզ — կովկասցիներին:

Եվ երբ կգա Լերմոնտովի հարյուրամյակի կատարման օրը, մենք, կովկասցիներս, կտոնենք՝ ոչ միայն որպես մի մեծ ուսուսական տեղի տոն, որին, ինչպես և առհասարակ ուսուսականությանը, շատ բան ենք պարտական, այլև որպես մի բանաստեղծի, որ հոգով հարազատ է մեզ, որ մեր ընդհանուր մոր — Կովկասի աննման որդեգիրն է, որ դեռ մանուկ օրից երկինքն ու Կովկասի կապույտ սարերը միասին է երազել:

1914

ՀԱՅ ԳՐՈՂՆԵՐԻ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՉԸ

Հայ հնագույն ժողովուրդը առաջին զոհերից մեկն է եղած թյուրքական մեծ արշավանքի: Նրանց երևալու օրից մեր պատմությունն ու գրականությունը շաղախված են արյունով ու արտասուքով, խանգարվել է մեր ազգային ստեղծագործությունը և մեր անունն էլ լավում է միայն անլուր կոտորածների ու սարսափների հետ: Մեր դրությունը ծանրացավ մանավանդ այն օրվանից, երբ մենք բողոքեցինք մեր ազգովին ոչնչացման դեմ և խոսեցինք մարդկային տարրական իրավունքների մասին: Եվ ահա՛ այսօր էլ, համաշխարհային իրաւանցումի մեջ շրջափակված ու մեն-մենակ իր դարավոր զոհի հետ, թյուրք կառավարությունը վեր է կացել գերազանցելու իր մինչև օրս կատարած ոճիրները, կոտորածով միանգամ ընդմիջող վերջ դնելու հայ ժողովրդի բողոքին ու դատին: Սկսել է կոտորած էրզրումից մինչև Կիլիկիա, Սև ծովից մինչև Միջագետք:

Հայոց Գրողների Ընկերությունը, այս ահավոր ճգնաժամին, դիմում է ազգերի խղճմտանքին ի դեմս նրանց լուսավոր հաստատությունների և լավագույն զավակների, խնդրում է

բարձրացնելու իրենց ազդու ձայնը այս անօրինակ ոճիրի հանդեպ հանուն մարդասիրության, քրիստոնեության և կուտուրայի:

Կովկասյան Հայոց Գրողների Ընկերություն¹

ՎԱՆ ՈՒ ԵՐԵՎԱՆ

Սրանից հարյուր տարի առաջ էր, որ ընկավ Երևանը և ոռուսաց հաղթական զորքը ներս մտավ Երևանու բերդը, խլեց Հասան խանից ասիական բռնակալության սիմվոլը՝ Լենկթեմուրի թուրը՝ դրկեց Պետրոգրադ ու ոռու օֆիցերները գրական երեկույթ սարքեցին պարսիկ սարդարի պալատում, առաջին անգամ ներկայացրին իրենց մի ընկեր օֆիցերի՝ Ա. Ս. Գրիբոյեդովի նոր գրած պիեսը՝ «Горе от ума»:

Ռուս զորքի հետ Երևանի բերդ մտան մեր կամավորները իրենց ազգային դրոշակով ու իրենց ժողովրդական երգերով, որոնցից մի նմուշ է բերում Խ. Աբովյանը իր «Վերքի» մեջ: Հենց էդ բերդը մտնելու օրն էլ սպանվեց մեր կամավորների զխավորներից մինը, քանաքեռցի Աղասին՝ «Վերք Հայաստանի»-ի հերոսը:

Թե ինչ արին էդ կովում ոռուսաց զորքերը, թե ինչ արավ հայ ժողովուրդը, թե ինչ արին հայ կամավորները և թե ինչ նշանակություն ունեցավ Երևանի առումը մեր ազգի համար, դժբախտաբար էս ամենը մինչև էսօր էլ մութն են մնում մեծ հասարակության համար, բայց գործին տեղյակ ու ծանոթ մարդիկ գիտեն, թե ինչ անպատմելի աղետներ ու կոտորածներ տեղի ունեցան, ինչ հերոսական սխրագործություններ կատարվեցին և թե ինչպես Երևանի անկումը միանգամայն ապահովեց հայոց ազգային գործի ապագան:

Երևանի անկումից հետո ամբողջ հարյուր տարի հայ ժողովուրդը երազել է Վանի անկումը: Վանի անկումը մի տև-

¹ Հովհ. Քումանյանի ձեռքով գրված կոշի տակ գրված է. «Այս կոշը ուղղված է Ամերիկայի, Իտալիայի, Բուլգարիայի, Ռումինիայի, Ռուսաստանի, Անգլիայի, Ֆրանսիայի և այլ պետությունների գրականագետներին և խմբագրություններին»:

սակ խորհրդանշանն է համարվել տաճկահայոց խնդրի լուծումի: Եվ շատ լավագույն երազողներ էդ անկումն են երագել, և շատ լավագույն երազողներ Վանի ճանապարհին են դրել իրենց երիտասարդ, երազուն գլուխները: Եվ հետզհետե տաքացել է էդ ազգային գործը, ավելի ու ավելի շատ մարդ է գրավել, ավելի ու ավելի մեծ ծավալ է առել ու կազմակերպվել, և երբ բռնկեց ներկա մեծ պատերազմը՝ հայութունը հրապարակ եկավ ավելի պատրաստի, քան երբևիցե: Նա չի փոխել իր պատմական ճանապարհը, նա միայն ավելի է կազդուրվել ու կազմակերպվել էդ ճանապարհի ընթացքում— Երևանի պատերազմից մինչև Վանի պատերազմը:

Եվ ինչու պետք է նա փոխվեր, քանի որ էպպես ոչինչ չի փոխվել նրա աշխարհքում ու նրա կյանքում. ինչ-որ էն ժամանակ լավ էր հայի համար՝ նույն լավն է մնում, ինչ-որ էն ժամանակ վատ էր՝ նույն վատն է մնում: Եվ էսօր էլ զարմանալի նույնությունը կրկնվում են նույն դեպքերը, ինչ որ պատահել են առաջ: Էնքան նույնությունը, որ հաճախ դուք կարող եք միմիայն մարդկանց ու տեղերի անունները փոխել՝ էն քաղաքի տեղ էս քաղաքը դնել, էն գավառի տեղ էս գավառը, էն գեղի տեղ էս գեղը, էն քրդի տեղ էս քուրդը, էն թուրքի տեղ էս թուրքը, էն հայի տեղ էս հայը, էն կամավորի տեղ էս կամավորը, էն դորքի տեղ էս զորքը, էն գեներալի տեղ էս գեներալը, վերջապես էն պաշտոնյայի տեղ էս պաշտոնյան, առանց պատմությունից մի բառ փոխելու:

Եվ ահա՛ հարյուր տարուց հետո՝ էսօր էլ ընկնում է Վանը: Թուսաց հաղթական զորքի հետ ուս-ուսի Վան են մտնում մեր կամավոր խմբերը, դարձյալ ոռուսաց ազգային դրոշակի հետ փողփողում է մեր ազգային դրոշակը, դարձյալ ոռուսաց զինվորական մարշի հետ հնչում է մեր ժողովրդական ազգային երգը:

— Մեր հայրենիք թշվառ, անտեր.
Մեր թշնամուց ոտնակոխ...

Բայց... էս անգամ վերջին անգամն է, որ մենք երգում ենք էս տեսակ ազգային երգ. էլ հայ ժողովուրդն էս տեսակ լալկան երգ չի երգելու, էլ հայ բանաստեղծն էս տեսակ երգ չի հորինելու Վանի պատերազմից հետո:

Ինչ որ հաջող ու բախտավոր սկսեց Երևանի պատերազմը՝ պետք է լրացնի, վերջացնի ու պսակի Վանի պատերազմը:

Վան ու Երևան — կնշանակի՝ հայություն, մի հայություն, որ դարեր առաջ, իր բարձր կուլտուրայով ու իր ճոխ գրականությունով ընկավ իր աշխարհքի փլատակների տակ և միայն այժմ է դուրս գալիս երկար դարերից հետո, անթիվ կյանքերի ու նրանց ջանքերի շնորհիվ:

Փառք ու պարծանք ոռուսաց մեծ ազգին ու իր հաղթական զավակներին, փառք ու պարծանք մեր քաղաքի կամավոր խմբերին և հավերժական հանգիստ ընկածներին ու նահատակներին, որ իրենց մահով իրենցից հետո ապրողների հանգիստը, մարդավայել կյանքն ու մարդկային պատիվն ապահովեցին:

Սրանով միանգամ ընդմիշտ ջնջվում է կյանքի, գույքի ու պատվի անպատվաբեր ու թշվառ խնդիրը: Առասպել են դառնում անվերջ կոտորածներն ու սարսափները: Կանգ են առնում գաղթականների ու պանդուխտների ողորմելի շարանները ու նրանց օգտին հանգանակությունները: Քանդված ու քայքայված հայ ժողովուրդը նորից դառնում է մի ժողովուրդ, որ, իր ամոթն իր երեսին, ապրում է իր կյանքով և իր ամբողջ ուժն ու եռանդը գործ է դնում իր կուլտուրական, բարոյական, տնտեսական վերաշինության ու զարգացման վրա:

Գալիս է և նոր գրականություն, որ հոգևոր գերությունից է ազատագրելու հայ հոգին, մաքրելու է նրան շատ ստացական արատներից, հանդես է բերելու մի ինքնուրույն, նոր ու հզոր հոգի և մեծ աշխարհքից, մեծ կյանքից ու նրանց գեղեցկություններից է խոսելու հայի հետ: Կգան և նոր գրողներ, որոնց սրտերը կտրած շեն լինիլ, որոնք կտեսնեն իրենց թիկունքին կանգնած մի ազատ, առողջ ու ամբողջ ժողովուրդ և նրա՝ մաքուր ու կենդանի շնչով զորացած, բարձր ու զվարթ կիսոսեն աշխարհքի առջև, ազգերի առջև և էլ մազձ չի լինիլ նրանց խոսքերում, էլ թշնամություն չի հնչիլ նրանց երգերում:

Թեև դեռ շարունակվում է պատերազմը, բայց Ալաշկերտի հայ ժողովուրդը, որ հեռացել էր ռուսաց զորքի նահանջի ժամանակ, նորից ռուսաց զորքի հետ վերադառնում է իր տեղը — Եփրատի հովիտը:

Էսպես է եղել ռուս-տաճկական և ռուս-պարսկական բոլոր պատերազմների ժամանակ: Հայ ժողովուրդը միշտ ետ ու առաջ է խաղացել ռուս զորքի հետ միասին, ինչպես և պարսիկ, քուրդ ու թուրք ժողովուրդը պարսիկ ու թուրք զորքի հետ միասին: Քանի ռուս զորքը հաջողություն է ունեցել ու առաջ է անցել, էնքան էլ ետ է գնացել պարսիկ, քուրդ ու թուրք տարրը Հայաստանի հողի վրա և տեղի է տվել հայ ժողովուրդին: Սա մի հանգամանք է, որ պետք է լավ իմանանք միամղամ ընդմիջում:

Էսպեսով է կարողացել և էսօր էսպեսով է կարողանում մեր ջախջախված, ցաք ու ցրիվ եղած ժողովուրդը հանգիստ նստելու տեղ գտնի իր հայրենիքում: Էսպեսով էր, որ Արարատյան դաշտում, Արաքսի հովտում, որ ռուսներից առաջ գրեթե ամբողջովին պարսկաբնակ էր, առաջ եկավ, ստեղծվեց և էսօր նստած է մի հոծ հայ զանգված:

Նույնը պետք է լինի և Եփրատի կամ Ալաշկերտի հովիտում: Էդ երկու հովիտները, Արաքսի ու Եփրատի հովիտները, մեր սրբազան հովիտներն են:

Մեկը մեր Մայր Գետն է, մյուսը մեր Սրբազան Գետը: Մեկի հովիտում մեր անցյալ քաղաքական կյանքն է դարգացել ու անցել, մյուսի հովիտում մեր հին ու նոր կրոններն են ծաղկել, մեր ազգային սրբությունները, մեր ազգային դպրություն — գրականությունը:

Էջմիածնից թերևս ավելի հեշտ լինի դուրս անել հայ ժողովուրդին, քան թե Արաքսի ու Եփրատի հովիտներից:

Ահա էսօր էլ մեր աչքի առջև՝ տեսնում ենք, թե ինչպես մերթ ռուս զորքի հետ հայն է առաջ շարժվում ու լցվում Արևելյան Եփրատի կամ Արածանու հովիտը, Ալաշկերտի շրջանը, մերթ թուրքն ու քուրդն են լցվում թուրք զորքի հետ միասին: Եվ հենց էս բոպեին, երբ գրում եմ էս տողերը, թուրք բանակն ու քրդական ալայները, որ մի քանի օր առաջ

գազանաբար հռչակեցին Զեթկանի, Մուլա Սուլեյմանի, Խաստուրի և այլ գյուղերի իրենց ձեռքն անցած հայ ժողովուրդին, ռուս զորքի առջև նորից ետ քաշված՝ երախներն արյունոտ, Ղլիջ-Գյաղուկի բարձրությունները բռնած, նորից հատել են իրենց արյունակալած աչքերը ներքև, Եփրատի հովիտի վրա: Էն հովիտի վրա, ուր հեթանոս հայը Վարդավառ ու Մաղկաղարդ պաշտել է իր Անահիտն ու Աստղիկը, իր Արամազդն ու Վահագնը. էն հովիտի վրա, ուր հայ ժողովուրդը իր Մեծ Տրդատի հետ միասին մկրտվել է Արածանու սուրբ ջրերում, քրիստոնեություն է ընդունել, ու իր մկրտության տեղը տաճար է կանգնել, ճակատին դրոշմել.— Ով կընկնի էս վեմի վրա՝ կջախջախվի, իսկ ում վրա սա կընկնի՝ կհոսի ջրի պես: Էն հովիտի վրա, ուր հայ ժողովուրդը դարերով ճակատ-ճակատի է զարկել հին Պարսկաստանի ու Արևելքի բոլոր աշխարհակալների հետ: Էն հովիտի վրա, ուր փռված է Ջիրավի դաշտը, որի վրա էնքան ու էնքան հաղթանակներով խոյացել են Արշակունիները, Բագրատունիները, Մամիկոնյաններն ու Արծրունիները: Էն հովիտի վրա, որին շրջապատել են Մաղկանց լեռները, Բարթողի շղթան, Նպատն ու Սուկավետը, որի վրա, իր ալևոր գլուխը մինչև երկինք բարձրացած՝ հսկում է Աղատ Մասիսը:

Էն հովիտը շարունակ լցվել է հայի արյունով ու արտասուքով, ավերակով ու դիակով: 1878 թվին էլ եղած հոծ հայությունը դուրս եկավ, գաղթեց ռուս զորքի հետ և միայն մի մասը նորից ետ դարձավ: Էդ մի մասն էլ էսօր է հռչակում, դիակները դեռ չեն թաղված, կենդանի մնացածների վրա, դիակները դեռ չեն թաղված, կենդանի մնացածների վրա: Էն դեռ ոռնում են Ղլիջ-Գյաղուկից քուրդն ու իր գրնգլխին էլ դեռ ոռնում են Ղլիջ-Գյաղուկից քուրդն ու իր գրնգլի էն հովիտներն են ձգտում մեր սրտերը, մեր մտքերը, մեր հոգիները: Էնտեղ են մեզ համար էն ամենը, ինչ որ մի ժողովուրդի դարձնում են մեծ ու գեղեցիկ, էն ամենը, ինչ որ մի ժողովուրդի կյանք ու ոգի են տալիս: Դեպի մայր Արաքսի ու Եփրատի հովիտները:

(Հայ օպտիմիստի խորհրդածություններից — մեծ պատերազմի ու հայկական խնդրի առիթով)

«Բնությունը կենդանի է ստեղծել,— մարդը հառաջադիմության արդյունք է»:

Քսպես են որոշել մարդկային իմաստութունն ու գիտությունը:

Հիրավի, երբ խորաթափանց հայացքով նայում եք դեպի ետ՝ անցած հեռավոր ժամանակների աղչամտուղջում ձեր աշքին մտալլ պատկերանում է մարդակեր մարդը, ապա երբ նորից դառնում եք դեպի ձեր շրթս կողմը՝ տեսնում եք, որ մարդը էսօր ոչ թե մարդակեր չի, այլև մարդասպանությունն էլ նրա կյանքում արդեն համարվում է մի դժբախտ դեպք, որի վերացման համար նա մեծ մտահոգություն ունի՝ բարոյական պատվերներով, պետական օրենքներով, զեղարվեստական և ուրիշ հազար ու մի արտահայտություններով:

Գեո սրանից էլ ավելին: Տեսնում եք նրա մեջ արմատանում, զարգանում ու ծափալ է տանում ալտրուիզմի-այլասիրության լայն զգացմունքը, որ առաջնորդում է դեպի հանրամարդկային եղբայրությունը:

Եվ դեռ սրանից էլ դենը: Նրա մեջ հետզհետե որոշվում, շեշտվում ու հաստատվում է կենդանասիրության խոր ու վսեմ զգացմունքը, որ տանում է դեպի տիեզերական մեծ կյանքը:

Եվ, անշուշտ, ուրախությունով պետք է նկատեինք էս հառաջադիմությունը, եթե մեր հեռավոր գեղեցիկ երազները չլինեին ու մեր աղնիվ անհամբերությունը:

Այո՛, մենք շատ ենք հեռու էն լավ մարդուց ու լավ կյանքից, որ երազում են լավագույն երազողները, բայց ակներև հառաջադիմությունը դեպի նրանց է տանում:

Քսպիստով առաջադիմությունը, ամենակողմանի կերպով առած, մի աստվածային աշխատանք է, որ կատարում են ընտիր անհատներն ու ազգերը, լավ մարդն ու լավ կյանքը ստեղծելու համար: Ըվ անհատը կամ ազգը ինչքան ազնիվ է՝ էնքան էլ շատ է նախանձախնդիր հառաջադիմության ճանա-

պարհը շուտով դռնելու և էնքան էլ ուժեղ թափով ու սրտով է շարժվում էդ աստվածային գործը կատարելու:

Սակայն ամեն հառաջադիմություն պայմանավորվում է ինքնուրույն քայլեր անելու, ունեցած լավագույն ձիրքերը մշակելու և լավագույն զգացմունքները զարգացնելու ազատության պայմանով: Մի ժողովուրդ, որ կլանված լինի իր գլխապահության հասարակ խնդրով, ինչպես մեր ժողովուրդն է եղել կլանված ասիական բռնակալությունների տակ «կյանքի, գույքի ու պատվի» մշտական բռնաբարումի խնդրով, էլ նա ի՞նչպես կարող է մասնակից լինել մարդկության ընդհանուր հառաջադիմության գործին: Մեր կյանքը դժոխք են դարձրել նրանք, մեզ համար մարդուն անվայել ստոր վիճակ են ստեղծել ու ստոր խնդիրներ, մեր ուշքն ու միտքն էլ հետը ցած տարել: Դառնացրել են մեր հոգին, նրա մեջ զարգացրել են վրեժի ու թշնամության զգացմունքները, ստիպել են երգել «Արյան երգեր», և մեր լավագույն մարդիկն էլ շեն կարողացել դուրս գան մեր իրականության անձուկ ու արյունոտ շրջանակից, հեռու նայեն ու մասնակից լինեն համաշխարհային մեծ խնդիրների մշակումին՝ գրական լինի, գիտական, թե հասարակական:

Այժմ համաշխարհային մեծ ցնցումով՝ շատ ու շատ բան է հեղաշրջվում ազգերի հոգում ու կյանքում. շտեմնված մեծ պատերազմը խոստանում է շտեմնված մեծ էլ բարեփոխություններ: Մեծ պետությունները իրենց սրերը մերկացրել են նաև հանուն ճնշված ազգերի ազատության: Սրանով նրանք գալիս են վերացնելու էն անվերջ ու արդար խռովությունը, որ հարուցանում են հալածված ազգերը իրենց վիճակի հանգամանքով և էսպեսով էլ խռովարարների փոխարեն նրանք, մեծ պետությունները ստեղծում են իրենց համար բարեկամներ ու գործակիցներ խաղաղ առաջադիմության ասպարեզում:

Մենք՝ հայերս էլ էդ փոքր ազգերից մինն ենք: Տաճկական բռնակալության անկումով ու հայկական հարցի բարեհաջող լուծումով մեր առջև էլ նոր հորիզոններ են բացվում: Հնարավորություն ենք ստանում ապրելու շատ ավելի գեղեցիկ ու խոր զգացմունքներով, զբաղվելու մեծ խնդիրներով, մտնելու հառաջադեմ ազգերի եղբայրության մեջ ու նրանց հետ միա-

սին երազելու կյանքի վսեմ երազները, նրանց հետ միասին մասնակից լինելու համամարդկային մեծ խնդիրների մշակույթի ազնիվ գործին ու նրանց հետ միասին գնալու դեպի մեծ կյանքը:

Եվ մեր բախտավորութունն այն է, որ մենք միանգամայն ընդունակ ենք սրան, ու էստեղ է, որ կարող ենք ասել՝ փոքր ժողովուրդ չենք մենք:

Եվ սրանով է թանկ մեր հարցը, սրանով է իմաստալի մեր կոիվը, սրա մեջ է մեր իրավունքի ամբողջ վսեմութունը:

1915

ՀԱՆԳԻՍՏ ՈՒ ԼԻՔԸ ՀԱՎԱՏՈՎ

Քյուրդ-տաճկական սրածութունն ու ավերածութունն ամառացնում է տաճկական Հայաստանը: Մինչև ուր հասնում է իրենց միշտ արյունոտ ու հավիտյան նզովված ձեռքը՝ համատարած կոտորածով ճգնում են բնաջինջ անեն մեր հին ու ազնիվ ցեղը, մեր շատ տառապած ու ծվատված ցեղը, և կոտորածից ազատվածները քյուրդ-տաճկական սահմաններից հարյուր հազարներով հոսանք են առել դեպի մեզ, դեպի ռուսական Հայաստան:

Մեծ է փորձութունը ու աղետն ահռելի:

Բայց մենք երեկ մեկել օրվա ժողովուրդը չենք, առաջին անգամը չենք տեսնում էս տեսակ աղետ և՛ ինչ որ տեսնում ենք՝ անօրինակ չի մեզ համար:

Սրանից շատ ավելի մեծ աղետներ ենք տեսել, շատ ավելի մեծ տարածութունների վրա, շատ ավելի երկար ժամանակներով, շատ ավելի ծանր կորուստներով, փախչողն ու գաղթողն էլ չի իմացել թե ո՞ւր ապաստանի, ու ոչ մի տեղից էլ ոչ մի օգնություն կամ օգնության հույս չենք ունեցել: Բայց այսուամենայնիվ անց ենք կացրել էս ամենը:

էսօր շատ ավելի բարեհաջող են պայմանները: էսօր մենք մարտնչում ենք մեր թշնամիների դեմ, մեր գաղթականն ապավեն ունի ռուսական Հայաստանում, իր եղբայրների մոտ, և սովածը այլևս իր տրեխը չի ուտում կամ իր հարազատին,

էսօր մեզ հետ է ռուսական մեծ բանակն ու բովանդակ Ռուսաստանը, նրա միջոցով էլ աշխարհքի մեծագույն պետութուններն ու լուսավոր ազգերը, և՛ համաշխարհային թոհոբոհի մեջ՝ մեր վիճակի մասին խոսք են հանում Ռուսաստանից մինչև Ամերիկա, վերջապես էն հաստատ հավատն էլ ունենք, որ ինչքան էլ կատաղի լինի թշնամու վայրագութունը — վերջինն է լինելու:

էս ամենը լավ պետք է իմանա ամեն մի հայ ու միշտ հիշե, ոչ ոք հուսահատի ու վհատի խոսքեր չպետք է անի, որ հատուկ է ձախորդ վայրկենին, փորձութունը, ինչքան էլ մեծ լինի, պետք է տանենք արիությամբ ու վեր կենանք միասին, միահամուռ ուժերով դիմագրավելու մեր վատթար թշնամիներին և դարման տանենք ընդհանուր ազգային աղետին հանգիստ ու լիքը՝ մոտիկ լավագույն ապագայի անսասան հավատով:

1915

ՀԻՇՈՂԱԹՅՈՒՆՆԵՐ ԷԶՄԻԱՍՏԻ ՈՐԲԱՆՈՑԻՑ

էջմիածնի որբանոցը որբանոց չէր իսկապես, այլ մանուկների ապաստարան, որովհետև ծնող ունեցող երեխաներն էլ էին ընդունվում: Դա մի ապաստարան էր, ուր հավաքվում, լցվում էին սովամահի ճանկերից խլված երեխաները՝ ժամանակավոր՝ մինչև որ մեր քաղաքներից կհասնեին ու կտանեին նրանց: Որբանոց չէր, ինչպես որբանոց չեն այժմյան մեր շատ որբանոցները, բայց անունը կալավ ու մնաց որբանոց:

Չեմ սխալվիլ, եթե ասեմ՝ հուլիսի վերջերից սկսած, ամիս կիսվա ընթացքում, մինչև տասը հազար երեխա մտավ էջմիածնի որբանոցն ու դուրս եկավ էնտեղից. իսկ մեզը մնացողների թիվը եղավ 3.500:

Ես էլ նրանցից մեկն եմ, որ էս երեխաների մեջն էի, բայց երբ էսօր նստում եմ ու աշխատում եմ վերհիշել՝ կարծես թե նրանց — երեխաներին չեմ տեսել: Չեմ տեսել, չեմ ճանաչել առանձին-առանձին: Սաստիկ, սաստիկ ծանր էր նրանց հետ

խոսելն ու խոսեցնելը... Եթե խոսել ու խոսեցրել եմ՝ էն էլ շատ քիչ, պատահմունքով...

Սակայն շարունակ աչքիս առաջն է նրանց բազմությունը, նրանց վտիտ, քաղցած ու մերկ բազմությունը, որ անտառում կանգնած սպասում էր՝ մինչև ճեմաքանը դատարկեն...

Դատարկ է պոզեն...

Եվ նշան տալուն պես՝ միջօրեական թեժ արևի տակ փոշու ամպեր բարձրացնելով՝ ազահությունը հոսանք առավ դեպի ճեմարան...

Այնուհետև ճեմարանի մուտքի առջև...

Ահա հազարավոր մայրերի ոսկրացած բազուկների ու ձեռների անտառը, որ, առես թե մի հսկայական փոթորկից կոացած, համատարած խուլ աղմուկի ու իրարանցումի մեջ, ամեն կողմից առաջ են հրում անթիվ, անհամար մանկական կմախքներ, կմախքներ, որ դեռ շնչում էին...

Հիշում եմ էն մանկական կմախքների խիտ-խիտ ու երկար շարքերը, երբ կերակրելու համար նստեցնում էին վերահսկող տիկիներն ու օրիորդները, որոնք ազատարար ոգիների նման անդադար պտտվում էին նրանց վրա, ոտից գլուխ ճերմակ վերնաշապիկներ հագած, ցավից և անտանելի ծանր օդից ու հոտից գունատված, դալկացած տիկիներն ու օրիորդները...

Խիտ-խիտ և երկար շարքերով լուռ նստած՝ իրենց բազմահազար աչքերը անթարթ սևեռում էին դեպի դռները, որտեղից ներս էին բերելու թեյի, սուրճի կամ կերակուրի վեդրոնները...

Օրվա մեծ մասը թափված էին մերկ հատակներին, երկար նախասենյակներում և կամ ընդարձակ բակում. չէին կարողանում ոտի վրա մնան. ցավում էին նրանց նիհար սրունքներն ու մանկական ոտները, մի քանի հարյուր վերստ փախած, մի քանի հարյուր վերստ ճամփա կտրած ոտները...

Հիշում եմ և էն լավ օրը, երբ առաջին անգամ վերահսկողները զանգատվեցին՝ թե արդեն շարաճճի են դարձել, դժվարացել է կառավարելը, երբ առաջին անգամ տեսանք, թե ինչպես էին նախասենյակներում կուտակած աշակերտական նստարանների արանքները լցվել կամ վրաները բարձրացել ու ոմանք զվարթ երգում են խմբով, ոմանք՝ նստարաններին

հեծած՝ ձի են խաղում, ոմանք էլ կատակներ են անում, ուրախ-ուրախ ճշում, կշկշում...

Ու ամենքիս աչքերն էլ լցվեցին ուրախության արտասուքներով...

Հիշում եմ ինչպես էին այնուհետև զույգ-զույգ, աշակերտական կարգով, երկար սյունակներով ձգված, միամիտ երգելով, իրենց հին վարժուհիների ու վարժապետների հետ ճեմում ճեմարանի ծառուղիներում, մինչդեռ մեռելատար սելերը, «մեռել... մեռել...» ոռնալով հավաքում էին նրանց սովամահ եղած մայրերի շորացած դիակները, մայրերի, որ գալիս, ուժասպառ կուշ էին գալիս իրենց երեխաներից մոտիկ՝ որբանոցի պատերի տակ, կամ, հնձած խոտի նման, խմբովին թափվում էին ծառաստանի ծառերի տակերին...

Վերջապես՝ ահա և ֆուրգոնների ու սելերի երկար շարքերը, որ նրանց, կարմիր ու ճերմակ բլուզներ հագած, մեջները լցրած՝ տարան, ցրվեցին դեպի զանազան քաղաքներ...

Եվ, ո՞վ գիտի, այժմ էլ, էն զանազան քաղաքներում, երբ հարցնում են, թե՞ մայր ունե՞ք, պատասխանում են՝ այո, և դեռ գրել են տալիս իրենց մայրերի անունները, առանց իմանալու, թե նույնիսկ էնքան թաղողներ չէին գտնվում էջմիածին, որ վրա հասնեին՝ թաղերի իրենցից շատերի մայրերին...

1915

ԹԱՆԿ ՄԱՐԿՈՒ ՀԻՇԱՏԱԿԻՆ

Աղետալի գաղթականությունը, որ Տաճկաստանից գետացած եկավ ու ծովացավ էջմիածնի շուրջը, շատ բաների հետ հանդես բերավ և մի երևույթ, թե ինչ խելագար անձնվիրության է ընդունակ հայ կինը — հայ աղջիկը։ Էջմիածնում գրեթե ամեն գործի մեջ ամենից առաջ հարկավոր էր սիրտ, սրբտալի վերաբերմունք, բայց անհրաժեշտ էր մանավանդ Մանուկների ապաստարանում, որ միշտ Որբանոց կոչվեց։

Ահա էստեղ էր, մի քանի հազար կեղտոտ, մերկ, սովալուռկ ու հիվանդ երեխաների մեջ էր, որ հայտնվեցին նրանք, և թե ինչ էին անում էդ Որբանոցի մեջն ու շուրջը՝ ամեն տես-

նելիս հուզմունքից կուլ էի տալիս արտասուքներս և երբեք, երբեք չեմ մոռանալու ահռելի աղետի մեջ՝ սովի, տիՖի, խոլերայի և ամեն տեսակ ցավի ու տանջանքի դեմ երես երեսի կովի դուրս եկած էդ շքնաղ մարտիկներին:

Դրանցից ամենամուլեռանդներից մեկը եղավ օր. Սաթե-նիկը¹:

Նրբ Որբանոցի գործը վերջանալու վրա էր ու սեպտեմբերն էինք մտնում, ինքն էլ պիտի գնար իր վարժուհուՅյան պաշտոնին, նա տակավին աշխատում էր մնա էջմիածին ու շարունակի գործել հիվանդանոցներում: Դիմեց դպրոց՝ արձակուրդ խնդրեց — մերժեցին: Ինձ դիմեց, որ միջամտեմ:

Նա էլ, նկատելով, որ շատ է հոգնած, որ Որբանոցի երկու հարյուրից ավելի ծառայողներից մի քսան-երեսուն հոգի հազիվ են ազատվել հիվանդություններից ու քանիսն էլ մեռել են — շմիջամտեցի ու խորհուրդ տվի, որ մի քիչ հանգստանա:

— Ի՞նչ հանգստանալու ժամանակ է... Ասավ ու գնաց պաշտոնից հրաժարվելու:

Մյուս օրն էլ, թե հետևյալ օրն էլ ճաշին եկավ, գրեթե ընկավ աթոռի վրա ու ծիծաղելով ասավ.

— Ճշմարիտ, որ էսօր շատ եմ հոգնած...

Մինչև ճաշի վերջը չկարողացավ նստի. ներողություն խնդրեց, կողքի մահճակալին պռոկեց ու...

Հիվանդ էր արդեն:

էս օրվանից ուղիղ մի ամիս է ասածս՝ և ահա թաղում ենք նրան: Ու ես ինձ հարց եմ տալիս:— Բայց ինչո՞վ էր նա նշանավոր, ինչո՞վ էր նա թանկ, ինչո՞ւ է ինձ հուզում նրա մահը:

Նա թանկ էր, որովհետև էն հազվագյուտ անձնավորու-թյուններից մեկն էր, որոնք ավելի շատ ուրիշների համար են ապրում:

Չէ՞ որ աշխարհքում մարդիկ կան, որ ապրում են միայն իրենց համար. մարդիկ կան, որ ապրում են ուրիշներին տանջելու համար, մարդիկ էլ կան, որ ապրում են տանջվողներին օգնելու համար:

Նվ, ավա՛ղ, ամենից քիչը հենց նրանք են աշխարհքում: Մրանցից, էս քերից, էս թանկերից մինն էր օրիորդ Սաթեն:

1915

ԱՂԵՏ Է, Ո՛Չ ԹԵ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ինչպես անցյալ հոգվածում պարզ ցույց տվինք, ռուսների գալուց ու 1829 թվականից առաջ էլ հայերը հանդիսանում էին մի ամբողջ ժողովուրդ ոչ թե միայն Կովկասում, այլև հենց նույնիսկ Վրաստանի սահմաններում, և վրաց թագավորները հրովարտակ արձակելիս առանձնապես շեշտում էին հայ ժողովուրդը: Հետաքրքրվողը կարող է տեսնել АКТЫ Кавк. Археогр. Комисс. т. VI, ч. II, стр. 777 և 798: Իսկ հետագայում, թե ռուսական կառավարութունը քաղաքակա-նություն է ունեցել հայ ժողովրդի նորանոր բազմությունները գրավել ու ներս բերել իր պետության սահմանները՝ պետք է իմանալ ու ասել, որ ռուս կառավարութունից առաջ էդ քաղաքականութունը ունեցել է վրաց կառավարութունը: Վրաց թագավորները ոչ միայն մահմեդականի հալածանքից փախած հայ գաղթականներին են միշտ սիրով ընդունել ու տեղ տվել, այլև միշտ էլ հայերին գրավել են դեպի Վրաստանի սահման-ները: Էդպես է եղել XI—XII դարերից՝ Գավիթ III վերաշի-նողից սկսած, որ Անիի կողմերից ու Շիրակից շատ հայեր բերեց ու՝ թե՛ հայ, թե՛ վրացի և թե՛ մահմեդական պատմիչ-ների վկայությամբ, առանձին սիրով էլ վարվում էր հետնե-րը — մինչև վերջին Հերակլ ու Գիորգի թագավորները, որ բե-րին Վրաստանի սահմաններում տեղ ու արտոնութուն տվին Ղարաբաղի մելիքներին իրենց ժողովուրդներով, շուրավեր-ցիներին ու բունիսցիներին և ուրիշ շատ հայերի:

Մի խոսքով, թե՛ ռուս, թե՛ վրաց կառավարութունները արել են էն, ինչ որ առհասարակ արել են մյուս պետութուն-ները՝ պարսկական, արաբական, բյուզանդական և այլն, և ինչ որ մի ժամանակ էլ իրենք՝ հայերն են արել ուրիշներին:

Տարբերությունն էն է էս ամենի մեջ, որ մինչդեռ մյուս-ները, գրավելով թե բունի, հայերին դուրս են տարել իրենց երկրից ու օտարացրել, ռուսները մեծ մասամբ հայերին կամ

¹ Սաթենիկ Օհանջանյան (1883—1915):

Պարսկաստանից են հանել ու ետ բերել իրենց հայրենիքը՝ Արարատյան երկիրը, կամ թե չէ Հայաստանի թուրքական մասից բերել են ուսական մասը ու էսպեսով էլ ստեղծել են ուսական Հայաստանը, որ այժմ հանդիսանում է հայ ժողովրդի ազգային գոյության գլխավոր ապավենը ամեն կողմից:

Եվ հենց ուսական Հայաստանովն էլ պ. Գրուզին-ը ուզում է վախեցնի Ռուսաստանին: Ասում է՝ էսպես ղորանալով հայ ժողովուրդը կարող է հեզեմոնիա — գերիշխանություն ձեռք բերի Կովկասում և իր ցանկություններն առաջադրի կառավարությունը, և կառավարությունն էլ ստիպված կլինի հաշվի առնելու էդ ցանկությունները:

Գոնե ես էն կարծիքին եմ, որ պ. Գրուզին-ը զուր է վախեցնում Ռուսաստանին, և Ռուսաստանի լեդին սրանից չի պատռիլ: Եթե Վրաստանը (Քարթլինայի ու Կախեթի միացյալ թագավորությունը), որ ընդամենը 150 հազար ժողովուրդ ուներ և սակայն տեղ էր տալիս հայ գաղթականներին և կամ գրավում, ներս էր բերում հայերին իր երկիրը ու չէր վախենում նրանց ցանկություններից ու առաջադիմություններից՝ 150 միլիոն ժողովուրդ ունեցող Ռուսաստանը ինչու՞ պիտի վախենա:

Եվ ահա Ռուսաստանը ոչ թե չի վախենում հայ գաղթականներից ու չի հետևում պ. Գրուզին-ի խորհրդին, այլ միլիոնների նպաստ է բաց թողնում նրանց:

Մյուս կողմից՝ ի՞նչ դատապարտելի կամ զարմանալի բան կա, եթե հայերը իրենց ցանկությունները առաջադրում են ուս կառավարությանը: Չէ՞ որ դա և՛ հայերի կառավարությունն է: Մի ժողովուրդ, եթե իր կառավարությունը չառաջադրի իր ցանկությունները, հապա էլ ո՞ւմ առաջադրի: Եվ ի՞նչ կլինի, եթե կառավարությունն էլ հաշվի առնի իր էս կամ էն ժողովրդի ցանկությունները:

Մի՞թե վրացի ժողովուրդը չի առաջադրում իրեն ցանկությունները: Ահա սեղանիս վրա է դրված մի գիրք, որ առաջադրած է ուս կառավարությանը և որի վերնագիրն է «Памятная записка о нуждах грузинского народа»: Մեզը թված են վրացի ժողովրդի կարիքները և առաջադրած նրա գրեթե բոլոր ցանկությունները՝ գրականություն, դպրոց, եկե-

ղեցի, ագրար խնդիրներ, դատարան, ավտոնոմիա և այլն, և այլն:

Ի՞նչ կա որ... Եվ շատ լավ են արել: Թող ամեն մի ժողովուրդ պարզ ու անկեղծ մեջտեղը դնի իր ցանկությունները, որ պետությունն իմանա ու հոգա: Պետությունը մի ամբողջություն է, որ պետք է հոգա իր բաղկացուցիչ մասերի կարիքները և ապահովի ոչ միայն նրանց ֆիզիկական գոյությունը, այլև էն ամեն իրավունքները, որ չեն խանգարում ուրիշների և ամբողջի բարեկեցությանը: Եվ երանի թե միշտ էլ կատարվեն ինչպես վրաց ժողովրդի, էնպես էլ ամեն մի վրացու լավ ցանկությունները: Աշխարհքում եթե ժողովուրդներ կան, որոնք իրենց դարավոր ազնիվ մաքառումների, վսեմ ձգտումների և սրտի պարզության համար արժանի են լավագույն օրերի՝ անկասկած դրանցից է վրացի ազգը: Ու ինչու՞ հայը նրա երջանկության ցանկացող չպետք է լինի:

էս ամենը առաջ է գալիս նրանից, որ պ. պ. Գրուզին-ը, Скальпель-ը և իրենց ընկերները կարծում են, թե ուսանրից հովանավորված մի քաղաքականություն կա հայերի կողմից՝ իրենց երկրից գաղթել, գալ լցվել Կովկաս, հեղեղել ու կործանել Կովկասը... Եվ ահա էստեղից էլ հայ գաղթականությունը նրանց աչքում դառնում է վառոդ, որ բռնկելու է հարևան ազգերի բարի հարաբերությունները («Закавказская речь», № 227):

էս տեսակ հասկացողն ու էս տեսակ մտածողը, իհարկե, կբռնկի: Մարդիկը չեն իմանում, թե ինչ որ իրենց համար վառոդ է, մեզ համար՝ կրակ է, և միջումն էրվում ենք: Չեն իմանում, թե ինչ որ իրենց աչքում քաղաքականություն է երեվում՝ իրոք մի սոսկալի ազետ է ու համահասկական դժբախտություն: Բնավ չգիտեն, թե հայերը իսկի չեն ուզում իրենց երկրից գաղթել, զնալ ուրիշ երկիրներ լցվել, որ, ընդհակառակը, հասարակական-քաղաքական գործիչներից սկսած մինչև իրենց բանաստեղծները՝ հայերը մի տենչ ունեն միայն, որ ցրվածներն էլ ետ վերագառնան դեպի Ալաշկերտի, Վանի ու Մուշի հովիտները, որ

«... Ամեն կողմից պանդուխտ հայազգիք
Գիմեն զեպ յուրանց սիրուն հայրենիք...»

(Բաֆֆի)

Հայրենի՛ք...

Եվ աղմուկն էլ հենց էս մի բառի վրա է վերջ ի վերջո՛ւ։
Պ. ГРУЗИН-ը ասում է՝ հայերը, ուսաների հովանավորության տակ, Տաճկաստանից գալիս են, լցվում Կովկաս ու ճնշում բնիկներին — վրացիներին ու թուրքերին։ Իսկ պ. Скальпель-ը ասում է՝ վրացիներն ու թուրքերը հո չեն կարող իրենց սեփական վարելահողերը տալ հայ գաղթականներին, թե ինչ է՝ նրանք Քրիստոսից առաջ, 323 թվին իրենց Վահե թագավորն են ունեցել։ Եվ շատ իրավացի էլ ավելացնում է, թե պատմական վկայություններով էս տեսակ խնդիրները չեն վճռվում։

Այո՛, եթե գիտեք, որ պատմությունն էս տեսակ խնդիրներ չի վճռում, ապա ինչո՞ւ եք թույլ տալիս շարունակ առաջ քաշել պատմությունը և էն էլ էդքան անզգույշ ու վիրավորական ձևով, էդքան անզեղ ու անարդար։ Պատմությունը թերևս անզոր է կոնկրետ իրական ու իրավական խնդիրներ վճռելիս, բայց նա շատ է զորեղ ժողովուրդների հոգեբանության մեջ և կարող է խորապես վրդովել։ Եվ, եթե դիմում են պատմությունը, չեն սահմանափակվում Վահեով, այլ Վահեից բռնում են՝ գալիս մինչև մեր վիճաբանության օրը, և հարցնում են. — էն հողի վրա, որ Վահեից սկսած մինչև էսօր ապրել է հայը, մի՞թե թույլ չեք տալ, որ էն հողի վրա էսօր սրից փախած հայ գաղթականը հանգստանա... և ուզում եք նրան դուրս վտարել, հալածանքից անմիջապես հետո նորից հալածել՝ էդ երկիրը հախուռն կերպով անվանելով Կովկաս...

էն ժամանակ, ասացեք խնդրեմ, Կովկաս ասելով ի՞նչ եք հասկանում դուք։ Սիվերս, Ռեկլյու և ուրիշ գիտնականներ Կովկաս ասելով հասկանում են Կովկասյան լեռնաշղթայի երկու կողմն ընկած երկիրները և նրա հարավային մասի, այսինքն Անդրկովկասի սահմանը դնում են Արաքսը, Մասիսը, Բարթող լեռները ու նրանցից գրեթե ուղիղ դեպի Սև ծովը։ Ուրիշ խոսքով, այժմյան ոռոսաց տիրապետության սահմանները։ Էդպես է ընդունում և ոռոսական պետությունը։ Եթե էդպես եք ընդունում և դուք, ապա անպատճառ պետք է իմանաք, որ էս սահմանների մեջ ընկնում են՝ Այրարատ, Շիրակ, Սյունիք, Գուգարք, որոնց վրա վիճելն անգամ մեծ ամոթ է, ուր մնաց գրելն ու պնդելը, թե հայերն էնտեղ նոր, եկվոր,

երրորդ ժողովուրդ են, և կամ հայ գաղթականը էնտեղ նեղութուն կտա բնիկներին — վրացիներին ու թուրք սակավահող ժողովրդին...

Թե վրացին սակավահող է, մենք էդ գիտենք, պաշտոնապես էլ դրված է հրապարակ, և առանց ընդհանուր սակավահողության խնդիրը նայելու, միանգամայն համաձայն ենք, որ սակավահող վրացի ժողովրդի մեջ երբեք հայ գաղթական չտաննին...

Բայց ո՞վ է տանում...

Վրացի ժողովուրդն ապրում է Թիֆլիզի և Քութայսի նահանգներում և Բաթումի, Սուխումի ու Զաքաթալի շրջաններում։ Դեռ նկատեցինք, որ Թիֆլիզի նահանգի հարավային մասումն էլ վրացի չկա։ Եվ ասացեք, ի սեր Աստծո, ո՞ր վրացական շրջանն են հայ գաղթական տարել, էն էլ լցրել...

Չեն տարել, և չպետք է տանն էլ։ Հայ գաղթականը պետք է իր երկիրը վերադառնա և վերադառնում է նույնիսկ էս րուպին էլ, երբ ամեն ճանապարհի վրա նրան միայն մորթողներ են սպասում։ Եվ եթե հայկական քաղաքականություն եք որոնում — ահա՛ ձեզ հայկական քաղաքականությունը։ Հենց էն, ինչ որ դուք եք ուզում։ Եվ դեռ ավելին։ Մենք կուղենալինք, էն հայերն էլ, որ հնուց ցրված են Վրաստանում, նրանք էլ մի օր ձեզ թողնեն ձեր արգավանդ հողերն ու հովիտները, ետ գան իրենց «դաժան» հայրենիքը...

էլ ի՞նչ եք ուզում։ Առանց մեզ ու մեր իղձերին, մեր ձեռտուններին, մեր տառապանքներին ու մաքառումներին ծանոթ լինելու, ինչո՞ւ եք էդքան կոշտ ու կոպիտ դիպչում մեր էսքան թարմ ու խոր վերքերին՝ էդքան մոտիկ ու հարազատ ձեռքով...

Ես շատ ավելի բարձր կարծիքի եմ վրացի մարդու և վրաց ժողովրդի վերաբերությամբ, դրա համար էլ խոսքս վերջացնում եմ նրանով, ինչով սկսեցի, և մնում եմ միշտ էն կարծիքին, որ էս ամենը արդյունք են ոչ թե շարության, այլ կատարյալ անտեղյակության ու ցավալի թյուրիմացության։ Եթե մեզ մոտիկից ճանաչեին ու վերահասու լինեին ամեն անց ու դարձի, ես հավատացած եմ, որ ոչ մի ինտելիգենտ վրացի գրիչ չէր առնելու իր ձեռքը ու էս տեսակ հողավաճներ չէր գրելու։

Պարզ կտեսնեին, որ հայ գաղթականությունը մի ծանր աղետ է, ոչ թե հովանավորված քաղաքականություն:

1916

ԽՈՍՔ Վ. ԲՐՅՈՒՍՈՎԻ ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԱՌԹԻՎ

Էս օրերին, երբ՝ մեր ազգային աղետի ծանրության տակ ճնշված զգում ենք մեզ ֆիզիկապես անզոր ու տկար, էս օրերին հեռու հյուսիսից մեզ մոտ է գալիս ոռու հուշակավոր բանաստեղծը՝ վալերի Բրյուսովը և խոսում է մեր բարոյական-հոգեկան ուժի ու մեծության մասին — «Հայոց բանաստեղծության մասին»:

Նա հայոց բանաստեղծությունը անվանում է հայ ազգի ազնվականության վկայական:

Այո՛, հերավի, հայ հանճարը կարողացել է խոսել մարդկային սրտի ամենամիտրական ու ամենաքնքույշ զգացմունքների հետ և կարողացել է հասնել մինչև նարեկացին, որ ապաշխարողի կերպարանքով, իր գլուխը բարձրացրել է մինչև երկինք ու զրույց է արել աստծո իրեն հետ երես առ երես:

Եվ նույնիսկ էսօր էլ՝ թեպետև իր հայրենիքի մի ծայրից մինչև մյուսը հոշոտված ու արյունաթաթախ՝ միայն խորապես խոցված ու ծանր վշտացած է հայը և ոչ թե խորտակված ու հուսահատ, և չի դադարել ստեղծագործության ոչ մի ասպարեզում:

Սրանից էլ ավելի մեծ ի՞նչ ազնվականության վկայական կարող է ներկայացնել աշխարհքին մի ժողովուրդ:

Եվ ահա էս անսակ մի ստեղծագործող ու ազնիվ հպարտության արժանապատվության զգացմունքով ու ազնիվ հպարտության մեջ կարող ենք ասել:

— Այո՛, մեր թանկագին հյուր և ազնիվ բարեկամ, մենք միշտ ունեցել ենք էդ բարձր վկայականը: Բայց էդ վկայականը էն վկայականներից չի, որոնց վրա դրված է մարդկային իշխանության կնիքը, էդ էն վկայականներից է, որոնց վրա բնությունն ու աստված են դրել իրենց կնիքը, և, դրա համար էլ, ինչքան դժվար է դրա ունենալը, էնքան էլ դժվար է

կարդալը: Սա էն գիրն է, որի մասին մեր Սայաթ-Նովեն ասում է.

— Ամեն մարթ չի կանա կարթա իմ գիրն՝ ուրիշ գրեն է...

Դուք եղաք էն հազվագյուտ մարդկանցից մինը, որ կարողացաք կարդալ էս կախարդական գիրը ամբողջ աշխարհքի առջև: Մեզ էս կողմից քիչ են ճանաչում լուսավոր աշխարհքում և մանավանդ Ռուսաստանում: Ռուսաց նշանավոր գրողներից առաջինն եք դուք, որ ձեր հուշակավոր ընկերների հետ միասին մեր և մեր եղբայրակից ժողովուրդների ստեղծագործական կարողությունը ու գեղարվեստական գործերը հիացումով հանում եք լայն հրապարակ և փոխադարձ հարգանքի ու սիրո կապերով ժողովուրդները շողկապում իրար հետ:

Էս բարձր ու գեղեցիկ գործի համար Հայոց Գրողների Ընկերության անունից հայտնում եմ Ձեզ մեր լիասիրտ շնորհակալությունը: Ողջունում եմ Ձեզ, որպես առևանգող գրականության խոշոր ներկայացուցիչ, և սիրով ու պատկանածքով խոնարհվում եմ ոռուսական մեծ ազգի հոյակապ գրականության առջև — Պուշկինի, Լերմոնտովի, Գոգոլի, Դոստոևսկու, Տուրգենևի, Չեխովի, Տոլստոյի և իրենց արժանավոր ժառանգների գրականության առջև, որի վրա կրթվել են մեր գրողներից ու մտավորականներից շատ շատերը: Մենք ինքներս մեր կողմից վաղուց ենք կապված ձեր գրականության հետ, այժմ էլ ավելի ուրախ ենք փոխադարձ կապի համար, որ հաստատում եք դուք, և աստված տա՝ դուք միակը չլինեք, որ ոռու բարձր մտավորականության կողմից գալիս եք մեզ մոտ սիրո ու հարգանքի խոսքերով:

1916

ԽՈՍՔ՝ ՈՒՂՂՎԱՍՏ Վ. ԲՐՅՈՒՍՈՎԻՆ

Էս տարվա սկզբին մեր անմոռանալի բարեկամն ու ընկերը՝ Վ. Բրյուսովը, երբ Թիֆլիսում մեզ մոտ հյուր էր¹, զրույցների ժամանակ հայոց բանաստեղծության հանդեպ

¹ Վալերի Բրյուսովը կովկաս է ժամանել 1916-ի հունվարին՝ կովկասի հայ գրողների և Բաքվի գրասիրաց ընկերությունների հրավերով: Բանաստեղծը հայ պոեզիայի մասին դասախոսություններով հանդես է եկել Բաքվում, Թիֆլիսում, Երևանում:

միշտ կրկնում էր իր անկեղծ հիացումը և զարմանքով ու ցավով հարցնում, թե ի՞նչպես են իրենք մինչև էսօր անծանոթ մնացել մի էս տեսակ հարուստ գրականության ու արվեստի:

Ու մի օր էլ, խնջուլքի մեջ, դիմելով նրան, ես էսպես բացատրեցի նրա համար զարմանալի երևույթը, թե ինչպես է եղել, որ իրենք անծանոթ են մնացել մեր բանաստեղծությանը: Ասի՝ մինչև էսօր Ռուսաստանից մեզ մոտ ոստիկաններ են ուղարկել, թե գնացեք գողեր բռնեցեք ու սրիկաներ: Նրանք էլ եկել են՝ ավազակներ, գողեր ու սրիկաներ են գտել: Դատախաղներ են ուղարկել, թե մարդասպաններ ու ոճրագործներ երևան հանեցեք ու դատապարտեցեք: Նրանք էլ եկել են, մարդասպաններ ու ոճրագործներ են գտել: Ժանդարմներ են ուղարկել, թե արթուն հսկեցեք, հեղափոխականներ գտեք: Նրանք էլ եկել են՝ հեղափոխականներ են գտել: Եվ այլն, և նրանք էլ եկել են՝ հեղափոխականներ են գտել: Եվ այլն, և խաբեբաներ ու ոճրագործներ կան, մարդասպաններ, զակներ կան, գողեր ու սրիկաներ կան, հեղափոխականներ կան... Իսկ ինչու ենք մենք անգիտակցորեն մնացել ինչպես էսօր:

Բայց բանաստեղծներ չեն ուղարկել, թե գնացեք Կովկասում կամ հայերի մեջ բանաստեղծություն որոնեցեք: Ահա, առաջին անգամն է ռուս բանաստեղծը գալիս մեզ մոտ հատկապես մեր բանաստեղծության համար: Առաջին անգամն են ռուս նշանավոր բանաստեղծները մեր բանաստեղծությանը մոտենում — և գտնում են լիովին, և այժմ լուրը կերթա Ռուսաստան, թե Կովկասում կամ հայերի մեջ բանաստեղծություն էլ կա, բանաստեղծներ էլ կան...

Մեր ազնիվ հյուրը պատմում էր, թե առաջին անգամ, երբ նրանց ուշադրությունը խնդրել էին հայոց բանաստեղծության վրա, նրանք ինչ զարմանքով ու անլուրջ էին վերաբերվել էդ առաջարկին, իսկ երբ ծանոթացանք, ասում էր: Գրեթե հենց առաջին ծանոթությունից, հենց առաջին գիշերից միանգամից ամենքս հիացանք ու դարձանք հայասեր: Եվ առաջ էր բերում էն տեսակ ականավոր բանաստեղծների կարծիքները, ինչպես Բայլմոնտ, Վ. Իվանով, Բլոկ և այլն: Բայց ամեն ինչից մի քանի փարատելու համար՝ էստեղ պետք է ասեմ, որ միշտ մեր միջնադարյան բանաստեղծությունն է եղած հիացման զլխավոր առարկան:

էն ժամանակ նրանք էին հիացած, այժմ հերթը մերն է: Ես քննադատելու չեմ «Поэзия Армении» գիրքը: Քննադատներ շատ կան, նրանք կքննադատեն: Ամենաշատը ես ինչ-ինչ նկատողություններ եմ անելու, մեծ մասամբ մեր հին բանաստեղծության մուկն ու վիճելի կետերի վրա: Սակայն չեմ կարող իմ բուն ու անկեղծ հիացումը շահատեստ հրատարակել մեր լավագույն բարեկամների ու ընկերների էն շնորհի ու սիրտ հանդեպ, որ նրանք հանդես են բերում էս գեղեցիկ գործի մեջ, հաճախ անհաղթելի դժվարությունները հաղթահարելով: Մարդիկ կան, որ բանաստեղծների անհաջող գործերն են որոնում ու նրանցով են զբաղվում: Դրանք անգետ ու անճաշակ մարդիկ են, և նույնիսկ վատ հոգու տեր մարդիկ: Թերությունները պետք է նկատել, բայց բանաստեղծին իր հաջող գործերի մեջ պետք է ճանաչել, նրանցով պիտի գնահատել:

Եվ էս ճշմարիտ է ո՛չ միայն ինքնուրույն գործերի համար, այլև թարգմանության: Չէ՛ որ բանաստեղծության թարգմանությունը, էն էլ առանձին համ ու հոտ, շունչ ու ոճ ունեցող բանաստեղծության թարգմանությունը շատ է դժար ու հազվագյուտ բան: Բանաստեղծության նույնիսկ լավ թարգմանություն համար ասված է, թե նա մի վարդ է, որ ապակու տակ է դրված: Այսինքն թե՛ ձևը կտեսնես, բայց բուրմունքը չես զգալ: Ինչքան շնորհ է հարկավոր, որ ոչ միայն հարազատ ձևը ցույց տա, այլև ինքնուրույն բուրմունքը հաղորդի: Եվ շնորհի հետ ի՞նչքան սեր...

Եվ ի՞նչ խնամքով կազմած ու ճաշակով տպած գիրք է, ինչքան շքեղ իր պարզության մեջ: Դրա համար էլ ամեն մի ձեռքն առնող, — հայ լինի թե օտար, — համակվում է սիրով ու հարգանքով դեպի մեր շատ թշնամի ու քիչ բարեկամ տեսած ցեղը:

Այժմ ամենքի համար պարզ է «Поэзия Армении» գրքի նշանակությունը: Էն ժամանակ Բրյուսովին իրեն էլ էինք ասում: Եվ բնավ չափազանցություն չէին էն բոլորը, ինչ որ դարձրին բրյուսովյան շաբաթը Թիֆլիսում՝ տոնական շաբաթ: Եվ ահա էս ամենի համար պարտականություն եմ զգում հղբայրական համբույր ուղարկելու նրանց, Ռուսաստանի լա-

վագույն զավակներին, որ կյանքում լավագույնն են փնտրում, ընտրում ու սիրում:

Վերջապես եկավ վաղուց սպասված գիրքը — Поэзия Ар-
мении-ն, Հայաստանի բանաստեղծությունը: Եվ ուսերենից
ու ուսախոս հայերից նրանք, որ միայն Հայաստանի թշվա-
ռությունն էին լսել, կոտորածներն ու սարսափները գիտին,
այժմ կտեսնեն և նրա բանաստեղծությունը ու կսիրեն: Չեն
կարող չսիրել, որովհետև ինքը ամբողջ սեր է. իսկ, մեր ան-
զուգական Սայաթ-Նովայի խոսքով ասենք, «Սերը սեր կու
բերի...» և

«Աշուղի լեզուն բլրու է,
Օրհնանք ունի, նախք լրկա...»:

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Գրականության միջոցով հոգեկան կապ է հաստատվում
հայ ու ռուս ժողովրդի միջև, և էն անարյուն, բարոյական
նվաճումները, որ անում է ու պիտի անի հայ ժողովուրդը թե՛
Ռուսաստանում, թե՛ Ռուսաստանի սահմաններից դուրս՝ նոր
են ու, անկասկած, շատ ֆանկ: Եվ լուրջ է գործի սկզբնավո-
րությունը:

— Ռուսաց գրողներից շատերն այժմ զբաղված են հա-
յոց գրականության ուսումնասիրության ու թարգմանության
գործով: Օրեցօր ավելի ու ավելի են ճանաչում ձեր բանաս-
տեղծությունն ու ձեզ, և ահա թե ինչեր են գրում իրենց նա-
մակներում, ասում է ռուս մեծանուն բանաստեղծը՝ Վ. Բրյու-
սովը, որ էդ գործի գլուխն է կանգնած Մոսկվայում, և հայտ-
նում է ռուս նշանավոր գրողների կարծիքները՝ լիքը հրճվան-
քով ու սիրով:

Եվ իր դասախոսությունը «Հայ բանաստեղծության մասին»
ընդհանուր առումով թերևս կարելի լինի ռուս գրողների էդ
հրճվալից վերաբերմունքի արտահայտությունը համարել:

Այժմ պ. Բրյուսովը հայոց բանաստեղծությունից անցնում
է պատմությանը:

Հայոց պատմությանը...

Նախանցյալ դարու վերջերն էր, որ ռուսները նոր ոտք

դրին Վրաստանի սահմանները: Շատ ցավալի պատկերներ
բացվեցին նրանց առաջին էդ գեղեցիկ ու դժբախտ երկրում:
էդ տխուր պատկերներից մեկն էլ նոր ավերած Թիֆլիսն էր¹,
ուր շատ դիակների թվում կար և մի սրահար ծերունի կրո-
նավորի դիակ՝ օլերով բերդի եկեղեցու դռան մեջտեղը ըն-
կած: Սայաթ-Նովայի դիակն էր դա, որ իմ կարծիքով, էդ ժա-
մանակ արքեպիսկոպոս էր Դավիթ անունով և թեմի
առաջնորդը: Սայաթ-Նովան — որ կնշանակի երգի թագավոր,
երաժշտության տեր: Հանճարի կնիքը ճակատին, քրիստո-
նեության խաչը ձեռքին, դաշույնը խրած իր ազնիվ ու մեծ
սրտի մեջ:

Եվ ինչո՞ւ չի կարելի Սայաթ-Նովային նկատել որպես հայ
ժողովրդի կյանքի ու տանջանքի խորհրդանշանը — նրա պատ-
մությունը:

Հանճարի կնիքը ճակատին, քրիստոնեության խաչը ձեռ-
քին, դաշույնը սրտի մեջ...

Եվ երբեք չցամաքեց էդ արյունոտ դաշույնը, ոչ նրանից
առաջ, ոչ էլ նրանից հետո մինչև էսօր...

Հայոց պատմությունը դարերի անվերջ մաքառում եղավ,
որ կարողանար ետ մղել էդ սպանիչ դաշույնը իր սրտից, և
իր լավագույն զավակներն էդ կովի մեջ մաշեց ու սպառեց:
էսօր էլ իր զավակները միացած ռուսական մեծ բանակին ու
լավագույն ժողովուրդներին՝ ասես թե հազար-հազար ձեռ-
քերով ձգում են ու ճգնում են հանեն էդ դաշույնը մեծ Սայաթ-
Նովայի սրտից:

Բայց պետք է ճանաչել Սայաթ-Նովային ու ծանոթացնել
աշխարհքին, որ ամենքն էլ համոզվեն, թե չի կարելի հա-
վիտյան թողնել էդ դաշույնը նրա սրտում...

Գնանք լսելու մեր լավ, մեր հռչակավոր բարեկամին, թե
ի՞նչ է ասում հայոց պատմության մասին, հայի դարավոր
տառապանրի ու մաքառումի մասին և հայի ապագայի մասին...

1916

¹ Հովհ. Թումանյանն աչքի առաջ ունի պարսիկ Աղա-Մահմեդ խա՛ի
արշավանքը 1795-ի աշնանը, երբ գրավվեց և ավերվեց Թիֆլիսը:

լու... Իսկ էդ ոգի ասած բանը անշունչ քարերից էլ կարող է Արրահամու զափակներ հարուցանել և դաշտերում ցրված ոսկորներից՝ կենդանի ծաղովուրդ:

Եվ ահա, ինչպես ամեն ժամանակ, էնպես էլ էսօր շարժվում է հայ ազգի հզոր ու աննկուն ոգին: Մեծ աղետի օրերում էլ նա, ասես թե մի վերածնունդ նախատոնելով, շարժվում է լայնածավալ ու բազմակողմանի: Ընկերություններ են հիմնվում իրար ետևից, գործեր են ծրագրվում ու ձեռնարկվում ամեն ապարեզում՝ ամենօրվա ապրուստի, մթերքների շուրջը կազմվող կոոպերացիաներից մինչև գրականության ու գեղարվեստի բոլոր ճյուղերը, մինչև գրողների, նկարիչների ու երաժշտական ընկերությունները...

Երաժշտական Ընկերություն... բայց երաժշտությունը ամենանորն է արվեստների մեջ և Երաժշտական Ընկերության լոկ գոյությունն անգամ ապացույց է՝ թե ուր ենք ձգտում մենք: Երաժշտությունը արվեստների մեջ էն կախարդ ուժն է, որ անմարմին արտահայտություններով կարողանում է անմիջականորեն ու միանգամայն տիրել մարդու բովանդակ գոյությունը, նրա մարմնին ու հոգուն և տիրաբար տանել, ուր որ կամենա: Էսպեսով էլ նա, արվեստների մեջ ամենազգայականն ու ամենավերացականը միաժամանակ, հանդիսանում է ամենաուժեղ արտահայտությունը ժողովուրդների ոգեկան կյանքի և՛ բարձրագույն հանույքներ տալով հանդերձ՝ դառնում է բարձրագույն կրթության միջոց:

Գևորգ կաթողիկոսի ու Զուխանյանի ջանքերից հետո մեր մեջ եկավ Կարա-Մուրզան, ապա թե Եկմալյանը հայտնվեց, Եկմալյանից հետո նոր երաժիշտները եկան խմբովին, որ իրենց հետ բերին երաժշտական ընկերությունը: Ահա էսօր էլ գալիս է եվրոպական երաժշտական աշխարհում անուն հանած հայ նշանավոր երաժշտագետը՝ Ալ. Սպենդիարյան, օտար երկրից դեպի հայրենի միջնոլորտը, արևմտյան երաժշտությունից դեպի արևելյան երաժշտությունը, մեծ ու գեղեցիկ ծրագիրներով, որոնց գործ դառնալուն առհավատայա են իր խոշոր տաղանդն ու փայլուն պատրաստությունը և էն հանգամանքը, որ իր շարժվելու հնարավորությունով կապված ու կախված չի մեր դժբախտ իրականությունից:

Առաջին անգամ է մեր տաղանդավոր հայրենակիցը հայտ-

նրվում մեր մեջ, առաջին անգամ է դուրս գալիս մեր հասարակության առջև¹, և առաջին անգամից ողջունում ենք հրճվանքով ու ծափերով:

1916

ՌԱՏԱՅՆԵԼ ԶԱՐԿԱՐՅԱՆԻ ԱԼՐՈՄԻՑԶ

Երջանկությունը, իմ շնորհալի բարեկամ, հենց նրանով է լավ, որ աշխարհքի բոլոր լավ բաների նման՝ օգի նման, լույսի նման՝ միշտ ու ամեն տեղ կարող ենք գտնել, դեռ նրանցից էլ ավելի առատ: Երջանկության աղբյուրը մարդու իրեն սիրամ է: Եվ մեծ դժբախտ սիրտ ունեցող մարդիկ կարող են վշտանալ և շատ վիշտ ու ցավ ունենալ, բայց երբեք դժբախտ չեն լինում նրանք:

1916

Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

1847 թվականին 18 տարեկան Միքայել Նալբանդյանը գրագիր է եղել Նոր-Նախիջևանի հոգևոր կառավարության մեջ:

1887 թվականին էլ 18 տարեկան ես էի գրագիր Թիֆլիսի հայոց Կոնսիստորիայում:

Շատերը կհիշեն, թե ութսունական թվականներին ինչքան քիչ էր գիրքը Թիֆլիսում, և ինչ դժվարությամբ էր ընթերցանության գիրք ճարվում՝ թե հայերեն, թե ռուսերեն: Դժվար էր մանավանդ ինձ նման մի օտարական պատանու համար:

Ներսիսյան դպրոցն էլ իսկի չավարտած՝ գրեթե բացարձակ անգետ էի ինչպես ամեն գիտության՝ էնպես էլ գեղարվեստին

¹ Ալ. Սպենդիարյանի առաջին սիմֆոնիկ համերգը կայացել է Թիֆլիսի արթունական թատրոնում 1916-ի մարտի 27-ին:

² Արևմտահայ գրող Ռուբեն Զարդարյանի որդին, որի ալբոմում գրառումներ ունեն նաև Ալ. Շիրվանզադեն, Վ. Տերյանը, Զ. Սալյանը, Ավ. Ահարոնյանը, Լեոն, Գ. Դեմիրճյանը և այլք:

ու գրականութեանը, թեև մեծ սեր ու ձգտում ունեի, մանկուց էլ ոտանավորներ էի գրում: 18 տարեկան էի դարձել և միայն մի քանի գիրք էր անցել ձեռքս, էն էլ մեծ մասամբ պատահունքով:

Եվ ահա էդպես պատահմունքով էլ էդ ժամանակները ձեռքս ընկան «Հյուսիսափայլի» համարները:

Շատ սիրեցի էդ բաց կապույտ, շողարձակ տետրակները և պատանեկան ոգևորությամբ կարդում էի: Առանձնապես գյուր էին եկել Կոմս էմանուելի հիշատակարանն ու մյուս գրվածքները, Ս. Նազարյանի խորհրդածություններն ու թարգմանությունները և Սաղաթյանի թարգմանած՝ Լերմոնտովի «Գեղը»:

էսպես էլ իմ շատ քիչ կարդացած ու սիրած գրքերից մինը եղավ «Հյուսիսափայլը»: Սրանով էլ պետք է բացատրել էն երևույթը, որ իմ էն ժամանակներում գրած ու 1890—1892 թվականներին Մոսկվա տպած՝ ոտանավորների մեջ պատահում են «Հյուսիսափայլի» ոչ միայն ոճերն ու դարձվածքները, այլև մինչև անգամ բառերն ու բառերի ձևերը,— սեղանակապուտ, գիշերատեսիլ, հարցանել, մեռանել, և այլն:

Չէ՞ որ ամեն մի գրող ոչ այլ ինչ է, եթե ոչ՝ իրենից առաջ եղածների ազդեցությունների համագումար — մեկից շատ, մյուսից քիչ, որ ընդունում, հալում է իր ոգևորության հնոցի մեջ ու ձուլում, ձևակերպում իր ճաշակով:

Եվ էսօր, «Հյուսիսափայլի» մեծ աշխատակցի մահվան հիսնամյակի օրը, առանձին սիրով ու երախտագիտությամբ եմ ետ նայում դեպի էն օրերը, երբ հափշտակված կարդում էի նրա գրվածքները և առհասարակ դեպի «Հյուսիսափայլը», ինչպես իմ պատանեկության հարազատներից մեկին:

Հետո, իհարկե, աչքս ավելի բաց անելով ու ավելի մեծ գրականությանը ծանոթանալով՝ տեսա, որ ես իմ պատանեկան անգիտության ու ոգևորության մեջ՝ ոչ իմացած եմ եղել, ոչ էլ նկատած «Հյուսիսափայլի» պակասությունները, և միմիայն նրա լավ կողմերով եմ եղել տարված: Չեմ իմացել թե պարսավազի կա Կոմս էմանուելի «Մեռելահարցուկի» մեջ,

թե «Տեսիլքի» մեջ Գիրսասը Սարգիս եպիսկոպոս Հասան Զալալյանն է՝ անհատական քենից էնքան սևացած, չեմ իմացել, թե իր բանաստեղծությունները առնված են Բերանժեից ու Հայնեից, մի խոսքով՝ նրանից առել եմ էն, ինչ որ լավն է ու պայծառ, ճիշտ երեխայի կամ լավ ընթերցողի նման: Եվ էսօր օրհնում եմ էդ երջանիկ միամտությունը ու մազաշափ անգամ իմ սերն ու հարգանքը չի պակասում թե՛ դեպի ամբողջ «Հյուսիսափայլը» առհասարակ, թե՛ դեպի Ս. Նալբանդյանը առանձնապես: Ինչ որ պակասություններ են՝ եղել են իրեն ժամանակինն ու պայմաններինը, և շատերը նույնիսկ շատ հեշտ բացատրելի ու հասկանալի են, իսկ միշտ կենդանի, միշտ վառվռուն ու միշտ որոնող հոգին ու ազատ շունչը իր անկապտելի էությունն է եղել: Եվ, վերջապես, ինչի՞ս են պետք նրա մանր մունր անցավոր պակասությունները, որ նրանից հազար անգամ ավելի շատ կյանքում ունի ամեն մի մարդ, ամեն օր, ամեն քայլափոխի վրա, ինձ էսօր նրա հավերժական լավությունն է զբաղեցնում, որ միլիոնավորներից մեկը չի ունենում:

Շատ հալածական ու շարքաշ կյանք է անցկացրել մեր Նալբանդյանը, բայց նույնիսկ էդ հալածանքների մեջ էլ բարձրացել է նա: Հալածվելով էլ միշտ դեպի վեր է զնացել, ոչ թե դեպի վար: Հալածել են,— Նոր-Նախիջևանից Մոսկվա է փախել և եկեղեցու դպրի ու հոգևոր կառավարության քարտուղարի պաշտոնից հասել է կազարյան ճեմարանի ուսուցչությանը և «Հյուսիսափայլի» գլխավոր աշխատակցի բարձրությանը: Էի են հալածել.— Մոսկվայից էլ արտասահման է անցել, դարձել իր ժամանակի լուսավոր աշխարհքի սակավաթիվ առաջադեմ մարդկանցից մինը, ճոխացած եվրոպական գիտությունով ու լայն, ազատական մտքերով, լավագույն մտածողների ու գործիչների ընկերն ու մտերիմը: Հալածանքի մեջ էլ վերացել է մեր կյանքի անձուկ ու վատ մթնոլորտից դեպի էն հավերժական բարձրությունը, որտեղից դենը էլ տեղ չկա լավ հոգիների համար, և ընդմիշտ հավերժացել է Հայոց Գրականության համաստեղության մեջ ու դարձել նրա ամենավառ, ամենապայծառ աստղերից մինը:

¹ Հովհ. Քումանյանի բանաստեղծությունների առաջին գրքերը լույս են տեսել Մոսկվայում 1890 և 1892 թվականներին:

Ազնիվ հանդիսականներ՝

Համաշխարհային գրականության պատմության մեջ հազիվ թե էնքան նշանավոր մի թվական լինի, ինչքան նշանավոր է 1603 թվականը, երբ, ասում են, լույս տեսան Անգլիայում **Շեքսպիրի «Համլետը»**, Իսպանիայում **Սերվանտեսի «Դոն Գիխոտը»**։ Մտածող ու տառապող նոր ինտելիգենտի ողբերգությունը և համաշխարհային ազնիվ խենթի արկածները պատմությունը։

Երկուսն էլ, թե Համլետը, թե Դոն Գիխոտը, գիտեն ու տեսնում են, որ աշխարհքը դուրս է եկել իր ճանապարհից, և մարդը տառապում է, երկուսն էլ զգում են, որ իրենց է վիճակվել նորից աշխարհքը ուղիղ ճամփի վրա դնելու մեծ գործը, բայց նրանցից մեկը, Համլետը, դժգոհ է, անիծում է իր ճակատագիրը, թե ինչու իրեն է վիճակվել էդ ծանր գործը ու դժբախտ է իր արքայական զգեստի ու պալատի մեջ, մինչդեռ մյուսը, Դոն Գիխոտը, գոհ է իր բարձր առաքելությունից և երջանիկ է աղբատ գիզալզոյի ցնցոտիներով ու իր ունեցած թշվառ միջոցներով։

Եվ ահա Համլետը թշնամուն հաստատ գտնելուց ու պարզ տեսնելուց հետո էլ՝ կասկածներ է հայտնում, թե գուցե լավ չտեսավ, գուցե լավ չիմացավ և աշխատում է իրեն խաբել ու հանգստացնել և խուսափել իրեն վիճակված արյունոտ գործից, մինչդեռ մյուսը, Դոն Գիխոտը, հենց բավական է աչքը բաց անի, որ ամեն տեղ էլ տեսնի թշնամուն, ինչ ուզում է լինի և ով ուզում է լինի։ Եվ երբ Համլետը վճռական վայրկենին վարանում է ու պատյանից դուրս շի քաշում իր սուրը առջև կանգնած թշնամուն հարվածելու համար, այլ տառապալի աղաղակում է.— Զսպիր քեզ, հոգիս, թող սուրը իմ խոսքերի մեջ լինի, ոչ թե գործի,— էս միևնույն ժամանակ մյուսը, Դոն Գիխոտը, առանց վարանքի ու տարակուսանքի, լոկ երևույթը նկատելուն պես մերկացնում է սուրն ու հարվածը իջեցնում։ Սակայն՝ երկուսն էլ տառապում ու կոպում են իրեն ճամփից դուրս եկած աշխարհքը կարգի դնելու համար, մարդուն երջանկացնելու համար։

Նույնքան նշանավոր է 1616 թվականը, և հատկապես էդ թվականի ապրիլի 23-ը, երբ միևնույն օրը վախճանվեցին՝ Անգլիայում **Շեքսպիրը**, Իսպանիայում **Սերվանտեսը**, և էսպեսով համաշխարհային գրականության հորիզոնի վրա միաժամանակ մայր մտան երկու հսկայական արեգակ։

Երկու հսկայական արեգակ...

Սակայն գերազանց է բրիտանական հանճարի փայլը, որ իր ճաճանչները մի կողմից զարկում էր մինչև էսքիլեսի ու Սոֆոկլեսի ժամանակները, մյուս կողմից դեպի գրականության ապագան։ Եվ ամեն մի գրող, ինչ աշխարհքում էլ ասպարեզ իջնի, տեսնում է իր ուղին արդեն լուսավորված նրա շողերով, և գրեթե անխտիր, շատ քիչ բացառությամբ, ամենքն էլ խոնարհել են նրա հանճարի առջև։

Մեծ Գյոթեն, որին մի Ոլիմպիական աստծու են նմանեցնում, որ միշտ հանգիստ կարող է նայել ամեն գրական մեծությունների, երբ հասնում է Շեքսպիրին, ասում է.

— Ահով ու դողով եմ մոտենում գրական էն հսկա կաղնուն, որի մոտ միանում են ու որից բաժանվում են գրականության բոլոր ճանապարհները...

Եվ ահա էսօր՝ գրականության էդ բոլոր ճանապարհներով բոլոր կուլտուրական ազգերը իրենց հիացումն ու հարգանքն են ուղղում դեպի Անգլիա, դեպի Շեքսպիրի նվիրական գերեզմանը և դեպի նրա ծնող ժողովուրդը — անգլիական ազգը։

Մենք, հայերս էլ, որ երբեք խորթ չենք եղել գրականության ոչ մի ճանապարհին և վաղուց ջերմ սիրել ենք Շեքսպիրը՝ նրա մահվան երեքհարյուրամյակի օրը արդեն ունենք մեր արժանավայել ներկայացուցչությունը, և ինձ էնպես է թվում, թե էսօր Շեքսպիրի գերեզմանի վրա արգեն կանգնած է հայկական Համլետը, հոգիացած Ադամյանը, իբրև հայության ներկայացուցիչ, և դժվար թե ուրիշ որևէ ազգ էլ կարողանա ավելի գեղեցիկ մի ներկայացուցչություն ունենալ էսօրվան օրը՝ Ստրադֆորտում իր հարգանքն ու մեծարանքը ցույց տալու համար։

Հարգանք անգլիական մեծ ազգին, որ մարդկությանը էնքան մեծ հանճարներ ու հանճարեղ կարգեր է տվել, հարգանք

խապանական ազգին, որ կարող է միշտ պարծենալ իր շատ մեծ զավակների անուններով, և հարգանք նրանց հանճարեղ զավակների՝ Շեքսպիրի ու Սերվանտեսի անմահ հիշատակին:

1916

ԱԿԱՄՅԱՆԻ ՕՐԵՐԻՑ

(Հիշողություն)

Լրացավ Պետրոս Ադամյանի մահվան քսանհինգամյակը: Էսօր՝ նրա կյանքը վերապատմելու կամ նրա տաղանդը վեր հանելու ժամանակ՝ ես էլ ուզում եմ էն պատմել, թե երբ ու ինչպես եմ նրան տեսել և ինչ առնչություն եմ ունեցել նրա հետ, թեկուզ և շատ կարճ ու կողմնակի:

Ութսունական թվականներն էին:

Մեր կյանքում ռազմական փողի նման թնդում էին Գամառ-Քաթիպայի ազատ երգերը, վարար գետի նման հոսում էին Բաֆֆու վեպերը անընդհատ ու խորհրդավոր, մամուլի մեջ աչ ու ձախ շտապալից մտրակում էր Գրիգոր Արծրունին, իսկ Թիֆլիսի թատրոնում գինավորական երաժշտությունը հընչում էր «Ջեյթունցիների մարշը», և որտուտ էր Ադամյանը: Հասարակությունը խոնվում էր թատրոնի դռների առաջ, ու փողոցային երեխաները Թիֆլիսի փողոցներում ճշում էին.

— «Օֆելիա՛, մտի՛ր կուսանոց...»

— Դեղդեմոնա՛, ո՞ւր է թաշկինակը»...

Հայոց լեզուն տիրաբար հաղթանակում էր գրեթե ամբողջովին վրացախոս Թիֆլիսում և մի նոր շունչ էր փչում:

Թիֆլիսի հայության վրա առանձնապես մեծ տպավորություն էր թողել էն շտեսնված ու չլսված հանգամանքը, որ գլխավորապես ռուս գեներալներն ու բարձր շրջանները իրենց ընտանիքներով լցվում էին հայոց թատրոնի օթյակները...

Ես աշակերտ էի:

Ոչ մի կերպ չէի հաշտվում էն ամենի հետ, ինչ որ խոսում էին էս մարդկանց դեմ. մանավանդ խոսում էին Գամառ-Քաթիպայի, Բաֆֆու և Ադամյանի դեմ, Արծրունու մասին միայն թե ասում էին բռնակալ է:

Պատանեկան ասեմ թե երեսայական դայրույթով ծառա էի լինում, վիճում իմ միանգամայն չգիտցած բաների մասին, պաշտպանում էի նրանց և շարունակ երազում էի՝ տեսնել:

Գամառ-Քաթիպային երբեք էլ չտեսա: Դեպքը բերեց, հենց էդ օրերը, դեռ աշակերտ, եղա Բաֆֆու մոտ, երբ առաջին փռած «Սամվելն» էր գրում ու սրբագրում: Մի քիչ հետո եղա և Արծրունու խմբագրատանը, մի երկու անեկդոտանման բան էլ տվի թերթի համար: Բայց ամենից դժարն ու ամենից ծիծաղաշարժը Ադամյանի հետ ծանոթանալս եղավ: Հեշտ բան չէր էն ժամանակ մի աշակերտի համար՝ Ադամյանին տեսնել բեմի վրա: Ներսիսյան դպրոցի աշակերտներին արգելված էր թատրոն գնալը:

Թատրոնի վերաբերությունը անողոքելի խիստ էր մեր վերակացու պարոն Գրիգորը: Նա թատրոնը համարում էր անբարոյականության վայր և ամեն կերպ աշխատում էր «էս արդար երեխանցը» հեռու պահի էն նդովյալ շինությունից: Ինքն էլ կյանքում թատրոն չէր գնացել ու չէր գնում: Տարին մի անգամ, բարեկենդանին էլ, երբ դպրոցից հրամայում էին՝ «Վարդանանց պատերազմի» ներկայացմանը որդեգիրների հետ թատրոն գնա, ստիպված գնում էր, բայց ներկայացման ժամանակ նստում էր երեսը ետ շրջած ու մեջքն արած դեպի բեմը:

Ահա էս ժամանակ, Ադամյանի թունդ ժամանակը, Լոռուց Թիֆլիս եկավ իմ հին ուսուցիչը, Տիգրան Տեր-Գավթյան, որին պարտական են իմ հասակակից գրեթե բոլոր գրագետ լոռեցիները, և իր նախկին աշակերտներից մի քանիսին հավաքեց, թե եկեք ձեզ տանեմ «Համլետ»-ի ներկայացմանը, Ադամյանին տեսեք Համլետի դերում: Տարավ: Տեսանք: Էդ գիշերը ինձ համար եղավ մի կախարդական գիշեր և գրեթե վճռական նշանակություն ունեցավ իմ ամբողջ գրական կյանքում: Էդ գիշեր ես էնքան սիրեցի Համլետը, և հետո էլ Շեքսպիրը, որ մի քանի դրամա գրեցի ու միշտ ոչնչացրի, որովհետե... Շեքսպիրի գրածների նման չէին դուրս եկել: Սակայն էնքան ուժեղ էր կախարդանքը, որ մինչև օրս էլ ես ինձ դրամատուրգ եմ համարում, քան ուրիշ մի բան:

Էն գիշերից հետո ես գաղտնի ճանապարհով դարձյալ ըն-

կա Ադամյանի ներկայացումներին, և մինչև անգամ մ'չ գիշեր էլ խաղացի նրա հետ: Էդ խաղը, որ բոլորովին անակնկալ, մի սկանդալ դուրս եկավ ու խեղճ Ադամյանին գրեթե սպա- նեց բեմի վրա, հենց էդ խաղն էլ պատճառ եղավ, որ ես ծա- նոթացա նրա հետ: Էդ էլ էսպես եղավ: Պոլսից Թիֆլիս էր եկել իր ժամանակին հայտնի դերասան Կյուրեղյանը և, եթե չեմ սխալվում, տիկ. Հրաչյայի հետ «Վարդան Մամիկոնյան» էին խաղալու: Ահա այդ խաղի մեջ Ադամյանն էլ վերցրել էր Եղիշեի դերը: Վարդան Մամիկոնյան... Եղիշե... Ադամ- յան... Ես էլ ներսիսյան դպրոցի աշակերտ — վճռեցի՝ տես- նել, ինչ ուզում է լինի, թեկուզ դպրոցից դուրս անեն: Մի բարի հոգի ինձ սովորեցրեց, թե էնպես մի կարճ ու ապահով ճանապարհ կա, որ համ Ադամյանին կտեսնես, համ Վարդան Մամիկոնյանին, դեռ նրանց հետ էլ կխաղաս ու քեզ էլ դըպ- րոցից դուրս չեն անիլ:

— Ի՞նչպես:

— Թե՛ ներկայացումից առաջ կգնաս բեմի ետևը, կհայտ- նես, որ ուզում ես գինվոր խաղաս — կընդունեն, շորերդ կփոխեն, բեղեր կշինեն, ու կլինես բեմի վրա, էլ ոչ կճա- նաչեն, ոչ դուրս կանեն:

Փոխանակ քիչ առաջ գնալու, ես դեռ մի քանի ժամ առաջ գնացի, մինչև իրիկնապահ սպասեցի: Իրար ետևից եկան, հարցուփորձ արին, վերջապես ինձ ընդունեցին հայոց գինվոր: Շորերս փոխեցին, տրիկո հագցրին, գուլնզգուլն լանջապա- նակ հագցրին, մի ոսկեզօծ կարդոնե սաղավարտ կոխեցին գլուխս, մի փետրե սուր կախ արին կողքիցս, սուր ծերը ար- ծաթի գուլն թղթով պատած մի նիզակ էլ ձեռս տվին, և ար- դեն կազմ ու պատրաստ էի մեծ պատերազմի համար:

Էսպես կերպարանափոխված ու գինավառ՝ որ հայելու մեջ ինքս էլ ինձ տեսա՝ լցվեցի գործի լրջության գիտակցությամբ: Ռուս գինվորներ էին բերել, նրանց հետ տարան մի երկու անգամ բեմի վրա պատեցինք, փորձ արինք, թե որ կողմից պետք է մտնեինք, ինչ անեինք ու ինչ ասեինք — և ընդամե- նը ասելիքներս մի քանի բացականշութուններ էին — կեց- ցե՛ Վարդան, կեցցե՛ զորավար, և սրա նման բաներ, նրանից հետո մեռել պիտի խաղաչինք, իբրև պատերազմի գաշտում — Ավարայրի գաշտում սպանված հայ գինվորներ: Ահա հենց

էս սպանված գինվորների դերն էր, որ ես չկարողացա կա- տարեմ ու դուրս եկավ սկանդալ, վերջին գործողությանը, վարագույրը բանալուց առաջ մեզ տարան պառկեցրին գա- նազան տեղեր՝ թե դաշտում, թե լեռնալանջերին, իբրև սպան- ված ու թափված գինվորներ: Ես ընկա մի լեռնալանջ: Բանե՛ ին է, որ էդ լեռնալանջ ասածդ կտավի վրա նկարած լեռներ ու ժայռեր են, ետևից տեղ-տեղ արանք-արանք տախտակնե- րով շինած: Էդ տախտակների վրա պառկեցինք — իբրև լեռ- նալանջին: Ես էլ, ինչքան կարող էի, պատմական մեծ ող- բերգությանը վայել մի դիրք ընդունեցի, սաղավարտս ու նի- գակս էլ կողքիս ընկած, տախտակի լեռքովը մին պառկեցի: Բայց էնպես պառկեցի, որ կարողանամ ներքև — դաշտին նայեմ, ուր մի սևացրած արկղի վրա, իբրև ժայռի վրա գա- լարվելով ու — «Ա՛խ, Հայաստան, Հայաստան» մրմնջալով, մեռնում էր Վարդան Մամիկոնյանը — Կյուրեղյանը: Նրա մոտ պիտի գային և Վասակի կիներ — տիկին Հրաչյան, և վերջապես Եղիշեն — Ադամյանը ծեր Մառուկի հետ:

Վարագույրը բացվեց: Առաջին անգամ էի բեմից հասա- րակություն տեսնում. անհամար գլուխներ ու աչքեր, բոլորը հառած դեպի մեզ: Բեմի վրա կես մութ է, լուսնյակ գիշեր և խորհրդավոր լուսթյուն, միայն Վարդանն է, որ ոլոր-մոլոր է գալիս ու ցավալի մրմնջում. — «Ա՛խ, Հայաստան, Հայաս- տան»...

Ահա եկավ Սաթենիկը, մի բաժակ գինի ձեռքին, որ Վար- դանի համար է բերում Հայաստանից:

Ոտներս ինձ քաշեցի, սրան ճանապարհ տվի: Գնաց, ներ- քև սկսվեցին նրանց փոխադարձ ողջագուրանքները, գուրգու- րանքներն ու սրբազան ուխտերը...

Մին էլ հանկարծ թատրոնը թնդաց ծափերից, գլխիս վերև հայտնվեցին Եղիշեն — Ադամյանը ծեր Մառուկին հենված:

— Մո՛, ճանապարհ տուր...

Ոտներս դարձյալ ինձ քաշեցի, սա էլ անցավ:

— Վարդան, իմ Վարդան, — մրմնջալով Ավարայրի դաշտն իջավ: Հենց դաշտն իջավ թե չէ, որ պիտի խաղտ — սը՛սս... հասարակությունը ամեն կողմից սը՛ս արավ ու լռեց, պատրաստվեց: Էդ ժամանակ ես էլ ուզեցի պատրաստ- վեմ, որ լավ լսեմ ու տեսնեմ. վիզս որ ծռեցի, թեքեցի դեպի

ներքե, անկանոն դիրքի պատճառով՝ թուրս կատիկս թռավ թե ինչ՝ հանկարծ մի հազ բռնեց ինձ: Ես ցնցվում եմ ամբողջ մարմնով, ինձ հետ շարժվում ու ճռճում է ամբողջ դեկորացիան, բոլոր տախտակներն ու կտավները — այսինքն բոլոր սարերն ու ժայռերը, և հակառակի նման էն ամենահանդիսավոր ռուպեին, թատրոնի խորին լուսթյան մեջ: Թատրոնում ընդհանուր ծիծաղ բարձրացավ, գալերեան սկսեց աղմկել ու աղաղակել — բրավո... բիզ, կեցցեն հայոց քաջերը... և այլն և այլն:

Խեղճ Ադամյանը մնացել է քարացած, մեջտեղը կանգնած: Վերջապես հազս դադարեց, ժողովուրդը հանգստացավ, նորից սը՛սս, նորից լուսթյուն: Ադամյանը մի փոքր էլ սպասեց ու խաղաց: Գործողությունը վերջացավ: Վարագույրն իջավ թե չէ՝ ժողովուրդն սկսեց դղրդալի ծափահարություններով Ադամյանին կանչել, իսկ Ադամյանը տեղից թռավ դեպի մեռելները կատաղած գոռալով:

— Ա՛ն ո՞վ էր, ծո՛... բայց ժամանակ չկա, էնտեղ կանչում են, վարագույրը բարձրացնում են: Գնաց: Ես խառնակ դրուսթյունից օգտվելով փախա, զինվորական համազգեստս հանեցի ու փախա դեպի պարտերը: Ծանապարհին, դեպի բեմի ետևը եկողները հարցնում էին, թե էն ո՞վ էր, որ էնպես հազում էր ու աչքերն էլ բայ ներքև նայում: Ես մտածեցի, որ էս աչքերի բացն էլ քանի չեն իմացել — շուտով թողնեմ բեմական ասպարեզը, գնամ տուն:

Մյուս օրն էր թե մի երկու օրից հետո, պատմեցին, թե այժմ Ադամյանն էլ բարկացած չի, ծիծաղելով է պատմում էդ դեպքը և հարցնում էր, ուզում էր ինձ տեսնի: Ես գնացի, զարմանալի սիրով ու քաղաքավարությունը ընդունեց, մանավանդ երբ իմացավ Ներսիսյան դպրոցի աշակերտ եմ և ինչ պատճառով էի գնացել, իրեն գրքերից միին էլ նվիրեց ի հիշատակ Վարդանանց պատերազմի ներկայացմանը և իմ կարճատև — բայց աղմկալի բեմական գործունեության: Նրանից հետո մի քանի անգամ եղա մոտը:

Ինձ թվաց մի շատ քաղաքավարի ու քնքույշ, բայց հիվանդ մարդ, և չգիտեմ ինչու, մենակ մարդ: Գուցե էն էր պատճառը, որ հյուրանոցում էր ապրում, չգիտեմ, բայց մենակ մարդ...

Այնուհետև երբ ավելի ու ավելի ծանոթացա նրա կյանքի հետ, նրա տառապանքների հետ, տեսա, թե մեր կյանքում ինչքան է հալածվել և մամուլից, հատկապես «Մշակից», որ նրան ոչ թե տանելի, այլ անտանելի տաղանդ էլ չէր ընդունում և դրա համար կովի էր մտել ոռուսաց «Кавказ» թերթի հետ: Հալածվել է և մասնավոր մարդկանցից, և երբեմն էլ հալածանքների պատճառը եղել են զանազան կանանց պատմություններ: Առանձնապես նեղն է ընկել մի ոռուս կնոջ պատճառով և մի շատ անախորժ դրուսթյունից ազատվել է միայն իր բարեկամ գնդապետ Մելիք-Հայկազյանի միջամտությամբ: Եվ հետագայում, ասում եմ, երբ ավելի շատ ծանոթացա էս մենակ ու միշտ օտար մարդու կյանքի հետ, որին ավելի շատ գնահատել ու սիրել են նրանք, որոնց միանգամայն խորթ է եղել ինքը, որոնց նույնիսկ լեզուն չէր հասկանում ինքը, երբ վերահասու եղա, թե ինչ աշխատանքով ու ինչ բարեխղճությամբ է նա իր դերերն ուսումնասիրելիս եղել — և ամսական քանի-քանի դեր խաղալու պայման է կապելիս եղել նրա հետ հայոց թատրոնը պահող մարմինը, և թե նրան ծափահարողները ծափահարել են լոկ արտաքին փայլից շլացած ռուպեաբար և լքել են մշտապես, այնուհետև նա դարձավ ինձ համար մի մշտական վիշտ, մի գեղեցիկ վիշտ, մի իսկական Համլետ, որ բարձր ձիրքերով ծնվել էր մի շատ խելոյակ մթնոլորտում...

Եվ խելոյակ...

Իննսնական թվականների սկզբներին էր: Աշխարհահրոշակ իտալացի դերասան Ռոսսին եկավ Թիֆլիս: Էն ժամանակ, ինչքան հիշում եմ, Թիֆլիսում բացի հայոց դերասանական խումբը՝ ուրիշ խումբ չկար: Հայոց խումբն էլ մեծ մասամբ կազմված էր սիրողներից հանգուցյալ Գևորգ Չմբղկյանի գլխավորությամբ: Ես էլ էի սիրողների մեջ: Ռոսսան անտրեպրենյորը մեզ հրավիրեց Ռոսսուն դիմավորելու: Եվ ահա մենք, իբրև դերասանական խումբ գնացինք կայարան, Ռոսսուն ընդունեցինք ծաղկեփնջերով ու երաժշտությունով: Ռոսսին մեզ հրավիրեց իր բոլոր ներկայացումներին: «Համլետի» ներկայացման գիշերն էր: Ամբողջ հասարակությունը անհամբեր սպասում էր վարագույրի բացվելուն, որ Ռոսսու Համլետը համեմատի Ադամյանի Համլետի հետ: Դուրս եկավ

Ռոսսին, հսկա դերասանը — Դանիայի դժբախտ ու փիլիսոփա արքայազուներ: Հասարակությունը հափշտակված, շունչն իրեն պահած հետևում էր մեծ ողբերգուին: Գործողությունը վերջացավ: Վարազույրն իջավ: Թատրոնը դղրդաց միահամուռ ու անընդհատ ծափահարությունից: Ռոսսին ստիպված մի քանի անգամ բեմ դուրս եկավ՝ մինչև որ հասարակությունը հանգստացավ: Եվ հասարակությունը հանգստացավ թե չէ, նույնիսկ Ռոսսու թարմ խաղի ահագին տպավորության տակ գրեթե միաձայն արձակեց իր վճիռը:

— Մքանչելի է... Բայց Ադամյանին չի հասնիլ:

Ես իմ կյանքում, թերևս երբեք ինձ էնքան հպարտ չեմ զգացել իբրև հայ, ինչպես էն գիշերս:

Բայց, այսուամենայնիվ, չեմ կարող ասել՝ հպարտություն՝ նրա ավելի մեծ եղավ, թե վիշտս...

Նա մեզանում չդնահատվեց, և անպաշտպան, անժամանակ գերեզման իջավ:

1916

ԳԵՂԱՐՎԵԱՏԸ շԱՅԲԵՆԻՔ ՈՒՆԻ

Ես շատ եմ՝ զարմանում մեր Գևորգի (Բաշինջաղյանի) բռնած դիրքի և այսօրվա ժողովից բացակա լինելու վրա: Նա ասում է թե՝ «գեղարվեստը հայրենիք չունի», ես ուզում եմ շուռ տալ նրա այդ նախադասությունը, իսկ «Հայրենիքը գեղարվեստ ունի»¹: Իհարկե, ամեն հայրենիք ունի իր ուրույն արվեստը և չի կարող չունենալ, ինչպես որ ամեն ժողովուրդ ունի իր գրականությունը, իր ֆուկլորը: Յուրաքանչյուր ազգի և ժողովրդի մեջ ուրույն կերպով է զարգանում և ծափավում գեղարվեստի այս կամ այն ճյուղը, և դա է, որ որոշում է նրա կուլտուրայի աստիճանը և կենցաղի առանձնահատկությունը: Մենք պետք է ուրախանանք մեր արվեստի զարգացմանը նպաստող ամեն մի ձեռնարկության, ներկա դեպ-

¹ Հովհ. Թումանյանի ելույթը Հայ արվեստագետների միության բացման հանդեսին, որ կայացել էր 1916-ի մայիսի 1-ին, Թիֆլիսի Արտիստական ընկերության դահլիճում, Ալ. Շիրվանզադեի նախագահությամբ:

քում «Հայ արվեստագետների միության» հանդես գալով: Մեր ազգի մեջ այս դառն օրերին, — շարունակեց ճառասուրը, — ես նկատում եմ մի տեսակ ինքնաճանաչում, ինքնագնահատում, սթափություն, և այդ շատ մեծ երևույթ է մեր կենսունակության համար: Սրտատուչ է մանավանդ այն հանգամանքը, որ այս ընկերության հիմնադիր անդամների թվում մենք տեսնում ենք, այսպես ասած, «դաղթական» նկարիչներ, որոնց նկարները, ով գիտե, դեռ պատերազմի դաշտում ու ճանապարհներին են ընկած: Ուրեմն ողջունելով մեր ժողովրդի կենսունակությունը, ողջունում եմ այս նոր ընկերության երևան գալը, որը մեծ աշխատանք ունի կատարելու մեր հայրենիքի գեղարվեստի զարգացմանը նպաստելու գործում: Գեղարվեստը հայրենիք ունի:

1916

ԱՐԵՎԵԼՔԻ ՆՈՐ ԳԱՐԱԳՈՒՆԵԸ

Ասիան ու Եվրոպան կամ, ուրիշ խոսքով, Արևելքն ու Արևմուտքը լոկ աշխարհագրական տերմիններ չեն, այլև տարբեր քաղաքակրթություններ ու աշխարհայացքներ: Հազարավոր տարիների ընթացքում էդ աշխարհներից ամեն մինը հանդես է բերել իր էս կամ էն գերազանց ուժը՝ իբրև իրեն ներկայացուցչությունը մյուսի հանդեպ: Եվրոպա կամ Արևմուտք ասելով մի ժամանակ Հունաստան են հասկացել, նրանից հետո Հռոմ և կամ Բյուզանդիա, ինչպես որ Ասիա, և հատկապես Արևմտյան Ասիա կամ Արևելք՝ երբեմն Բաբելոն կնշանակեր, երբեմն Ասորեստան, երբեմն Պարսկաստան և երբեմն արաբական խալիֆայություն:

Եվ մինչդեռ քրիստոնյա արևմուտքի ժողովուրդները ժամանակի ընթացքում վեր են կենում հեգեմոնիայի դեմ ու ձգտում են հավասարակշռության, մյուս կողմը՝ իսլամական արևելքը արաբական գերիշխանությունից հետո ընկնում է թուրքի գերիշխանության տակ և 14-րդ դարից սկսած Թուրքիան հանդիսանում է արևելքի ներկայացուցչությունը արևմուտքի հանդեպ մինչև էսօր:

Եվ Բաբելոնից, Ասորեստանից, Պարսկաստանից ու արաբական իշխանութիւնից հետո Արևելքը երբեք չէր ունեցել էսքան վայրենի, էսքան անկուտուր ու անարժան մի ներկայացուցչութիւն: Մինչև թուրքական գերիշխանութիւնը՝ Արևելքը, որ կրոններ էր տվել աշխարհքին, փիլիսոփայական սիստեմներ, շատ մեծ բանաստեղծներ ու գիտութիւններ՝ մեծ էլ հարգ ու հմայք ունեւր և միշտ կենդանի ապրում էր ավանդական խոսքը թե՛ Արևելքից է լույսը: Թուրքական գերիշխանութիւնից հետո Արևելքը և խավարն ու բարբարոսութիւնը դարձան հոմանիշ հասկացողութիւններ:

Նա ոչ միայն ինքը շատեղծագործեց ու ոչ մի հանճարեղ բան չտվեց աշխարհքին, այլև դրսից չընդունեց ոչինչ և չմշակեց: Միշտ մնաց սուրը ձեռքին ավերող: Եվ եթե արգելենք նրան իսլամ ընդհանուր անվան տակ զարդարվելու պարսիկ, արաբ կամ հնդիկ հանճարների անուններով՝ կմնա մեջտեղը կազնած իր նոմադական մերկութիւնով՝ ձեռքին միշտ արյունոտ սուրը:

Եվ էդ արյունոտ սուրը նա մորթեց Արևելքի կուլտուրական ժողովուրդներին, խորտակեց նրանց հին ու փառավոր կուլտուրաները և, վերջին մահացու հարվածը տալով բյուզանդական պալետոլոգներին, էդ սպանիչ սուրը մեկնեց Եվրոպայի սիրտը:

Չորս հարյուր տարի շարունակ գրոհ տվեց Եվրոպայի դարպասների վրա, որ խորտակի ու ներս խուժի՝ սպանելու արևմտյան քաղաքակրթութիւնը, ավերելու բարեշէն քաղաքները, ավարելու դարերով դիզած բարիքները, իր ձիաների սմբակների տակ տրորելու հումանիզմն ու վերածնութիւնը, կոտորելու Ռաբլին ու Տասսոյին, Շեքսպիրին ու Սերվանտեսին, Ռուբենսին ու Ռաֆայելին, Կոպեռնիկին ու Գալիլէյին, Կոլումբոսին ու Գուտտեմբերգին և նմաններին:

Չորս հարյուր տարի Արևելյան Եվրոպան ահով ու սարսափով դիմագրավեց նրա դժոխային արշավին, մինչև որ 17-րդ դարում, Վիեննայի պատերի տակ, վերջնականապես կտրեց նրա առաջ անցնելու հույսը:

Այնուհետև կոխվեց իրեն վրա առավ նոր զորացող Ռուսաս-

տանը, որ երեք հարյուր տարի է՝ անհաշտ ու անդադար պատերազմ է վարում էդ դաժան ու խավար ուժի դեմ՝ հետզհետե կտրատելով ու կրճատելով նրա լայնածավալ տերութիւնն սահմանները և էսօր էլ, ահա, տալիս է վերջին հարվածը:

Մեծ է Ռուսաստանի էս ծառայութիւնը քաղաքակիրթ աշխարհքի առաջ, և երբեք նրա կառավարութիւնն հոռի կողմերը չպետք է արգելեն տեսնելու էս մեծ գործը, որի հաջող ավարտումը համաշխարհային տոն է քաղաքակրթութիւնն համար:

Տոն է մանավանդ էն ազգերի համար, որոնք դարերով կրել են թուրքի անտանելի լուծը և դարերով լալիս են իրենց անվերջ կորուստները նրա ձեռքից:

Եվ ահա էսօր նա՝ ռուսական հզոր բանակի առջև պարտված ու ջարդված, հարյուր հազարավոր անմեղ մանուկների, տղամարդկանց ու կանանց արյունով արյունոտ իր սուրը ձգելով հաղթողին՝ տեղի է տալիս դեպի իր հին բունը, դեպի Անգորայի հովիտները¹, որտեղից դարեր առաջ սկսեց իր քստմանելի ասպատակութիւնը աշխարհքի վրա:

Արդեն անցավ Վերին Եփրատից դէնը, և հեռագիրն աշխարհին ավետում է, թե Մեծ Հայաստանը վերջնականապես մաքրված է թուրքական տիրապետութիւնից: Վերջին զոհն էլ՝ հոշոտված ու ծվատված՝ արդեն ազատված է նրա ճանկերից:

Պատմական ի՞նչ հոյակապ ավետիս: Բացվում են Արևելքի ոսկի դռները ազատ ժողովուրդների, լուսավորութիւնն ու քաղաքակրթութիւնն համար և սկսվում է մի նոր դարագրութիւն Արևելքի պատմութիւնն մեջ:

1916

ՀՆՆՐԻԿ ՍՆԵԿԵՎԻՉԻ ՄԱՍԻՆ

Անմահ հոգի, որ Հենրիկ Սենկևիչ անունով մարմին առար բազմատանջ լեհ ազգի կյանքում՝ նրա տանջանքները փարատելու համար, ընդունիր աշխարհքի ամենատանջված ժողո-

¹ Նումագներ — Թափառաշրջիկ, վաշկատուն ցեղեր:

¹ Անգորա — Նույնն է՝ Անկարա:

վուրդներինց մեկի՝ հայ ժողովրդի գրական գերդաստանի սեր՝
ու հիացումը:

Դո՛ւ, որ ազատ, լավագույն օրերի արշալույսը վառեցիք
քո ցեղի հոգու մեջ, և արդեն նրա առաջին ցուքերն ընկնում
են թարմ շիրիմիդ վրա, փառաբանում է քեզ միշտ արշալույսի
ձգտող հայ ժողովրդի գրականությունը:

Դո՛ւ, որ ընդհանուր եղբայրության ազնիվ կապերով շաղ-
կապեցիր ազգերն ու ազգի-ազգի մարդիկ ու եղբայրորեն
համախմբեցիր դագաղիդ ու հիշատակիդ շուրջը, օրհնում են
քեզ եղբայրության ու սիրո էնքան կարոտ հայ ժողովրդի
գրողն ու ընթերցողը:

Նվ դու, որ համաշխարհային գեղեցիկ գրականության
հավերժական տաճարում ճշմարտության, բարության ու գե-
ղեցկության մեծ քուրմերից մինը եղար, քո վսեմ հաղթանա-
կի համար դափնի պսակ ենք ձոնում քո հիշատակին աշ-
խարհքի հնազույն գրականություններից մեկի՝ հայ գրակա-
նության անունից:

ԽՈՍՔ ՄԿԱԼԱԿ ԲԱՆԱՍՏԻՉՆԵՐԻՆ

Նրիտասարդ ընկերներ՝

Ռուսահայ բանաստեղծությունը երեք շրջան է ունեցել:
1857 թ. ուսանող Ռ. Պատկանյանը — Գամառ Քաթիպան
հրատարակել է իր «Աղգային երգարան» անունով բանաս-
տեղծությունների տեսրակն ու նրանով սկիզբն է դրել առա-
ջին շրջանի բանաստեղծության:

Նրանից երեսուն տարի հետո, 1887 թվականին ուսանող
Հ. Հովհաննիսյանը հրատարակեց իր բանաստեղծություննե-
րի առաջին գիրքը, ու սկիզբն առավ երկրորդ շրջանի բանաս-
տեղծությունը:

Հովհաննիսյանից երեսուն տարի հետո էլ, 1908 թվակա-
նին դարձյալ ուսանող՝ Վ. Տերչյանը հրատարակեց իր «Մթն-
շաղի անուրջները» ու առաջ եկավ երրորդ, նորագույն շրջանը,
որի մասին հանդիսավոր ու հավաքական կերպով խոսում
ենք էսօր Հայ Գրողների ընկերության մեջ:

Ինչպես տեսնում եք՝ ես ընկնում եմ երկրորդ շրջանի մեջ

և կանգնած եմ հին շրջանի ու նորագույնի մեջտեղը: Մտերիմ
ընկերներ եմ ունեցել առաջին շրջանի գրողներից, նորագույն
շրջանի մեջ էլ ունեմ մոտիկ և սիրելի մարդիկ: Սա ցույց է
տալիս, թե ինչքան նոր է մեր բանաստեղծությունը, որ մի
մարդ կարող է ընկերներ ունենալ առաջին գրողներից մինչև
նորագույնը:

Անարատ ընկերական սիրո զգացմունքով ու խորին հուզ-
մունքով խոնարհվելով առաջին շրջանի իմ հավերժացած ըն-
կերների հիշատակի առջև՝ ողջունում եմ ձեզ, իմ նոր ընկեր-
ներ, որ նոր ոգևորությամբ ու նոր երգերով հայտնվում եք
հայոց գրական աշխարհքում:

Հրճվանքով եմ լսում, թե իզուր չեն շրջանները իրար հե-
տեկ, և դուք՝ թե արվեստի կողմից, թե հոգեկան ապրում-
ների՝ հանդիսանում եք ձեր նախորդ շրջանների զարգացումը:
Բայց նույնքան հրճվանքով եմ նկատում և մեր հասարակա-
կան կյանքի զարգացումը, որի պերճ ապացույցը հենց էսօր-
վան մեր հանդիսական հասարակությունն է:

Մենք էլ ենք եղել սկսնակներ, բայց մեր գրական կյանքի
արշալույսին էս տեսակ հասարակություն, էս տեսակ դահ-
լիճ, էս տեսակ ընդհանրական ուշադրություն չենք տեսել:

Սա էլ ձեզ նման նոր է, մի նոր ժողովուրդ, որ առաջ է
եկել էս երեսուն տարվա ընթացքում, մեր աչքի առջև, նոր
ճաշակով, նոր բովանդակությամբ, նոր պահանջներով ու նոր
վերաբերմունքով: Մենք էս տեսակ ժողովուրդ չենք տեսել:
Իսկ մեզնից առաջ, մեր նախորդները ավելի ևս անմխիթար
մթնոլորտում են աչքները բաց արել: Նրանք էլ ասում էին,
թե՛ իրենք պետք է գրեին և կարդալ սովորեցնեին, որ իրենց
գրվածքները կարդային: Իրենք պետք է ընթերցողներ պատ-
րաստեին իրենց համար:

Նվ ահա՛ ողջունելով ձեզ, միաժամանակ շնորհավորում
եմ, ցույց տալով էս նոր ժողովուրդը, որ էսքան աննախըն-
թաց ոգևորությամբ խառնվում է մեր գրական երկկոներին և
նույնիսկ իր ահավոր աղետի օրերում խոսք է անում ու մտա-
ծում իր գրականությունը պաշտպանելու մասին:

Նոր են և քննադատները, որ խոսում են ձեզ հետ:

Նորություն է մեր գրականության մեջ նրանց հարգալից վե-
րաբերմունքն ու կիրառած քննադատական մեթոդը: Հարկավ

Նրանք կարող են սխալվել իրենց գնահատությունների մեջ, բայց նոր ու շիտակ է նրանց ճանապարհը: Դուք էլ ուշագիտ ու հարգանքով լսեցեք նրանց, օգտվեցեք նրանց դիտողություններից և մի շփոթվեք բնավ, որովհետև ամենից շատ և ամենից լավ բանաստեղծն ինքն է իրեն հասկանում և իր ներքին բնազդն ու ինտուիցիան է իր ամենաուժեղ առաջնորդը: Համոզված եղեք, որ քննադատը ոչ բանաստեղծ կարող է ստեղծել և ոչ բանաստեղծ կարող է սպանել: Նա միայն մեկնաբանում, պարզում ու բացատրում է: Եվ վերջ ի վերջո մի քննադատ կա, որ վերջնականապես որոշում է ապրող և մեռնող գործերը, դա ժամանակն է:

Մի՛ շփոթվեք նաև էն ժամանակ, երբ ազդեցությունների խոսք են անում: Համաշխարհային գրականության մեջ ոչ մի բանաստեղծ չկա, որ շատ կամ քիչ ազդված չլինի իր նախորդներից:

Ազդեցությունը էն սանդուղքն է, որով սկսնակը բարձրանում է դեպի ինքնուրույնությունը: Ոչ էլ հուզվեցեք, երբ լավ բանաստեղծություններ շատ չեն գտնում ձեր գրվածքներում: Լավ բանաստեղծություններ քիչ կան նույնիսկ նշանավոր բանաստեղծների մեջ: Հիշեցեք Հայնեի խոսքը, որ ասում է թե՛ մեծ բանաստեղծը նա է, որի յոթ գրվածքից մինը լավն է, Եթե մեծ բանաստեղծը նա է, որի յոթը երգից մինը լավն է, դուք շատ պետք է ուրախ լինեք, եթե ձեր տասնևյոթ կամ քսանևյոթ երգից մինը լավ լինի: Դրանով էլ դարձյալ կենդանի կմնաք ձեր մայրենի գրականության մեջ:

Խոսքս վերջացնելով՝ կրկին ողջունում եմ ձեզ և ձեզ չեմ ասում՝ բարով եք եկել, ինչպես սովորաբար ասում են ուրիշներին էս հարկի տակ ողջունելիս: Նրանք դրսից են գալիս, իսկ դուք էս տանիցն եք, էս գերդաստանից և էս տեղից եք մեկնում դեպի կյանք: Ձեզ ասում եմ՝ բարով զնաք դեպի մեր ժողովուրդն ու աշխարհը, վշտերի, ցավերի, շարիքների ու կարիքների աշխարհը ձեր թարմ ու անկեղծ երգերով, կյանքի լավագույն ձայներով մարդկանց հրապուրելու դեպի ճշմարիտն ու բարին, ազնիվն ու գեղեցիկը:

Ժողովուրդները ոչ մի բանի մեջ էնքան պարզ ու պայծառ չեն երևում, ինչքան իրենց ազգային էպոսի մեջ:

Ռուս ժողովուրդը տակավին չի ամբողջացրել իր ազգային էպոսը, բայց տեսեք, թե նրա մասերում — БЫЛИНА-նե-րում ինչ վսեմ պարզությամբ ու ինչքան հոյակապ տալիս է իրեն պատկերը:

Ահա նրանցից մեկից մի փոքրիկ կտոր, որ շատ է պատշաճ մեջտեղ բերելու էս նշանավոր օրը:

Былина-ի վերնագիրն է «Исцеление Ильи Муромца»: Պատմում է, թե ինչպես բժշկվեց երկար ժամանակ անդամալուծ, հաշմանդամ ընկած Մուրոմցի Իլիան: Իսկ Մուրոմցի Իլիան արդեն գիտեք, որ ինքը ռուս ժողովուրդն է:

Ասում է՝ էն ժամանակ, երբ իշխան Վլադիմիրը թագ էր կապում Կիև մայրաքաղաքում՝ Մուրոմի Կարաշարովա գյուղում մի գյուղացի էր ապրում, Իվան Տիմոֆեևիչ: Գյուղացի Իվան Տիմոֆեևիչը մի տղա ուներ Իլիա անունով, որին ամենից շատ էր սիրում:

Բայց նստած էր Իլիան իր տեղը անշարժ,
Ընկած էր ուղիղ երեսուն տարի,
Ոտն ու ձեռ չունեի երեսուն տարի,
Ու փնչի վրա էնքան էր պառկել,
Որ փոս էր ընկել տեղը իր պառկած...

Եվ էսպես անդամալուծ, փնչի վրա պառկած երեսուն տարի (այսինքն շատ երկար ժամանակ) նա շարունակ լսում է, թե ինչ վատություններ են կատարվում իրենց աշխարհքում, ինչ ավազակություններ են լինում իրենց մայրաքաղաքում (Соловей разбойник): Պառկած տեղը սիրտն էրվում է, ու միշտ աստժուն էն է աղոթում, որ իրեն մի ձեռն ու ոտը տա...

Եվ ահա մի անգամ էլ, երբ հերն ու մերը տանը չեն, գնացել են դաշտը իրենց աշխատանքին, օտար մարդիկ են գալիս, խեղճեր են գալիս փակ դռան առջևը կանգնում ու Իլիային ձեն են տալիս, կանչում են, խնդրում են, որ դուռը բաց անի, իրենց ներս թողնի, ջուր տա խմեն, սիրտները հովանա:

Իլիան ներսից պատասխանում է, ասում է՝ «ես էլ եմ շատ ուզում, որ ձեզ ներս թողնեմ, շուր էլ տամ՝ կուշտ խմեք, բայց ի՞նչ անեմ, էսքան տարի է էսպես անդամալուծ ընկած եմ, ոչ ոտն ունեմ, ոչ ձեռք»...

— Տեղիցդ ժած արի — վեր կկենաս, — կանչում են խորհրդավոր հյուրերը:

Իլիան լռում է:

Այլ ոտն է փորձում — շարժվում է. ձախ ոտն է փորձում — շարժվում է: Իսկույն ոտի է կանգնում, դարպասները լեն բաց է անում ու ներս է հրավիրում օտարականներին: Զրի փոխաբեն վեղորներով գարեջուր է տալիս: Խմում են կշտանում, մնացածն էլ, ասում են, դու խժիբ: Խմում է, արյունը խաղս է առնում երակներում, աշխուժի է գալիս, կենդանանում, զորանում, դառնում մի հսկա, էնքան ուժեղ, որ հարկ է լինում ուժը մի քիչ պակասացնել, շփավորել:

Ապա թե օրհնում ու խրատ են տալիս անծանոթ հյուրերը:

— Էդ ուժը, ասում են, բավական է քեզ, որ դու մեծ հրակա լինես, չպարտվես պատերազմի դաշտում, քրիստոնեության պաշտպան հանդիսանաս ու կովես մեծ հսկաների հետ: Բայց տես, ասում են, ում հետ ուզում ես կովիր, միայն թե չկովես Միկուլա Սելյանինովիչի (չինականի, գյուղացու) հետ, իմացիր, որ նրան մայր հողը շատ է սիրում...

Գնում է Իլիան, ու մինչդեռ իր ծնողները ծանր աշխատանքից հոգնած քնած էին, մի երեք ժամում կատարում, վերջացնում է նրանց գործը, որ նրանք մի քանի օրում չէին կարող կատարել:

Մտողները զարթնում են, զարմանում են, թե էս ինչ հրաշք է կատարվել հանկարծ, որ իրենց անդամալուծ որդին միանգամից ոտի է կանգնել ու կանգնել իբրև հսկա: Իլիան պատմում է, թե ինչ է կատարվել, ու հայտնում է, թե արդեն ճամփա է ընկնում իր սրտի հին ցանկությունը կատարելու, իր ճնշված հայրենիքին ծառայելու, նրան ավազակներից մաքրելու և քրիստոնյա աշխարհքը պաշտպանելու: Եվ դրա համար հոր օրհնությունն է խնդրում:

— Գնա, իմ աչքի լույս, իմ հսկա զավակ, — օրհնում է ծերունի հերը: — Բայց օրհնում եմ քեզ բարի գործերի համար. շար գործի համար օրհնություն չկա: Գնա, և քո ճամփին ոչ թուրքի ընդդեմ մտածիր շար բան, ոչ քրիստոնեին զարկիր բաց դաշտում...

Ու վեր կացավ հսկան, աղոթեց, իր նժույզը հեծավ: Հեծնելը տեսան, բայց էլ շտեսան, ուր գնաց...

Ի՞նչ հոյակապ զեղեցկություն և ինչքա՞ն հարազատ ու ճշմարիտ, որ աշխարհքում գրեթե ծակ բերան չէր մնացել, որ շասեր, թե Ռուսաստանը մի ընկած անդամալուծ է, նրանից ոչինչ չի դուրս գալ: Վերջին օրերս բուլգարական միսիստրը մինչև անգամ դիակ էր անվանում, և... Եվ հանկարծ... հսկան վեր կացավ տեղից:

Դուրս եկավ, որ ռուսական փեչը, որին նա կպած էր էնքան տարի, նրա համար Պրոմեթեոսի ժայռն է եղել, և էնքան տարի ինքն իր մեջ աճելով ու մխալով ուժ է հավաքել՝ միանգամից վեր կենալու և մի հսկայական դարկով փրկելու իր երկիրը: Մեծ ու ահավոր մի վայրկյան...

Բայց պատահում է, որ երկար տարիներով պառկած հրակաները վեր կենալիս միանգամից չեն կարողանում ամուր ոտի վրա կանգնեն, մի քանի անգամ շոքում են, մինչև որ վերջնականապես կարողանում են հաստատուն կանգնել: Եվ ամեն մի շոքելով հազար հազարավոր մարդիկ են ընկնում տակն ու զուր կոտորվում:

— Այժմ Ռուսաստանի ամեն մի քաղաքացին միայն մի հոգս պիտի ունենա. — ամուր բռնի, իր ուժերի ներածին չափ նեցուկ դառնա ռուսական նոր ոտի կանգնած հսկային, որ նա հաստատուն կանգնի:

Էս է պահանջում ինչպես ընդհանուրի, էնպես էլ ամեն մի անհատի շահն ու փրկությունը:

1017

ՎԵՐՁԻՆ ՑԱՆԿՈՒԹՅՈՒՆԸ

Նրբոր, ծեռուցի, մեռնելու լինեմ,
Ու, հավատա, երկար շրպիտի պարեմ,
Դու հրամայիր իմ դիմ տանելու
Մեք կանաչ այգիք. էնտեղ, ուր երկու
ձեռակ հակակի բրկեր եմ ծաղկում...

«Մ ծ ի ր ի», Լ Ե Ր Մ Ո Ն Պ Ա Պ

Զարմանալի է մահվան հոգեբանությունը: Կյանքի վերջին վայրկենին մարդիկ շատ անգամ ձեռքերը թափ են տալիս ամբողջ աշխարհքի վրա, բայց և ամբողջ ուժով կառչում են մի շնչին բանից: Եվ ընդհանրապես էդ շնչին բանն էլ իրենց հին, մանկության օրերի էս կամ էն հիշատակն է լինում:

Մահից մի քանի օր առաջ ինձ մոտ էր Ալ. Մատուրյանը, ու երկուսով նստած երկար զրույց էինք անում:

Խոսեցինք նոր ազատությունից, առաջիկա Հայաստանից, մեր գրականությունից, հազար ու մի ուրիշ բաներից, սակայն էս բոլոր մեծ հարցերից ավելի ուժգին երկու փոքրիկ բան են մեխվել հիշողությանս մեջ:

Մեկ էն, թե ինքը միշտ հիվանդ է եղած ու շատ վաղուց կլիներ մեռած, եթե իր կինը չլիներ, որ իրեն անքուն հսկող հրեշտակն է եղել կյանքում: Մեկ էլ էն, թե արդեն պարզ տեսնելով, որ կյանքի թելը կտրելու վրա է՝ եկել է հայրենիք, ուզում է գնա Զաքարթալ՝ վերջին անգամ տեսնի իր մոր գերեզմանը և իրենց դուռն հին թթենին, որի վրա էնքան եղել է մանուկ ժամանակ...

Ասում էր՝ նրանից հետո հանգիստ կմեռնեմ:

Մի երկու օրից հետո երբ իմացրին՝ թե Մատուրյանը ուշաթափվել է՝ շտապեցի, տեսա գիտակցությունը կորցրած, աչքերը փակած, գլուխը բարձր՝ պառկեցրած, սառույցը գլխին ու կրծքին, ու փակած աչքերից մեղմ արտասուքի կաթիլներ են հոսում:

Սպասում էինք բժշկին:

Իս մտածում էի, թե արդյոք նրա համար չեն հոսում ար-

տասուքի էն վերջին անգոր կաթիլները, որ նա շկարողացավ տեսնել ոչ իր սիրած մոր գերեզմանը, ոչ էն հին թթենին...

Տիկինը տագնապի մեջ կամ սառույցն էր փոխում, կամ թեյի գդալով շուր էր տալիս ու խոսում, անդադար խոսում... Մին էլ հանկարծ խոսքը փոխեց, թե.

— Ա՛խ, գիտեք նա ինչքան էր ուզում գա Կովկաս՝ տեսնելու իր մոր գերեզմանն ու իրենց դուռն հին թթենին... Իսկ ես, ճշմարիտն ասեմ, վախենում էի դրանից: Ամեն անգամ ինձ թվում էր, թե իր հայրենիքի հողն է կանչում, գա թե չէ՝ կմեռնի...

Բժիշկը եկավ: Քննեց: Վերևից ներքև մարմինը քորոցով ծակծկեց: Արդեն կորցրել էր զգայունությունը: Ապա թե աչքերը բաց արավ բժիշկը, վառած մոմը դիմացը բռնեց, մատով բիբերը շոշափեց — չէին շարժվում: Էլ հույս չկար: Մտում էին: Մի թույլ ու խոր թախիժ կար նրանց մեջ սառած մնացած...

Մի երկու ժամից հետո երբ նորից վերադարձա՝ կես ժամ առաջ մեռել էր:

Եվ տաք դիակի առջև կանգնած էն էի մտածում, թե — շտեպ... Այժմ էլ, երբ ցավելով խոսում են նրա տառապալից կյանքի մասին, նրա գրական գործի մասին, նրա գործերի հրատարակության և այլ ավելի մեծ խնդիրների մասին — մի տարօրինակ համառությունով իմ սիրտն էլ էն փոքրիկ ցավն է բռնել, նրա վերջին կարոտը, որ՝ մեռնելով ձգտեց՝ ու չկարողացավ հասնի, տեսնի ոչ իր բազմատանջ ու շատ սիրած մոր գերեզմանը, էն մոր, որ աղքատության մեջ, անվառաբան, ցուրտ խրճիթում ծոցն էր առնում ու տաքացնում իր փոքրիկ Ալեքսանդրին, և ոչ էլ էն հին թթենին, որ ցուրտ ու բուք զիշերները իր պառաված ճյուղերով մթնում անդադար ծեծում էր նրանց աղքատիկ խրճիթի պատերն ու կտուրը, և որի վրա ամուսն արևոտ օրերին էնքան թուփն է քաղել ու խաշացել, զվարճացել մանկուց որբացած ու ամեն զվարճություններից, ամեն հաճույքներից զրկված Ալեքսանդրը...

Մենք, ուսումնասիրողներս, սովորաբար Հայաստան անվանել ենք Տաճկահայաստանին: Նույնիսկ Այրարատյան կամ Շիրակի դաշտից Տաճկահայաստան գնացողն էլ ասում է՝ Հայաստան եմ գնում: Էլ չեմ քննում, թե ինչ է սրա պատճառը. բայց էսպես է:

Եվ ահա էս պատերազմի ընթացքում, դեպքը բերեց, ես երկու անգամ գնացի Հայաստան: Մի անգամ Ալաշկերտի հովիտը, մյուս անգամ Վան: Ապա թե ծանոթացա Հայաստանի շատ մտավորականների հետ, մոտիկից տեսա Հայաստանի ժողովուրդը, ու մի ահագին ցավ ծանրացավ իմ սրտին, թե ես ի՞նչքան քիչ տեղեկություն եմ ունեցել էսօրվա կենդանի Հայաստանից. ես, որ համարվում եմ նրա ճանաչողներից միինը, ես, որ միշտ կարծիք եմ հայտնել ու շատ թե քիչ գործել նրա համար...

Նրանից հետո Վասպուրականի, Արածանու հովտի և այլ տեղերի գաղթականության հեղեղն եկավ ծովացավ Այրարատյան դաշտում:

Սա էլ նրան դիմավորողներից միինը եղա: Պտտվեցի նրանց մեջ էջմիածնում, խոսեցի Ռիֆիսի ժողովներում, ու վերջը՝ դարձյալ մի տխուր գիտակցություն համակեց ամբողջ էությունս ու մի խորին վիշտ, թե մենք ի՞նչքան ենք տկար մեզ վրա եկած աղետի հանդեպ. տկար ֆիզիկապես, նյութականապես ու բարոյապես...

Հապա նրա — Հայաստանի հա՛րցը, հայկական հա՛րցը...

Ի՞նչեր չեն խոսվել ու կատարվել էդ հարցի շուրջը...

Եվ Հայաստանը գրեթե միշտ լուռության է եղել դատապարտված ակամա: Ոչ նրա ցավն ենք կարողացել ճշմարիտ իմանալ, ոչ էլ ցանկությունը:

Բավական էր:

Հայաստանը պետք է խոսի վերջապես:

Եվ պետք է խոսի էնքան լուրջ ու զգաստ, ինչքան լուրջ ու զգաստ է լինելու ամենից մեծ վշտավորն ու ամենից շատ վտանգվածը ժողովուրդների մեջ, այլև էնքան հաստատուն

ու բաց ճակատով կարող է խոսել մի ժողովուրդ, որ ապրել է մարդկային լավագույն ձգտումներով և ամեն ինչ տվել է ու կտա ազատ կյանքի համար:

1917

ՀԱՅԱՍՏԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ

Հիմնադրվում է Հայկազյան Ընկերությունը¹:

— Ինչի՞ համար է հիմնադրվում:

Ահա թե ինչի համար:

Աղբ ենք և մինչև էսօր շունենք մեր ազգային պատմությունը: Մեր ազգային պատմության նյութերը ցրված են վանքերում փակված ձեռագրերից ու մեր շուրջը փռված հիշատակարաններից սկսած մինչև հեռավոր երկրների արխիվներն ու թանգարանները:

Էս բոլոր նյութերը պետք է հավաքել գիտնականների, պատմագետների ձեռքով, ուսումնասիրություններ կատարել, մենագրություններ գրել (մոնոգրաֆիա), և հետզհետե պատրաստել մեր ազգի գիտական ճշմարիտ պատմությունը:

Սա մի դժար ու մեծ գործ է, վեր ամեն անհատական և նույնիսկ մասնավոր ընկերության ուժերից:

Եվ էս գործը կատարելու համար է հիմնադրվում Հայկազյան Ընկերությունը՝ հենված համայն հայության բարոյական ու նյութական ուժերի վրա:

Գրականություն ունենք, բայց դեռ մի ընդհանուր գրական լեզու չունենք: Եղածն էլ աղքատ ու աղճատ և անկազմակերպ: Պետք է հավաքել հայոց բարբառների, բովանդակ հայության լեզվական գանձերը, բառերն ու ոճերը, ամբարել, ուսումնասիրել ու օգտագործել, կազմել հայոց կենդանի լեզվի բառարանը, ստեղծել հայոց ազգային գրական լեզուն:

Ահա թե ինչի համար է հիմնադրվում Հայկազյան Ընկերությունը:

¹ Հայկազյան ընկերությունը, որի նախաձեռնողներից մեկն էր Հովհ. Թումանյանը, հիմնադրվեց, մշակեց իր կանոնադրությունը, ունեցավ մի քանի նիստ, կազմալուծվեց ժամանակի աննպաստ հանգամանքների պատճառով:

Գիտութիւն չկա մեր մեջ: Եվ դպրոց, և գրականութիւն, և հրապարակախոսութիւն, և հասարակական ու ազգային գործեր մեծ մասամբ հիմնված են տգիտութիւն վրա: Կենտ ու հատիկ հայ գիտնականներն էլ փախչում են մեր մթնոլորտից, զբաղվում են ուրիշ գործերով, կամ հեռանում, օտարանում են ու օտար լեզվով են զբաղվում գիտութեամբ: Եթե մի նորայր թյուզանդ էլ, թեև դարձյալ օտարութեան մեջ, գիտութիւննով պարապում է հայերեն՝ էն էլ վերջը անիծում է իր վիճակն ու կտակ է անում, որ իր աշխատանքը կրակի մատնեն:

Պետք է համախմբել հայ գիտնականներին, ստեղծել գիտութիւն հայերեն լեզվով և հայ գիտնականների կաճառ, գիտութեան օջախ, Հայկական Ակադեմիա:

Եվ պետք է ստեղծել Հայոց Համալսարանը, ուր կարելի լինի բարձրագույն գիտութիւնները ավանդել ու սովորել հայերեն լեզվով: Մեր տարրական ու միջնակարգ դպրոցների մեջտեղը պետք է կառուցանել ու պահել մի գիտութեան տաճար, մեր մանր ու մեծ ճրագների մեջտեղը պետք է վառել մի մեծ ջահ, — Հայկական Համալսարան:

Ահա թե ինչի համար է հիմնադրվում Հայկազյան Ընկերութիւնը:

Ամեն մի հշանավոր հայ գրողի հոբելյանի կամ թաղման օրը մի էնտեսակ ընդհանուր, համազգային վայնասուն է բարձրանում, որ ամոթով կարող է ծածկել ամեն մի հետամնաց ժողովրդի. թե՛ նա տառապանքներից մեռավ, չկարողացավ ծառայել իր կոչումին, և այլն, և այլն... Եվ, հիրավի, գրեթե առանց բացառութեան, ոչ մի հայ գրող չի կարողացել գրականութեամբ պարապի: Ամենքն էլ գրականութեամբ պարապել են ի միջի այլոց, պատահաբար, ոտի վրա: Ամենքն էլ եղել են խանգարված գրողներ, և ամբողջ մեր գրականութիւնն էլ խանգարված գրողների խանգարված գրականութիւն է:

Պետք է ազգովին պաշտպանել հայոց գրականութիւնը, դրողներին կապել իրենց գործի հետ և միանգամ ընդմիշտ վերջ տալ էս անառողջ ու անպատվարէր դրութեանը:

Ահա թե ինչի համար է հիմնադրվում Հայկազյան Ընկերութիւնը:

Գեղարվեստը՝ իր ամեն ճյուղերով՝ թատրոն, երաժշտութիւն, նկարչութիւն և այլն՝ մեր մեջ ընկած է երեսի վրա և թողած մասնավոր մարդկանց խնամքին ու հոգացողութեանը, այսինքն անտեր: Մինչդեռ բարձր քաղաքակիրթ ժողովուրդ դառնալու և կոչվելու համար առանց գեղարվեստի՝ ճար ու ճանապարհ չկա: Պետք է ուժեղ կերպով հովանավորել ու զարգացնել գեղարվեստի ամեն մի ճյուղը մեր մեջ:

Ահա թե ինչի համար է հիմնադրվում Հայկազյան Ընկերութիւնը:

Հայկազյան Ընկերութիւնը հիմնադրվում է էնպես, որ ամենքս միասին, միասնական ուժերով կարողանանք պաշտպանել ու առաջ տանել էս ընդհանուր մեծ գործը՝ մասնակցելով ու տալով մեր ունեցածից՝ շատից — շատ, քչից — քիչ: Ունեորը միանվագ վճարում է հինգ հազար ո. և դառնում է մշտական իսկական անդամ, իսկ նախանձախնդիր անդամները տալիս են տարեկան տասը ո.: Իհարկե, նախանձախնդիրն էլ միանվագ կարող է վճարել մի քանի հարյուր ո., փոխանակ ամեն տարի 10 ո. վճարելու: Եվ մեր ունեւորներն ինչքան էլ առատ մոտենան գործին՝ այսուամենայնիվ տասը ուրբանոց անդամները ահագին ազդեցութիւն են անելու գործի վրա, հարկավ, եթե ամեն տեղ էլ զգան գործի մեծութիւնը, ամենքն էլ արձագանք տան ու տարեկան տասը ուրբանոց ձեռք քաշելով՝ մտածեն էս տեսակ մի մեծ ազգային գործ ստեղծելու, ինչի համար որ հիմնվում է Ընկերութիւնը:

Եվ նա հիմնվում է ընդհանուր հայութեան ազգային դրոշմով — Հայկազյան անունով:

Իսկ եթե հիմնվում է էս տեսակ ծանր օրերին, դա միայն պատիվ է բերում մեզ: Եթե իտալացին կարող է պատերազմի դաշտում — խրամատում համալսարան բաց անի և զբաղվի գիտութիւնով ու գեղարվեստով՝ մենք ինչո՞ւ չենք կարող խրամատներից էսքան հեռու զբաղվել նույն գիտութիւնով ու գեղարվեստով:

Չմոռանանք՝ որ հայ ժողովուրդը ինչ բարձր բան կատարել է՝ միշտ կատարել է՝ շնայելով նեղ ու դառն ժամանակին...

Եվ սրա մեջն է մեր ցեղի մեծութունն ու մեր կյանքի մեծ դրաման:

Ինչ որ մենք կլինենք՝ մեր Համալսարանն էլ մեզ հետ:

1917

ԱՆՏՐԱՆԻԿ ՕԶԱՆՅԱՆԻՆ

1917 թ. դեկտեմբերի 23

Միլբելի Անդրանիկ

Ահա՛ իր մտմանտի առջև ամեն մարդ պետք է ընդհանուրի սեղանին բերի ինչ որ ունի և կարող է՝ թե վերահաս վտանգը կանխելու և թե բաղձալի խաղաղությանը հասնելու համար:

Ես չորս տղա ունեմ, չորս էլ երկրի կառավարության, Ազգային խորհրդի և Քո տրամադրության տակ են, իսկ չորս աղջիկս էլ պատրաստակամ գնում են թիկունքի աշխատանքներին, ինչի որ ընդունակ կլինեն:

Ես էլ, անշուշտ, սրանից թանկ ոչինչ չունեմ, հետևաբար ոչինչ չեմ խնայել, միայն թե կարողանանք բոլոր ազնիվ ժողովուրդների և ազատասեր հոգիների հետ միասին ետ մղել վերահաս վտանգը և պաշտպանել ամենքիս սրբազան իրավունքներն ու ազատությունը: Ես անսասան հավատարիմ Քո՝ շատ փոթորիկների մեջ ձեռք բերած փորձառությանը, վառ հայրենասիրությանն ու ազատասիրությանը, այլև բնական մարդասիրությանը և զինվորական բարձր տաղանդին և պատրաստ զալու, երբ ուր կկոչի Քո եղբայրական ձայնը՝ համբուրում եմ հերոսական ճակատդ:

Միշտ քո Հովհաննես Քումանյան

2. Գ. Սրա հետ միասին, որովհետև ես էն կարծիքին եմ, որ ամեն մի հայ այժմ պետք է իրեն դնի կամավոր անուրբի տակ, պարտավորվում եմ ամսական հարյուր ոտբլի տալ էս նպատակով մեր ընդհանուր գանձարանին:

Լույն

¹ Նամակը հրատարակվել է Անդրանիկ Չորավարի (1865—1927) «Հայաստան» թերթում (1917, № 183):

Թանկագին Սերգեյ Միտրոֆանովիչ:

Մեծ պատերազմի ընթացքում բոլոր ժողովուրդներն աշխարհի առաջ, համարյա ամբողջությամբ, արտահայտեցին իրենց էությունը, և ամենից ավելի, թերևս, ուստի ժողովուրդը, որովհետև նա, պատերազմից բացի, կատարել է և հեղափոխություն: Պարզվեց, որ այդ ժողովուրդը մի կենտավորու է և նրան իր ամբողջությամբ մենք չէինք տեսել և չգիտեինք:

Մինչև այժմ մենք տեսել էինք միայն նրա գլուխը, ի դեմս նրա գրողների և մտավորականության, իսկ ժողովուրդն ինքը — մարմինը — մնում էր մթության մեջ և մեզ անծանոթ:

Եվ ես այժմ եմ միայն ըմբռնում ուստի գրականության համար այնքան յուրահատուկ, իսկ ուրիշ ժողովուրդների գրականություններին օտար, ձգտումը՝ «Ճանաչել իր ժողովրդին»:

Հիրավի մեզ անծանոթ էր այդ մարմինը, որը սակայն ինքըն էր աճեցրել այդ գլուխը, որ ընդունակ է այնքան բարձրանալու և ազատ հայացքով ընդգրկելու լայն ու հեռու տարածություններ: Իսկ լայնն ու հեռուն՝ հենց դա էլ ժողովրդի հայրենիքն է:

Եվ ես կարծում եմ, որ բոլշևիզմի մեծ խիզախումները խորթ չեն ուստի մարդու հոգուն: Իսկ ուստի ժողովուրդը առհասարակ մեծ միսիա ունի կատարելու ժողովուրդների կյանքում:

Այսպես նայելով Ռուսաստանին և այդպես հասկանալով նրան, ես իմ խոսքը սահմանափակում եմ Կովկասով, և ուզում եմ մի հարցում անել, որին Գուգ, թերևս, կպատասխանեք որպես ուստի բանաստեղծ և ուստի ժողովրդի հոգու մեկնիչ:

Ձեր աչքերի առաջ այստեղ Կովկասում տեղի է ունենում շափաղանց տարօրինակ երևույթ:

Այն ժամանակ, երբ Կովկասի բոլոր ժողովուրդները մեկը մյուսի ետևից ողջունում են նոր, ազատ Ռուսաստանը և իրենց

¹ Սերգեյ Գորոզցկի (1884—1967) — բանաստեղծ, առաջին համաշխարհային պատերազմի տարիներին գտնվում էր Քիֆիսում, եղել է Կովկասյան ճակատի գրաված վայրերում (Արևմտյան Հայաստան) իբրև Քաղաքների միության աշխատակից և «Русское слово» լրագրի թղթակից: Հեղինակն է նաև «Ангел Армении» բանաստեղծությունների ժողովածուի և Քումանյանին նվիրված առաջնակարգ հուշագրության:

ազգային համագումարներում որոշում են մնալ ազատ, մեծ ուսաստանյան հանրապետության կազմում, հենց այդ ժամանակ ուսական բանակը, որ հաղթականորեն մտել է թըշնամու երկրի խորքը և դարձել դրուսթյան տերը, սկսում է նահանջել ո՛չ միայն ուղղադաշտից, այլև լքել նույնիսկ Կովկասը:

Հավատա՞լ արդյոք, որ ուսներն այդքան հեշտ կարող են թողնել իրենց գրաված վայրերը և Կովկասը:

Հավատա՞լ արդյոք, որ ուսները միայն ցարերի կամքով էին Կովկաս գալիս, և այժմ, երբ այդ կամքը չկա, վերադառնում են տուն:

Մի՞թե Ռուսաստանը միայն մի ուստինն զանգված է, որին ձգեին այնքան շատ և այժմ ազատ մնալով, կծկվում է ետ, թե՞ ուս ժողովրդի այդ պատմական առաջընթացն ուներ իր ներքին, ժողովրդի մեծ ոգով պայմանավորված, իմաստը:

Կովկասի և ընդհանրապես Մերձավոր Արևելքի նվաճման ժամանակ ուս լավագույն մարդիկ այն միտքն էին հայտնում, որ Ռուսաստանը կոչված է այդ երկրներում ստեղծել քաղաքացիական ազատ կյանք, արդար իրավակարգ և լինել կուլտուրայի և լուսավորության կրողը:

Ի՞նչ եք կարծում, այդ բոլորը միայն դատարկ ֆրազներ՞ը լին, և մենք, որ մինչև այժմ հավատում էինք, սխալվե՞նք:

Ռուսաստանն ավելի քան մի հարյուրամյակի ընթացքում միլիարդներով փող է գործադրել և անհամար հերոսական պատերազմներում միլիոնավոր կյանքեր զոհաբերել և ստեղծել լայնածավալ մի պետություն, որ այժմ դարձել է ուսական մեծ հանրապետություն:

Ի՞նչ եք կարծում՝ ոչ մի կապ չկա՞ այն միլիոնավոր ուս մարդկանց և այժմյան ուսների միջև: Եվ մեր օրերի ազատ ուս մարդիկ, որ դեռևս կանգնած են պատմական եղբայրական շիրիմների վրա, մի՞թե այժմ հրաժարվում են իրենց ժառանգությունից, Արևելքում իրենց գրաված դիրքից և իրենց ազգային մեծ միսիան կատարելուց:

Մի՞թե այս նոր երրորդ Հոռմի փլուզումը ցավալի արձագանք չի գտնում նրա որդիների սրտերում, և մի՞թե մեծ հայ-

րենիքը պաշտպանություն չի գտնի իր բազում գնդերից, և չի առաջանա մի նոր հզոր շարժում Ռուսաստանի վեհության, ազատության ու պատվի պաշտպանության համար¹:

1918

ՉԱՆԳՑՐԵՔ ՀՐԳԵՆԸ

Պատերազմն ինքն արդեն մի վայրենի ու բարբարոսական երևույթ է: Բայց եթե սա համարվի վիճելի, ապա մենք, հայերս ու թուրքերս, ունենք միանգամայն անվիճելի ապացույց մեր վայրենության ու բարբարոսության, երբ խաղաղ ժողովուրդները վեր են կենում իրար վրա՝ հաճախ իրենց կանանց ու երեխաների հետ և իրար կողոպտում ու կոտորում ամենադաժան կերպով: Դա հայ-թուրքական ընդհարումներն են: Եվ էս երևույթն էլ դառնում է ավելի զարհուրելի էն հանգամանքով, որ տեսնում ենք, թե ինչ անտարբերությամբ են սրան թամաշա անում էդ ժողովուրդների ինտելիգենցիաները, որոնք հաճախ նույնիսկ իրենք են զրդապատճառ և դառնում են դրան մասնակից:

Կար ժամանակ, որ ես կարծում էի, թե միայն թուրքերն են ընդունակ էս վայրագություններին. ավաղ, ժամանակն ու դեպքերն եկան անհերքելիորեն ապացուցելու, որ ոչ մեկս մյուսիցս ետ չենք մնում և դեռ ավելին՝ աշխատում ենք իրար գերազանցել:

Եվ ահա էսօր էլ, երբ ամեն կողմից մեր երկրի վրա բանակներ են շարժվում, Արևելքից՝ Անգլիան, արևմուտքից՝ Գերմանիան, հարավից՝ թուրքը, և սրանց առաջընթաց շահսեաններ, քրդեր, շեռնիկներ և զանազան ագոավների խմբեր, մեր «ազատ», «հասարակապետական» խաղաղ ժողովուրդները, հայերն ու թուրքերը վեր են կացել իրար գյուղեր քանդելու և իրար կոտորելու:

Եվ մինչդեռ մի կողմից մութ ուժերը տենդորեն աշխատում

¹ Տպագրվել է 1918-ի հունվարի 3-ին «Кавказское слово» լրագրում: Մի շարքի անց՝ հունվարի 10-ին նույն թերթում լույս է տեսել Սերգեյ Գորոդեցկու պատասխանը, այնուհետև՝ ուրիշ արձագանքներ:

Համագրութիւն հրդեհիս.

Այսպէս որպէս թէք արեւոյ թի
ն ի սպարտեք ու ի սպարտաւան
համե ի սպարտեք, - Երբեք և ան
հրեւանստի զիտեհ, անպիւր
ճեք, սպարտեք ու թուրքերու
ուրիշ համագրութեան մե-
կտեհի սպարտեքն իր վայ
թեւութեան ու ի սպարտեք
տեք անթեւե, Երբ Խաղաղ
իւրաքանչիւր ձայնակներ
ժողովուրդի թե կրտսի իրաւ
վրայ յաւանտի թեք հաւան
ու ի սպարտեք զիտեհ և իրաւ
հոգրուպարտ ու կրտսի
անթաւանտե կրտսի =
կա հայ թուրքերու
թեւանտեք թե =
ու կա ի սպարտեք կ

են էս ժողովուրդներին ավելի ևս կատարի իրար դեմ հանե-
լու, մյուս կողմից տեսնում ենք, թե ինչքան քիչ են էն մար-
դիկ, որ վրդովվեին էս ահռելի կործանիչ ու խայտառակ երե-
վոյթից ու դուրս գալին սրա դեմ:

Մտածում եք, թե՛ ո՛ր են հապա էն բազմաթիվ մարդիկ,
որ դեռ երեկ մարտնչում էին ժողովրդի անունով:

Եվ ստիպված եք բացականչելու. ո՛ր եք դուք, ժողովրդի
բարեկամներ, ամեն տեսակի և ամեն կուսակցութեան սոցիա-
լիստներ և ոչ սոցիալիստներ, մի՞թե չե՞ք նկատում էս հրդե-
հը, որ լափում է մեր ժողովրդին, մի՞թե չգիտեք, որ ժող-
վրդին ամենից առաջ իր կյանքն է հարկավոր, և մի՞թե
չգիտեք, որ նրան կրակից հանելը ավելի բարձր ու ազնիվ
գործ է, քան ամեն հեղափոխութիւն ու հասարակապետու-
թիւն:

Գո՛ւրս եկեք միացյալ ուժերով հանդիմանք էս օրեցօր ծա-
վալող հրդեհը:

Հայտարարենք հրդեհածիգներին թշնամի կովկասյան բու-
լոր ժողովուրդների և ամենից առաջ ազատութեան, ու միա-
համուռ կովենք նրանց դեմ:

Կատարենք մարդասիրական ու ինքնապաշտպանութեան
նվիրական մի գործ:

Երևակայենք, թե մեր հարազատները, մեր կանայք ու մեր
երեխաներն էլ են էն կրակի մեջ և էնպես շտապենք:

Եվ համոզված պիտի լինենք, որ եթե ուշանանք, մեր հա-
րազատներն ու մենք ինքներս էլ պիտի զոհ դառնանք էս
հսկայական հրդեհին՝ անիծելով մեր հեղափոխութիւնն ու
ազատութիւնը¹:

1918

«ԶԻՆՎՈՐԱԳՐՎԵԼ ԵՆ»

«Ժողովրդի ձայնի» հրատարակութեան անիթով իր ընթեր-
ցողներին հաշիվ տալիս «Աշխատավորը» շարել էր նոր թեր-
թի աշխատակիցների անունները, որոնց մեջ կան մեր հայա-

¹ Հղվածի ոտներն թարգմանութիւնը հրապարակվել է «Кавказское СЛОВО» թերթում (1918, № 70):

նի գրողներին, նրանց թվում և իմ անունը, ու հայտարարել էր, թե՝ «գինավորագրվել են...»:

Իհարկե, սա կովող կուսակցականի լեզու է, վրդովված աղանդավորի տոն է, բայց ես ուզում եմ էս առիթով մի երկու խոսք ասել:

«Հորիզոնը» իր հաշվետվության մեջ, էն էլ միայն իմ մասին ճիշտ էր նկատել, ասել էր, թե իր տեղը չի:

Իհարկե «Ժողովրդի ձայնը» լրագիր է, էն էլ որոշ կուսակցության բերան. ինձ նման մի անկուսակցական բանաստեղծ մարդու համար ի՞նչ տեղ է սա: Շատ-շատ ես կարող եմ հյուր լինել էստեղ, թեկուզև պատվավոր հյուր: Եվ եթե հոգված գրեմ, կարող է էն տեսակ հոգված լինի, որ խմբագրությունը ստիպված լինի տակը ծանոթություն դնելու:

Բայց էդպես եմ ես և «Հորիզոնում», էնտեղ էլ իմ տեղը չի: Էնտեղ էլ հաճախ իմ հոգվածների տակը ծանոթություններ են դրել և կարող են դնել: Էդպես է եղել և էդպես կլինի նաև ուրիշ լրագիրներում: Դրանցից ոչ մեկը իմ տեղը չի, ինչպես և իմ նմանների:

Այո՛, էսպես մարդիկ կան, որոնց տեղը չեք գտնիլ, թեկուզ որոնելով գնանք հասնեք մինչև իրենց տունը:

Ես դրանցից մեկն եմ:

Ահա լրանում է երեսուն տարին՝ ես շարունակ զանազան տեղեր եմ ընկնում, որոնցից ոչ մեկը իմ տեղը չի: Երեսուն տարի է, ես որոնում եմ իմ տեղը, դեռ չեմ գտել, և երեսուն տարի է, ես միայն պատրաստվում եմ իմ գործով՝ գրակառուցությունով զբաղվելու ու դեռ չեմ սկսել...

Հիմի շատերը կզարմանան թե՛ ինչպե՞ս թե դեռ չեմ սկսել... հապա որ էնքան գրել եք...

Այո՛, ճիշտ է, գրել եմ, բայց ոտի վրա, ի միջի այլոց:

Գրել եմ, երբ իբրև հիվանդ կամ հոգնած մարդ, մի երկու ամսով գնացել եմ որևէ ամառանոց հանգստանալու և կամ ավելի հաճախ, երբ հիվանդ անկողնում պառկած եմ եղել: Սրանից էլ սովորություն է դարձել, եթե մի քանի օր հիվանդանում եմ, մոտիկ ծանոթներս ու ընկերներս հարցնում են, թե ի՞նչ եմ գրել:

Բայց ի՞նչն է պատճառը, որ ինչպես իմ նմանները չեն գտել իրենց տեղը, էնպես էլ ես իմ տեղը չեմ գտել, չեմ նրա-

տել ու իմ գործը չեմ սկսել, այլ դեռ պատրաստվում եմ...

Սրա պատճառը կասեի, եթե մինը լիներ, և, վերջապես, էս խնդրով զբաղվելու ժամանակն էլ չի:

էս հոգվածով ես միայն ուզում եմ մի բարձր տեսակի ծանր դրամայի վրա ակնարկել և զգուշացնել, որ էն լեզվով չխոսեն էս տեսակի մարդկանց վրա, ինչ լեզվով խոսում էր մեր նախորդ մամուլն առհասարակ և այժմյան մամուլը մասամբ, որից մի նմուշ հանդես է բերում դժբախտաբար «Աշխատավորը» հայտնելով, թե «գինավորագրվել են...»:

Թերևս մեր մեջ բացառություններ լինեն, բայց մենք զինվորներ չենք և չենք կարող զինվորագրվել որևէ թերթի կամ կուսակցության: Եթե դրանց մեջ ու դրանց շրջանում էլ լինում ենք, էդ միայն աշխարհագրական հանգամանք է, ուրիշ ոչինչ: Հոգեկան կապ ու աշխատակցություն չկա ընդհանրապես:

Ես ինքս անցել եմ գրեթե բոլոր կուսակցությունների միջից (թեև շատ արագ ու թեթև), և չեմ կարողացել մերվել, ձուլվել ոչ մեկի հետ:

Եվ սրա պատճառը հենց նրանց վատությունը չի եղել: Ո՛չ, և ոչ էլ նրանցից հալածվելը, և կլիսավորը թերևս էն, որ ես ուրիշ եմ. ես չեմ կարող մի ծրագիր ընդունեմ ու 40 տարի դրա վրա նստեմ ու պարծենամ ճիշտ էնպես, ինչպես պարծենում են «Մշակի» մարդիկը, թե 40 տարի մենք մնում ենք հավատարիմ Արժրունու գաղափարներին և նույն ուղղությանը: Էդպես էլ ուրիշ հին կուսակցություններ: Մարդիկ ուզում են սրանով պարծենան ու աշխարհք զարմացնեն, իսկ ես ապշում եմ, թե ինչպես կարելի է 40 տարի նույն կարծիքի լինել ու չփոխվել:

Սրանք ինձ հիշեցնում են Մոլլա Նասրեղիին, որ սազի մի տեղից բռնել ու անդադար զարկում էր լարերին միօրինակ: Երբ կինը հարցնում է, թե՛ ա՛յ մարդ, ախր սազ ածելու ժամանակ ուրիշները մատները ման են ածում. մոլլեն պատասխանում է, թե՛ նրանք ման են ածում, որ գտնեն ու չեն գտնում տեղը, իսկ ես գտել եմ:

Եվ շարունակում է զարկել նույն ձևով, նույն տեղը, նույն լարերին:

Պատահում է, որ ոչ միայն 40 տարվա, այլ նույնիսկ 40

օրվա ընթացքում մարդու մեջ հիմնական փոփոխություններ են կատարվում: Դեռ ավելի արագ:

Իհարկե, էն մարդը, որի միտքը անդադար գործում է ու որոնում:

Այո՛, նա կարող է և շատ սխալների մեջ ընկնել, բայց մի տեղ 40 տարի նստել չի կարող: Եվ որովհետև ես դրանցից մեկն եմ, ինչպե՞ս կարող եմ զինվորագրվել էս կամ էն կուսակցությանը կամ նրա թերթին:

Դարձյալ ասում եմ: Ես դրանով բնավ չեմ մեղադրում ուրիշներին կամ քամահրում, այլ իմ հոգեբանությունն ու իմ դիրքն եմ պարզում:

Նրանք, և՛ կուսակցությունները, և՛ նրանց թերթերը կարող են շատ կարևոր ու շատ լավը լինել, բայց դարձյալ «իմ տեղը» չեն լինիլ և ես ինձ նրանց զինվորը չեմ համարիլ, նրանց անունով ինձ չեմ մկրտիլ:

Մհա քրիստոնեությունը, ինձ համար էնքան աստվածային է, բայց ես քաշվում եմ ինձ քրիստոնյա անվանելով՝ Մարդու աշխատանքի ու վաստակի արդար բաշխման գաղափարը ինձ համար էնքան սուրբ է ու վսեմ, բայց ինձ սոցիալիստ չեմ անվանիլ երբեք:

Մի կողմից քաշվում եմ, որովհետև ոչ մեկը չեմ կատարել. Քրիստոսն ասում է՝ երկու շապիկից մեկը տուր շունեցողին, իսկ ես մի քանի շապիկից մեկն էլ չեմ տալիս հաճախ:

Մյուս կողմից էլ վախենում եմ, որովհետև մեյդանը լիքն են կեղծ ու այլանդակ քրիստոնյաներով ու կեղծ սոցիալիստներով: Էսպես կոշված գալլադեմ քրիստոնյաների ու սոցիալիստների բազմությունից, քրիստոնեության ու սոցիալիզմի զինվորների բազմությունից, քրիստոնեության ու սոցիալիզմի գաղափարագարներից:)

Միտքս պարզեմ:

Գաղափարները մեծ բաներ են: Մեծ գաղափարները մարդկանց մեծացնում, զորացնում ու ազնվացնում են, մի խոսքով մարդը դառնում է գաղափարական: Բայց դրա համար պետք է մարդու գլուխը էնքան մեծ ու բանական լինի, որ մի որևէ մեծ գաղափար մտնի նրա մեջ ու մերվի:

Դժբախտաբար, մեծ մասամբ էսպես չի լինում, գաղափարը չի մտնում զլխի մեջ, այլ գլուխն է մտնում գաղափարի մեջ:

Այո՛, սովորաբար փոքր գլուխներն իրենք են մտնում մեծ գաղափարների մեջ, ինչպես մեծ ծովի մեջ ու էս տեսակ մարդիկ հոգեպես, բարոյապես, մտավորապես խեղդվում են ու դառնում են ո՛չ թե գաղափարական, այլ եթե կարելի է էսպես ասել, գաղափարագար: Իսկ սա նույնքան դժբախտ երեվույթ է, ինչպես խելացիի հանդեպ խելագարը:

Էս տեսակ մարդիկ ո՛չ թե առողջ դատում են, այլ դուրս են տալիս, և հավատալով, որ իրենք գաղափարի զինվորներ են, իրենք իրենց տաքանում են ու դառնում են վտանգավոր և մինչև անգամ դաժան և զարշելի արարածներ. մինչդեռ գաղափարի մարդը միշտ զրավիչ է և ազնիվ:

Եթե հոգևորական է՝ լինում է մոլեռանդ, անգիր արած դուրս է տալիս ավետարանի նախադասությունները, որոնք ոչ մի կապ չունեն իր սրտի հետ, իր ներքին մարդու հետ, և մի սպանաներ ասելով, միշտ կարող են ինկվիզիցիա սարքել:

Եթե սոցիալիստ է՝ անգիր գիտի ինչ են ասել Մարքսն ու էնգելսը, բայց բնավ չգիտի թե ո՛ւմ, ո՛րտեղ, ի՛նչ պետք է ասի ինքը, դուրս է տալիս նրանց բառերն ու նախադասությունները և վերջ ի վերջո տեղադրում է իր իդեալը՝ անհատական թե մասսայական, իբրև իր ներքին անկարողության ապոֆեոզը:

Էսպես՝ Ո՛չ սրանցից եմ, որ սրանց հետ լինեմ, ո՛չ էլ, ինչպես ասի, իբրև քրիստոնյա կամ սոցիալիստ էնքան կատարյալ, որ թեկուզ սակավաթիվ սոցիալիստների ու քրիստոնյաների հետ լինեմ, որոնք պակաս չեն կյանքում:

Վերջապես, ինչքան էլ վերջիններիս հարգեմ ու սիրեմ, մենք մի տեսակ հոգեպես տարբեր կլիմաների մարդիկ ենք: Մինչդեռ մեկի պաշտամունքի կենտրոնը բարոյականությունն է, մյուսի իդեալը ազատ ու արդար հասարակարգը, իմ և իմ նմանների պաշտամունքի առարկան գեղեցիկն է:

Գեղեցիկը, որ ասում եմ՝ շատերը գեղեցիկ կին կհասկանան, ինչպես բարոյականություն, որ ասում եմ՝ լուկ սեռական ողջախոհությունն են հասկանում: Բայց ես քչերի հասկացած գեղեցիկն եմ ասում:

Մրանից հետո ես ինչպե՞ս կարող եմ զինվորագրվել որևէ կուսակցության կամ նրա թերթին:

Մի՞թե աչքեր չունեք դուք...

1918

ԽՈՍՔ ԻՐ ՀԻՍՆԱՄՅԱ ՀՈՐԵԼՅԱՆԻ ԱՌԹԻՎ

Թանկագին ուսուցիչներ ու սիրելի աշակերտներ. դեռ փոքր, պատանեկական հասակում ես տաղ էի ասում մեր մեծերի մոտ, որոնք ինձ ասացին՝ «Ապրե՛ք, երեխեք, բայց մեզ պես չապրեք...». սակայն անցան տարիներ և ես նորից պիտի ասեմ՝ «Ապրե՛ք, երեխեք, բայց մեզ պես չապրեք»: Մենք գրքերում էինք կարդում ու հեքիաթներում լսում մարդկանց զազանությունների մասին, սակայն այսօր մենք մեր աչքերով տեսանք, որ դեռ չի վերացել կոիվը, պատերազմը:

Շատ ճակատներ կան պատերազմում, սակայն ամենավսեմը ձերն է, որովհետև դուք եք կովում այն լուսավոր գաղափարների համար, որոնք պիտի բերեն եղբայրություն ու ազգերի համերաշխություն, հավասարություն, լույս ու արդարություն: Դուք պիտի պայքարեք՝ վերացնելու ժողովուրդների վրայից տանջանքներն ու թշվառությունները: Ես մի համեստ գործիչ եմ, և այսօր ձեր այդ վառ զգացմունքները ապացուցում են, որ դուք պիտի ձեր գործը սրբությամբ կատարեք:

Մերանալուց հետո՝ ես նորից կրկնում եմ ձեզ, սիրելի աշակերտներ՝ «Ապրե՛ք, երեխեք, բայց մեզ պես չապրեք»: Մենք, հին սերունդը դժբախտ եղավ, մաղթում եմ, որ դուք ստեղծեք երջանիկ կյանք: Հայտնում եմ ձեզ բոլորիդ իմ խորին շնորհակալությունը՝ ինձ ցույց տված զգացմունքների համար:

Իմ թանկագին ընկեր, իմ հոգու ընկեր, Լևան Դավիդովիչ: Ձեր հրապարակական նամակներում դուք ինձ առաջարկներ եք անում ու հարցեր տալիս, և ինձ ինչքան հետաքրքրում ու զբաղեցնում են ձեր արած առաջարկներն ու հարցերը՝ ևս առավել զմայլեցնում է էն պարզ, անկեղծ ու բարի սիրտը, որ երևում է ձեր տողերում, էն ազնիվ, բանաստեղծական հոգին, որով համակված են ձեր հողվածները: Լավ վրացու, իսկական վրացու սիրտն ու հոգին:

Եվ էդ տեսակ մարդը դեռ հարց է տալիս, թե ի՞նչ պետք է անենք, որ մոտենանք իրար:

Ես ձեզ կասեմ.— էդ տեսակ սիրտ պիտի ունենանք:

Եվ տեսնո՞ւմ եք, որ ունենք: Եվ դեռ էդպես շատ սրտերի տեղ գիտեմ ես: Բայց, իհարկե, դուք ձեր սիրտը չեք տեսնում և ոչ էլ հաշվի եք առնում, ինչպես և ձեզ նմանները. ճիշտ էնպես, ինչպես երեխաները տեղեկություն չունեն իրենց անմեղություն մասին և առանձին նշանակություն էլ չեն տալիս:

Դուք էլ երկյուղով եք նայում էն անդունդին, որ փորել են մեր ժողովուրդների մեջ մեր կառավարող շրջանները: Սակայն չէ՞ որ ժամանակն աշխարհքին նոր լողունգ է տվել,— էդ տեսակ դեպքերում երես դարձնել կառավարող շրջաններից և նայել հասարակ ժողովուրդին, ամեն մի ազգի ընդհանրությունը, և իսկույն ձեր երկյուղը կանցնի:

Դուք հատկապես խոսում եք հայ և վրացի ժողովուրդների մասին: Նայեցեք հասարակ ժողովուրդին: Ես ձեզ մի կոնկրետ օրինակ բերեմ նորանցյալ հայ-վրացական դժբախտ ընդհարումից: Ականատեսներն են պատմում:

Լոռու ձորում մի կամուրջ կա: էդ կամուրջի մի ծերին կանգնեցրել են հայ պահակ զինվորին, մյուս ծերին՝ վրացի: Նրանք երկուսն էլ հրացաններն ուսներին բռնած՝ համառ նայում են իրար: Բանից դուրս է գալիս ընկերներ են, կովի դաշտում տարիներ շարունակ կովել են միասին, միասին տառապել, միասին ուրախացել, միասին կերել ու միասին քնել: Այժմ բերել են իրար դեմ ու դեմ կանգնեցրել իբրև երկու թշնամու, և հրացաններն ուսներին բռնած նրանք համառ նա-

յում են իրար: Մեկ էլ դիմում են իրենց կողքին գտնվող գյուղացիներին և խնդրում են տեսնել ու իրենց հայտնել, թե արդո՞ք իրենց մեծավորներից մոտիկ կան, թե չէ, հսկում են իրենց, թե չէ: Երբ իմանում են՝ որ չկան, վազում են, գալիս կամուրջի մեջտեղը, գրկվում, համբուրվում, նորից հետ վազում իրենց տեղերը կանգնում ու գարծյալ հրացաններն ուսներին համառ նայում են իրար:

Հապես է, իմ անգին Լեան Դավիդովիչ: Քշնամուկները, որ ստեղծված է մեր ժողովուրդների մեջ՝ արհեստական է, իսկ սերն ու եղբայրության զգացմունքը բնական և շատ ավելի ուժնղ, քան թե կարծում են մեզանում:

Ժողովուրդներին խորթ է կարինետում նստած պոլիտիկոսի նեղսրտությունը և վայրկյաններով ապրող կառավարիչների հիվանդ նյարդայնությունը: Նրանք բնության մեջ ու բնության հետ ձուլված են ապրում, և դարերով ապրած կյանքն ու փորձն է նրանց առաջնորդում: Էդ է պատճառը, որ նրանք էսքան էլ կարողանում են դիմանալ էն բոլոր թույններին, որ ներարկում են նրանց տանջված մարմնի մեջ հազար ու մի տեսակ կառավարիչներ ու ղեկավարներ ամեն տեսակ բարձր գաղափարի անունով և կամ ուղղակի բարբարոսաբար:

Ես ձեզ ավելին կասեմ. ոչ միայն մեր երկու ժողովրդի մեջ է ուժեղ ու կենդանի էդ փրկարար շունչն ու զգացմունքը, այլև առհասարակ ժողովուրդների մեջ: Առեք հենց թուրքերին ու հայերին: Ես ձեզ էն տեսակ սրտառուչ դեպքեր կպատմեմ, և շատ ու շատ դեպքեր թուրքերի ու հայերի հարբերություններից, էն տեսակ սրտալի եղբայրական վերաբերմունք թե՛ թուրքի, թե՛ հայի կողմից, որ կզարմանաք: Եվ էդ էլ էն ժամանակ, երբ վատությունն ու կոտորածը ամեն կողմից քաջալերվում է ու բարբարոսվում, իսկ լավություն անհրաժեշտ արգելվում, նույնիսկ մահվան սպառնալիքով արգելվում:

Այո՞, ժամանակն է, թանկագին ընկեր, որ հայտնվեն ու ավելի թափով գործի անցնեն և էդ լավ զգացմունքների պաշտպաններն ու արժարժողները:

Դուք ճիշտ եք նկատում, որ էդ ժողովուրդների բանաստեղծները պետք է լինեն: Ես համաձայն եմ: Եվ նրանք արդեն սկսել են, նրանք արդեն եկել են կամուրջի մեջտեղը, գրկվում ու համբուրվում են ի տես բոլոր ժողովուրդների, և

նրանց գրկախառնությունն ու համբուրը պիտի ընդհանրանա:

Դուք առանձնապես ինձ վրա մեծ պարտականություն եք դնում: Ես շատ երջանիկ կլինեի և իմ բանաստեղծություններից ավելի բարձր կզնեի, եթե կարողանայի գործ տեսնել էս ասպարեզում: Եվ ինձ թվում է, որ մեզ կհաջողի: Կհաջողի, որովհետև մի կողմից՝ կատարյալ է մեր բոլոր ժողովուրդների բանաստեղծների ոգևորությունն ու լուսավոր միաբանությունը էս գործի մեջ, մյուս կողմից շատ է մեծ մեր ժողովուրդների մեջ փափագը — թողնել սուրն ու թշնամությունը և իրար մոտենալ, կապվել համերաշխության ու եղբայրության կապերով:

Վերջերս, իմ ծննդյան հիսնամյակի առիթով եղած շնորհավորանքների ժամանակ ես համոզվեցի, որ գործն արդեն շատ է հասունացած:

Տեսա, որ մեր հարևան ժողովուրդների ներկայացուցիչները ինչքան իրենց հարևան ժողովրդի գրականությունը հարգելու համար են գալիս, բայց շատ ավելի նրանց շարժել է էն հանգամանքը, որ ես կողմնակից եմ եղած ժողովուրդների համերաշխությանը:

Մեր հայ հասարակությունն էլ երբեք էնքան բուռն շփափահարեց իմ բանաստեղծությունը, որքան իմ էդ զգացմունքը և ազգերի եղբայրության խոսքը: Մեք նոր երիտասարդությունը ոգևորված ծափերով ընդունեց, երբ իմ՝ իրեն ուղղված խոսքի մեջ իբրև կտակ խնդրում էի թողնել հին ճանապարհը, խրատ առնել հին սերնդի փորձերից և փոխադարձ երջանկության համար համերաշխության կապեր հաստատել հարևան ժողովուրդների հետ: Եվ պետք է տեսնել, թե ամեն անգամ ինչ ոգևորություն է տիրում մեր հասարակությանը, երբ իր բանաստեղծների հետ միասին նրա առջև հայտնվում են հարևան ժողովուրդների և առհասարակ օտար ժողովուրդների բանաստեղծները: Սրանով մեր ժողովուրդներն իրենք արդեն ցույց են տալիս ճանապարհը և հրամայում են գնալ էդ ճանապարհով:

Ժամանակ է, որ մեր կառավարող շրջաններն էլ հասկանան ժամանակի ու ժողովուրդների պահանջները, իրենք էլ մի քիչ բանաստեղծ դառնան, իրենք էլ բանաստեղծների ու հասարակ ժողովուրդների հետ միասին գան եղբայրության

կամուրջի մեջտեղը Լիբայրորեն համբուրվելու: Այլապես նրանց էլ կհասնի էն վատ կառավարիչների ճակատագիրը, որոնք խորտակվում ու անեծքով են կորչում իրենց վատ ճանապարհին՝ եղբայրության, խաղաղության և արգար աշխատանքի դրոշը տանող ժողովուրդների ոտների տակ:

էս համոզմունքով ու էս զգացմունքով մենք իրար կդանք, և մեզ հետ բոլոր նրանք, որոնք բանաստեղծ են հոգով:

Ավերի թափով ու միաբան կանցնենք գործի, մեր լուսավոր ու փրկարար գործի¹:

1919

ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԻՃԱԿԸ

Ես մեր բանաստեղծների, վիպասանների ու դրամատուրգների գործերը տարիներ առաջ եմ կարդացել:

Միակ կանեի, եթե մեր գեղեցիկ գրականության վրա կարծիք հայտենի հին տպավորության տակ:

էն ժամանակից շատ են փոխված իմ գրական ճաշակն ու հասկացողությունը և իմ աշխարհայացքը: Ինչ որ էն ժամանակ թվում էր գեղեցիկ ու հերոսական, այժմ տգեղ է ու բարբարոսական: Ես վերջին տարիներս, երբ դեպք է լինում՝ վերադառնում եմ իմ հին կարդացածներից մեկին կամ մյուսին՝ հիասթափվում եմ հաճախ: Ընդհանուր տպավորությունս ու կարծիքս էն է, որ մեր գեղեցիկ գրականությունը առողջ ու ամբողջական գործեր շատ չունի:

Մինչև այժմ մեր գրականությունը հարստացած հող չի ունեցել իր ոտի տակ, մեծ մասով գաղութային գրականություն է եղել: Բանաստեղծի ոտը հարստացած ու իրական հողի վրա պիտի լինի, նրանից հետո միայն կարող է բարձրանալ, թեև կուզ գլուխը մինչև երկինք հասնի:

Հայոց ապագա գեղեցիկ գրականության զարգացման գրավականը ապագա Հայաստանն է, ազատ, հարստացած հողը, ժողովուրդը:

¹ Հոգովորի ուսերեն թարգմանությունը լույս է տեսել «Кавказское СЛОВО» լրագրում (1919, № 66):

էդ ապագա Հայաստանն էլ կտա մեր գրականության ուժեղ ու կենդանի ընդուն, որ լինելու է ժողովրդական բարբառների, գրաբարի ու եղած գրական լեզվի համադրությունը: Հայ ժողովրդական կենդանի բարբառների ազդեցությունն է լինելու տիրական:

Չնչին է հայ ժողովրդական կենդանի բարբառների միջև եղած տարբերությունը և կայանում է գլխավորապես կը-ի և ում-ի մեջ: Էդտեղ էլ՝ գերակշռելու է կովկասահայ բարբառը: էս չնչին տարբերությունները մի կողմ թողած, հայ ժողովրդական բարբառները մի լեզու են և հայտնաբերում են մի ամբողջական հայություն:

1919

ՆՈՍՔ ՀԱՅԱՍՏԱՆ ԳՆԱՅՈՂ ՄԻ ԵՌԻՄԵ ԲԺԻՇԿՆԵՐԻՆ՝

Դուք գնում եք Հայաստան, որպես բժիշկներ, բուժելու համար նրա վերքերը:

Բարի՛ ճանապարհ, գնացե՛ք: Հայաստանը շատ բժիշկների կարիք ունի, որովհետև շատ են նրա վերքերը: Եվ կարիք ունի ամեն տեսակ բժիշկների, որովհետև բազմատեսակ են նրա վերքերը:

Դեռ աղետների առաջին օրերից մեր աղետյալ ժողովրդի մեջ, մեր երկրի զարկված քաղաքներում ու գյուղերում և պատերազմի դաշտերում հայտնվեցին մխիթարիչներ և օգնողներ — եկած հեռավոր երկրներից...

Եվ ահա պատրաստվում եք դուք, հայկական կարմիր խաչի անունից, գնալու գործելու Հայաստանում: Եվ հենց էդ մասին եմ ես ուզում մի երկու խոսք ասել, թե ուր եք գնում դուք, և ինչպես պիտի գնաք:

Եվ ուզում եմ օրինակով խոսել ձեզ հետ: Դուք գիտեք, եվ ուզում եմ մեր ժողովրդի առասպելներն ու հեքիաթոր ես սիրում եմ մեր ժողովրդի առասպելներն ու հեքիաթ-

¹ Հովհ. Թումանյանն այս ճառն ասել է մի խումբ անգլիացի բժիշկների, որոնք այդ ժամանակ գտնվում էին Քիֆլիսում և պատրաստվում էին մեկնելու Հայաստան:

ները: Ահա էդ հեքիախներից մինը ասում է՝ մի ժողովուրդ պատուհասված էր: էդ ժողովրդի ընտիր զավակը, հերոսը ճանապարհվում է ճար գտնելու և փրկելու իր ժողովուրդը: պատուհասից: Իմանում է, որ ճարը անմահական ջուրն է, բայց անմահական ջուրն էլ գտնվում է կախարդական աշխարհքում: Ճանապարհ է ընկնում դեպի կախարդական աշխարհքը: Ճանապարհին նրան պատահում է իմաստունը: Ասում է, քո ճանապարհին գետ կա, որ լեղի է հոսում: Նրա ջրից պիտի խմես, և ասես — Ի՛նչ անուշ, անմահական ջուր է: Քո ճանապարհին՝ փշով ու տատասկով ծածկված անապատ կա: Փուշը պիտի պոկես հոտոտես ու ասես՝ Ի՛նչ անուշահոտ ծաղիկ է: Դու չպիտի զգաս ոչ ջրի դառնությունը, ոչ տատասկի դաժանությունը: Եթե զգացիր — վերջացավ: Այլևս չես հասնելու քո նպատակին:

էդպես էլ դուք, որ գնում եք Հայաստան, նրան օգնելու, իմացեք, որ էնտեղ ցուրտ կա, սով կա, և շատ ուրիշ նեղություններ: Եթե դուք էդ դժվարությունները, դառնությունները զգացիք, չեք հասնելու ձեր նպատակին և չեք փրկելու նրան: Պետք է էդ դառնությունները չզգաք ու դրանցից չհաղթվեք, միայն էն ժամանակ դուք կհաղթեք: Այո՞, սա հերոսի համար է ասված: Ի՛նչ որ դուք էլ արդեն գնում եք հերոսության:

Սրա հետ միասին իմացեք, և՛ դուք, և՛ ձեզ հետ էլ էն ամեն օտարները, որոնք գնում են Հայաստանի վերքերը բուժելու, իմացեք, որ հայ ժողովուրդը և Հայաստանը մի որևէ աղետյալ չի, այլ մի բարձր աղետյալ, որ առողջանալով՝ շատ բան ունի տալու մարդկությանն ու աշխարհքին: Հետևաբար՝ ձեր գործը լոկ մարդասիրությունով չի սահմանափակվում, այլ դա մի ծառայություն է, որ անում եք քաղաքակրթությանը և մարդկությանը:

Հայաստանին օգնողը պիտի համոզված լինի, որ Հայաստանը ընդունակ է հաղարապատիկը վերադարձնելու աշխարհքին:

Բարի՛ ճանապարհ, կամ ավելի ճիշտը, բարի գալուստ. որովհետև ես, իբրև Հայաստանի բանաստեղծը, ինձ միշտ էնտեղ եմ զգում: Եկե՛ք: Մենք միայն ցավեր չունենք: Եկե՛ք տեսեք: Եթե գեղեցիկ է Քոստոյը, նրան դժար թե զիջանի Արարատյան ծովածավալ դաշտի և երկնահաս Արարատի ու

Արագածի բիրիական վեհությունը: Եվ իզուր չի մեր երկիրը — Հայաստանի բարձրավանդակը էնքան մոտիկ երկնքին: Նա մի մեծ խորհուրդ ունի: Նա իր վերջին տանջանքներն է անցկացնում: Օգնեցե՛ք, որ ազատվի իր վերջին տանջանքներից էլ, և մենք կունենանք մի հայրենիք, որտեղից ուրիշները չեն հեռանալ ու դուք էլ չեք վերադառնալ:

1919

ՊԱՅՄԱՆ ԷԶԵՐ

1904 թվին, անհաջող պատերազմի հետևանքով, Ռուսաստանը ծայրից ծայր սկսել էր ալեկոծվել:

Հեղափոխության ուրվականից վախեցած ռուսական բյուրոկրատիան ժողովուրդների համար մի շար խաղ հնարեց, ցանկանալով բաժանել նրանց և դրանով զբաղեցնել նրանց հուշադրությունը:

էդ ուղղությամբ նա գործի ձեռնարկեց և Անդրկովկասում: Անդրկովկասում պետք էր իրար դեմ հանել երեք ժողովուրդ — հային, վրացուն ու թուրքին:

Անցյալ փորձերը ցույց էին տվել, որ անկարելի էր հայ-վրացական ժողովուրդների ընդհարումը գլուխ բերել:

Այո՞, եղև են տխուր միջադեպեր, բայց դրանք կարողացել են միայն պաղեցնել, պղտորել, թունափորել ժամանակավորապես էդ ժողովուրդների հարաբերությունները, էն էլ միշտ վերին խավերում, և շատ-շատ թույնը հասցնել մինչև գործիչների ու հրապարակախոսների լեզուն, բայց էդ թույնը հասցնել մինչև հայ և վրացի ժողովուրդների հոգու խորքը — չի հաջողվել երբեք: Եվ մնացել են անսասան մեծագույն հիշատակներով լեցուն էդ հոգիները:

Եվ էն երկու ժողովուրդը, որոնք իրենց պատմությունը սկսում են Կրանով, թե Հայկոսը (Հայկ) և Քարթլոսը եղբայրներ էին, մնացել են ու մնում են անսասան՝ կապված իրենց փոթորկալից պատմական ճակատագրով և մեծագույն հիշատակներով:

Նրանք միաժամանակ են հնարել իրենց գիրը, միաժամանակ են ընդունել քրիստոնեությունը, միասին մշակել թե՛

հոգևոր, թե՛ աշխարհիկ գրականությունն ու գիտությունը, միասին կովել իրենց ազատության և կուլտուրայի համար և միասին նույնիսկ իրենց մեծ տառապանքների մեջ ու միշտ բախտակից:

Նրանք միասին հաղորդակից են եղել հունա-հռոմեական կուլտուրային և շարունակ միասին պաշտպան կանգնել արևմտյան քաղաքակրթությանը:

Եվ էն հայ գործիչը, որ չէր պաշտպանում Վրաստանին, չէր հասկանում իր ժողովրդին ու իր պատմությունը, և էն վրացին, որ չէր պաշտպանում հային ու Հայաստանը, չէր հասկանում վրաց ժողովրդին և Վրաստանի պատմական ճանապարհը: Էնպես որ, հայ թե վրաց պատմության մեջ լավագույն վրացին պաշտպանում է Հայաստանին, հայը՝ Վրաստանին:

Նույն հայը կամ վրացին, որ լավ գիտեր և հասկանում էր իր ժողովրդի բախտն ու բնավորությունը և նրա գերագույն շահերը, միշտ պաշտպանում էր իր հարևանին, ինչպես ինքն իրեն: Հենց էդ պատճառով էլ հայոց պատմության մեջ կարելի է կարդալ, օրինակ, էսպիսի մի վկայություն վրաց թագավորի մասին.

«Եւ էր Դաւիթ արքայ այր սուրբ և առաքինի, զարդարեալ ամենայն անտուածպաշտութեամբ և բարի արդարութեամբ, և սա երևեցաւ ընդունող և սիրող ազգին հայոց: Առ սա ժողովեցան մնացեալ զօրքն հայոց. և սա շինեաց քաղաք հայոց ի յաշխարհն վրաց, և հաստատեաց եկեղեցիս և վանորայս բազումս և անսանեաց զանուն քաղաքին Գառայ... և ունէր մեծաւ ուրախութեամբ և ցնծութեամբ զամենայն ազգն Հայոց» («Պատմութիւն Մատթէոսի Ուռհայեցոյ», 1869, Երուսաղեմ, էջ 447):

Կամ էն պատմությունը, թե վրաց թագավորն ինչպես ազատեց հայոց մայրաքաղաքը թշնամու ձեռից և թե ինչքան նեղություններ են քաշել հայերը վրաց թագավորի մահից հետո (նույն, էջ 451, 459):

Էդ տեսակ վկայություններ է տալիս նաև վրաց պատմությունը հայերի մասին.

«Օգտվելով մահվամբ հայոց Աշոտ թագավորի, որ այդ ժամանակ միակ հետևողն էր Վրաստանի խաղաղության,

Պաղլան, Դինաուրի Գարրինկ քորեպիսկոպոսի հաշորդը գրավեց Գարդաբանի մի մասը, Քարթալինիային պատկանող շերտանները, իսկ արխազական Բագրատ թագավորը մտավ բուն Քարթալինիա»: («Վրաստանի պատմություն» իշխ. Ս. Բարա-Շովի. Ս. Պ. Բ. 1871. էջ 18):

Սրանք, իհարկե, եզակի դեպքեր չեն, որ կարելի է բերել հայոց կամ վրաց պատմությունից: Եվ էդ դեռ տիրողների՝ թագավորների և իշխանների կյանքից: Իսկ ժողովուրդը... սովորաբար ասում են, թե ժողովուրդը քիչ է երևում անցյալում, պատմության մեջ:

Ո՛չ, ես կարծում եմ, ժողովուրդը կա, երևում է, նա խոսում է հաղար ձևերով ու արտահայտություններով. միայն հարկավոր է կարողանալ էդ գտնել, նկատել և տեսնել:

Ահա՛ հայ ժողովուրդը, խտացած իր ազգային էպոսի — Սասունցի Դավթի մեջ:

Եվ էսպես էլ, հայկական էպոսի մեջ մշտապես անսասան կանգնած են հայոց հսկայի — Սասունցի Դավթի և վրացի հսկայի — Գեորգիի (այլ վարիանտով՝ Համդուլ) հսկայի դեմքերը իրար կողքի, ուր Դավիթը Գեորգիին է տալիս իր բարևը, Գեորգին էլ միայն Դավթի բարևն է առնում, նա է Դավթին զգուշացնում վերահաս վտանգի հանդեպ, և նրան է հավատում Դավթին անվերապահ: Նրանց սրերը երբեք չեն խաշածելում, և բացառապես սիրո և բարեկամության համար է Դավիթը Գեորգիի երկիրը գալիս:

Ահա՛ ձեզ ամբողջ ժողովրդի արտահայտած կարծիքը, սերունդներով ամբապնդված կապը, հավերժորեն գծված ճանապարհը: Հայ լինի թե վրացի, եթե շեղվում է էդ ճանապարհից, նա դավաճանում է իր ցեղի ոգուն...

Սակայն հենց նույն էպոսը հրաշալի կերպով խնդիրը պարզում է և բաց անում գեղեցիկ ապագայի հեռանկարը: Երբ Սասունցի Դավիթը հարձակվում է և սկսում է կոտորել թշնամու զորքին, մի ծերունի է առաջ գալիս և ասում — Դավիթ, ինչո՞ւ ես մեզ կոտորում, մենք խեղճ ուսնչաբար մարդիկ ենք, թագավորն է զոռով հավաքել մեզ կովի բերել, մենք քո դեմ բան չունենք, թագավորն է քո թշնամին, կոխ ունես նրա հետ արա: Քո թուր-կայծակով ինչո՞ւ ես կոտորում խեղճ

ժողովրդին: Եվ հսկայի թուր-կայծակին մնում է օդում կախված:

— Լավ ես ասում դու, ծերունի,— պատասխանում է Սասունցի Դավիթը, և թողնելով հասարակ ժողովրդին, դարձնում է իր ձիու գլուխը և ուղղում դեպի թագավորի վրանը: **Էսպես:**

Եվ ահա — էն պիսից մինչև էս գլուխը: Ինչ կոխվ ու կոտորած ուղում է լինի՝ հնագույն բռնապետներից մինչև դեմոկրատիկ հասարակապետությունները՝ միշտ սարքված են երկիրները կառավարողների և ղեկավար շրջանների ու ղեկավար մարդկանց ձեռքով: Եվ միշտ էդ արվել է հասարակ ժողովրդի, աշխատավոր մարդու կամքի ու ցանկության հակառակ:

Եվ հենց դրա մեջն է էն մեծ ու հաստատ մխիթարանքը, որ էդ բոլոր աղետների մեջ ոչ թե հասարակ ժողովուրդն է մեղավոր, այլ նրա իշխանավորները, և քանի շատ էդ վերջինները թուլանան, իսկ իրենք՝ ժողովուրդները դառնան ավելի գիտակից ու անմիջականորեն մոտենան իրար, և քանի իրավունքն ու իշխանությունը անցնի ժողովրդին, հասարակին, ընդհանուրին, աշխատողին — էնքան էլ մեղմանալու են էդ աղետները և վերջապես վերանալու: Իսկ թե ժողովուրդն անմեղ է ամեն կովի ու կոտորածի մեջ և հակառակ՝ դրա ամենալավ ապացույցներից մեկը հենց 1905—06 թվականների հայթուրքական ընդհարումներն էին, որոնցից ես մի քանի փաստեր առաջ կբերեմ, էնքան պայծառ ու լուսավոր փաստեր, որ ինձ իրավունք են տալիս իմ հողավածի վերնագիրը դնել — պայծառ էջեր:

էդ անասան հավատով ես նպատակ դրի մեր կյանքի ամենասև և մռայլ էջերից բերել պայծառ փաստեր, որոնք վկայում են այն մասին, թե ինչպես ժողովուրդներն ու ժողովրդի մարդիկ կարողանում են պաշտպանել մեկը մյուսին՝ ընդդեմ նրանց ընդհանուր իշխանավորների: Եվ ես իմ այս հողավածների ընդհանուր վերնագիրն եմ դնում «Պայծառ էջեր», որովհետև պայծառ եմ նայում մեր ժողովուրդների ապագային:

1920

1 Հողավածի ուսերն թարգմանությունը լույս է տեսել 1920-ին, «Երատետ» հանդեսում (№ 1):

Վրացի գրողների համագումարը որոշել է մայիսի 7-ը դարձնել վրաց բանաստեղծության և գրականության ազգային տոնի օր:

Մի վսեմ տոն, երբ մի ժողովուրդ տոնում է իր սիրտն ու հոգին, իր ցեղի հանճարը:

Եվ վրացի ժողովրդին շատ է սազում էդ տեսակ ազգային տոն ունենալը: Նա մի բանաստեղծական ժողովուրդ է, համակված գեղեցկի բնածին զգացումներով:

Ինձ ծանոթ ժողովուրդներից և ոչ մեկի մեջ ես չեմ նկատել էն երևույթը, ինչ որ տեսել եմ վրացիների մեջ: Նրանց գործիչներից շատերը հանկարծ կհանեն իրենց որևէ բանաստեղծի ոտանավորը, որ պահում են իրենց գրպանում և կամ կարտասանեն անգիր: Նրանք մինչև վերջին ժամանակներս իրենց աղջիկների բաժինքում Ռուսթավելու պոեմն էին տալիս:

Էսպես է գեղեցկուհիների ու քեֆ անողների հայրենիքը: Էսքան բանաստեղծական ու կենսուրախ, ինչպես միշտ հայտնի էր, և միաժամանակ էսքան լուրջ ու խիզախ, ինչպես երեվաց այժմ, երբ հնար ունեցավ:

Ես ամեն անգամ հրճվանքով եմ վերադառնում հայ և վրացի ժողովուրդների դարևոր անօրինակ լավ հարևանությունը, և խորին վիշտ է պատճառում ինձ մեջտեղի եղած թյուրիմացությունը:

Այո՛, թյուրիմացություն եմ ասում, որովհետև շատ են խորն ու խորհրդավոր էս հին եղբայր ժողովուրդների կապերը, որ չկարողացան կտրել նույնիսկ կառավարությունները իրենց արյունոտ սխալով:

Եվ ահա, երբ վրացին մայիսի 7-ին տոնում է իր ոգու տոնը, իր ազգային բանաստեղծության օրը, անկարելի է, որ հայը էնտեղ չլինի: Եվ էնտեղ կլինի հայը, ու կլինի ամենից առաջ:

Արդեն որոշել է հայոց գրական, կրթական ու կուլտուրական հիմնարկությունների ներկայացուցիչների ժողովը:

Եվ շատ լավ է արել: Ժողովուրդների որոշումներն ու քայլերն ավելի արժեք ունեն, քան նրանց կառավարությունների:

455

Կառավարութիւններն ժամանակավոր են ու փոփոխելի, ժողովուրդները մշտական ու անփոփոխ:

Գնանք էդ գեղեցիկ օրը մեր եղբայր ժողովրդին այցելելու և նրա պայծառ հանճարը հարգելու:

1920

ՀԻՐԱՎԻ ԱՂԱՅԱՆԸ ՄԵՌԱՎ

Երբ գրական մարդը մեռնում է, սովորաբար ասում են՝ նա չի մեռել, նա ապրում է իր ստեղծագործութիւնների մեջ: Այո՛, ճշմարիտ է:

Գրական-գեղարվեստական ստեղծագործութիւնը կենդանի գործ է, և իբրև կենդանի գործ անմահ է: Նրա հետ և նրա մեջ անմահ է և ինքը — ստեղծագործողը:

Բայց դժբախտաբար մեծ մասամբ էսպես չի լինում գրական աշխարհում: Գրողների մեծագույն մասը, գրեթե միշտ իրանցից անկախ պատճառներով, չեն կարողանում իրանց դրսևորել կենդանի շնչով, գեղեցիկ պատկերներով ու գեղարվեստական ձևերով օժտված գործերի մեջ, որ նրանց հետ էլ մնան ու ապրեն անմահ:

Ղ. Աղայանի կյանքն էլ էսպես անցկացավ: Չկարողացավ ժամանակ ու հնար շունեցավ էն գրական գործերը տալու, ինչ կարող էր տալ, որ եկող սերունդներն էլ ասեին.

— Ահա՛, իր մնայուն գործերի մեջ կենդանի Ղ. Աղայանն իր վիթխարի բարոյական հասակով: Ամբողջական ու առողջ, զվարթ ու պարզ:

Գրեթե մինչև իր ծերութիւնը՝ էնպես անցկացավ նրա կյանքը, որ միշտ մնաց ոտի վրա: Միշտ մնաց մի տեսակ գրականութեան սիրողի վիճակում և գրեց «ի միջի այլոց», ինչպես մեր գրողներից շատերը:

էդ պատճառով էլ ինչ որ նրա գրվածքների մեջ կա ու մնում է — դա Ղ. Աղայանի մեծութեան ու շնորհքի մի շնչին մասն է:

Ղ. Աղայանը մի հոյակապ մարդ էր ու խոշոր մտածող, երազող, գրող: Բայց նրա կյանքը անգիր անցկացավ:

456

Անցկացավ իր բարեկամների, ընկերների ու մտերիմների շրջանում, ու միայն նրանք գիտեն, թե ինչքա՛ն բան ունեւր նա ու ինչքա՛ն բան տարավ իր հետ:

Նրա թողածը շատ է քիչ, տարածն ու կորածը — ահագին: էդ է պատճառը, որ ասում եմ — նա մեռավ:

Ով չի տեսել նրան — էլ ճանաչել չի կարող, պատմելով էլ չի կարելի ծանոթացնել:

Այո, պատմելով չի կարելի ծանոթացնել գոնե էն տեսակ մարդկանց հետ, որոնք ոչ այլ ինչ են, եթե ոչ սիրտ ու հոգի:

էնպես, ինչպես վաղուց երգված ու լուծ մի երգ, որ պատմելով չի կարելի վերականգնել: էնպես, ինչպես վաղուց ցնդած մի բուրմունք, որ նկարագրելով չի կարելի նորից հավաքել ու տալ:

1921

<ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ
ԲՈՎՈՔԸ ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՎԱՆՅՈՒՐԱՅԻ ԴԵՄ>

Նամակ խմբագրության.

Սրտի խորին կսկիծով հաստատ աղբյուրից տեղեկանում ենք, որ Երևանի «հեղաշրջում» կոչված ավանտյուրան կատարողները կույր գործիք են հանդիսացել մի սոսկալի դավադրության, նույնիսկ հայ ժողովրդի և նրա դատի դեմ, և որ հեղաշրջումը կատարվել է արյունալի ոճիրներով: էսպիսով մի նոր աղետ է գալիս դժբախտ հայ ժողովրդի գլխին հենց էն ժամանակ, երբ նա պետք է ազատվեր ամեն աղետներից:

Խորասիրտ բողոքելով էս թշվառ դեպքի և կատարված խժգժութիւնների դեմ, իբրև հայ ժողովրդի բանաստեղծը, որ էնքան հավատ է տածել դեպի նոր Ռուսաստանը, խնդրում եմ Խորհրդային Ռուսաստանին հեռացնել էդ վերջին տանջանքի բաժակը արյունաբամ հայ ժողովրդից, նոր վերքեր չհասցնել նրա անհամար թարմ վերքերին, Խորհրդային Ռու-

1 1921-ի փետրվարի 13-ին սկսված դաշնակցական խռովութիւնը:

ասասանի մեծահոգութեամբ և բանվորա-գյուղացիական կարմիր Բանակին հատուկ եղբայրական զգացմունքով ու ներողամտութիւնով մոտենալ Երևանին ու աշխատավոր հայ ժողովրդին, որ անշուշտ անմեղ է ու անպարտ գրեթէ իր ամբողջութեամբ, և բարկութիւնը չթափել անմեղների վրա, որովհետև մեղավորներին նա չի էլ գտնելու իրենց տեղը:

1921

ՄՈՏԻԿ ՀԱՐԵՎԱՆԸ ԵՎ ՀՆՌՈՒ ԲԱՐԵԿԱՄԸ

Կարդացի վրաց թերթերի երկյուզը, թե Դրան¹, նշանակվելով հայ գործերի հրամանատար, կարող է նորից մի կիսվ առաջ բերել Վրաստանի հետ:

Էս երկյուզը սոսկալի ծանր եկավ ինձ:

Խնդիրը Դրոն չի բնավ: Մինչև էդ հողվածների տպվելն ու կարդացվելը Դրոն իսկի հրամանատար էլ չլինի թերևս: Խնդիրը էդ կովի կասկածն է, որ կա և կովի հնարավորութիւնը:

Եվ էդ հողվածների տպավորութեան տակ երկար մտածում էի պետութիւնների և ժողովուրդների հարեանութեան մասին: Ասում եմ՝ կառավարութիւնների և ժողովուրդների, որովհետև դրանք ջոկ-ջոկ բաներ են իմ կարծիքով:

Իմ կարծիքով սուտ է, որ ասում են՝ ամեն մի կառավարութիւն արժանի է իր ժողովրդին: Ընդհակառակը — առհասարակ կառավարութիւնները արժանի չեն իրենց ժողովուրդներին, և շատ քիչ կառավարութիւն կարող է լինել, որ արժանի լինի իր ժողովրդին և լինի իր ժողովրդի հետ: Օրինակ Էնպես, ինչպես բանաստեղծը:

Բանաստեղծը կարող է էնքան մեծ լինի, որ կարենա ընդգրկել իր ժողովրդի ամբողջութիւնը, կամ արժանի լինի իր ժողովրդին, բայց նա միշտ իր ժողովրդի հետ է: (Ես սրանով եմ բացատրում էն մշտական գծտութիւնը, որ միշտ եղած է իմ և առհասարակ կառավարիչների միջև):

¹ Իրաստամատ Կանայան (1883—1956) — գաղնակցական գործիչ, Հասարակական գաղնակցական կառավարութեան ռազմական նախարարը:

Ասում եմ ժողովրդի, ո՛չ թե ամբոխի: Բրովհետև շատերը ժողովուրդն ու ամբոխը շփոթում են իրար հետ: Սրանք իրար հակառակ բաներ են: Ժողովուրդն իմաստուն է, ամբոխը հիմար: Ժողովուրդը ծանր է, ամբոխը թեթև: Ժողովուրդը մեծահոգի է ու բարի, ամբոխը դժուրագրգիռ, վտանգավոր ու չար: (Ժողովուրդը աշխատանք է սիրում — ամբոխը՝ թալան):

Ժողովուրդը խաղաղասեր է — ամբոխը՝ կովարար: Եվ ամբոխամիտ ու ամբոխավար մարդիկ երբեմն ամբոխի պոլիս անցնելով, որ մի շատ հեշտ բան է, տիրում են ժողովրդին ու նրան զցում զանազան կրակների ու կոփանների մեջ, որ նա չի էլ երազել:

Եվ, իհարկե, միշտ հարեանի հետ:

Կովիւր հարեանի հետ — բարեկամութիւնը հեռունների:

Մինչդեռ սրան բոլորովին հակառակ ժողովրդական իմաստութիւնն ասում է. — Մոտիկ հարեանը լավ է, քան հեռու բարեկամը:

1921

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԿՈՉԸ

Աշխարհի ամեն կողմը ցրված հայոց ժողովուրդ,
ԼՍԻՐ:

Քեզ է կանչում Հայաստանի Օգնութեան Կոմիտեն:

Քեզ է կանչում Հայաստանի մայրաքաղաքում գումարված ամեն հոսանքի հայ գործիչների ու գրականագետների ժողովը:

Եվ գուցե երբեք դու չես լսել նրանց ձայները էսպես միացած ու միահամուտ:

Եվ էսքան մեծախորհուրդ մի վայրկյանի:

ԼՍԻՐ:

Դարավոր մաքառումներից հետո, համաշխարհային թոհուրհից, լայնածավալ ալեկոծութեանների և աղետների ծովից գերազույն ճիգերով բարձրանում է ազատ ու աճկալի Հայաստանը:

Պատմական էս մեծ օրերին տենդային իրարանցումով նրա շուրջն են խոնված հայության կենսունակ տարրերը, և Այրարատի նվիրական հողի վրա մի իշխանություն տեղի է տալիս մյուսին:

Սակայն՝ Հայաստանի Օգնության Կոմիտեն այսօր գալիս է հայտարարելու ի լուր համայն հայության, թե խաղաղությունը արդեն հաստատված է մեր հայրենիքում և հաշտ ու համերաշխ հարաբերության մեջ է նա իր հին հարևան ժողովուրդների հետ:

Եվ արդեն անցնում է նա իր վերջերը դարմանելու և կազդուրելու աշխատանքին:

Կառավարությունը առտօք է հանել իր բոլոր ուժերը ժողովրդին ազատելու տիրող և մանավանդ առաջիկայում սպառնացող սովից և վերաշինելու քանդված երկիրը:

Խաղաղություն գտնելով գործի է անցել և ինքը, մեծ տառապյալը, Հայաստանի իսկական տերը, հայ գյուղացին:

Սովը, սուրն ու ավերածությունը չեն ընկճել նրա հանրահռչակ տոկունությունն ու շինարար ոգին:

Նա բազմաթիվ զոհեր է տվել և տալիս է տակավին, բայց չի լքում պապենական օջախը, և իր գութանի մաճին ապավինած՝ կանգնած է հայրենի դաշտի վրա ու կանգուն էլ պիտի մնա, ինչքան իշխանություններ էլ գան ու գնան:

Եվ երբ հարևան աշխատավոր ժողովուրդները երեկվան արյունահեղության փոխարեն այսօր եղբայրական օգնության ձեռք են մեկնում հայ աշխատավոր ժողովրդին, մի՞թե կարող է պատահել, որ նրա տառապանքների ու շինարար ճիգերի հանդեպ անտարբեր մնաս միայն դու, նրա տարագիր եղբայրը, պանդուխտ հայություն: Դու՝ որ հեռու ես հայրենիքից, բայց ուշք ու միտքդ միշտ դեպի ես, դեպի հայրենիք:

Այո՞, Հայաստանի Օգնության Կոմիտեն քաջ գիտե, որ դու էլ ես բաժանված զանազան կուսակցությունների, ինչպես քաղաքական ու քաղաքացիական կյանքով ապրող ամեն մի ժողովուրդ:

Ահա՛, Կոմիտեն ինքն էլ կազմված է տարբեր քաղաքական հայացքի մարդկանցից:

Բայց նա լավ գիտե և էն, որ հայ ժողովրդին սովից ազատելու և քանդված Հայաստանը վերաշինելու գործը վեր է

ամեն կուսակցական նկատառումներից և քաղաքական տարածայնություններից:

Էսպես էլ մտածելով՝ ամենքը եկել միացել են այս վսեմ գործի շուրջը, կազմել են ազատ ու անկուսակցական մարմին և գործունեության են հրավիրում ամենքին, ամեն կողմից:

Էսպես է մտածում և ինքը՝ Հայաստանի Խորհրդային Հանրապետական կառավարությունը, որ ո՛չ միայն գործելու լիակատար արտոնություն է տալիս, այլև աջակցում է ամեն մեկի և ամեն մի մարմնին, որ կցանկանա օգնել, անձամբ գա, աչքով տեսնի և տնօրինի իր օգնությունը:

Արդ, լսիր հայություն, ուր էլ որ լինես, Եվրոպայից մինչև Հնդկաստան, և ամենուրեք:

Լսի՛ր քեզ կանչող հայրենիքի ձայնը և շտապիր օգնության ամեն բանով, ինչով կարող ես, որ ունենաս էն՝ ինչ որ երազել ես դարերով — ազատ ու շեն հայրենիք:

Նախագահ՝ Թումանյան Հովհաննես

Մ. ԱՔԵՂՅԱՆԻ ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅԱՆ ԱՌԹԻՎ՝

Հայաստանի Լուսժողովոմը դեկրետ է հանել՝ փոխելու հայ լեզվի եղած ուղղագրությունը և ընդունելու պ. Մ. Աբեղյանի առաջարկածը:

Ես, որպես հայ գրող և Գրողների Միության նախագահ, գալիս եմ հայտնելու իմ զարմանքը և բողոքելու էն վարմունքի դեմ, որ ունեցել է Հայաստանի Լուսժողովոմը էս կարևոր խնդրում:

Պ. Մ. Աբեղյանը մի առաջարկ է արել ու դրել հրապարակ: Շատ լավ, բայց Հայաստանի Լուսժողովոմը որտեղի՞ց է իմացել, թե պ. Աբեղյանը և ինքը Լուսժողովոմն էլ նրա հետ միասին անսխալական են, որ առանց քննության ենթարկելու

¹ Խոսքը վերաբերում է հայոց լեզվի նոր ուղղագրությանը, որ Հայաստանի Լուսժողովոմատի որոշմամբ կիրառության մեջ մտավ 1922-ին և գոյատևեց մինչև 1940-ը, երբ մի նոր որոշմամբ գործի դրվեց ներկայիս ուղղագրությունը:

առաջարկը, հրամանագրում է ընդունել և միայն դրանով գրել
ու տպագրել:

Եվ ի՞նչ կարծիք ունի Լուսժողկոմը հայ գրողների, հայ
բանասերների, մանկավարժների ու հրապարակախոսների
վրա: Նա կարծում է, թե հայոց լեզվի խնդիրներում կարելի
է նրանց արհամարհել և միայն հրամանագրել:

Ճշմարիտ, որ շատ է զարմանալի:

Պ. Աբեղյանի առաջարկը ընդունելի է, թե չէ, դա դեռ
քննելիք խնդիր է. երբ դա քննելիք խնդիր է, հետևաբար
Լուսժողկոմի հրամանը անընդունելի է. և քանի որ էսպես է,
նրան մնում է ուղղել իր արած սխալը, ետ վերցնել իր արած
կարգադրությունը, խնդիրը համարել բաց և դնել քննության:

1922

Ե
ԼՄԱԿԱՆԵՐ

1898 թ. հուլիս

Սիրելի Արսեն.

Դու լավ ես ասել, թե՛ թեև այսքան ժամանակ իրար նամակ չենք գրել, բայց այդ չի նշանակիլ, թե իրար մոռացել ենք: Առաջվա նամակներդ չեմ ստացել, երևի հասցեն լավ չես իմացել:

Ես շփոթեմ նամակիցս բան ես հասկանալու, թե չէ. այնքան գլուխս ուռած է շոգից, որ ուշք ու միտքս էլ գոլորշիացել են: Ամենից առաջ շատ ուրախացա, որ դու ուսանող ես դարձել, ես կարծում էի, թե այդպիսով գուցե խելոքանաս, բայց նամակիցդ ուրիշ բան է երևում — իմ քեֆն ու հալը հարցնում ես: Մի քիչ խելքը գլխին մարդը ի՞նչպես կհարցնի գրականությամբ պարապող մարդու քեֆն ու հալը: Դա այնքան պարզ ու հայտնի բան է, որ ոչ ոք չի հարցնում. ամենքն էլ գիտեն, որ վատ է: Բայց դու գուցե ինձ նրա համար ես հարցնում, որ գիտես թե իմը ոչ թե վատ է, այլ ամենավատ: Այս դեպքում իրավունք ունես: Ճշմարիտ որ դժվար բան է, հարցնելու բան է, երբ որ մի մարդ զուրկ նյութական կարողությունից, զուրկ ուսումից, զուրկ կյանքի մեջ գործ կատարելու ընդունակություններից և պատրաստություններից, ըստ ամենայնի տհաս ու անպատրաստ, դեռ պատանեկան հասակից ծանրաբեռնվում է մեծ ընտանիքի հոգսերով ու գրականական պարապմունքով: Ճշմարիտ որ բավականին դիմացկուն պետք է լինի հոգին, այն հոգին, որ յուր մեջ կրում է գրական կոշման ավյունն ու ձգտումը, որ կարողանա դիմանալ այս երկու իրար ճնշող, իրար մեղցնող ազդեցություններին — ընտանեկան հոգսերի տառապանքին և գրական ձգտումների հուզմունքին, որոնք միասին, միաժամանակ և անդադար

1 Արսեն Ղաճյան (1868—1944) — թումանյանի ներսիսյանական ընկերներից, հետագայում էջմիածնի միաբան, իրավաբանության դոկտոր:

մաքառում են անվերջ: Այս մի դարձուրելի կոիվ է, որ ապար-
դյուն է անում ամեն ջանք. ոչ ընտանիքին եւ մի ճար անում,
ոչ գրականութեան մեջ եւ գործ տեսնում. երկուսն էլ խան-
գարվում են: Եվ այս կոիվը շարունակվում է մինչև ուժաս-
պառ է լինում մարդը, մեռնում են, բթանում են ընդունակու-
թյունները, և այնուհետև, ֆիզիկապես էլ երբ ուզում է մեռ-
նի...

Այսպես է հայոց գրողի անցնելիք ճանապարհը. այսպես
է իմ ճանապարհը: Իսկ եթե ավելի մոտենաս — իհարկե,
սրանից էլ հազար անգամ վատ: Գու արդեն գիտես, թե ձեռ-
քըս գրիչ անելու օրից եւ ինչ վրդովմունքներ, ինչ անհան-
գըստութիւններ, ինչ սպանիչ թշվառութիւններ ու դժվարու-
թյուններ եմ տալիս, որոնց գլխավոր աղբյուրներից մեկն էլ
իմ ամուսնական — ընտանեկան կյանքն էր, իմ տնփեսայա-
կան (ավելի ճիշտը շնչիւսայական) բացառական անտանելի
դրութիւնն էր: Կերպակա բաժանվեցի ահագին աղմուկնե-
րով ու անբավականութիւններով, երկու ամիս շարունակ
կոիվ անելուց հետո, ասացի հիմի որ կհանգստանամ մի քիչ:
Հենց այն օրը, որ պետք է նոր բնակարանը բերի երեխա-
ներին, հեռագիր ստացա, թե շուտով գլուզն արի — հայրդ
մեռավ... Այս տնաքանդութիւնն էր, բառիս բովանդակ մտքով
(իմ վիշտը մի կողմ եմ թողնում), բայց այս բավական չէր:
Գանձարանը (Казна) վեճ ուներ մեզ հետ — մերժեց մեր
դատը, մեր հողերը խլեց, մինչև անգամ տունը... Գլուզից
եկել եմ ընտանիքս նոր տեղափոխել, վեց մանր երեխաների
հետ (և մի կնոջ հետ, որի հետ նոր եմ հաշտվել ընտանեկան
այլանդակ կոիվներից հետո) — սրանց հետ, ինչպես ասում
են, կանաչ խոտի վրա կրակ եմ արել:

— Բայց... չէ՞ որ Խ. բանաստեղծ եմ, պետք է գրեմ,
պետք է տպեմ, մարդիկ պահանջում են, տրտնջում են, զար-
մանում են: Ահա, դու էլ ես գրում նույնը — և դեռ ավելին,
թե եթե այստեղ լինեիր, ինձ կհամոզեիր, որ գրեմ, տպեմ և
այլն: Մարդիկ իրավունք ունեն, բանաստեղծ ես — վերջա-
պես թոշակ էլ են նշանակել...¹

¹ Բաբվի Մարդասիրական ընկերությունը 1895-ից տարեկան 300 ռ.
թոշակ էր նշանակել Ղ. Աղաջանին, Ալ. Շիրվանզադեին և Հովհ. Քուման-
յանին:

Բայց եւ խոսքս շարունակեմ: Անցյալները հաշվեցի, տե-
սա, որ պարտատերերիս թիվը արդեն վաղուց անցել է հիսու-
նից: Ամեն փողոցի վրա պարտատեր ունիմ — և ամեն տեղ
ստիպված եմ ճանապարհներս ծոնել — խույս տալ: Սակայն,
այսուամենայնիվ հանդիպում են միշտ — և պահանջում ամեն
ձևով — եւ իհարկե ամեն մեկին պատասխանում եմ անհիմն
խոստումներով, լուսթյամբ կամ ճնշվելով, միշտ անկարող
հատուցանելու (սրանից է հառաջացել, թե գրողները պնդեցե-
ն են, խոստըմնազանց են, ստախոս են և այլն): Բայց այս
բոլորն էլ տարանք — դե գոնե պարտք ճարվի: Հատնում է,
վերջանում է այն մարդկանց թիվը, որոնց կարող էիր դի-
մել — էլ ոչ ոք չկա, էլ պարտք էլ չես կարող ճարել — դե՛հ,
համեցեք:

— Բայց... չէ՞ որ դու բանաստեղծ ես, պետք է գրես,
տպես, ոգևորվես, ոգևորես — եթե այդ շնա անում — թո՛ւ,
ի՞նչ գրող ես...

Ահա ուղիղ քառասուն օր է ման եմ գալիս ժուրհակի
վրա մեկին երաշխավոր ստորագրել տամ, որ բանկից կա-
րողանամ մի գումար դուրս բերել, կամ մի գլուզ գնամ, ինձ ու
ընտանիքիս ազատեմ այս կրակի միջից, կամ, վերջապես,
թեկուզ հենց այստեղ մնալով, ծախսերը հոգամ: Ասում եմ
քառասուն օր է — որոնք կստորագրեին, նրանց էլ չեմ կա-
րող դիմել, նրանց արդեն դիմել եմ ուրիշ դեպքերում, և ահա —
ի՞նչ տեսակ մարդու ասես, որ չեմ դիմել, ի՞նչ տեսակ ձևով
ասես, որ մերժում չեմ ստացել. և, իհարկե, այսպես էլ շա-
րունակվում է:

— Բայց... չէ՞ որ ես բանաստեղծ եմ, ազգիցն էլ դեռ թո-
շակ եմ ստանում — ի՞նչու չեմ գրում, թե՛ւ չեմ տպում —
ինչու՞ եմ լռել...

Այսքանը բավական էր, Արսեն, իզուր ինչու քեզ ավելի
տխրեցնեմ: Միայն, հոգիս, միանգամ ընդմիշտ համոզված
եղիր, որ գրողը ձեռքով չի գրում, որ նրա երևակայութեան
միջից հալածված կլինեն ստեղծագործական ամեն տեսակ
գաղտնիքներ, քանի որ նրա մեջ խոնաված կվխտան 57 պարտ-
քատերեր, քանի որ նրա ականջներն ազատ չեն լինիլ պա-
հանջների աղմուկից, նյութական պահանջների, որոնց ոչ
մեկին պատասխան չի կարող տալ [...]

Սիրելի Արսեն! նամակս հենց այստեղ ընդհատեցին, և ինչ ես կարծում — մի շաբաթից հետո եմ շարունակում: Էլ այն տոնով չեմ շարունակում. բայց խոսքը իմ մասին լինելով մի կարճ բան կասեմ: Այստեղ — Թիֆլիսում կան մարդիկ (ձեռնհաս), Բաքու կան մարդիկ, և առհասարակ որտեղ որ կան իմ մոտիկ ընկերներն ու բարեկամները ցանկութուն են հայտնում, պատրաստակամություն են հայտնում — կամենում են ինձ նպաստել, որ ես կարողանամ գրականությունն անձնատուր լինել և շշվարել ու շշկվիլ իմ ճանապարհին: Նույնիսկ արդեն բավականին օգնություն եմ ստանում — այստեղի գրական ֆոնդից ստանում եմ, Բաքվի Մարդասիրական Ընկերությունից ստանում եմ, և եթե մի չսոված լրբություն չլիներ — այս տարի ավելացնելու էին մինչև 450 (Բաքու): Հետևյալ նամակում այս մասին կգրեմ, որ քստմենս — ինձ համար էլ նոր է բոլորովին պարզվել: Դու չկարծես, թե այն է ինձ վրդովում, որ թողակս չեն ավելացրել — բոլորովին, չէ — այլ այն ցած երևութը, որ հետո կպատմեմ — թե ինչպես մեկը լավ տեղյակ լինելով իմ գրությունը — մանավանդ այն օրերում, երբ բաժանվել էի նոր — գնում է հավատացնում Ընկերության խորհրդին, թե ես ապահով մարդ եմ, կարիք չունիմ նպաստ ստանալու և այլն: Այս գուցե մինչև անգամ Աղայանցը քեզ պատմած լինի: Այս երրորդ ամիսն է մի անանուն ծրար եմ ստանում — մեջը 10 ռուբլի — մի անգամ, առաջին նամակում գրել էր, թե ամեն ամիս, մինչև միջոցներս կներեն, ինձանից կստանաք ամսական 10 ռուբլի: Այս էլ մի նոր սյուրպրիզ: Ինչևիցե. խոսքս այն է, որ այս բոլորը կարող են և ընդունակ այնպես անելու, ոչ ես կարողանամ իմ նպատակներս իրագործեմ — գլուխս ազատեմ — մի քիչ պտտվեմ մեր գավառներում — ժողովրդի մեջ, թարմանամ ու հարստանամ տպավորություններով: Խելացի նպաստողը պետք է այնպես անի, որ գրողը յուր ուժերի երիտասարդ ժամանակը բան չիներ, ոչ թե սպասի վերջում — ընկած ժամանակ օգնելու: Եթե սկզբում օգնություն լինի — վերջում օգնության կարոտ չի լինիլ գուցե գրողը: Այժմ էլ դու ես գրում — Աղայանն էլ էր գրել քո այդ մտադրության մասին — թե ուզում ես մի բան անել. ես հիմա այնտեղ եմ հասել, որ պետք է ասեմ, թե բան եք անում արեք, թե չէ այս անո-

րոշ ու անհաստատ դրուձյան մեջ չի կարելի դիմանալ մի մեծ ընտանիքի հոգսեր շալակած և դառնալ գրող:

Հոգեկան վրդովմունքների, տանջանքների ու հոգնածության հետ միաժամանակ ֆիզիկապես էլ քայքայվել, ընկել եմ բոլորովին — մի քիչ ժամանակ էլ որ անցնի, կարծեմ օգնությունն էլ գուր կլինի, օրհնությունն էլ:

Անհամբեր սպասում եմ քո կենսագրական գաղտնիքներին. դրանք ինձ համար շատ կարևոր կլինեն:

Նամակս ուզում եմ այստեղ վերջացնել: Բարև Օլյայից և իմ գերդաստանից:

Այս երկու օրս գուցե գնանք Շուլավեր, թեև ասում են այնտեղ էլ շատ շոգ է, բայց ինձ համար ավելի լավ է — Թիֆլիսից հեռանամ, թեկուզ դժոխքն ընկնեմ: Այստեղ ամեն օր շոգից մարդիկ են ընկնում փողոցներում:

Հա՛, մի անգամ միտքս գցիր քեզ գրեմ իմ տեսակցությունները կաթուղիկոսի հետ: Նամակիս պատասխանը գրիր **Большие Шулаверы (заказное գրիր):**

Քո Հովհաննես

ՄԱՐԻԱՄ ԹՈՒՄԱՆՅԱՆԻՆ՝

Դ ս ե ղ — Կ ո ջ ո Ր

1899 թ. հուլիսի 24

Հարգելի Մարիա Մարկովնա.

Ներողություն եմ խնդրում, որ այսքան ուշացրի նամակս վերջին ժամանակներս ջերմում էի, այժմ էլ առողջացել եմ, այն էլ մարկա չկար, թե նամակ գրեի, կայարանը հեռու է, մեզանից մոտ կայարանում էլ չկար: Մի մարկա, երկու բաց նամակ եմ ձեռք բերել և ահա նամակ եմ դրում Ձեզ, Ֆիլիպին ու Ռուստեմին: Այստեղ ինձ համար շատ ձանձրալի է անցնում ժամանակը: Դաշտերն ու հանդերն այրված են երաշտից, գյուղը լիքն է կալի մղեղով (թոզով), գյուղացիներն էլ ամենքն իրանց գործին. այնպես որ գրույց անող չկա:

¹ Իշխանուհի Մարիամ Թումանյան (1870—1946) — հասարակական գործիչ, բանաստեղծի բարեկամուհին և նրա երկերի հրատարակիչը: Բանաստեղծի հետ ազգակցական կապ չի ունեցել:

Կարելի էր պարագեի, բայց այն էլ մինչև այսօր ջիւրս էր խանգարում, մեկ էլ բոլոր երեխաները ամբողջ օրը սննդակումն են, որովհետև դուրսը սաստիկ շոգ է ու փոշի: Կիրակի օրերը հավաքում եմ գյուղացիներին, խոսեցնում եմ, ուզում եմ լեզենդաներ հավաքել: Արդեն մի երկու լավ բաներ եմ գտել: Պետք է ասել, որ մեր ժողովուրդը զարմանալի արագութեամբ մոռանում է իր հին զրույցներն ու ավանդությունները: Ինձ սաստիկ ցավեցնում ու անհանգստացնում է այս հանգամանքը: Ամեն մի ազգի բանաստեղծություն ժողովրդական լեզենդաներով, ազգային ոգու ստեղծագործություններով է զորանում ու ինքնուրույնության կնիք առնում: Հաստատվում, առաջ գալիս որպես մի ամբողջ ժողովրդի խոսք և դրանով էլ դառնում պատկառելի: Մտածում եմ այնպես անեմ, որ միաժամանակ — մի կամ երկու ամիս ընտանիքիցս ազատվեմ, կարողանամ, մի քանի տեղեր կան, շրջեմ, հարցուփորձ անեմ:

Երեկ Յալթայից, Ս. Շահազիզից նամակ ստացա: Գրում է գրական ֆոնդի և գրողների գրություն մասին: Գրում է, թե գրական ֆոնդը, այսինքն այն գումարը, որ ինքը ետ է պահանջել, այսուհետև էլ ծառայելու է իր նպատակին: Խոստանում է աշխատել նամակ գրել այս մասին:

Աղայանցը ինձ նամակ է գրել — սուտ է մի տիկնոջից փող եմ ստացել, եթե տեղը գիտես, իմ շնորհակալությունս հայտնիք նորան: Ես այս շնորհակալությունը Ձեզ եմ ուղարկում:

Խնդրում եմ գրեցեք, թե ինչպես է Ձեր տրամադրությունը (այսինքն քեֆը), ինչպես եք ժամանակ անցկացնում, Ռուստեմն ու Ֆիլիպը այցելություն եկա՞ն, թե՞ չէ, արդյոք այդ տեղ էլ բարեգործական հանդեսներ չե՞ք սարքում, եթե հանդեսներ չեք սարքում, գոնե ծրագիրները կազմելիս կլինեք: Արդյոք չե՞ր կարելի, որ հիշեիք իմ խնդիրը — ինձ համար մի քիչ բան գրեիք Ձեր այն հիշողություններից, որ ինձ համար այնքան թանկ են: Գուցե թե՛ և հոգեբանական անալիզներ անեիք, որ այնքան սիրում եք Դուք. այդ արդեն շատ կուրախացնի ինձ: Նամակիս այս տեղը հասած կարկուտ եկավ, բայց չնայելով կարկուտ էր, գյուղացիք ուրախ են — այնքան սուսկալի է երաշտը:

Այստեղ բժշկություն եմ անում, այնպիսի բժշկություններ եմ անում և այնպիսի հոշակ եմ ստացել, որ ոչ թե Ռուստեմը, Լեխմանն ինքն էլ կնախանձի: Միաժամանակ դատավորի ու քարոզչի գործ էլ եմ կատարում: Ուզում եմ մի քանի բան անեմ, որոնց մասին հետևյալ անգամ կգրեմ: Խնդրեմ նամակ գրեք այս հասցեով Տ. Калагеран (Тиф. Кареск. ж. д.), Ованесу Туманянц. Իմ և տիկնոջս կողմից սրտագին բարևներ: Խորին հարգանքով՝

Միշտ Ձեր Լ. Թումանյան

ՄԱՐԻԱՄ ԹՈՒՄԱՆՅԱՆԻՆ

Գ ս է դ — Թ ի ֆ ի ս

1899 թ. օգոստոսի 12

Հարգելի Մարիա Մարկովնա.

Ես մի տասն օրով գյուղից հեռացա, հասա մինչև Թիֆլիս: Վերադարձիս շատ ուրախացա սեղանիս վրա գտնելով Ձեր նամակը:

Ձեր նամակը կայարանից դուրս բերող գյուղացին կորցրել էր ճանապարհին իրան հանձնած բոլոր լրագիրներն ու նամակները — թե՛ իմը, թե՛ ուրիշներինը — միայն Ձեր նամակն էր մնացել անկորուստ:

Ափսոսում եմ, որ Դուք ևս չեք կարողանում այնպես անցկացնել Ձեր ժամանակը, ինչպես Դուք եք ցանկանում և այդքան աղոթու, բանաստեղծորեն բացականշում եք, թե՛ ես այս օրերը կջնջեի: Շատերն ափսոսում են ուրիշ բաների համար, բայց Ձեր մեջ սիրելին հենց այդ է, որ Դուք ափսոսում եք օրերի համար — անբովանդակ, իզուր անցնող օրերի համար: Այս օրերը, հիբալի, ափսոսանքի արժանի օրեր են և միայն կյանք մաշելու ընդունակություն ունեն, երանի շնջված լինեին, սակավ լինեին, բայց լավ լինեին:

Մեր կյանքը, շնչին բացառությամբ, հյուսված է այդպիսի օրերից — խեղճով է օղը, ժամերը ձանձրալի, երկինքն էլ, կարծես, վերևից ճնշող մի ծանր, բանտային կամար լինի:

Այն, ինչ որ մաքուր ու վեհ է, չի երևում, չի շարժվում, իսկ ինչ որ շարժվում ու կյանքն է հորինում իբրև — այն էլ շատ է նոզկալի:

Մեր կյանքին պակասում են մարդուն աստվածային տիպ պարզեղող, ոգի ու ձգտումն ներշնչող վսեմ բաները, նրանց հետ և պոեզիան:

Բայց թող անկեղծ խոսեմ — ամենից առաջ պոեզիան: Ամեն բան, ինչ որ զուրկ է պոեզիայից, արժանի է ջնջվելու, ինչպես այս օրերը, որ միայն տրտունջ են հարուցանում:

Գուք Կոչորումն էլ բավականություն չեք ստացել և Ռոստոմի մասին գրում եք, որ տխուր տպավորություն է արել: Այո՛, դա թույլ բնավորություն ունեցող մարդ է և նրան հարկավոր է ոգևորող — այդ տեսակի մարդկանց համար ոգևորությունը փրկություն է, բայց ի՞նչ... հիվանդանոց բանալն էլ արգելեցին: Ես, իրավն ասեմ, նրա կնոջը մի հիմնովին շեմ ճանաչում, որ կարողանամ նրա հոգեբանությունն անել, բայց կինը էական նշանակություն ունի մարդու վրա, մանավանդ զգայուն մարդու վրա: Երբոր մարդ ու կին մի ներդաշնակություն չեն կազմում, երբոր մեկը չի հանդիսանում իբրև լրություն մյուսի, այնտեղ մարդկային կյանքը և ամուսնությունը կորցնում է իջ գերագույն խորհուրդը, դառնում է մի անտանելի, շնչին, բայց մաշող պայքարի հանդես և դժբախտության աղբյուր:

Այս մասին մի հրաշալի ավանդություն — առասպել եմ գտել, թեև փոքր, բայց շատ գեղեցիկ, իմ կարծիքով, թե ինչպես մուկն ու թռչունը (վայրենի աղավնին) սիրահարվում են իրար վրա:

— Բայց մուկը ո՞վ, թռչունը ո՞վ,

Որ իրար հետ ապրեն սիրով...

Շնորհակալ եմ, որ ինձ այնքան քաջալերում եք Ձեր նամակում: Գուք ինձ արդեն շատ եք քաջալերում, բայց ճշմարիտն ասեմ, ինձ հուսահատեցրել է այս տեսակ դրությունը: Հենց այն հանգամանքն էլ, որ մի քանի սիրելի անձնավորությունների այդքան հոգս եմ պատճառում, այդ էլ է ինձ շատ վշտացնում: Ես զզվում եմ իմ անպետքությունից կյանքի մեջ: Ամեն օր իմ անփութության մի նոր ապացույց ու պատմություն է: Բայց մի մեծն ասեմ — ես 1892 թ. Մոսկվայում

գիրք եմ տպել — 92 թվին էլ ստացել ու այսպես թե այնպես ցրվել: Բանն այդ չէ: Տպել եմ տվել 1200 օրինակ: Այժմ, յոթ տարուց հետո, այս երկու օրս մի նամակ եմ ստանում Մոսկվայից, տպարանատիրոջից, թե իր ժամանակին մոռացմամբ մեզ մոտ մնացել են ձեր գրքից օրինակներ և այն էլ... 6 փուլ, այսինքն 500—600 օրինակ:

Բանից երևում է՝ ես կեսն եմ ստացել և շեմ հաշվել ու ասել եմ բոլորն այս է, որ կա: Այժմ ինչ կասեք, այս տեսակ մարդը կապրի՞, այն էլ մի տուն լիքը երեխաներով: Իհարկե — ոչ:

Խնդրում եմ շուտով նամակ գրեք — սրտագին բարևներ իմ և տիկնոջս կողմից և համբույր երեխաներին:

Միշտ Ձեր Հով. Թումանյան

ՄԱՐԻԱՄ ԹՈՒՄԱՆՅԱՆԻՆ

Ուրազվել — Վիճի օի

1901 թ. հուլիսի 19

Թանկագին Մարիա Մարկովնա՛

— Իմ կողմից միանգամայն ապահով եղեք, ես կատարյալ առողջ եմ, սառը ջուրն ինձ չի վնասում, ընդհակառակը շատ է օգնում: Ծճմարիտ է, մի ժամանակ դժվար է եղել այստեղի սառը ջրում լողանալը, բայց այժմ շատ է փոխվել ջուրը և դաղն այնքան է պակասել, որ գրեթե չի նկատվում, միայն երկաթի համն է մնում: Խորհուրդ եք տալիս ձու, կաթն ու մածուն ուտելու: Ես էլ հենց այդ եմ ուտում, թեև ձուն ու մածունը դժվար են ճարվում: Մի խոսքով շատ լավ եմ. ջուրն էլ է օգնում, օդն էլ, բայց մանավանդ ազատ լինելը: Գիտեք, 13 տարի է, ինչ որ ամուսնացել եմ, ես ազատ լինելու հաճույքը դեռ չեմ զգացած: Այժմ էլ թեև ինձ ազատ չեմ զգում ընտանիքիս հոգսից, բայց գիտեմ, որ նրանք էլ լավ են, և միայն կարոտ է, որ զգում եմ, ոչ թե ծանրություն, որ զգա-

ցել եմ միշտ: Իսկ կարոտը ինձ համար ամենաթանկագին զգացումն է: Առհասարակ հագուորդը, կուշտ լինելը — ավելի ճիշտ — հղփանալը իջեցնում է մարդուն ներքև: Կարոտից է առաջ գալիս ամեն բարձր բան: Իդեալներն ի՞նչ են որ, — հոգու կարոտներ: Եվ հենց սրա համար էլ լավ մենակությունը, մենակության մեջ ամենավսեմ հաճույքներ կան և դրանք այն ընդհանրությունն են, երբ մարդու հոգին լա՛յն, խաղա՛ղ, անվրդ՛ով ծփում է և սիրտը քաղցր-քաղցր ճմլում՝ երբեմն որոշ, երբեմն անորոշ կարոտներով: Եվ այդ ընդհանրությունն է, որ հայտնագործություններ են անում մարդիկ, ստեղծագործում են, իհարկե, ևս առավել բանաստեղծ մարդիկ: Նիցշեն ասում է. «Բոլոր բանաստեղծները հավատում են, թե ով որ կանաչի մեջ լեռան մենավոր լանջում պառկած հսկի, երկնքի ու երկրի մեջ գոյություն ունեցող շատ բաներ կիմանա: Եվ երբ բանաստեղծներին տիրում է քնքուշ տրամադրությունը, նրանք միշտ հավատում են, թե ընությունն ինքը սիրահարված է իրանց վրա ու իրանց ականջին շնչում է խորհրդավոր, սիրային — շողմարար ճառեր — և դրանով թռչում են նրանք մահկանացուների առաջ»:

Բայց պե՞տք է ասեմ, որ ես չկարողացա մենակ լինել: Շատ մարդիկ ծանոթացան և այժմ արդեն ծանոթների մի մեծ շրջան ունեմ այս փոքրիկ ամառանոցում, որ չեն թողնում... տխրեմ:

Լավ է, որ Դուք խաղաղություն եք վայելում, բայց ափսոս, որ մոծակները նեղացնում են, կամ ինչպես Դուք գրում եք՝ «այդքան փոքրիկ արարածները թունավորում են մարդու կյանքը»: Այդպես է. փոքրիկ արարածներն են կյանք թունավորում — մեծ արարածները թույն չունեն, նրանք միայն կյանք կարող են տալ: Բայց շատ միք հուսահատվի՛լ. տեսնո՞ւմ եք, մի թեթև քամի է հարկավոր, որ ցրի այդ կյանք թունավորողներին: Ափսոս, որ չեմ կարող Ձեզ համար քամի ցանկանալ:

Ինձ հետաքրքրեցիք Ձեր գրելիք նյութով, ու չեք գրում թե ինչ բան է: Ուրեմն հայ կնոջը թողեցիք. խեղճ կին. իսկ եթե մենք ենք մի կին թողնում, կանայք աշխարհք են թողացնում — տղամարդիկ անգուժ են, անխիղճ են...

Կին ասացի միտս եկավ: Իմ կնոջ մասին եք հարցնում. նա լավ է, ինչպես գրում է, իր երեխաներով հանդերձ: Հասցեն եք ուզում — այս է՝ Белый Ключ, дача Пухава, Ольге Туманян. Շանթից նամակ ունեմ. Բուդապեշտից է գրել: Երբ գրեմ կհարցնեմ, թե ինչու դեռ նամակ չի գրել Ձեզ. եթե շուտով կգրի:

Իմ այստեղի ծանոթուհու մասին ի՞նչ կետեր էիք շարել: Մենք միայն բանաստեղծություն ենք անում... վերջապես այդ էլ շատ քիչ:

Ղըրխքիսալովի մասին էիք գրել: Ձեր գրելուց առաջ նա ինձ մանրամասն պատմեց իր գործը — իր պատմելով ինքն արդար է և հերքել է, գործն էլ դատաստանով տարել: Է՛հ, ինձ ինչ, ով է անպայման լավ մարդը. ավելի լավ է մարդը իրանից լավություն պահանջի, ուրիշի վատությունը շատ էլ վտանգավոր բան չի լավ մարդու համար — եթե միայն ինքը ճիշտ որ լավ է:

Ասում եք ծրագիրներ եք կազմում, ես էլ եմ ծրագիրներ կազմում: Երևակայում եմ, որքան խոսելու նյութ կունենանք: Որքան շատ կանանց եմ հանդիպում, հետները խոսում, ճանաչում, այնքան ավելի եմ կարոտում մեր հոգեբանականփիլիսոփայական-բանաստեղծական զրույցները:

Ուղարկում եմ ամառանոցիս լուսանկարը, առաջի նստածն էլ ես եմ: Ֆիլիպին դեռ նամակ չեմ գրել — ոչ էլ ստացել եմ: Այսօր կամ վաղը կգրեմ: Դուք երեկ գրագրություն ունիք — չեք գրում նրա մասին: Ռուստեմն էլ երեկ այնտեղ է:

Այստեղ ընդհատեցին — մեկը հիվանդացել է (տիկնոջ տագրը) կանչում է ինձ: Ցտեսություն: Սպասում եմ Ձեզանից նոր — տեղեկությունների և լավ լուրերի:

Միշտ Ձեր Հ. Քումանյան
Հասցես ասղալի՝ Ахалцых — Ов. Туманян

Սիրելի Ֆիլիպ.

Ես այժմ գիտե՞ս ինչ եմ ուզում. որ ամառը նոր սկսվեր, հետու լինեիրք ու սկսեիրք մի նոր գրագրություն — գեղարվեստի մասին, սիրո մասին, կյանքի ու իր վշտերի մասին, անվերջ, անվերջ...

Շատ դուր եկավ ինձ Բինեի² խոսքը, թե սերը — քաղց է: Բայց որքան դուր եկավ, այնքան էլ ծանոթ թվաց: Չէ որ մենք էլ ենք ասում, թե կշտացանք — կարոտը, սիրո, կրթի հագուրդն առնելու մտքով — նրանից կշտացա, ասում ենք, կամ թե՛ կլինի՞ մի նրանից կշտանամ:

Ասում ես կարելի էր քաղցը գործածել: Իհարկե, կարելի է, մինչև անգամ շատ լավ է, բայց միայն այն դեպքում, երբ խոսքը կրթի, տոփական սիրո մասին է: Հենց, կարծեմ, այդ հողվածի միտքն էլ այսպես է, ինչպես երևում է քո նամակից:

Ինչևէ, քո նոր ոճով խոսելով, դու գիտես, որ ես այժմ քաղցած եմ, բայց մի հանգամանք, որ ես այժմ դժվարանում եմ մի բառով ասելու, փշացնում է իմ ախորժակը, և ես շատ կափասում, եթե բոլորովին կասվի:

Այստեղ գտնելու է դժբախտ Համլետի հետ — ո՞վ մարգարե հոգիս...

Մեր կանանցից ժարդ չի դուրս գալ և մենք միշտ չկերած կկշտանանք, ախորժակդ այնպես կփակեն, որ երբեք քաղց չզգաս, գնաս ու որձկալով ման գաս: Բայց ախար մարդ միշտ ունի մի քնքուշ էակի հետ գեղեցիկ — գեղարվեստական կապերով կապված լինելու կարոտը, երազային կյանքով երբեմն ապրելու տենչը: Եվ անշուշտ դու համաձայն ես, որ այս

ավելի օրինավոր և ընդունելի կապ է, քան թեկուզ վանքի եկեղեցում կատարված և մետրիքական մատյան մուծած ամուսնական կապը:

Այս էլ կյանքի ամենախախտ կողմերից մինն է. մարդիկ առհասարակ դժգոհ են. կնշանակի այսպես շպիտի լինի: Ուրիշ տեսակ պետք է կարգադրվի, — թե չէ բոլորս անբախտ ենք, և՛ ամուսնացածներ, և՛ ամուրիներ:

Երևի բոլոր անասուններն այդ կողմից մեզնից ավելի են բախտավոր: Նրանք և ազատ են, և... ժուժկալ: Մենք կարծում ենք ազատությունը կվնասի: Մենք միշտ վախենում ենք ազատությունից. այնինչ բոլորս կուղենայինք, որ ազատ լինեիրք, նույնիսկ... պ. Հակոբը:

Ասում ես ոտանավորս շատ է հուսահատական, ընթերցողը կասի — ինձ ի՞նչ...

Բայց — ինձ ի՞նչ: Տեսնում ես, հենց նույն օրերում դու իշխանուհուն գրում ես, թե՛ ես ապրում եմ առանց հավատի, չգիտեմ ընչի հավատամ և այլն:

Այսպես, չգիտենք ընչի հավատանք, ինչ սիրենք, ինչ ցանկանանք — տարուբերվում ենք մի մեծ վարանքի մեջ, բարոյական մի անեղբ արեկոծության մեջ, նավահանգիստ չենք հասնում, փարոս չենք տեսնում, և մեր բոլոր մխիթարությունն այն է, որ ազնիվ են մեր տանջանքները:

Վարանք ես ուզում — ահա քեզ: Այժմ ես տառապում եմ մի մեծ տարակուսանքով — արդյոք ես բանաստե՞ղծ եմ, թե՞ չէ: Մտածում եմ ու գնում, գնում հասնում մինչև կասկածի ամենամութ անդունդները, այնտեղ կորցնում հավատս, հանգցրնում հույսս... Խղճահարվում եմ մինչև անգամ, որ օգնում են ինձ իբրև բանաստեղծի, ինձ թվում է, որ ես խաբված եմ, ուրիշներին էլ խաբում եմ, թե ես բանաստեղծ եմ... Ու նորից վերադառնում եմ, թե բան եմ գրում...

Ա՛յ քեզ սերունդ:

Չէ, սիրելիս, չեն ասիլ ինձ ինչ. բոլորն այս տեսակ մարդիկ են — կամ գոնե շատերը: Տխուր, սաստիկ տխուր մարդիկ ենք, թեև քիչ են խոր զգացողները:

Աղայանցն եկավ, երևի կպատմի ինձանից. մի քիչ քեֆս լավ չի, ինչպես դու էլ նկատում ես: Դրա համար էլ Շուշանին էլ նամակ չգրեցի, տեսա ուրախ նամակ չի դուրս գալիս:

1 Վարդագարյան Փիլիպոս (1858—1935) — գրական-հասարակական գործիչ, Թումանյանի մտերիմներից և հովանավորներից մեկը:

2 Իրեն Ալֆրեդ (1857—1911) — ֆրանսիացի հոգեբան-ֆիզիոլոգ:

Չես գրում, թե ինչպես էին տանըցիք, երբ են գալիս: Ծս էլ այս երկու օրը կգամ:

Այժմ գնում եմ մի հեքիաթ ասողի մոտ: Մենակ եմ մնա-
ցել: Այստեղ ամեն դիշեր տուն են կտրում:

Մարիա Մարկովնան երևի եկած կլինի, Դիլիշանից մարդ
եկավ, ասում են այնտեղ ցուրտ է: Գրում է, որ նոր ծրագիր-
ներ է կազմել: Տեր աստված: Ծս կարծում եմ այս ձմեռ նոր
բաներ ենք տեսնելու. նա կանի, ես հավատում եմ: Զարմա-
նալի կին է: Ափսոս նրան լավ չեն ճանաչում առհասարակ:
Է՛հ, վերջումը կճանաչեն. միշտ վերջումը...

Ք՞ Օհաննես

ՄԱՐԻԱ ՔՈՒՄԱՆՅԱՆԻՆ

Արասրուման — Թիֆլիս

1902 թ. սեպտեմբերի 30

Աիրելի Մարիա Մարկովնա.

Նամախիցս ինչպես նկատել եք, տրամադրությունս զվարթ
է և ես առողջ: Այժմ հրաշալի է Աբաս-Քումանում. անկա-
րելի է այստեղ ուրիշ տրամադրություն ունենալ: Ծս ամառն
էլ եմ եղել այստեղ, բայց աշունն ուրիշ է: Ամբողջ օրն գրոս-
նում եմ. թաղվում եմ անտառների խորքերում, աշնան այն-
քան անուշ ու տխուր լուսնային մեջ, լսում եմ միայն թափվող
դալուկ տերևների վերջին կարճատև շունչները և թռչունների
հրաժեշտի սրտաճմլիկ ծվլոցը, որ դեղնած ճյուղերի մեջ
իզուր գարուն են որոնում ու... ծվլում, ով գիտի ի՞նչ ափ-
սոսանքներ, ի՞նչ հիշողություններ, ու արևի — վերջալույսի
շողերի տակ մտածում եմ, որ վերջն էլ, մահն էլ կարող է
սիրուն լինել, ինչպես աշունն այս հովիտում:

Բժիշկը, ողորմի իրեն հորը, պատվիրեց որ քիչ պարա-
պեմ, по чайной ложке, ես էլ պարապում եմ, բայց քիչ
Զարմանալի է, ինչպես մարդիկ հաճախ իրենց ուզածն են
գտնում: Որտեղից գիտե՞ր այս օրհնված բժիշկը, որ ես այն-
քան սիրում եմ ծուլանալ: Ու այսպես, դեռ ծուլանում եմ
բնության ծոցում, ինչպես մի երեխա, որ նիրհում է մոր զրը-
կում, ու երազներ եմ տեսնում: Այս երազներից չեմ խոսում,

20/12. 1898. Քուման

Աիրելի
Մարիա Մարկովնա

Այժմ գնում եմ մի հեքիաթ ասողի մոտ: Մենակ եմ մնա-
ցել: Այստեղ ամեն դիշեր տուն են կտրում:

Մարիա Մարկովնան երևի եկած կլինի, Դիլիշանից մարդ
եկավ, ասում են այնտեղ ցուրտ է: Գրում է, որ նոր ծրագիր-
ներ է կազմել: Տեր աստված: Ծս կարծում եմ այս ձմեռ նոր
բաներ ենք տեսնելու. նա կանի, ես հավատում եմ: Զարմա-
նալի կին է: Ափսոս նրան լավ չեն ճանաչում առհասարակ:
Է՛հ, վերջումը կճանաչեն. միշտ վերջումը...

1902 թ. հոկտեմբերի 27

Միրելի Առաքել.

թե չէ շատ կխոսեմ: Ավելի հեշտ է իրական աշխարհից խոսենք:

Ասում եք գնում եք էջմիածին, Անի: Որքան կուզենայի Ձեզ հետ լինել, բայց ոչ թե ես, երևի նամակս էլ չի հասնիլ Ձեզ, եթե ճիշտ որ 1-ին եք դուրս գալու:

Ես սրտանց հաջողություն եմ մաղթում Ձեր սիրողների խմբին: Ես աներկբա եմ, որ դա կտա իրեն օգուտը, և այդ խումբը շնորհքներ երևան կհանի մշտական բեմի համար: Ինչպես որ արդեն մի շնորհք առաջ է բերել, և երևի այդ ամենազգայուն և ամենից շատ վտազող շնորհքն է, որ գործից առաջ է դուրս եկել. խոսքս մեր նոր դրամատուրգիայի մասին է: Գոնե չեք գրում, թե ինչ է գրել: Բայց, ասում եք, այն էլ չի տալիս, որ սիրողները ներկայացնեն, ուզում է անպատճառ դերասանները խաղան, որ չփչացնեն: Իսկի այն չի մտածում, որ կարող է իրեն վողկիլը նրանց փչացնել: Այս իհարկե Ձեր ականջումն եմ ասում, թե չէ այդ սկսնակ գրողները շատ դուրազազաց ու պատվասեր են լինում¹:

Ինչ վերաբերում է իմ գրվածքների գործին, այդ մասին Ֆիլիպին էլ եմ գրել: Սպասեցեք մի առժամանակ, որ մի լավ հավաքեմ, հաշվեմ ու այնպես Ձեզ տեղեկություն տամ: Ֆիլիպի նամակից երևում էր, որ նա քանակի համար էլ է հոգ տանում: Ես կարծում եմ ինձ հետ կհամաձայնեք Դուք, որ, մանավանդ գեղարվեստական գործի մեջ, որքան կարելի է պետք է ընտիրը, լավը տալ, քանակը փոխված կլինի արդեն դրանից: Նա առանձին նշանակություն չպետք է ունենա:

Սակայն այս մասին դարձյալ գրադրություն կունենանք, անշուշտ կգրեք Ձեր կարծիքները, կգանք մի եզրակացություն: Նույնպես բաժանորդագրության մասին:

Առայժմ Ձեզ բարի ճանապարհ եմ մաղթում ու հաջող վերադարձ. իմ կողմից էլ խոնարհ ողջույն Հայրիկի², հիացման մի հայացք վեհափառ Արարատին, մի խոր հառաչանք Անի քաղաքին և Ձեզ կարոտալի բարևներ:

Միշտ Ձեր Հ. Թումանյանց

¹ Խոսքը բժ. Ար. Չարգարյանի մասին է, որը Ազուլիսի (զոկային) բարբառով մի քանի պիես է գրել:

² Ամենայն Հայոց Կաթողիկոս Խրիմյան Հայրիկը:

Քո այն հարցին, թե ինչ բանաստեղծներ են ինձ վրա ազդեցություն արել և հատկապես իմ որ գործի վրա, ես, որքան հիշում եմ, պատասխանել եմ, որ շատ ուշ եմ ծանոթացել բանաստեղծների հետ և չեմ խոստովանել ոչ մեկի ազդեցությունը:

Հիրավի, ամաշելով, բայց ևս առավել ցավելով պետք է ասեմ, որ մինչև այսօր էլ ես ամբողջովին չեմ կարդացած նույնիսկ ուսու նշանավոր բանաստեղծների գործերը: Իմ մոտիկ ծանոթները այս վերագրում են իմ հոշակավոր ծուլությանը, բայց ես վերագրում եմ ավելի ուրիշ հանգամանքների, և որքան էլ սա ծիծաղելի համարվի ինձ ճանաչողների համար — ես ինձ ծուլ չեմ համարում: Սակայն խոսքը այս մասին չի:

Այսպես հիմնովին ծանոթ չլինելով ոչ մեկի հետ, մանավանդ առաջին շրջանում, և գիտակցաբար նմանած ու հետեված չլինելով ոչ մի բանաստեղծի, հանգիստ խղճով էլ քեզ գրեցի, որ ազդված չեմ ոչ մեկից:

Բայց քո նամակից հետո այդպիսի նամակ ստացա և Յուրի Վեսելովսկուց, սկսեցի լուրջ մտածել այդ մասին և գտա, որ սխալ է քեզ տված պատասխանս, ես անգիտակցաբար ենթարկված եմ եղել ազդեցությունների, որոնց մասին մինչև օրս հաշիվ չեմ տվել ինձ: Մեր բանաստեղծների մասին արդեն գրել եմ. աննշան և կարճատև է եղել նրանց ազդեցությունն ինձ վրա:

Ռուս բանաստեղծներից ամենից շատ ինձ վրա ազդել է Լերմոնտովը, ապա Պուշկինը, և, [այժմ] ես կարծում եմ, նրանց ազդեցությունն է եղել երևի, որ գրել եմ ես այն

¹ Լեո (Առաքել Բարխանյան, 1860—1932) — պատմաբան, հրապարակախոս, գրող:

պոեմաները, ուր երգված են մեր լեռնական ժողովրդի կյանքը, սովորություններն ու բնությունը: Դրանցից հետո ծանոթացել ու սիրել եմ Բաշրոն, Գյոթե, Շեքսպիր: Սրանք կարծում եմ — անպայման ազդել են իմ գրվածքների վրա, բայց այնպիսի գրվածքների, որ տակավին չեն տպված [մինչև անգամ չեն վերջացած], և որոնց մասին հաշիվ չեմ կարող տալ: Սակայն զգում եմ նրանց անմերժելի ազդեցությունը: Շեքսպիրը միշտ մնում է իմ ամենասիրելի բանաստեղծը: Եվ թեև դրամա չեմ գրել դեռ, բայց դրաման բանաստեղծության մեջ իմ ամենասիրած ձևն է, ու ինձ թվում է, թե դրամատուրգի կոչումն ունիմ ես: Այս պատրանք է գուցե: Շեքսպիրն է ինձ այսպես կախարհել:

Մի երկու խոսք ազգեցությունների մասին: Ես որ ասում եմ ազգված եմ (անշուշտ, կարծեմ և այլն, նրա համար եմ այսպես ասում, որ այդ) ազգեցությունները ես ոչ թե իմ գործերի, տղերի մեջ եմ նկատում, այլ որովհետև զգում եմ իմ հոգու, իմ բարոյական ամբողջության վրա, նրա համար է, որ ասում եմ երեի, անշուշտ, կարծեմ, և այլն:

ՄՐԱՅ ՇԱՀԱԳԻՅԻՆ

Արաս-Քուման — Մոսկվա

1902 թ. դեկտեմբերի 4

Ազնիվ բարեկամ պ. Ս. Շահագիյ.

Ստացա Ձեր թանկագին նամակն Աբովյան — Նազարյան նպաստի շեկի հետ:

Էիասիրտ շնորհակալ եմ Ձեր սրտացավ վերաբերմունքի համար: Ինձ համար միշտ քաղցր է Ձեր բարեկամությունը ու միշտ բարձր Ձեր խրախուսանքը:

Ինչպես արդեն գիտեք — ես հիվանդ եմ, և երրորդ ամիսն է ապրում եմ Արաս-Քումանում: Այնինչ սիրտս քաշում է ուրիշ կողմ: Երկար ժամանակ է չեմ եղած իմ հայրենիքում: Սաստիկ ցանկանում եմ զնալ, միառժամանակ շնչել ման-

կությանս սիրած վայրերի օդը, ապրել մեր ժողովրդի մեջ:

Եվ առհասարակ ուզում եմ մի անցնել մեր գավառները, բայց հիվանդությունս կամ ընտանեկան հանգամանքները խանգարում են ու միշտ հետաձգում եմ:

Այսպիսով հեռու ենք մնում ու խորթանում մեր երկրին, մեր ժողովրդին, նրա սովորություններին, նրա լեզվին:

Իմ կարծիքով այս հանգամանքը եղել է մեր բանաստեղծների ամենամեծ դժբախտությունը, մանավանդ մեր նախորդների — Ձեր ու հանգուցյալ Գամառ Քաթիպայի:

Մենակ տաղանդն ի՞նչ անի. հարկավոր են բարեհաջող պայմաններ:

Այս օրերս դեպք եղավ այդ մասին խոսելու մի նամակում:

Հիրավի, ճակատագրի ինչ տարօրինակ խաղ. հայոց բանաստեղծներն ընկնում են հյուսիս ու Կովկասը կարոտելով երգում են օտար աղջիկն ու օտար վայրերը, իսկ ուս բանաստեղծներին բախտը հալածում է Կովկաս, և այս հալածականները երգում են Կովկասի սարերն ու ժողովուրդը:

Գալով իմ գրքի տպագրությանը, պետք է ասեմ, որ իշխանուհին և նրա հետ իմ մի երկու մոտիկ բարեկամները իդուր են գործը այդքան մեծացրել: Ես նրանց խնդրել էի, որ այդ խնդիրը առայժմ թողնեն: Մեկ որ ձեռքիս գրվածքներ ունիմ, որ դեռ չեն վերջացած¹, երկրորդ՝ ինքնըստինքյան այնքան մեծ բան չի լինելու, որ արժենար դիմումներ անել տպագրության համար. քանզի, նրանց հակառակ, ես չեմ ուզում վերատպել իմ երախայրիքները: — պատանեկան անփորձ գործեր են, և ավելի շատ պակասություններ ունին — բան արժանիքների:

Մի բանի օրից հետո վերադառնալու եմ Թիֆլիս: Եթե դեպք լինի ինձ նամակ գրելու, խնդրում եմ ղրկեք այս հասցեով. Тифлис Бедуговск. 50. Խմբագրատանը շատ անգամ մտաոցմամբ նամակը մնում է երկար ժամանակով ընկած:

Ձեզ անձնվեր՝ Հովհաննես Թումանյան

¹ Շահագիյ Մմբատ (1841—1907) — բանաստեղծ:

¹ 1902-ը Քումանյանի ստեղծագործական կյանքի ամենից բախտավոր տարին է, երբ նա գրել է «Սասունցի Գավիթը», «Թմկաբերդի առումը», «Փարվանան», հիմնավորապես մշակել է «Անուշը» և ուրիշ գրվածքներ:

1904 թ. մայիսի 4

«Ս. էջմիածինը» կարգա ոչ թե սուրբ էջմիածին,
այլ սոսկալի էջմիածին:

Այսպես. հեռացա Քիֆլիսից, ուր անշուշտ մի լացող կա
ինձ համար թե՛ ափսոս, էլ ով պետք է... իմ տեսրակներն
ուղղի՛:

է՛հ, այս էլ մխիթարանք է, միայն թե դարդ անող լինի
մարդու ետևից:

Շատ ժամանակ էր չէի անցել այս ճանապարհով, իմ
հայրենիքի սիրուն ձորերով: Այդ ձորերը ինձ համար լիքն են
ուրախ ու տխուր հիշատակներով, և ես չգիտեմ դրանցից որն
է ավելի թանկ ու սիրելի իմ սրտին: Բայց երևակայիր. շատ
խոշոր դեպքեր ու հիշատակներ թող արած, ես քեզ մի դա-
տարկ, շնչին բանի մասին եմ գրելու, փոքրիկ բան, որ շատ
ազդեց իմ սրտին: Այդ ձորերում, մի ժայռի, բարձր ժայռի
գլխի կենտ ու մենակ մի ծառ կար կանգնած: Տարիներ առաջ,
երբոր ես կարողում էի, մի անգամ, երբ հորս հետ այդ ձո-
րերով Քիֆլիս էինք գալիս, հայրս ասավ, Օհանես, մի նայիր
էն ծառին, կարծես թե օքմին լինի էն ժայռի գլխին կանգ-
նած: Ես քեզ պետք է ասեմ, որ հորս շատ էի սիրում: Երբ
որ հայրս մեռավ, ամեն անգամ այդ ձորով անցնելիս ես
տեսնում էի այն մենակ ծառը միշտ ժայռի գլխին կանգնած
և կարծես թե հորս ձայնն էլ ապրում էր այն ձորում ու ամեն
անգամ կանչում — նայիր, Օհանես, էն ծառին նայիր, կար-
ծես թե մենակ օքմին լինի ժայռի գլխին կանգնած: Այժմ
անցնելիս նայեցի և... այլևս չկար էն ծառը ու հետն էլ չկար
այն հրաշալի պատրանքը — իմ հոր ձայնը:

Երկուսն էլ կորել էին:

Մի անգամ պետք է տեսնես այդ ձորերը, բայց մանա-
վանդ գարնանը:

1 Խանդավորյաններին այցելելիս թումանյանն օգնել է օրիորդին ուղ-
ղելու աշակերտների տները:

Վազոնում հետո էր տիկ. Մայսուրյանը, դերասանուհին,
լոռու ձորերի ու Դեբեդի գեղեցիկ, քմահաճո խաղերից սքան-
չացած անդադար կրկնում էր — «վա՛յ, մեռա... ես մեռա...»
և չգիտեմ ինչպես, տիկինը այդ գեղեցկությունների բուռն
տպավորություն տակ ուխտեց սիրել, հավիտյանս սիրել
(իհարկե, ոչ թե ինձ) և գտավ, որ շարժե մի ըստ անգամ
ապրել առանց սիրելու: Ես լուռ էի:

— Դուք բանաստեղծ մարդ եք, ի՞նչու Դուք էլ չեք ուխ-
տում, դիմեց ինձ:

— Բանաստեղծներն ավելի լավ են համարում սիրել, քան
թե ուխտել, պատասխանեցի ես ու ծիծաղեցի:

Արշալույսին երևացին Անիի ավերակները, ապա թե ծա-
վալվեց Արարատյան դաշտը՝ մի կողմում սրբազան Մասիսը
վեհափառ համարձակությամբ մտած երկնքի ծոցը, մյուս
կողմը չքնաղ Արագածը իր լայն փեշերը փռած ու բազմած
լեն ու բոլ:

Բիրլիական, խորհրդավոր ու համարձակ են Արարատյան
աշխարհի գեղեցկությունները:

Շատ գեղեցիկ է տեսարանը և Երևանի առաջնորդարանի
պատշգամբից: Ես շարունակ այնտեղից հիանում էի ու մտո-
րում:

Նենց հասա Երևան, իջա թե չէ, պատշգամբում նստե-
ցինք — աշուղն էլ մեր ետևից մտավ:

Ես չեմ մոռանալ այդ ըստին: Ոտներիս տակ, ներքև,
պղտոր, մռնչալով, ոլորապտույտ անցնում է պատմական
Հրազդանը (Աբովյանի սիրած Ջանգին), հիշում եմ Աբովյանի՝
Ջանգլին նվիրված կրակոտ տողերը, հիշում եմ Ալիշանի

«Հրազդան, գետակդ իմ հայրենի,
Հրազդան, ջրիկդ իմ անուշիկ...»:

Նայում եմ Արարատյան դաշտին, մտքովս անց են կենում
մեր պատմության փառավոր շրջանները, կենդանանում են
հոյակապ հերոսները, որ ապրել ու թաղվել են այդ դաշտում,
սրտիս խոսում են սքանչելի լեզուները, որ դեռ ապրում են
այստեղ: Վերջապես դեմոկրեմս ամպերից բարձր փայլատա-
կում է Մասիսը, ծերունու քմահաճույթներով մին մթնում,
մռայլում, մին բացվում ու ժպտում, բայց միշտ սիրուն,

միշտ խորհրդավոր, — այնինչ աշուզը, հայոց կույր աշուզը երգում է.

«Գողգոթայից բարձր է Սասունի սարը,
Գողգոթայից դժար է Սասունի սարը,
Իմ խաչն առած ես բարձրանում եմ
Սասունի սարը...»:

Նույն օրն ևեթ ինձ ման ածին ու ցույց տվին Արևածախի նշանավոր հիշատակարանները: Տեսա Սարգսրի պալատը, մի սքանչելի հնություն, որ արդեն կորչելու, քանդվելու վրա է: Ռուանները չեն պահում: Տեսա հարեմը, այսինքն հարեմի փլատակ, փոքրիկ, կամարակապ սենյակները, ուր այնքան գեղեցիկահիներ հառաչել են ու անհիճել, տանջվել են ու թաղվել այդ լայնարձակ դժոխքում, որ իր մուկ ու տարտարոսական շինություններով ահագին տարածություն է եղել բրոնզի: Տեսնում ես, ինչ լավ ժամանակ ես ծնվել դու:

Այդ առաջին օրը: Մնացածը հետո, թե ինչեր եղան: Ամեն անգամ, երբ ընկնում եմ մեր գավառները, խիղճս ինձ տանջում է, որ տեսնում եմ ինչպես են վերաբերվում, ընչոր են սպասում, այն ինչ մենք...

Նոր Հայրենիք մտա էի: Հիվանդ է: Վաղը դնում ենք խմբով Արաբսը տեսնելու: Գրիշս մի քիչ լավ չի գրում: Բարեններ մայրիկին ու Վանյային և ձեզ:

ՓԻԼՊՈՍ ՎԱՐԿԱՋԱՐՅԱՆԸ

Շ ա լ ա վ ե ր — Թ Ի Գ Ի Թ

1904 թ. օգոստոսի 18

Սիրելի Տիլիպ.

Ստացա նամակդ: Պատասխանում եմ, բայց ոչ այնպես, ինչպես դու էիր պահանջել — գեներալների օրինակին — այն՝ կամ ո՛չ:

Այոն ու ոչը գեներալները կարող են պահանջել. նրանց

զինվորական աշխարհում արգելված է դատել: Դրա համար էլ նրանք հանդիսանում են բանական մարդու ստորացումը: Նրանք դեմ են դատողությանը, որովհետև դատողությունը դեմ է նրանց. իսկ դու ընչից ես վախենում: Ասում ես՝ մենք կշարշարվենք իրար նամակ գրելով ու կարգալով: Իսկ ես քեզ կասեմ. ասոված տա, որ շարշարվելով կարողանանք ճշմարտությունը գտնել: Դու զբաղված ես քննադատի գործով. քննիր, շատ քննիր, որ կարողանաս դատել: Եթե իմ կարծիքն էլ պետք է քեզ, թող ասեմ. այոն ու ոչը քեզ բան չեն ասիլ:

Քննադատը՝ թարգմանիչ է: Նա պետք է թարգմանի բանաստեղծին, և թարգմանի ոչ թե նրա բառերը, այլ նրա սիրտը: Ասածու նման սրտադեպ լինի ու խորաթափանց, գտնի ամեն բանի աղբյուրն ու արմատը, որ կարողանա ճշմարիտ գնալ ու արդար դատել: Այն ժամ կպարզվեն մթությունները, հասկանալի ու բնական կերևան ըստ երևույթին հակասությունները և քառսի մեջ կհայտնվի ներդաշնակությունը — եթե կա: Ամենից առաջ հարկավոր է, որ մեկը բանաստեղծ լինի, բառի լուրջ իմաստով: Նրանից հետո պետք է նրան հասկանալ: Եվ այս դժվար բան է: Նա ինքն էլ հաճախ իրեն չի հասկանում, կարող է սխալ մեկնություն տալ իր այս կամ այն երգին ու երկին, ճիշտ այնպես, ինչպես մայրը կարող է գլխի շքնկնել, թե ինչ շնորհք ունի այն որդին, որ ինքն է ծնել:

Բայց նա, որ կոչված է քննելու և դատելու ուրիշների ծնունդները, նա գլխի պետք է ընկնի: Խորիմաստ պետք է լինի ու ներսը նայի: Թե չէ հակասություն կգտնի, երբ բանաստեղծն ասում է.

«... Սակայն ինչու եմ ես հեռացել անտառն ու անապատը: Ո՞չ ապաքին նրա համար, որ շափազանց շատ սիրեցի մարդկանց»: (Նիցշե — Զրադաշտը):

Ասում է՝ փախել եմ ձեզանից, որովհետև շատ եմ սիրել ձեզ:

Նամակիդ մեջ բերած 9 տողը՝ — ելած կյանքի ամեն ճամփից, և այլն, գտել ես շինծու, բայրոնա-լերմոնտովյան:

¹ Ամենայն Հայոց Կաթողիկոս Խրիմյան Հայրիկ:

¹ «Դու քո ճամփեն գնա, բույրիկ» բանաստեղծությունից:

Ասում ես նրանք հակասում են իմ շատ երգերին ու զգացմունքներին և ուրեմն ճիշտ չեն: Նրանց հակադրել ես ուրիշ տողեր, սիրային երգեր, Լոռին ու ավանդությունները: Առաջին սխալը այն է, որ կարծում ես տողերն են բայրոնա-լեր-մոնտովյան, ոչ թե ես: Երկրորդ սխալը էլ այն է, որ կարծում ես հակասություն կա մեջտեղը:

Ծն նոր, քո դրոստով եմ ուշադրություն դարձնում դրանց վրա, բայց համոզված եմ ասում, որովհետև անկեղծ են ասված, այնպես, ինչպես զգացել եմ. իսկ ես գիտեմ, որ եթե այդպես եմ զգացել՝ արդեն ճիշտ է, բնական է, իմաստ ունի, թեկուզ ինքս էլ չկարողանամ բացատրել:

Սակայն հեշտ բացատրելու բաներ են դրանք: Կարծես թ իմ ոտանավորների եզրակացությունները կամ ամփոփումները հավաքված են այդ ոտանավորների տողերի մեջ: Անշուշտ, քննադատը մի օր կանգ կառնի դրանց վրա: Եթե այսօր կանգ չեն առնում, նրանից է, որ քննադատներ չեն: Պատիվ քեզ, որ առաջինը մատդ դրի դրանց վրա ու շինեցիր ուշադրության առարկա, թեկուզ մեր մեջ:

Ճիշտ՝ որ ելած կյանքի ամեն ճամփից: Ոչ տերտեր եմ, ոչ վաճառական, ոչ վարժապետ, ոչ արհեստավոր, ոչ զինվորական, ոչ երկրագործ, ոչ նույնիսկ ավազակ. չէ որ այն էլ կյանքի ճամփաներից միսն է, մի խոսքով, ինչպես միշտ նկատել են, երբեք չեմ եղել կյանքի մարդ, այլ՝

Կարոտներով անմեկին,
Ազա՛հ, անվերջ ու անհանգիստ
Թափառում է իմ հոգին...
... մանուկ օրերից
... դեպի մի անհայտ երկիր:

Ելած կյանքի ամեն ճամփից-ը դու շփոթել ես «Աստծու ճամփից ելած» դարձվածքի հետ և ընկել ես սխալանքի մեջ: Այստեղից էլ սխալ առաջ գալով՝ բառի գոհհիկ մտքովն ես հասկացել «եհնթ, խելագար գնում է նա» (հոգին): Մինչդեռ եթե առաջինը գլխի ընկնելի, երկրորդն էլ պարզ էր:

«Ես ձեզ գերմարդն եմ քարոզում — նա խենթություն է», ասում է Նիցշեն:

Բայց ես չեմ ուզում քո բոլոր հողվածներին ընդարձակ

պատասխանել, որովհետև այդ կլի՛նի արդեն շատ հակառակ քո նամակի պատասխանին:

Չարմանալին այն է, որ դու հասկացել ես այդ ոտանավորները և չես հասկանում, որ հասկացել ես:

Ասում ես՝ անկարելի է, որ մարդ այսպես լինի, այսպես, և այսպես (9 պնդումները): Այո՛, այո՛, անկարելի է: Եթե կարելի լիներ, արդեն կլիներ մի նորմալ դրություն, սովորական Լրևույթ: Անկարելի է, և հենց այդ է դրաման: Օրինակով պարզենք: Ասում ես՝ անկարելի է կտրված լինել կյանքի ամեն կապերից: Իհարկե, անկարելի է: Բայց (լավ լսիր) դու ելած ես կյանքի ամեն ճամփաներից, և այն բոլոր մարդիկ, որ այդ ճամփաներով են գնում, չեն կարող քեզ հետ լինել, այլ զարմանում են քեզ վրա, հանդիմանում են քեզ, կոպում են, վշտացնում են, հալածում են, մի խոսքով պոետն ու մուզան, բայց ոչ իմ դրածը, այլ իմ ապրածը, այսինքն ավելի մեծ չափով: Դու էլ զարմանում ու զայրանում ես նրանց վրա: Եվ այսպես ամեն օր, ամեն դեպքում: Կապերն այնքան են թուլանում ու կտրվում, որ մի օր էլ մի Շոպենհաուեր՝ գալիս է մեջտեղը կանգնում ու հայտարարում — թե՛ մարդը մարդուց ավելի է տարբերվում, քան թե մարդը՝ անասունից:

Իսկ այն, որ դու առարկում ես, թե աշխարհում այս կա, այն կա, կամ սա ու նա կան, որոնց սիրում ես, դրանով էլ հենց ապացուցանում ես եղածի խեղճությունը, դրությունը թշվառությունը: Բանաստեղծը նրանով է բանաստեղծ, որ ապրում է ընդհանուրով, շատերից է խոսում, ոչ թե մի քանիսից: Մի քանիսն ինչ են որ, թեկուզ և լինեն: Բայց մի քանիսի մեջ էլ որ խոր թափանցես, գուցե այն էլ քաջանես ու փշացնես:

Ուրեմն կտրված կյանքի ամեն կապերից...

Բայց և, ինչպես դու ճշմարիտ բացականչում ես, անկարելի է այդպես: Այո՛, ճշմարիտ է.

Ծն էլ վիրավոր զընում եմ փախած՝
Անհայտ օրերի խավարի ընդդեմ,
Ամենքից զըզված, ամենքին թողած,
Քեզ էլ կթողնեմ:

Քե՛զ, որ սիրել եմ, Քե՛զ, որ
... հանդիպած իմ դժվար ճամփում...
Ինձ չըհասկացար, ընկեր շեղար, դե,
Ե՛րու քո ճամփին գնա՛, քույրի՛կ...»:

Պրծանք: Մրանից հետո կարող են պատահել երջանիկ վայրկյաններ, սիրելի դեմքեր, լավ ընկերներ, բայց ընդհանուր ֆոնը չեն փոխում:

Նա, ով որ կյանքի համը լավ է տեսել և նուրբ ճաշակ ունի, նա խորն է զգում դառնությունը և այդ՝ միշտ առաջը դրած զահրումարից կրկին ու կրկին ճաշակելը տանջանք է արդեն, իսկ լավագույն հաճույքների հույսերը հեռանում են, գնում են դեպի ապագան, երջյզ են դառնում կամ մեռնում:

Այս էլ կարճ կտրենք, որ Քեզ չձանձրացնեմ, կամ աչքերիդ չվնասեմ:

Զարգացման մասին խոսելիս դու զուր ես հիշատակում ուսումնարանը: Իմ մտքովն ուսումնարան չի անցել: Իսկ թե ես ինչ եմ ուզում, կամ քո խոսքով ասենք, ինչն է իմ ձեռքը կապում, այդ մասին էլ չեմ ուզում խոսել, որովհետև այդ հարցը ինձ հոգնեցրել է, և ընդմիշտ հոգնեցրել: Իմ լավագույն ուժերն ու տարիներն անցել են արդեն, իսկ ինչ որ առաջս կա, ով՞ գիտի այն էլ ինչ է լինելու:

Լավ ես ասում՝ թե կյանքը — կյանք է: Բայց մի՛ մոռանար, որ մարդն էլ մարդ է: Մարդ հոգնում է, փոխվում է, կոտրվում է, և մինչև անգամ մեռնում. այնուհետև դարձյալ կյանքը — կյանք է, բայց մարդը — էլ որտեղ է...

Զէ, քիչ մխիթարանք կա դրա մեջ:

Քո Օհանես

ԱՐԻՍՏԱՆԱԾԱՐԿԱՐԳԱՆԻՑ

Թիֆլիս — Եվրոպա

1906 թ. Ըարտի 9

Սիրելի Ռուստեմ.

Մի թե երկու ամիս է, ինչ գնացել ես և երևի դու այդպես էլ ժամանակը հաշվում ես — մի կամ երկու ամիս...

1 Զարգայան Արիստակես (Ռուստեմ, 1864—1935) — Քումանյանի մտերիմներից, բժիշկ, մշակութային գործիչ:

Բայց մենք այդ մի երկու ամսում դարեր ապրեցինք, Չինգիզխանի ու Լենկթեմուրի դարերը: Նրանց տնօրինությունները տեսանք XX դարում և օգնություն խնդրեցինք... տեղեֆոնով ու հեռագրով...

Քանձր, բարբարոսական խավար և լիրք մեքենայություններ — և մենք, ինչպես աստվածային մի ծանր պատիժ ստիպված ենք տանելու, համբուրելու, եղբայր անվանելու:

Օ՛Ֆ, Ռուստեմ, ես միանգամայն խորտակված եմ: Այս մասին մտածելիս հոգնում եմ իսկույն: Մեր արյունոտ անցյալը, մեր տանջալի ներկան, մեր մուժ, անլույս ու անհույս ապագան ծանր քարերի նման պառկում են սրտիս: Ափսոսում եմ մեզ:

Բաքվի կոտորածի օրերը, հենց այն սարսափի թարմ ժամանակ Թիֆլիզում ժողովարանում մի ժողով արին, ինձ ու բժ. Մուրադյանին պատգամավոր ղրկեցին էջմիածին, կաթողիկոսին խնդրելու, որ գա: Ինչո՞ւ ծերունուն գտանք անկողնում պառկած: Երբ որ պատմեցի, վրա նստած էր անկողնում, — բավակա՛ն էր... բավակա՛ն էր... բավակա՛ն էր... աղաղակեց ու գլուխը ցած գցեց: Այդ աղաղակը ես չեմ մոռանում: Այդ կարծես մեր ամբողջ ազգի, տանջված, ջարդված, հոգնած, ուժասպառ եղած ազգի աղաղակը լինի — բավակա՛ն էր, բավակա՛ն էր, բավակա՛ն էր...

Այսանոց Թիֆլիզում մեծ հանդեսներ կատարվեցին եղբայրության: Առաջին օրը հայերն ու թուրքերը համբուրվեցին ու եղբայրության երգվեցին, երկրորդ օրը վրացիներն եկան: Թիֆլիզում շտեմնված հանդեսներ էին: Կենտրոնը, իհարկե, կաթողիկոսն էր: Այդ հանդեսներում նաղդ ամենալավ բանը այն էր, որ պոլիցիային խնդրած էր, որ չերևա հայոց վանքի կողմերում. և երկու օրն էլ այդ բազմահազար ժողովուրդը հրաշալի պահեց իրեն, ոչ մի անկարգություն չեղավ: Շատ ճանր խոսվեցան. հիշատակ մնաց այդ օրվանից Մուֆթու ճառը, որով պնդում էր, թե այդ «շեյթանի» գործն է, ոչ թե թուրքերի: Բայց, խոստովանք լինի, այդ բոլորն ինձ շատ քիչ մխիթարեց: Մարդ երբ որ գիտի ներսը, մեջն ինչ կա, խոսքն ու ցույցն արդեն կորցնում են իրենց արժեքը:

Սրանից հետո վրա հասավ Երևանի արյունալի ընդհա-

1906 թ. մայիսի 30

Ֆիլիպ շան.

րումը — իբր թե թյուրիմացութիւն — և դեռ հուզմունքը չի դադարել շատ տեղերում:

Բազմում թե ինչ էր արել կառավարութիւնը, այդ արդեն գիտես լրագիրներին և ես ոչինչ չեմ էլ ուզում ավելացնել: Քննութիւնն էլ սկսեցին, և քննութիւնն եզրակացութիւնը հայտնեցին սկզբից — թե հայոց կոմիտեներն են մեղավորն ու պատճառը: Թիֆլիզում մինչև անգամ ցենզուրան կանչեց բոլոր իմբագիրներին, հայտնեց թե՛ արդեն երևաց, որ հայոց կոմիտեներն են մեղավոր և առաջարկեց գրել նրանց դեմ: Իհարկե ամբողջ մամուլը մերժեց:

Այժմ սպասում ենք վարանցով Դաշկովին: Բոլոր ազգերը — թուրք, հայ, վրացի պետիցիաներ են պատրաստում ներկայացնելու Մի մազալու բան: Երբ հեռագիր եկավ Դաշկովի հաստատութիւնն համար, այդ օրը կաթողիկոսը ինձ կանչել էր գրույց անելու: Ասում է՝ լսել ես, ան Դաշկովին կուսակալ նշանակեր են: Ասում եմ այո, լսել եմ: Ասում է՝ ան մեզ ինչպես պիտի կառավարե: Ասում եմ ինչու — Ասու է՝ 70 տարեկան մարդ է, ալ ինչ խելք ու եռանդ կունենա կառավարելու, անոր ուղեղը չորցած է հիմա:

Պետք է քեզ ասեմ, որ ինքը 85 տարեկան է:

Ոչինչ չասացի, բայց ծիծաղս եկավ: Ինքն էլ ծիծաղեց ու պապիրոսին զոռ տվավ:

Այս րոպեին, որ նամակս գրում եմ, դուրսը, մեր տան առջև բունթ է աղջկանց III գիմնազիտնում: III գիմնազիտնի տղերքը արդեն երեկվանից забастовка են արել ու այսօր էլ թափել աղջկերանցն են արգելում: Կազակները բռնել են փողոցը: Շարունակութիւնը հետո:

Համբույրներով քո Սեաննես

9 մարտի

Լուր է հասել Թիֆլիզ, որ Բաթում այսօր, 9-ին, խառնակութիւն է լինելու:

Հսպես եղավ:

Բարձրացավ Ռուսաստանի մեծ փոթորիկը և ամեն բան տակն ու վրա արավ: Մենք էլ ընկանք իրարից հեռու, մի տարի է, ավել է թե պակաս, այդ էլ չեմ հիշում — շենք տեսել իրար ու շենք խոսել իրար հետ: Ես շատ եմ կարոտել: Եվ այդ էլ շատ լավ է: Միշտ լավ է, երբոր մարդ գգում է, որ մի թանկ բան ունի — որտեղ ուզում է լինի:

Մի ժամանակ դու նամակներ գրեցիր, ես թափառում էի: Հենց տուն նստեցի — մի քանի անգամ գրեցի, այլևս չպատասխանեցիր — էլ չհասկացա ինչպես եղավ. այնուհետև լռեցի. և սկսվեց այն, ինչ որ ոչ ոք չէր երևակայել:

Դու անշուշտ հիշում ես — հեքիաթների մեջ կա, թե այսինչ մարդը քնեց, մին էլ աչքը բաց արավ — տեսավ շուրջը կանգնած զորքեր սպասում են իր հրամանին և այլն ըստ կարգին — մի խոսքով մարդը հանկարծ թագավոր է դառել:

Այդպես էլ ինձ հետ պատահեց:

Երեխեքս հավաքեցի, գնացի Լոռի: Շատ լավ գիտեի, որ խառնակութիւններ են պատահելու, գիտեի, որ մեր գավառում անիշխանութիւն և ամեն անկարգութիւն կարող է լինել և ես շատ պետք կգամ — բայց պատահածն իմ սպասածից էլ ավելի եղավ:

Մի հեքիաթ, որ դարձավ իրականութիւն և մենք ապրում էինք մերթ լույս աշխարհում, մերթ մութ:

Ես, ինչպես ասի, հանկարծ այդքան մեծ պաշտոնի մեջ հայտնվելով և ձեռքիս ունենալով ուժ — ամեն ջանք շարունակ գործ եմ դրել մեր գավառներում խաղաղութիւնը պահելու և կոտորածների առաջն առնելու: Եվ այսօր ես այնքան գոհ չեմ, որ գրականութիւնն մեջ մի որևէ բան եմ արել, որքան գոհ եմ, որ ակներև կարողացա իրար դեմ կանգնած ժո-

դովորդների սրերը պատյան դնել տալ և շատ ու շատ ան-
մեղների ազատել այս գազանական կոտորածից:

Հիրավի, այսքան տգեղ, այսքան լիրբ, այսքան անիրավ,
հրեշական կոհիվ, ինչ որ թուրք հայկականն է — դժվար թե
եղած լինի: Գուցե նախապատմական շրջաններում, երբոր
մարդիկ իրար ուտում էին:

Մենք այս ցած ու տմարդի կովով միանգամայն դուրս
մնացինք Ռուսաստանի ազատագրական մեծ կովից: Այժմ
մեզ մնում է մի առաքինություն հնարավորությունը — աշ-
խատել վերականգնելու և պահելու խաղաղությունը, շատ
շատովել այդ դժբախտ կովով, շատ շարքարոսանալ:

Մենք ուղղակի վայրենիանում ենք: Առանց էն էլ ինչ
էինք — հիմի էս էլ վրա հասալք:

Ահա շարունակ դրա դեմ եմ ես եղել կանգնած իմ ձիա-
վորների բազմությունը ու իմ սպիտակ դրոշակով: Եվ շատ
եմ գոհ այսօր, որ թեև մեծ դժվարություններով — հաջողել
եմ այն սահմաններում, ուր պատվել եմ:

Հաճախ հիշել եմ քեզ և մոտիկ մի քանի մարդկանց — թե
ինչ կասեիք — ինչպես պիտի ծիծաղեիք — երբ տեսնեիք լեռ-
ներում պատրոնդաշները գցած, գինված ոտից գլուխ, հար-
յուրավոր ձիավորներով ու ճերմակ դրոշակով:

Մի ուրիշ անգամ էլ կգրեմ այդ օրերից: Այժմ մի քանի
օրով եկել եմ Քիֆլիս: Այսօր նորից վերադառնում եմ Լոռի:
Շիրինկինը գրել է, որ ինձ ձերբակալեն: Տեսնենք ինչպես է
վերջանում:

Նորից մթնոլորտը խառնվում է. և ո՞վ գիտի՝ էս կարկուտի
տակից էլ կազատվե՞մ, թե՞ չէ:

Ինձանից ու մերոնցից շերմ համբույրներ ու բարևներ
մայրիկին, Շուշանին, Մարուսյային ու Դավթին, Կլիկին ու
Միլիկին: Գրեցեք, տեսնենք ոնց եք:

Ինչպես են այժմ աչքերդ. — հավատում եմ, որ պետք է
առողջացած գաս: Մեզ էլ այստեղ տեսնես. ազատ քաղաքա-
ցիներ:

Այսօր գալիս է Մարիա Մարկովնան: Ռուստեմն էլ այս-
տեղ չի: Երեկ պ. Հակոբի մոտ էի: Միշտ նույն բարի մարդը:
Ինքը զարմանում է, թե ինչու են ամենքն էլ կատաղել ու իրա-

րով անցել — ամենքն էլ զարմանում են, թե էս մարդը ինչ-
պես է հանգիստ նստած:

Կարոտով ու համբույրներով՝ քո Օհանես

ՓԻԼԻՊՈՍ ՎԱՐԴԱՋԱՐՅԱՆԻՆ

Քիֆլիս — Շվեյցարիա

1908 թ. Ապրիլի 20

Սիրելի Ֆիլիպ.

Հիմի ով գիտի կասես քեզ նամակ չեմ գրում. այնինչ
միշտ, գրեթե ամեն օր, գրում եմ: Ամեն օր գրում եմ քեզ ու
մի երկու մոտիկների:

Ամեն օր հազար ու մի տեսակ բան է պատահում և մարդ
կարիք է զգում իր տպավորությունն ու կարծիքն ասելու մի
մտերիմ հոգու: Միակ յոթախտությունն այն է, որ նամակ-
ներս թղթի վրա չեմ գրում, այլ ինձ ու ինձ մեջս ասում եմ
ու գրեթե հավատում, որ տեղ հասավ: Եվ զարմանալի կլինի
թե ստացած չլինես:

Եթե անթել հեռագիր կլինի, անթուղթ նամակ չի լինի՞:
Մարդու հոգին ընչով է պոկաս երկաթե թելից:

Մի խոսքով էլ շատես թե նամակ չես գրել: Մանավանդ
պատասխանն էլ միշտ ստացել եմ — դժգոհ ես եղել իմ այդ
ձևի նամակներից:

Ես հիմի բանաստեղծություններն էլ եմ էդպես գրում. ոնց
որ դու պապիրոս ես քաշում ու ծուխը բաց թողնում օդի
մեջ — ես էլ երազում եմ կամ ոգևորվում ու բաց թողնում
օդի մեջ...

Լավն այս է. մնացածը գործի ավելի անբանաստեղծական
մասն է:

Այս բացատրությունը կարող ես հայտնել կամ դրկել այս-
տեղի իմ մոտիկներին, որ նրանք էլ իմանան, թե բանն ինչ-
պես է, կամ ինքն ընչից է:

Այժմ գալով աշխարհի բաներին քեզ պետք է ասեմ, ինչ-
պես վերոգրյալ նամակներից էլ նկատած կլինես, ծիծաղո

գալիս է այս աշխարհքի և նրա անթիվ հերոսների վրա: Փուշ մարդիկ են, ախպեր, ու մեծ մեծ բաներից են խոսում կամ լուրջ բաներ են խաղում: Լավ կարգեր են ուզում. շատ լավ, իհարկե լավ կարգերը պետք է լինեն վերջապես — բայց իրենք շատ են անկարգ. և միշտ կմնան այդպես: Գոնե էս սերունդը կմնա այսպես: Եկող սերունդը կզարմանա սրանց վրա, բայց նա ինքն էլ անշուշտ վատ կլինի: Հեշտ չի ուղղվիլ ու ազնվանալ մի փշացած ժողովուրդ: Իսկ եթե սա շատ է փշացած ու անազնիվ — այդ աշխարհքի անհերքելի ճշմարտություններից մինն է:

Ես էլ չեմ սիրում — նույնիսկ ազատությունն էլ չեմ սիրում այն օրից, երբ համոզվեցա, որ մարդիկ ընդհանրապես վատ են: Ափսոս ոչ սիրտ ունիմ, ոչ հնարավորություն գրելու քեզ իմ բոլոր տպավորություններն ու տեսածները: Այդքանը հերիք է, կասեիր:

Բայց լավն այն է, որ առաջուց հիացած չեմ եղել երբեք, թե չէ ով գիտի խելագարվեի: Առաջուց էլ գիտեի:

Ամբողջ կովկասը (Ռուսաստանն էլ արդեն գիտես) մի հրաբխային կրատերի է նման, որ մեղմ ծխում է, և չգիտես որ օրը կամ որ ժամին կարող է որոտալ ու վիժել իր ծոցում պահած լավան ու կրակը: Թիֆլիսում շարունակ մարդասպանություններ են լինում, ամեն օր: Այնքան սովորական է դարձել, որ եթե կտրի մի օր, չգիտեմ ինչպես ենք ապրելու Իսկ թալանը հո... ես կարծում եմ մեր աստծո գառը պ. Հակոբն էլ պետք է թալանելիս լինի, թեև ինքը հերքում է:

Բայց եթե ուզում եք նամակ գրեմ — հարցեր տվեք. ավելի լավ կլինի, տեսնեմ ընչով եք հետաքրքրվում: Թե չէ ես չգիտեմ որը գրեմ, որը թողնեմ: Իսկ առայժմ ջերմ ու ջերմ համբուրում եմ ամենքիդ — մայրիկին, Շուշանին, Մարուսիային, Գավթին, Լիլիկին-Միլիկին և երևի ուրիշ էլ կլինի: Լիզային էլ իր գերդաստանով, երբ նամակ գրես — ինձանից էլ սրտագին բարևներ ու կարոտ: Հույս ունեմ, որ ամենքիցդ նամակներ կտանամ — իսկ թե ինչ կպատասխանեմ — օ... Ուրեմն շտապեցեք:

Մարիա Մարկովնի հասցեն նոր ստացա Գեորգի Միխայլովիչից — իսկ Ռուստեմինը սեղանիս վրա է: Մի քիչ զրույց պետք է անել, թե չէ կտրեմք:

Ավետիսը որտեղ է, էստեղ նրան հարցնում են: Եթե տեսնես ասա անաշխատները շատ բարով են անում: Բայց թող սիրտը չկտորի (այժմ նրանց սիրտն է բավական կոտրվել). ժամանակ է, այսպես էլ կպատահի — բայց վերջը բարի կլինի: Մի երգ կա որ ասում է

էս ինչ խարաբ դարու հասանք, հարալե —

Խորհուրդ կտայի երգեր որ ծիծաղեր: Ուրիշ կերպ ում հախիցը կգաս:

Ես երեք-չորս անգամ հրաշքով ազատվել եմ սպանվելուց — ինչ անենք: Եթե կսպանեն քեզ վրա կերգեն, եթե ազատվում ես — դու երգիր: Եվ այսպիսով կհեշտանա կյանքըն էլ, աշխարհքն էլ ու կտեսնես — զի բարի է...

էստեղ համբուրում է քեզ ամեն դժար հեշտացնող

բո Օհանեսյ

ՄԱՐԻԱ ՔՈՒՄԱՆՅԱՆԵՆ

Թիֆլիս — Արասբուժան

1909 թ. հուլիսի 18

Սիրելի Մարիա Մարկովնա.

Ո՛րքան կուզեի այժմ Արասթուման լինեմ: Այդ փոքրիկ գեղեցիկ հովիտում, Ձեզ հետ զբոսնեինք ու խոսեինք գեղարվեստից և ամեն բանից, ինչ որ գեղեցիկ է ու լավը:

Ո՛րքան հիշողություններ ու անմոռանալի վայրկյաններ են կապված Արասթումանի այս կամ այն փոքրիկ, խաղաղ շքնաղ անկյունում: Այդտեղ ես շատ եմ երազել ու գրել եմ իմ մի քանի լավ բաները: Այդտեղ եմ մշակել «Անուշ»-ը, այդտեղ եմ գրել «Փարվանան» և այլ բաներ — հա՛, «Թըմկաբերդի առումը»:

Այդտեղ նամակներ եմ ստացել, որոնց վրա արտասուքի կաթիլների հետքերն ամեն խոսքից ու գրչից ավելի պերճ են խոսել իմ սրտին... Այդտեղ՝ ես բանաստեղծություններ եմ գրել ինձ համար ու տվել քամուն...

Եվ ի՛նչ լավ եմ արել:

Մի տուն կա այդտեղի պարկից վերև, փոքրիկ ձորակում,

առվի ափին, ծառերի մեջ կորած — այնտեղ ֆելդշեր ԿԳ-
ԿԻՆ-ն էր ապրում այն ժամանակ: Ես նրա մոտ էի — այն
տանը:

Ճշմարիտ որ «սիրելի Արասթուման...» այնքան թանկա-
զին ցնորքների, հիշողությունների ու զգացմունքների հետ է
կապված — սկսած Արասթուման գնալու պատմությունից ու
արցունքներից:

է՛հ, էս մի նամակն էլ էսպես լինի:

Արդյոք ինչպես է Միշայի՝ առողջությունը, խնդրում եմ
շնորհակալ Ձեր նամակում:

Անվերջ բարեներով՝ Ձեր Հ. Քումանյան

ԱՐՇԱԿ ՉՈՊԱՆՅԱՆԷՆ

1909 թ. հուլիս, Քիֆիս

Իմ սիրելի Չոպանյան.

Ամեն անգամ մերոնք, երբ բանտ էին գալիս, պատմում
էին, թե ինչպես, ամեն օր դուք հարցնում եք իմ մասին, թե
որքան եք անհանգիստ: Իսկ երբ հեռացաք, ստացել են ձեր
նամակները, որ միշտ բերում էին Ձեր սրտի ցավը, ազնիվ
սիրելի ընկերի սրտի ցավը:


Անվերջ շնորհակալ եմ, իմ անզին բարեկամ, այն լավ
ժամերի համար, որ այդպիսով տալիս էք ինձ ու մխիթա-
րում բանտիս մեջ:

Գալով բանտին, պետք է ասեմ, որ շատ էի խաղաղ հո-
գով: Արդեն աշխարհքին մի քիչ փոքրապիստիսն եմ նայում,
մյուս կողմից էլ շատ էր հանգիստ խիղճս. ոչ մի այնպիսի
գործ չունեի, որ դեմս բերեին ու ամաչելի կամ իրավունք
ունենային պատժելու: Իհարկե, եթե արդարություն լիներ:

... Գալով ինքնապաշտպանությունը — այդպես էլ ես բա-

¹ Մարիամ Քումանյանի որդին:

² Արշակ Չոպանյան (1872—1954) — բանաստեղծ, գրականագետ, գրա-
կան-հասարակական գործիչ:



ցառիկ դիրք եմ եղել բռնած. միշտ եղել եմ խաղաղության ու հաշտության ետևից, կանգնեցրել եմ սկսված ընդհարումները և գործել եմ շարունակ ճերմակ դրոշակով, որը, այժմ, երբ ամեն բան անցել է, հայտնվում է, որ միակն է եղել ամբողջ կովկասում...

Բանտում պարապելու հնար չունեցա, միայն մի քանի օր: Այնտեղ ձեռքս ընկավ Բաքվում հրատարակված իմ բանաստեղծությունների գիրքը, ուշադիր կարդացի և զարմանքով տեսա, որ ամբողջ գիրքը փշաջրել են մարդիկ, և փոխանակ հրատարակիչների, դարձել են իմ խայտառակիչները:

Այժմ ես Թիֆլիսումն եմ մենակ: Մերոնք գյուղն են գնացել. իսկ ես մնացել եմ «Լուսաբերի» դասագրքի տպագրության համար:

Տեսնենք հնարավոր է լինելու, վերջապես, մի խաղաղ օր տեսնելու, պարապելու, թե ինչպես խանգարված ու շըշկրված եկանք, էնպես էլ գնալու ենք:

Շատ կուրախանամ, եթե նամակ ստանամ իմ սիրելի Չոպանյանից ու իմանամ, որ ինքն էլ է լավ, իր գեղեցիկ գործըն էլ:

Մենք կարճ ապրեցինք միասին, բայց հուսով եմ, ընդմիշտ կմնանք ջերմ բարեկամներ:

Արտալի համբույրներով՝ Ձեր Հովհ. Թումանյան

ՕԼԳԱ ԹՈՒՄԱՆՅԱՆԻՆ:

Պետերբուրգ — Թիֆլիս

1912 թ. փետրվարի 4

Օլյա ջան,

Հենց էս րոպեին եմ եկել Սենատից և իմ գործն է այժմ. մնաց կիսատ: Ի՞նչքան են զարմանալու և սենատորները և աշխարհքը երբոր իմ գործը բացվի: Բայց, իհարկե, էս տեսակ

գործերը միանգամից չեն բացվում — այլ կամաց-կամաց: Կսպասենք:

Իմ առողջությունը լավ է: Տրամադրությունս հանգիստ է և խաղաղ: Ոչ մի անհանգստություն:

Հենց նոր տեսա Գրգային, Աշխենին ու Մուշեղին¹: Շատ լավ են: Զարմանալի մարդիկ եք, մի մանրամասն ու կարգին նամակ չեք գրում — նկարագրում — տեղեկություններ չեք տալիս ձեզանից: Այժմ հույս ունեմ, որ թեզանից մանրամասն նամակներ կստանամ և շուտ-շուտ: Մի՞թե չեք կարողանում հասկանալ թե ինչ բան է նամակը բանտում: Մի՞թե չեք կարող ամեն օր գրել:

Այժմ շտապում եմ — արդեն նամակները հավաքում են: Խնդիրն էն է, որ առավոտները գնում ենք Սենատ, իրիկունները գալիս, երբ արդեն նամակները հավաքում են: Խնդիր տվի ես, որ թույլ տան քեզ հետ հայերեն գրագրություն ունենալու — և թույլ տվին հենց էսօր: Էն ինչ կարմիր շորի մասին էիր գրել Արտիկի նամակում — չհասկացա: Առողջությունդ ինչպես է — արդյոք բժշկվեցիր թե չէ: Երեխաներն ինչպե՞ս են — ամեն մեկի մասին գրեցեք: Թող իրենք հերթով երկար գրեն: Ի՞նչ են անում տանըցիք, մեր մոտ բարեկամները, ի՞նչ խաբար գյուղից, ո՞նց են, ո՞վ է գալիս, ո՞վ է գնում: Դատը երևի կըտևի դեռ դարձյալ ամիս ու կես: Ասում են ուզում ես գաս: Եթե կարողանաս գալ էլ — մի ամսից հետո արի: Նյութականդ ինչպես է, կարողանում ես ծերը-ծերին հասցնես թե չէ: Մի քիչ էլ սպասիր, տեսնենք — կըվերջանա:

Էսպես է աշխարհքի բանը — լավությունն էլ է պատժվում — էն էլ ավելի շատ: Բան չըկա. ամեն բանին վերջ կա, իսկ արդարությունը և անմեղությունը միշտ հաղթանակել են աշխարհքում ու պիտի հաղթանակեն — և ես չեմ էլ նեղանում, որ էդ շուտ չի լինում: Դուք էլ հանգիստ կացեք: Ջերմորեն համբուրում եմ ամենքիդ և ամեն օր սպասում եմ նամակների:

Համբույրներով՝
Քո Հովհաննես

¹ Թումանյանն այս նամակն ուղարկել է կնոջը Պետերբուրգի նախնական կալանքի բանտից, երբ նա, բազմաթիվ ուրիշ գործիչների հետ միասին, գաղվում էր հակացարական գործունեության մեղադրանքով:

¹ Թումանյանի փեսան (իրավաբան Գևորգ Խատիսյան՝ Աշխենի ամուսինը), ավագ դուստրը և ավագ որդին:

1912 թ. մարտ

Նաւնիկ ջան.

Գալիս ենք: Բայց երևի դուք հետաքրքրվում եք թե ինչեր են պատահում մեզ հետ: Մի երկու բան ասեմ: Մի քանի մասնավոր տեղեր գնացել ենք հրավերքների — թե հայերի մոտ, թե ուսաների: Շատ լավ մարդիկ են: Մանոթացա ուսուցիչներին և մի երկու բանաստեղծների հետ: Նկարեցին Աշխենին ու ինձ: Բ.Ք Նկարիչ նստած նկարում էին Աշխենին: Երկուսինը հաջող դուրս եկավ. մինը մեզ են նվիրելու: Հրավիրեցին այստեղի գաղութի մանկական ցերեկույթին: Մի երեխա առաջ եկավ իրեն նման պատիկ մի ճառ ասավ ինձ ու ծաղիկներ տվեց, իհարկե ես էլ համբույրներով ընդունեցի:

Ներկայացրին «Շունն ու կատուն». հետո շարքով մի խումբ երեխաներ եկան ինձ — համբուրվեցինք ծափերի տակ: Հրավիրեցին այստեղի գաղութի կրթիչը — ընթրիքով պատվեցին: Բայց ամենից լավն էն էր, որ նրեկ գրչի հարց պատմության ֆոնդի ժողովն ունեցանք — ընտրվեց հանձնաժողով և գործն, ինձ թվում է, արդեն ունեցավ սկիզբը և կերթա:

Ժողովից հետո ընթրիք ունեցանք. առ. ժ. 4-ին ենք տուն վերադարձել: Աշխենն ու Գիգան քնած են, իսկ իմ գլուխը ցավում է:

Մուշեղն եկավ, քնածները վեր կացան, թեյ խմեցինք, նախաճաշեցինք, և մտածում ենք էսօր, կիրակի, ամսի 8-ին կամ վաղը երկուշաբթի գուրս գանք Մոսկվա: Եթե ուզեք Մոսկվա հեռագրել — Մատուրյանին գրեք, կհասցնի:

Նամակիս շարունակությունը մնաց — գլուխս ցավում է: Բարևներ բոլոր մոտիկներին ու ծանոթներին:

Համբույրներ քեզ և ամենիդ:

Հայրիկյ

1912 թ. ապրիլի 25

Ազնիվ բարեկամ Նիկոլայ Յակովլևիչ.

Ձեք կարող երևակայել, թե ինչքան եմ ես ինձ մեղավոր զգում Ձեր առջև: Խոսքս հայոց պատմագրության, թե հայագիտության ֆոնդի մասին է: Դուք վերջին անգամ ինձ ասիք, թե Մոսկվայից չգնաք, մինչև հանձնաժողով չընտրվի այստեղ էլ, իսկ ես արագ անցա Մոսկվայից, մի երեք օր մնացի, էն էլ անց կացրի շատ հիմար կերպով — հրավերներում, և, շնայելով նրան, որ շատ էին հետաքրքրվում այդ գործով, հեռացա՝ թողնելով ժողովն ու հանձնաժողովի ընտրությունը իրենց, միայն ժողովը հրավիրելու համար երեք մարդ նշանակվեցին: Այնինչ, ինչպես պատմեցին ու նկատեցի, կարևոր մարդկանցից ոմանք լավ չեն իրար հետ և դրսից եկած մարդ է հարկավոր նրանց իրար բերելու:

Մի խոսքով, մի կողմից ստիպված էի շտապելու, մյուս կողմից ցավում եմ շտապելուս համար և ինձ մեղավոր եմ համարում, մանավանդ Ձեր առջև: Սպասելիս են եղել և Բաքու: Բայց Մոսկվայում շատ ուրախացան այդ գործի համար, մի պարոն, պ. Բուդաղյանը, հենց առաջին խոսքից այնքան հավանեց, որ իսկույն ևեթ մի գումար առաջարկեց: Մոսկվացիք պնդեցին գրական ու պատմագրական ֆոնդը միացնելու վրա և Հայկական Ակադեմիայի խնդրանքով ան ավելի որոշեցին: Հատկապես պ. Ստ. Մամիկոնյանը², որ ինչպես գիտեք, քաջածանոթ է հայոց դպրոցական գործերին, խոսեց ու պարզեց, թե էջմիածնի ճեմարանը, որ կոչվում է Ակադեմիա, հենց բացված է Ակադեմիայի իրավունքներով և մինչև անգամ ուսուցանվալությունը նկատել է, թե նա, որպես Ակադեմիա, չի ծառայում իր նպատակներին: Պատմեց, թե ինքը

¹ Նիկոլայ Յակովլևիչ Մառ (1859—1934) — լեզվաբան, պատմաբան, հայագետ, ահադեմիկոս:

² Ստեփան Մամիկոնյան (1859—1922) — կրթական-հասարակական գործիչ:

կարդացել է էջմիածնի դիվանատանը այդ մասին. եղած թըղ-
թերը: Ես նոր եմ Թիֆլիս եկել և մի քիչ հիվանդ եմ: Այստեղ
էլ մեծ հավանություն է գտնում խնդիրը: Սակայն ավելի բա-
րեհաջող մի հանգամանք կա առաջներս: Մի երկու երեք շաբ-
թից հետո Պետերբուրգ է գալու նոր կաթողիկոսը¹: Կարծում
եմ այս շատ լավ առիթ ու դեպք է խնդիրը հաստատ հողի
վրա դնելու և ծրագրից գործին անցնելու: Ինչ խոսք, որ այս
ամենի մեջ Դուք լինելու եք գլխավոր դերակատարը և ես
սրտանց ուրախ եմ, որ Հայկական Ակադեմիայի և հայագի-
տության գործը մեր մեջ հաջողելու է Ձեր ձեռքով ու կապ-
վելու է ընդմիշտ Ձեզ հետ, որ և այնքան վայելուչ ու գեղե-
ցիկ գալիս է Ձեր սիրելի անձնավորությանը, Ձեր՝ գիտու-
թյանն ու հայագիտությանն արած անգնահատելի ծառայու-
թյուններին և Ձեր մեծ պատրաստությանն ու հմտությանը:

Ասում էիք՝ մենք բանաստեղծ մարդիկ ենք, ոգևորվում
ենք: Բայց մեր մեջ մի մեծ տարբերություն կա. Դուք ոգևոր-
վում ու գործ եք կատարում, իսկ ես միայն ոգևորվում եմ:
Եվ գործի ամբողջ հույսը Դուք եք:

Այստեղից էլ դիմում կանենք կաթողիկոսին, բայց այս
գործի կաթողիկոսը Դուք եք լինելու:

Ձերմագին բարեներով՝ միշտ

Ձեր բարեկամը Հովհ. Թումանյան

ԳԱԼՈՒՍՏ ՏՆՐ-ՄԿՐՏՉՅԱՆԻՆ (ՄԻԱԲԱՆ)²

Թ Ի Ֆ Ի Ռ — է ջ մ Ի ա ծ Ի Ե

1912 թ. մայիսի 25

Սիրելի Գալուստ.

Վաղուց էի քեզ գրելու, բայց սպասում էի մի տեղեկու-
թյան, որ դժբախտաբար ուշացավ ու չեմ ստացել դեռ:

Անշուշտ կարդացիր «Հորիզոն»-ի № 91-ում տպած տե-

¹ Գևորգ V Սուրենյանը:

² Հայագետ, պատմաբան, բանասեր, էջմիածնի «Արարատ» հանդեսի
խմբագիր:

դեկությունը Պետերբուրգի հայ գաղութի ձեռնարկած հայոց
պատմագրության և հայագիտության ֆոնդի մասին, որ թարգ-
մանի Ակադեմիա: Գուցե լսած լինիս և այլ աղբյուրներից:
Արդ, որովհետև 400-ամյակը շատ պատեհ դեպք է, որով-
հետև և մեր ժողովուրդը և ունևոր մարդիկ այս դեպքի առի-
թով հեշտ մի բան կանեն, և վերջապես մի գիտության օջախ
ենք ունենալու — դու էլ մեր հանձնաժողովների հանձնաժո-
ղովի — կենտրոնականի նախագահն ես և հետևաբար այս
դեպքում ազգի մեջ կենտրոնական մի դիրք ունես, քեզ վրա
է ընկնում մի շատ լուրջ գործ անելու պարտականությունը:
Շատ կուզենայի քո կարծիքն իմանալ Պետերբուրգի առաջար-
կի մասին: Այն էլ իմացած պետք է լինես, որ եթե հարցը
արծարծենք մամուլի մեջ և ընդհանուր մի ուշադրություն
հրավիրենք գործի վրա՝ հաստատ համոզված եմ, որ մեծ
նվիրաբերություններ են լինելու: Հարմար առիթ է և մեր
հարուստների համար իրենց հիշատակը հավերժացնելու, կա-
պելու էդ լավ գործերի ու լավ օրերի հետ: Քո և մի երկու
հոգու մասին շատ ենք խոսել Մառի, այդ շատ լավ մարդու
հետ: Եթե կարողանայինք այն տեսակ մի գործ կատարել,
այսինքն ճիշտ որ գիտության մի Ակադեմիա ունենալ և Մառն
էլ այնտեղ... Նա ինքն էլ շատ է ուրախ և ուրախությամբ էլ
ընդունեց Պետերբուրգի հանձնաժողովի անդամությունը, կա-
նի ամեն բան, ինչ հնարավոր է; և վերջապես այնքան բան
է անում — միայն մենք չկանք:

Սրանից էլ լավ դեպք չի կարող լինել, որ մենք էլ ազգո-
վին մի շարժվենք գիտության համար: Ախր շատ ենք անգետ
ու կույր — գյուղից մինչև քաղաք, հոգևորական ու աշխար-
հական, գրող ու ընթերցող տգե՛տ, տգե՛տ, ամեն բանից,
սկսած մեզանից, մեր պատմությունից, մեր կյանքից: Ահա,
տեսնում ես էլի, լուսավորության (ամենալուրջ կերպով)
ջահն ու տաճարը գազեթն են համարում. և, հիրավի, ուրիշ
բան էլ չկա մեջտեղը:

Այստեղ մտադրություն ունենք մի նեղ շրջանում, ով հե-
տաքերբովում է մեր երկրի ու արևելքի պատմությունով ու
հայագիտությունով, մի հավաքվենք խորհրդակցության, թե
ինչ պետք է անել, և ինչ կարելի է անել:

Ձերմ բարեներով՝ քո Հովհ. Թումանյան

Սիրելի Արմենուհի

Ես լավ գիտեմ թե ինչքան ուրախ ու գոհ եմ լինելու ձեր շրջանում, Ալեքսանդրապոլի ինտելիգենցիայի շրջանում, ուր էնքան լավ բարեկամներ ունեմ, ուր էնքան մարդ ուժեղ է զգում իր հայությունը — սակայն շատ ու շատ փստոս, որ միանգամայն անկարող եմ կատարելու ձեր խնդիրն ու իմ ցանկությունը: Մինչև վերջին օրը հետաձգում էի պատասխանս — գուցե, ասում էի, հաջողի գալստ:

Ցանկանում եմ հաջողությամբ պսակվեն պ. Արմենակի ու բոլոր մասնակցողների սերն ու ջանքերը:

Սրտագին բարևներ ինձանից Անուշին, Սարոյին, Մոսին, մեր սիրելի փերիններին ու բոլոր մասնակցողներին. իմ սերն ու հարգանքներն ամենքին և մանավանդ իմ սիրելի Արմենուհուն:

Միշտ Ձեր բարեկամը

Հովհ. Քալանթարյան

ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅՈՑ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ

1912 թ. դեկտեմբերի 30

Թ Ի Փ Լ Ի Կ

Թիֆլիսի Հայոց Երաժշտական Ընկերության պ. պ. եռյակաբեմերին

Ազնիվ պատրանհի՛ր.

Եստ եմ ուրախ թիֆլիսի Հայոց Երաժշտական Ընկերության բացման համար և առանց հրավերի էլ ես արդեն գալու:

¹ Կամպոզիտոր Արմեն Տիգրանյանի քույրը, բանաստեղծուհի:

² Նամակը գրված է ի պատասխան այն հրավերի, որ ստացել էր բանաստեղծը Ալեքսանդրապոլից «Անուշ» օպերայի առաջին ներկայացմանը ներկա լինելու «Անուշ» առաջին անգամ բեմ է հանվել Ալեքսանդրապոլում 1912 թ. հուլիսի 29-ին՝ հեղինակի՝ Ա. Տիգրանյանի ղեկավարությամբ:

էի՝ առաջնորդվելով իմ դեպի երգն ու երաժշտությունն ունեցած մեծ սիրուց:

Դուք գիտեք, որ ես շատ եմ սիրում հին խոսքը: Եվ ահա մի հին զրույց, որ սիրել եմ առանձնապես, էսպես է ասում:

Պատահեց, ասում է, որ մի ժամանակ գազան գարձավ քնքուշ ու բանական մարդը: Ինչ արին-չարին հնար չեղավ գազանը նորից մարդ դարձնելու: Վերջը հայտնվեց, որ հնարը միայն երգը — երաժշտությունն է: Էս զրույցը շատ է երկար, ես կարճն եմ ասում, բայց որ ասում եմ սիրել եմ առանձնապես, դրանից էլ կիմանաք, թե ինչ նշանակություն եմ տալիս երաժշտությանը:

Խորապես ցավում եմ, որ հիվանդության պատճառով չեմ կարողանում ներկա լինել առաջին ընդհ. ժողովին: Խնդրում եմ ներկա համարեք և անդամ: Կիսսիրտ շնորհավորում եմ Ընկ. բացումը: Բարով է գալիս Գրական Ընկ. հրաշալի քույրը, որ արևմուտքի մշակված երգն ու երաժշտությունը մեր մեջ տարածելով հանդերձ — հատուկ կոչում ունի հավաքելու, ներդաշնակության բերելու և զարգացնելու արևելքի ու մեր ժողովրդի երգն ու երաժշտությունը — հարազատ ձայնների կախարդական աշխարհքը:

Թող բացվի վարագույլը, թող հնչի նրա աստվածային ձայնը և գազանը մարդ կդառնա:

Հովհ. Քալանթարյան

¹ Այս զրույցը «Հազարան բլուր» հեքիաթն է:

² Այդ ժողովը կայացել է 1912-ի դեկտեմբերի 30-ին, ուր և ընթերցվել է բանաստեղծի նամակը:

1913 թ. դեկտեմբեր

Արտիկ ջան.

Տեսնում ես էլի վրաց քեզ նամակ եմ գրում: Դէ դու միշտ գրում էիր, մերոնք էլ գրում են — փողդ էլ ժամանակին ստանում ես: էլ ինչ գրեի: Պետք է մի քանի Պոլոնիուսի² խրատներ գրեի քեզ — և կարծեմ հարկավոր է: Հարկավոր է միշտ հիշես, որ գնացել ես բան սովորելու և պետք է լուրջ սովորես, ժամանակդ զուր չըկորցնես, աշխատես լինել զարգացած մարդ և, եթե մի կոչում ունես, կոչմանդ զագաթին հասնես: Բայց միշտ և ամենից առաջ առողջ, առողջ և առողջ: Հիվանդ մարդը, տկար ու թույլ մարդը, ինչ ուզում է սովորի — դատարկ բան է. ոչ ինքը կըզգա իր ապրելը, ոչ էլ ուրիշ բանի կյանք կըտա:

Առողջ հոգով ու մարմնով և ժամանակի գիտությունով ու լուսավորությունով ճոխացած — ահա՛ թե որն է մարդը: Եվ դու կարող ես լինել: Ոչ մի բան քեզ չի պակսիլ: Վճռիր ու աշխատիր լինել կատարյալ մարդ:

Ես էլ այժմ աշխատում եմ Իքատակի³ հողերից մի մասը ձեռք բերել, որ վերջապես հաստատ հող ունենանք մեր հայրենիքում:

Մեր գրական երեկույթներն էլ շատ լավ են գնում: Դահլիճը մեծացրել են, ավելի լավ ու մեծ բեմ են շինել և ժողովուրդը միշտ էնպես է լիքը, որ նստելու տեղ չի լինում:

Ես էլ պարապում եմ կամաց-կամաց: Գրիմմ եղբայրների հեքիաթները հանձնարարել են թարգմանելու:

Նվարդի հետ գրում եմ, որ գնաք Համբարձում Թումանյանի տունը, նրանց հետ ծանոթանալու: Շատ լավ մարդիկ են

1 Արտավազ Թումանյան (1894—1918) — բանաստեղծի որդին:
2 Շեքսպիրի «Համլետ» ողբերգության գործող անձ, Լաերտի և Օֆելիայի հայրը:
3 Թումանյանի հայրենի Դսեղ գյուղի մոտ գտնվող հանդամաս:

և իմ լավ բարեկամները: Լավ կըլինի, որ երբեմն-երբեմն գնաս-գաս: Եվ շատ ուրախ կըլինեմ, որ թե նրանց մոտ — թե ուրիշների, քեզ ճանաչեն որպես անկեղծ ու ազնիվ և կրթված մարդու:

Մանկական հեքիաթների մասին Նվարդին ասել եմ, քեզ հետ կխոսի: Մենք ամենքս լավ ենք: Երեխաները Սայաթ-Նովա են երգում: Տելեֆոն էլ հո գիտես ունենք: Քեզ լավ պահիր:

Համբույրներով
Հայրիկդ

ՅՈՒԱԿ ԽԱՆԶԱԴՅԱՆԻՆՆԵՐ

1913 թ. դեկտեմբեր

Սիրելի Յուլիկ.

Ուրիշ կերպ չեմ կարող գրել մի մարդու, որ էսքան սեր ու մտերմություն է ցույց տալիս ինձ: Մանավանդ ես էլ քեզ եմ սիրում: Իմ շատ հուշակված ծուլությունից ու գեղ[արվեստական] լաբորատորիայիս դրությունից ես հարցնում:

— Էնպես տեղերից ես խոսում, որ շատ բան կարող էի ասել, և երևի կասեմ առաջիկայում ու կտեսնես, որ էնքան էլ ճշմարիտ չի էդ շատ տարածված կարծիքը, թե ես ծուլ եմ: Գեղ[արվեստական] լաբորատորիայիս մասին էլ կպատմեմ: Ասում եմ՝ երևի, որովհետև շատ եմ ծուլ նամակագրության: Բայց գրելու եմ:

Իմ ամբողջ կյանքը գրեթե անցել է շատ խառը, տակնուվրա, ու շարունակ էն պատրաստության վրեն եմ եղել, որ նստեմ պարապելու — ու չի եղել, զլուխ չի եկել: Էսպես անցել են իմ երկու հասակը, հիմի ոտս երրորդ հասակի շեմքն եմ դնում և դրա հետ միասին վճռական միջոցների եմ դի-

1 Խանզադյան Յուլիկ (1886—1935) — գրականագետ:

մում, որ էս կյանքիս վերջին մի քանի տարին գոնե զուր շանց կենան:

Տեսնենք: Յա տեր աստված:

էն էլ կգրեմ, թե սրա համար ինչեր եմ մտածում, ու ինչեր եմ անում: Նույն բանն եմ մտածում և մեր գրողների համար առհասարակ: Էնպես եմ անելու, որ կարողանանք շատերս, որքան կարելի է շատերս պարապենք գրականությամբ: Եվ դա հնարավոր բան է: Հետո կգրեմ, ասում եմ: Բայց այժմ արդեն քայլեր եմ արել, և հաջողության նշանները կան:

Մարդիկը ոգևորված գալիս են, տաքացած ճակատները զարկում են կյանքի ժայռին ու շշմում, շշկլում, վեր բնկնում: Էսպես չի կարելի: Գրականությունը, կամ ավելի ճիշտը գրողներին, պետք է պնշտպանել ուժեղ կերպով: Եվ կպաշտպանենք:

Սպասիր մի գլխիս հավարված ճանճը դենն անեմ: Տղերանցը շատ բարով արա:

Ք ո Ղ. Ք ու մ ա ն յ ա ն

ՅՈՒՆԻՍԿՈՍՅԱՆԻ

Ք ի ֆ լ ի ս — Բ ա Բ ո լ

1914 թ. ապրիլ

Սիրելի Յուլիակ.

Ես հո զարմանալի ծուլլ եմ նամակագրության, բայց էն օրվանից, որ վերջին անգամ խոստացա նամակիդ պատասխանել, հետո մի շատ ծիծառելի դեպք պատահեց, որ բավական խանգարեց խոստումս կատարելու: Անում է խնդրարին էլ ցուրտն է մահանաւ:

Բանն այն է, որ հենց էդ ժամանակ գլուխ եկավ հրատարակչական ընկ. ու իմ առուտուրը — Գրիմմի հեքիաթները թարգմանելու անախորժ աղմուկներից հետո: Պետք է ավելացնեմ և շատ տգեղ, որ ինձ իրավունք տվեց նրանց հետ մի քիչ խիստ վարվելու էդ ժամանակ էլ մի քանի հարյուր ուրլի ավանս առա, մի հեռախոս էլ բերի դրի կողքիս, որ

նստեմ պարապեմ, համ թարգմանեմ, համ գրեմ-կարդամ: Հենց նստեցի թե չէ — մի երկու օրից հետո տեսնեմ պարտքատերերիս տոմսակներն ու պարտաթղթերս (որ աստված տվել է, չի խնայել) կարկուտի նման գլխիս թափեցին:

— Ա՛յ մարդիկ, ախր դուք կարգին հանգիստ մարդիկ էիք, էս ի՞նչ պատահեց, էս ի՞նչ կնշանակի:

Թե՛ վեց հազար ուրլի ես ստացել, ախպեր, որ հիմի էլ շտապ էլ (էստեղ ընդհատեցին, մարդիկ եկան և նամակս հինգ օր մնաց կիսագրիլ) երբ պետք է տաս: Բանից դուրս եկավ, որ հրատարակչականի վարչ. անդամները հաշվել են ու տարածել, թե ես 6.000 ու եմ ստանալու, վերջն էնպես է դուրս եկել, թե ստացել եմ: Եվ ահա մինչև էսօր էլ պարտքատերերիս դեռ չեմ կարողացել տեղները նստեցնելու — միանգամ թառժած լինելուց հետո: Ապա թե զանազան մեծ ու փոքր աղմուկներ, որ իմ գլխից անդադարաւ են:

Բայց պետք է ասեմ, որ արդեն գործնական քայլեր եմ անում կյանքիս ձևը փոխելու և նվիրվելու գրականությանը: Էս մտքով նույնիսկ ձեռնամուխ եմ եղել մի շատ լուրջ գործի — ապահովել մեր գրողներից մի տասը-տասնեհինգ հազու: Գրողն. Ընկերությունը որոշ հարմարություն է տալիս էս քայլն անելու և առաջին փորձերը հաջող են: Ուրիշ կերպ անկարելի է: Եստ է հեռու էն օրը, որ մենք սպասում ենք — թե գրական մի հասարակություն կունենանք: Փոքր ենք, քիչ ենք, գրողներ չենք կարողանում պահել: Իսկ գրողներ կան ու փշանում են, մեղք են, ափսոս են: Մեղաճեմ մի նավթի հոր փորելու դրա հարյուր հազարներ են ծախսում, թե ինչ է միջեցը նավթ է դուրս գալու, մարդկանց հագին ինչով է պակաս էն գետնից, որ նրա փրակ էլ ծախս անենք փորելու, մշակելու, և պոեզիան նավթից ինչով է պակաս. թող մի քիչ էլ դրա վրա ծախսենք:

Հետևում եմ ձեր գրական երեկոներին. վերջապես կարդացի և Աթաբեկյանի դասախոսությունը՝ ու էսօր էլ նրա

1. Աթաբեկյանը 1913 թ. մարտի 15-ին Բաքվում մի դասախոսություն է կարդում հայ մտավորականության մասին, որի համառոտագրությունը տպվում է «Գործ» օրաթերթի նույն թվի № 18-ում: Իր առարկողներին է. Աթաբեկյանը պատասխանում է մի առանձին հոդվածով («Մշակ», 1914, № № 79 և 80): Թ.-ի խոսքը դրա մասին է:

հողվածը «Մշակ»-ում: Բայց էս մասին շատ բան ունեմ ասելու, շատ էս ժողովուրդը շատ բան կտա, և ճարպիկ մարդիկ, և խելոք, և գիտնական, և քաջ, բայց լավ մարդիկ դժար կտա: Լավ մարդը — էդ բնության, ավելի ճշմարիտը մարդկության մեջ ամենակատարյալ ու ամենասքանչելի երեվոյթն է — և ամենահազվագյուտ: Բայց վախենում եմ ընկնեմ շոյերը: Հետո էլ կգրեմ: Անցյալ օրերը Վահանը¹ մոտս էր: Գնաց Ախալքալակը: Գալու է, և դասախոսություն է կարդալու լեզվի մասին²: Ջերմ բարեններով միշտ բարեկամդ:

Հ. Թումանյան

ՓԻՖԻՊՍ ՎԱՐԳԱՋԱՐՑԱՆՆԵՐ

Ք ի ֆ ի ս — Մ ո ս կ վ ա

1915 թ. ապրիլ

Սիրելի Ֆիլիպ.

Ձեմ կարող ստել և պետք է ասեմ, որ ձեր գնալու ժամանակից ի վեր ծանր դրություն ու տրամադրություն է տիրում մեզանում: Եվ, ինչպես ասում էին մեր հնեերը. եթե ինձանից հարցնեք, արտաքին ու ներքին հանգամանքների տխուր համերաշխության պատճառով — չեմ կարող պարծենալ, թե շատ լավ եմ:

Բայց էս ժամանակին էլ ով է խոսում ներքին հանգամանքներից, երբ որ աշխարհիս առաջին աշխարհներ են շուռ գալիս: Երեկ էլ նոր հեռագիր ստացանք, թե լայնածավալ կոտորածներ են սկսել Տաճկահայաստանում: Էն, ինչ որ ամենքս էլ սպասում էինք շարունակ, ու ինչի մասին որ սարսափից չէինք էլ խոսում: Այո՞, էսպես, թուրքը վերջին անգամ լողում է էս դժբախտ ժողովրդի արյան մեջ:

Ես համոզված եմ, որ սա վերջին ոճրագործությունը պետք է լինի էս համաշխարհային ճիվաղի, բայց թե մեզ համար էլ սոսկալի հարված կարող է լինել: Խորհրդակցություն ունե-

¹ Տերյան:

² 1914 թ. ապրիլի 30-ին Քիֆլիսի երաժշտական Ընկ. դահլիճում Տերյանի կարդացած դասախոսությունը՝ «Հայ գրականության գալիք օրը»:

ցանք վերերի հեծ, հաղորդագրություններ ու կարգադրություններ եղան արտակարգ, տեսնենք ինչ դուրս կգա: Ամեն օր, ամեն օր նիստերի ենք, ջղալին, հուզված, հոգնած: Էսօր էլ ահա երեք նիստ ունեմ: Սպասում եմ մի մասնածողովի, որ գալու է մոտս խմբագրենք Գրողների Ընկերության կողք — հեռագրով դիմումը աշխարհքի գրեթե բոլոր ազգերի Գրական Ընկերություններին, մեծ թերթերին ու նշանավոր գրողներին¹:

Ինձ ուզում էին ուղարկել Ռուսաստան շրջագայելու, խոսելու և նաև հանգանակության մասին հոգալու, կազմակերպելու, պիտի գալի և Մոսկվա, բայց իմ անձնական մեղքերը ինձ հնարավորություն չեն տալիս տանից շատ հեռանալու:

Ինչպես գրել էի անցյալ նամակում — էս խառը ժամանակը ես էլ, ի միջի այլոց, զբաղված եմ և հայրենագիտական, և ուրիշ տեսակի խաղալիքներով — ասում եմ գուցե դրանով էլ մեր մանուկներին մի բանով օգնած լինենք — հայանալու և մարդանալու: Բայց դժբախտաբար սարսափելի թղթի թանկություն է — մանավանդ բրիտանի կարտոնի, չենք ճարում գրեթե — և դրանից էլ թանկանում են խաղերը:

Շատ ու շատ բարեններով ու համբույրներով ամենիդ՝

քո Հովհաննես

ԸՆՏԱՆԻՔԻՆ

Է ջ մ ի ա ծ ի ն — Ք ի ֆ ի ս

1915 թ.

Սիրելիք.

Անկարելի է նկարագրել, թե ինչ զարհուրելի աղետ է, որին ականատես եմ ես: Բոլոր ճանապարհները, բոլոր շինությունները, բոլոր բնակությունների շուրջը, հանդերը լիքն են մերկերով, քաղցածներով, հիվանդներով, լացողներով, տընքացողներով, մեռնողներով: Երեխաներ, երեխաներ, երեխաներ... անտեր, սոված, հիվանդ: Բոլորը, սկսած նրան-

¹ Տես սույն հատորում տպագրված «Հայ գրողների ընկերության կողք»:

ցից, որ շատ ժամանակ չի ինչ ոտն է եղել ու ման է գալիս, բոլորը փախել եկել են 3—500 վերստ — սարսափած, սոված: Այժմ էլ ինձ է վիճակվել էդ երեխաների խնամատարութեան գործը, դրանց ապաստարանը¹: Արդեն երեք շինութիւն լիքն են դռնիցը հետ — ճեմարանը, ճեմարանի ննջարանը ու վարժացը՝ մոտ երկու հազար հոգի: 90 ծառայող ունենք: Հեռագիր էինք տվել Քիֆլիդ, ամեն օր սպասում ենք կանանց խմբերի — մինչև այժմ չեկան. պաշտոններ չէի թողնում հաստատ բաժանեն, սպասում էի նրանց: Չեկան, գուցե այժմ բաժանեմ: Սպասում էի, թե նվարդն² էլ կգար: Համլիկի գործը վատ եղավ: Կաթողիկոսն առաջին օրը խոստացավ ու հրամայեց հեռագրեն, որ Համլիկը ճեմարանի աշակերտ է: Ենորհակալութեան արի, գրույց արինք ու դուրս եկանք: Մյուս առավոտ իմացա, որ իրիկունը թղթերը բերել է տվել, տեսել է աշակերտ չի համարվում, հրամայել է հեռագրեն, թե աշակերտ չի, մինչև հասա — արդեն հեռագիրը գնացել էր: Վերջապես: էստեղ գործս կարգի դնեմ — կգամ:

էս ցավի ծովի առջև մարդ իրեն էլ է մոռանում: Բորիկն³ ուրեմն արդեն առողջ է:

ՋԱՊԵԼ ԵՍՍՅԱՆԻՆ⁴

Բ ու ռ ժ ու մ — Ք ի ֆ ի ի ս

Սիրելի տիկին Ջաբել.

Ստացել եմ թե՛ Ձեր նամակները, թե՛ հեռագիրը: Տեր-Անդրեասյանինը հանձնեցի իրեն:

Շատ ցավեցինք Ձեր հիվանդութեան համար, բայց հավատացած եմ, որ թեթև բան էր ու անցած է արդեն:

¹ 1915-ի ամռանը Հովհ. Թումանյանն էջմիածնում նվիրվել էր կոտորածներից փրկված որբերին խնամելու գործին (տես սույն հատորում զետեղված «Հիշողություններ էջմիածնի որբանոցից» հոդվածը):

² Բանաստեղծի դուստրը հեռագրում եկել է էջմիածին և աշակից եղել հորը

³ Բանաստեղծի ավագ դուստր Աշխենի որդին:

⁴ Ջապել Սասյան (1876—1942) — արևմտահայ գրող, գրական-հասարակական գործիչ:

Իմ ընկեր Տեր-Անդրեասյանն ու ես մեծ հաճույքով հաճախ հիշում էինք Ձեզ: Բորժոմի անտառներում: Նա գնաց արդեն: Թերևս ես էլ մոտ օրերս Քիֆլիս անցնեմ մի կարևոր գործով: Ձեզ կհանդիպեմ — մի քիչ խոսենք: Մեր Անդրանիկն էլ, իր նամակից էնպես է երևում, պետք է վերադարձած լինի Քիֆլիս:

Պետք է խոստովանեմ, որ էստեղ նոր եմ զգում, լիքն ինչքան եմ շարդված ու հոգնած թե՛ ֆիզիկապես և թե՛ բարոյապես: Եվ մի ծանր թախիծ ճնշում է սիրտս շարունակ: Շատ բան է խորտակվել ինձ համար աշխարհքում, և աշխարհքը շատ ցավերով է լցված արդեն: Շատ բան կա, որ էլ չեմ սիրում, և բաներ էլ կան, որ սիրում եմ, բայց տեսնել չեմ կարող: Օրինակ, էն օրվանից հետո, որ տեսա մորս՝ սպանված եղբորս դիակի վրա, և մյուս սպանված եղբորս (սպային) էլ թաքցրինք, որ նա չիմանա, այլևս չեմ կարողանում տեսնել նրան, իմ մորը:

Անցյալ տարի, էս ժամանակ, էջմիածին էի: Անկարելի է պատմել, թե ինչ էր էջմիածինը անցյալ տարի էս ժամանակ: Բայց ամիս ու կես մնացի, զբաղված էի գլխավորապես որբերով, և, հիրավի, էն ժամանակ էլ, ես և տեսնում էի, և զգում էի դժբախտության ու թշվառության ահռելիությունը, բայց միայն հեռանալուց հետո, մանավանդ այժմ է, որ չեմ կարողանում էլ նրանց տեսնել, ինչպես և գաղթականներին առհասարակ, բայց մանավանդ նրանց, որբերին:

Տեսնելու համար հսկայական ուժ է հարկավոր, իսկ ես, ինչպես արդեն գրեցի, շատ եմ շարդված, հոգնած ու տկար:

Իհարկե, կարող էի շատ ուրիշ բաներ էլ գրել, թերևս ավելի խոր ու խոշոր, որ տեսնեիք, թե հիրավի, շնայած իմ անապառ լավատեսությանը և բնավորության գվարթութեանը, թախիժը, որ ասում եմ, իրական է ու, ավա՛ղ, մշտական, անանց:

Մի քիչ ավելի ուժով ու աշխուժով մեր գրականության գործով է, որ կարողանում եմ զբաղվել: Կամ թերևս մեր կուլտուրայի առհասարակ:

¹ Անդրանիկ Զորավարը:

Ձեր գնալուց հետո Քիֆլիս խորհրդակցութեան հրավիրեցի՝ մի քանի ուրիշ մարդկանց, որոնք մեծ սիրով մոտեցան գործին, և խոստացան ամեն կերպ աջակից լինել զուլս բերելու մեր գրականութեան և այնուհետև մեր կուլտուրայի ապահովութեան գործը¹։

Հասնել էլ նոր մարդիկ հանձն առան գործին մոտենալու և միանալու։ Ըստ ամենայնի ձեռնհաս ու կարող մարդիկ։ Էսպես, աշնանը գործ կունենանք անելու։

Անշուշտ ցավով կարդացիք, որ Քիֆլիսի ու Մուշի շրջանում ուսաները մի քիչ ետ են քաշվել։ Հարկավ դա մի կարճատև նահանջ է, բայց կարդալիս մարդու սիրտ կտոր-կտոր է լինում, երբ մտածում է, թե մեր թշվառ ժողովրդի մնացորդները, ուժասպառ, հյուծված մնացորդները տակավին մնում են հրոսակախմբերի ու բանակների ոտի տակ։

Շո՛ւտ, շո՛ւտ... և աստծու անեծքը բոլոր հզորների վրա։ Աշխարհքը պետք է նորոգվի։ Էսպես՝ անկարելի է։

Բայց նամակս շատ երկարեց։ Ներեցեք, էս իմ սովորութեանը հակառակ դուրս եկավ։

Գրեցեք խնդրում եմ, շատ շնորհակալ պիտի լինեմ։

Ընդունեցեք մերոնց և իմ լիասիրտ բարևները։

Միշտ Ձեր բարեկամը՝

Հ. Քումանյան

ՀԱԿՈՐ ՍԱՌԻԿՅԱՆԻՆՁ

Ք ի ֆ լ ի ս — Վ լ ա դ ի կ ա Վ կ ա գ

1919 թ. փետրվար

Իմ սիրելի Տեր Հակոբ.

Մեծ ցավով կարդացի նամակդ²։ Տեր Հակոբ ջան, գուցե թե ուրիշ օրերում էնքան խոր չհասկանայի քո վիշտը, ինչքան էս օրերում, երբ աչքերս դեռ չեն ցամաքել որդու կրս-

¹ Խոսքը վերաբերում է Հայկազյան ընկերության հիմնադրմանը։

² Սառիկյան Հակոբ (1872—1946) — հոգևորական, ուսուցիչ և թարգմանիչ։

³ Սառիկյանի որդու մահվան մասին։

կըծից³։ Եվ եթե՝ գիտես, կամ թե չգիտես, գուցե զգում ես, թե ինչքան ջերմ զգացմունքով եմ դեպի քեզ, թերևս դրանով էլ չափես, թե ինչքան կցավեի քեզ համար ու քո որդու համար։

Սասունիկը էս բոպելիս մեզ մոտ է։ Ես նրանից շատ եմ դժգոհ, որ էնքան հաճախ չի լինում մեզ մոտ, ինչքան ես կուզենայի, բայց հիացած եմ նրա վրա, թե ինչքան ինտելիգենտ և ազնիվ մարդ է և ինչպես բարձր հոգիներին վայել հանգստություն մտաբանել իրեն վիշտը։

Երկար պետք է գրեի, բայց ժամանակ չեղավ, եկան խանգարեցին։ Բանն էն է, որ էս երկու օրը իմ ընկերներն ու բարեկամները մի աղմուկ սարքեցին, թե ինչ է՝ լրանում է քո հիսուն տարին։ Ակամայից ընկա հոբելյանի մեջ, որից էնքան շատ էի վախենում։ Եվ ահա, երկու շաբաթ է մի ցուցակ են դրել գրպանումս, թե ամեն օր որտեղ եմ լինելու։ Այժմ ես էլ մի տեսակ թամաշավոր եմ դարձել և զարմանում եմ երկու բանի վրա, մեկ՝ թե ինչքան կենսունակ է մեր ժողովուրդը և բնավ հուսահատվել չգիտի իր շատ խորհրդավոր ճանապարհին, մեկ էլ՝ թե ինչքան զորեղ է ժողովուրդների մեջ համերաշխության ու եղբայրության զգացմունքը։ Հենց նոր մոտս էր մի պատգամավորություն — հայերից, ուսաններից, վրացիներից, թուրքերից ու հրեաներից և հատկապես նրա համար — որ ես եղբայրություն ու համերաշխություն եմ սիրել։

Ձերմ բարևներ մերոնցից, համբույրներով՝

քո Հովն. Քումանյան

¹ Քումանյանի Արտավազդ որդին սպանվել էր 1918-ին, վանի նահանգի ժամանակ։

1920 թ. դեկտեմբերի 18

Հայաստանի Ռեկոմիտի.

Դաշնակից պետությունների ազատ ու հավիտյան հանցավոր քաղաքականությունը, հայ ղեկավար շրջանների անկարողությունն ու քաղաքական անհեռատեսությունը և հայ-թուրքական վայրենի ու անզուսպ թշնամությունը Հայաստանը հասցրին օրհասականի գուռը:

Ամենքից լքված ու հոռաահատված հայ ժողովուրդը իր հայացքը դարձրեց դարձյալ դեպի Ռուսաստանը: Եվ եկավ նա, նոր Ռուսաստանը:

Այժմ նոր, ազատ Ռուսաստանից է կախված՝ ոչ միայն հայ ժողովրդին ազատել վերահաս վտանգից՝ այլև ապահովել նրա անկախ քաղաքական կյանքը, խաղաղ վերջացնել հայկական արյունոտ խնդիրը, հայ ժողովրդին հաշտեցնել մահմեդական հարևանների հետ և արդար աշխատանքի ճանապարհով առաջնորդել դեպի նոր կյանք:

Փոքր ժողովուրդները, հիրավի, զրկված բանվորներ են ազատ ու անխիղճ իմպերիալիստական հզոր պետությունների ճանապարհների վրա:

Նոր Ռուսաստանը, որ գալիս է նրանց հանի էդ ստրկական վիճակից՝ նոր դարաշրջան է բաց անում մարդկության պատմության մեջ, և երանի, վերջապես, ստեղծվեր մի ուժ, որին հավատար ամեն մի ժողովուրդ ու մարդ:

Խորապես ցանկանում եմ, որ Ռուսաստանը շուտով ազատվի անցողական շրջանի դժվարություններից ու դեֆեկտներից և ժողովուրդները նրա հետ կապվեն ոչ թե վախով, այլ սիրով:

Էս զգացմունքով էլ՝ Հայաստան մուտք գործելու հենց առաջին օրերից՝ առաջին հերթին՝ Հայաստանի Ռեկոմիտի ուշադրությունը ես ուզում եմ հրավիրեմ երկու կարևոր հանգամանքների վրա:

Առաջինը սա է:

Անցյալներում, հայ-թուրքական դժբախտ-ընդհարումների ժամանակ դաշնակցությունն է գլխավոր դերը խաղացել, վերջերս էլ նա է եղել կառավարական կուսակցությունը: Էդ պատճառով էլ հայ ժողովրդի լայն շրջանները հարած են դաշնակցությանը:

Հեղաշրջումից հետո շատ մարդիկ, որ անձնական հաշիվներ ունեն իրար դեմ, էդ հանգամանքից առատ նյութ կարող են առնել դավեր լարելու և իրենց հաշիվները մաքրելու իրենց անձնական թշնամիների հետ:

Հայաստանի Ռեկոմիտի պարզ գիտենալով, որ նրանք նույնքան հեշտ դաշնակցական են եղել երեկ, ինչքան հեշտ կոմունիստ են դարձել էսօր՝ լուրջ նշանակություն չպիտի տա նրանց դաշնակցական լինելու հանգամանքին և ընթացք չպիտի տա էդ դավերին, որ կաբող են ծավալվել ու դառնալ համատարած շարիք:

Երկրորդը:

Հեղաշրջումի հետևանքով երկյուղ է տարածվել հայ մտավորականության վրա, որի մի մասը նախորդ կառավարության օրով ծառայության մեջ էր: Նոր դրության անորոշության հանդեպ տարածված երկյուղը կարող է քայքայել ու ցրել մեր առանց էն էլ փոքր մտավորականությունը և առաջ բերել անցանկալի հետևանքներ:

Հայաստանի Ռեկոմիտի պետք է պարզի մթնոլորտը և մարդկանց հանի էդ շվար ու շփոթ դրությունից՝ ցանկացողներին հրավիրելով ազատ ծառայելու իրենց ժողովրդին:

Ամենքի սրտից ասած կլինեմ, եթե ասեմ, թե՛ սպասում ենք էդ կոչին:

Նոր, ազատ Ռուսաստանն էլ, որ գալիս է հաշտեցնի հային ու թուրքին, էսքան մեծ ու փրկարար մի գործ անելու, անշուշտ ինքն էլ հաշտ աշքով կնայի հայ մտավորականությանը, կընդունի նրա մեծ կարևորությունը և ուշադրություն կդարձնի հայ ժողովրդի բանաստեղծի հաշտարար միջամտությանը:

Հովհ. Թումանյան

1921 թ. հոկտեմբերի 4

Ավո ջան.

Ստացել եմ նամակդ: Ասում ես՝ եթե հարմար ժամանակ է՝ կանչի՛ր, ես կգամ:

Հարմար ժամանակը՝ ես չգիտեմ դու որ ժամանակին ես ասում, բայց ասում եմ.

— Արի՛:

— Արի՛, Ավո ջան:

Մեզ համար հարմար ժամանակ չեղավ և գուցե շիհի էլ, բայց արի:

Կգաս, կտեսնես մեր աշխարհքը ավերված, մեր ժողովուրդը կոտորված, կենդանի մնացածն էլ կոտորված, ջարդված, մեր հարազատների ու ընկերների շրջանները նոսրացած: Կտեսնես թե աշխարհքի էս ծով վշտից ինչ ահագին բաժին է ընկել առանձնապես ինձ ու քեզ, բայց արի:

Ես գիտեմ, որ էդտեղ էլ քեզ համար հարմար բան չկա, ոչ տեղ, ոչ ժամանակ, ոչ շրջան, ոչ միջոց:

Վերջապես՝ երևի կարոտել ես մեր հող ու ջրին, քո հարազատներին ու ընկերներին: Էդ ամենի հետ միասին քեզ պետք է ասեմ, որ մեր այժմյան կառավարությունը շատ ավելի լավն է՝ քան կարող ես երևակայել: Մանավանդ գրականությունն ու գեղարվեստը երբեք էսքան ուշադրության առարկա չեն եղած մեր աշխարհքում:

Մինչև իմ նամակի քեզ հասնելը դու արդեն իմացած կլինես, որ մի շարք գրողների ու գեղարվեստագետների կենսաթոշակ են նշանակել, իսկ շուտով կհրատարակվի և կիմանաս, որ տալիս են ամեն արտոնություն, ամեն հարմարություն ու հնարավորություն: Նրանց թվում կկարդաս և քո անունը: Քեզ համար խոսել ենք բոլոր կոմիսարների հետ, առանձնապես լուսավորության կոմիսարի և նախագահի, Մյասնիկյանի, որը քեզանից նամակ ուներ: Եվ ինձ հանձնարարել են, որ քեզ

կանչեմ, որ դու կունենաս ամեն հեշտություն, ինչ որ իրենք կարող են տալ: Ահա գալիս է և Արտ. Կարինյանը՝ նրանց կողմից: Կծանոթանաս, կտեսնես ինչ հրաշալի մարդ է և մեծապես գրական մարդ: Նա քեզ հնարավորություն կտա գալու:

Նույնն են անում այժմ և էստեղ — Վրաստանում: Ես նոր եմ վերադարձել Երևանից: Գնացել էինք Հայաստանի Օգնություն Կոմիտե կազմելու: Կազմեցինք: 80 անդամ ունի: Ամեն հոսանքից ու կուսակցությունից: Անկուսակցական ու շեզոք մի մարմին, որ պիտի գործակցի կառավարությանը — սովոր վերացնելու և երկիրը վերաշինելու: Ինձ էլ հարկադրեցին նախագահությունն առնելու ինձ վրա, իբրև թե իմ անունը կարող է համերաշխությանը նպաստել: Ես ստիպված եղա համաձայնելու, և մոտ առաջիկայում թերևս նույնիսկ գամ Պուլիս: Ես կարծում եմ, էս տեսակի կոմիտեները եթե հիմնվեն ամեն տեղ՝ շատ կօգնեն մեր գծոված շրջանների հաշտությանն ու համերաշխ գործակցությանը: Եվ կուսակցական կոռիպեններ կմեղմանան:

Լավ կլինի, որ դու էլ նպաստես էս գործին էդտեղ:

Երկիրն ավերված է: Երաշտն էլ մյուս կողմից է շատ վնասել: Բայց մեծ շանք են թափում փրկելու և շինելու, և ամեն կերպ պիտի օգնենք: Շատ բան ունեմ գրելու, բայց սպասում եմ — կգաս — կխոսենք և կանենք, ինչ որ կարող ենք անել:

Մի խոսքով՝ իմացիր, որ արդեն ապահով ես էստեղ և կարոտով սպասում ենք ամենքս: Թերևս այժմ կազմենք մեր վերնատունը մեր երկրում ու վերջին օրներս միասին անցկացնենք: Բոլորն այժմ կարող են լինելու իրենց գործով զբաղվեն: Եվ էս բոլոր թշվառությունների ու դժվարությունների մեջ էս ահագին բան է:

Իմ Համլիկն էլ գալիս է էդ կողմերը — իբրև թե ուսանելու: Զգիտեմ ուսանելը կհաջողի թե չէ, բայց գոնե մի քիչ շունչ կքաշի, շատ է տանջվել: Թե պատահես — օգնիր քո խորհուրդներով: Նրա հետ եմ զրկում նամակդ:

¹ Կարինյան Արտաշես (1886—1981) — գրականագետ, երրորդային Հայաստանի պետական գործիչ:

Դե արի՛, Ալլո ջան: Իսկ մինչև գալո՞ղ կարոտով համբույր-
ներ ենք դրկում Չուչիկին, Սոֆիկին ու քեզ:

Քո Օհաննես

ԱՐՇԱԿ ՉՈՊԱՆՅԱՆԻՆ

1921 թ., 6 հոկտեմբերի

Քիֆիս

Միրեքի Չոպանյան.

Մի քանի ժամանակ առաջ ստացա Ձեր նամակը և հուզ-
մունքով տեսա, թե ինչպես է կենդանի Ձեր մեջ ընկերական
սերը դեպի ինձ:

Լիասիրտ շնորհակալ եմ, իմ ազնիվ ընկեր, և փոխադարձ
համբույրներ եմ դրկում: Անհամբեր սպասում եմ, թե երբ
պիտի վերջանա մեր գոթախա խնդիրը իր ամբողջությամբ,
որ կարողանանք անցնել մեր սիրած գործին — շինարարա-
կան գործի, կուլտուրական աշխատանքի, և Դուք էլ էղբան
նուրբ ու ճաշակավոր մի գեղարվեստագետ՝ Ձեր գործին
անցնեք:

Ես նոր եմ վերադարձել Երևանից՝: Մեր երկիրը շատ է
ավերվել վերջին տարիների ընդհարումներից: Ամեն անգամ,
որ թուրքերն առաջ են անցել, աշխատել են հիմնովին փշա-
ցնել երկիրն ու ցեղը:

Դուք արդեն գիտեք իմ հին կարծիքը, թե էս հանգամանք-
ներում՝ Ռուսաստանն է մեր փրկությունը: Եվ էս անգամ էլ,
նույնիսկ էս հարբած վիճակի մեջ, ռուսները մեզ ազատեցին
վերջնական փշացումից:

Ավերումի վրա ավելացավ էս տարվան երաշտը մեր երկ-
րում: Բայց պետք է վկայեմ, որ մեծ թափով ու մեծ անկեղ-

ծուծյամբ են մարդիկ աշխատում փրկել ժողովրդին ու վերա-
շինել երկիրը: Եվ անշուշտ պիտի հաջողեն, եթե արտաքին
մի որևէ գոթախա անակնկալ շխանգարի:

Նախագահը՝ Մյասնիկյանը և իր ընկերները արժանի են
ամեն գովասանքի և աջակցության:

Եվ համոզված եմ, մոտիկ ապագան պիտի ապացուցանի
իմ խոսքերի ճշմարտությունը: Ամեն կողմից պիտի նրանց
սիրեն ու գործակցեն:

Հենց նրանց գործակցելու համար էր, որ հավաքվել էինք
Երևան և կազմեցինք Հայաստանի օգնության կոմիտեն, որի
մեջ մտնում են ամեն կուսակցության մարդիկ՝ 80 հոգի: Կո-
միտեն անկուսակցական է և շեղոք, երկրի մեջ գործելու է
ազատ ու արտոնյալ և իր ճյուղերը կունենա բոլոր գաղութ-
ներում: Միանգամայն անկախ արդեն Պոլիս կազմած են էղ
տեսակ մի մարմին — ապացույց, թե ինչքան հասունացած
է գործը: Նպատակն է ժողովրդին ազատել սովից և երկիրը
վերաշինել...

Ռուսները խոստացան ամսական 25 հազար փութ ալյուր:
Եվ պետք է ասել, որ Ռուսաստանը շատ բան է դրկում՝ գյու-
ղատնտեսական գործիքներ մանավանդ: Շուտով ուղարկելու
են շթի ու այլ գործարաններ:

Հակառակ իմ կամքի, որ ուզում էի նվիրվել գրականու-
թյանը, և խուսափում եմ էս տեսակի գործերից, էս անգամ
էլ ինձ ստիպեցին հանձն առնել կոմիտեի նախագահությունը:
Հանձն առա պայմանավոր, որ ավելի անվանական լինեք,
քան իրական: Ասում էին և պնդում, որ իմ անունը իբրև թե
կօզնի հաշտության և ընդհանուր համերաշխության գործին:
Սրա համար, հարկավ, ես ոչ միայն անունս, այլ շատ ավելի
բան կտայի: Հեռավոր ճանապարհորդությունները էս նպա-
տակով մեքծելով՝ առայժմ հանձն եմ առել Պոլիս գալու մոտ
առաջիկայում՝:

Սակայն, ինձ թվում է, որ շուտով էնպես մի հոսանք է
սկսելու ինքն իրեն, որ ճանապարհորդություններ ու հորդու-
րներն ավելորդ են դառնալու: Թերևս Ձեզ առանձնապես հե-

¹ 1921-ի սեպտեմբերին Թումանյանը Երևան էր ժամանել մասնակցելու
Հայաստանի օգնության կոմիտեի հիմնադիր ժողովին:

¹ Թումանյանը Կոստանդնուպոլիս մեկնեց 1921-ի հոկտեմբերին:

տաքրքրեր սրանց վերաբերմունքը դեպի գրականությունն ու գեղարվեստը:

Պետք է պատասխանեմ, որ աննախընթաց լավ է: Դեռ սկիզբն է: Բայց եթե էսպես էլ շարունակվի, որին չեմ կասկածում, մեր աշխարհում, կարող եմ ասել, արդեն ապահով են գրականության և գեղարվեստի մարդիկ:

Շուտով կկարդաք դեկրետները¹, որով կենսաթոշակ են նշանակում 18 հոգու առաջին հերթին:

Բայց գլխավորը կենսաթոշակը չէ, այլ էն պայմանները, որ նույնպես շուտով կհրատարակվեն: Նույնն են անում և վրաստանում:

Ես համոզված եմ, որ Եվրոպայում էլ կկազմակերպվի Հայաստանի օգնության կոմիտեի և Դուք ջերմ մասնակցություն կունենաք էդ գործի մեջ:

Միևնույն Չոպանյան, խնդրում եմ իմ ջերմ բարևներն ու հարգանքը հայտնեք մեր վաստակավոր Նուբար փաշային²: Մի քանիսին էլ նամակներ եմ գրում:

Ընկերական բարևներով ու համբույրներով՝
Ձեր Հովհ. Քումանյան

ԻՐ ԶԱՎԱԿՆԵՐԻՆՅՑ

Պ ո լ ի ս — Թ ի Փ ի թ

1921 թ. նոյեմբերի 2

Իմ ջանիկ-մանիկներս: Հսքան ժամանակ, որ ինձանից տեղեկություն չունեք, երևակայում եմ, թե ինչքան եք անհանգրստացել ու ինչեր եք մտածել: Դժբախտաբար, ինչ եկել եմ — վերադարձողի չեմ պատահել, որ նամակ գրեի — մի կողմից,

¹ Խոսքը վերաբերում է գրականության և արվեստի զործիչներին կենսաթոշակով ապահովելու Հայաստանի ժողովուրդի դեկրետին:

² Պողոս Նուբար փաշա (1871—1930) — ազգային հասարակական գործիչ:

³ Այս նամակը Քումանյանը գրել է Կոստանդնուպոլսից, որ գտնվում էր Հայաստանի օգնության կոմիտեի գործերով:

մյուս կողմից էլ՝ ասել եմ՝ էսօր կգնամ, էգուց-կգնամ ու էդպեսով էլ ետ է ընկել:

Ստացել եմ երեքիդ նամակն էլ: Արոյանն էլ պատմեց, որ ձեզ մոտ էր եղել, տեսել է, հետներդ խոսել է: Մի խոսքով — դուք իսկի չեք կարող երևակայել, թե ինչքան եմ կարոտել և ինչքան եմ անհանգիստ: Էստեղ շատ են զարմանում ու զգացվում հաճախ, երբ տեսնում են էս ամենը: Իրիկունները պառկում եմ թե չէ՝ սկսում եմ ձեզ վրա մտածել — և ամբողջ գիշերները քնել չեմ կարողանում: Անդադար երևակայում եմ ճանապարհն ու տուն հասնելը և ձեզ:

Թեև, կարծում եմ, ապահով պիտի լինեք, բայց միշտ մտածում եմ, թե ով գիտի ինչ նեղություններ եք քաշում:

Եկա էստեղ էլ հասա Համլիկին¹: Մի ամիս ինձ հետ էր: Նոր գնաց: Գիրքս տվի տպագրության²: Համլիկի համար էլ լավ եղավ: Լևուսի³ — Զարգարյանի հետ միասին էին ապրում: Լևուսը առայժմ մնաց:

Ինչպես երևում է լրագիր չեք կարդում, և չեք իմանում, թե ինչ օրի եմ էստեղ: Օրը մի քանի տեղ — հանդեսներ ու աղմուկներ, իսկ գնացող եկող — էլ մի՛ հարցնեք: Շատ օր ոչ թե չեմ կարողանում ճաշել, ժամանակ չի լինում, մինչև անգամ թեյ չեմ կարողանում խմել: Իսկ երեկ — երեսու լվանալ անգամ չկարողացա:

Եվ երեկվանից էլ հրաժարվեցի էն բոլոր տեղերից, որ խոսք էի տվել գնալու: Այժմ պատրաստվում եմ գալու: Էս նավին չհասանք — և դրանով էլ ուղիդ տասն օրով ետ եմ ընկնում, ուղիդ 10 օր կամ 10 տարի ձեզ եմ տեսնելու:

Ձեմ ուզում շատ բան գրեմ, քանի որ գալու եմ: Միայն էնքանը, որ ամեն բան հաջող անցավ և դեռ մի բան էլ ավելի եղավ:

Շատ եմ զղջում, որ մեկիդ կամ երկուսիդ չբերի: Մի ուրիշ անգամ գալու եմ ձեզ հետ մի ամսով — ավելին չարժե: Առայժմ անվերջ համբուրում եմ ամենքիդ և բարևում մեր բոլոր

¹ Քումանյան Համլիկ (1896—1937) — բանաստեղծի որդին:

² «Բանաստեղծություններ» ժողովածուն Պոլսում լույս է տեսել 1922-ին:

³ Բանաստեղծի ընկերոջ՝ Արիստակես Զարգարյանի որդին:

մատիկներին: Շատ ու շատ եմ ցավում, որ էնպես շտաբա
բանը, որ գուցե հաջողեր — Գրիշեն՝ հետո լիներ:

է՛հ, մախլաս:

Նորից ու նորից համբուրում եմ ձեզ ամենքիդ:

Հայրիկ

Նամակս գրեամ եմ վառզ — Կարինյանի մոտ:

ԱԼԵՔՍԱՆԻՐ ՄՅԱՍՆԿՅԱՆԵՆՆԸ

Ք ի Ֆ ի ս — Ե ր և և

1922 թ. հունիսի 17

Ազնիվ բարեկամ Ալ. Ֆյոդորովիչ:

Մինչև օրս չկարողացա էնքան կազդուրվեմ, որ տանից
դուրս գամ և անձամբ շնորհակալություն հայտնեմ Ձեզ մեր
կառավարության ցույց տված վերաբերմունքի համար իմ հի-
վանդության ժամանակ:

Ես համազված եմ, որ էդ վերաբերմունքը միանգամայն
ուրիշ կերպարանք ու հետևանք էր ունենալու, եթե խորհրդա-
լին դրամանիշների հայտնի կարգադրությունը՝ չլիներ Վրաս-
տանում:

Եվ ահա այժմ էլ, տեղեկանալով իմ հանգամանքների մա-
սին, երբ նորից մտահոգված եք իմ խնդրով, հայտնում եմ
լիասիրտ շնորհակալություններս և իմ ցանկությունն ու խըն-
դիրը, որ ամեն դեպքում ինկատի ունենաք, թե իմ ունեցած
արժեքավոր գրքերն ու հին նկարները, որոնց որոշընք ու գեա-
հատելը թողնում եմ կառավարությանը, և թե իմ մանկական

¹ Գրիգոր Մալյան (1880—1937) — բժիշկ, բանաստեղծի մաերիմ ըն-
կերներից մեկը: Թումանյանի ափոսանքի պատճառն այն է, որ Պոլսում
արդեն սուր կերպով զգացվել է նրա մեջ բուն դրած անբուժելի հիվանդու-
թյունը:

² Ալեքսանդր Մյասնիկյան (1886—1925) — պետական-կուսակցական
ափանավոր գործիչ, գրականագետ:

³ Խոսքը վերաբերում է թղթադրամը շերվոնեցով փոխարինելուն:

գրվածքների ժողովածուն, և թերևս նաև գրելիքները, որոնց
համար, հարկավ, պետք է բանակցության մտենք մեր լուս-
ժողովմատի հետ:

Ձեզ խորապես հարգող

Հովն. Թումանյան

ՊՈՂՈՍ ՄԱԿԻՆՅԱՆԻՆ

Ք ի Ֆ ի ս — Ե ր և և

1922 թ. հուլիսի 22

Սիրելի Պոլոս:

էսօր քեֆս շատ է խարաբ: Պոլիս տպագրության էի հանձ-
նել բանաստեղծություններս մի ժողովածու: Ստացել եմ
դեռ չկազմած մի օրինակը լիքը տպագրական սխալներով,
մի շատ անբարեխիղճ կամ անփորձ որբագրչի ձեռքի տակից
անցած մի գործ: Գրում եմ, որ ինչ որ կարելի է ուղղել — ուղ-
ղեն:

Տեսնենք ինչ դուրս կգա:

Քանք մեր գործին:

Ասում ես՝ մի գումար ես ձեռք բերել և ուզում ես ինձա-
նից մի քանի բան գնես: Շատ լավ. բարով հազար բարի: Ինձ
էլ մի էդտեսակ մուշտարի է հարկավոր էս վատ ժամանակս,
որ համ փող ունենա, համ էլ շաշ ըլի՞:

Ասում ես՝ ինչ ունեմ:

Ասեմ ինչ ունեմ, ախպեր:

1. Ունեմ սրանից մի 17 թե 18 տարի առաջ գնած հին
դրվածեմաններ. Ներսես V-ի կանգակների սեպագրության դավ-
թարք, որի մեջ շատ քան կա մեզ հասարակական-գրական

¹ Մակինյան Պոլոս (1884—1937) — պետական-կուսակցական գոր-
ծիչ, գրականագետ:

² Խորհրդային Հայաստանի լուսավորության ժողովրդական կոմիսար Պ.
Մակինյանը պետք է պատմական և գեղարվեստական արժեքներ ձեռք բե-
րեր Երևանի թանգարանների համար:

(մանավանդ Միք. Նալբանդյանին) և քաղաքական կյանքին (կաց գրիչս փոխեմ) վերաբերող նյութեր: Նույնպես և իր ժամանակին հայտնի Զալալյան արքեպիսկոպոսի գրությունները Պոլսի մեծամեծների և պաշտոնական մարդկանց, ինչպես և ուսւ բարձր պաշտոնյաների հետ:

Գնել եմ երկու տեղից: Երկուսն էլ կան: Վճարել եմ 200—300 ուրբի: Էս մին:

2. Ունեմ հուանդական մեծ մինիատյուրիստ Կալֆի գործը, որ կլասիկ գործ է: Կարող ես կարողալ Բրոկկաուզի էնցիկլոպեդիայում (հավելվածում) կամ Большая энциклопедия-ում, և կտեսնես, որ ասված է, թե եվրոպական մուզեյները Կալֆ են որոնում, և որ Ռուսաստանը ունի 2 թե 3 հատ, լավ չեմ հիշում, էրմիտաժում, համարներն էլ նշանակված են էնցիկլոպեդիայում:

Անցյալները մոտիցս տարան ստուգելու: Եկան հայտնեցին, թե իսկական Կալֆ է, և պատերազմից առաջ գինը (Կալֆի) եղած է քսանհինգ հազար ուրբի ամենաքիչը: Ռուսներ էին: Ես իհարկե շատ քիչ եմ հասկանում, եթե ավելի պակասը շասեմ:

Եթե ձեզ հարկավոր է, և եթե ճիշտ Կալֆ է, եթե էղթան էլ թանկ արժի — վճարեցեք մի քսանհինգերորդ մասը գնի, ու տարեք, ձեզ հալալ: Դրանից հետո 3. Ունեմ «Գրաֆիչե Կունստի» և «Մոդեռն Կունստի»¹ 50 տարին, ամեն մեկից 25 տարի: Էստեղ ստացված են Գերմանիայից կատալոգներ, որոնց մեջ նշանակված է, թե դրանք բարձրացել են 10 անգամ: Մանավանդ նշանավոր է Գրաֆիչե Կունստը: Ես, իհարկե, դարձյալ հմուտ չեմ սրան էլ: Եթե ախորժակ ունեք, էս էլ լավ ապրանք է:

4. Ձեզ համար, իհարկե, ինչպես և գրում ես, շատ լավ ապրանք է իմ մանկական գրականությունը: Կուզեք մի գրքի մեջ միասին հրատարակեցեք, կուզեք առանձին-առանձին, հարկավ պատկերազարդ: Կլիշեներն էլ հազիր կան:

Իհարկե առանձին-առանձին ավելի լավ է և ձեռնառու երեսխաների համար: Ընտրությունը կանենք միասին:

Բայց ասեմ, որ դրանց մասին էստեղ ուզում են խոսք գցեն ամերիկացիների հետ, որ նրանք հանձն առնեն:

էդ հեշտ է:

5. Սրանից պատրաստի ու տպագրված և սպառված նյութերից ավելի ձեզ վայել գործ է, եթե նոր մանկական գրվածքների համար ինձ հետ առուտուր անեիք: Օրինակ. եթե հարմարություն տաք նոր մանկական գրվածքներ տալու մի «Հազարան բլբուլ», իբրև հեքիաթ, երգախառն, որ թերևս ավելի պատանիների համար լինի, էնպես էլ շատ ու շատ և լավ նյութեր ունեմ հավաքած կամ կիսատ-պոստ ընկած:

Մինչև էսօր չեմ կարողացել պարապեմ, մշակեմ՝ քեզ էլ, աշխարհքին էլ շատ հայտնի պատճառներով:

Հիմի էլ եկավ էս հիվանդությունս վրա հասավ. երկու հարյուր միլիոնից՝ ավելի պարտք է ծանրանում վրես: Ամիսը քսան միլիոն միայն տպիսս եմ վճարում: Դեռ ողորմի շատերի հորը, որ տոկոս չեն առնում:

Համ էս պարտքերի տակիցը պետք է դուրս գամ, համ ինձ ու երեսխաներիս կազդուրեմ, որ կես տարի գիշեր-ցերեկ ոտի վրա անքուն հսկելուց ուժասպառ են եղել, համ էլ պետք է սովորական ծախքերը հոգամ մնացածի: Համ էլ գրեմ:

Եվ ինչ ես կարծում, էս ամենի վրա ծիծաղելով՝ մեմեն գրում եմ, էն էլ էղպես բաներ, ինչ որ դրկել եմ ձեզ², իսկ ավելի երկարաշունչ գործերը մնում են մոտս, ինչպես ասի, կիսատ-պոստ:

Անշուշտ մի նոր «Քաջ Նազար» կամ մի նոր «Մի կաթիլ մեղրը» ձեռք բերելը ձեզ համար ավելի թանկ բան պիտի լինի, քան ուրիշ շատ թանկագին պատրաստի բաներ: Սրանց եմ օրինակ բերում, որովհետև իմ կարծիքով սրանք եվրոպական մանկական գրականության մեջ էլ պիտի որ նկատվեն: Համարձակություն ունեմ էսպես ասելու. թող ամբողջ գրական աշխարհքի քննությանը առաջարկվի «Քաջ Նազարը» և Գրիմի «Անվախ դերձակը», որ թարգմանված է ամեն լեզվով և գովված ու հռչակված ամեն լեզվով:

¹ Միլիոնները պետք է հասկանալ ռոններով:
² Բանաստեղծն աչքի առաջ ունի իր վերջին գրվածքները՝ «Սիրիուսի հրածեղը», մի քանի բառյակ և Խաբանիի բառյակների թարգմանությունները:

¹ «Գրաֆիկական արվեստ» և «Արդիական արվեստ»:

Սա ձեզ էս տեսակ հեքիաթներ կամ այլ մանկական գրքավածքներ կարող եմ տալ: Եվ ոչ կզղաք, ոչ վնաս կանեք:

Սա է ամենից ուղիղ ճանապարհը. ինչ որ ունեի՝ բոլորն ասի: Հիմի դուք գիտեք:

Միայն եթե օգնելու եք — այսինքն սրանց դիմաց բան եք տալու՝ շուտ արեք:

Թեև առանց էն էլ ուշ է, որովհետև ոչ ամառանոց կարողացա գնամ էսքան տանջվելուց հետո, ոչ էլ էստեղ կազդուրվել, ոչ էլ երեխաներին հոգալ:

Ասում ես՝ մանկական գրականության սով է:

Ծիշտ ես ասում: Բայց միայն էսօր չի էդ սովը: Էդ սովը միշտ եղել է և էսքան մանուկներ ունեցող էս ժողովուրդը կամ նրա մտավորական ղեկավարները **հրքեք շհասկացան, քե քնչքան ահուկի աղետ է էդ սովը և ինչ պետք է անեն սրա առաջըն առնելու համար:**

Եթե ավետարանից խոսենք, ծարավ մանուկներին մի բաժակ ցուրտ ջուր տվողը արքայություն է գնալու, ապա էս գեպքին հարմարացնելով հոգով սոված հայ մանուկներին մի լավ մանկական գրվածք, մի լավ հեքիաթ հոգացող շաշ նարպողոսն էլ գուցե էսքան մեղքերից հետո՝ արժանանա հայր-Աբրահամի և բոլոր քաշալ ծերունիների հետ միասին բազմելու և հավիտյան տերօղորմյա քաշելու դրախտի խնկի ծանոթի տակ:

Մի ժամանակ Հայոց Հրատարակչական Ընկերություն կար: Օրերից մի օր էդ հանգուցյալի քիթն էլ մի էդ տեսակ քամի մտավ, թե մանկական գրականության սով է և էդ սովը պետք է վերացնել: Ինձ առաջարկեցին թարգմանել Գրիմմի բոլոր հեքիաթները: Էջը մի ոսկով (տասն ուրբի¹): Նայեցի Գրիմմի հեքիաթները և հայտնեցի, որ ես միայն մի քանիսը կթարգմանեմ: Նրանք կարծում էին, թե փողը ինձ կարող է հրապուրել և տանել ուր ուզի: Էդպես էլ արի: Մի քանիսը թարգմանեցի, դեռ նրանց մեջ էլ — մի երկուսի մեջ — որոշ փոփոխություններ արի ու պատճառարանած տվի իրենց: Իհարկե տպեցին: Կարծում են թե էն է՝ հենց անունը հեքիաթ է, վերջացավ: Գրիմմի անունն էլ վրեն: Կարծում են հեշտ բան է

* Հնդունվածը հիսուն կոպեկն էր:

հեքիաթ մշակելը: Գրիմմները հազիվ մի քանի հեքիաթ ունենան մշակված: Մնացածը ժողովրդական հեքիաթներ են, խառնած, ազավաղած ու փշացրած:

Ռուսները երկու հատորանոց մի գիրք են հրատարակել — իրենց մանկական գրականության մասին, և խոստովանում են, որ Պուշկինից հետո, կամ ավելի ճիշտը՝ «Ոսկի ձկնիկից» հետո — նրանք՝ մինչև էսօր չեն կարողացել մի հեքիաթ մշակել իրենց էնքան առատ ու լավ հեքիաթներից:

Իմ կարծիքով ես միայն մի հեքիաթ եմ մշակել կարգին (գուցե չնչին պակասություններ ունենա, ով գիտի) և դա «Քաջ Նազարե» է: («Մի կաթիլ մեղրը» առակ է, թեև ուսուները վրեն գրել են *сказка*): Եվ այժմ եթե ասում եմ «Հաղարան բլբուլը» կտամ, որովհետև հավաքել եմ երկար տարիների քննադատում նրա վաթսուներից ավելի վարիանտները: Հեքիաթի մասին ոչ միայն մեք «երջանիկ» աշխարհում — ավելի լավ երկրներում էլ դեռ պարզ հասկացողություն չունեն: Կարծում են դա հեշտ ու հանաք բան է: Դա գրականության մեջ ամենաբարձր արտահայտությունն է — ուր ամբողջը հավիտենական սիմվոլներ են:

Եվ այժմ գրականության մեջ սիմվոլիզմը ոչ այլ ինչ է, եթե ոչ մի հանդուգն ձգտում հեքիաթին մոտենալու: Բայց նախակա շատ երկարեց: Էս անգամ էսքան խելոքացիր, մնացածը երբեիցե:

Վահանի ժողովածուն¹ լավ էս անում, բայց շուտ արա:

Ուղղագրությունը՞ գալով՝ ես հոռառությունով ասում եմ, որ դա չի անցնելու ամբողջովին — օրինակ ա-ի և յ-ի պատմությունը: Ոչ թե պետք է հին հնչյունները վերականգնել, այլ մաշվածները դեն գցել, ինչպես ուսուներն արին: Ոչ թե պետք է դժարացնել, այլ պետք է հեշտացնել: Եվ շպետք է էդ խնդրքն էդ կերպարանքը տալ — պատվասիրություն ու շեմ իմանում ինչ բաներ կապել հետը:

Վերջապես՝ շատ բարեկեհ մեթոդներից ու ինձանից —

քո Հ. Թումանյան

¹ Վահան Տերյանի քառահատոր ժողովածուն, որ կազմում և խմբագրում էր Պ. Մակինցյանը (լույս տեսավ Պոլսում 1923—25 թթ.):

² Խոսքը վերաբերում է հայոց լեզվի ուղղագրության 1922 թ. փոփոխություններին:

1922 թ. 20 օգոստոսի

Միրելի Մեսրոպ սրբազան.

Նամակդ շատ ցավ ազդեց: Բավական կոտորված ես երեւում: Շատ զուր: Աշխարհք է, ինչ ասես կպատահի. և ամեն հանգամանքում էլ մարդ պետք է Քրիստոսի մնա: Քեզ համար քու գիտությունով պարապի. գործդ² գետնին հո չի մնալու:

Հապա ես ի՞նչ անեմ: 25 բժիշկն էլ մնացել էին զարմացած, թե ինչ հանգստություն տարա էն տանջանքներն ու էն օպերացիան: Եվ մեծ հաճությամբ նկատեցի, որ իմ վերջին շրջանի փիլիսոփայական տրամադրությունը թեթև ու անցողակի մի երևույթ չի: Մահի հետ էլ եմ հաշտվել: Եվ էն վայրկյաններին, երբ բացարձակ հուսակտուր էին լինում շուրջս ու վախենում — ես մի զարմանալի հանգստություն էի անց կացնում էդ ճգնաժամերը: Այժմ էլ հիվանդությունս կերպարանքը փոխել է, և թե կուզես այժմ ավելի վտանգ կա, թեև ոչ անմիջական, քան առաջ. համոզված եմ, որ եթե մի հրաշք չպատահի — արդեն մոտիկ է խորհրդավոր ժամը, և ամենայն հանգստությամբ անցյալ օրերը բոլոր կիսատ-պոտատ ձեռագիրներս ոչնչացրի, մտածելով, թե վերջացնելու ժամանակ չեմ ունենալու, էսպես էլ չեմ ուզում մնան: Վերջապես մեր կյանքը հո սրանով չի վերջանում:

Այսուամենայնիվ վշտանալու առիթ կա, հիրավի, եթե ոչ հուսահատվելու: Փոխանակ օգտվելու թե քո, թե Գարեգին եպիսկոպոսի ուժերից — ետ են մղում:

Մի խոսքով աշխատանքն է ամենալավ միջոցը էս ամենը մեղմելու:

Ես էլ միառժամանակ եռանդով աշխատեցի. բայց շատ կարճ տևեց: Ցավերս շուտով վրա հասան: Սակայն էլի աշխատում եմ նորից կարգի ընկնեմ:

1 Տեր-Մովսիսյան Մեսրոպ (1864—1939) — հայագետ, բանասեր, հուսկոպոս գործիչ, Վրաստանի հայոց թեմի առաջնորդը:
2 «Ցուցակ հայոց ընդհանուր ձեռագրերի» աշխատությունը:

Գիտես էլի, թե ինչ նստեց ինձ էս հիվանդությունը: Բացի էն, որ ես դարձա էսպես մի կարկատած մարդ, աղջիկներիցս երեք-չորս հոգի ուժասպառ եղան էսքան ամիս հսկելուց ու տանջվելուց անքուն գիշերներով. տեղիցս վեր կացա՝ տեսա երկու հարյուր միլիոն պարտքի տակ եմ արդեն և ամիսը 20 միլիոն տոկոս եմ տալիս: Մեր փողով — վրացական: Ամառն էլ չկարողացա քաղաքից հեռանամ, սնունդս էլ վատ եղավ, և ահա նորից հիվանդ: Բայց իսկի բանի տեղ չեմ դնում էս ամենը. միայն երեխանցս հիվանդությունն է ինձ շատ տանջում: Պարտքերիցս էլ երևի շուտով կազատվեմ: Կառավարության հետ պայմանավորվել ենք, որ մի երեք գրվածք տամ, մի հազար ռուբլի ոսկով — էդտեղից եմ սպասում. էդպես էլ ամերիկացիք են մանկական գրվածքներս ուզում, տեսնե՞ք: Մի խոսքով անց կրկացնենք:

Մտածում եմ մի կարճ. ժամանակով գնամ Շուլավեր. Մուշեղն էստեղ է իր ընտանիքով: Երեխանցն էլ տանեմ, մի քանի օր ապրենք, մի քիչ գուցե կազդուրվենք:

Մեծ տրամադրություն ունեմ պարապելու, բայց ուժ չկա:

էս հիվանդության էլ մի բանը լավ եղավ, որ ազատվեցի մի քանի նախագահություններից և անվերջ ու անխուսափելի ժողով-մողովներից:

Շարունակ ուզեցի Լոռի — մեր գյուղում մի հարմարություն նստեղծեմ, էստեղ քաշվեմ ապրելու և պարապելու — չեղավ: Երևի էդպես էլ զլուխ չի գալու:

է՛հ, աստված էլածն օրհնի:

Եթե աշխարհքը մեզ հետ չի գալիս, մենք պետք է աշխարհքի հետ գնանք: Մեր ուժի պատածը պետք է անենք — ավելի հո չենք կարող:

Նոր ուղղագրության հետ ո՞նց ես:

... Մ. Արեղյանի ետևից գնացողը, իհարկե, պետք է միջին դարերը գնար: Չեն էլ հասկանում, թե բացի շատ թերություններից — ինչ հետադիմություն է: Իբրև թե ուսններին են հետևում: Նրանք ասում են՝ ինչ մաշվել է՝ դեն ենք գցում: Սրանք ասում են՝ միջին դարերում էսպես էր — վերականգնում ենք:

Առաջին բողոքը ես ղրկեցի: Հետո նամակագրութիւն, հետո անձամբ քֆրել, և այլն, վերջը ճշմարիտը սա է — որ դուրս չի գնալու էսպես:

Տեսնում ես. բավական երկար նամակ գրեցի: Հալա դեռ շատ բան էլ նոր միտս ընկավ: Էն էլ հետո:

Ղոչաղ կաց, սիրտդ մի կտորիք:

Բարեւում են մերոնք բոլորը:

**Համբույրներով
Քո Հովհաննես**

ԱՅՐԲԵՆԱԿԱՆ ՑԱՆԿ

Ա

- Աղամյանի օրերից — 412
- Ազգերի պատերազմը և իրենց դյուցադուները — 374
- Ալեքսանդր Մյասնիկյանին, 1922, հունիսի 17 — 526
- Ահա թե ինչու — 315
- Ահմադը — 42
- Ադեո է, ոչ թե քաղաքականութիւն — 393
- Աղքատի պատիվը — 7
- Ամենքը միասին — 297
- Անբան Հուսին — 140
- Անգին քարը (արաբական ժողովրդական հեքիաթ) — 193
- Անգիտակից թշնամիներ — 366
- Անդրանիկ Օզանյանին — 434
- Անխելը մարդը — 97
- Անկեղծ շենք — 246
- Անհաղթ աքլորը — 135
- Անտառի տնակը — Գրիմմ եղբայրներ — 168
- Ավետիք Բահայանին. 1921, հոկտեմբերի 4 — 520
- Արեւիքի նոր դարագլուխը — 419
- Արիտասէս Ջարդարյանին, 1906, մարտի 9 — 490
- Արձան Խաչատուր Աբովյանին — 303
- Արմենուհի Տիգրանյանին, 1912, օգոստոսի 2 — 506
- Արշակ Չոպանյանին. 1909, հունիս — 498

- Արշակ Չոպանյանին. 1921, հոկտեմբերի 6 — 522
 - Արշաորս — 32
 - Արսեն Ղլտճյանին. 1898, հունիս — 465
 - Արտավազ Թումանյանին. 1913, դեկտեմբեր — 508
- Բ**
- Բարեկենդանը — 136
 - Բաց նամակ Սեդիկ Գորոզեցիկուն — 445
- Գ**
- Գաբո բիձու շերտապահութիւնը — 36
 - Գալուստ Տեր-Մկրտչյանին (Միաբան). 1912, մայիսի 25 — 501
 - Գավառական երեկույթներ — 301
 - Գելը — 68
 - Գեղարվեստը հայրենիք ունի — 418
 - Գեղեցկուհի Վասիլիսան (ռուսական ժողովրդական հեքիաթ) — 182
 - Գիթորը — 16
 - Գնանք — 455
 - Գրազը — 45
 - Գրախոսութիւն. Մոսկուայից Պետրոս: Բանաստեղծութիւններ — 235

Գ
Գառնացած ժողովուրդ — 283
Գեպի մեծ կյանք — 386
Գարոց և գրականություն — 340

Ե
Եղեմական ծաղիկը — 148
Եղջերուն — 50
Երեկվան պատմությունը և այսօրվան իրականությունը — 310
Երեք արշի հեքիաթը — և Տոլստոյ — 230
Երկաթուղու շինությունը — 39
Երկու հայր — 38
Երկու մեծ թիֆլիսեցիներ — 337

Զ
Զապել Եսայանին. 1916, օգոստոսի 1 — 514
Զգույշ պետք է լինել — 302
«Զինվորապետի կեն» — 429

Է
«Էս, էդ, էն-ի մասին» — 280

Ը
Ընտանիքին. 1915 — 513

Ք
Քանկ մարդու հիշատակին — 391
Ք. Քորամանյանի դասախոսությունների առթիվ — 368
Քիֆլիսի հայոց երաժշտական ընկերությանը. 1912, դեկտեմբերի 30 — 506

Քյուրիմացույցի մուքի մեղ — 258
Քորամանյանի «Քնդանոթները» — 370

Ի
Իմ ընկեր Նեստե — 89
Իմ պատասխանները և կան Կիպիանուն — 445
Ինքնակենսագրություն — 242
Իր գավակներին. 1921, նոյեմբերի 2 — 524

Լ
Լեզվական փոխառությունները — 278
Լեոյին (Առաքել Բաբախանյան). 1902, հոկտեմբերի 27 — 481
Լ. Ն. Տոլստոյի մահվան առթիվ — 293
Լսենք ու պաշտպանենք — 371
Լուսերեսն ու Վարդերեսը — Գրիմ և հղբայրներ — 200

Լ
Լեւոնն ու հիմարը — 120
Լոսոզ ձուկը — 122
Լոսք իր հիանամյա հորեկյանի առթիվ — 444
Լոսք Հայաստան գնացող մի խումբ բժիշկներին — 449
Լոսք Մերենցի գերեզմանի վրա — 352
Լոսք պատանիների երեկույթին — 342
Լոսք սկսնակ բանաստեղծներին — 422
Լոսք Վ. Բրյուսովի դասախոսությունների առթիվ — 398
Լոսք Բաֆֆու գերեզմանի վրա — 346
Նոսք ուղղված Վ. Բրյուսովին — 399
Խորմյան և Իզմիրլյան — 298

Ս
Սղրիդը — 62

Կ
Կացին ախպեր — 106
Կիկոսի մահը — 162
Կովկասի մեծ որդեգիրը — 376
Կոնատ աղջիկը — 126

Հ
Հակոբ Սառիկյանին. 1919, փետրվար — 516
Համաշխարհային գրական տոներ — 404
«Համլետի» շարչարանի շարաթը Քիֆլիսում — 270
Հայաստանը պետք է խոսի — 430
Հայաստանի ուկրաին. 1920, դեկտեմբերի 18 — 518
Հայաստանի Օգոստյան Կոմիտեի կողմ — 459
Հայ գրականության վիճակը — 448
Հայ գրողներին — 300
Հայ Գրողների Ընկերության կողմ — 379
Հայի ոգին — 275
Հայկազյան ընկերությունը — 431
Հայկական հարցն ու իր լուծումը — 325
Հայոց գրամբյանիզմն ու ես — 353
Հայոց թատրոնի բացումը — 290
Հայոց նոր գրականության հիսնամյակը — 248
«Հայոց պատմություն» — 306
Հայոց պատմությունը — 402
Հանգիստ ու լիբը հավատով — 388
Հանգրե՛ք հրդեհը — 437
Հենգելն ու Գրեյտը — Գրիմ և հղբայրներ — 211
Հենրիկ Սենկևիչի մասին — 421
Հիշողություններ էջմիածնի որբանոցից — 389
Հիրավի Աղայանը մեռավ — 456
Հորեկյանների դեմ — 262
Հովհաննես Քորամանյանի բողոքը

դաշնակցության ավանտյուրայի դեմ — 457
«Հովիտի» Ս. Ն.-ի քննադատականի առիթով — 344
Հսկայի ազատությունը — 425

Ջ
Չախորդ Փանոսի հեքիաթը — 165
Չեն ու հոգին — 266

Ղ
Ղ. Աղայանց (քառասնամյակի օրը) — 241

Ճ
Ճամփորդներ — 105

Մ
Մ. Արեղյանի ուղղագրության առաջիկ — 461
Մայրը — 49
Մարիամ Քումանյանին. 1899, հուլիսի 24 — 469
Մարիամ Քումանյանին. 1899, օգոստոսի 12 — 471
Մարիամ Քումանյանին, 1901, հուլիսի 19 — 473
Մարիամ Քումանյանին. 1902, սեպտեմբերի 30 — 478
Մարիամ Քումանյանին. 1909, հուլիսի 18 — 497
Մեծ ցավը — 263
Մերոսպ եպ. Տեր-Մովսիսյանին 1922, օգոստոսի 29 — 532
Մեր սրբազան հովիտները — 384
Մի՞թե գժվար է — 324
Մի պայծառ շիրիմ — 373
Մ. Նալբանդյանի հիշատակին — 407
«Մշակ»-ի պ. Գ. Վ.-ին — 277
Մոխրոտը — Գրիմ և հղբայրներ — 221
Մոտիկ հարևանը և հեռու բարեկամը — 458

Ն
Նեառյի քարաբաղնիսը — 57
Նվարդ Թումանյանին. 1912, մարտ — 502

Շ
Շեքսպիր և Մերժանան — 428
Շիրվանզադեի հարեյանը — 205

Ո
Ողբունում ենք — 405
Ոչ գրական ոչնչությունները քըն- նադատ — 249
Ոսկի քաղաքը (հեղինական հե- քիաթ) — 173
Ոսկու կարասը — 113

Ջ
Ջախշախ թագավորը — 108

Պ
Պայծառ էջեր — 454
Պատասխան պ. Կատոնին — 305
Պողոս Մակինցյանին. 1922, հու- լիսի 22 — 527
Պոչատ աղվեսը — 100
Պրոֆեսոր Մառին. 1912, ապրիլի 25 — 503

Ռ
Ռաֆայել Ջարդարյանի պլանները — 407

Ս
Սայաթ-Նովայի երգերի բնավո- րությունը — 347
Սայաթ-Նովայի շիրիմը — 323
Սմբատ Շահազիզին. 1902, դեկ- տեմբերի 4 — 482
Սուտասանը — 107
Սուտիկ որսկանը — 138

Վ
Վահան Տերյանի մասին — 365
Վան ու Երևան — 381
Վարյա Խանդամիրյանին. 1904, մայիսի 4 — 484
Վերջին ցանկությունը — 428
Վասզ պատասխան պ. Ա. Մեղրյա- նին — 286

Տ
Տերն ու ծառան — 115
Տխուր Գ. Վ.-ին — 273
Տխուր հիշողություն — 307

Ծ
Ծղակ Խանզադյանին. 1914, ապ- րիլ — 510
Ծղակ Խանզադյանին. 1913, դեկ- տեմբեր — 509

ՌԻ
Ռւլիկը — 102

Փ
Փրիկպոս Վարդազարյանին. 1902, օգոստոսի 23 — 476
Փրիկպոս Վարդազարյանին. 1904, օգոստոսի 18 — 486
Փրիկպոս Վարդազարյանին. 1906, մայիսի 30 — 493
Փրիկպոս Վարդազարյանին. 1908, նոյեմբերի 20 — 495
Փրիկպոս Վարդազարյանին. 1915, ապրիլ — 512
Փոքրիկը — 864

Ք
Քաղաքականությունը և ձենք — 291
Քաջ նազարը — 152
Քեռի Խեչանը — 59
Քեֆ անողին քեֆ չի պակսիլ — 142

Օ
Օլգա Թումանյանին. 1912, փե- արվարի 4 — 500

ՐՈՎԱՆԻՍԱԿՈՒԹՅՈՒՆ

Պատմվածքներ

Աղքատի պատիվը	7
Լեռների հովիվը	13
Գիրքորդ	16
Արջաորս	32
— Կարո բիծու շերամպահությունը	36
Երկու հայր	38
Երկաթուղու շինությունը	39
Ահմադը	42
Գրազը	45
Մայրը	49
Նողչերուն	50
Նեսոյի քարաբաղնիսը	57
Քեռի Խեչանը	59
Սղրիդը	62
Գիւլը	68
Իմ ընկեր Նեսոն	80

Հեփաթներ

Անխելը յարդը	97
Պոչատ աղվեսը	100
Ռւլիկը	102
Միտը	104
Ճամփորդներ	105
Կացին ախպեր	106
Սուտասանը	107
Ջախշախ թագավորը	108
Ոսկու կարասը	113
Տերն ու ծառան	115
Խեչոքն ու հիմարը	120
Նոսող ձուկը	122
Կոնատ աղջիկը	126
Անհաղթ աքլորը	135

Բարեկենդանը	136
Սուտլիկ որսկանը	138
Անբան Հուսին	140
Քեֆ անողին քեֆ չի պակսիլ	142
Եղեմական ծաղիկը	148
Քաջ Նազարը	152
Կիկոսի մահը	162
Զախորդ Փանոսի հեքիաթը	165

Քարգանուրյուններ

Անտառի տնակը (Գրիմի եղբայրներ)	168
Ոսկի քաղաքը (հնդկական ժողովրդական հեքիաթ)	173
Գեղեցկուհի Վասիլիսան (ռուսական ժողովրդական հեքիաթ)	182
Անգին քարը (արաբական ժողովրդական հեքիաթ)	193
Լուսերեսն ու Վարդերեսը (Գրիմի եղբայրներ)	200
Զարմանալի աշուղը (Գրիմի եղբայրներ)	207
Հենգենն ու Գրետելը (Գրիմի եղբայրներ)	211
Մոխրտուր (Գրիմի եղբայրներ)	221
Երեք արջի հեքիաթը (և Տոլստոյ)	230

Հողվածներ ու ելույթներ

Գրմիշուրյուն. Մոնոպլանց Պետրոս— Բանաստեղծություններ	235
Մեր նախորդ շրջանի բանաստեղծները (և Արթուրյանի հիշատակին)	239
Ղ. Աղայանց (բառասանմայակի օրը)	241
Ինքնակենսագրություն	242
Անկեղծ լենք	246
Հայոց նոր գրականության հիսնամյակը	24
Ոչ գրական ունչությունները քննադատ	249
Քյուրիմացության մասին մեջ	258
Հորեկյանների դեմ	262
Մեծ ցավը	263
Ձենն ու հոգին	266
«Համլետի» շարժարանների շարքից Քիշինով	270
Տխուր Գ. Վ.-ին	273
Հայի ոգին	275
«Մշակ»-ի պ. Գ. Վ.-ին	277
Լեզվական փոխառությունները	278
«Էս, էդ, էն»-ի մասին»	280
Փառնացած ժողովուրդ	283
Վոազ պատասխան պ. Ա. Մեղրյանին	286
Հայոց թատրոնի բացումը	290
Քաղաքականությունը և մենք	291
Կ. Ն. Տոլստոյի մահվան առթիվ	293

Շիրվանզադեի հոբելյանը	295
Ամենքը միասին	297
Խրիմյան և Իզմիրլյան	298
Հայ գրողներին	300
Գաղափարական երեկույթներ	301
Ջգուլը պետք է լինել	302
Արձան հայատուր Արթուրյանին	303
Պատասխան պ. Կատոնին	305
«Հայոց պատմություն»	305
Տխուր հիշողություն	307
Երեկվան պատմությունը և այսօրվան իրականությունը	310
Ա՛ա թե ինչու	315
Սայաթ-Նովայի շիրիմը	323
Մի՛թե դժվար է	324
Հայկական հարցն ու իր լուծումը	325
Երկու մեծ թիֆլիսեցիներ	337
Գպրոց և գրականություն	340
Խոսք պատանիների երեկույթին	342
«Հովիտի» Ս. Հ.-ի քննադատականի առթիվ	344
Խոսք Բաֆֆու գերեզմանի վրա	346
Սայաթ-Նովայի երգերի բնավորությունը	347
Խոսք Սերենցի գերեզմանի վրա	352
Հայոց դրամբյանիզմն ու ես	353
Փորձիլը	364
Վահան Տերյանի մասին	365
Անգիտակից թշնամիներ	366
Փ. Քորամանյանի դասախոսությունների առթիվ	368
Քորամանյանի «Թեղանոթները»	370
Լանք ու պաշտպաններ	371
Մի պայծառ շիրիմ	373
Ազգերի պատերազմն ու իրենց դուրսադուրները	374
Կովկասի մեծ որդեգիրը	376
Հայ գրողների ընկերության կողմ	379
Վանն ու Երևան	381
Մեր սրբազան հովիտները	384
Գեղի մեծ կյանքը	386
Հանգիստ ու լիքը հավատով	388
Հիշողություններ էջմիածնի որբանոցից	389
Քանկ մարդու հիշատակին	391
Ազեա է, ոչ թե քաղաքականություն	393
Խոսք Վ. Բրյուսովի դասախոսությունների առթիվ	398
Խոսք ուղղված Վ. Բրյուսովին	399
Հայոց պատմությունը	402
Համաշխարհային գրական տոնը	404

Ողջունում ենք	405
Ռաֆայել Զարդարյանի ալբոմից	407
Մ. Նալբանդյանի հիշատակին	407
Շեքսպիր և Սերվանտես	410
Ազամյանի օրերից	412
Գեղարվեստը հայրենիք ունի	418
Արևելքի նոր դարազույգը	419
Հենրիկ Սենկևիչի մասին	421
Խոսք սկսնակ բանաստեղծներին	422
Հակայի աղատությունը	425
Վերջին ցանկությունը	428
Հայաստանը պետք է խոսի	430
Հայկազյան ընկերությունը	431
Անդրանիկ Օզանյանին	434
Բաց նամակ Սեբեղյ Փարսեցիկուն	435
Հանգրե՛ք հրդեհը	437
«Զինվորազրվել են»	439
Խոսք իր հիսնամյա հոբելյանի առթիվ	444
Իմ պատասխանները Լևան Կիպիանուն	445
Հայ գրականության վիճակը	448
Խոսք Հայաստան գնացող մի խումբ բժիշկներին	449
Պայծառ էջեր	451
Գնանք	455
Հիրավի Աղայանը մեռավ	456
Հովհաննես Թումանյանի բողոքը դաշնակցության ավանտյուրայի դեմ	45
Մոտիկ հարևանը և հեռու բարեկամը	458
Հայաստանի Օգնության Կոմիտեի կայք	459
Մ. Աբեղյանի ուղղադրության առթիվ	461

Նամակներ

Արսեն Ղլտճյանին 1898, հուլիս	465
Մարիամ Թումանյանին 1899, հուլիսի 24	469
Մարիամ Թումանյանին 1899, օգոստոսի 12	471
Մարիամ Թումանյանին 1901, հուլիսի 19	473
Փիլիպոս Վարդազարյանին 1902, օգոստոսի 23	476
Մարիամ Թումանյանին 1902, սեպտեմբերի 30	478
Լեոյին (Առաքել Բաբախանյանին) 1902, հոկտեմբերի 27	481
Սմբատ Շահազիզին 1902, դեկտեմբերի 4	482
Վարյա Խանդամիրյանին 1904, մայիսի 4	484
Փիլիպոս Վարդազարյանին 1904, օգոստոսի 18	486
Արիստակես Զարգարյանին 1906, մարտի 9	490
Փիլիպոս Վարդազարյանին 1906, մայիսի 30	493
Փիլիպոս Վարդազարյանին 1908, նոյեմբերի 20	495
Մարիամ Թումանյանին 1909, հուլիսի 18	497

Արշակ Զոպանյանին 1909, հուլիս	498
Օլգա Թումանյանին 1912, փետրվարի 4	530
Նվարդ Թումանյանին 1912, մարտ	502
Պրոֆեսոր Մատին 1912, ապրիլի 25	503
Գալուստ Տեր-Մկրտչյանին (Միաբան) 1912, մայիսի 25	504
Արմենուհի Տիգրանյանին 1912, օգոստոսի 2	506
Թիֆլիսի հայոց երաժշտական ընկերությանը 1912, դեկտեմբերի 30	506
Արտավազդ Թումանյանին 1913, դեկտեմբեր	508
Ցոլակ Խանզազյանին 1913, դեկտեմբեր	509
Ցոլակ Խանզազյանին 1914, ապրիլ	510
Փիլիպոս Վարդազարյանին 1915, ապրիլ	512
Ընտանիքին 1915	513
Զայել Նսայանին 1916, օգոստոսի 1	514
Հակոբ Սառիկյանին 1919, փետրվար	516
Հայաստանի ուկրոմի 1920, դեկտեմբերի 18	518
Ավետիք Իսահակյանին 1921, հոկտեմբերի 4	520
Արշակ Զոպանյանին 1921, հոկտեմբերի 6	522
Իր զավակներին 1921, նոյեմբերի 2	524
Ալեքսանդր Մյասնիկյանին 1922, հունիսի 17	526
Պողոս Մակինցյանին 1922, հուլիսի 22	527
Մեսրոպ եպ. Տեր-Մովսիսյանին 1922, օգոստոսի 20	532
Այրբենական ցանկ	535

Հովհաննես Քումանյան
ԸՆՏԻՐ ԵՐԿԵՐ ԵՐԿՈՒ ՀԱՏՈՐՈՎ
Հ ա տ ա ռ Ե ր կ ր ո ղ

Ованес Туманян
ИЗБРАННЫЕ СОЧИНЕНИЯ В ДВУХ ТОМАХ
Том второй
(На армянском языке)
Издательство «Советакан грох»
Ереван, 1985

Խմբագիր՝ Ռ. Մ. Մուրադյան
Գեղ. Խմբագիր՝ Գ. Ն. Գյուլամիրյան
Տեխ. Խմբագիր՝ Մ. Է. Ճաննապանյան
Վերստուգող սրբագրիչ՝ Հ. Ն. Զոռյան

ИБ 4857
Հանձնված է շարվածքի 26.07.84: Ստորագրված է տպագրության 31.01.85:
Ֆորմատ 84×108¹/₃₂: Քուղթ՝ տպագր. № 1: Տառատեսակ «Գրքի սովորա-
կան»: Տպագրություն բարձր: 28,56 պայմ. տպ. մամ., 28,98 պայմ. ներկ.
թերթ., 23,7 հրատ. մամ. + 1 ներդիր: Տպաքանակ՝ 50 000: ՎՋ 03124.
Պատվեր՝ 1833: Գինը՝ 2 ռ. 30 կոպ.: Տուփով՝ 2 ռ. 50 կոպ. (1000 ...)

«Սովետական գրող» հրատարակչություն, Երևան—9, Տերյան 91:
Издательство «Советакан грох», Ереван-9, ул. Теряна, 91.

ՀՍՍՀ հրատարակչությունների, պոլիգրաֆիայի և գրքի առևտրի գործերի
պետական կոմիտեի Հակոբ Մեղապարտի անվան պոլիգրաֆկոմբինատ,
Երևան—9, Տերյան 91:

Полиграфкомбинат им. Акопа Мегاپарта Госкомитета по делам из-
дательств, полиграфии и книжной торговли Арм. ССР, Ереван-9,
ул. Теряна, 91.